Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

[illegible]

[illegible]

[illegible]

ԱՐՑԱԽ-ՆԱՄԵ

գիրք հինգերորդ

*ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ*

# ՊԸԼԸ ՊՈՒՂԻ

Ստեփանակերտ - 2007

ՀՏԴ 398 = 919.81
ԳՄԴ 82. 3Հ
Ա 948

Ա 948 ԲԵԳԼԱՐՅԱՆ Հ.Մ.

ԱՐՑԱԽ-ՆԱՄԵ: ժղվ/հ 5: Պըլը Պուղի: Հրաչյա Բեգլարյան: Խմբագիր՝ Ռուզաննա Բեգլարյան: «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2007 թ.: 640 էջ:

«Պըլը Պուղի» երգիծական գիրքը իրենից ներկայացնում է ղարաբաղյան ֆոլկլորի նմուշներ, գլխավորապես՝ երգիծանք: Գրքում տպագրված բանահյուսության շատ նմուշներ ընթերցողներին են ներկայացվում առաջին անգամ: Սրա մեջ է գրքի գլխավոր արժանիքը:

ԳՄԴ 82. 3Հ

© Հրաչյա Բեգլարյան, 2007

ISBN 978-99941-58-27-0

© ԼՂՀ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ «ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ





**ՍԻՐԵԼԻ ՀՐԱՉՅԱ**

Արցախում մուրացանյան օրերի մեր հանդիպման զրույցներից մեկում դու ակնարկեցիր, թե «Արցախ-Նամե»-ի երկու գրքերին հաջորդելու են եւս երկուսը, որոնցից մեկը նվիրված է Արցախի ազատագրական շարժմանը, մյուսը Պըլը Պուղու բանահյուսությանը: Այդ պահին ես հասկացա քո նախաձեռնումի ծրագրային նշանակությունը: Հիրավի, հոյակապ մի ծրագիր, որի պատմական ու մշակութաբանական արժեքը դժվար է գերագնահատել...

Դա սուրբ պարտականություն է, որ դու եւ միայն դու կարող ես կատարել:

***ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ***
***Ակադեմիկոս***



Պետք է գրի առնել եւ ապագա սերունդների համար պահել անեկդոտները: Ոչ մի վեպ, ոչ մի պատմվածք չեն պահի ժամանակի ինչ-ինչ կողմերն այնպիսի սրությամբ, ինչպես անեկդոտը:

***Վահան ԹՈԹՈՎԵՆՑ***

## ՏՈՂԵՐ ՏՄԲԼԱՉԻ ԽԱՉԱՆԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Խաչանը հինչ վայ տա կլխին, հինչ սրտով զուռնին փչի, յա տմբլին թխի, քանի վեր սօր հային օջախը քանդված, տավարը թալանած, մեռածը անթաղ, սաղը կիսաջան դադարգուն ընկած, արտերը անտեր, բաղերը քարուքանդ, վեչ քյոմագ կա, վեչ տեր, վեչ տիրական: Ես օզում չըմ ըրգնցնիմ, իմ աչքի լույս ըշխարքավս մին ցրված նամուսղեյրաթով ղարաբաղցիք, իմ հույսը ճեզ յրայա, ճեր վաթանը մոռանաք վեչ, ճեր վառ օջախին յրա ճուր չածիք, Ղարաբաղի անունը կոտրիք վեչ:



## ՂԱՐԱԲԱՂՑՈՒ ԼՈՒՋՈՒՆ

Արա, պա Ղարաբաղի լուզվեն նման լյուզու կա էս ըշխարքում: Ղարաբաղցու լուզուն մեղրի նման ծորա տամ, աղբյուրի նման կարկաչում, ծտի պես ծլվլում: Բա մեր սարերն ու ծմակները, աղբյուրներն ու քոլերը, հասած սեզնը ու զկեռը, մեղրատանձը: Պա՞հ, պա՞հ, պա՞հ: Շուշվա բերդից որ եշում ըս Ղարաբաղ աշխարհին, բնության բոլոր աստվածները պպզում ըն ռաչիդ ու աղոթ անում քեզ համար:

*Արարատ ԲԱՐՍԵՂՅԱՆ*
*Գրող-դրամատուրգ*

## ՏՈՂԵՐ ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ՊԸԼԸ ՊՈՒՂԻ» ԳՐՔԻՑ

... 1935 թվականի նոյեմբերի 24-ն էր, լուսանում էր օրը չորեքշաբթի: Ուղիղ յոթ օր հետո ես դառնալու էի քսան տարեկան:

Այդ երանելի գիշերվանից սկսած Պըլը Պուղին մնաց իմ հոգում, իմ էության մեջ, գահ դրեց իմ անձնաշխարհի ամենանվիրական տեղում:

Ես սկսեցի շատ հաճախ վերհիշել Պըլը Պուղու առակները, զվարճաբանությունները, որ լսել էի գրեթե օրորոցից ու հիմա այս պահին էլ լսում եմ: Մի քանի անգամ գնացի նրա ծննդավայր հայոց Ղարաբաղ աշխարհը, համբուրեցի մեր նախնիների այն հողը, որ մեզ, շատ թանկ բաների հետ, պարգեւել է նաեւ հայկական Եզոպոսը՝ Պըլը Պուղին:



## ԽՈՍՔ «ՊԸԼԸ ՊՈՒՂԻ» ՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ (1991 թ.)

Բարով եկար քո Արցախը, Պըլը Պուղի, հազար բարի եկար՝ քո ժպիտով ու ծիծաղով, քո բարիությամբ մեր նեղ ժամանակներն են՝ ուժ ենք առնելու քո իմաստությունից, քո կենսախինդ խոսքից:

***Սոս ՍԱՐԳՍՅԱՆ***

**Ղարաբաղյան շարժման ռահվիրան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ոսկեձույլ ազնվությամբ մտավորական, որ զարդարում է հայ ժողովրդի ճակատը:**

# ՂԱՐԱԲԱՂԻ ԶՎԱՐՃԱԽՈՍ ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ

Արցախյան բանահյուսության բնորոշ կողմը երգիծանքն է, որը դարձել է հայ ժողովրդի բարոյական ուժի արգասիքը։ Հայտնի ճշմարտություն է. ծաղրում են ուժեղ մարդիկ, իսկ արցախցիները դարեր շարունակ աչքի են ընկնում իրենց անսասան կամքով ու քաջագործություններով։

Հենվելով ամենաուժեղ զենքի երգիծանքի վրա, ղարաբաղցիները զվարճախոս Պըլը Պուղու միջոցով անարգանքի սյունին են գամում Վարանդայի տիրակալ Մելիք Շահնազար 2-րդին, որը գժտվելով իր հարեւան մելիքների հետ, թափառական ցեղապետ Փանահին տվեց իր Շոշ անունով անմատչելի ամրոցը։

Եվ ահա Ղարաբաղի համար դժվար այդ տարիներին, երբ Փանահ խանը զորանում էր, դավերով ոչնչացնելով հայ մելիքներին, Պըլը Պուղին որպես մի ըմբոստ ոգի, ծառանում է այդ դավաճանության դեմ։

Նա քննադատում, ծաղրում է ոչ միայն Մելիք Շահնազարին, այլեւ օտար բռնակալներին։ Պըլը Պուղին իրական անձնավորություն է։ Նա ծնվել է 1731 թվականին Վարանդայի Շոշ գյուղում։ Հայտնի է, որ հետագայում նա ապրել է Չանաղչի (Ավետարանոց) գյուղում, դավաճան Մելիք Շահնազարի մոտ։ Երգիծաբանը մահացել է 1810 թվականին ու թաղվել Շոշ եւ Մխիթարաշեն գյուղերի արանքում գտնվող մի քարայրում, ուր էլ կյանքի վերջին տարիներին ապրել է որպես ճգնավոր։

Տեղագրող Մակար Բարխուդարյանը ժամանակին եղել է այդ քարայրում, տեսել է Պըլը Պուղու գերեզմանը եւ օրինակել նրա տապանագիրը (Մ. Բարխուդարյան, Պըլը Պուղի, Թիֆլիս-1883 թ., էջ Ե)։

Պատմում են, որ մինչեւ 50-ական թվականները պահպանվում էր Պըլը Պուղու տապանաքարը, այնուհետեւ անհայտ մարդիկ այն գլորել են ձորը, գետի մեջ։ 1970 թվականին ստեփանակերտցի Ա. Ալեքսանյանը սեփական միջոցներով մի համեստ գերեզմանաքար է դրել Պըլը Պուղու գերեզմանի վրա։

1976 թվականին Սերո Խանզադյանի խորհրդով նրա գերեզմանի մոտ, փոքրիկ բլրի վրա դրվել է նոր հուշարձան, իսկ մեկ տասնամյակ անց, հայտնի նկարիչ Հրաչյա Ռուխկյանը մեր խնդրանքով ստեղծել է Պըլը Պուղու դիմանկարը։



Պըլը Պուղին (իսկական անունը՝ Պողոս) դեռ մանկության տարիներին աչքի էր ընկնում իր կատակներով ու վաստակում պել (գիժ) մականունը։

Ուրիշ էլ ի՞նչ անուն կարող էր վաստակել ճշմարտախոս, սրամիտ Պողոսը, երբ համարձակվում էր հրապարակորեն քննադատել մելիքներին, տանուտերերին, տգետ հոգեւորականներին, ծույլերին ու ծիծաղել նրանց վրա։

Ավանդությունը պատմում է, որ երբ Պըլը Պուղին դեռ փոքրիկ տղա էր ու գառներ էր պահում իր հայրենի Շոշ գյուղի հանդում, հարեւան գյուղից մի տերտեր կնոջ հետ գնում էր ջրաղաց։ Նկատելով տղայի նախշուն գուլպաները, տերտերը շոյում է նրա գլուխն ու հարցնում.

- Որդի, ի՞նչ տամ, գուլպաներդ տաս ինձ։

- Որ մի անգամ ոչխարի պես մկկաս, քեզ կտամ,- պատասխանում է սրամիտ տղան։

Տերտերը նայելով շուրջը եւ տեսնելով, որ ոչ ոք չի նկատում իրենց, մկկում է։

- Ա դեր, բուրդը քեզ վրա ա, ինձանի՞ց ես գուլպա ուզում,- ասում է տղան։

Շուտով Պըլը Պուղու համբավը տարածվում է Վարանդայում։ Լսելով այդ մասին, Մելիք Հյուսեին Շահնազար 2-րդը կանչում է իր մոտ, ուր եւ ապրում է մինչեւ խոր ծերություն։

Պըլը Պուղու հեղինակությունը որպես զվարճախոսի, շատ մեծ է եղել ժողովրդի մեջ։

Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին հայ ժողովրդական բանահյուսության մեջ նույն դերն է կատարել, ինչ որ Մոլլա Նասրադինն արեւելյան ժողովուրդների կյանքում։ Ժողովրդի բանավոր խոսքի մեջ լայն տարածում են գտել նրա զվարճախոսությունները։ Այդ զրույցները պատմել են քեֆերի, հարսանիքների ժամանակ, ձմռան երկար գիշերներին՝ օջախի շուրջը նստած։ Պատմել ու ծիծաղել են Պըլը Պուղու հետ, ու որքան կյանքը դաժան է եղել, նույնքան ծիծաղը օգտակար, վիշտ ու վերքեր բուժող բալասան է դարձել։ Այդպես անցել է ժամանակը, մինչեւ ղարաբաղցի հոգեւորական Մակար Բարխուդարյանը հավաքել ու հրատարակել է Պըլը Պուղու զրույցները։ Դիմելով իր մեկենասներին, նա գրքի առաջաբանում գրել է. «Պուղին, որ արդեն վաղուց մեռած էր, ձեր օժանդակությամբ կենդանացավ...»։

Այդ ուղղությամբ շնորհակալ աշխատանք է կատարել նաեւ նախկին շուշեցի Ս. Իսրայելյանը՝ հավաքելով ու հրատարակելով Պըլը Պուղու մի քանի զվարճախոսությունները, իսկ 1988 թվին ավելի մեծ ծավալով լույս է տեսել մեծանուն գրող Սերո Խանզադյանի «Պըլը Պուղի» գիրքը:

Ուշագրավ գործեր են նաեւ Ա. Բարսեղյանի եւ Վ. Օվյանի Պըլը Պուղու մասին գրած կոմեդիաները: Պըլը Պուղու զրույցները մեծ մասամբ հորինված են Մելիք Շահնազար Հյուսեինի մասին: Ուրացող Մելիքը ատելի է ժողովրդի համար ու թեեւ իրականում Մելիք Հյուսեինը իր շահերն իմացող, ճարպիկ ու գործարար մարդ է եղել, բայց Պըլը Պուղու զվարճախոսություններում նա միշտ ընկնում է կոմիկական դրության մեջ: Սակայն նա բոլոր դեպքերում էլ Պըլը Պուղու նկատմամբ ներողամիտ է: Գուցե դա նրանից էր, որ վախենում էր նրա երգիծանքից եւ այն հսկայական հեղինակությունից, որ վայելում էր իր ծառան:

Պըլը Պուղին լավի ու բարու պաշտպանն է, ազնիվ ու սրամիտ, միշտ լավատես. ահա թե ինչու ժողովուրդը մի առանձին սիրով է պատմում իր երգիծաբանի զրույցները:

Շուշի քաղաքում 18-րդ դարի երկրորդ կեսերին աչքի էր ընկնում Բահաթրյանի մեծ տոհմը, որը տվել է գրականության, լեզվաբանության, մաթեմատիկայի, բանահյուսության բնագավառներում կարկառուն դեմքեր: Հայտնի են, օրինակ՝ Առաքել, Գրիգոր, Ավետիք, Բահաթուր Բահաթրյանները: Դրանցից մեկին՝ լեզվաբան Ավետիք Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» (Շուշի, 1891թ.) գրքի մասին Եղիշե Չարենցը գրել է. «Սա է գիրք հանճարեղ եւ զարմանալի՝ գրված լինելով 90-ական թվականներին մի ինչ-որ անհայտ շուշեցի ուսուցչի ձեռքով...»:

Պարզվում է, որ այս անհայտ հանճարեղ շուշեցին գրել է նաեւ մի գիրք, որտեղ հավաքել է Պըլը Պուղու զանազան առակները: Գիրքը հենց այդպես էլ կոչել է՝ «Առակագիրք»: Պետք է նկատել, որ արցախյան առակները գալիս են խոր հնադարից եւ ունեն զուտ խրատական բնույթ: Ավետիք Բահաթրյանին լավ ծանոթ էր այդ առակների ստեղծման ակունքները, ուստի նա իր գրքում զետեղել է այն առակները, որոնք մինչեւ իր ապրած ժամանակները բանավոր պտտվում էին ժողովրդի մեջ:

Մեզանից ո՞ւմ մտքով է անցել, որ Հայկի եւ Բելի առասպելից Բել անունը Արցախում մնացել է որպես գիժ, անխելք, ամբարտավան հասկացություն եւ հիշատակվում է Պել բառով:



Բոլորովին անընդունելի են որոշ բանահավաքների այն կարծիքը, որ Պըլը Պուղու *պել* ածականը գալիս է պելի (քավոր) բառից:

Տեսնենք ի՞նչ է գրում այդ մասին մեծանուն պատմավիպասան Րաֆֆին. «Ղարաբաղի եւ Ղարաբաղի կողմերում, Բելի անունը առակ է դարձել, յուր հպարտություններով հիմարացած մարդուն հայը միշտ ասում է՝ «բելացել է», այսինքն՝ Բելի բնավորություն է ստացել(Րաֆֆի, հ. 9, էջ 100):

Իհարկե, բոլոր դեպքերում Բել-պել բառն ունի բացասական իմաստ: Ուրիշ բան է, երբ դարերի ընթացքում ճշմարտությունը կարողացել են ասել այդ՝ արդեն առակ դարձած պել անունը կրող մարդիկ: Հենց դրանով էլ նրանք սիրելի են դարձել հասարակության մեջ: Թեեւ պետք է ասել, որ բոլոր պելերը (գժերը) չեն, որ սիրելի են Ղարաբաղում, ինչպես արդեն ժամանակն ապացուցել է, ամենից «պել» ու սիրելի մարդը եղել է Պըլը Պուղին:

Պըլը Պուղին ստեղծված կերպար չէ: Խոսելով գյումրեցի Պոլոզ Մուկիչի մասին, Ավետիք Իսահակյանը նկատել է, որ «աշխարհի ազգերն իրենց սրախոսությունները, անեկդոտները, ասացվածքները վերագրում են մեկ մարդու եւ անմահացնում նրան: Էդպես է եղել Մուկուչը մեր ժողովրդի համար: Տարբերությունն այն է, որ ուրիշներինը միֆ է, իրական մարդ չի եղել, գերեզմանի տեղն էլ հայտնի չէ, իսկ Պոլոզ Մուկուչը իրական մարդ է եղել եւ գերեզմանը կա»:

Ավետիք Իսահակյանի այս բնորոշումը ճիշտ եւ ճիշտ վերաբերում է նաեւ Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղուն: Նա հավաքական է այնքանով, որքանով գնալով մեծանում է նրա համբավը: Անվերջ ստեղծվում են նոր զվարճախոսություններ եւ վերագրվում նրան:

Ի դեպ, երկու երգիծաբանների գերեզմանների ճակատագիրն էլ է շատ իրար նման: Պոլոզ Մուկուչի վրա, ինչպես հայտնի է, գերեզմանաքար է դրել Ավետիք Իսահակյանը: Քանի որ խոսք գնաց այդ մասին, հիշենք, որ Պոլոզ Մուկուչի գերեզմանաքարի վրա գրված է. «Մելքոնյան Մկրտիչ Ղազարոսի, ծնված 1887 թ., վախճանված 1931 թ., Պոլոզ Մուկուչ: Հիշատակ բանաստեղծ Ավետիք Իսահակյանից»:

Պըլը Պուղու երգիծանքը հավաքելու ժամանակ երբեք չեմ մտածել նրա դիմանկարը կազմելու մասին: Պարզապես որպես հոբբի, որպես գրական հետաքրքիր զբաղմունք, ամենուրեք գրի եմ առել ղարաբաղյան

ֆոլկլորի նմուշներ, նրանց մեջ միշտ տեսնելով Պըլը Պուղուն: Նա ինձ հետ երկար է քայլել: Ցավով պետք է նշեմ, որ երբեք հեքիաթներ գրի չեմ առել, նկատի առնելով, որ դա երկար ժամանակ է պահանջում, իսկ ես երբեք չեմ ունեցել այդ ժամանակը, քանի որ երբեք նպատակային չեմ զբաղվել այդ գործով: Ղարաբաղյան իմ շրջագայությունները նյութեր հավաքելու տեսակետից եղել են խայտաբղետ եւ կրել են խճանկարային բնույթ: Երբ մարդ խորանում է հայրենի բնության գրկում, տեսնում է ավերակ բերդեր, վանքեր, բազում շիրիմներ, ակամայից սկսում է հետաքրքրվել այդ ամենով եւ երբ տուն գալով, մեր պատմիչների մատյաններում գտնում այդ մասին հիշատակի խոսքեր, ցնծում ուրախությունից: Այդպես մի օր ես այցելեցի Պըլը Պուղու քարայրը: Այնտեղ ոչինչ չկար, սակայն գյուղացիներն ասացին, որ եղել է շիրմաքարը, բայց այն անհայտ մարդիկ գլորել են ձորը: Ինձ համար դա նորություն չէր: Ես տեսել եմ, թե ինչպես այդպիսի մարդիկ փորել են Գրիգորիսի շիրիմը, որ գտնվում է Ամարասի վանքի մեջ, գետնափոր մատուռում: Տեսել եմ, թե ինչպես վանքեցի մի տրակտորիստ, գիշերը Գանձասարի վանքում հիմնահատակ փորել էր Եսայի Հասան Ջալալի կաթողիկոսի շիրիմը: Վանքի ծեր պահակն ինձ հուշեց այդ տրակտորիստի անուն-ազգանունը, եւ մինչեւ ես պատրաստվում էի դատի տալ նրան, լուր ուղարկեցին, որ մեռել է տրակտորիստը: Այդպես քանդված տեսա ես Վաչագան թագավորի գերեզմանը Ջրաբերդում:

Պուղու գերեզմանում գանձ չէին որոնում, պարզապես հաճույքի համար անդունդ են գլորել նրա շիրմաքարը անմիտ մարդիկ, գլխավորապես պատանիներ, որոնց այս կողմերում հաճախակի կարելի է տեսնել խմբերով: 1985 թվականի ուշ աշնանը Ղարաբաղ են գալիս Սերո Խանզադյանը եւ բանաստեղծ Արամայիս Սահակյանը: Նրանք պետք է գնային Շուշի: Արամայիսը խմբի հետ գնաց, իսկ Սերո Խանզադյանը մնաց եւ մարզկոմի քարտուղար Բորիս Կեւորկովին ասաց, որ ինքն ուզում է տեսնել Ավան Յուզբաշու Սղնախը, Մխիթարաշենը, Պըլը Պուղու գերեզմանը: Ինձ առաջարկեցին ուղեկցել Սերո Խանզադյանին: Բայց ես մենակ չէի, մեզ հետ էին նաեւ Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար Վահան Գրիգորյանը եւ մարզկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ Լեւոն Մկրտչյանը: Այդ օրերին Սերո Խանզադյանը պատրաստում էր «Պըլը Պուղի» գիրքը, ուստի խոսք բացեց Պուղու



մասին: Տեսնելով այդ քարայրը, ուր թաղված է Պուղին, նա մեզ ասաց, թե Պըլը Պուղու համար պետք է շիրմաքար դնել այդ քարայրից վեր գտնվող բլրի վրա, որը մոտ է Ստեփանակերտ-Կարմիր Շուկա ճանապարհին եւ առանձին ջանք չի պահանջում այն տեսնելու համար: Ուշ երեկոյան, երբ սեղանի շուրջ նստած հյուրերը խոսում էին ամենատարբեր հարցերի մասին, Սերո Խանզադյանը Կեւորկովին պարտավորեցնելու չափ վճռական ասաց, որ եթե Կեւորկովը Պըլը Պուղու վրա մի շիրմաքար դնի, կանմահացնի իրեն: Կեւորկովը խոստացավ դա անել հենց բլրի վրա, այնտեղ, որտեղ ցույց տվեց Սերո Խանզադյանը: Դրա ստեղծումը երկար չտեւեց: Ճարտարապետ Յուրի Հակոբյանը որոշեց հենց Կարկառից հանել գետի ջրերով ծեծված ու հղկված որձաքարի մի զանգված եւ նրա վրա գրել. «*ԱՅՍՏԵՂ Է ՀԱՆԳՉՈՒՄ ՂԱՐԱԲԱՂԻ ՖՈԼԿԼՈՐԻ ՎԱՐՊԵՏ ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ*»:

Ստացվեց այնպես, որ Պըլը Պուղին ապրեց եւ ծառայեց Վարանդայի դավաճան Մելիք Շահնազարին, իսկ երեք դար հետո նրա վրա հուշարձան սարքեց նույնպես դավաճանի անուն կրող Բորիս Կեւորկովը:

Դե արի լուծիր այս առեղծվածը:

Այն, ինչ ես արել եմ ազգագրության, ժողովրդական երգերի եւ բանահյուսության բնագավառում, արել եմ տարերային: Միայն տասնամյակներ անց, երբ ինձ մոտ կուտակվել են շատ նյութեր, որտեղ նկատելի են, հատկապես, զվարթ անեկդոտները, որոշեցի դրանք արտագրել առանձին տետրերում: Գնալով ստեղծվեցին հաստափոր ձեռագիր գրքեր, մի քանի լիքը թղթապանակներ: Դրանց մի ահռելի մասը ստեղծված էր Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղու մասին: Քանի որ Պուղին իրական անձնավորություն է եղել, սկսեցի լրջորեն հետաքրքրվել նաեւ նրա մասին տպագրված նյութերով: Խորհրդային տարիներին ինձ համար դժվար չէր Ստեփանակերտի մարզային գրադարանի միջոցով Երեւանի Մյասնիկյանի անվան գրադարանից հինգ կամ տասը օրով ստանալ ցանկացածս հին գիրքը: Այդպես եմ ստացել Մակար Բարխուդարյանի «Պըլը Պուղի» գիրքը (1883թ., Թիֆլիս) եւ ուրիշ օժանդակ գրականություն:

Արդեն 30 տարի անց, կազմելով «Կատակում է Պըլը Պուղին» եռահատոր գիրքը, ես ձգտել եմ հեռու մնալ տպագրված անեկդոտներից, ընթերցողներին մատուցել նոր զվարճախոսություններ: 1998 թվականին տպագրվեց առաջին գիրքը: Այս գիրքը կարդալով, իմ մեծ բարեկամ, գրականագետ, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը խորհուրդ տվեց «Ար-

ցախ-Նամէ»-ի գրքերից մեկը նվիրել Պըլը Պուղուն եւ անել այնպես, որ այդ գրքում տեղ գտնեն Արցախի ժողովրդական բանահյուսության լավագույն նմուշները, որոնք վերագրվում են հայ ժողովրդի ամենանշանավոր առակախոսին:

Այս խորհրդից հետո կրկին անդրադառնալով իմ հավաքած հարուստ նյութերին, համոզվեցի, որ Պըլը Պուղին սոսկ զվարճախոս չի եղել: Իմաստուն են նրա խորհուրդներն ու այլաբանական, հիսուսյան ոճով զրույցները: Դրանց կողքին պետք է նկատել հրաշալի խրախճանքներ, բժշկական ժողովրդական խորհուրդներ, ավանդապատումներ, ղարաբաղյան խաղիկների գրական գոհարներ: Ինչ փույթ, թե այդ բոլորը հաստատապես չի արել մի մարդ, ներկա դեպքում ասենք՝ Պըլը Պուղին: Կարեւորն այն է, որ ժողովուրդն իր համար իրական կերպարից ստեղծել է իր լեգենդար հերոսին: Ի դեպ, Պըլը Պուղին մենակ չէ, նա շատ անեկդոտներում, զրույցներում հանդես է գալիս Մելիք Շահնազարի հետ: Մի մարդ, որը նույնպես իրական դեմք է եղել, դավաճան, չարամիտ, մեծամիտ, անխիղճ, անխելք: Բոլոր չարագործություններից հետո, մտածում ես, որ, այնուամենայնիվ, Մելիք Շահնազարի մոտ մի դրական բան կա: Դա այն է, որ հանուն կատակի, հանուն զվարճախոսության նա ներում է Պըլը Պուղուն, նույնիսկ, երբեմն էլ վարձատրում նրան, գնահատում նրա բնատուր երգիծելու տաղանդը: Պըլը Պուղու եւ Մելիք Շահնազարի ապրած կյանքը մեզանից հեռու է մոտավորապես 300 տարով եւ սակայն այդ ժամանակաշրջանում, փաստորեն, ստեղծվել է Պըլը Պուղու միֆը: Ի դեպ, փակագծերում նշենք, որ երբ ձեւավորվում էր «Սասունցի Դավիթ» էպոսը, նրա ճյուղերից մեկը առաջինը գրի է առնվել Շուշի քաղաքում: Թե ովքեր են եղել շուշեցի բանահյուսները, այդ հարցը դեռ չեն պարզել բանասերներն ու գրականագետները: Արցախյան երգիծանքի հերոսներն այնքան էլ չեն տարբերվում իսպանական «Դոն Կիխոտի» հերոսներից եւ արդեն դարձել են դրամատիկական գործերի հերոսներ: Բացառված չէ, որ տարիներ հետո նրանք կդառնան վիպական հերոսներ: Դրա համար արդեն ստեղծված է պարարտ հող:

Այսպես, թե այնպես, հայ ժողովրդի երգիծանքի մեջ Պըլը Պուղին շարունակում է լայնացնել իր տեղը: Նրան են վերագրում նորօրյա զավեշտական զրույցները, սրամտությունները, առակները, հանելուկները,



աֆորիզմները, այն ամենը, ինչը կոչվում է ժողովրդական բանահյուսություն: Դա բոլորովին էլ պատահական չէ: Հայ ժողովուրդը երգիծանքի երկու նշանավոր հերոս ունի՝ Պըլը Պուղին եւ Պոլոզ Մուկուչը: Եթե Պոլոզ Մուկուչը հանդես է գալիս գլխավորապես որպես Գյումրիի կատակների վարպետ, ապա Պըլը Պուղին, շնորհիվ ղարաբաղյան բազմաճյուղ բարբառի, ունի ավելի լայն ընդգրկումներ եւ ավելի մեծ հռչակ: Բացի դրանից, Պըլը Պուղին հանդես է գալիս պատմական կոնկրետ մի անձնավորության հետ, որի անունը, որպես դավաճանի, հոլովվում է ամեն օր:

Պըլը Պուղին որպես երգիծաբան, թեմա է դարձել դրամատիկական շատ երկերի, նրա անեկդոտները հավաքել եւ տպագրել են բանահավաքները, գրողները, լրագրողները, գրականություն սիրող ու գրականությամբ զբաղվող շատ մարդիկ: Պետք է ասել, որ «Պըլը Պուղի» երգիծական հանդեսը Ղարաբաղում ստեղծվելուց հետո, իր շուրջն է համախմբել Ղարաբաղում ապրող մի մեծ խումբ մտավորականների, որոնց մեջ առանձնապես աչքի են ընկնում երգիծաբաններ Լեւոն Հարությունյանը (Աշան), Խորեն Բաղդասարյանը (Տումի), Միքայել Բալյանը (Մեծ Թաղլար), Նորայր Ավետիսյանը (Հադրութ), Կառլեն Սողոմոնյանը, Հենրի Հայրապետյանը (Ղշլաղ), Դավիթ Միքայելյանը, Ռոբերտ Ղահրամանյանը (Ստեփանակերտ), Ադելա (Արշալույս) Սարգսյանը (Աբովյան), Լենա Գրիգորյանը (Ստեփանակերտ), Գրիգոր Մելիք-Սարգսյանը (Երեւան), Ռոբերտ Գրիգորյանը, Բորիս Բաղրյանը, Սոֆյա Սարգսյանը (Ստեփանակերտ): Նշված հեղինակներից ամեն մեկը 3-4 երգիծական գրքի հեղինակներ են, որոնց թեման ղարաբաղյան բանահյուսությունն է, գլխավորապես Պըլը Պուղու զվարճախոսությունները:

Ես բախտ եմ ունեցել 15 տարի շարունակ խմբագրել «Պըլը Պուղի» երգիծական հանդեսը Ղարաբաղի ամենից դժվար տարիներին, եւ հասկանում, թե ինչ արժե նեղ օրվա ծիծաղը:

Շատ հետաքրքիր է, օրինակ, Արշալույս Սարգսյանի ծիսական երգերի մշակումները: Շնորհալի բանահավաքը կարողացել է կորստից փրկել շատ սովորություններ, ծիսական երգի պատառիկներ, որոնց հետ վարվել է ճիշտ այնպես, ինչպես հնուց ճարտարապետներն են կարողանում փլված տաճարները մեկ-երկու դետալների հիման վրա վերականգնում: Նրա «Սծեգը», «Քըլընգյոշը», «Կոնչուլը», «Պեժինքը», «Ջետե-

գը», «Պյուտը», «Միջին», «Խաչիկը» եւ շատ ուրիշ երգեր մեր առաջ բացում են ղարաբաղյան ծեսերի մի ոսկե շղթա:

Նշված ծիսակատարությունները վաղուց դուրս են մնացել Ղարաբաղի կենցաղից, իսկ այդ կերակրատեսակներն այլեւս գործածական չեն մեր խոհանոցներում: Պետք է հիշել, որ բոլոր այդ ծեսերն ուղեկցվում էին ժողովրդական երգ ու պարով:

Հայտնի է, որ 19-րդ դարի առաջին կեսին, հայ հասարակական մտքի եւ ազգային մշակույթի նվիրյալ Մեսրոպ Թաղիադյանն աշակերտել է Պողոս Ղարաբաղցուն: Նա ծնվել է 1821 թ. Երեւան քաղաքում, մահացել է 1858 թվականին Շիրազում (Պարսկաստան) եւ թաղվել պարսիկ հռչակավոր բանաստեղծներ Հաֆիզի եւ Սաադու կողքին: Ժամանակին նա խոստովանել է, որ ինքը դեռ մանուկ ժամանակ տարվել է ժողովրդական երգերով, գրի է առել դրանք, ինչպես նաեւ հետաքրքրվել շրջիկ հեքիաթներով, զրույցներով, զվարճախոսություններով: Այս տեսակետից պատահական չէ, որ հեռավոր Հնդկաստանի Կալկաթա քաղաքում ապրած տարիներին նրա համար գրական անսպառ թեմա է եղել ժողովրդական ստեղծագործությունների այն նյութերը, որոնք նա հավաքել է, հատկապես, Ղարաբաղում:

Մեզ հետաքրքրող հարցը Մ. Թաղիադյանի մոտ Պըլը Պուղուն վերագրվող նյութերն են: Թեեւ ուղղակի կերպով նա չի շոշափել այդ հարցը, սակայն նրա կազմած առակներից շատերը սերտորեն առնչվում են Պըլը Պուղու հետ եւ կոչվում են «Զուարճախոս առակի պարսից»: Պետք է հասկանալ, որ Մ. Թաղիադյանի ժամանակ այդ շրջիկ կատակների մեծ մասը ստեղծվում էր Ղարաբաղում, իսկ նա օգտվելով ժողովրդական աղբյուրներից, կազմել է գրական գոհարների մի փունջ՝ շուրջ 70 առակներ, որոնք շարադրված լինելով գրաբար լեզվով, այժմ մատչելի չեն շատերի համար: Այդ այլաբանական զրույցներով հետաքրքրվել է նաեւ Ակսել Բակունցը եւ գրաբարից աշխարհաբար թարգմանել առակների սքանչելի մի շարք:

Ընդհանրապես, առակները, զվարճախոսությունները մեծ մասամբ ստեղծված են մի քանի տարբերակներով: Երբեմն նրա հերոսները հայտնվում են իրական անուններով եւ վերագրվում այս կամ այն գյուղացուն: Պետք է ասել, որ ուրախ անեկդոտները թեւեր ունեն եւ շատ արագ են տարածվում ժողովրդի մեջ: Հաճախ նույնիսկ Եզոպոսից եկող առակը տեսնում ենք ժամանակակից հեղինակների մոտ:



Այնպես որ, Պըլը Պուղուն վերագրվող առակների տարբերակները կարելի է տեսնել անգամ հնագույն «Աղվեսագրքում» («Աղվեսագիրք» վերնագրով առակներ տպագրվել են տարբեր ժամանակներում, տարբեր հեղինակների անուններով):

Բայց վերադառնանք կոնկրետ Պըլը Պուղու զվարճախոսություններին: Դեռեւս 1878 թվականին Թիֆլիսում լույս տեսավ Գ. Շերմազանյանի կազմած ղարաբաղյան բանահյուսության մի ժողովածու (անեկդոտներ, առակներ, զվարճախոսություններ եւ այլն), որտեղ ներկայացվում են նաեւ Պըլը Պուղու զրույցները: 1881 թվականին Ղարաբաղի Նորշեն գյուղացի, գրականության ուսուցիչ Միքայել տեր-Հովհաննիսյանը գրի է առնում տարբեր ժանրերի բանահյուսական նյութեր եւ ուղարկում Տիգրան Նավասարդյանին: Այդ ուղղությամբ մեծ գործ է կատարել նաեւ Տմբլաչի Խաչանը (Կոնստանդին Մելիք-Շահնազարյան), իսկ Մակար Բարխուդարյանը, որ ստորագրում էր նաեւ ուստա Գեւորգ անունով, 1898 թվականին հրատարակում է «Բարոյական առածներ» գիրքը, որի նյութը նույնպես ղարաբաղյան կյանքից էր: Շոշափելով Թաղիադյանի կազմած առակների հարցը, մենք նկատում ենք դրա կողքին վիպական մի գործ, որն ամբողջովին առնչված է Ղարաբաղի կյանքին եւ որի թեման արհեստների գովքն է: Այդ զրույցը գալիս է 7-րդ դարից եւ ունի կոնկրետ ակունքներ: Դա Հայոց Արեւելից երկրի թագավոր Վաչագանի կյանքին, նրա եռանդուն, շինարարական գործին, կրթությանը, մշակույթին վերաբերող նրա պետական մոտեցումներն են:

Եթե Ղազարոս Աղայանը մշակման մեջ այդ զրույցում հանդես է գալիս հայեցի նախրապանի գորգագործ աղջիկը՝ Անահիտը, ապա Մեսրոպ Թաղիադյանի «Վարսենիկ» վեպում գլխավոր հերոսուհին հենց ինքը՝ Վարսենիկն է, թագավորի գեղանի աղջիկը, որի հիմնական գաղափարախոսությունն այն է, որ մարդ պետք է ապրի սեփական, ազնիվ աշխատանքով: Այս վեպի գլխավոր արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը լայնորեն օգտագործել է ժողովրդական հին երգերը:

«Թագավորները կարող են աղքատանալ, մինչդեռ սեփական վաստակով ապրող մարդիկ երբեք չեն հասնում աղքատության դուռը»,-ասված է այդ վեպում:

Այս գաղափարը եւ նրա շուրջը ստեղծված առակներն ու իմաստասիրությունները մեզ թույլ են տալիս ասելու, որ Մեսրոպ Թաղիադյա-

նը անպայման ծանոթ է եղել Պըլը Պուղու զրույցներին: Նրա կազմած 70 առակներից 37-ը շրջիկ առակներ են եւ մեզ մոտ վաղուց հոլովվում են Պըլը Պուղու զրույցներում:

Ապագա բանասերների, պատմաբանների, ազգագրագետների համար մեծագույն գործ է կատարել Երվանդ Լալայանը, Շուշի քաղաքում հրատարակելով «Ազգագրական հանդես» ամսագիրը: Երվանդ Լալայանի հավաքած նյութերը կարող են բավարարել ամենահետաքրքրասեր բանագետին, քանի որ բանահյուսությունն ու ազգագրությունը, պատմությունն ու աշխարհագրությունը ներկայացված են պատշաճ մակարդակների վրա: Արցախ աշխարհի հնագիտությամբ, ազգագրությամբ, ժողովրդական բանահյուսությամբ զբաղվել է նաեւ Խաչիկ Դադյանը: Զարդարաշենցի այս վարդապետը հետագայում պեղեց եւ գտավ նաեւ Զվարթնոցը: Ամառասում պաշտոնավորված տարիներին նա պեղել է նաեւ Ամառասի հովտի բրոնզեդարյան դամբարանները: Խաչիկ Դադյանի հավաքած բանահյուսական նյութերը տակավին մնում են չուսումնասիրված: Խորհրդային շրջանում նախկին շուշեցի Սարգիս Իսրայելյանն առաջիններից մեկն է, որ տպագրեց «Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին» գիրքը (1956 թ., Երեւան):

Անշուշտ, Պըլը Պուղու զրույցներին տեղյակ են եղել Մանուկ Աբեղյանն ու Կոմիտասը, երբ ձեռնարկել են միասին հավաքել ղարաբաղյան ժողովրդական խաղիկներ: Մ.Աբեղյանի կազմած «Ժողովրդական խաղիկներ»-ում (Հայպետհրատ, 1940 թ.) մենք հանդիպում ենք ղարաբաղյան երգիծական չափածո սքանչելի տողերի, որոնք հետագայում դրվել են Պըլը Պուղու զրույցների մեջ:

Լեռնային Ղարաբաղի բանահյուսությամբ լրջորեն զբաղվել են բանահավաքներ Մարգարիտ Գրիգորյանը, Միքայել Առաքելյանը, Ալվարդ Ղազիյանը: Գիտական արժեքավոր գործ է կատարել, հատկապես, Ալվարդ Ղազիյանը: Նրա կազմած «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն»-ը, «Արցախ» ժողովածուն միշտ կմնան որպես այդ կարգի գրքերից ամենահետաքրքիրները:

Կուզենայի մեր բանասերներին հիշեցնել նաեւ մի շատ կարեւոր խնդրի մասին, որը, չգիտես ինչու, անտեսվում է, երբ խոսք է գնում հայ ժողովրդի հնագույն ժողովրդական երգերի մասին: Պատմահայր Մովսես Խորենացին, որ առաջինն է գրի առել մեր բանավոր երգերը, Արտաշեսի եւ Սաթենիկի սիրո մասին թողել է մի սքանչելի զրույց, որի ստեղծման տեղը Կուր գետն էր, նաեւ Արամի դաշտը, որին էլ հետագայում թուրք-սելջուկները անվանեցին Հարամի: Խնդիրն այն է, որ Հայոց Արեւելից երկրում, երբ դեռ իշխում էր հեթանոս հայերի դիցարանը, ժողովրդական երգերի հետ, հատկապես՝ ծիսակատարությունների ժամանակ, հանդես էին գալիս ծաղրանունները, այսինքն՝ առակախոսները:



Շատ հետաքրքիր է այդ մասին 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի պատմածը մի ծաղրածուի՝ Եպիսկոպոս Հովանի մասին: Սա գնում էր հայոց թագավորի մոտ խեղկատակություն անում: Պատմիչը նրա մասին գրում է. «Նա թագավորի առաջ ձեռքերի վրա ընկնելով չորեքթաթ էր տալիս, ուղտի նման կռանչում էր, ուղտի նման շրջվելով: Կռանչելու ժամանակ մի-մի խոսքեր էր խառնում կռանչելու ձայնով ու ասում ուղտ եմ, ուղտ եմ, թագավորի մեղքերը վերցնում եմ, վրա դրեք թագավորի մեղքերը, որ վերցնեմ»:

Եթե ժողովրդական երգիծաբաններ Պըլը Պուղին, Պոլոզ Մուկուչը, Տմբլաչի Խաչանը ազնիվ, արդար մարդիկ են, ապա Փավստոս Բուզանդի նկարագրած Հովհան երկիծաբանը (Փավստոս Բուզանդ - Երեւան, 1968 թ., էջ 294, 302, 303, 304, 305) մի իսկական միմոս է, որը կարողանում է ծամածռություններով այնպես գրավել թագավորի ուշադրությունը, որ անգամ գյուղեր է նվեր ստանում նրանից:

Հովնան երգիծաբանը կարողանում է մի ավազակի խաբել, մոլորեցնել, խլել նրա ձին, փոխարենը որպես վարձ նրան ձեռնադրելով քահանա: Մենք այս փաստի վրա կանգ առանք, քանի որ ղարաբաղյան շատ ավանդապատումների մեջ հանդիպում ենք մարդկանց, որոնք աճպարարներ են, հեքիմներ, միմոսներ, փահլեւաններ:

Ժողովուրդը նրանց օժտել է գերբնական ուժով, հնարամտությամբ:

Մենք Ղարաբաղում ունենք դարերի հեռվից եկող դրանց իրական ապացույցը նյութական մշակույթի օրինակով:

Ստեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանում պահվում է այծամարդու դիմակով բրոնզե մի արձանիկ, որը գտնվել է Բադարա գետի հովտում, Նորագյուղի մոտ բրոնզեդարյան մի դամբարանից: Այդ դամբարանադաշտը ուսումնասիրված է եւ համարվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի հուշարձան: Այնպես որ, այդ արձանիկի նշանակությունը մեծ է համաշխարհային մասշտաբով, հատկապես՝ թատերական արվեստի ակունքները ճշտելու համար:

Պըլը Պուղու բանահյուսությունը կազմելիս մենք գիտակցաբար ընդլայնել ենք մեր տեսադաշտը: Միամտություն կլինի կարծել, որ այն բոլոր սրամտությունները, որոնք վերագրվում են Պուղուն, նրանն են: Պըլը Պուղին հիմա ինչ որ չափով հավաքական կերպար է: Նա զուտ զվարճախոս չէր: Մելիք Շահնազարի մոտ նա եւ երգիծաբան է, եւ արդար դատավոր, եւ խորհրդատու, շարքային ծառա: Ուստի նա երեւում է ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերում:

Լեռնային Ղարաբաղի յուրաքանչյուր գյուղ, ավան, քաղաք հիմա էլ ունեն իրենց զվարճախոսները: Օրինակ, Ղզղալայում հայտնի է Բուդին, Շուշի քաղաքում Թեզին, Վանքում Գլեչի Միշան, Ստեփանակերտում Չոփուռ Անդոնը, բոթուլ հավաքող Սարգիսը, Կարթակուրթը, Կարմիր գյուղում Մուքին ու Բեդին, Մարտակերտում Ցաքի դային եւ այլն:

Ղարաբաղի գյուղերում Պըլը Պուղու զրույցները հավաքելու ժամանակ բազմիցս լսել եմ այսպիսի զրույց. մինչեւ 1920 թվականը Ղարաբաղի ամեն գյուղ ուներ իր ծաղրածուն: Դրանք հանդես էին գալիս հատկապես ձմռանը, դաշտային գործերից ազատ օրերին: Ծաղրածուն նստում էր էշի վրա, ապա նրա շուրջն էին հավաքվում գյուղի առավել անտիպ մարդիկ, զուռնադհոլով գնում էին քյոխվի, տերտերի կամ հարուստ ու նշանավոր մի մարդու մոտ, նրանց վրա դնում քեֆի պարտականությունը: Հաճախ այդ մարդկանց կատակները չափազանց ծանր էին նստում նրանց վրա: Պատմում են, օրինակ, որ Ակու անունով մի երգիծաբանի Հաթերք գյուղում ժայռից ցած են նետել նրա համար, որ կոտրած կարաս է հագցրել քյոխվի գլուխը:

Կան նաեւ սրամիտների անուն հանած գյուղեր: Դրանցից են Հաթերքը, Խնուշինակը, Խանցքը, Հարավը: Երբ խոսք է լինում ժողովրդական բառ ու բանով խոսելու մասին, Ղարաբաղում ասում են ամեն գյուղից մեկը, Հաթերքից, Խանցքից, Խնուշինակից որը պատահի:

Ժողովածուն կազմելիս ակամայից կատարել ենք շեղումներ ընդհանուր այն օրինաչափություններից, որ հատուկ է Ղարաբաղի բարբառին: Խնդիրն այն է, որ միեւնույն անեկդոտը, զրույցը, առակը կամ ասվածքը տարբեր մարդկանց մոտ հնչում են տարբեր տառադարձությամբ:

Օրինակ՝ ծուն դառնում է ծու, ձյունը՝ ծուն, բամբակը՝ բեմբակ, օձը՝ օխձը, կարմիրը՝ կյարմուր, լավը՝ ըավ, գդալը՝ քթալ, կեսօրը՝ քսօր, ջուրը՝ ճուր, բերանը՝ պերան, բարձը՝ պեցուր եւ այլն:





*Այծամարդու դիմակով բրոնզե այս արձանիկը պահվում է Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում: Այն գտնվել է Բաղարա գետի հովտի բրոնզեդարյան մի դամբարանից: Դա ցույց է տալիս, որ երգիծանքը բոլոր դարերում էլ ուղեկցել է մարդկանց:*

Դրանք գրի են առնվել տարբեր ժամանակներում, տարբեր մարդկանց պատմածից, ուստի Ղարաբաղի խայտաբղետ բարբառների առկայությունը զգալի է այս նյութերի մեջ։

Ղարաբաղի բարբառի ողջ հմայքը կարելի է վայելել, կարդալով Տմբլաչի Խաչանի «Ղլցե կնանոց պեն, փեշակը» (1882 թ.) եւ «Զուռնա տմբլա» (1901 թ.) գրքերը եւ ուրիշ գործեր։

Պետք է խոստովանել, որ Ղարաբաղի բարբառը չիղկված ադամանդի պես փայլում է Լեւոն Աթաբեկյանի եւ Գուրգեն Գաբրիելյանի չափածո գործերի մեջ։ Այս բնագավառում բոլորովին նոր անուն է ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, քաղաքագետ Ալեքսանդր Մանասյանը։ Վերջերս մամուլում հրատարակված նրա մի քանի չափածո գործերը վկայում են, որ նա հրաշալի է հասկանում Ղարաբաղի բարբառի հմայքը։

Պետք է նկատել, որ վերջին 70 տարիների ընթացքում, կապված Լեռնային Ղարաբաղում պարտադիր միջնակարգ կրթության հետ, գրեթե բոլոր գյուղերում էլ իշխում է գլխավորապես ժամանակակից հայոց լեզուն։ Ովքե՞ր են այսօրվա մեր բանասացողները, բանահավաքները, նրանք, ովքեր անցել են նորօրյա մեր կյանքի ճանապարհը եւ խոսում են գրական հայերենով, իրենց հետ բերելով նաեւ իրենց միջավայրի անջնջելի, անմոռանալի բարբառային բառեր ու ոճ։

Կազմելով «Պըլը Պուղի» ժողովածուն, մենք ցանկացել ենք ընթերցողներին մատուցել Ղարաբաղի հարուստ բանահյուսության նմուշներ, գրեթե բոլոր ժանրերից։ Այդ նյութերի մեծ մասը, իմ կարծիքով, գրականություն են մտնում առաջին անգամ։ Սրանով է հետաքրքիր իմ կազմած «Պըլը Պուղին»։

*Հրաչյա ԲԵԳԼԱՐՅԱՆ*



# ՊՈՒՂԻԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԵՐ



ՊԸԼԸ ՊՈՒՂԻ



*Գործ՝ Հայաստանի ժողովրդական նկարիչ Հրաչյա Ռուխկյանի*





## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՎԱՐՍԱՎԻՐ

Պըլը Պուղին մեկ-մեկ դուրս էր գալիս մոտիկ գյուղերը, վարսավիրություն անելու: Մի անգամ Սոս գյուղում իր քոռ ածելիով թրաշում էր նալբանդ Ղուկասի երեսը: Մարդը ատամները սեղմած մի կերպ դիմանում էր ցավին, իսկ Պըլը Պուղին շարունակ հարցեր էր տալիս նրան.

-Ասում ես ամուսնացա՞ծ ես, հա, մեծ օջախ ե՞ք, քա՞նի ախպեր եք, ախպերացու՛:

- Վեր ծիլուդ տական սաղ-սլմաթ պրծնեմ, ինձանավ վեց ախպեր ընք,- պատասխանում է Պըլը Պուղու սրամիտ հաճախորդը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՎԱՐՁԸ

Էլի Սոս գյուղում էր: Պուղին շարունակում էր քոռ ածելիով թրաշել մարդկանց երեսը: Պըլը Պուղու հաճախորդը ցավից տնքում էր, քրտնել էր նաեւ ինքը՝ Պըլը Պուղին: Երբ վերջացրեց, հաճախորդը մի ոսկե դրամ դրեց սեղանին, շնորհակալություն հայտնեց ու գնաց: Անցնում է մի շաբաթ, մարդը նորից է գալիս Պըլը Պուղու մոտ: Պըլը Պուղին այս անգամ սուր ածելիով կարգին թրաշում է նրա երեսը: Երբ վերջացնում է, մարդը մի պղնձե դրամ է տալիս Պըլը Պուղուն, խոր գլուխ տալիս ու հեռանում:

Պըլը Պուղին նրա հետեւից կանչում է.

- Կաց, ախպերացու, էս ոնցա՞, էն անգամ մի ոսկի ես տվել, էս անգամ... ախր ես հիմա շատ լավ թրաշեցի երեսդ:

-Էն անգամ ծիլիդ քոռ էր, համ դու ես չարչարվել, համ՛ ես, իմ ու քո չարչարմունքի գինը մի ոսկի տվի, հիմա համ դու հեշտ պրծար, համ՛ ես,- պատասխանում է Պըլը Պուղու հաճախորդը:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԶԱՐՄԱՆՈՒՄ Է

Օրվա հացին կարոտ մարդ էր Պըլը Պուղու հայրը: Դրա համար էլ Պուղին ամբողջ տարին մի շալվար էր հագնում: Երբ շալվարը ծակվում կամ կեղտոտվում էր, օրերով պառկում էր, դե իր ամեն անգամ արեւ չի լինում, որ Պըլը Պուղու շալվարը շուտ չորանար:

Այդ շալվարի մեջ էլ Պուղին դպրոց գնաց: Մի առավոտ, երբ Պըլը Պուղին սովորականի պես դպրոց էր գնում, հանկարծ աչքը ընկավ իր վարժապետի շալվարին, որը բակի ցանկապատի վրա չորանում էր: Պուղին շրջվեց դեպի իրենց տուն ու ճանապարհին իր դասընկերներից ում հանդիպեց, հայտարարեց.

-Էսօր դաս չկա, գնացեք տուն, վարժապետի շալվարը իրեն չափարի վրա փռփռում ա:

Մեծ եղավ Պուղու զարմանքը, երբ հաջորդ օրը իմացավ, որ վարժապետը դասից չի բացակայել:

-Ամոթ չինի հարցնելը, վարժապետ, երեկ չընգլիհադի՞ ես դասի եկել,- զարմանքով հարցրեց Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ԿՆՈՋԸ

Չանախչի գյուղում մի լոթի տղա է լինում, նստում է աղբյուրի ճամփին ու մտիկ տալիս ջուրը գնացող ջահել կանանց ու աղջիկներին: Մեկ-մեկ էլ «օխայ» է կանչում նրանց հետեւից ու թե.

-Աչքերդ ուտեմ, հարսիկ ջան:

Պըլը Պուղու կինն էլ մի շատ սիրուն, ջահել հարս է լինում: Մի անգամ սրա հետեւից էլ է «օխայ» կանչում լոթին ու թե.

-Աչքերդ ուտեմ, հարսիկ ջան:

Պըլը Պուղու կինը գալիս գանգատվում է ամուսնուն:

-Դրա համար սիրտդ մի կոտրիր, կնիկ ջան,- հույս է տալիս Պըլը Պուղին եւ ավելացնում. «Որ մեկ էլ ասի աչքերդ ուտեմ, ասա՝ թող գնամ մեր Պողոսից հարցնեմ, ոտներս էլ կեր»:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՑ ԽԵԼՔ Է ԽՆԴՐՈՒՄ

Մելիք Շահնազարը մի օր ցանկացավ ծեռ առնել Պըլը Պուղուն:

-Պուղի, ա մեռած, մի քիչ խելք փոխ տուր ինձ, ի՞նչ կլինի, եկող տարի փոխը կտամ:

-Ողորմած հոգի, քու հերն էլ փոխ առավ, բանեցրեց, բանեցրեց, վերջը չկարողացավ փոխը տալ, էդպես էլ պարտական մեռավ: Դու դեռ հորդ պարտքը տուր, հետո փոխ ուզիր.- պատասխանում է Պըլը Պուղին:





## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Պըլը Պուղու շունը կծում է տանուտեր Օհանի ոտքը, սա գնում գանգատվում է Մելիք Շահնազարին: Մելիք Շահնազարը կանչում է Պըլը Պուղուն, նախատում.

- Այ գյադա, շունդ ինչու՞ չես պահում:

- Մելիքն ապրած կենա, ասենք թե դու շուն ես, քեզ հաց են տալիս, որ քո տիրոջ բակը պահես, հիմա օրը ցերեկով մի մարդ եկել է չաթուն գցել հորթի վիզը, տանում ա, դու նրա ոտքը կկծե՞ս, թե չէ, - բացատրում է Պըլը Պուղին:

-Կկծեմ, - պատասխանում է Մելիքը:

-Ողորմի քո հորը, իմ շունն էլ քեզ նման մի արդարադատ է, դրա համար էլ կծեց նրան: Մի հարցրու, թե տանուտեր Օհանը ի՞նչ էր անում ուրիշի բակում, որ շունը ոտքը կծեր...

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՍՈՒՄ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակից շուտ ճերմակել էր Մելիք Շահնազարի բեղն ու միրուքը, դրա համար էլ ամեն տեղ հպարտանում էր, թե դա շատ խելոք լինելուց է սպիտակել: Պրուղին գիտեր, որ Մելիքի գլուխը դդումի պես է, ուստի մի անգամ չհամբերեց.

-Մելիքն ապրած կենա, թե որ ամեն սպիտակ մազ իր տակ իմաստունի խելք ունենա, մեր բոզ էշը հո իմաստուն պիտի ծնվեր:

## ԻՆՉ ՏՆԿԵԼ ԵՍ, ԷՆ ԷԼ ԲՍԵԼ Է

Մելիք Շահնազարի հոր գերեզմանի վրա կածուկ էր բսել, Պըլը Պուղու հոր գերազմանի վրա՝ մանուշակ:

- Էս ի՞նչ բանա, Պուղի, քո հոր գերեզմանի վրա վարդ ու մանուշակ ա բսնում, իմ հոր գերեզմանի վրա՝ կածուկ:

- Մելիք, էստեղ ի՞նչ դժվար բան կա չհասկանալու, ինչ տնկել ես, էն էլ բսել ա:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ «ԽԵԼՔԻ ԴԵՂ» Է ԸՆԴՈՒՆՈՒՄ

- Պուղի, էդ ի՞նչ ես ուտում, որ այդքան խելոք ես:

- Ուտելուց չի, Մելիք Շահնազար, ես ամեն օր խելքի դեղ եմ ընդունում:

- Որ այդպես ա, այդ խելքի դեղից տուր, ես էլ ընդունեմ:

- Աչքիս վրա, - ասաց Պուղին ու հաջորդ օրը մի բուռ նապաստակի կտետ դրեց Մելիքի սեղանին:

- Ամեն օր 4-5-ը հացի հետ կեր, թե խելքդ չգա պատասխանատու եմ:

Մելիքը կատարեց Պըլը Պուղու խորհուրդը, մի շաբթից հետո գլխի ընկավ, որ ոչ թե դեղ, այլ նապաստակի կտետ է ուտում:

-Պուղի, ա մեռած, սա կարծես նապաստակի կտետ լինի, - ասաց Մելիքը:

-Հիմա որ խելքդ եկել ա, - ծիծաղում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԼԱՇԱԿ Է ԳՑՈՒՄ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԳԼԽԻՆ

Մելիք Շահնազարը եւ իր աղջիկը գնում են որսի: Անտառում դաչաղները վրա են տալիս, ուզում են խլել Մելիքի ձին ու զենքերը, առեւանգել աղջկան: Մելիքը վախից փախչում է, իսկ աղջիկը դիմադրում է ու հաղթում: Երեկոյան, երբ աղջիկը վերադառնում է որսատեղից ու պատմում այդ դեպքի մասին, Պըլը Պուղին հանդիսավոր կերպով ժողովրդի առաջ վերցնում է աղջկա լաչակը ու գցում Մելիքի գլխին, իսկ Մելիքի փափախը աղջկա գլխին է դնում:

-Էդ ի՞նչ ես անում, Պուղի, - հարցնում են մարդիկ:

Պըլը Պուղին պատմում է եղելությունը եւ ասում.

-Մեր Մելիքը կնկա սիրտ էլ չունի, սրա գլխին տղամարդու փափախ դնելը ամոթ ա:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԷՇԻ ՔՈՒՌԱԿԻՆ

- Պուղի, մի էշի քուռակ ունեմ, վերցրու դաստիարակի,- մի օր Պըլը Պուղուն ձեռ է առնում Մելիքը:

- Դեմ չեն, բայց էշի դաստիարակությունը շատ լուրջ գործ ա, շատ ժամանակ ա հարկավոր եւ բարձր վարձ:

- Քանի տարի՞ եւ ինչքա՞ն վարձ:

- 10 տարի ժամանակ եւ 100 ոսկի՝ ես գլխից:

- Ոսկին տալիս եմ, բայց որ 10 տարուց հետո էշը կարգին գրել-կարդալ չիմանա, գլուխդ կկտրեմ, - համաձայնվում է Մելիքը:

- Դեմ չեմ, - ասում է Պըլը Պուղին ու ստանում 100 ոսկին:

- Պուղի, կորած ես, - ասում են համագյուղացիները:

- Ինչու՞:

-Էշը կսովորի՞ որ, Մելիքը գլուխդ կտրելու ա 10 տարի հետո:

-Ձեր տունը շինվի, 10 տարուց հետո յա էշն ա սատկելու, յա իշատերը, - ուրախ-ուրախ պատասխանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՏԵՐՏԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ԱՅԾ Է ԲԵՐՈՒՄ ՄԵԼԻՔԻ ՄՈՏ

-Պուղի, մի վազիր տերտերի մոտ, ասա թող սեղանը օրհնի, սոված մեռանք, - մի օր կարգադրում է Մելիքը:

-Պըլը Պուղին գնում է տերտերի հետեւից, տերտերին տանը չի գտնում, շատ որ ման է գալիս դես ու դեն, վերջը փողոցում մի այծ է գտնում, բռնում է, բերում Մելիքի մոտ: Մելիքը բարկանում է նրա վրա, իսկ Պըլը Պուղին էլ այծի.

-Տո, հեր օրհնած, դե խոսիր է՛, բա էլ ինչու՞ ես տերտերի պես միրուք պահում, որ չես կարողանում մի սեղան օրհնել:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԷՇԻ ԱՆՊՈՉ ՔՈՌԱԿԸ

Մելիք Շահնազարի էշը մի անպոչ քոռակ ծնեց: Պըլը Պուղին շատ տխրեց դրա համար ու էլ չէր կատակում: Մի օր հարեւանները հարցրին.

-Ա Պուղ, քեզ ի՞նչ ա պատահել. քանի օր ա ունքամեջդ չի բացվում:

Ինձ ոչինչ էլ չի պատահել. ինչ որ պատահել ա, Մելիք Շահնազարին ա պատահել:

-Ախր ի՞նչ ա եղել:

- Բա չեք լսե՞լ. էշը քոռակ ա ծնել, անպոչ:

-Դե, դա ի՞նչ դժբախտության ա. հիմա էլ թող պոչ չունենա:

-Դժբախտությունը հենց դայա, որ կա: Հիմա քոռակը կմեծանա, էշ կդառնա: Էշը կտանեմ անտառ փայտ բերելու, բա որ ցեխի մեջ նստի բեռան տակ, որտեղի՞ց պիտի քաշեմ, բարձրացնեմ, հը՞...

## ԹՈՌԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ Է

Գարնանային մի օր, երբ տանը նստած քեֆ էին անում, դրսում սկսեց կայծակը խաղալ, հետո լսվեց որոտի ուժգին ձայնը:

- Ա Պուղ, մի դուրս եկ, տես անձրեւ է գալի՞ս, - կարգադրեց Մելիքը:Պըլը Պուղին դուրս եկավ պատշգամբ ու ետ եկավ, լուռ ու մունջ նստեց տեղը:

- Հը՞, անձրեւ ա գալիս, թե՝ չէ:

- Մելիքն ապրած կենա, բա թոռը թողնու՞մ ա, որ մարդ տեսնի անձրեւ ա գալիս, թե ոչ:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՆՍՏՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՁԻՆ

Մելիք Շահնազարը եւ Պըլը Պուղին գնում են Խաչեն: Մելիքը՝ ձիով, Պուղին՝ ոտքով: Ճանապարհին Ցեխ ձորի աղբյուրի մոտ կրակ են վառում, խորոված անում: Մելիքը գինի է խնդրում, Պըլը Պուղին մի փարչ գինի է տալիս նրան:

-Մի փարչ էլ, Պուղի, հազիր ախորժակս բացվել ա.- խնդրում է Մելիքը:

Պըլը Պուղին մի փարչ գինի էլ ա տալիս: Հետո Մելիքը խմում է երրորդը, չորրորդը ու դառնում նրան.

-Այ գյադա, աչքիս երկու ձի է երեւում, էլ ինչու՞ ես ոտքով գալիս, նստիր մյուս ձին, գնանք:

-Ինչ եմ ասում,- համաձայնվում է Պըլը Պուղին ու նստում Մելիքի ձին:

-Այ գյադա, բա ե՞ս,-Պուղու հետեւից կանչում է Մելիքը:

-Դու էն մեկը նստիր:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՓԱՓԱԽԸ ԿԱՅԾԸ ԾԱԿՈՒՄ Է

Պըլը Պուղին հանդում կրակ է վառում, որ տաքանա, պեծը (կայծը) ընկնում է փափախի վրա, ծակում:

- Պահո՜, - մտահոգվում է Պուղին,- դե եկ, հիմա էլ մեկ-մեկ պատասխանիր մարդկանց, թե ինչու՞ է փափախը ծակ, - մտածում է ու վերջը գտնում ելքը. փափախը դնում է մահակի ծայրին, կանգնում գյուղի հրապարակում ու որքան ուժ ունի, ձեն տալիս.

- Ա խալխ, բոլորդ էլ լավ լսեցեք, փափախս հանդում պեծը ծակել ա, պեծը ծակել ա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳՈՒՇԱԿՈՒՄ Է

Մելիք Շահնազարը կանչում է Պըլը Պուղուն եւ հարցնում

- Պուղի, ի՞նչ ես կարծում, վաղը անձրեւ ա՞ գալու, թե ոչ, թե որ ճիշտ որոշեցիր, մի ոսկի կտամ:

- Մելիքն ապրած կենա, դրա որոշելը այնքան էլ հեշտ գործ չէ, ժամանակ տուր, գնամ կնոջս հետ խորհուրդ տեսնեմ: Երեկոյան Պուղին մտնում է Մելիքի մոտ եւ ասում.

- Մելիքն ապրած կենա, ես ասում եմ անձրեւ չի գալու, կինս ասում ա գալու ա: Թե որ երկուսից մեկը չեղավ, գլխովս պատասխանատու եմ:

Հաջորդ օրը անձրեւ եկավ եւ Մելիք Շահնազարը մի ոսկի տվեց Պըլը Պուղուն:





## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՀՈՐԸ ԵՐԱՆԻ ԵՆ ՏԱԼԻՍ

Մելիք Շահնազարի հայրը մեռավ, մելիքությունն անցավ Մելիք Շահնազարի որդուն: Դաժան մարդ էր Մելիք Շահնազար առաջինը, բայց մարդիկ նրան անիծելու փոխարեն երանի էին տալիս:

- Պուղի, ա մեռած, բա ասում էիր, որ քո հերը մեռնի, մարդիկ գյոռը հանգիստ չեն թողնելու, լսու՞մ ես, հիմա երանի են տալիս նրան, - մի օր ասաց Մելիք Շահնազարի որդին:

- Քեզ տեսնողը քո հորը ո՞նց չի ողորմի տա, ա ջան տղա,- դառնությամբ պատասխանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԷՇԸ ՄԱՏԱՂ Է ԱՆՈՒՄ

Պանդխտությունից տուն էր դարձել պառավ Հերիքնազի տղան: Պառավը ձեռքերը խաչել, կանգնել էր տխուր-տրտում: Մատաղ էր վիզ առել տղայի համար, բայց թարսի պես եղած-չեղած մատաղացու ոչխարը գայլը կերել էր: Դռանն էլ բացի մի էշից ոչինչ չուներ:

-Ալ պառավ, որ էշը ծախես, 5 շահի կտա՞ն:

-Կտան, - պատասխանում է պառավը:

-Դե ծախիր մի ոչխար ու մի էշի քուռակ առ, որ համ իշատեր դառնաս, համ էլ մուրազդ անկատար չմնա.- խորհուրդ է տալիս Պըլը Պուղին:

-Գլխովդ ջուռ տամ Պուղի, որ այդքան իմաստուն ես, - ասում է պառավը ու նույն օրը էշը ծախում, մի ղոչ ու մի էշի քուռակ առնում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԿՆՈՋ ԽԱՆՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

Պըլը Պուղին գնաց աղջիկ ուզելու: Հենց առաջին օրը զոքանչը պայման կապեց նրա հետ:

- Աղջիկս շաբաթը մի օր խանումություն է անելու, թե համաձայն ես՝ առ, թե չէ՝ թողիր ու գնա:

-Ոչինչ, ես էլ շաբաթը մի անգամ գժություն եմ անելու, իրար դուրս, պատասխանում է Պըլը Պուղին:

Այս պայմանով էլ ամուսնանում են:

Մի օր Պըլը Պուղին հոգնած-բեզարած հանդից դարձավ տուն, տեսավ կինը ոչ կրակ է վառել օջախում, ոչ սեղան բացելու պատրաստություն է տեսել:

-Էսօր իմ խանումության օրն է, - ասում է կինը:

Պըլը Պուղին բարկանում է, կոտրատում տան իրերը:

-Այ մարդ, ի՞նչ գործի ես:

-Հենց որ քո խանումության օրը գալիս ա, իմ էլ գժությունն ա բռնում, - պատասխանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՐԵՎ Է ՀԱՎԱՔՈՒՄ

Ամռան մի օր Պուղին մերկ պառկեց Մելիքի դռանը ընկած հսկա սալ քարին:

- Պուղի, ա մեռած, այս կրակ ամռանը ինչու՞ ես պառկել արևի տակ, եկ ծառի շվաքում պառկիր,- ասաց Մելիքը:

- Մելիք, հաստատ տեղից խաբար ունեմ, այս տարի ձմռանը խիստ ցուրտ ա լինելու, արեւ եմ հավաքում, որ հետո չմրսեմ:

-Այ տղա, որ այդպես է, ես էլ գամ արեւ հավաքեմ:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՒՏՈՒՄ Է ՓԼԱՎԸ, ՀԵՏՈ ԽՄՈՒՄ ԳԻՆԻՆ

Մելիք Շահնազարը Պըլը Պուղու հետ ծպտված շրջում են գյուղերում: Ուզում էր իմանալ, թե ով է իրենից դժգոհ, որ հետո կանչի ու գլուխը կտրի: Մի օր Պըլը Պուղին ու Մելիքը հյուր են ընկնում Գիշի գյուղում: Տանտերը կանչում է նրանց ու հարցնում.

-Մի աման փլավ կա, ձեզանից ո՞վ ա ուզում: Պուղին գլխով է անում, որ նշանակում է՝ ես: Հետո տանտերը մի փարչ գինի է դնում սեղանին:

-Եղածն էս ա, ու՞մ տամ:

Պուղին դարձյալ գլխով է անում, որ նշանակում է՝ ինձ:

Պըլը Պուղին փլավն ուտում է, գինին գլխին խմում ու աղավարի պառկում թախտի վրա:

-Բակում մի կաղնի գերան կա, ձեզանից ո՞վ կարող ա ջարդել, - քիչ հետո հարցնում է տանտերը:

Պուղին այդ ժամանակ ձեռքով խփում է Մելիքին ու ասում.

-Ա՛յ մարդ, երկու անգամ ես գլխով արի, մի անգամ էլ դու արա էլի՛, բա դու սկի նամուս չունե՞ս, դու սկի տղամարդ չե՞ս...

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԷՇԸ

- Ա Պուղ, պատրաստվիր, վաղը գնալու ենք Բարդա:

- Մելիք, էշս կորել է, գտնեմ, հետո:

- Այ գյադա, էշը ես եմ, տուն չեմ գա, ուրեմն ինձ հետ չուկա չեն գալու՞:

- Մելիք Շահնազար, մեր էշը քեզ նման անխելք չի, ուր որ ա կգա տուն:

## ՏԵՐՏԵՐԻ ՄԵՋ ԼՈՒՅՍ ՉԿԱ

Մի ժամանակ Պըլը Պուղին ծառայում էր եկեղեցում: Տերտերը շատ էլ գոհ չէր նրանից: Դե իր լեզու չէր, որ Պըլը Պուղին ուներ, իսկական օձի խայթ էր:

Մի օր էլ, երբ տերտերը ավետարան պիտի կարդար, սկսեց կմկմալ ու մեղքը գցել Պըլը Պուղու վրա, իբր թե ճրագը լավ չէր պահում:

- Արա, ճրագը դեսը պահիր:
- Պահեցի:
- Մի քիչ դենը պահի, հիմա էլ միրուքս ես խանձում:
- Պահեցի:
- Բարձր պահիր, բարձր, ա Պուղ:
- Պահեցի, - խոնարհ պատասխանեց Պըլը Պուղին:

Տերտերը էլի կմկմաց:

-Չէ, լավ չես պահում ճրագը, ա Պուղ:

-Տեր հայր, ճրագն ու ես մեղավոր չենք, քո մեջ լույս չկա: Մեկ ա, որ Մելիքի խոտի դեզերն էլ վառեմ, կրակ անեմ, էլի պիտի կմկմաս:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԿՇԵՌՔԸ

Մելիք Շահնազարը շատ սխալ գործեր էր կատարում: Պուղին ամեն անգամ չէր կարողանում ուղղակի դիտողություն անել, դրա համար էլ մի կշեռք սարքեց ու կախեց Մելիքի տան գերանից: Երբ Մելիքը ճիշտ էր վճռում հարցը, Պուղին կշեռքի նժարները հավասարեցնում էր, իսկ երբ սխալ էր վճռում, նժարի մեկը իջեցնում էր, Մելիքը այդ տեսնելով ուղղում էր իր սխալը:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԵՎ ՏԵՐՏԵՐԸ

Պըլը Պուղու կինը ամեն օր գալիս, գանգատվում է ամուսնուն, թե գյուղի տերտերը իրեն կանգնեցնում է ջրի ճանապարհին եւ ասում.

- Յարս ջան, որ Պուղին տանը չի լինում, մի անգամ հյուր կանչիր, ի՞նչ կլինի:

Պուղին այդ օրը նոր տուն էր շինում, մենակ մարդ, ծանր գործ: Մտածեց ու թե՝

- Կնիկ, գնա տերտերին ասա՝ Պողոսը տանը չէ, թող գա տուն, դու էլ մի քավթառ հավ մորթիր, դիր կրակին:

Կինը գնում, կանչում է տերտերին: Սա լընգլընգալով գալիս է կնոջ ետեւից ու մտնում տուն: Յենց որ տերտերը տուն է մտնում, դրսից հազելով ներս է մտնում Պըլը Պուղին:

- Ա, պարով, հազար պարով ես եկել, տեր հայր, լավ ժամանակին ես եկել, դե վեր, վեր մի քիչ թոթխար կա, տեղ տանք, մինչեւ հավը եփի:

Տերտերը ճարը կտրած վեր է կենում, հետեւում Պըլը Պուղուն: Ամբողջ օրը Պըլը Պուղին աշխատեցնում է նրան, ինչքան ծանր քար կա, շալակը տալիս: Իրիկունը տերտերը սոված փորով հասնում է տուն:

Անցնում է ժամանակ, Պըլը Պուղու կինը ջրի ճամփին մի օր հանդիպում է տերտերին ու ասում.

- Տեր հայր, Պուղին տանը չէ, վազը արի տուն:
- Յարս ջան, հո էլի տուն չե՞ք շինում:
- Չէ, մի քիչ չուլթակ կա թակելու:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՓՈՂԵՐԸ

Դիզակի Մելիք Ավանը մեծ հարգանքով էր խոսում զվարճախոս Պըլը Պուղու հետ, հավատացնում էր, որ նա զսպում է Մելիք Շահնազարին, կանխում նրա շատ վտանգավոր քայլերը: Մի օր, երբ մելիքները հավաքվել էին խորհրդի, Մելիք Ավանը կատակով խփեց Պըլը Պուղու մեջքին ու հարցրեց.

- Փողերդ որտե՞ղ ես պահում:

- Փողե՞րս... պարտք եմ տալիս, պարտք եմ մարում եւ ջուրը լցնում:

- Խուրդա արա, տեսնենք ինչ ես անում,- Նորից հարցրեց Մելիք Ավանը:

- Փողերիս մի մասը տալիս եմ ծնողներիս, այսինքն մարում եմ պարտքերս: Մի մասը տալիս եմ տղաներիս, այսինքն՝ պարտք եմ տալիս, մյուս մասով էլ պահում եմ աղջիկներիս համար, այսինքն՝ ջուրն եմ ածում, որովհետեւ ձեռքիցս կթռչեն, կգնան:

- Բա ես ասում եմ չէ, որ Պըլը Պուղին իմաստուն մարդ ա. - Նրա պատասխանից գոհ ասում է Մելիք Ավանը ու մի բուռ ոսկի լցնում նրա գրպանը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՀՅՈՒՐԸ

Հարեւան գյուղի գզիրը մի գիշեր հյուր է մնում Պըլը Պուղու տանը: Այդ գիշեր Մելիքի տանը հարսանիք է լինում. Պըլը Պուղին անհարմար է զգում իր հյուրին մենակ թողնել տանը, ուստի իր հետ հարսանիք է տանում չմոռանալով ճանապարհին մի քանի օգտակար խրատներ տալ նրան:

- Ղոնաղ մարդ ես, որտեղ ցույց տան, էնտեղ էլ կնստես, ոչ շատ կխմես, ոչ էլ անտեղի կխոսես:



Տեղ են հասնում թե չէ, Պըլը Պուղու հյուրը գնում, նստում է սեղանի գլխին: Հյուրերը գալիս են ամեն եկողի տեղ տալով, գզիրը հասնում է սեղանի վերջին: Հարսանիքի էն լավ պահին, Պըլը Պուղին նայում է, տեսնում իր հյուրը ոչ կարգ է նայում, ոչ կանոն, ինքն իր համար լցնում է բաժակը ու գլխին քաշում: Աչքով-ունքով է անում, բայց լսողը ո՞վ է, գզիրը հիմա ինքն էր ուզում, որ լսեն իրեն: Որ չափը անց է կացնում, նրան քշում են հարսանիքից: Պըլը Պուղու հյուրը «ութ» գրելով գնում է, ինքն էլ չգիտեր, թե ուր, մեկ էլ՝ չըրպ, ընկնում է ցեխաջրի մեջ ու լող տալիս:

- Տո՛, հեր օրհնած, հարսանիքում չես քո տեղը ճանաչում, մեր տան ճամփան ինչու՞ մոռացար, դե վեր կաց, էսա մի ժամից հետո լույսը կբացվի, վեր կաց գնա, թե չէ, որ թաղի խոխեքը քեզ այդ դրության մեջ տեսնեն, կիմանան թե շնաքթոլից փախած ջուն ես, քարով կտան, վեր կաց գնա, էս գիշեր համ շնորհքդ ցույց տվիր, համ՝ հունարդ:

## ԻՆՉԻ՞ Դ Է ՊԵՏՔ ԳԵՂԵՑԻԿ ԿԻՆԸ

Աշան գյուղից մի երիտասարդ գալիս է Մելիքի մոտ, գանգատվում.

- Աներս խաբել ա ինձ, գեղեցիկ աղջիկը ցույց ա տվել, տգեղը վրաս պսակել, հիմա ի՞նչ անեմ:

- Տար տգեղը տուր իրեն, քո տեսած, հավանած աղջիկը առ, - խորհուրդ է տալիս Մելիքը:

Երբ երիտասարդը հեռանում է Մելիքի տնից, գյուղի ծայրին նրան մի կողմ է քաշում Պուղին ու խրատում:

- Յա մեր Մելիքի խելքը, յա քոնը: Հալա մի ասա տեսնեմ, ինչի՞դ ա պետք գեղեցիկ կինը, տարուն շատը հանդում ես լի-

նում, կինդ էլ գեղեցիկ, մենակ կին, գյուղի տղորանց աչքը վրան: Գնա, գնա, փափախդ գլխիդ նամուսով ապրիր տգեղ կնոջդ հետ, գործ չունես ղալմաղալի հետ:

Տղան լսելով Պըլը Պուղու խորհուրդը, գալիս է տուն, հաշտվում կնոջ հետ ու ապրում հանգիստ ու երջանիկ:

## ՏՂԱՄԱՐԴՈՒ ԽՈՍՔԸ ՄԵԿ ԿԼԻՆԻ

Քանի՞ տարեկան ես, Պուղի, - մի անգամ հարցնում են Պըլը Պուղուն:

-Յիսուն, - պատասխանում է նա:

Անցնում է մի քանի տարի, էլի թե Պուղի, քանի՞ տարեկան ես:

-Յիսուն, - պատասխանում է Պըլը Պուղին:

-Տնաշենի տղա, մի քանի տարի առաջ ես ասել 50 տարեկան եմ, բա դու սկի չե՞ս մեծանում:

-Տղամարդու խոսքը մեկ կլինի, - ասում է Պըլը Պուղին:

## ԱՇԽԱՐՅԻ ՎԵՐՋԸ

- Պուղի, աշխարհի վերջը գալիս ա, ինչ լավ բան ունես, բեր ուտենք, - մի օր ասաց Մելիքը:

-Ինչ եմ ասում, - համաձայնվեց Պըլը Պուղին ու այդ գիշեր մորթեց իր մինուճար ոչխարը, քեֆ արավ Մելիքի հետ: Յաջորդ օրը Պըլը Պուղին գնաց, բաց արավ Մելիքի հորերը ու ցորենը բաժանեց աղքատներին: Մելիքը լսեց ու բարկացավ:

-Գլուխդ կտրել կտամ, ո՞նց ես համարձակվել առանց իմ թույլտվության այդպիսի բան անել:

- Այ մարդ, դու չասացի՞ր, թե աշխարհի վերջը գալիս ա, դրանից հետո ցորենը պահում ես ի՞նչ անես, - արդարանում է Պըլը Պուղին ու բեխի տակ ժպտում իր արարմունքի վրա:



## ԱԴԻ, ՍԱՄԵՆ

-Պըլը Պուղին ու խնամի տերտեր Մանասը միասին էին սեղան նստում: Պուղին հոգնած, բեզարած մշակ, Մանասը կերած, խմած մարդ: Յենց որ Պըլը Պուղու ախորժակը բացվում էր, տեր Մանասը ասում էր.

- Ամմա կերանք, հա՛, կնիկ, հավաքիր սեղանը:

Այդպես կրկնվում է մի քանի անգամ: Մի օր, երբ տեր Մանասը գնում է հանդ, Պըլը Պուղին եզան վզից հանում է հոնի սամեն ու մի լավ ծեծում նրան: Յաջորդ օրը էլի սեղանի վրա տեր Մանասը սխալմամբ ասում է.

-Ամմա կերանք, հա՛, կնիկ:

-Ադի, սամեն,- բարկանում է Պըլը Պուղին:

-Ծամի, Պուղի, ծամի, ուզում եմ ասել, որ գլխին էլ մի գավաթ թան խմենք, վատ չի լինի, - սամու անունը լսելով, խոսքը փոխում է տեր Մանասը:

## ԱՍՏՎԱԾ Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ

- Պուղի, բալքի դու իմանաս, աստված ի՞նչ գործի ա վերեւում, - մի օր Պըլը Պուղուն հարց է տալիս Մելիք Շահնազարը:

- Մելիք, աստված փիլիքան ա շինում, որ վերեւինը իջնի, ներքեւինը՝ բարձրանա, - պատասխանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՒՐԱԽԱՑՆՈՒՄ Է ԶՈՒՌՆԱՆՉԻ ՀԱԲՈՒՆ

Մելիք Շահնազարը ցանկացավ պարտքի տակ թողնել Պըլը Պուղուն, որ էլ մեծ-մեծ չխոսի, մասխարա չանի իրենով: Մի օր նրան կանչեց իր մոտ ու թե՝

- Պուղի, տղայիս համար յոթ օր, յոթ գիշեր հարսանիք եմ անելու, զուռնաղավալի ծախսը քո վզին:

- Դեմ չեմ, - համաձայնվեց Պուղին ու գնաց Վարանդայում անուն հանած ղավալ Հաբու մոտ:

- Վաղը խումբդ վերցրու, եկ Մելիքի տունը, հարսանիք պիտի անենք յոթ օր, յոթ գիշեր վախել մի, քանի օր նվագես, այնքան ոչխար եմ տալու, չաբաշն էլ՝ վրան: Երբ հարսանիքը վերջացավ, Հաբին գնաց Պուղու մոտ ու խնդրեց իր վարձը:

-Ի՞նչ վարձ, ջանում, ես յոթ ոչխար խոստացա, դուք ուրախացաք, դուք էլ նվագեցիք, մենք ուրախացանք, իրար դուրս, էլ ի՞նչ ես ուզում, - կատակեց նա, բայց հաջորդ օրը կարգադրեց Մելիքի ոչխարի հոտից յոթ ոչխար ու մի ջվալ ցորեն տալ նրան:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՔԵՖ Է ԱՆՈՒՄ

Պըլը Պուղին իր տուն կանչեց ղավալ Հաբուն եւ խնդրեց նվագել: Զուռնի ձենի վրա Մելիքը եկավ, մտավ Պըլը Պուղու տունը ու զարմացած հարցրեց.

- Արա, Պուղի, ոչ նշանած աղջիկ ունես, ոչ էլ՝ տղա, էս ի՞նչ զուռնաղավալ ա, առանց թաղարիքի էս ի՞նչ հարսանիք ա:

-Մելիք, այդ ե՞րբ եկար, որ չնկատեցի, բարով ես եկել, տունը քոնն ա, հրամայիր յոթ - ութ ոչխար մորթեն, մի հինգ-վեց թոնիր էլ հաց թխեն, մի հինգ-վեց գինու կարաս բաց անեն, էս գլխից ղավալի փողն էլ տուր, որ ուրախ սրտով նվագեն, չաբաշն էլ դու քո աստվածը, որքան կտաս, կտաս, էսքանից հետո թե որ հարսանիք չդառնա, քեֆը կա ու կա: Դե ղեկավարիր, ես էլ գնամ մարդկանց կանչեմ, - ասում է Պըլը Պուղին ու դուրս գնում հյուրերին կանչելու:

Մելիքին էլ այդպիսի մի մահնա էր պետք, եւ նա կարգադրեց քեֆի պատրաստություն տեսնել:

## ՄԵԼԻՔԻ ՇՈՒՆԸ ԿԱՇԱՌՔ Է ՈՒԶՈՒՄ

- Էս ի՞նչ բան ա, Պուղի, էսքան տարի ծառայում եմ Մելիքի տանը, էլի շունը վրաս չի սովորում, մինչեւ ռեխը մի բան չեմ գցում, թույլ չի տալիս մտնեմ բակ, - մի օր հարցրեց ծառա Հանեսը:

- Մելիքի շունը, ինչքան չլինի, դեպի իր տերն է քաշել, դա էլ այդ ձեւի է կաշառք ուզում, էլի...

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՐԱՏՈՒՄ Է

Համագյուղացի Թեւին խաբար տանող-բերող մարդ էր: Մի օր սա փողոցում կագնեցրեց Պըլը Պուղուն ու թե.

- Պուղի, երեկ չգիտեմ ինչու՞ Ղազարը քեզ հորով ասեց:

- Այ Թեւի, հիմի դու ինչու՞ ես Ղազարի էն դրու տրաքած թվանքը ուղիղ սրտիս դեմ անում:

- Չհասկացա, Պուղի, ի՞նչ թվանքի մասին ես խոսում, - զարմանում է խբրբիզան Թեւին:

- Բա կհասկանաս: Ասում եմ, Ղազարի ասածը աննպատակ գյուլլա էր, տրաքեց, մի տեղ ընկավ, հիմա դու ինչու՞ ես այդ գյուլլան նորից սրտիցս տալիս,- նեղացած ասում է Պըլը Պուղին ու բաժանվում:

Դրանից հետո Թեւին էլ խաբարբիզություն չէր անում:





## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՇԱԼԱԿՈՒՄ Է ԽՈՒՐՋԻՆԸ, ՆՍՏՈՒՄ ԷՇԻ ՎՐԱ

Պըլը Պուղին մի անգամ տուն էր դառնում շուկայից: Ձմերուկ էր գնել, լցրել խուրջինը, գցել էշով: Ճանապարհին էշը քարավանից ետ ընկավ, Պըլը Պուղին շալակեց խուրջինը ու նստեց էշի վրա:

- Ա չու, հիմա էլ ձմերուկը ես եմ շալակել, ինչու՞ ես ետ մնում, - նեղանում է Պըլը Պուղին ու բզում էշի թիկունքը:



## ՕՐ ՈՒ ՄԵՋ ԱՊՐԵՍ

Պըլը Պուղին կարկատած արխալուղը հագին մտնում է Մելիք Շահնազարի պալատը: Մելիքը նայում է նրա կարկատած արխալուղին ու ձեռ առնում.

- Պուղի, խլեղդ տեղ-տեղ շնորհավոր լինի:

- Օր ու մեջ ապրես, Մելիք Շահնազար, - պատասխանեց Պուղին:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ ՇԱԼԱԿՈՒՄ Է ՊՈՒՂՈՒՆ

Մելիք Շահնազարը մտածում է Պըլը Պուղուն մի փորձանքի մեջ գցել, որ նրանից հետո հիշեցնի նրան ու միշտ ծիծաղի նրա խելքի վրա: Մտածում է ու գտնում ելքը:

- Պուղի, իմ պապը ահագին ոսկի է թաղել մի խոր հորի մեջ, արի գնանք հանենք, կեսը կտամ քեզ, - մի օր ասում է Մելիքը:

Պուղին համաձայնվում է, եւ գնում են: Մելիքը Պուղուն թոկով կապում է, կախում հորի մեջ: Հենց որ Պուղին հասնում է դատարկ հորի հատակը, Մելիքը թոկը բաց է թողնում, գցում հոր:

- Պուղի, ոսկին քեզ, ես գնացի, - վերեւից հորի վրա կռանում ու ձեն է տալիս Մելիքը:

- Այ մարդ, ի՞նչ ոսկի, էստեղ երկու մոթալ պանիր կա միայն,- իմանալով բանը ինչումն է, ներքեւից ձեն է տալիս Պըլը Պուղին:

- Հա՞, դե որ այդպես է, ջվալը կախեմ, գցիր մեջը քաշեմ, հետո էլ քեզ կքաշեմ:

Երբ ջվալը հասնում է հորի հատակը, Պըլը Պուղին մտնում է մեջը, թոկի ծայրը կապում տանգերից ու ձեն տալիս.

- Քաշիր:

Մելիքը մինչեւ «պանիրը» հանում է հորից, քտինքը պատում է:

-Պուղի, դե ես գնացի, դու տես ինչ ես անում, - վերջին անգամ հորի վրա կռանալով,ասում է Մելիքը, - ապա շալակում է ջվալը ու գնում տուն:

-Հիմա Պուղին հորի մեջ նստած հաշվում է աստղերի թիվը, - իր շուրջը հավաքելով մի խումբ մարդկանց, ուրախ-ուրախ պատմում է Մելիք Շահնազարը ու ծիծաղում: Այդ պահին Պըլը Պուղին գլուխը հանում է ջվալից ու ասում.

- Ղորթ ա, ղորթ ա, Մելիք Շահնազար, ղորթ ա:

Մելիքը նայում է, զարմանում:

- Արա, դու այդ ե՞րբ եկար, ինչպե՞ս դուրս եկար հորից:

-Մելիքը ապրած կենա, բեռից չեն հարցնում, թե որտեղից եկար, ո՞նց եկար, բեռը բերողից են հարցնում, - ասում է Պըլը Պուղին, դուրս գալիս ջվալից:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՂՈՉԸ ՏԱՆՈՒՄ Է ՄԵԼԻՔԻ ԻՍԿԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Մելիք Շահնազարը մի օր ոչխարի հոտից մի թուխ ղոչ է ջոկում, տալիս Պըլը Պուղուն.

- Տար տուն, - ասում է նա:

- Մելիքն ապրած կենա, միտքդ լավ չհասկացա, գյուղում 300 տուն կա, ու՞մ տուն տանեմ:

- Տար իմ տունը:

-Աչքիս վրա, - ասաց Պուղին ու ղոչը ուղիղ տարավ Մելիքի պապենական գերեզմանատունը: Երեկոյան Մելիքը կանչեց Պուղուն եւ հարցրեց.

- Արա Պուղի, ղոչը որտե՞ղ ա, ինչու՞ չի երեւում:

- Քո սեփական տանն ա:

- Արա, բա հոր ա՞, էս տունը, էս՝ մունք:

- Մելիքն ապրած կենա, մի՞թե սա է քո սեփական տունը:

- Արա, գլխիդ ձի ա՞ քացի տվել, Պուղի, բա ո՞րն ա իմ տունը:

- Մարդու սեփական տունը էնա, այ, էնտեղ, - ձեռքը դեպի գերեզմանատունը մեկնելով՝ ասաց Պըլը Պուղին:

ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱԾԻԿ Է ՈՒՏՈՒՄ

Պըլը Պուղին հյուր է ընկնում Դիզակի Մեծ Թաղլար գյուղում, տանտերը մի կճուճ ածիկ է դնում Պուղու առաջ եւ դուրս գնում: Պուղին մնում է պատուհասի մեջ, մտածում է, թե ո՞նց ուտի: Ախր կյանքում առաջին անգամ պիտի ածիկ ուտեր: Երկար մտածում է ու իր մոտ կանչում տանտիրոջ չորս տարեկան երեխային.

-Կեր, քեզ մատաղ, կեր, - ածիկով լիքը կճուճը նրա առաջ քաշելով, ասում է Պըլը Պուղին: Երեխան մատը կոխում է ածիկի մեջ ու լիզում:

- Չերիք ա, քե մատաղ, փորահարիքից կընկնես, - կճուճը իր առաջն է քաշում Պըլը Պուղին ու սկսում երեխայի օրինակով մատով լիզել այն:

ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՍՈՒԳ Է ԱՆՈՒՄ

Մելիք Շահնազարի հայրը մեռավ, Վարանդան «սգեց» Մելիքի մահը: Պուղին էլ «շատ վշտացավ» ու երբ դիակը իջեցնում էին գերեզման, սկսեց սուգ ասել.

- Ա ես քու չոչափռաշ ոտքերին մատաղ,
Ա ես քու շիլ - շիլ աչքերին մատաղ .
Ա ես քու մի արշին հասակին մատաղ,
Բա դու մի քանի անգամ մեռած ի՞ր,
Որ հիմա մեռար, ա տնաքանդ, տնաքանդի տղա:



ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՊԱՏՄԱԾԸ

-Պուղի, ա մեռած, մի հանաք արա, ծիծաղենք, - մի օր խնդրեց Մելիք Շահնազարը:

-Ի՞նչ պատմեմ, Մելիք, մի անգամ Չաթերք գյուղում մի տերտեր ա լինում, էս տերտերը կյանքում ուղտ տեսած չի լինում: Մի օր գնում է, տեսնում իրենց բաղում մեկը գլուխ տալով ման է գալիս, կանգնում է ծառի հետեւում եւ ասում.

- Արա, դու հո՞վ ըս, բալքի լիա Գաբրիել հրիշտակը տուվը՞ս:

Ուղտը գլխով է անում:

- Բա ինչի՞ ես եկել մտել այգիս, բալքի ուզում ես հոգիս առնե՞լ:

Ուղտը էլի ա գլխով անում:

- Որ իմ հոգին առնես, հետո էլ մտնելու՞ ես գյուղը, - հարցնում է տերտերը:

Ուղտը մեկ էլ է գլխով անում: Էս տերտերը լեղապատառ գալիս ա գյուղում պատմում, թե բա չեք ասի, Գաբրիել հրեշտակը եկել ա, էնա մեր այգում, եկեք գնանք սպանենք, միանգամից ազատվենք նրանից: Մի քանի հոգի թուր ու թվանք են առնում ու գնում: Գնում են, տեսնում իսկապես էնա մեկը այգում ման է գալիս:

- Մոտենաք ոչ, մեզ կուտի, - զգուշացնում է տերտերը:

- Բու՜մ,- մեկ էլ թնդում է տանուտեր Մոսու հրացանը, մոտենում են, տեսնում... ի՜նչ տեսնեն, որ լավ լինի:

- Գաբրիել հրեշտակը, - ասում է Մելիքը:

Չէ մի, ի՞նչ հրեշտակ, մոտենում են տեսնում իրենց քիրվա Հասանի քավթառ ուղտ ա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՀԵՔԻԱԹ Է ՊԱՏՄՈՒՄ

-Պուղի, քե մատաղ, քունս չի տանում, մի հեքիաթ պատմիր լսենք, - ձմռան մի երկար գիշեր խնդրեց Մելիքը:

Պըլը Պուղին սկսեց.

- Մի աշխարհում 5 ախպեր էին ապրում, ամեն մեկը մի բերդ ա ունենում: Այնքան ամուր, որ օձը իր պորտով, հավքը իր թեւերով չէր հասնում այնտեղ: Խաղաղ ու միաբան ապրում էին ու ոչ մի թշնամի սիրտ չէր անում իր ուժերը չափել նրանց հետ: Եղավ այնպես, որ այդ 5 ախպերներից մեկը, որ շատ ագահ էր, կաշառվեց, ճամփա տվեց թշնամուն ու այդ օրվանից թշնամին չոքեց երկրի վրա:

- Հերիք ա Պուղ, - գլխի ընկնելով բանը ինչումն է, առարկեց Մելիքը՝ձեռքը Պուղու բերանին դնելով, - որ մեկ էլ այդպիսի հիմար բաներ պատմես, գլուխդ կտրել կտամ:

- Ինչու՞, Մելիք Շահնազար, այս «հեքիաթը» որ ես չպատմեմ, ուրիշները կպատմեն, չարը պիտի անիծվի...





## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿԱԶՄՈՒՄ Է ԳԺԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Մի օր Մելիք Շահնազարը կանչում է Պըլը Պուղուն եւ պատվիրում.

- Պուղի, գնա այս գիշեր նստիր ու կազմիր իմ տիրության բոլոր գժերի ցուցակը:

Մելիքը մտածում էր, որ Պըլը Պուղին այդ ցուցակում իր անունը առաջինը կգրի ու այնուհետեւ, երբ ցանկանա ձեռք առնել իրեն, ցույց կտա ցուցակը ու կասի.

- Պուղի, բա դու՞ չես քո ձեռքով քո անունը գրել գժերի ցուցակում: Պուղին կնայի ու կխեղճանա:

Հաջորդ օրը Պըլը Պուղին ցուցակը ներկայացնում է Մելիքին, սա կարդում է ու բարկանում.

- Արա, ա շաշ, էս ինչու՞ քո անունը գրելու տեղ իմ անունն ես բոլորից վերեւ գրել, թե որ չհաստատես իմ գժությունը, կկախեմ քեզ:

- Աչքիս վրա, հաստատեմ, մենակ թե մարդկանց առաջ:

Մելիքը համաձայնվեց, ու երկուսով դուրս եկան գյուղամեջ:

- Այ ժողովուրդ, թե որ Մելիքը խելոք լիներ, երեք տարի առաջ մի անծանոթ առեւտրականի մի քսակ ոսկի կտար, թե ինձ համար Հնդկաստանից թանկագին քարեր կբերե՞ս:

- Բա որ բերի՞, - շտապեց հարցնել Մելիքը:

- Թե որ բերի, քո անունը կջնջեմ, նրան կգրեմ քոնի տեղ, - պատասխանեց Պուղին:

## ԳԵՐԱՆԸ ՀԱՑԱՊԱԿԱՍԵՆԻ Է

Մելիք Շահնազարը մի անգամ հյուր է գնում Պըլը Պուղու մոտ: Պուղին չունեւոր մարդ էր, մինչեւ հացի պատրաստություն է տեսնում, ոտքի վրա կանգնած Մելիքը դուրս է գալիս համբերությունից, ուզում է կողմնակի կերպով հասկացնել, որ սեղան բացելու ժամանակը անցնում է:

- Ա Պուղ, էս ձեր տան գերանները հացի՞ են,- հարցնում է Մելիքը:

- Չէ, Մելիք, հացապակասենի են,- պատասխանում է Պըլը Պուղին ու իր գործին կենում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԾԵԾՈՒՄ Է ՀՈՐԹԻՆ

Պըլը Պուղին մի անգամ Մելիքի երկու հորթը տարավ ջրի: Նրանցից մեկը քաշեց, կտրեց չաթուն ու փախավ: Պըլը Պուղին սկսեց ծեծել մյուս հորթին:

- Արա, Պուղի, փախչողին թողել ես, դրա՞ն ես ծեծում:

- Սա որ բաց ընկնի, նրանից դենն է փախչելու:

## ՄԻ ԿՐԱԿՈՑՈՎ ԵՐԵՔ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Մելիք Շահնազարը մի զգիր ուներ, անունը՝ Սայի: Դժբախտ մարդ էր Սային, հերիք չէր կինը լալ էր, զոքանչն էլ ամեն օր կռվում էր Սայու հետ, վեճեր սարքում: Խեղճ Սային համ տանն է տանջվում, համ դրսում: Ամեն օր նա բարձրաձայն հաղորդում էր Մելիք Շահնազարի հրամանները: Պըլը Պուղու հետ Սային որսի պիտի գնար: Տանը լցնում է հրացանը ու մեկ էլ ոնց է պատահում, չախմախաքարը պնդացնելու ժամանակ պայթում է ու զոքանչին սպանում: Սայու կինը վախից այնպես է ճչում, որ լեզուն բացվում է, իսկ Սայու լեզուն վախից կապվում է:

Հաջորդ օրը, երբ Մելիքը ուզում էր դատել Սայուն, Պըլը Պուղին պաշտպանում է նրան.



- Մելիքն ապրած կենա, զգիր Սայու արդար դատավճիռը ես եմ ուզում կայացնել:

- Ճիշտ ա, ճիշտ ա, դատը թողեցեք Պուղին վարի,- կանչում են այս ու այն կողմից.

Մելիքը իրավունքը տալիս է Պըլը Պուղուն:

-Ժողովուրդ, Սային մի կրակոցով երեք երջանկություն է բերել իր տանը: Առաջինը ազատվել է կռապաշտ զոքանչից, երկրորդը՝ կնոջ լալ լեզուն բացվել ա, երրորդը՝ վախից բռնվել ա Սայու լեզուն, որի պատճառով ազատվել ա Մելիքի չովուշի պարտականությունից: Ուրեմն թողենք ապրի ու վայելի իր երջանկությունը:

-Ապրի Պըլը Պուղին, արդար է նրա դատը,- գոչում է ամբոխը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿԱՐԴՈՒՄ Է ԻՐ ԳՈՐԾԸ

Վարժապետը Պուղուն կանչում է գրատախտակի մոտ:
- Պուղի, գրիր՝ «Նապաստակը քնել է թփի տակ»:
Պուղին գրում է:
- Դե հիմա կարդա:
- Ըլըքաստրակը քնել է քոլի տակ:
- Ուղիղ կարդա:
Պուղին նորից է կարդում:
- Ըլըքաստրակը քնել է քոլի տակ:
- Այ Պուղ, նապաստակը տառ-տառ կարդա:
Պուղին կարդում է:
- Ն-ա-պ-ա-ս-տ-ա-կ:
- Հիմա ի՞նչ դարձավ:
- Ըլըքաստրակ:

## ՔԵԶ ՈՐ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ, ԾԻԾԱՂՍ ԳԱԼԻՍ Է

- Պուղի, քեզ որ տեսնում եմ, ծիծաղս գալիս ա,- մի օր ասում է Մելիքը:

- Իսկ ես քեզ որ տեսնում եմ, Մելիք Շահնազար, լացս է գալիս,- խոսքի տակ չի մնում Պըլը Պուղին:

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԼԱՎ ԲԱՆԸ

- Պուղի, աշխարհի ամենալավ բանը ի՞նչն ա.- մի անգամ հարցնում է Մելիք Շահնազարը:

- Աշխարհի ամենալավ բանը քո տանը չկա, - պատասխանում է Պըլը Պուղին:

- Ոնց թե չկա, ես ոսկով ու ադամանդով Իրանի կեսը կգնեմ:

- Աշխարհի ամենալավ բանը ոսկին ու ադամանդը չէ, Մելիք:

- Դե, ասա, ի՞նչն ա:

- Աշխարհի ամենալավ բանը ազատ խոսքն ա ու ազատությունը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՆԱՅՈՒՄ Է ՄԵԼԻՔԻ ԿՆՈՋ ԲԱԽՏԸ

- Ա Պուղ, կինս հղի է, ուզում եմ իմանալ, տղա է բերելու՞, թե՞ աղջիկ, գնա մոլլա գտիր, բեր, կնոջս բախտին նայի, - կարգադրում է Մելիքը:

- Մոլլի կնոջ բախտին էլ ես եմ նայում, - ասում է Պըլը Պուղին, նստում թախտի վրա:

- Թող խանումը վեր կենա տեղից, գնա դեպի պատուհանը:

Մելիքի կինը կատարեց Պուղու խոսքը:

- Դե հիմի էլ եկ տեղդ նստիր:

Մելիքի կինը այդ էլ կատարեց:

- Ի՞նչ կա, Պուղի, ինչու՞ ես գլուխդ օրորում:

- Մելիք, գնալը տղա է ցույց տալիս, գալը՝ աղջիկ:

- Դե, հիմա որի՞ն հավատանք:

- Ի՞նչ ասեմ, Մելիք Շահնազար, աստծո գործը անքննելի է:

Երեկոյան դեմ Մելիքի կինը մի տղա ու մի աղջիկ է ծնում: Այդ օրվանից Պըլը Պուղին իմաստունի համբավ է ստանում ու ծիծաղում Մելիքի խելքի վրա:



## ԼԱՎ Է ՊՐԾԵԼ

Ընկույզ թափելու ժամանակ ծառից ընկնում, մահանում է չանաղչեցի Ղվալանց Բաղին: Մարդիկ գնում են տեսնում մարդը շունչը փչել է քարերի արանքում: Հարազատները լաց են լինում, իսկ Պըլը Պուղին սիրտ է տալիս նրանց՝

- Լավ ա պրծել, ես իմ հոգին, շատ լավ ա պրծել, էն ուր, հա՛, էնտեղից ընկնողի մեծ թիքյան ականջը կմնար, չէ՛, լավ ա պրծել մեր Բաղին, էն աստվածը, բախտը քաշել ա:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ ԳՈՒԺ ՉՈՒՆԻ

Երկու քաջ տղա ներկայանում են Մելիք Շահնազարին եւ խնդրում նրան, մի քանի ամիս իր տանը պահել իրենց:

- Սպանել ենք պարսկական հարկահանին, հիմա Շահը մարդ է ուղարկել մեզ բռնելու համար, - բացատրում են նրանք:

Մելիքը համաձայնվում է, նրանց ընդունում իր մոտ եւ նույն գիշերը բանտարկում ու հանձնում թշնամուն: Հաջորդ օրը, երբ Մելիքն ու Պըլը Պուղին վար էին անում, արծիվը մի աղավնու վրա հարձակվում է: Աղավնին գալիս-մտնում է եզան լծի տակ: Երբ վտանգը անցնում է, աղավնին թռչում է, գնում:

- Փառքդ շատ, աստված, ինչու՞ մեր Մելիքին էս եզան չափ գութ ու շնորհք չես տվել, - ասում է Պըլը Պուղին:

Մելիքը ամոթից գլուխը կախում է:

## ԳԻՆԻՆ ԽԵԼՈՔ ՉԻ ԿԵՆՈՒՄ

Մելիք Շահնազարի բակի թթենու տակ մի կարաս գինի կար թաղած: Ամեն անգամ, երբ Պըլը Պուղին անցնում էր կարասի մոտով, մատը թափ էր տալիս նրա վրա եւ ասում.

- Տեղդ խելոք կաց, հա՛:

- Էդ ու՞մ հետ ես, Պուղի, - մի օր հարցնում է Մելիքը:

- Գինու կարասի:

- Ի՞նչ ա անում որ, իր համար հանգիստ քնել ա, էլի:

Պուղին ականջը դեմ արեց կարասի բերանին ու ասաց.

- Արա, դու էս ղալմաղալը լսում չե՞ս:

Անցավ մի ամիս, Մելիքը մի քեֆի ժամանակ կարասը բացեց, կերան-խմեցին ու երբ տաքացան, սկսեցին վիճաբանել իրար հետ, բանը հասավ նրան, որ մի քանի ջահել տղաներ սուր քաշեցին իրար վրա:

-Բա ես չասացի էդ նաղինքը մի բան պիտի անի, - Մելիքի ականջին շշնջաց Պըլը Պուղին ու հաշտեցրեց ջահելներին:

## ՔԹԻԴ ՀԱԼԸ ՀԱԼ ՉԷ

Մի օր Մելիքը կանչեց Պըլը Պուղուն եւ այսպիսի մի պայման կապեց նրա հետ.

- Պուղի, առ այս 5 ոսկին ու էլ ղոնաղների մոտ թերություններս երեսովս չտաս:

Բայց հենց նույն օրը քեֆի ժամանակ Մելիքի քթի ջուրը կախվել, կաթում էր սեղանի վրա, Պըլը Պուղին նայեց ու սկսեց ծիծաղել:

- Ա մեռած, էլի սարսաղ-սարսաղ ծիցաղեցիր, թե բան գիտես, ասա, մենք էլ ծիծաղենք, - ասաց Մելիքը:

- Առ քո 5 ոսկին, Մելիք Շահնազար, բայց լավ գիդա, որ քթիդ հալը հալ չէ:



## ԱՄԵՆ ԷՇԻ ԳԻՆ ՉԵՆ ՏԱ

Պըլը Պուղու հարեւանը հարբում է, կինը սկսում է կռվել նրա հետ:

- Խոխեքը տկլոր են, սոված մեռնում ենք, դու ձեռքդ ընկած նոպեկը տալիս ես գինու խմում: Գոնե մի էշ առ, փայտ ու խոտ բերենք:

- Այ կնիկ, փողն ինչ ա, որ կռվում ես նրա համար, ուզեմ Մելիք Շահնազարին փողով կառնեմ:

- Ափսոս է փողերդ, Ղազար ջան, ամեն էշի գին չեն տա, - խորհուրդ է տալիս Պըլը Պուղին:



## ԻՄ ՈՒ ՔՈ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- Պուղի, իմ ու քո տարբերությունը ինչու՞մն ա, - մի օր հարցնում է Մելիքը:

- Իմ ու քո տարբերությունը շատ մեծ ա, Մելիք Շահնազար: Ես խելոք եմ, բայց ինձ գիժի տեղ եմ դնում, իսկ դու հիմար ես, ուզում ես խելոք երեւալ:

## ՄԵԼԻՔԸ ԿՈՒՅՐ Է ԽԵԼՔՈՎ

Մելիք Շահնազարը Պըլը Պուղու հետ գնում է Պարսկաստան, թագավորական ժողովին մասնակցելու համար: Այստեղ շատ իշխաններ ու մելիքներ են լինում հավաքված: Երբ խորհուրդի են հրավիրվում, Մելիքը խնդրում է թույլ տալ, որ Պըլը Պուղին իր հետ մտնի պալատ ու նստի իր կողքին: Այստեղ մի կույր իշխան էլ է լինում, որին ամեն տեղ առաջնորդում էր ծառան: Երբ թագավորական խորհուրդը վերջանում է, կույր իշխանի ծառան մոտենում է Պըլը Պուղուն եւ հարցնում.

- Իմ տերը կույր է, դրա համար էլ ուր գնում է, ինձ տանում է իր հետ, որ առաջնորդեմ իրեն, բա քո տիրոջը ի՞նչ է պատահել, որ հետը ման ես գալիս:

- Իմ տերն էլ խելքով է կույր,- պատասխանում է Պըլը Պուղին:



## ԴՈՒ ԲԵՐԱՆՈՎ ԵՍ ԱՇԽԱՏՈՒՄ, ԵՍ՝ ԳԼԽՈՎ

Պըլը Պուղին ինքը իմաստուն մարդ, նստել էր թախտի վրա ու մտքում խորհում էր աշխարհի բանը, երբ ներս մտավ Մելիք Շահնազարը ու հարցրեց.

- Էս ի՞նչ բան ա, Պուղի, քո գլուխն ա սպիտակել, իմ էլ՝ բեղն ու միրուքը:

- Էդ նրանից ա, որ դու բերենով ես աշխատում, ես՝ գլխով:

## ՄՈԹԱԼԻ ՊԱՆԻՐԸ

Աներես մարդ էր Պըլը Պուղու հարեւան Ղազարը, մեկ էլ տեսար երեխան ուղարկեց, թե գնա ասա՝ Պուղի, ապերը էս ինչ բանը ուզում ա:

Պըլը Պուղին մի անգամ մի կարաս գինի է առնում, Ղազարը ամեն օր փարչը տալիս է երեխային, թե գնա ասա՝ Պուղի, ապերը էս փարչովը մեկ գինի ա ուզում:

Մի անգամ էլ Պուղին շուկայից մի մոթալ պանիր է առնում, դնում էշի վրա ու տուն գալիս: Նոր էր մոթալը էշից իջեցրել, երբ Ղազարի փոքր տղան տնկվում է Պըլը Պուղու մոտ

- Ապան ասում է, թե մոթալի պանիր ունեք, մի քիչ պանիր տվեք:

Պըլը Պուղին մի մեծ կտոր պանիր է տալիս նրան:

Մի օր հետո Ղազարի տղան նորից է գալիս պանիր ուզում: Այս անգամ էլ է մի մեծ կտոր տալիս նրան: Անցնում է երկու օր եւ Ղազարի տղան նորից է գալիս Պըլը Պուղու մոտ:

Այս անգամ Պըլը Պուղին պանրի մոթալը շալակ է տալիս տղային եւ ասում.

- Տար, քե մատաղ, տեսնում եմ, որ դա ձեզ ավելի շատ ա հարկավոր, քան՝ մեզ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՄԱՀԻՑ ՓՐԿՈՒՄ Է ՄԻ ՔԱՋ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ

Մելիք Շահնազարը պետք է սպաներ մի երիտասարդի, որը համարձակվել էր իր սիրած աղջկան փախցնել Փանահ խանի հարեմից: Սովորություն կար, մարդկանց դատապարտելուց առաջ Մելիքը երկու հարց էր տալիս նրանց: Առաջին հարցը այն էր, թե մեռնողը ի՞նչ կցանկանար ուտել մահապատժից առաջ, երկրորդը՝ թե որտե՞ղ է ցանկանում թաղվել:

Երբ «հանցագործին» բերին քննության, Պըլը Պուղին նախօրոք նրան մի լավ դաս տվեց:

- Ի՞նչ ես ցանկանում ուտել, - վերջապես հարցրեց Մելիք Շահնազարը դատապարտվողին:

- Թութ,- պատասխանեց երիտասարդը:

- Իսկ որտե՞ղ ես ուզում թաղվել:

- Փանահ խանի հոր մոտ:

Ձմեռը նոր էր սկսվել լեռնաշխարհում, ուրեմն թութ ուտելու համար պետք է սպասել մինչեւ ամառ: Տարին շուռ տվեց: Մելիքը հրամայեց սպանել նրան ու տանել թաղել Փանահ խանի հոր մոտ:

- Ես իմ արեւը, եկ ասենք գժվել ես, Մելիք Շահնազար, ադա, Փանահ խանի թափառական հոր գերեզմանը որտե՞ղ ա, որ դրան նրա մոտ թաղես:

-Ղորթ ես ասում, Պուղի, բա ի՞նչ անենք:

- Ազատիր, թող գնա իր սիրած աղջկա հետ ապրի: Ի՞նչ ես գերի դարձել այդ ճըռ Փանահ խանին:

Մելիքը ձեռքը թափ տվեց ու լուռ հեռացավ:

Պըլը Պուղին երիտասարդին ազատեց ու բարի ճանապարհ մաղթեց նրան:



## ԳԵՏԸ ԹԱՐՍ Է ՔՇԵԼ

Լուրը հասնում է գյուղ, թե Խնձրիստանի տանուտեր Միրզաբեկին գետը քշել է: Մարդիկ գետի հոսանքով գնում, որոնում են նրան: Պըլը Պուղին ջոկվում է նրանցից ու գնում գետի հոսանքին հակառակ:

- Ադա, Պուղի, ա շաշ մեռած, գետը դեպի ներքեւ ա հոսում, դու ու՞ր ես բարձրանում:

-Ողորմած հոգին շատ թարս մարդ էր, կարող ա գետի հետ հակառակվել ու թարս ա քշվել:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՔՆՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԹԱԽՏԻՆ

Մի օր, երբ Մելիքը տանը չէր, Պուղին մտավ մելիքատուն ու քնեց Մելիքի թախտի վրա:

- Վեր կաց, Պուղի, Մելիքը գալիս ա, - արթնացրին ծառաները: Պըլը Պուղին շարունակեց խռմփացնել:

- Էս ի՞նչ եմ տեսնում, - ներս մտնելով բարկացավ Մելիքը: - Ադա, շան տղա, այս քո տեղն ա, որ մրափում ես:

Պուղին շարունակեց խռմփացնել: Մելիքը քաշեց նրա ականջը, Պըլը Պուղին բացեց աչքերը ու նախատեց Մելիքին.

-Այ մարդ, ոչ խերդ ես իմանում, ոչ շառդ, երազում ոսկի էի չափում քեզ համար, չթողեցիր թե մի 7 կոտ էլ չափեմ:

-Պուղ, ես քեզ մատաղ, քնիր, - ասաց Մելիքը ու ոտների ծայրի վրա կամաց-կամաց դուրս եկավ մելիքարանից:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԹՈՒԽՍ Է ՆՍՏԵՑՆՈՒՄ ԱՆԳԼԻԱՑԻ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ

Մելիք Շահնազարը լսում է, որ մի անգլիացի գիտնական ուզում է Պըլը Պուղու հետ մրցել, կանչում է նրան եւ ասում.

- Պուղի, եկ քեզ գործով ուրիշ տեղ ուղարկեմ, թե չէ խայտառակ ես դառնելու, դու հեչ, քո անունը գիժ ա, քո պատճառով ես էլ եմ խայտառակվելու:

- Մելիք, էդ անգլիացին թող գա, ես դրան էնպիսի դաս տամ, որ էստեղից մինչեւ ինգլիզի հողը էլ ետ չնայի:

Հենց որ Պըլը Պուղին լսում է, որ անգլիացին գալիս է, Մելիքին գործով ուղարկում է այգին, ինքը մի քթոց է վերցնում, մեջը մի խորում խոտ դնում ու թուխս նստում ձվերի վրա: Օտարականը գալիս է, ծեծում Մելիքի դարբասը.

- Էն ո՞վ ա, - քթոցի միջից ձեն է տալիս Պըլը Պուղին:

- Դուռը բաց արա, - լսվում է անգլիացու ձայնը: Պըլը Պուղին բաց է անում դարբասը ու վազում, մտնում քթոցի մեջ:

- Մելիքը տանն է՞, - հարցնում է օտարականը:

- Չէ, տանը ինձանից բացի ուրիշ մարդ չկա:

- Բա հիմա ի՞նչ անենք, որ Մելիքը գա տուն, գործ ունեմ նրա հետ:

- Ի՞նչ ասեմ, ես կգնայի նրա հետեւից, բայց դժբախտաբար չեմ կարող, թուխս եմ նստել, մի քանի օր է մնացել մինչեւ ճուտ հանելը: Որ վեր կացա, ձվերը կսառչեն: Եթե քեզ համար նեղություն չէ, եկ իմ տեղը նստիր, ես գնամ կանչեմ Մելիքին:

Անգլիացի գիտնականը նստում է Պըլը Պուղու տեղը, Պըլը Պուղին դուրս է գալիս, գնում ամբողջ օրը իր համար ման գալիս, իրիկունը Մելիքի հետ գալիս-տեսնում անգլիացին դեռ նստած ձվերի վրա՝ ջունն էլ իր բնի առաջ մռմռում է:



- Աղա, Պուղի, մի տես էս ո՞վ ա նստել քթոցի մեջ:

- Անգլիացի գիտնականն ա, Մելիք, թուխս եմ դրել:

- Աղա, ամոթ ա, բաց թող գնա:

- Ես էլ եմ այդպես մտածում, որ իր խելքը այդքան ա, բա դրանից իլած ճտերի խելքը որքա՞ն պիտի լինի, - ասում է Պըլը Պուղին ու արձակում գիտնականին, շարունակելով, - դե գնա, որտեղ քոնը ասես, այնտեղ էլ իմ մասին կպատմես: Ես ղարաբաղցի Պըլը Պուղին եմ, օտարի առաջ գլուխ չեմ ծռի ու խոսքի տակ չեմ մնա, գնա ու էլ ետ չնայես:

## ՔԱՄԻ ԱՆՈՂ ՄԱՐԴԸ

Մի օր Պըլը Պուղին անցնում է Քերթ գյուղով: Նայում է տեսնում գյուղամիջին մի մարդ գլխին է հավաքել ահագին բազմություն ու պատմում էր գլխով անց կացած բաներից:

- Օրը հազար խուրձ եմ հնձում, ամեն մինը մի ջվալ ցորեն է տալիս:

- Ախպերացու, ձեր ազգում փուքս փչող է եղե՞լ, - հարցնում է Պըլը Պուղին:

- Հերս հայտնի փուքս փչող էր:

- Ախր ասում եմ, որ քամի անողներից ես:

## ՃԻՃԻ ԱՂԱՄԸ

Չանաղչի գյուղում մի մարդ կար, որին շատախոսության համար ճիճի Աղամ էին կոչում: Մի օր Մելիքը հարցրեց Պըլը Պուղուն.

- Պուղի, իմանաս էլ, էս ինչու՞ Աղամը այսքան շատ ա խոսում:

Մելիք, դրա չանան թուլացել ա, հարկավոր ա տանել դամրչի Հարույթի մոտ:

## ՄԵԼԻՔԻՆ ԳԼՈՒԽ ՉԵՆ ՏԱԼԻՍ

-Պուղի, էս մարդիկ ինչու՞ չեն ինձ գլուխ տալիս, գնա բռնիր բեր, դրանց պիտի բանտարկեմ, - մի օր Ճարտար գյուղով անցնելու ժամանակ ասաց Մելիք Շահնազարը:

- Մելիք, սրանք Ճարտարից են, սրանց համար լավա թագավորը թախտից ընկնի, քան երեխան, ծին չափ տուր գնանք: Բա չես լսել, ամեն գյուղից մի իգիթ, Ճարտարում ով պատահի, իգիթ ա, հո իգիթ:

## ՇՈՒՆԸ ՍՊԱՆՈՂԻՆ ԵՆ ՔԱՇ ՏԱԼ ՏԱԼԻՍ

Մելիք Շահնազարի հոր գերեզմանի մոտ կանգնեց սգո թափորը: Պըլը Պուղին դագաղը դրեց փոսի մեջ, հող լցրեց վրա:

- Բավական ա, Պո՛ւղի, բահը դեսը տուր, էսօր կարգին չար-չարվեցիր, - ասաց մի համագյուղացի:

- Վնաս չունի, քե մատաղ, շունը սպանողին են քաշ տալ տալիս:

## ՄԱՐԴԻՄԱԶԱՐ ՇԱՆ ՈՐԴԻՆ

Մելիք Շահնազարի հոր գերեզմանի վրա քար էին քաշում, ոնց է պատահում Պըլը Պուղու մատը մնում է քարի տակ, ճմռռում:

- Մարդիմազար շան տղաս մեռած տեղն էլ չի դինջ կենում,- բարկությամբ ասում է Պըլը Պուղին ու տխուր հեռանում:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԵՐԱԶ Է ՏԵՍՆՈՒՄ

- Էս գիշեր մի զարմանալի երազ եմ տեսել, Մելիք Շահնազա՛ր:

- Աղա, ի՞նչ ես տեսել, մի պատմիր տեսնեմ:

- Պա պատմելու պեն ա, վեր պատմիմ:

- Ինչ որ ա, սկսիր:

- Պա ասել չըս, էս գիշեր երազում տեսա իմ ու քո հորը: Իմ հոր շորերը թրքոտ ար, քո հորինը՝ մեղրոտ:

- Աղա Պուղի, բա ի՞նչ ես կարծում, իմ հերը Մելիք էր, քո հե-րը՝ ծառա, իհարկե, իմ հոր շորերը մեղրոտ պիտի լինեն, քո հո-րենը՝ թրքոթ:

- Ախր երազում ուրիշ բան էլ եմ տեսել, Մելիք:

- Ի՞նչ:

- Քո հայրը լիզելով իմ հոր շորերն էր մաքրում, իմ հերը՝ քո հոր:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽԵԼՔ Է ՀԱՎԱՔՈՒՄ

Մելիք Ավանը եկել էր Մելիք Շահնազարին խորհուրդներ կարդալու: Զրույցի ժամանակ Պըլը Պուղին Մելիք Ավանի դիմաց նստած այնպես էր ձեւացնում, թե Ավանի յուրաքանչյուր խոսքը բռնում ու գցում էր ծոցը:

- Աղա Պուղի, էն ի՞նչ էիր անում, - երբ Ավանը գնաց, հարցրեց Մելիք Շահնազարը:

- Մելիք Ավանի ամեն մի խոսքը մի փութ ոսկի արժե, հավաքեցի, քեզ որ հարկավոր չգա ես կօգտագործեմ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ

- Պուղի, ախր կինս ինձ չի լսում, ջողաբ է տալիս, - մի օր ասաց մի երիտասարդ:

- Խե՛, քե մատաղ, հի՞նչ ա պըտահալ:

- Հարուստի աղջիկ ա, պեծինքին թամահ ըմ ըրալ, պսակվել, հիմա օր ու արեւ չի տալիս ոչ ինձ, ոչ էլ՝ մորս:

- Տեսնում եմ, որ դու աղջիկ չես ուզել, այլ՝ պեծինք: Տար պեծինքը հետ տուր հորը, յա, թե չես ուզում այդպես անել, դու կին դարձիր, ինքը՝ տղամարդ:

## ՄԵԼԻՔԸ 15 ՑՈՐԵՆԻՑ ՄԻ ԿՐԿԵՆԻ Է ԹԽՈՒՄ

Մելիք Շահնազարը մի օր Պըլը Պուղուն ները լծելու համար մի հանելուկ առաջարկեց.

- Որ այդքան խելոք ես, ասա տեսնեմ, կարո՞ղ ես 15 ցորենից մի կրկենի թխել:

- Իսկ դու կարո՞ղ ես:

- Ես ամեն ամիս մեկը թխում եմ:

Պըլը Պուղին նայեց պատուհանից, լուսինը այդ գիշեր կիսատ էր ու աղոտ:

- Շատ անշնորհք հացթուխ ես երեւում, Մելիք Շահնազար, հապա ինչու՞ գյահ-գյահ կրկենին կուտանա ես անում:

Մելիքը հասկացավ Պըլը Պուղու ճիշտ պատասխանը ու սուս ու փուս հեռացավ:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՐԱՏՈՒՄ Է ԿՌԱՊԱՇՏ ՀԱԲՈՒՆ

Շատ կռվարար, հայհոյող մարդ էր ավետարանցի Կռապաշտ Հաբին: Մեկ էլ տեսար մի իզուր բանի համար ձենը գցեց գյուղը ու սկսեց հայհոյել սրան-նրան: Մի անգամ, երբ նա հայհոյում էր մարդկանց, Պըլը Պուղին ջվալը վերցրեց, տարավ դրեց Հաբու առաջ: Հայհոյանքի ժամանակ Պուղին երկու ձեռքով կարծես վերցնում էր բերանից թռած ամեն բառ ու գցում ջվալի մեջ: Երբ Հաբին վերջացրեց, Պըլը Պուղին ջվալը շալակեց ու գնաց գերեզմանատուն:

Պըլը Պուղին ջվալը թափ տվեց Հաբու հոր գերեզմանի վրա ու առանց մի բառ խոսելու գնաց տուն:

Ասում են Հաբին այդ օրվանից դեսը էլ չէր հայհոյում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՆԱՄԱԿ Է ԿԱՐԴՈՒՄ

Պըլը Պուղու հարեւանը իր պանդխտությունում գտնվող տղայի նամակը միշտ Պըլը Պուղուն է կարդալ տալիս.

- Շատ պարովս կանիմ ապուն, այուն, նմանապես մեր հարեւան Հաբուն աղջկան՝ Վարդիթերին,-սկսում է կարդալ Պըլը Պուղին: Մի անգամ հարեւանը մի թղթի կտոր է տալիս Պըլը Պուղուն.

- Պուղի, շատ ապրես, մի կարդա էս թուղթը:

Պուղին շարունակում է կարդալ նախկին ոճով.

- Շատ պարովս կանեմ ապուն, նմանապես մեր հարեւան Հաբու աղջկան՝ Վարդիթերին:

- Պուղի, էդ ի՞նչ ես կարդում, ախր դա Մելիքի տված մուրհակի թուղթն ա:

- Պահ, քո տունը շինվի, դե այդպես ասա, որ մուրհակի նման կարդամ, էլի՛, - կեղծ զարմանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԷՇԸ ԸՆԿՆՈՒՄ Է ՁՈՐԸ

Պըլը Պուղին էշի վրա կուժ ու կուլա բարձած տանում էր Շուշի: Ճանապարհին ոնց է պատահում, Հունոտում էշը բեռան հետ գլորվում է ձորը: Պըլը Պուղին աչքերը փակում է ու ասում.

- Երազ լինի, երազ լինի, աստված, երազ լինի:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳՆՈՒՄ Է ՇՈՒՇԻ, ԳԱԼԻՍ

Մելիք Շահնազարը նամակ ուներ Շուշվա խանին ուղարկելու: Իրիկունը կանչեց Պըլը Պուղուն ու առանց նամակի մասին խոսք ասելու, ուղղակի կարգադրեց.

-Պուղի, վաղը աքլորականչին պետք է գնաս Շուշի ու գաս, հիմա գնա ձիուն գարի տուր, դու էլ քնիր, որ շուտ արթնանաս:

- Աչքիս վրա, Մելիք Շահնազար.- պատասխանում է Պըլը Պուղին:

Լուսադեմին նա սուս ու փուս դուրս եկավ գյուղից ու բռնեց Շուշվա ճանապարհը:

Լուսացավ: Մելիք Շահնազարը սպասում էր Պըլը Պուղուն, իսկ նա չկար: Արեւն արդեն ծագել էր, երբ Պըլը Պուղին ձին հեծած բակ մտավ: Մելիքը նրան տեսնելով, խիստ բարկացավ:

- Այ գյադա, բա իրիկունը ի՞նչ պայմանավորվեցինք:

- Պայմանավորվեցինք, որ ես աքլորականչին Շուշի գնամ, գամ, ես էլ գնացի ու եկա, էլ ինչու՞ ես դժգոհում:

- Ա սարսաղ, բա նամա՞կը:

- Ի՞նչ նամակի մասին ես խոսում:

- Փանահ խանին գրած նամակը, որ պիտի տանեիր:

- Այ մարդ, երբ դու ինձ կանչեցիր, ծառաներդ էլ մոտդ էին, դու ասացիր՝ գնա Շուշի, եկ, ախր ոչինչ չասացիր նամակի մասին, հիմա քեզանից նեղանալու տեղ, ինձանի՞ց ես նեղանում:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՒԶՈՒՄ Է ԵԹԻՄ ՄՆԱԼ ՀՈՐՈՎ

Մի անգամ Մելիք Շահնազարը կանչում է Պըլը Պուղուն եւ հարցնում.

- Ա Պուղ, հայրենիքը քո ի՞նչն ա:

- Հայրենիքը իմ մայրն ա:

- Բա ես քո ի՞նչն եմ:

- Իմ հայրը:

- Հիմի ի՞նչ ես ցանկանում քո հորն ու մորը:

- Ցանկանում եմ հորով եթիմ մնալ, - պատասխանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ «ԿԱՔԱՎ» Է ՈՐՍՈՒՄ

Մելիք Շահնազարի տունը հյուրեր են գալիս, Մելիքը հրացանը տալիս է Պըլը Պուղուն ու պատվիրում.

- Քեզ տեսնեմ, Պուղի, գնա մի քանի լոր, կաքավ ու աղավնի որսա, ղոնաղներիս որսի մսով պիտի հյուրասիրեմ:

- Աչքիս վրա, - ասում է Պուղին ու գնում հանդ:

Այդ օրը ինչ թեւավոր պատահում է, Պուղին սպանում է, էլ քոռ բու, հոտած կկու, լեշի վրա նստած ագռավ: Սպանած թռչունները լցնում է ուսապարկի մեջ, վերադառնում Մելիքի մոտ:

- Եկա՞ր, Պո՛ւղ, դե բեր, բե՛ր տեսնենք ի՞նչ ես որսացել:

Պըլը Պուղին ուսապարկը դատարկում է Մելիքի առաջ:

-Ա շաշ մեռած, ես քեզ ասել եմ լոր ու կաքավ կբերես, դու ագռավ ու հարամ բու՞ ես բերել:

Մելիքն ապրած կենա, ինչո՞վ կհաստատես, որ բերածս լոր ու կաքավ չէ, իր թռչունների անունները դնելու ժամանակ ներկա չէ՞ս եղել նրանց ժողովում, գուցե հենց լորն ու կաքավը սրանք են, - արդարանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՄՈՐԹՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԲՈԼՈՐ ՈՉԽԱՐՆԵՐԸ

Մելիք Շահնազարի տունը պատվավոր հյուրեր են գալիս: Մելիքը կանչում է Պըլը Պուղուն եւ պատվիրում.

- Պուղի, գնա ոչխար մորթիր. էսօր քեֆ պիտի անենք:

- Որը մորթեմ:

- Է՜... էդ ի՞նչ հարց է, որ տալիս ես, որը պատահի, - պատասխանում է Մելիքը:

- Աչքիս վրա, - ասում է Պըլը Պուղին, գնում-տեսնում է հոտը նոր փարախ է մտել: Մտնում է մեջը ու սկսում աջ ու ձախ կոտորել: Լուրը հասնում է Մելիքին, թե՝ բա չես ասի, Պուղին ամբողջ հոտը կոտորել է:

- Կկախեմ, եթե ճիշտ լինի, - բարկանում է Մելիքը:

- Թող Մելիքը իր ղոնաղների մոտ երդվի, որ ինքը չի ասել, թե որը պատահի, մորթի:

Մելիքը մնում է շվարած:

- Ինց թե, - վերջապես ուշքի է գալիս Վարանդայի տերը:

- Էնպես էլի, դու ասացիր, որը պատահի, մորթիր, քո խոնարհ ծառան էլ կատարեց կամքդ, էլ ինչու՞ ես բարկանում:

- Ա մեռած, ամեն բանի հնարը գտնում ես, դե ճոռին վերցրու գինի լցրու թասերը, քեֆ անենք - ասում է Մելիքը: Եվ 7 օր, 7 գիշեր քեֆ են անում:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՓՈՂ Է ՏԱԼԻՍ ՂԱՎԱԼ ՅԱՆԵՍԻՆ

Մի օր հարեւան Յանեսը գալիս է Պըլը Պուղուց փող պարտք ուզում: Պըլը Պուղին, որ այդ պահին կալում զբաղված է լինում, ասում է.

- Յանե՛ս, գնա տուն, փողը էնա թախտի վրա փռած կարպետի տակ, վերցրու: Յանեսը գնում է ու վերցնում: Մի ամիս հետո փողոցում պատահում է Պըլը Պուղուն ու առաջարկում պարտքը:

- Տար դիր տեղը, - հանգիստ պատասխանում է Պըլը Պուղին եւ շարունակում զրուցել համագյուղացիների հետ:

Յանեսը մտնում է Պըլը Պուղու տունը, մեկ էլ միտքը փոխում է. «էս փողը ոնց որ տեսնում եմ Պուղուն հարկավոր չի գալիս, ավելի լավ է վերցնեմ, որ հարցնի, կասեմ, դրել եմ տեղը, հալբաթ ուրիշ է վերցրել», - մտածում է ու կատարում վճիռը: Անցնում է մի քանի օր, Պըլը Պուղին չի խոսում փողի մասին: Անցնում է մի ամիս, մի տարի, Պըլը Պուղին էլի լուռ էր:

Պըլը Պուղու այս անտարբեր վերաբերմունքից օգտվելով, Յանեսը նորից գալիս է ու փող խնդրում նրանից:

- Գնա վերցրու, Յանե՛ս, փողը հերվա տեղն ա:

Յանեսը մտնում է տունը, ստուգում թախտի վրա փռած կարպետի տակը ու երբ փողը չի գտնում, դժգոհում է.

- Ա Պուղ, թախտի կարպեպի տակ փող չկա:

- Բա դրե՞լ ես, որ լինի, - պատասխանում է Յանեսի մեծահոգի հարեւանը ու ծիծաղում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՂՋԻԿ Է ՈՒԶՈՒՄ ՏՂԱՅԻ ՀԱՄԱՐ

Պըլը Պուղին մի օր մնում է Սեյդիշեն գյուղում, ում դուռ ծեծում է, հետ են տալիս.

- Հալա ժամանակ կա, Պուղի, յեր ընցեր:

- Էս ձմռան ցրտին որ մնացի դրսում՝ կսառչեմ, - մտածում է Պուղին ու փողոցում կանգնեցնում մի պառավ կնոջ:

- Այա, ղարիբ մարդ եմ, եկել եմ տղայիս համար աղջիկ ուզելու, բա մի հալալ ծծկեր չկա՞ ձեր գյուղում, - հարցնում է Պուղին:

- Այան քե մատաղ, բա խե չկա, հրես Մելիք Միրզան 7 աղջիկ ունի, ամեն մեկին 7 բեռ բաժինք ա տալու: Գնանք տուն, բա մեր օջախի համար ի՞նչ կսազի, որ քեզ նման ղոնաղը դրսում ա պայման անում, - պառավը անուշ զրույց անելով Պըլը Պուղուն տարավ գյուղի ամենահարուստ մարդու տունը, որը իրավ 7 հասած, անբան աղջիկ ուներ: Այդ գիշեր Պըլը Պուղուն լավ հյուրասիրում են, ոտքերը լվանում, դնում թախտի վրա:

Ի՞նչ խոսք, պառավն էլի իր շահն է ստանում: Առավոտյան Պըլը Պուղին պայման է կապում, թե այս ինչ ամսի այս ինչ օրը իր տղայի հետ գալու է հարսնախոսության, պայման է կապում ու գնում: Էդ գնալն է, որ գնում է: Ասում են էդ օրվանից դեսը Պըլը Պուղին այս զրույցը պատմում է ամեն տեղ ու վերջում ասում.

-Հարուստ, ծլատ մարդուն էդ տեսակ պիտի խաբես:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՒ ԻՐ ՏՂԱՆ

Պըլը Պուղին ու իր տղան հունձ են անում: Ամբողջ օրը երկուսով մի քանի խուրձ են հնձում, փանջաք շինում ու նստում շվաքում:

- Ապի, ուրիշները էսօր - էգուց իրենց հունձը կվերջացնեն, - ասում է տղան:

- Դե, խե չի պիտի վերջացնեն, մեր հնձողը ով ա, ես պառավ մարդ, դու երեխա, - հառաչելով ասում է Պըլը Պուղին: Քիչ հետո, երբ կուշտ բրդուծ են ուտում, տղան դառնում է հորը:

- Ապի, համմա կերանք, հա՞:

- Խե չի պիտի ուտենք, աղա, ումնի՞ց ենք պակաս, որ չուտենք, փառք աստծո, ես ասլան, դու ասլան բալասի:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ

Մի անգամ Պըլը Պուղու մոտ է գալիս մի կին ու գանգատվում:

- Պուղի, ախր մարդս միշտ ծեծում է ինձ, մի խորհուրդ տուր, ի՞նչ անեմ, որ չծեծի:

- Խորհուրդս էսա, երբ մարդդ բարկանում ա քեզ վրա, մի կում ջուր լցրու բերանդ: Թե որ բարկացած ժամանակ չկարողացար ջուրը բերանումդ պահել, էլի մարդդ կծեծի քեզ: Կինը մի ամիս կատարեց Պըլը Պուղու խորհուրդը ու մի օր էլ դարձավ նրան.

- Պուղի, ախր մարդս խելքի է եկել, էլ չի ծեծում ինձ:

- Կգա, կգա, - պատասխանում է Պըլը Պուղին, - լեզուդ խելքի եկած տեղը, մարդդ ինչու՞ չպիտի խելքի գա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Պըլը Պուղու գործը դատարան ընկավ. նա քարով լցրեց մի քսակ ու գնաց դատավորի մոտ: Դատի ժամանակ, երբ Մելիքը ուզում էր սխալ խոսել, Պուղին ցույց էր տալիս քսակը: Մելիքը կարծելով, թե Պուղին կաշառք է խոստանում, կանչում է Պըլը Պուղուն իր մոտ եւ հարցնում.

- Պուղի, դե տես ի՞նչ ես անում:

- Ի՞նչ պիտի անեմ:

- Բա քսակի ոսկին ո՞ւր մնաց:

- Ի՞նչ ոսկի, քսակը քարով էի լցրել, թե որ սխալ դատեիր, մեկ-մեկ խփելու էի ճակատիդ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳՏՆՈՒՄ Է ԵԼՔԸ

Մելիք Շահնազարը չարունակ վատ երազներ էր տեսնում: Մի օր կանչեց Պըլը Պուղուն եւ խորհուրդ հարցրեց.

- Ճար ունես, տես, հալս խարաբ ա դառել. գիշերները հանգիստ քուն չունեմ, չար ոգիները ուզում են խեղդել ինձ. հարայ եմ տալիս, ձենս դուրս չի գալիս, ձեռքս ու ոտս չեմ կարողանում շարժել:

- Ճարն այն է, որ էլ չքնես, - պատասխանում է Պըլը Պուղին:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳԻՆԻ Է ԲԱԺԱՆՈՒՄ

Մի անգամ Ղարաբաղի մելիքները հավաքվել էին Մելիք Շահնազարի մոտ՝ քեֆի:

- Պուղի, էսօր սաղին դու ես, համ գինի լցրու խմենք, համ էլ մի քանի հանաք արա, լսենք:

Պուղին գինու կուլան ձեռքն առավ ու դիմեց մելիքներին:

- Մելիքներ, հիմա ասացեք տեսնեմ, ո՞նց բաժանեմ գինին, աստվածավարի՞, թե՝ մարդավարի:

- Աստվածավարի, աստվածավարի, - այս ու այն կողմից գոչեցին մելիքները:

- Լավ, - համաձայնվեց Պուղին ու գինի լցրեց գավաթի մեջ: Ամեն խմողի հետ Պուղին մի գավաթ գինի էր խմում:

- Ադա, Պուղի, ա մեռած, մինչեւ մենք մի գավաթ խմելը, դու արդեն 5-ը խմեցիր:

- Դե դուք ասացիք աստվածավարի բաժանիր, ես էլ աստվածավարի եմ բաժանում:

- Բա դա աստվածավարի՞ ա:

- Աստվածավարին հենց էս ա, էլի, աստված էլ ա այսպես բաժանում, մեկին յուղում ա, հինգին՝ դաղում:

- Լավ, Պուղի, մարդավարի բաժանիր:

- Աչքիս վրա, մենակ թե դուք էլ մարդավարի վարվեցեք ժողովրդի հետ:

- Խրատական տոնով ասում է նա եւ մեծ փարչով գինի բաժանում մելիքներին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ ՏԱՆՈՒՄ Է ՋՈՒՐԸ, ԷԼԻ ԾԱՐԱՎ ԵՏ ԲԵՐՈՒՄ

- Վերջ, Պուղի, էլ ինձ չես կարող խաբել, - մի օր ասաց Մելիքը.

- Որ ուզեմ, հենց հիմա կտանեմ ջուրը, ծարավ ետ բերեմ:

- Չես կարող:

- Կարող եմ:

- Դե եկ գնանք, թե որ ծարավ ետ չբերիր, գլուխդ կկտրեմ:

- Գնանք,- առաջ է ընկնում Պըլը Պուղին:

- Պուղի, մի՛ գնա, Մելիքը իր ասածին տեր մարդ է, գլուխդ կտրելու է, - այս ու այն կողմից խորհուրդ տվին ուրիշները:

- Ես Մելիքի հորն էլ եմ տարել ջուրը, ծարավ ետ բերել, - ասաց Պըլը Պուղին ու շարունակեց ճանապարհը: Երբ հասան աղբյուրին, Մելիքը կռացավ աղբյուրի վրա, Պըլը Պուղին քաշեց նրա փեշից.

- Կաց, լավ, ասենք, թե խմեցիր ու ետ դարձար, հիմա ո՞վ ա վկան, որ խմել ես, ես կասեմ չի խմել, դու կասես՝ խմել եմ:

- Լավ, որ այդպես է գնանք վկա բերենք, - համաձայնվում է Մելիքը ու ետ դառնում:

- Հը՞, խմեցի՞ր, - երբ տեղ հասան, հարցրին մարդիկ:

- Չէ, Պուղին ասաց վկա յա պետք, եկել ենք վկա տանենք մեզ հետ,- պատասխանեց Մելիքը:

Այստեղ մարդիկ մի կուշտ ծիծաղեցին Մելիքի խելքի վրա, իսկ Պըլը Պուղին սղալեց բեղերը ու հաղթողի հպարտությամբ ասաց.

-Մելիք Շահնազար, դե էլ մեծ-մեծ չխոսես ինձ հետ:





## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ ԿԱՊՈՒՄ Է ԳՈՂԻ ՈՏՔԵՐԸ

Մի անգամ Մելիք Շահնազարը իր այգում մեկին բռնում, ծեծում է, վերջում էլ ոտքերը պինդ կապում ու թողում ծառի տակ, ինքը գալիս տուն: Հաջորդ օրը Մելիքն ասում է.

- Պուղի, գնա այգի, մի մարդ եմ կապոտել, բաց թող:

Պուղին գնում է, տեսնում ծառի տակ մի մարդ նստած, ոտքերը կապած, իսկ ձեռքերը բոլորովին ազատ:

- Արա, ձեռքերդ ո՞վ ա արձակել, - հարցնում է Պըլը Պուղին:

- Ոչ ոք, ձեռքերս Մելիքը կապել չի:

- Յա, արա, ջան տղա, Մելիքն է հիմար, բա դու ինչու՞ ես էստեղ վեր ընկել, դե էնա ոտքերդ արձակեիր, էլի՞, - զարմանում է Պուղին:

- Որթ որ, Պուղի, դու իո իսկական գիտնական ես, լսել էի անունդ, չէի տեսել քեզ, բա որ այդպես էլ ա կարելի, ինչու՞ չեմ փախել:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԻՐ ԱՍԱԾԸ ՊԻՏԻ ԱՆԵՐ

Պուղու չանթան գողանում են, Պուղին դուրս է գալիս գյուղամեջ ու ձեն տալիս:

- Ա խալխ, չանթաս գողացել են, բերեք տվեք ինձ, թե չէ իմ ասածն եմ անելու:

Գողը Պըլը Պուղու չանթան բերեց, տվեց իրեն ու հարցրեց.

- Պուղի, որ չանթան չբերեի, ի՞նչ պիտի անեիր:

- Ինչ կա, որ ինչ անեմ, մի հավգա ունեմ, կտրելու էի, երկու չանթա էր դառնալու:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՒՏՈՒՄ Է ՀԱՎԸ

Պըլը Պուղին ու Մելիքը աշխատում էին այգում, կեսօրին Մելիքի համար եփած հավ են բերում: Մելիքը մտածում է հավը մենակ ուտելու մասին:

- Պուղի, արի քնենք, ով մեզանից լավ երազ տեսնի, թող նա էլ հավը մենակ ուտի:

- Ինչ եմ ասում, - համաձայնվում է Պըլը Պուղին:

Երբ Մելիքը սկսեց սուտ խռմփացնել, Պուղին հավը առավ ու քաշվեց մի կողմ:

Քիչ հետո սուտ քնից արթնանում է Մելիքը եւ դիմում Պըլը Պուղուն.

- Պուղի, ի՞նչ երազ տեսար:

- Առաջ դու պատմիր, Մելիք:

- Բա չես ասի, աչքս փակեցի թե չէ, Իրանի շահի մոտ էի, էլ եփած հավ, տապակած կաքավ, գառան խորոված, չամիչով փլավ, ինչ ասես, որ չկար նրա սեղանին:

- Ողորմի հորդ, ես էլ ասացի Մելիքը որ շահի մոտ այսքան կերավ, ախորժակը երեւի լրիվ փակվել ա, հավը առա ու քաշվեցի մի կողմ, կերա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՄԱՉՈՒՄ Է ԳՈՂԵՐԻՑ

Գողերը մտնում են Պըլը Պուղու տունը, դես են ման գալիս, դեն են ման գալիս, ոչինչ չեն գտնում: Գողերից մեկը կռանում է կարասի վրա, տեսնում Պըլը Պուղին կուչ է եկել, մի բուռ դարձել նրա մեջ:

- Պուղի, ինչու՞ ես թաքնվել, դուրս եկ, վախել մի, - ասում է գողերից մեկը:

- Վախից չէ, ամաչելուց եմ թաքնվել, ախր տանս մի կարգին բան չկա, որ գողանաք:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԾՌՈՒՄ Է ԷՇԻ ԲԵՌԸ

Պըլը Պուղին միշտ Մելիք Շահնազարի ասած խոսքի հակառակն է կատարում: Մելիքը դրա համար նրա հետ թարս էր խոսում:

- Պուղի՛, մի գնա բոստանի ջուրը կտրիր, Պուղի՛, օջախը կվառես:

Մի անգամ ջրաղացից տուն գալու ժամանակ գետի մեջ էշի բեռը ծռում է:

- Պուղի՛, ջլավը ընկավ, բեռը ծռի, բեռը ծռի, - ասում է Մելիքը:

Պուղին քաշում է ծռած բեռը, գցում ջրի մեջ:

- Արա, շան որդի, էդ ի՞նչ արիր, - բարկանում է Մելիքը:

- Այ մարդ, կյանքում մի անգամ խնդիրքդ ճիշտ կատարել եմ, էլ ինչու՞ ես բարկանում:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՁԻՆ ԳՈՂԱՆՈՒՄ ԵՆ

Մելիք Շահնազարի յորղա ձին գողանում են, մարդիկ այս ու այն կողմ են ընկնում, որոնում, իսկ Պըլը Պուղին պառկում է ծառի տակ, քնում:

- Պուղի, ա տնաքանդ, ի՞նչ բանի ես, Մելիքի ձին գողացել են, դու հանգիստ քնե՞լ ես:

- Որտեղ տանում են, թող տանեն, ջիլվալը էնա ձեռքիս, - հանգիստ ասում է Պըլը Պուղին ու շուռ գալիս մյուս կողքի վրա:



## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՓԱՓԱԽԻ ՅՈՒՆԱՐԸ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը գնում են Բարդա: Պըլը Պուղին պայմանավորվում է մի խանութպանի հետ իր անելիքը եւ Մելիքի հետ մտնում է ներս:

-Բաղդադի խուրմա ունե՞ս, - հարցնում է Պուղին:

-Ունեմ:

-Մի 3 - 4 կգ կշռիր:

Խանութպանը կատարում է Պուղու խնդրանքը:

-Մի 10 արշին էլ չինական մետաքս չափիր:

Խանութպանը մետաքսն էլ է չափում:

- Հիմա էլ մի 3 - 4 կգ Իրանի չամիչ կշռիր, - ասում է Պուղին ու այդ բոլորը տեղավորում խուրջինի մեջ, տալիս Մելիքին:

Յետո կանգնում է խանութպանի դիմաց, փափախը շուռ տալիս ու ասում.

- Պրծա՞նք, խանութպան ախպեր:

- Պրծանք, - պատասխանում է խանութպանը:

Յաջորդ օրը Մելիք Շահնազարը Պըլը Պուղու հետ մտնում է նույն խանութը ու պատվիրում 20 արշին կտոր չափել, 20 կգ չամիչ, 20 կգ Բաղդադի խուրմա կշռել: Երբ այս ամենը տեղավորում է խուրջինի մեջ, Պըլը Պուղու պես փափախը շուռ է տալիս եւ ասում.

- Պրծա՞նք, խանութպան ախպեր:

- Ինչը՞ պրծանք, խելքդ հո հացի հետ չե՞ս կերել, առած ապրանքի գինը տուր, շու՛տ:

Մելիքը փողը տալիս է ու գլխիկոր դուրս գալիս խանութից:

- Այ մարդ, որ փափախիդ հունարը էդա, ինչու՞ ես մեծ-մեծ խոսում, - փողոցում Մելիքին սկսում է նախատել Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱԶԱՏՈՒՄ Է ՅԱՆԵՍԻ ՅԱՐՍԻՆ

Յանեսի հարսը կարասից ալյուր հանելու համար ձեռքերը յան երկու կողմով մեկնում, կախում է կարասի մեջ: Ալյուրը հանելու ժամանակ մնում է սյունը գրկած, կանգնած. ինչ անում են, չեն անում, հարսը ալյուրը բաց չի թողնում:

- Գնանք Պուղու հետեւից, նա մի բան կմտածի, - ասում է տան նահապետ Յանեսը: Պըլը Պուղին գալիս է ու խորհուրդ տալիս.

- Յա սյունը պիտի կտրենք, յա թե չէ՝ հարսի ձեռքը, - ասում է ու կացինը բարձրացնում հարսի ձեռքի վրա: Յարսը վախից ճչում է ու բաց թողնում ալյուրը, բաժանվում սյունից:

- Կեցցե՛ս, Պուղի՛, իմաստունի խելք ունես, - ուրախանում են տնեցիք:

## ՅԱՄ ԳՈՂ ԵՍ, ՅԱՄ ՍՈՒՏԱՍԱՆ

Պըլը Պուղին մի անգամ մտնում է այրի Սոնայի այգին, բարձրանում ու սկսում է քաղել տանձը: Սոնան գալիս ու հայհոյում է նրան:

Աղջի, խաթադ քաշիր, դու լինես քո աստվածը, ես քեզ պես մի կնոջ եմ ման գալիս: Ծառիցը կիջնեմ, ուզածս կանեմ:

Սոնան հանդարտվում է, սուս ու փուս նստում ծառի տակ, սպասում: Պըլը Պուղին ծառից իջնում է եւ առանց ուշադրություն դարձնելու, առանց նայելու Սոնայի կողմը, գնում: Սոնան նրա հետեւից չանչ է անում ու անիծում նրան.

- Ա՛ռ, է՛, հողս գլխիդ, տեղովդ մեկ մասխարա Պուղի, որ համ գող ես, համ՝ սուտասան:



## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՅԱՆԵԼՈՒԿԸ

Մի անգամ, երբ մելիքները հավաքվեցին Մելիք Շահնազարի մոտ քեֆի, Պուղին նրանց մի հանելուկ առաջարկեց.

- Էն ինչի՞ց է, տեր Յակոբի դպրոցում 10 աշակերտ կա բայց նա ինչքան հաշվում է 10 ոտից, 10 ձեռքից չի անցնում նրանց ոտքերի, ձեռքերի թիվը:

Յյուրերը շատ մտածեցին, բայց չկարողացան լուծել հանելուկը:

- Էդ նրանից է, որ տեր Յակոբը 10-ից դենը հաշվել չգիտե, - բացատրեց Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԽՐԱՏԸ

Պըլը Պուղին ամռան մի օր անցնում է հասուն արտերի միջով, այդ ժամանակ մեկը ղարաբաղյան հորովել էր երգում: Պըլը Պուղին ականջ դրեց, տեսավ, որ երգողը շատ անշնորհք մարդ է, մեկ երգի առաջին տողն էր երգում, մեկ՝ վերջին, խառնում ամեն ինչ, գնաց, հասավ նրան ու սկսեց հնձվորի հետեւից մեկ-մեկ ցրիվ տալ կապած խրձերը:

- Արա Պուղի, էդ ի՞նչ ես անում, ախր դրանք մեկ-մեկ հավաքած, փնջած ա, ինչու՞ ես ցրիվ տալիս, - բարկանում է հնձվորը:

- Իսկ դու ի՞նչ ես ժողովրդի մեկ-մեկ հավաքած, փնջած երգի տողերը ցրիվ տալիս, խառնում իրար, - բարկանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՏԱՆՁԸ ՇԼՈՐ Է ԴԱՌՆՈՒՄ

Պըլը Պուղին Մելիք Շահնազարի այգուց մի ճվարան մեղրատանձ է քաղում, որ բերի տուն:

Ճանապարհին մի տեղ նստում է, որ հանգստանա, տեսնում է անտառից գալիս է հարեւան Ղազարը: Սա էլ մի ճվարան շլոր էր բերում անտառից: Տեսնում է, որ Ղազարը մոտենում է, Պըլը Պուղին սուտ քուն է մտնում: Ղազարին էլ դա էր հարկավոր, իր ճվարանը թողնում է, Պըլը Պուղու ճվարանը վերցնում, գնում տուն: «Թող տանի, ես էլի մեր Չառնիշանի խաթրը կգտնեմ, վաղը մի ճվարան տանձ կքաղեմ, տանեմ տուն, Ղազարի կինը էնքան թթու շլոր է կերել, ատամները առնել են», - մտածում է Պըլը Պուղին ու շլորով լի ճվարանը շալակած գալիս տուն: Կինը ուրախ-ուրախ մոտենում է ու տեսնելով ամուսնու բեռը, բարկությամբ հարցնում.

- Էս ի՞նչ ես բերել:

- Շահենի մեղրատանձ:

- Այ մարդ, թթու շլոր է սա:

Պըլը Պուղին նայում է ու ինքն էլ կեղծ զարմանում:

- Այ կնիկ, պահակ Օհանը վկա, իմ քաղածը մեղրատանձ էր, իսկ էս շլորը Ղազարն է քաղել: Աղջի, մի լավ նայիր ինձ, բալքի ես էլ եմ փոխս ընկել Ղազարի հետ:

Կինը հասկանում է, որ Պըլը Պուղին այդ օրը լավություն է արել Ղազարին ու ծիծաղում է միշտ լավատես, միշտ բարի իր ամուսնու արարքի վրա:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԷՇԸ ՓԱԼԱՆՈՒՄ Է, ՏԱԼԻՍ ԳՈՂԵՐԻՆ

Գողերը մտնում են Մելիք Շահնազարի տունը, գորգերը գողանում: Պուղին, որ այդ ժամանակ գյուղամիջում զբաղված էր, գալիս է տեսնում գողերը տան իրերը շալակած գնում են: Վազում է գոմը, էշը փալանում ու բերում տալիս նրանց.

- Էդ ի՞նչ ես անում, Պուղի, - հարցնում են գողերը:

- Բա բեռը շալակո՞վ եք տանելու, ջան տղերք:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ Է ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՈՐԴՈՒՆ

Մելիք Շահնազարը կանչում է Պըլը Պուղուն եւ խնդրում, որ իր որդուն իմաստություն սովորեցնի: Պըլը Պուղին 7 տարի իմաստություն է սովորեցնում նրան: Մի օր Մելիքի տղան գնում է խանութպան Մոսու մոտ եւ ասում.

- Երեք գլուխ շաքար տուր, փոխարենը երեք իմաստուն զրույց պատմեմ քեզ:

Խանութպանը բարկանում է.

- Գնա, գնա, ես քո հոր թայ մարդ եմ, գնա քո հորով մասխարա արա:

Երեկոյան Մելիքը կանչում է Պըլը Պուղուն եւ նախատում.

- Այ մարդ, որ քո սովորեցրած իմաստությունը մի քոռ կոպեկի արժողություն չունի, ինչու՞ սկզբից չասացիր:

Պըլը Պուղին առանց պատասխանելու, գրպանից մի փոքրիկ պսպղուն քար է հանում, տալիս Մելիքի որդուն.

- Վազիր չարչի Ցականի մոտ, տուր իրեն, ասա Պողոսը դրա դիմաց երկու ասեղ ա ուզում:

Տղան գնում է, գալիս, թե՝ չարչին ասել է՝ գնա Պողոսին ասա, դու ես շաշ, չարչի Ցականն էլ է՞ շաշ, որ ասեղը քարի հետ փոխի:

- Վնաս չունի, հիմա էլ վազիր զարզար Ավագի մոտ, քարը տուր, ասա մի ոսկե մատանի տուր:

Ճարը կտրած տղան վազում է զարզար Ավագի մոտ: Զարզարը քարը տեսնելուն պես ասում է.

- Փեշդ պահիր, - ապա մի քանի բուռ ոսկի է լցնում տղայի փեշը: Տղան զարմացած գալիս է Պըլը Պուղու մոտ, ոսկին թափում է սեղանի վրա:

- Այդ ի՞նչ քար ա, Պուղի, որ զարզար Ավագը դրա դիմաց այսքան ոսկի ա տվել, - հարցնում է Մելիքը:

Ադամանդ ա: Հիմա հասկացա՞ր, թե ինչու են ասում «զառի գինը զարզարը կիմանա»: Ես տղայիդ իմաստություն չեմ սովորեցրել, որ տանի չարչի Ցականի հետ առեւտուր անի, - ասում է Պըլը Պուղին եւ դուրս գնում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԵՐԵԽԱՆ ՌՈՒՍԵՐԵՆ ԽՈՍՈՒՄ Է

Պըլը Պուղու կինը մի սիրուն երեխա ծնեց: Մի քանի ամիս անցնելուց հետո մի օր Պուղին ականջ է դնում նրան, իսկ երեխան իր համար բլբլացնում է.

- Դա-դա, նու-նու, կա-մու:

Վայ կնիկ, ես խոխան հալա հայերեն խոսելը գյուղում չի, ես հի՞բ էսքան ռուսերեն սովորեց, - զարմանքով հարցնում է Պըլը Պուղին ու ծիծաղում իր սրամտության վրա:



## ԴՈՒ ՎԵՐՋԻՆ ՆԱՅԻՐ

- Ադա, Պուղի, ճիշտ ա՞, որ տղայիդ համար ուզել ես Մելիքի անբան աղջիկը:

- Ճիշտ ա:

- Խեղճ դու, - ասաց Պըլը Պուղու ծանոթը:

- Դու հալա վերջին նայիր, - պատասխանեց Պուղին:

Մի տարի հետո Պըլը Պուղու ծանոթը գալիս է Զանգեզուրից, հյուր մնում Պըլը Պուղու մոտ: Տանը ոչ ոք չի լինում, բացի հարսից: Սա մի մեծ կծիկ է տալիս հյուրին եւ ասում.

- Առ էս թելը, կծկիր էս փայտի վրա, դատարկ մարդ ես, սոված չմնաս:

- Ինչի՞, քե մատաղ:

- Էս տան կարգը ուրիշ ա, ով չի աշխատում, հաց չեն տալիս: Այ ես, առավոտից մինչեւ երեկո քիթ սրբելու ժամանակ չունեմ:

Երեկոյան Պըլը Պուղին գալիս է տեսնում իր ծանոթը թել է կծկում:

- Ա Պուղ, հարսդ գործի ա դրել ինձ,-ասում է ծանոթը:

- Կղնի, բա չասացի՞, վերջին նայիր:

## ՃԻՇՏ ԽՈՍՔԸ ԿԱՏԱԿՈՎ ԿԱՍԵՆ

Ադա, Պուղի, ա մեռած, կմեռնեմ, էլի կարոտ քո մի ճիշտ խոսքին:

- Մելիք, թե որ խելք ունենայիր, կիմանայիր, որ այսքան ժամանակ ես միշտ ճիշտ եմ խոսել:

- Ա սարսաղ, սկի մի անգամ չտեսանք, որ ճիշտ խոսես, հենց միշտ կատակում ես:

- Քո ազիզ արեւը, Մելիք, ես ճիշտ խոսքը միշտ կատակով եմ ասում:

## ԳԻԺԸ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԿԴՆԻ ԽԵԼՈՔԻ ՎՐԱ

- Պուղի, դու 100 անգամ խելոք ես Մելիքից, ո՞նց է, որ քեզ Մելիքը գիժ է անվանում, - հարցնում են Պըլը Պուղուն:

-Քե մատաղ, աշխարհի գործը էդպես ա, գիժը իր անունը խելոքի վրա կդնի:

## ՄԱՐԴ ԻՐ ԽԵԼՔԻՑ Է ԱՂՔԱՏ

Մելիք Շահնազարը Վարանդայի գյուղերը շրջելուց հետո Պըլը Պուղուն հարցնում է.

- Պուղի, էս ժողովուրդը խե՞ էսքան աղքատ է ապրում, էլի դու պատճառը կիմանաս:

- Իրենց խելքից, Մելի՛ք:

- Յանի ո՞նց:

- Էնպես էլի, իրենց աշխատածը քեզ են տալիս, իրենք մնում քաղցած:

## ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽԵԼՔԸ

Մի անգամ Գանձասարի կաթողիկոսը գալիս է Չանախչի:

- Պուղի, սրա խելքն ու մեր տերտերի խելքն հունցա՞, - հարցնում է ժողովուրդը:

- Մեր տերտերի խելքը անձրեւի ջրի պես է, որ արեւը տալիս ա, չորանում ա: Ինչ մնում է կաթողիկոսին, նրա խելքը Թարթառի պես է, քարը կճակի, անց կենա:



## ՄԵԼԻՔԻ ԽԵԼՔԻ ՉԱՓԸ

Պըլը Պուղին մի երկար ձող էր պահում տանը, ամեն օր մի քիչ կտրում էր ծայրից, դեն գցում.

- Պուղի, էդ ի՞նչ լատան ա, ինչո՞ւ ես ամեն օր մի քիչ կտրում ծայրից ու դեն գցում, - մի օր հարցրին Նրան Մելիքի ծառաները:

- Մելիքի խելքի չափսն ա, ինչքան գնում ենք, Մելիքի խելքը էնքան պակասում ա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԴԵՆ Է ԳՑՈՒՄ ՄԵԼԻՔԻ ԽԵԼՔԻ ՉԱՓԸ

Պըլը Պուղին մի օր Մելիքի խելքի չափսը ձեռքին դուրս եկավ գյուղամեջ ու բոլորի աչքի առաջ միջից կոտրեց, գցեց կրակի վրա:

- Ադա, Պուղի, էդ ի՞նչ արիր:

- Վերջ, Մելիքի խելքը գլխից թռել ա:

- Ադա, յանի ոնց ա՞ թռել:

- Նոյի ագռավի պես, էլ չի գալու:

- Ադա, բան գիտես, ասա, լսենք:

- Մելիքը իր Շոշ բերդը տվել է Փանահ խանին:

- Վա՜շ...

- Վո՜ւշ...

- Ղորթ որ էդ մարդը խելագարվել ա, - հառաչեց ժողովուրդը:

## ՀԱՐԵՎԱՆԴ ՎԱՏ Է, ՏԵՂԴ ՓՈԽԻՐ

- Պուղի, քե մատաղ, հարեւանս օր ու արեւ չի տալիս մեզ: Շատ վատ մարդ ա, ի՞նչ անեմ.- մի օր հարցնում է շուշեցի Նազարը:

- Տունդ ծախիր, տեղդ փոխիր, - խորհուրդ է տալիս Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՂՈԹՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՀԱՄԱՐ

Մի օր Պըլը Պուղին նստած աղոթք էր անում, երբ ներս մտավ Մելիք Շահնազարը:

- Պուղի, էդ ու՞մ համար ես աղոթում:
- Քեզ համար:
- Արա, խե, ես ի՞նչ եմ:
- Ես ասում են գիժերը խելոքանան, խելոքներն էլ գիժ են դառնում:
- Արա, ուրեմն ես գժվե՞լ եմ:
- Թե որ գիժ չես, խելոք էլ չես:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՉԻ ՈՒԶՈՒՄ ԿՆՔԱՀԱՅՐ ԼԻՆԵԼ

- Պուղի, կինս տղա է ծնել, արի գնանք կնքահայր եղիր, - խնդրում է Ղազարը:

- Քո արեւը, Ղազար, իմ երեխոցն էլ ուրիշ է կնքահայր լինում, - հրաժարվում է Պուղին:



## ՄԵԼԻՔԻ՝ ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՆ ՏՎԱԾ ԹՂԹԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մելիք Շահնազարը Պըլը Պուղուն մի թուղթ տվեց, որի մեջ գրված էր, որ ամեն տարի իր գավառի գյուղերի տանուտերերը երկու ոսկի պիտի տան Պըլը Պուղուն:

- Մելիքն ապրած կենա, էս գլխից դու հալա երկու ոսկի տուր:

- Արա, ինչի՞ համար:

- Տված թղթիդ հունարը ուզում եմ փորձել, թե քեզ մոտ ուժ ունեցավ, ուրիշների մոտ կունենա, հո կունենա:

Մելիքը իր գիրը հարգելու համար ստիպված երկու ոսկի տվեց նրան:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՏԱՐԻՔԸ

- Պուղի, քանի՞ տարեկան ես:
- Ցերեկների հաշվով՝ 50:
- Դե ամեն ցերեկ էլ մի գիշեր է ունենում,էլի:
- Հա՛, թե ասածդ ղորթ լինի, ուղիղ 100 տարեկան եմ:

## ՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՄ, ՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Արի քեզ վարդապետ ձեռնադրեմ, Պուղի, լավ քարոզիչ կլինես, - մի օր ասում է կաթողիկոսը:

- Հոգեւոր հայր, ես առանց քո ձեռնադրության Մելիքի համար համ վարդապետ եմ, համ՝ կաթողիկոս:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ «ԳՈՒՅՈՒԹՅՈՒՆ» Է ԱՆՈՒՄ

Մելիք Շահնազրը նստել, ոսկի էր հաշվում, երբ ներս մտավ Պըլը Պուղին ու սկսեց ոսկին լցնել գրպանը:

- Արա, էդ ի՞նչ ես անում, Պուղի:

- Տանում եմ ցանեմ, որ մեկը հազար դառնա:

- Արա շաշ-շաշ բաներ մի արա, ոսկին թափիր առաջս, շուտ:

- Ես գնացի Մելիք, ինչքան չինի շաշը իր շաշությունը պիտի անի, - ասաց Պուղին ու դուրս գնաց:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՊԱՐՏՔԸ

Պըլը Պուղու հարեւանը փող էր պարտք, երեք տարի էր անցել, բայց դեռ պարտքը չէր տվել: Մի գիշեր Պըլը Պուղին երազում տեսնում է, թե ինչպես հարեւանը 9 ռուբլի բերում տալիս է իրեն:

- Ադա, Ղազար, դու ինձ 18 ռուբլի պիտի տաս, էս ի՞նչ խաբար ա, - բողոքում է Պըլը Պուղին:

- Կավոչ, Պուղի, եղածը էս ա:

- Չէ, գնա իմ 18 ռուբլին բեր, - պնդում է Պըլը Պուղին երազում:

Ղազարը ճարը կտրած գնում է: Պուղին այդ պահին արթնանում է երազից ու նորից աչքերը փակում.

- Բեր Ղազար, բեր էդ 9 ռուբլին լինի, տուր, հինչը կա-կա, թա չէ դրանից էլ եմ զրկվելու:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԹԱՌ Է ՆՎԱԳՈՒՄ

Պըլը Պուղին մի օր թառը վերցրեց ու սկսեց նվագել:

- Պուղի, ուրիշները մատները թառի վրա խաղացնում են, իսկ դու մատդ դրել մի սիմի վրա ճընկ-ճընկ ես անում:

- Ուրիշներըման են գալիս, տեղը գտնեն, ես որ տեղը գտել եմ ու մատս դրել վրան, էլ ինչի՞ համար ման գամ:

## ՄԵԼԻՔԸ ՅԱՆԱՔՉԻ

-Պուղի, մի հանաք արա, ծիծաղենք, - մի օր ասում է Մելիքը:

-Մելիք, էսքան ժամանակ ես եմ քեզ ծիծաղեցրել, արի մի անգամ էլ դու ուրախացրու ինձ:

-Ադա, լավ ես ասում, բայց ես ի՞նչ հանաք անող եմ:

-Դուրս եկ ղարաղամի կտրին մոխրի մեջ էշի պես թավալ տուր, վեր կաց զռզռա, քամակդ թողթող արա, թե որ ժողովուրդը ծիծաղից չթուլանա, գլխովս պատասխանատու եմ,- խորհուրդ է տալիս Պըլը Պուղին:

## ԱՄԵՆԱԼԱՎ ԿԵՐԱԿՈՒՐԸ

- Պուղի, ձանձրացել եմ խորովածից եւ փլավից, էնպես մի կերակուր եփիր, որ ախորժակով ուտեմ, թե որ կարողացար ուզածիս պես մի կերակուր սարքել, մի ոսկի կտամ:

-Ամոթ է, Մելիք, քո արշինով մի չափիր ուրիշներին, Պուղին ղոնաղին տված մի փոր հացի համար մի ոսկի չի վերցնի, իսկ հինչ մնում ա քո ցանկացած կերակուրին, երեկոյան իմ տանը կուտես:

-Այ գյադա, էդ ո՞նց ա, ես էսքան հարուստ իմ տանը ուզածը չկա, քո տանը կա՞:

Երեկոյան դեմ Մելիքը կնոջ հետ գնում են Պուղու տունը: Քիչ հետո սա եփած փիփերթ է բերում՝ քացախով ու սխտորով համեմած:

- Ադա, Պուղի, ես քեզ համար երեխա եմ, որ ինձ խաբում ես, էս ի՞նչ ես դնում իմ առաջ:

- Դու հալա համը առ, որ վատ լինի, չես ուտի:

Մելիքը համը առնում է:

- Ա Պուղ, տեղը կա մի քիչ էլ ցցիր, - խնդրում է Մելիքը:

Մելիքն ու իր կինը Պըլը Պուղու եփած կերակուրը ախորժակով ուտում են:

- Ա Պուղ, էս ինչ լազաթին կերակուր ա :

- Կերակուր մի ասա, հիվանդի դեղ ու դարման ասա:

Այնուհետեւ Մելիքը որտեղ խոսք էր լինում ուտելու մասին, ասում է.

- Ա Պուղ, մի անգամ էլ փիփերթ եփիր, ի՞նչ կլինի:

- Չէ, Մելիք, թող համը իր տեղը մնա, մի կերակուրից երկու անգամ որ կերար, էլ համ ու լազաթ չի ունենա:

## ՄԵԽԸ ԷՆ ՊԱՏԻՆՆ Է

Պըլը Պուղին մեխ էր թխում պատին, իսկ Մելիք Շահնազարը օգնում էր նրան: Մի անգամ Մելիքը մեխը թարս էր մեկնում դեպի Պըլը Պուղին:

- Պուղի, բռնի՛ր:

Պուղին ետ է նայում ու խիստ բարկանում Մելիքի վրա:

- Այ մարդ, ծառայությունդ ինչու՞ չես լավ կատարում, բա չե՞ս տեսնում, որ սա էն մի պատի մեխնա:



## ԽՈՍՔ Ա ԷԼԻ, ԱՍԱՑԻ

Պուղին գնում է աղջիկ ուզելու: Տեսնում է, որ զոքանչը հացի պատրաստություն չի տեսնում, հարցնում է.

- Ձեր կողմերում ձվածեղը քանի՞ ձվից է լինում:

- Ինչ կա, խնե հարցրի՞ր, էգնա, - հարցնում է զոքանչը:

-Խոսք ա, էլի, ասացի...

## ԻՆՉ ՈՐ ԱՆԵՍ ԱՌԱՋԴ ԿԳԱ

Մելիք Շահնազարը մի անգամ բարձրացավ ծառը՝ խորովածի համար փայտ կտրելու: Պըլը Պուղին այդ ժամանակ սկսեց ծառը տակից կտրել:

- Ադա, Պուղի, գժությունդ էլի բռնե՞ց, ադա, բա չես տեսնու՞մ, որ ես ծառի վրա եմ:

- Դու ճղնան պինդ բռնիր, ես հո՞ ճեղնը չեմ կտրում:

- Ադա, ես իմ արեւը, դու իսկական գիժ ես:

- Մելիք, մի՞թե նույնը չի անում Փանահ խանը, դու էն ծառի մի ճյուղն ես, որի տակից ուզում ա կտրել նա: Հիմա ասա տեսնեմ, գիժը ե՞ս եմ, թե՞ դու, որ կացինը դրել ես քո թշնամու ձեռքին, թե՝ Փանահ խան, կտրիր ծառը:

## ԽՈՒՆԱԾԵՆՑԻ ՏԵՐՏԵՐԸ

- Պուղի, էս խունաշենցի տերտերը հունց ա՛ կարդում ավետարանը, ասում եմ, բերենք Ամարասի վանքը, վարդապետ ձեռնադրենք:

- Մելիք, քո ազիզ արեւը վկա, թե որ 15 ձկնորս ու 15 ջանգալ ացեն դրա փորը, 15 օր ու գիշեր տակն ու վրա անեն, մի այբ չեն հանի դրա փորից:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՕՂԵԹՈՐ

Պըլը Պուղին իրենց թթենու այգում օղի էր թորում. կեսօրին եկան նրա մոտ մի քանի անծանոթ հնձվորներ. մի-մի թաս օղի խմեցին ու գովեցին նրան:

- Էս շան տղան հինչ լավ արաղ ա քաշում:

Պըլը Պուղին լսեց նրանց. մի բաժակ էլ ինքը խմեց ու թե՝

- Ղորթ ա, լավ արաղ ա, էս շան որդիները լավ արաղը ճանաչում են, է՜...

## ԷՇԻ ՔՈՒՌԱԿԸ

Պըլը Պուղին խորհուրդ տվեց Ղազարին իր տղային դպրոց ուղարկել:

- Վարդապետի տված փողը կորած ա, Պուղի՛, փող ունենամ մի էշի քուռակ կառնեմ:

- Լավ կանես, Ղազար, մի էշի քուռակ էլ քո տղան կդառնա, բեռնիր, մխիթարիր, - ծիծաղեց Պըլը Պուղին:

## ՈՐ ԱՆՈՒՍ ՄՆԱՍ, ՄԵԼԻՔ ԿԴԱՌՆԱՍ

Պըլը Պուղին նստած գիրք էր կարդում, երբ Մելիք Շահնազարը մոտեցավ ու շոյելով էշի գլուխը, ասաց.

- Դու էլ կարդա, որ Պուղու պես գիտուն մարդ դառնաս:

Պըլը Պուղին լսեց ու ասաց.

- Ղորթա, ա էշ, վեր անուս մնացիր, Մելիք ես դառնալու:



## ԱՆԲԱՆ ՄԵԼԻՔԸ

- Պուղի, քե մատաղ, մի հանաք արա, լսենք, - խնդրում է Մելիքը:

- Ի՞նչ հանաք անեմ, Մելիք Շահնազար, վախենում եմ հանաքիս վերջը դագանակ դառնա:

- Մդա, դե սկսիր:

- Մի մելիք է լինում, էս մելիքը շատ լոդուր, անբան մարդ ա լինում, այնքան անբան, որ նեղանում ա կժից ջուր լցնի խմի: Ամեն ինչ ծառաներն են անում: Էնպես է պատահում, որ մի կռվի ժամանակ գերի ա ընկնում, տանում են տեսնում մելիքը չէ, մի անբան-անպետք բան ա: Ասում են, մելիք, երկու պայման կա, կամ պիտի աշխատես, կամ սաղ թաղում ենք քեզ:

- Թաղեցեք, - ասում է անբան մելիքը:

Մելիքին դնում են հողում, այդ պահին մոտենում է մի բարի մարդ եւ ասում.

- Էդ մարդուն դեռ մի թաղեք, տանը խաշած կարտոֆիլ կա, թող գա ուտի, ապրի:

- Քըչված ա՞, - հարցնում ա մելիքը:

- Չէ՜, - պատասխանում է մարդը:

- Դե հողից լցրեք, գա, - ասում է անբան մելիքը ու էդպես էլ անբան մեռնում ա:

## ՉՈՔԱՆՉՍ ԻՆՁ ՍԻՐՈՒՄ Է

Պուղու հարեւան Ղազարը ամեն օր հացի ժամանակ գնում էր Պըլը Պուղու տունը եւ ասում.

- Չոքանչս ինձ սիրում ա, - ասում էր ու նստում հացի:

- Արա, Ղազար, բա սկի զոքանչդ մի օր ձեր տանը քեզ չսիրե՞ց, - ծիծաղելով դիտողություն է անում Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽԵՑԵՂԵՆ Է ՏԱՆՈՒՄ ԾԱԽԵԼՈՒ

Պըլը Պուղին էշի վրա բարձել էր խեցեղեն ամաններ ու տանում էր Շուշի՝ ծախելու: Ճանապարհին նրան հանդիպեց վաղեմի ծանոթներից մեկը՝ չոբան Ապետը: Սա ձեռքի մահակով մի պինդ զարկեց ամաններով լի ջվալին ու հարցրեց

- Պուղի ախպեր, էս ի՞նչ ես տանում բազար:

- Քե մատաղ, որ մի անգամ էլ էն մի ջվալին զարկես, ո-չինչ, - պատասխանտում է Պըլը Պուղին:

## ՈՐ ԱՍԵՄ, ԼԱՎ Ա՛

Պըլը Պուղին նստած հաց էր ուտում, երբ ներս մտավ Ղազարը:

- Արա, Ղազար, նստիր հաց ուտենք:

- Հաց եմ կերել, - ասաց Ղազարն ու մնաց կանգնած: Ղա-զարը մտքում նախատեց իրեն, որ հրաժարվել է հացից ու սկ-սեց մտածել, ինչ կլինի, մի անգամ էլ Պուղին ասի, եկ հաց կեր: Մտածեց ու մեկ էլ չիմացավ ինչպես մտածածը բարձրաձայն արտահայտեց:

- Պուղի, որ մեկ էլ ասես, կգամ:

- Որ ասեմ, լավ ա՛, - պատասխանում է Պըլը Պուղին:

## ԷԴ ԻՄ ՏԵՍԱԾ ՌՈՒՍՆԵՐԻՑ ՉԷ

Մելիք Շահնազարը կանչում է Պըլը Պուղուն:

- Արա, Պուղի, մի ռուս է եկել մեզ մոտ, բալքի լեզուն իմանաս:

- Հալա մի տեսնենք ի՞նչ ռուս ա, - ասում է Պըլը Պուղին, նայում նրա կոշիկներին, երկար, նեղ շալվարին, եռանկյունաձեւ գլխարկին ու ասում.

- Մելիք, էս իմ տեսած ռուսներից չէ, սրա լեզուն ես գիդալ չըմ:



## ՔԱՄԻՆ ՄՈՒՂԱՆԻՑ Է ՓՉՈՒՄ

Մելիք Շահնազարը մի օր գլխին հավաքած մի խումբ մարդկանց պատմում էր, թե ինչպես ինքը մենակ ավազակնե-րին հալածել է մինչեւ Մուղան: Պըլը Պուղին, որ լսում էր նրան, գլուխն օրորեց եւ ասաց.

- Ախր ասում են, որ էս քամին Մուղանից ա փչում:

## ՀԱՄ ԷՇ ԵՍ, ՀԱՄ ՔՈՒՌԱԿ

Մելիք Շահնազարը մի օր Պըլը Պուղուն առավոտից մին-չեւ ուշ երեկո աշխատեցնում է իր այգում: Երեկոյան, երբ Պըլը Պուղին ուզում էր տուն գնալ, կանչում է իր մոտ եւ ասում.

- Պուղ, նեղանաս ոչ, որ փող չեմ տալիս, էս տարի բոզ էշը որ ծնի, քուռակը քեզ եմ տալու:

- Մելիքն ապրած կենա, ես իո վարձով չեմ աշխատում քեզ համար, դու ինձ համար համ էշ ես, համ քուռակ:

## ՄԵԿԻ ՔԱՌԱՊԱՏԻԿԸ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը հյուր են գնում Փանահ խանին:

Խանը հարցնում է Պըլը Պուղուն.

- Պուղի, ի՞նչ ես ցանկանում, որ քեզ տամ, մի բան խնդրիր, բայց ինչ որ քեզ տամ, նույն բանից քառապատիկը տալու եմ Մելիքին:

- Մի ապտակ եմ ուզում:

Պուղին իր մի ապտակը ստանալուց հետո մի կողմ է կանգնում եւ նայում Մելիք Շահնազարին, որը խանի ամեն մի ապտակից կարճանում էր ու նորից երկարում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԷՇԸ ՉԻ ՏԱԼԻՍ ՀԱՐԵՎԱՆԻՆ

Պուղու հարեւանը շարունակ գալիս, խնդրում է Պուղու էշը:

- Պուղի, էշը տուր տանեմ ջրաղաց: Պուղի, բա ի՞նչ անենք, քանտառում մի երկու գերան եմ կտրել, ասում եմ էշը տաս, քաշեմ, բերեմ: Պուղի, էշը տաս...

Մի օր էլ, երբ հարեւանը Պըլը Պուղուց խնդրում է էշը, նա մերժում է.

- Էշը հղի ա, Ղազար:
- Ա Պուղ, որձ էշը ոնց ա՞ հղի դարձել, դէ սաս չեմ տալիս, պրծնի գնա, էլի:
- Բա սրանից լավ չէ՞ կլինի, Ղազար:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պըլը Պուղին էշի վրա նստած իր համար զբոսնում էր Անկարայի փողոցներով, երբ Ղաշին կանգնեցրեց նրան ու հարցրեց.

- Որտեղացի՞ ես, ա հարամ հայ:
- Ես ղարաբաղցի եմ, տակինս՝ անկարեցի:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԴԱՍ Է ՏԱԼԻՍ

Պըլը Պուղին Մելիք Շահնազարին դաս էր տալիս: Պուղին ինչ ասում էր, Մելիքը պատասխանում էր.

- Էդ ես գիտեմ:
- Հերդ 10 ոսկի է պարտք ինձ:
- Էդ ես գիտեմ, - խոսքը դեռ Պուղու բերանից չթռած ասաց Մելիքը:
- Դե որ գիտես, հորդ պարտքը տուր, էլի, բա նամուս չունե՞ս, Մելիք մարդ ես:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՒՏՈՒՄ Է ԽՈՐՈՎԱԾԸ

Մի անգամ ճաշի ժամանակ Պըլը Պուղին իր առաջն է քաշում խորովածն ու սկսում մենակ ուտել: Մելիքն ուզում է խաբել Պըլը Պուղուն, խորովածը խլել նրանից:

- Պուղի, պանիրը լավն ա, պանրից կեր:
- Մելիք, ես ծառա մարդ եմ, խորովածով էլ յոլա կգնամ, պանիրը դու կեր, - պատասխանում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԼԱՑ Է ԼԻՆՈՒՄ

Խորովածն ուտելու ժամանակ Մելիք Շահնազարը կրակից մի տաք պատառ է վերցնում, դնում Պըլը Պուղու առաջ: Պըլը Պուղին վերցնում է, դնում բերանում, բերանը այրում է, աչքերը ջրակալում են:

- Պուղի, էդ ինչու՞ ես լալիս,- հարցնում է Մելիքն ու ծիծաղում:
- Բա որ քեզ նման Մելիքը մեռած լինի, ինձ նման ծառան ինչու՞ չպիտի լաց լինի:

## ՄԵԼԻՔԻ ՇՆԵՐԻ ՀՈՒՆԱՐԸ

- Ադա, Պուղի, էս ի՞նչ հրաշք ա, աղվեսը եկել, բուն ա դրել մեր մարագում:

Էդ քո շների հունարից ա, Մելիք Շահնազար:

### ՏԵՐՏԵՐԸ ԽԱՇԻԼ Է ՈՒՏՈՒՄ

Մի անգամ Պըլը Պուղին տերտերին կանչում է հյուր:

- Ա դեր, լավ խաշիլ կա, գնանք ուտենք:

- Շնորհակալ եմ, Պուղի, կուշտ հաց եմ կերել, այ մինչեւ այստեղ, - ձեռքով ցույց է տալիս կոկորդը:

- Վնաս չունի, դու դեսից-դենից կխոսես, ես հաց կուտեմ:

- Հա, դե որ շատ ես ասում, կգամ:

Երբ սեղան են նստում, տերտերը էլ ժամանակ չի տալիս Պուղուն: Մինչեւ Պըլը Պուղին մի աման խաշիլ կուտի, տերտերը երեք աման ուտում է:

- Տեր հայր, էդ մինչեւ բուկդ կուշտ ես, որ այդքան ես ուտում, բա որ քաղցած լինեիր, որքա՞ն կուտեիր, - զարմացած հարցնում է Պըլը Պուղին:

### ԵՐՐՈՐԴ ԱՆՈՒՆԸ ՄԻ ՏՈՒՐ

- Աշխարհս փչացել է, Մելիք Շահնազար:

- Ադա, ի՞նչ ա եղել, որ բան գիտես, ասա:

- Էլ ի՞նչ լինի, մի օր մեր ուստա Թեւին վեր է կենում, գնում ղարիբություն՝ կնոջ գրկում թողնելով մի ծծկեր երեխա: Շատ է կենում ղարիբությունում, թե քիչ, վերջը գալիս է տուն, տեսնում օջախի շուրջը երեխաներով լիքը:

- Կնիկ, էս ու՞մն են, - հարցնում է Թեւին:

- Մերը:

- Բա էս մե՞կը ցոողի գիրկդ:

- Էն մեկն էլ փորումս էր:

- Բա երրո՞րդը:

- Ա մարդ, դու լինես էս երկուսի ազիզ արեւը, մնացածի անունը էլ չտաս, - խնդրում է կինը:



### ԽԱՇԽԱՇԻ ՀԱՄԸ

Պըլը Պուղին պահում է Մելիք Շահնազարի արտը, որի մեջ Մելիքը նաեւ խաշխաշ էր ցանել: Մի օր, երբ հովիվները հոտը մակաղել էին արտի մոտ, կաղնու տակ, Պըլը Պուղին մոտեցավ նրանց ու ասաց.

- Մելիքն արտի մեջ խաշխաշ է ցանել, չգնաք քաղեք, հա՛:

Հաջորդ օրը Պըլը Պուղին նկատեց, որ խաշխաշը քաղել են ու քթի տակ ժպտաց եւ հարցրեց հովիվներից.

- Ա խոխեք, Մելիքի արտի խաշխաշի համը հունցա՞:

### ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՏՈՒԳԱՆՔ Է ՏԱԼԻՍ

Պըլը Պուղին ու քյոխվա Փանոսը կռվում են, Պըլը Պուղին մի լավ ապտակում է Փանոսին, սա գնում, գանգատվում է Մելիք Շահնազարին:

- Ադա, Պուղի, դու քանի՞ գլխանի ես, որ ապտակում ես Փանոսին, դե շուտ գնա մի ռուբլի բեր տուր իրեն, որպես տուգանք:

Պըլը Պուղին գնում է գալիս, թե՝

- Մելիք, ես իմ տուգանքը բերի, հիմի թող Փանոսը ինձ երկու ռուբլի տա, իմ երեքանոցը վերցնի:

- Մանր չկա, - ասում է Փանոսը:

- Թող Մելիքը մանր անի:

- Ես էլ չունեմ, Պուղի:

Պուղին էլ չի սպասում, երկու անգամ էլ Մելիքի մոտ է ապտակում Փանոսին ու երեքանոցը տալիս նրան:

- Դե որ մանր չկա, չկա, - ասում է Պուղին:

## ԴԱՄՔԱՇԸ

Պըլը Պուղին գործով գնում է Թաղլար՝ տանուտեր Ավետիսի հետ բանակցություններ վարելու:

Ավետիսը ինչ ասում էր, նրա գզիրը հաստատում էր, կամա-ակամա խառնվում գործին:

- Միսպերացու, ի՞նչ փեշակ ունես, - հարցնում է Պըլը Պուղին:

- Դամքաշ եմ, զուռնանչի Յաբու հետ ձեր գյուղն եմ եկել:

- Միր ասում են, որ լավ դամքաշացու ես:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՔԱՂԱՂ

Պըլը Պուղու ընկերները ուզում են խոսքի տակ թողնել նրան, մի-մի ձու են վերցնում, գալիս Պուղու մոտ հավի պես կրթկրթում.

- Էդ ի՞նչ եք անում, - հարցնում է Պըլը Պուղին:

- Ձու ենք ածում, - ասում են ու կրթկրթոցի հետ հետեից հանում ձուն:

Պուղին գլխի է ընկնում, որ ընկերները ուզում են իրեն խոսքի տակ թողնել, բարձրանում-կանգնում է մի քարի վրա, սկսում աքաղաղի պես կանչել:

- Պուղի, բա դու ի՞նչ բանի ես, ա մեռած, ձուն հանիր, ձուն, մենք ձու ենք ածում, - ասում են ու ծիծաղում:

- Բա էդքան հավերին մի աքաղաղ չի՞ հարկավոր, ա շան տղերք, - պատասխանում է Պըլը Պուղին:



## «ՎԱԽԵՆՈՒՄ ԵՄ ՄԵԽԸ ԹՈՂԱԾ ԳԼԽԻՍ ԽՓԵՍ»

- Արա, Պուղի, մի էն գժերի պատմությունն արա լսենք, - մի օր սովորականի պես Պըլը Պուղուն խոսեցնում է Մելիք Շահնազարը:

- Մելիք Շահնազար, հիշու՞մ ես, որ մի անգամ կարգադրեցիր հավաքել բոլոր գժերին ու փակել մի տան մեջ: Այ, այդ ժամանակ հարկավոր էր խուզել նրանց գլուխները: Երբ մկրատը առա ու մոտեցա նրանց, երկու հոգի պայման կապեցին՝ մկրատը կոտրել:

- Ո՞նց:

Գժերից մեկը դարձավ մյուսին.

- Իմ գրպանում մի մեխ կա, բեր գլխիդ մազերի մեջ տնկեմ, հանցու մկրատը մազերդ խուզելիս դեմ առնի նրան՝ կոտրի:

- Արա, էդ մարդու բանը, ի՞նչ դառավ:

- Ի՞նչ պիտի դառնա, ընկերը մի մեծ քար վերցրեց, որ մեխը տնկի ընկերոջ մազերի մեջ, մյուս ընկերը փախավ, ասում էր՝ վախենում եմ մեխը թողած, գլխիս խփես քարով:

## ՄԵԼԻՔԻ ՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մելիք Շահնազարը ծեծում է Պըլը Պուղու եղբորը: Սա մի ամիս հիվանդ պառկում է, քիչ է մնում մահանա: Երբ լավանում է, Պըլը Պուղին գնում է գյուղամեջ ու դժգոհում:

- Մեր Թյունին էլի էն Թյունին ա, մենակ Մելիք Շահնազարի վատությունն ա մնացել էդ թակից:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՏՈՒՆ ՉԻ ԳՆՈՒՄ

Պըլը Պուղու փորը ցավում էր, պառկել էր գյուղամիջում ու ցավից ոլորվում էր: - Պուղի՛, վեր կաց գնանք մեր տուն, - բարեսրտությամբ ասում է ժամկոչ Ավետիսը, որի տունը գտնվում էր գյուղի ծայրին:

- Որ կարողանամ ձեր տուն գալ, էնա մերը կգնամ, էլի:

## ԻՐ ՀՈՐ ՏՂԱՆ

Պըլը Պուղու տղան գնում է Փարիզ սովորելու: Երբ վերադառնում է, հայրը հավաքում է գյուղի նշանավոր մարդկանց, քեֆ անում եւ խնդրում, որ որդին պատմի, թե ինչ է սովորել Փարիզում:

- Ապեր, վախենում եմ սովորածիս մասին պատմեմ, տխրես, - համառում է որդին:

- Էդ ի՞նչ պիտի պատմես, այ որդի, որ տխրեմ:

- Բա չես ասի, Փարիզի գիտնականները ասում են՝ մարդը կապիկից է ծնվել:

- Այ որդի, կապիկից կարող ա գերմանացին, ամերիկացին, անգլիացին ծնվի, բա չգիտե՞ս, որ ղարաբաղցին իր հոր տղան ա լինում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳՐԱԶԸ ՏԱՆՈՒՄ Է

Մելիք Շահնազարը եւ Պըլը Պուղին հաճախակի էին գրազ բռնում: Ճիշտ է, Մելիքը միշտ տարվում էր, բայց դե դրանից նրա ինչն էր պակասում, նրան հարկավոր էր կատակել, զվարճանալ:

Այս անգամ էլ նրանք հանելուկ բացելու վրա գրազ բռնեցին: Առաջինը առաջարկեց Մելիք Շահնազարը.

- Ա Պուղ.

Սարը ձյունած,

Դաշտը թխպած,

Դահնան քշած - էդ ի՞նչն ա:

- Մելիք Շահնազար, դա մարդու ծերությունն ա, հիմա մեկ-մեկ ասեմ.

Սարը ձյունած - մարդու գլուխը ճերմակած,

Դաշտը թխպած - աչքերը լավ չեն տեսնում,

Դահնան քշած - ատամները թափված:



- Կեցցե՛ս, Պուղի, դե հիմա հերթը քոննա, դու ասա:

- Ասեմ, էն ի՞նչն ա, կարմիր կովը քո մոր ռռաջին կոնդ-կոնդ ա անում:

Մելիքը շատ մտածեց ու մնաց շվարած:

- Արա, միտքդ բացատրիր:

- Բա գրա՞զը:

- Տալիս եմ:

- Կարմիր կովը՝ դա խնոցին ա:

- Ա մեռած, հանց էլ հնարել ը՞ս: Չէ՛, էս անգամ էլ տարար գրազը, ա Պուղ, կեցցես:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԵՐԱԶՈՒՄ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՀԵՏ ԳԱՆՁ Է ԳՏՆՈՒՄ

Մի առավոտ Պըլը Պուղին ծեծեց Մելիքի տան դուռը:

- Ի՞նչ կա, Պուղի, այսքան վաղ, խեր լինի՞,- դուռը բացելով հարցրեց Մելիքը:

- Խեր ա:

- Պատմիր:

- Բա չես ասի, այս գիշեր երազում ես ու դու թթաբաղում բահով էինք տալիս, մեկ էլ բահս դեմ առավ մի կարասի, բաց արի տեսա ոսկով լիքը:

- Հետո՞, Պուղի, հետո՞:

- Հետո կանչեցի քեզ, եկար կռացար, որ նայես կարասին, մարդիմազարի պես ոտքս կոխեցիր, արթնացա: Հիմա եկել եմ տեսնեմ վերջը ինչ եղավ:

- Արա, երազը դու ես տեսել, ինձանի՞ց ես հարցնում:

- Միր ես արթնացա, թողի քեզ կարասի մոտ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆ ՔԵՖԻ

Մելիք Շահնազարը Պըլը Պուղուն հրավիրում է քեֆի. Պըլը Պուղին տխրում է:

- Ինչու՞ ես տխրել, Պուղի, գնա քեֆ արա, դրանից լավ բա՞ն, - ասում են նրան:

- Ուղտին հարսանիք են կանչել, տխրելա, էլի ծեզ նման հարցրել են՝ ուղտ, ինչու՞ ես տխրում.

- Կտանեն հարսի պեծինքը կբարձեն վրաս, գլխովն էլ հարսին նստեցնեն, - պատասխանել է ուղտը:

- Հիմի, ինձ իր քեֆ անելու համար չի կանչում Մելիք Շահնազարը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պըլը Պուղուն հարցրին.

- Պուղի, հինգ անգամ հինգ, քանի՞ կանի:
- 30:
- Չէ:
- Դե, իը, 35:
- Չէ:
- Դե, իը, 40:
- Չէ:
- Պուղի, ասա 25, - կողքից հուշեցին ընկերները:
- Սկի ջատ եմ ասում, համածայն չեք, որ քիչ ասեմ, կհամածայնե՞ք, - պատասխանում է Պըլը Պուղին:



## ԴԵ ՀՈՐԱ, ՍՈՒՏ ԼԻՆԵՐ

Մելիքի քարավանը վերադառնում էր Բաղդադից: Ճանապարհին սատկում է Պըլը Պուղու ջորին: Երբ քարավանը մտնում է Վարանդա, Պըլը Պուղին առաջին պատահած մարդուց հարցնում է.

- Գյուղում ի՞նչ նորություն կա, չեն ասու՞մ ճանապարհին Պըլը Պուղու ջորին սատկեց:
- Չէ, այդ մասին նոր ենք լսում:
- Դե հորա, սուտ լինի, սուտ լինի:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՀԱՐՑԻՆ

Մի օր Մելիքի տղան դասը սերտելու ժամանակ Պըը Պուղուն հարցնում է.

- Պուղ, ի՞նչ է նշանակում ոռոգայթ:
- Վրթվրթալ, - պատասխանում է Պըլը Պուղին:

Հաջորդ օրը Մելիքի տղան գալիս է եւ ասում Պուղուն.

- Պուղ, բա ասում ես «ոռոգայթը» վրթվրթալ է նշանակում: Վարժապետը ասում է «ոռոգայթը» նշանակում է թակարդ:
- Ի՞նչ անհասկացող մարդ ա ծեր վարժապետը, դե, թակարդ ընկնողը կվրթվրթա, էլի՞...

## ԶՐՈՒՅՑ Է, ԷԼԻ, ԱՆՈՒՄ ԵՄ

Պըլը Պուղու հարեւան Ղազարը միշտ բամբասում էր նրանից: Մի անգամ Պըլը Պուղին հանդիպում է նրան եւ ասում:

- Արա, Ղազար, էդ որտեղ կանգնում ես, ինձանից ես խոսում, անհարմար չե՞ս զգում:
- Զրույց ա, էլի, անում եմ, Պուղի:
- Արա, մի անգամ էլ քո մասին զրույց արա, էլի՞, - նախատում է Պըլը Պուղին:

## ՄԵԼԻՔ, ՄԻ ՏԵՍ ՁԻՆ ԵՐԵՎՈՒՄ Է

Մելիքի ձին կորել էր: Մելիքն ու Պըլը Պուղին շատ որոնեցին մինչեւ հասան մի պղտոր առվի:

- Պուղի, մի բաժակ ջուր տուր:

Պուղին լցրեց բաժակը, տվեց Մելիքին: Մելիքը նայեց ու ասաց.

- Ի՞նչ կեղտոտ է, Պուղի, ինձանից բացի ամեն ինչ կարելի է գտնել այստեղ:

- Մելիք, լավ նայիր, բալքի ձին է՛լ գտնվի:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՏԱՆՈՒՄ Է ՄԵԼԻՔԻ ՄԱՀՎԱՆ ԼՈՒՐԸ

Մելիք Շահնազարի հայրը մեռավ իր այգում: Ոչ ոք սիրտ չէր անում այդ լուրը հայտնել նրա որդուն, որը անտեղյակ քեֆ էր անում տանը: Չար մարդ էր Մելիքի տղան, կտա՝ կսպանի: Մելիքի մոտ, խելոք

- Եկեք Պըլը Պուղուն ուղարկենք փոքր Մելիքի մոտ, խելոք մարդ ա, մի հնար կգտնի:

Մտածեցին մարդիկ եւ ուղարկեցին նրան:

Պըլը Պուղին գնաց գլուխ տվեց փոքր Մելիքին ու հարցրեց.

- Հայրդ էսօր չերեւաց, որտե՞ղ ա:

- Բաղումն ա, Պուղի, հիմա կգա:

- Որ գա լավա՛, - ասաց Պըլը Պուղին ու հեռացավ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԶԱՐՄԱՆՈՒՄ Է

Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին քեֆի համար մի կարաս գինի են բացում:

- Մելիք, կարասը լիքն է եղել, որ թաղել ենք, հիմա ինչո՞ւ ա կիսատ:

- Տակը ծակ ա երեւի:

- Այ մարդ, բա որ տակից ա ծակ, ինչո՞ւ ա գլխից պակասել գինին:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԹՈՒՂԹ Է ԽԱՂՈՒՄ

Մելիք Շահնազարը, Փանահ խանը, Պըլը Պուղին թուղթ են խաղում:

- Կրիտա, - ասում է Փանահ խանը եւ մի եփած հնդկահավ դնում սեղանին:

- Կրիտա, - ասում է Մելիք Շահնազարը եւ մի կուլա գինի դնում սեղանին: Պըլը Պուղին մի կտոր գարի հաց է դնում սեղանին:

- Իմը կտրում չի, ես հավաքում եմ, - ասում է եւ իր առաջը քաշում հնդկահավը ու գինին:

## ՄՈԼԼԱՅԻ ԳԻՐԸ

Մի քրդուհի լսելով Պըլը Պուղու անունը, վերցնում է իր համար սարքած մոլլայի գիրը ու գալիս նրա մոտ:

- Էս գիրը Բաղդադի մոլլան է սարքել: Խնդրում եմ կարդաս:

Պըլը Պուղին բացում է գիրը ու տեսնում, որ անիմաստ խզբզանքներ են:

- Էս գիրը մոլլանն ինչի՞ համար ա տվել:

- Մեր հարեւանի տղան ինձ պիտի ուզեր, միտքը փոխել, ուրիշին ա ուզում: Ես էլ գնացի մոլլայի մոտ, որ գիր անի: Գիրը արեց, բայց էլի տղան ուրիշին ա ուզում:

- Քանի՞ ռուբլի տվիր մոլլային:

- Յոթ ոսկի:

- Հա, հիմա կարդամ. «Ինձ յոթ ոսկի էր հարկավոր, առա, հարեւանի տղան որ քեզ չուզի, մոլլան ի՞նչ անի, այ քրդի գյոզալ..»:

ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԲԺԻՇԿ

Մի մարդ գալիս է Պըլը Պուղու մոտ եւ խնդրում.

- Պուղի, ասում են բժշկություն գիտես. հիվանդ եմ, գլուխս, փորս ցավում ա, մի ճար արա:

- Առավոտները ի՞նչ ես ուտում:

- Կանաչի:

- Կեսօրի՞ն:

- Կանաչի:

- Երեկոյա՞ն:

- Կանաչի:

- Հեր օրհնած, ես մարդու բժիշկ եմ, ոնց որ տեսնում եմ, դու խոտակեր ես:

ՄԵԼԻՔԸ ՉԻ ԼՍՈՒՄ ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մելիք Շահնազարը իր տանը շահմար օձեր էր պահում: Նրա կարծիքով օձերը պահպանում են իր հարստությունը չար աչքերից:

- Էս օձերը մի օր խաթա կբերեն գլուխդ, - խորհուրդ է տալիս Պըլը Պուղին:

- Պուղի, օձը տան դովլաթն ա:

Ամռան մի օր Մելիքը մտնում է իր պալատը, տեսնում օ-ձը փաթաթվել է փոքր տղային, իսկ տղան ուռել էր: Ուզում էր սպանել, օձը մտնում է տան պատի անցքը:

- Քանդեցեք տունը, -կարգադրում է Մելիքը:

- Ուշ ա, Մելիք, ինչու՞ չհասկացար, որ օձն առաջ իրեն տաքացնողին ա կծում, - խորհիմաստ ասում է Պըլը Պուղին:



ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՍՈՒՏԸ

Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին գրազ բռնեցին, թե ով նրանցից ավելի մեծ սուտ կասի:

Մելիքը սկսեց.

- Ա Պուղ, մի տարի կարտոֆիլ ցանեցի, աշունը որ եկավ ես ու հերս գնացինք քանդելու: Էդ կարտոֆիլներից մեկը այն-քան էր մեծ, որ յոթ հոգով, յոթ օր քանդեցինք, հազիվ կարողա-ցանք հասնել կեսին:

- Կպատահի: Երբ ես երեխա էի, հայրս ինձ աշակերտ տվեց մի պղնձագործի մոտ: Հիշում եմ, մի պղնձե կաթսա սար-քեցինք: 7 հոգի էինք աշխատում, բայց մեկը մյուսի մուրճի ձայ-նը չէր լսում, այնքան մեծ էր:

- Հավատս չի գալիս, Պուղի, այդքան մեծ կաթսա ու՞մ ա հարկավոր:

- Ա՜յ մարդ, բա քո կարտոֆիլը որտե՞ղ էիր եփելու, որ այդ կաթսան չսարքեինք:

ՄԵԿԻ ՀԱԼԸ ԽԱՐԱԲ Է ԼԻՆԵԼՈՒ

Պըլը Պուղին գնաց իր ամուսնացած երկու աղջիկներին տեսնելու: Նրանցից մեկի ամուսինը բրուտ էր, մյուսինը՝ հողա-գործ: Մի քանի օր հետո վերադարձավ ու տխուր-տխուր նայեց կնոջը:

- Ի՞նչ կա, ի՞նչ չկա, այ մարդ, - հարցրեց կինը:

- Է՜, ի՞նչ պիտի լինի, այս տարի մեր աղջիկներից մեկի հալը խարաբ ա լինելու:

- Ի՞նչ գիտես:

- Չիմանալու ի՞նչ կա: Արեւ լինի՝ հողագործն ա սոված մնալու, անձրեւ գա՝ բրուտագործը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ՝ ԴԱՏԱՎՈՐ

Ազնեք գյուղացի մի նախրապան հանդում իր նախրի հետ խառնում է Մելիքի նախրից մի կով ու բերում տուն:

- Էս լավ եղավ, մենք էլ կովատեր դարձանք, - ասում է աղքատ նախրապանի կինը:

Անցնում է մի տարի: Մելիքը գտնում է գողին ու դատի կանչում:

- Ա Պուղ, դատը հանձնում եմ քեզ, ես գործով գնում եմ Ամարաս, արդար կդատես, հա՛:

Մելիքի գնալուց հետո Պըլը Պուղին հավաքում է գյուղի ազդեցիկ մարդկանց ու նրանց առաջ հարցաքննում նախրապանին:

- Աղա, Բեղի, գողացած կովը մորթել ես կերե՞լ, թե պահում ես:

- Պահում եմ, ու դեռ մի հորթ էլ ունի, 3 ամսեկան:

- Օրենքը թույլ չի տալիս մորը զոռով բաժանել ծծկեր զավակից, իսկ հորթը չենք կարող կովի հետ ետ բերել, քանի որ մարդը մի կով է միայն գողացել:

- Բա հիմա ի՞նչ անենք, - հարցնում են հավաքվածները:

- Ի՞նչ պիտի անենք, կսպասենք հորթը կմեծանա, կովը կբերենք:

- Կեցցե՛ Պուղին, իմաստունի խելք ունի, - ուրախ կանչում են աղքատ նախրապանի կողմնակիցները:

Պըլը Պուղին, ինչ խոսք, գողության կողմնակից չէր, բայց աղգիտեր, որ Մելիքը մի կով կորցնելով ոչինչ էլ չի կորցնի, իսկ աղքատ Բեղու համար կթի կովը մեծ հարստություն է:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՆԱԽԱՏՈՒՄ Է ԿՆՈՋԸ

Պըլը Պուղու կինը հորթը թոկով կապում է ծառից, ինքը գալիս տուն: Քիչ հետո հորթը բաց է ընկնում, մտնում բանջարանոցը: Պըլը Պուղին հորթը բռնում է նորից կապում, սակայն հորթը նորից է բաց ընկնում: Նորից է կապում՝ նորից է բաց ընկնում: Պըլը Պուղին գալիս, բարկանում է կնոջ վրա.

- Այ կնիկ, էս ո՞նց ես կապել հորթը, որ բաց է ընկնում, ախր երեք ու չորս անգամ լիա ես եմ կապել:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՅԻՍՈՒՆ ՏՈԿՈՍԸ

Մելիք Շահնազարը քեֆ պիտի աներ Ամարասում, կանչեց Պըլը Պուղուն եւ ասաց.

- Պուղի, տնտեսվարը դու ես, հիմա ասա տեսնեմ ի՞նչ պիտի տեղափոխենք Ամարաս:

- Ինչ ասեմ, Մելիք, մի 200 աման-չաման, մի 5 ղազան-մազան, մի 10 կարաս գինի-մինի, մի 20 թոնիր հաց-մաց:

- Ա Պուղ, բա այդքանը ո՞նց կտեղափոխենք:

- Լա՛վ, որ շատ է, ասածներիս 50 տոկոսը կտեղափոխենք:

- Ո՞նց:

-Ամանը տար, չամանը թող մնա, ղազանը տար, մազանը՝ մնա, հացը տար, մացը՝ մնա, գինին տար, մինին՝ մնա:

- Լավ ես ասում, ա Պուղ, դու ինձանից խելոք ես մտածում, - համաձայնում է Մելիք Շահնազարը:

## ԸՍՏ ՀԱՍԱԿԻ ԵՎ ԸՍՏ ԽԵԼՔԻ

Մելիքն ու Պըլը Պուղին գինի են խմում: Մելիքը երկու բաժակ է դնում սեղանին, մեկը՝ մեծ, մյուսը՝ փոքր:

- Ա Պուղ, ըստ հասակի ենք խմում, մեծը՝ ինձ, փոքրը՝ քեզ:

- Ինչ եմ ասում,- համաձայնում է Պըլը Պուղին: Մելիքը վերցնում է մեծ բաժակը: Որ մի քանի բաժակ խմում են, Պըլը Պուղին բաժակը փոխում է:

- Մելիք, հերիք ա, ինչքան ըստ հասակի խմեցինք, հիմա էլ ըստ խելքի ենք խմում, մեծը՝ ինձ, փոքրը՝ քեզ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԻՐԵՆ ՏԵՍՆՈՒՄ Է ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ

Մելիք Շահնազարը Չինաստանից մի հայելի է բերել տալիս, մի հրաշք բան:

Մարդիկ նայում են ու զարմանում:

Պըլը Պուղին կանգնում է հայելու առաջ ամբողջ հասակով ու թամաշա անում իրեն:

- Պուղի, քո պատկերն ա, - բացատրում է Մելիք Շահնազարը:

- Ա բալամ, թե նա ես եմ, բա ես ո՞վ եմ, խելքս բան չի կտրում ինձանից, բալքի հնարքով եմ ընկել: Ախր մինչեւ հիմա ես մի հոգի եմ եղել, էս ո՞նց դարձա երկուսը:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ ԾԱՂԱՏԱՆՈՒՄ Է

- Ա տղա, Պուղի, Մելիքդ շատ շուտ ա քաչալացել, դրա դարդը ի՞նչ ա, - մի օր հարցնում են Պըլը Պուղու ընկերները:

- Ասելու բան ա՞, որ ասեմ: Մելիքը երկու կին ունի, մեկը՝ ջահել, մյուսը՝ պառավ: Ջահել կինը ամեն օր Մելիքի գլխի սպիտակ մազերն ա պոկում, պառավը՝ թուխ, դրանից էլ քաչալանում ա:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՀԱՇՏԵՑՆՈՒՄ Է ՊԵՏՈՒՆ ԵՎ ՆՐԱ ԿՆՈՋԸ

Տրնավազ գյուղացի Պետին աղջիկ է ուզում, անցնում է երեք ամիս, կինը երեխա է ունենում:

- Ինձ անառակ կին պետք չէ, - ասում է Պետին եւ ծեծում կնոջը, դուրս անում տնից:

Աղջկա ծնողները գանգատվում են Մելիքին: Մելիքը օրինավոր է համարում Պետու արարքը:

- Բա ո՞նց, մարդուն խաբել եք, անառակ աղջիկը տվել նրան:

- Կաց, Մելիք, դու տղայի եւ աղջկա հետ խոսե՞լ ես, - հարցնում է Պըլը Պուղին:

- Ոչ:

- Կանչիր, թող գան:

Երբ գալիս են, Պըլը Պուղին հարցնում է Պետուց.

- Քանի՞ ամիս է, որ պսակվել ես:

- Երեք:

- Ապրես:

- Աղջի Հեղինե, դու քանի՞ ամիս է, որ պսակվել ես:

- Երեք, - պատասխանում է հարսը:

- Ապրես:

- Քավոր Ասլան, քանի՞ ամիս է, որ պսակվել են ջահելները:

- Երեք:

- Ողորմի ձեր հորը: Ձեր երեքի երեք ամիսները միասին քանի՞ ամիս կանի:

- Ինը, - պատասխանում են նրանք:

- Ապրեք, բա էլ ինչու՞ եք կռվում, ինը ամսից հետո ծնված երեխան օրինավոր չէ՞:

- Օրինավոր ա, - պատասխանում է Մելիքը՝ գովում է Պըլը Պուղու խելքը:

## ԱՐԱՔՍԸ ԿԱՆԳՆԵՑՐՈՒ

Մելիք Շահնազարը շատ էր ուզում Պըլը Պուղուն խոսքի տակ թողնել, մի օր էլ ասաց.

- Ով իմաստուն Պուղի, ասա ինձ, քանի՞ կուժ ջուր կա Արաքսում:

- Գնա Արաքսը կանգնեցրու, ասեմ, Մելիք Շահնազար, չափեմ ջուրը, ասեմ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՈՐՈՎԱԾ Է ՈՒՏՈՒՄ

Մելիքն ու Պըլը Պուղին խորոված էին ուտում: Մելիքն իր. կերած խորովածի ոսկորը դիզեց Պըլը Պուղու առաջ: Երբ վերջացրին, դարձավ Պըլը Պուղուն:

- Ա մեռած, այդ ինչքա՜ն խորոված ես կերել:

Պըլը Պուղին կեղծ զարմանքով նայում է Մելիքին եւ ասում.

- Այ մարդ, իսկ դու խորովածը ոսկորովը ո՞նց կերար:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿՏՐՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԱԿԱՆՋԸ

Պըլը Պուղին արագ թրաշում էր Մելիքի գլուխը, երեսը:

- Ա Պուղ, երեսիս ու գլխիս արանքում մի խուլ կա, էնպես արա, չկտրես, - խնդրում է Մելիքը: Պըլը Պուղին կտրում է Մելիքի ականջը ու դնում նրա առաջ.

- Հո սա չէ՞ քո ասած խուլը:



## ՈՉ ՓՈՂ ԵՄ ՏՎԵԼ, ՈՉ ՔԱՇԵՄ

Մելիք Շահնազարը, տանուտեր Բադին եւ Պըլը Պուղին գնում են գյուղերը շրջելու: Ցուրտ ձմեռ է լինում, որոշում են յափնջի գնել, որ գիշերը գցեն իրենց վրա:

- Ես փող չունեմ, - մի կողմ է կանգնում Պըլը Պուղին: Մելիքն ու տանուտերը մի յափնջի են առնում:

- Բա դու Պուղի, դու ո՞նց պիտի անես գիշերը:

- Երկուսիդ արանքում ես մի կերպ յոլա կգնամ, - ասում է Պուղին:

Երեկոյան, երբ պառկում են քնելու, Պըլը Պուղին մտնում է երկուսի արանքը: Ցուրտը, որ նեղում է, Մելիքը իր համար է քաշում յափնջին: Բադին՝ իր:

- Պուղի, բա դու ինչու՞ չես քաշում յափնջին:

- Ես ոչ փող եմ տվել, ոչ քաշեմ, - հաշտարար եղանակով ասում է Պըլը Պուղին:

Նրա տեղը բոլորից տաք էր:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽԱՂ Է ԱՍՈՒՄ

Ղարաբաղի մելիքները քեֆ էին անում միասին:

-Պուղի, մի խաղ ասա, - ամեն տեղից խնդրում են նրան:

-Աչքիս վրա, թող խորովածը բերեն, սկսեմ:

Երբ խորովածը բերին, Պըլը Պուղին բոլոր ամանները քաշեց իր առաջ ու սկսեց:

- Աման, աման, ջան աման, հինգ մելիքին մի աման, մենակ Պուղուն հինգուվեց աման...

### ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԷՇԸ

Պըլը Պուղին մի էշ ուներ, նստում էր ու ման գալիս:

- Ա Պուղ, որ էշդ սատկի, ինչո՞վ ես ման գալու:

- Սատկած էշի գնով մի ձի կառնեմ, - պատասխանում է Պըլը Պուղին:

- Ա մեռած, էշի գինը սաղ վախտը ի՞նչ ա լինում, որ սատկած ժամանակ ի՞նչ լինի:

- Էդ ես գիտեմ:

Անցնում է ժամանակ, Պըլը Պուղու էշը սատկում է: Սա էշը թաղում ա Շոշ գյուղի մոտ ու վրան մի խաչքար դնում: Եկող-գնացող մոմ են վառում խաչի տակ, փող դնում ու հեռանում: Պուղին հավաքում է խաչի մոտ դրված փողերը ու մի ձի առնում: Ամարասի կաթողիկոսը լսում է ու բարկանում Պըլը Պուղու վրա:

- Բանտարկեցեք նրան սուրբ խաչը պղծելու համար, - կարգադրում է նա:

- Սուրբ հայր, Քրիստոսը էշի վրա նստած է մտել Երուսաղեմ, թե որ Քրիստոսը սուրբ է, ուրեմն էշն էլ է սուրբ, - արդարանում է Պըլը Պուղին:

### ՍԿԻ ԴՈՒ ԷԼ ՀԱՆԴԻՊԱԾ ՉՊԻՏԻՐ

Առավոտ ծեգին Պըլը Պուղին հանդ էր գնում, երբ նրան հանդիպեց տեր Կարապետը.

-Բարի լույս, Պուղի:

-Օրհնյալ տեր:

-Ա Պուղ, բա որ Մելիքը հանդիպեր, ինչպե՞ս կպատասխանեիր նրա բարի լույսին:

-Սկի դու էլ հանդիպած չպիտիր,- պատասխանում է Պըլը Պուղին ու շարունակում ճանապարհը:



### ՄԵԼԻՔԸ ՊԱՏԺՈՒՄ Է ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՆ

Պըլը Պուղին մի օր Մելիք Շահնազարին ասում է, թե իբր ամենամեծ պատիժը այն է, որ մարդ մենակ քթոցի մի մեղրահաց ուտի: Անցնում է ժամանակ, Մելիքը Պըլը Պուղու կատարած մի չարության համար հրամայում է պատժել նրան մի մեղրահաց ուտեցնելով:

Երկու ուժեղ տղամարդ պառկեցնում են Պըլը Պուղուն ու մեղր ուտեցնում:

- Վա՜յ, մխթըրեցե, - ամեն պատառ կուլ տալով գոռում է նա:

- Արա, էդ շաշը ինչ ա ասում, - հարցնում է Մելիքը:

- Ասում է՝ մխթըրեցե:

- Արա, բաց թողեք, թող կորչի գնա, հալբաթ իշտահը մեղրի տվել ա, որ չարություն ա արել:

Պըլը Պուղուն ազատում են, հետո նա այդ դեպքի մասին պատմում էր ու ծիծաղում Մելիքի խելքի վրա:

### ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՔՈՐՈՒՄ Է ԿՆՈՋ ԳԼՈՒԽԸ

Պըլը Պուղին մի գիշեր հարբած է տուն գնում: Մի քիչ քնելուց հետո գլուխը քոր է գալիս, ձեռքը մեկնում է, սկսում կնոջ գլուխը քորել:

- Այ մարդ, ի՞նչ գործի ես:

- Գլուխս քորում եմ:

- Էդ իմ գլուխն ա:

- Վա՜հ, այ կնիկ, բա սա որ քո գլուխն ա, իմը հո՞րա, - զարմանքով հարցնում է նա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՋՐԱՂԱՑ Է ԳՆՈՒՄ

Պըլը Պուղին իր աշակերտի հետ գնում է ջրաղաց: Շատ սոված են լինում, իսկ ջրաղացպանը այդ պահին կրակի վրա բաղարջ էր թխում:

- Սոված ենք, - ասաց Պըլը Պուղին՝ հասկացնելով, որ ջրաղացպանը բաղարջը մենակ չուտի:

- Ոչինչ, Պուղի, էսա դանդ կաղեմ, կտանես տուն, կինդ հաց կթխի, կուտես:

- Էդ ուշ կլինի, - ասաց Պըլը Պուղին ու սկսեց վիճել ջրաղացպանի հետ:

Այդ պահին Պըլը Պուղու աշակերտը կրակից վերցրեց տաք բաղարջը եւ ցանկացավ դնել խուրջինի մեջ, բայց հակը նեղ էր, չտեղավորեց:

-Պուղի, էդ տաք-տաք խոսքերդ սաղ-սաղ տեղավորում չի խուրջնի մեջ, ի՞նչ անեմ, - հարցրեց աշակերտը:

Պըլը Պուղին հասկացավ նրան ու ասաց.

Վրա, միջից երկու կես արա, համ էլ էշը քշիր Յունոտի ջրաղացը, ես սրա մոտ դան չեմ աղի...

## ՄԻ ՏԵՂ ԷԼ ԿԱ, ՆԱՅԵՄ, ԳԱՄ

Պըլը Պուղու կովը կորչում ա: Մարդ ու կին գնում են որոնելու: Երեկոյան դեմ կինը կանչում է Պըլը Պուղուն ու հասկացնում, որ կովը գտել է:

- Հա, դե լավ ա, որ գտել ես, մի նիգարանատեղ էլ կա, նայեմ, գամ, - ասում է Պըլը Պուղին:



## ԻՐԱՐ ԴՈՒՐՍ

Պըլը Պուղին Մելիք Շահնազարից 10 ռուբլի է խնդրում:

- Պուղի 10 ռուբլի չկա, 5-ը՝ կտամ:

- Ոչինչ, Մելիք Շահնազար, վնաս չունի, 5-ը հիմա տուր, 5-ն էլ հետո կտաս:

Մելիքը տալիս է 5 ռուբլին:

Անցնում է ժամանակ, մի օր էլ Մելիք Շահնազարը ետ է ուզում 5 ռուբլին: Պըլը Պուղին խիստ զարմանում է:

- Այ մարդ, դու դեռ 5 ռուբլի էլ պարտք մնացիր ինձ, բա չե՞ս հիշում:

- Հիշում եմ, ասացի, որ կտամ:

- Բա ինչո՞ւ չես տալիս, ամոթ չի՞նի հարցնելը, Մելիք մարդ ես, խոսքիդ ինչու՞ հաստատ չես մնում:

- Չես խնդրել, չեմ տվել:

- Դե լավ, լավ, վնաս չկա, հարկավոր չէ, 5 ռուբլի ես եմ քեզ պարտք, 5-ը՝ դու ինձ, ճիշտ ա՞:

- Ճիշտ ա, Պուղի:

- Դե որ ճիշտ ա, իրար դուրս:

## ՄԵՂԱՎՈՐԸ ԱՅԳՈՒ ԴՈՒՌՆ Է

Լուրը հասավ Մելիք Շահնազարին, թե կարկուտը փչացրել է Ամարասի խաղողի այգին: Մելիքն ու Պըլը Պուղին շտապեցին Ամարաս: Երբ տեղ հասան, Մելիքը վշտից սկսեց հառաչել: Այդ տխուր պահին Պուղին բաց տեսնելով այգու դուռը, սկսեց կատակել:

- Ես էլ ասում եմ, կարկուտը որտեղո՞վ ա մտել այգին, այ տես, դուռը բաց ա:

## ԲԱԽՏ ՉԵՄ ՈՒՆԵՑԵԼ

Պըլը Պուղին գնում է Զանգեզուր: Այստեղ մեծ բազմություն է հավաքվում, դիմավորում նրան:

- Պըլը Պուղին եկել է, - ասում են իրար ու սեղմում նրա ձեռքը:

- Ո՞վ ա Պըլը Պուղին, - հարցնում է մի անծանոթ մարդ:

- Պըլը Պուղին Մելիք Շահնազարի ծառան ա:

- Շնորհքով մարդ ա երեւում, տեսնես Մելիքն ինչպիսի՞ մարդ ա:

- Ուրեմն չե՞ս տեսել Մելիք Շահնազարին, - հարցնում է ընկերը:

- Բախտ չեմ ունեցել:

- Իսկ որտեղի՞ց գիտես, որ Մելիք Շահնազարին տեսնելը բախտավորություն ա, - դառնությամբ հարցնում է Պըլը Պուղին ու անծանոթ մարդուն մոտ կանչելով, նրա ականջին շշնջում.

- Ախպերացու, երանի քեզ, որ չես տեսել Մելիք Շահնազարին, դրա համար բոլորից երջանիկ մարդը դու ես:

## ԴԵ ԹՈՂ ԿՏՐԻ

Անտառում փայտ էր կտրում Պըլը Պուղին, իսկ Մելիքը մի կոճղի նստած ծխում էր ու զրույց անում: Մեկ էլ նա դարձավ Պըլը Պուղուն ու ասաց.

- Ա Պուղ, կացինը ինչ լավ ա կտրում:

Պուղին, որ հոգնած էր ու անտրամադիր, կացինը նետում է մի կողմ ու ասում.

- Դե թող կտրի:



## ՄԻ ԲԱԺԱԿՈՎ ՄԵԿ-ՄԵԿ ԲՈԼՈՐԻ ԿԵՆԱՑԸ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը Ամարասից տուն գալու ժամանակ մի գիշեր մնացին Սարուշեն գյուղում: Այդ օրը գյուղում հարսանիք կար. Մելիք Շահնազարին խնդրեցին թամադա լինել:

Մելիքը սկսեց մեկ-մեկ բոլոր հարսանքավորների կենացը խմել: Տանտերը Պըլը Պուղուն հասկացրեց, որ այդքան գինի չկա հաջորդ կենացների համար, ուստի հարկավոր է կենացները կրճատել: Հարսանիքում դեռ շատ պատվավոր մարդիկ կային, ինչպե՞ս կարելի է չխմել նրանց կենացը: Ստեղծված վիճակից դուրս գալու համար Պըլը Պուղին վերցրեց գինով լի վերջին բաժակը եւ ասաց.

- Ա ժողովուրդ, մեր Մելիքը շատ անուշ կենացներ խմեց, բայց տղամարդը նա յա, ով մի բաժակով կարողանա մեկ-մեկ բոլորի կենացը խմել:

Բոլորը զարմացած, ուշադրությամբ հետեւում էին, թե այդ ինչպես է կատարելու Պըլը Պուղին:

- Վերցրեք բաժակները, դե հիմա թող ամեն մարդ խմի իր աջ կողքին նստած մարդու կենացը:

Բոլորը խմեցին ու նոր հասկացան, որ կլոր շրջանով նստած մարդկանցից ոչ ոք դուրս չմնաց այդ կենացից:

## ՈՐՏԵՂՈՎ ՈՒԶՈՒՄ ԵՍ ԳՆԱ, ՄԻԱՅՆ ԹԵ ԴԱԳԱՂԻ ՄԵՋ ՉԼԻՆԵՍ

Երբ մահացավ Մելիք Շահնազարի հայրը, Մելիքը Պըլը Պուղուն կանչեց իր մոտ եւ խորհուրդ հարցրեց.

- Ա Պուղ, ի՞նչ ես կարծում, գերեզմանատուն գնալու ժամանակ իմ հոր դագաղի հետեւից գնամ, թե առջեւի՞ց, ո՞րն ա հարմար:

- Որտեղով ուզում ես գնա, միայն թե դագաղի մեջ չլինես, - պատասխանեց նրա իմաստուն ծառան:

### ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՄՈՏ

Պըլը Պուղին հիվանդացավ. նրան ուղարկեցին Բաղդադ, մի հայտնի հեքիմի մոտ բուժվելու: Բժիշկը զննեց նրան ու ասաց.

-Ձեզ շատ են վշտացրել, ձեր ցավը պիտի ծիծաղով բուժել, գնա Ղարաբաղ, այնտեղ մի կատակաբան կա, անունը Պուղի, նրա մոտ մի ամիս կմնաս, կուրախանաս, ցավերդ կմոռանաս, - հիվանդին զննելուց հետո խորհուրդ տվեց մեծ բժիշկը:

Երբ Պըլը Պուղին վերադարձավ Բաղդադից, ծանոթ-բարեկամ եկան նրա մոտ ու հարցրին, թե ի՞նչ խորհուրդ է տվել հեքիմը:

Պըլը Պուղուն ուղարկելա Պըլը Պուղու մոտ - տխուր պատասխանեց նա:

### ԲԱ ԵՍ ԻՆՉՈՒ՞ ԵՄ ՄՆԱՑԵԼ ԿՏՐԻՆ

Մելիք Շահնազարի տան կտուրը կաթում էր, դրա համար էլ Պըլը Պուղին անձրևի ժամանակ թակը ձեռքին պնդացնում էր կտրի հողը: Այդպես անձրևային մի գիշեր նա մնաց կտրին ու լուսադեմին, երբ Մելիքը բակ դուրս եկավ, Պըլը Պուղին հարցրեց.

- Մելիք, տունը ինչու՞ համար են կառուցում:
- Որ մարդ ապրի նրա մեջ:
- Բա ես ինչու՞ եմ ամբողջ գիշեր մնացել կտրին:



### ԳՐԵԼ ՉԳԻՏԵ, ԲԱՅՑ ԿՑՆՑԻ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը գնում են Գանձասար, կաթողիկոսը Պըլը Պուղուց թաքուն հարցնում է:

- Որդի, ձեր Մելիքը գրել-ջնջել գիտե՞:

- Սուրբ հայր, գրելը չգիտե, բայց վանքում ինչքան գրքեր կան, թե տաս իրեն, բոլորը կջնջի: Ջնջելու մեջ մեծ եռանդ ունի մեր Մելիքը:

### ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՅՆՁՎՈՐ

Պըլը Պուղին հունձ էր անում Մելիք Շահնազարի համար: Երկու խուրձ հնձեց, իջավ թթենու այգին, թութ կերավ, սառը ջուր խմեց ու քնեց ծառի հով շվաքում: Ուշ երեկո էր, երբ արթնացավ ու տուն եկավ:

- Քանի՞ խուրձ ես հնձել, - հարցրեց Մելիքը:

- Որ քսանութն էլ հնձեի, երեսունը կդառնար:

- Ապրես Պուղի, - գոհ մնաց Մելիքը և ծառաներին կարգադրեց լավ կերակրել նրան: Յաջորդ օրը նույնը կրկնեց Պըլը Պուղին և երբ երեկոյան Մելիքը հարցրեց, թե քանի խուրձ է հնձել, պատասխանեց.

- Եթե 30-ն էլ հնձեի, 40-ը կդառնար:

- Ապրես, Պուղի, - ասաց Մելիքն ու կարգադրեց մյուս օրը քաղած մածուն տանել նրա համար: Այսպես կրկնվեց մի քանի օր, մինչև Մելիք Շահնազարը մի օր գնաց արտը: Շատ զարմացավ, երբ տեսավ, որ ընդամենը մի քանի խուրձ է հնձված:

- Արա, Պուղի, բա ո՞ւր են փանջանքները, բա ասում էիր օրեկան 30-40 խուրձ ես հնձում:

- Այ մարդ, առաջին օրը դու հարցրիր՝ թե քանի խուրձ ես հնձել, ես էլ ասացի՝ եթե 30-ը հնձեի, 40-ը կդառնար, ուրիշ ի՞նչ եմ ասել:

- Ա մեռած, ուրեմն ինձ խաբե՞լ ես:

- Չեմ խաբել: Ես ասել եմ այն, ինչպես ինձ ձեռնտու ա, դու էլ հասկացել ես այնպես, ինչպես քեզ համար է ձեռնտու:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՏՈՒՆԸ ԹԱՐՍ Է ԿԱՌՈՒՑՈՒՄ

Պըլը Պուղին տուն էր կառուցում իր համար. Նա տան հիմքին մանր քարեր դրեց, մեծ քարերը պահեց շենքի վերնամասի համար:

- Ա Պուղ, տունը թարս ես կառուցում, ինչու՞ մեծ քարերը չես դնում շենքի հիմքում, - նկատեց Պըլը Պուղու հարեւանը:

- Տղաս պսակում եմ, հարսը որ եկավ, ամեն ինչ թարս ա դնելու: Հիմա տունը թարս եմ կառուցում, որ էն ժամանակ քանդի, թարս դնի, սովորականի պես դառնա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԱՐԺԵՔԸ

Մելիք Շահնազարը նստած թղթեր էր կնիքում: Նա շուտ-շուտ պղնձե կնիքը մրոտում էր ու կոխում թղթերի վրա:

- Մելիք, ինչի՞ համար ա այդ կնիքը, - միամիտ-միամիտ հարցնում է Պըլը Պուղին:

- Կնիքը բարձրացնում է թղթերի արժեքը:

- Ղո՞րթ, - ասում է Պուղին ու մրոտված կնիքը վերցնելով կոխում է Մելիքի ճակատին:

- Արա, էդի գժությունդ բռնե՞ց - բարկությամբ ասում է Մելիքը:

- Այ մարդ, հո մի վատ բան չարի, արժեքդ բարձրացրի, էլի:



## ԱՍՏՎԱԾ ՉԻ ՏՈԿՈՒՄ ԷՇԸ ԿՈՎԻՑ

Պըլը Պուղին մի կաղ էշ ուներ, բեռնում էր, թե չէ, նստում էր բեռան տակ: Դե արի ու բարձրացրու: Մի տարի խիստ ձմեռ էր, խոտը չէր հերիքում կովին, մինչդեռ էշն էլ էր խժռում նույն խոտից:

- Աստված, որ էշը սատկի, ի՞նչ կլինի, - տխուր բացականչում է Պըլը Պուղին:

Հաջորդ օրը Պուղին մտնում է գոմը եւ ինչ է տեսնում, էշը խոտ էր ուտում, իսկ կովը սատկել էր: Դուրս է գալիս, բարձրանում գոմի կտուրը, ձեռքերը պարզում դեպի երկինք.

- Աստված, բա դու ի՞նչ աստված ես, որ մինչեւ հիմա մեր բոզ էշն ու կարմիր կովը իրարից չես տարբերում, ախր ես խնդրեցի էշին տանես, ինչու՞ կովը տարար:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԲԱԽՏԸ

Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին գնում են շուկա: Մելիքը մի մեծ ձմերուկ է առնում, տալիս Պըլը Պուղուն:

- Տեսնենք բախտդ ոնց ա, Պուղի:

Պըլը Պուղին ձմերուկը դնում է խուրջինի հակում: Տուն գալու ժամանակ նստում են ծառի հովում: Պըլը Պուղին ձմերուկը հանում է, կտրում, տեսնում խակ է:

- Այ մարդ, իմ բախտը ամեն տեղ սեւ էր, էս ո՞նց ա, որ այստեղ սպիտակ ա դարձել,-զարմանում է նա:

### ԹԵ ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԴՈՒ ԵՍ, ԵՍ ԷԼ ԻՆՉՈՒ՞ ԵՄ ԲԱԿ ԴՈՒՐՍ ԵԿԵԼ

- Ա Պուղ, հե՜, ա Պուղ, - գյուղամիջից մեկը կանչում է Պըլը Պուղուն:

Մինչեւ Պըլը Պուղին դուրս կգար բակ, կպատասխաներ, շունը սկսեց հաչել:

- Հե՜յ, - բակ դուրս գալով պատասխանեց Պըլը Պուղին, բայց շունը սկսեց ավելի բարձր հաչել, այնպես, որ հնարավոր չեղավ բան հասկանալ:

- Դե որ Պըլը Պուղին դու ես, ես էլ ինչու՞ եմ բակ դուրս եկել, - բարկացավ շան վրա ու ներս գնաց:

### ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳՏԱՎ ՀՆԱՐԸ

Մելիք Շահնազարը հենց որ բարկանում էր Պըլը Պուղու վրա, կարգադրում էր, որ նա էլ ոտք չդնի իր հողի վրա:

Պըլը Պուղին մի օր իր տան բակից մի կողով հող բերեց, թափեց Մելիքի տան բակում:

Այնուհետեւ, երբ Մելիքը կրկնում էր իր խոսքը, Պըլը Պուղին վազում, կանգնում էր իր թափած հողի վրա: Մելիք Շահնազարը այդ տեսնելով, լռում էր:



### ՀԱՑԸ ԹԽԵԼ ԵՆ, ՑԱԽԸ ԷԼ ՊԵՏՔ ՉԷ

Մելիք Շահնազարը ծառաներից մեկին ուղարկեց թոնրի համար ցախ բերելու անտառից: Տեսան ուշանում է, ուրիշ տեղից ցախ բերին, վառեցին թոնիրը, հացը թխեցին: Այդ պահին Պըլը Պուղին նկատեց, որ ծառան անտառից ցախ բարձած էշի վրա գալիս է: Բարձրացավ թոնրատան կտուրը եւ կանչեց նրան.

- Արա, Ղազար, հեյ, հացը թխել ենք, ցախը էլ պետք չէ, թողիր եկ:

### ԺԼԱՏԸ

- Ա Պուղ, մի բան պատմիր լսենք, - ծմռան մի օր, երբ թոնրատանը նստած տաքանում էին, խնդրեց ժլատ Անտոնը:

- Պատմեմ, հա, խոսքս քո հոր մասին ա, նեղանաս ոչ, Անտոն: Հերդ՝ չարչի Նազարը, շատ ժլատ մարդ էր: Մի օր կանչեց մորդ՝ Նախշունին, թե գնա հարեւան Խաչու կացինը բեր, փայտ կա կտրելու: Մերդ գնաց եկավ, թե՝

- Խաչին գնացել ա անտառ, փայտ կտրելու:

- Լավ, հիմա էլ գնա Հանեսի կացինը բեր:

Գնաց եկավ, թե՝ Հանեսը էնա գերան ա տաշում:

- Բան չկա, հիմա էլ գնա Տոնի ապոր կացինը բեր:

Գնաց եկավ, թե՝ Տոնի ապերը կացինը չի տալիս, ասում ա էսա գնում եմ ծմակը:

- Ես դրանց ժլատ հերը անիծեմ, որ այդպես է, գնա մերը բեր, - ասաց հերդ... Ողորմի նրան, մեռա՜վ, գնաց, էդ ժլատից էլ էս գրույցը մնաց:

## ՈՐ ՓՈՂ ԼԻՆԻ, ԽԱՐՋԸ ՏԱԼԸ ՅԻՆՉԱ

Մելիք Շահնազարը կանչում է Պըլը Պուղուն եւ կարգադրում.

- Գնա էս րոպեին բեր տուր մելիքական խարջդ:

Պըլը Պուղին գնում է տուն ու չի գալիս:

- Արա, մի էն գյադին կանչեք ինձ մոտ:

Պըլը Պուղին գալիս ու մեղավորի պես կանգնում է նրա առաջ:

- Խարջը բերի՞ր:

- Չէ, Մելիք, որ փող լինի, խարջը տալը ինչա՞:

## ՄԵԿՆ ԷՍՕՐ ԳՆԱ, ՄՅՈՒՍԸ՝ ՎԱՂԸ

Պըլը Պուղու հարեւանը պսակում է տղային: Տունը մի ջահել, սիրուն հարս է գալիս: Բայց ինչպես Պըլը Պուղին է պատմում, շատ անբան է լինում:

Մի օր սկեսուրն ու կեսրայրը ցանկանում են հարսին հասկացնել, որ գնա ջուր բերի: Սկեսուրը կուժը շալակում է, թե գնա ջրի, կեսրայրը ասում է.

- Կաց, ես եմ գնում:

Դռան շեմին կանգնում են, վիճում: Հարսը մոտենում է, միջամտում.

- Ի՞նչ եք կռիվ անում, չոփ գցեցեք, թող մեկն էսօր գնա ջրի, մյուսը՝ վաղը:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԵՎ ԻՐ ՏՂԱՆ

Պուղու տղան դպրոցում վատ ստացավ ու եկավ գանգատվեց հորը: Պուղին գնաց վարժապետի մոտ:

- Ասում եմ՝ Յաքի, որ Մելիք Շահնազարի 1500 ոչխարը զույգ-զույգ ծնեն, քանի՞ գառ եւ քանի՞ ոչխար կունենա Մելիքը, չի պատասխանում, - բացատրում է վարժապետը:

- Արա, վարժապետ ջան որդի, ես իմ տղային ուղարկել եմ քեզ մոտ ուսում սովորի, թե Մելիքի ոչխարների հաշիվը պահի, - կեղծ բարկանում է Պըլը Պուղին:

## ՈՏՔԴ ԲԱՐԻ, ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐ

Պըլը Պուղին նոր գոմ էր շինում, երբ Մելիք Շահնազարը անցավ նրա մոտով, կանգնեցրեց նրան:

- Մի դեսը եկ, տես ինչ եմ սարքել, Է՜, Մելիք Շահնազար:

- Ապրես Պուղի, լավ ես կառուցել, - ասում է Մելիքը, դրսից դիտում գոմը:

- Ներս մտիր, Մելիք Շահնազար, արխային ներս մտիր, դեռ ոչ մի անասուն չի մտել, առաջինը դու ես ոտք դնում, արխային ներս մտիր, ոտքդ բարի, - հորդորում է նա:

## ԻՆՁ ՀԱՄԱՐ ԽԵՐ Է, ՏԻՐՈՋ ՏՈՒՆԸ ՔԱՆԴՎԵԼ Է

Պըլը Պուղին Ամարասում թութ էր թափում, երբ լուր բերին, թե Մելիք Շահնազարի հայրը մահացել է: Պուղին գործը թողեց կիսատ, ձի նստեց եւ բռնեց Ավետարանոցի ճամփան: Ճանապարհին ծանոթները կանգնեցնում էին Պըլը Պուղուն եւ հարցնում, թե ինչու՞ է ամռան այս հունձ ու կալի թունդ ժամանակ տուն գնում:

- Խեր լինի, Պուղի, ինչու՞ ես գյուղ գնում:
- Ինձ համար խեր ա, բայց տիրոջ տունը քանդվել ա:

## ԴԵ ԱՍԱ ՄԽԹԱՐԱԼ ԸՆՔ, ԷԼԻ՞

Մի աշուղ Մելիք Շահնազարի տանը երկու շաբաթ մնաց: Նա ամեն օր նվագում էր Աշուղ Ղարիբի երգերից:

- Աշուղ, մի բան էլ Աշուղ Ղարիբից երգիր,- մի օր խնդրեց Մելիքը:
- Ես հենց մի շաբաթ շարունակ Աշուղ Ղարիբից էի երգում, - պատասխանում է աշուղը:

Մելիքը ամոթից գլուխը կախեց, իսկ Պըլը Պուղին կատակեց.

- Դե ասա մեր Մելիքը մի շաբաթ մխթարալ ա էլի, աշուղ եղբայր:



## ԲԱ ԻՐԱՐ ԹԻԽԵԼԸ ՀԻՆՉԱ՞

Հարեւաններ Հաբին ու Ղազարը կռվում են, իրար հայհոյում: Վերջը մոտենում են, բռնում իրար օձիքից, դես ու դեն քաշում ու իրար ապտակում:

Պըլը Պուղին, որ մինչ այդ կտրին խմբված մարդկանց հետ թամաշա էր անում, մոտենում է, նրանց բաժանում ու խրատում.

- Բո՛, բռ, արա, ղուռումսաղեր, կռվում եք, կռվեցեք, բա իրար թխելը հինչա՞:

## ՆՎԵՐ ՍՏԱՑԱԾ ՁԻՈՒ ԱՏԱՄՆԵՐՆ ՉԵՆ ՀԱՇՎԻ

Շամախու խանը Մելիք Շահնազարին մի ճերմակ ձի է նվիրում: Մելիք Շահնազարը ամեն օր նայում էր ձիու ատամներին ու գլուխն օրորում.

- Ի՞նչ է պատահել, Մելիք Շահնազար:
- Շամախու խանի տված ձիու ատամները պակաս են, երեւում է քավթառ ա:
- Վա՜յ, քո տունը քանդվի, Մելիք Շահնազար, այ մարդ, ձիուդ երամակները թափառում են մեր հանդերում, դու այդ ինչի՞ հոգս ես քաշում: Ամոթ ա, Մելիք Շահնազար, նվեր ստացած ձիու ատամները չեն հաշվի:

## ՈՐՔԱՆ ԹՈՒԹ ՊԵՏՔ Է ՈՒՏԵՄ, ՈՐ ՄԻ ԲԱԺԱԿ ՕՂԻ ԴԱՌՆԱ

Պըլը Պուղին գնացել էր Գիշի: Ամառ էր, թթաբաղում օղի էին թորում: Ամեն կողմից թութ թափողները շրջապատեցին նրան:

- Պուղի, համեցեք, թութ կեր:

- Պուղի, մեր կողմը եկ, տես ինչ անուշ թութ ենք թափում:

Պըլը Պուղին լուռ գնում է օղեթորների մոտ:

- Պուղի, կներանանք, ախր թութ չկերար, է՛:

- Այ ժողովուրդ, ես ինչքա՞ն թութ պիտի ուտեմ, որ մի բաժակ օղի դառնա, էսա կգնամ մի բաժակ օղի կխմեմ, կդառնամ համ թութ կերած, համ՝ օղի խմած:

## ՄԻ ՉՆՉԻՆ ԲԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ Է

Պըլը Պուղին տուն էր շինում, բայց պատերը 4-5 տարի կիսատ մնացին:

- Պուղի, ինչու՞ տունդ չես ավարտում, - հարցնում էին մարդիկ:

- Մի չնչին բան պակաս է, դրա համար:

Անցավ էլի մի քանի տարի, մարդիկ նորից հարցրին Պըլը Պուղուն.

- Այ մարդ, տունդ ինչու՞ չես ավարտում:

- Ավարտելը կավարտեմ, բայց մի չնչին բան ա պակասում:

- Բա չնչին բանի համար տունը կիսատ կթողնե՞ն, Պուղի՛:

- Բա որ այդ չնչին բանը փողը լինի, ի՞նչ կանեն, - պատասխանում է նա:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՑԱԽԱՎԵԼ Է ՈՒԶՈՒՄ

Առավոտ-առավոտ Պըլը Պուղին կանգնեց Մելիք Շահնազարի բակում ու կանչեց նրան:

- Ի՞նչ կա, Պուղի, - հարցրեց քնաթաթախ Մելիքը:

- Մի ձեր ցախավելը տաք, տանեմ գոմը մաքրեմ:

- Այ մարդ, բա ցախավելի համար մարդու քունը հարամ կանե՞ն, համ էլ ցախավելը ինչ ա, որ չունես, հրեն մեր այգում ցախավելի թփեր կան, գնա 5-6-ը կապիր, բանեցրու:

- Է՛, Մելիք Շահնազար, ես քեզնից խելք չեմ ուզում, ցախավելը տալիս ես, տուր, չես տալիս, կգնամ Մարկոսինը կուզեմ, - կեղծ նեղանում է Պըլը Պուղին եւ հասկացնում, որ Մելիքն ամռան օրը իրավունք չունի այդքան քնել, հազար ու մի գործ կա, պետք է շտապել...

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՆԴՐՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԲԻԶԸ

Ձմռան մի օր Պըլը Պուղին ուզեց օղի խմել: Բայց դե որտեղի՞ց խմեր: Մտածեց ու վերջը գտավ ելքը: Հենց որ Մելիքը դուրս եկավ բակ, Պըլը Պուղին դիմեց նրան.

- Մելիք Շահնազար, բիզդ տուր, հարկավոր ա:

- Եկ տար:

Պըլը Պուղին Մելիքի հետ մտավ տուն:

- Ա Պուղ, բա միասին մի-մի թաս օղի չխմե՞նք:

- Դեմ չեմ:

Խմեցին ու կրկնեցին կենացները: Կարգին տաքանալուց հետո Պըլը Պուղին վեր կացավ, որ գնա, Մելիքը կանգնեցրեց նրան տան շեմին.

- Ա Պուղ, բիզը մոռացար տանել:

- Այ մարդ, բիզը ինչի՞ս ա, ես հո փալանդուզ չեմ, - խորամանկ ժպտաց Պըլը Պուղին ու դուրս գնաց:

## ՈՏՆԵՐԴ ԴԵՄ ՄԻ ՏՈՒՐ, ԱՆՑ ԵՍ ԿԵՆԱԼՈՒ, ԱՆՑ ԿԱՑ

Ամռան մի օր Պըլը Պուղին բրդուձ էր ուտում: Մեկ էլ՝ թըռ, այն կողմից մի երկարաոտք մորեխ, գալիս, տնկվում է բրդուձի մեջ: Պըլը Պուղին թեւից բռնում, դեն է նետում, բայց մորեխը նորից է ցատկում, ընկնում բրդուձի մեջ: Նորից է հանում ու դեն նետում, բայց մորեխը ցատկում, այս անգամ էլ կանգնում է բռնած գդալի վրա: Պըլը Պուղին շտապ բրդուձի հետ մորեխը դնում է բերանում, կուլ տալիս, բրդուձը գնում է, մորեխը սկսում է ճանկռոտել կոկորդը:

- Ոտներդ դեմ մի տուր, անց ես կենալու, ժամանակին անց կաց, - ասում է ու կուլ տալիս:

## ՑՈՐԵՆԻ ԵՐԵՔ ՓՈՒԹԸ ԵՐԵՔ ՌՈՒԲԼԻ

- Պուղի, ցորենի փութը քանի՞ ռուբլի ա, - մի օր նրան հարցրեց հարեւան Ղազարը:

- Ցորենի 3 փութը 3 ռուբլի ա, - պատասխանում է Պըլը Պուղին:

- Դե ասա՝ փութը մեկ ռուբլի ա, պրծնի գնա, էլի, - ուղղում է Ղազարը:

- Ղազար, ա գլուխդ մեռնի, մի փութ ցորենով խոխա պահել կլինի՞, բա մի փութով փոր կկշտանա՞, 3 փութը ուրիշ ա, - պատասխանում է Պըլը Պուղին:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿՈՎԸ ԷԺԱՆ Է ԾԱԽՈՒՄ, ԱՅԾԸ՝ ԹԱՆԿ

Մի կիրակի Պըլը Պուղին իր կովն ու այծը տանում է շուկա:

- Պուղի, կովը քանի՞ ռուբլով ես ծախում, - հարցնում են նրան:

- 100, - պատասխանում է Պըլը Պուղին:

- Այծը:

- 10-ը:

- Թանկ ես ծախում:

Պըլը Պուղին տեսավ, որ գնալով ոչ ոք չի խոսեցնում իրեն, մի տախտակի վրա գրեց «10» ու կախեց կովի ճակատից, հետո էլ «100» գրեց ու կախեց այծի ճակատից: Շուտով հետաքրքրասերների ամբոխը շրջապատեց նրան:

- Պուղի, կովը քանիսո՞վ ես ծախում:

- 10 ռուբլով:

- Բա ա՞յծը:

- 100 ռուբլով, չեք տեսնու՞մ գները:

- Որ այդպես է, կովը ես առա, - մոտենում է մի գյուղացի:

- Չէ, ես եմ առնում, - առարկում է մեկ ուրիշը:

Այս ու այն կողմից սկսեցին քաշքշել կովին:

- Կացեք, կովը իմն է, այծի հետ միասին եմ ծախում, - ասաց Պըլը Պուղին:

Եվ իսկապես այդ հնարամտությամբ նա իր ցանկացած գներով վաճառեց կովն ու այծը եւ ուրախ տուն դարձավ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՐՄՆԱԴԻՐ

- Պուղի, ասում են տուն շինելը գիտես, դորթա՞ - մի օր հարցրեց Մելիք Շահնազարը:

- Գիտեմ, այո, իմ պապն էլ էր ուստա, պապիս պապն էլ: Մենք բոլորս տուն շինողներ ենք:

- Դե որ այդպես է, արի ինձ համար մի տուն կառուցիր:

- Աչքիս վրա, - խոստանում է նա:

Հաջորդ օրը Պըլը Պուղին գնաց Մելիքի մոտ, սկսեց շարել տան պատերը: Անցավ մի քանի օր. Մելիքը նկատեց, որ տունը եռանկյուն ձեւ է ստացել:

- Աղա, Պուղի, էս ի՞նչ ես արել, ախր տունը եռանկյունի ա:

- Վնաս չունի, Մելիք Շահնազար, ուստայության մեջ մի քիչ դես, մի քիչ դեն, մի հաշիվ ա: Համ էլ քո տան համար կտրած գերանների մեջ նայել եմ, տունը կառուցել, կարճը կարճ տեղով կշարենք, երկարը՝ երկար:

- Ախր դուռն էլ ա ծուռ, վերեւում լայն է, ներքեւում՝ նեղ:

- Այդ էլ ես ճիշտ նկատել: Ամեն բան խելքով ա արված: Դռան վերեւի մասը լայն եմ թողել նրա համար, որպեսզի հարսանիքների ժամանակ գլխներին միժմահի դրած հարսերը ազատ մտնեն ու դուրս գան, - պատասխանում է Պըլը Պուղին ու շարունակում իր գործը:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՏՈԼՄԱ Է ՈՒՏՈՒՄ

Օրերից մի օր Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը ճաշում էին միասին: Սեղանի վրա սալ-սալ մածուն էր ու տոլմա: Որի՞ց ուտել՝ մտածեց Պըլը Պուղին ու տոլման քաշեց առաջը: Բայց մածունն էլ վատ չէր: Նա սկսեց մածուն լցնել տոլմայի վրա:

- Ա շաշ, այդ ի՞նչ ես անում:

- Տոլման հովացնում եմ, - ասաց ու սկսեց ախորժակով ուտել մածնով տոլման:

Մելիքն էլ փորձեց ու տեսավ, որ այդպես լավ է: Ասում են՝ այդ օրվանից շատերն են տոլման մածնով ուտում եւ միշտ գոհ են այդ «գյուտի» հեղինակից՝ Պըլը Պուղուց:

## ՈՐՏԵՂ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՍ, ՔՆԻՐ

Խոջա Ավետիսը Պըլը Պուղու հյուրն էր: Մի քանի տարի առաջ Պըլը Պուղին գնացել էր նրա մոտ, չէր ընդունել:

- Թող գնա իր թայ-թուշի տանը քնի, - ասել է նա: Հիմա մութը վրա է հասել, Խոջա Ավետիսը ծեծել էր պատահած տան դուռը:

- Հյուր կընդունե՞ք:

- Ներս արի, - ճանաչելով նրան, հրավիրեց Պըլը Պուղին: Գիտեր, որ Խոջան սոված էր, բայց հացի պատրաստություն չէր տեսնում: Երկար նստեցին, վերջը հոգնած Խոջան ասաց.

- Որ հաց ուտենք, հետո որտե՞ղ պիտի քնեմ:

- Մենք հաց ենք կերել, պրծել, իսկ դու որտեղ ուզում ես քնիր, Խոջա Ավետիս, կուզես թոնրատանը, չես ուզի, գնա քո թայ-թուշի մոտ:

## ՔԱՆԻ՞ ՏԱՐԵԿԱՆՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԽԵԼՔԸ ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ

- Ա՛ Պուղ, գիտնական մարդ ես, մի հարց տամ, պատասխանիր,- Պըլը Պուղուն ծեռք առնելու համար մի օր Մելիք Շահնազարը դառնում է նրան.

- Էլի մի անհամ բան ես հարցնելու, ասա տեսնեմ։

- Քանի՞ տարեկանում ա մարդու խելքը հասունանում։

- Ի՞նչ ասեմ, Մելիք Շահնազար, նայած մարդուն, քո հերը, օրինակ, 100 տարի ապրեց ու այդպես էլ խակ խելքով մեռավ։





## ԱՅԴՊԵՍ ԷԼ ԿԱՐԵԼԻ Է

Անձրև էր գալիս։ Մելիք Շահնազարը ձի նստեց ու բռնեց տան ճանապարհը։ Պըլը Պուղին տեսավ ու հարցրեց.

- Այս անձրևին այդ ո՞ւր, Մելիք Շահնազար։

- Տուն։ Գնամ ասեմ անձրև է գալիս, անձրևի պատճառով այսօր տուն չեմ գալու այգուց։

- Հեր օրհնած, արի մնա ինձ մոտ, անձրևը կդադարի, կգնաս։

- Ադպես էլ կարելի է, Պուղի։

## ԵՍ ՄԻ ՍՈՒՏ ԱՍԱՑԻ, ԴՈՒ՝ ԵՐԿՈՒՍԸ

Տանուտեր Մոսին մի տան մնացած աղջիկ ուներ։ Տգեղ, հասակն առած, պառաված աղջիկ էր։ Պըլը Պուղին մի օր նրան տեսավ աղբյուրի ճանապարհին ու ասաց.

- Քեֆս գալիս է, երբ քեզ պես սիրուն աղջիկ եմ տեսնում։

- Իսկ դու գիժ ես ու տգեղ,- թթված ասաց նա։

- Կեցցես, ես մի սուտ ասացի, դու՝ երկուսը։

## ՊՐՏԸՏՈՒԽԱԾ ՋՐՀՈՐՆԵՐԸ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը գնում են Բաղդադ։ Մելիքը տեսնելով մզկիթների բարձրացած կլոր աշտարակները, հարցնում է.

- Ա՛ Պուղ, էս հինչերը՞ն դիք-դիք կանգնած։

- Քյահրիզի ջրհորներ են, Մելիք Շահնազար, պրտըտուսալն, վեր չուրանան։

## ՔՅԱՍԻԲԸ ԱՅԾՆ Է

- Ա Պուղ, շատ ես քյասիբ, է՛, - մի օր ասաց Մելիք Շահնազարը:

- Ինչո՞ւ եմ քյասիբ, Մելիք Շահնազար, քյասիբը էծն ա, երկու կոպեկ չունի միռուքը խուզել տա:

## ԱՅԴ ՔՈ ԴՈՎՐԻՆ Է ԵՂԵԼ

Պըլը Պուղու տղան պսակվեց հարուստ տանուտեր աղջկա հետ: Հարս եկավ, թե չէ, սկսեց կարգադրություններ անել, մեծ ու փոքր չէր նայում:

- Ապեր, ի՞նչ անեմ, այս լաչառ կնիկը մեզ մի օր տնից դուրս կանի, թե որ մենք իրեն դուրս չանենք, - ասաց տղան:

Պուղին մտածեց ու գտավ ելքը:

- Տղա ջան, ամեն գիշեր, հենց որ քնում եք, վեր կաց մի բաժակ ջուր լցրու տակդ, թող իմանա, թե դու ես թրջել դոշակդ:

Տղան կատարեց հոր խորհուրդը ու հարուստի աղջիկը թողեց ու գնաց հերանց տուն:

Անցավ ժամանակ, Պուղու տղան նորից պսակվեց: Նոր հարսը մի օր աղբյուրի մոտ պատահեց հարուստի աղջկան.

- Աղջի, դա ի՞նչ տղայա, որ պսակվել ես հետը, ամեն գիշեր տակը թաց էր անում:

- Այդ քո դովրին էր, հիմա այդպես չէ, - պատասխանում է Պըլը Պուղու նոր հարսը:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿԾԿՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՓՈԽԱՆԻ ԹԵԼԸ

Մելիք Շահնազարի փոխանը (շալվարը) բրդե թելից է լինում գործված: Մի գիշեր ոնց է պատահում, Մելիքն ու Պըլը Պուղին հյուր են մնում հարեւան գյուղում: Նրանք իրենց շորերը հանում, դնում են գլխատակներին ու քնում: Մելիքի շալվարի թելի ծայրը ընկնում է Պըլը Պուղու ձեռքը: Մութ սենյակում նա խաղում է թելի հետ, հետո սկսում կծկել:

Առավոտ Մելիքը նայում է, տեսնում փոխանը չկա:

- Ա Պուղ, ո՞ւր է փոխանս, - հարցնում է նա:

- Մելիք, ես գիշեր մի կծիկ թել եմ կծկել, բալքի քո փոխանի թելն ա, ահա, առ, տես, - ասում է Պուղին ու թելը տալիս նրան:

## ԵՐԿՈՒՍՍ ԷԼ ՍՏՈՒՄ ԵՆՔ

Պըլը Պուղին գյուղամիջում գովաբանում է Մելիք Շահնազարին:

- Նրա պես առատաձեռն, բարի, հայրենասեր մարդ չկա Ղարաբաղում:

Այդ պահին մոտենում է համագյուղացի Ղազարը եւ ասում.

- Էդ ո՞նց ա, Պըլը Պուղի, դու գովաբանում ես Մելիք Շահնազարին, իսկ նա քեզ անվանում է անշնորհք, անմիտ, անբան մարդ:

- Վնաս չունի, Ղազար, երկուսս էլ ստում ենք:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽԱԲՈՒՄ Է ԱՍՏԾՈՒՆ

Մի անձրևոտ օր Պըլը Պուղին մնում է հանդում: Շատ է չարչարվում կայծքարով վառել աբեթը, բայց անձրևը խանգարում է.

- Աստված, մի քիչ ցլաման տուր, չուբուխս վառեմ, վախել մի, պարտքի տակ չեմ մնա, մի ոչխար մատաղ կանեմ:

Քիչ հետո անձրևը դադարեց, Պուղին վառեց չիբուխը, հետո կրակը թեժացրեց ու դարձավ աստծուն.

- Բա ասում ես ինձ ոչ ոք չի խաբի, աստված, տեսա՞ր, խաբեցի քեզ, ոչխարը ինձ որտեղի՞ց, որ մատաղ անեմ:

## ՕՂՈՒ ԲԱԺԱԿԸ ԿԻՍԱՏ Է ԼՑՆՈՒՄ

Առավոտ-առավոտ խուրջինը ուսին հանդ էր գնում Պըլը Պուղին ու հայհոյում.

- Այդ ու՞մ հետ ես, Պուղի, - հարցնում է հարևան Ղազարը:

- Մելիք Շահնազարի, շան որդին միշտ ինձ համար օղու բաժակը կիսատ ա լցնում:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ ԹՐՋՈՒՄ Է

Մի անգամ Պըլը Պուղին տերտերին հարցրեց, թե առաջ հավն է ստեղծվել, թե ձուն, ո՞վ է աստծո պապը, հայրը, մայրը և էլի ուրիշ հարցեր:

Տերտերը բարկացավ ու Ավետարանը դրեց նրա գրկին:

- Տար ամբողջ Ավետարանը կարդա, ջուր արա, որ էլ հարցեր չտաս, այստեղ բոլոր հարցերիդ պատասխանը կա:

Պըլը Պուղին Ավետարանը բերեց տուն, կարդաց, հետո թրջեց աղբյուրի նովի մեջ ու տարավ եկեղեցի:

- Անիծված, այս ի՞նչ ես արել, - բարկացավ տերտերը:

- Տեր հայր, դու ասացիր կարդա և ջուր արա Ավետարանը, ես էլ կատարեցի քո խոսքը, էլ ինչու՞ ես բարկանում,- միամիտ ձևացավ Պըլը Պուղին:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՏԵՐՏԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

-Պուղի, ոչխարը մեզ ի՞նչ է տալիս:

- Միս, կաթ, բուրդ:

- Ի՞նչ են անում միսը:

- Ուտում են:

- Կա՞թը:

- Խմում են, մածուն ու պանիր են շինում:

- Բուրդը ի՞նչ են անում, Պուղի:

- Չգիտեմ, տեր հայր:

- Ոնց թե չգիտեմ, հապա ինչի՞ց են կարած քո շորերը:

- Հորս հին չուխայից, տեր հայր:

## ՄԵԼԻՔԸ ՔՑՈՎԻ Է ԽՄՈՒՄ

Մելիք Շահնազարի հյուրերը նստել ու սպասում էին: Շաքար չկար թեյ խմելու համար, իսկ ծառան ուշանում էր: Այդ պահին Պըլը Պուղին գրպանից հանում է մի կտոր շաքար, թելով կապում ու կախում պատից:

- Նայեցեք շաքարին ու խմեցեք:

Հյուրերը կատարեցին նրա խոսքը, նայում էին ու կում-կում թեյ խմում:

Մելիք Շահնազարը սկսեց երկար նայել շաքարին, ախր թեյն առանց շաքարի կով չէր գնում: Պըլը Պուղին նկատեց այդ ու նախատեց Մելիքին:

-Մելիք Շահնազար, շաքարին ինչու՞ ես երկար նայում, տնաշենի տղա, շաքար չկա, թե թեյ խմենք, դու քցովի ես անու՞մ:

## ՄՐԳԵՐԸ ԵՐԲ ԵՆ ՀԱՍՆՈՒՄ

Տերտերը անընդհատ կրկնում էր.

- Տարին ունի չորս եղանակ. գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Գարնանը բացվում են ծաղիկները, ամռանը տաք է լինում, աշնանը հասունանում են մրգերը, իսկ ձմռանը ձյուն է գալիս: Պուղի, պատասխանիր, մրգերը ե՞րբ են հասնում:

- Երբ Մելիք Շահնազարը մի պահակի տեղ այգում 3-4 պահակ ա պահում, - պատասխանում է Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ

- Ա Պուղ, որքան մտածում եմ, դու պետք է կոշկակար դառնաս: Ի՞նչ ա, ես ամեն անգամ փող պիտի տամ չաքմաններս կարկատե՞մ,- մի օր կտրականապես պահանջեց Մելիքը:

- Լավ, որ ասում ես, կդառնամ, - ասաց եւ հենց նույն օրը սկսեց մի զույգ ոտնաման կարել Մելիքի համար:

Ուշ գիշեր էր, Մելիքն արդեն քնել էր, երբ Պըլը Պուղին ծառաներին կարգադրեց շուտ արթնացնել նրան եւ ուղարկել իր մոտ: Մելիք Շահնազարը շտապ հագավ շորերն ու շտապեց Պըլը Պուղու մոտ: Նրա կարծիքով շատ մեծ բան պետք է պատահեր, որ իրեն քնից արթնացնեն: Տեղ հասավ, տեսավ Պըլը Պուղին մոմի լույսի տակ նստած կարում է ոտնամանները:

- Ադա, Պուղի, ինձ ինչո՞ւ ես կանչել, ի՞նչ ա պատահել:

- Ի՞նչ պիտի պատահի, կանչել եմ հարցնեմ քեզանից, թե դաբանը որտե՞ղ կպցնեմ, ոտնամանի առջեւի մասից, թե հետեւի՞:

- Ի՞նչ կոշկակար ես, որ այս հասարակ բանը չգիտես:

- Իմ իմանալը ի՞նչ, թարս մարդ ես, կարող է թարս էլ հագնես չաքմեքը, նրա համար եմ հարցնում, որ հետո ազատվեմ գլխացավանքից:



## ԷԼ ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ԾԱԾԿԵԼ

Պըլը Պուղին մոթալի պանրով լցրեց փայտյա մեծ գուշը, երեսը ծածկեց ու գրկած դուրս եկավ Մելիք Շահնազարի տնից, բռնեց աղքատ Ղազարի տան ճանապարհը: Այդ պահին Մելիքի ծառաներից մեկը պատահեց Պըլը Պուղուն ու հարցրեց.

- Պուղի, էդ ի՞նչ ես տանում, որ երեսը ծածկել ես:

- Էլ ինչո՞ւ եմ երեսը ծածկել, որ պիտի ասեմ, թե ինչ եմ տանում, - պատասխանեց ու շարունակեց իր ճանապարհը:

## ՄԻ ԿԱՐԱՍ ՈՍԿԻ, ԵՐԿՈՒ ԿԱՐԱՍ ԽԵԼՔ

Մի օր քեֆից հետո Մելիք Շահնազարը կանչեց Պըլը Պուղուն ու ցանկացավ զվարճանալ:

- Պուղի, ա մեռած, որ մի կարաս ոսկի գտնես, երկու կարաս խելք, ո՞րը կվերցնես՝ խելքը, թե՝ ոսկին:

- Մի կարաս ոսկին կվերցնեմ, Մելիք Շահնազա՛ր:

- Իսկ ես խելքը կվերցնեմ, Պուղի, խելքը լավ բան ա:

- Ճիշտ էլ կանես, Մելիք Շահնազար, քեզ խելք ա հարկավոր, ինձ՝ հարստություն: Այդպես ա աշխարհիս բանը, ում ինչ հարկավոր ա, նրա հետեւից ման ա գալիս, չի գտնում:

## ԱԳՌԱՎԻ ՃՈՒՏԸ

Մի օր Պըլը Պուղին մի ագռավի ճուտ բռնեց ու բերեց տուն:

- Էս ագռավի ճուտը ինչի՞ համար ա, Պուղի, - հարցրեց Մելիք Շահնազարը:

- Ասում են՝ ագռավը 400 տարի ապրում ա, բերել եմ տուն, պահեմ, տեսնեմ ճի՞շտ են ասում:

- Այ գյադա, բա դու այդքան ապրելո՞ւ ես:

- Ես էլ այդ եմ ասում, էլի, իսկ ո՞վ է այդքան ապրել ու որոշել, որ 400 տարի ապրում ա:

## ՄԻԱՅՆ ԷՇԻ ՔՌՌԱԿՆ Ա ԱՌԱՋ ԸՆԿՆՈՒՄ

Մելիք Շահնազարի տղան հոր պես բթամիտ, մեծամիտ ու անպիտան մարդ էր: Կամա-ակամա միշտ խառնվում էր հոր գործերին, ինքնակամ վճիռներ հանում: Դա դուր չէր գալիս Պըլը Պուղուն:

Մի օր էլ, երբ մելիքները հավաքվել էին մի կարեւոր գործ վճռելու, դարձյալ Մելիքի տղան հոր խոսքը կտրեց: Այստեղ Պըլը Պուղին այլեւս չհամբերեց.

- Կենդանական աշխարհում ամեն շունչ-արարած իր հոր ու մոր հետեւից ա գնում, մենակ էշի քոռակն ա ետ ու առաջ ընկնում, - ասաց ու դուրս գնաց:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՅՍԿԱՅԻՑ ԽԼՈՒՄ Է ՈՍԿԻՆ

Մի օր Ավետարանոցում մի հսկա հայտնվեց: Նա բռան մեջ մի ոսկի սեղմեց ու դիմեց մարդկանց.

- Ով բաց անի բուռս, ոսկին նրան, թե չէ, ինքը մի ոսկի տա ինձ:

Շատերը փորձեցին, բայց բոլորն էլ տանուլ տվին մեկական ոսկի: Յիրավի, շատ էր ուժեղ հսկան: Իրան-Թուրան ման էր եկել, նույն ձեւով շատ ոսկիներ հավաքել:

Յանդից եկավ Պըլը Պուղին, տեսավ Մելիքի տան բակում այնքան մարդ կա, որ եթե ասեղ գցես, չի ընկնի:

- Էսպես-էսպես բան, Պուղի, - նրա հարցին պատասխանեցին մարդիկ:

- Մի ոսկին քիչ ա, թե բացեմ բուռը, թող ինքը ինձ 10 հատ տասանոց ոսկի տա, թե չէ՝ ես այդքան տամ իրեն:

- Պուղի, ա մեռած, խելքդ թռցրե՞լ ես, - այս ու այն կողմից ձայն տվին մարդիկ:

Յսկան Պըլը Պուղուն տեսնելով, խորամանկ ժպտաց, որ նշանակում էր՝ «համաձայն եմ պայմանին»:

- Պըլը Պուղին մոտեցավ, բռնեց հսկայի բուռը, մյուս ձեռքով դիլդի տվեց նրան, հսկան ծիծաղեց, թուլացավ, բուռը բացվեց, ոսկին ընկավ Պըլը Պուղու բուռը.

- Կեցցե՜ Պուղին, կեցցե՜ Պուղին, - ուրախ գոչյուններով ժողովուրդը շրջապատեց հնարամիտ երգիծաբանին, իսկ հսկան ամոթից քրտնեց, թողեց ու հեռացավ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԴՈՒԼԳՅԱՐ

Մի հացը պակաս տարի Պըլը Պուղին տանը եղած-չեղած կացինը դրեց կռնատակին, դուրս եկավ գյուղամեջ, որ մեկն ու մեկը տեսնի նրան, տանի տուն՝ գործ անելու համար:

Մելիք Շահնազարը տեսավ, կանչեց նրան:

- Պուղի, էդ ի՞նչ կացին ա, ինչի՞ համար ես կանգնել այստեղ:

- Դուլգյար եմ, գործի եմ ման գալիս:

- Արի գնանք ինձ մոտ աշխատիր:

Գնում են, Մելիք Շահնազարը իր բակում ցույց է տալիս մի քյերթուկ:

- Պուղի, այդ փայտի վրա աշխատիր, - ասում է Մելիքը ու ժպտում դավադիր:

- Լավ:

Պըլը Պուղին ամբողջ օրը տաշում է քյերթուկը, բայց ոչինչ չի ստացվում նրանից:

- Արա, Պուղի, էդ ի՞նչ ես շինում, - երեկոյան ծիծաղելով հարցնում է Մելիքը, կարծելով, թե դրանով նեղն է գցել նրան.

- Մելիք, կյուլի ճոտ ըմ շինում, որ առաջ քեզ նման Մելիքին ուտի, յետնան ինձ նման ուստեն, - պատասխանում է Պըլը Պուղին:



## ՄԱՐԴԿԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ՄԻ ԳՑԻՐ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը վերադառնում էին շուկայից. Մելիքը լավ առեւտուր էր արել, հագել նոր առած չուխան, նստել ձիու վրա, իսկ Պուղին հագել էր իր հնամաշ շորերը, շալակել խուրջինը ու այսպես երկուսով տուն էին դառնում, երբ ավազակները կտրեցին նրանց ճանապարհը:

- Չուխադ հանիր, - ավազակապետը դիմեց Մելիքին:

- Ինչի՞ համար, - հառաչեց Մելիքը:

- Հանիր չուխադ, ասում եմ:

- Ախր ինչի՞ համար:

Պըլը Պուղին այդ պահին դարձավ Մելիք Շահնազարին ու կատակով ասաց.

- Մելիք, չուխան հանելը հանելու ես, էդ մարդկանց ճանապարհից մի գցիր, հանիր տուր, գնանք, համ մենք շուտ տեղ հասնենք, համ՝ իրենք:

## ՄԵԼԻՔԸ ԻՐ ՌԵԽԻ ՀՈԳՍՆ Է ՔԱՇՈՒՄ

Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին ճաշում էին: Սեղանի վրա 4-5 հավի ձու էր դրված: Կերան, հետո Մելիքը բեխերը սղալեց ու դարձավ Պըլը Պուղուն.

- Ա Պուղ, էս հավի ձուն ինչու՞ մի ձմերուկի չափ չէ, որ ուտես, մի բան զգաս:

- Մելիք, դու էլ միշտ քո ռխետ հոգսն ես քաշում, սկի հավի քամակի մասին չե՞ս մտածում, - սրամտությամբ նախատում է Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԻՐԵՆ ՏԵՍՆՈՒՄ Է ՀԱՅԵԼՈՒՄ

Պըլը Պուղին տանը չէր. իսկ կինը մի հայելի գնեց գյուղ եկած վաճառականից եւ կախեց պատից:

Երբ Պըլը Պուղին եկավ տուն. տանը ոչ ոք չկար: Նստեց որ ճաշի. մեկ էլ աչքը ընկավ հայելուն: Իր պես բեխով. միրուքով մի մարդ նայում էր իրեն: Նրան թվաց.թե հարեւան Ղազարն է եկել. պատուհանով իրեն է նայում:

- Արա, Ղազար, ի՞նչ ես ակուշկավը ծուկծուկ անում, չուռ տուր եկ, մին-մին թաս արաղ խմենք, - ասում է Պըլը Պուղին:

## ՔԱՐԵՐԸ ԿԸՊՈՏԱԼ ԸՆ, ՇՆԵՐԸ ՊԵՑ ԹՈՂԱԼ

Պըլը Պուղին մի օր գնում է Քարաշեն. խնամի Կարապետի մոտ: Բայց մինչեւ խնամու տունը կհասներ. գյուղում շները շրջապատում են նրան: Պըլը Պուղին դես է վազում քարի համար. դեն է վազում. բայց որ քարից բռնում է. պոկ չի գալիս: Այդ պահին խնամի Կարապետը գալիս, քշում է շներին. իսկ Պըլը Պուղին զարմացած դիմում է նրան.

- Խնամի. էս ինչու՞ քարերը կպոտալըք. շները պեց թողալ. օզում չըք տները դոնաղ չկյան, հա՞:

Խնամի Կարապետը ծիծաղում է, Պըլը Պուղուն ընդունում եւ նրա պատվին մեծ քեֆ սարքում:



## ԵԹԵ ԱՅԴՊԵՍ ԼԻՆԵՐ

Պըլը Պուղին նստած գիրք էր կարդում, երբ Մելիք Շահնազարը մոտեցավ նրան ու ասաց.

- Պուղի. քիչ կարդա, խելոք մարդիկ շուտ են ծերանում:

- Մելիք. եթե այդպես լիներ, դու հավիտյան ջահել կմնայիր.- պատասխանեց Պըլը Պուղին ու շարունակեց կարդալ ձեռքի գիրքը:

## ՉՀԱՍԿԱՑԱՆ

Մելիք Շահնազարը եւ Պըլը Պուղին գնացին Թավրիզ. այնտեղից ճապոնական, հնդկական, չինական նախշուն շուշե ամաններ առան, բարձեցին ջորու վրա, ուրիշ շատ բաներ էլ առան: Քարավանով ճամփա ընկան դեպի Վարանդա՝ Մելիք Շահնազարի դղյակը:

Թավրիզից դուրս եկան, թե չէ, Պըլը Պուղին դարձավ Մելիք Շահնազարին.

- Մելիք. սկի վարձի մասին բան չես խոսում, ինձ ի՞նչ ես տալու, որ այսպես քարավանիդ գլուխն անցած աշխատում եմ:

- Երեք խորհուրդ:

- Լավ խորհուրդը փողից թանկ ա, ասա տեսնեմ, ի՞նչ խորհուրդ ես տալու:

- Պուղի, առաջին խորհուրդս այս է, եթե քեզ ասեն. գարի հացը ցորեն հացից լավ ա. չհավատաս:

- Հասկացա, առաջ անցիր:

- Երկրորդ խորհուրդը Արաքսի կամուրջն անցնելուց հետո եմ ասելու:

Հաջորդ օրը քարավանն անցավ Արաքսի կամուրջը. ոտքդրին մայր հողի վրա թե չէ, Մելիքն ասաց.

- Պուղի, եթե ասեն քյասիբը լավ ա, քան թե հարուստը, չհավատաս։

- Հասկացա, Մելիք, առաջ անցիր։

- Պուղի, երրորդ խորհուրդը Ամարասում եմ տալու։

Հասան Ամարաս, Պըլը Պուղին դաշույնով կտրեց պարանները, ջուջե ամանների հակերը զըխկոցով ընկան վանքի բակի սալ քարերի վրա ու փշուր-փշուր դարձան։

Մելիքը ցանկացավ բարկանալ Նրա վրա, բայց Պուղին կտրեց Նրա խոսքը.

- Մելիք Շահնազար, որ ասեն Թավրիզում գնած քո նախշուն ամաններից մեկը սաղ մնաց, չհավատաս։

## ՈՐՈՆՈՒՄ Է ԼՈՒՅՍ ՏԵՂԸ

Մելիք Շահնազարը դանակը կորցնում է տան բակում եւ ուշ գիշերին մտնելով մոմերով լուսավորված իր պալատը, անմիջապես իր մոտ է կանչում Պըլը Պուղուն։

- Ա Պուղ, դանակս կորցրել եմ տան բակում։

Պըլը Պուղին սկսում է դանակը որոնել տան մեջ։

- Արա, ասացի, որ դրսում եմ կորցրել, բակում, իսկ դու այստեղ ե՞ս որոնում։

- Մելիք, այստեղ լուսավոր ա, իսկ դրսում մութ, դրա համար էլ լույս տեղ եմ որոնում, որ գտնեմ։



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԲԱՑՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՔԸ

Հակոբին ասացին կնոջդ աչքը ուրիշի վրա է, սա էլ եկավ Պըլը Պուղու մոտ, թե՝

-Պուղի ախպեր, էսպես բան եմ լսել իմ կնոջ մասին, ճիշտն ու սուտը չեմ կարողանում իմանալ։

- Հակոբ, վախենում եմ գաղտնիքը բացեմ, հայհոյես ինձ։

- Չեմ հայհոյի։

- Դե որ այդպես է, վաղը գնա անտառ, էշը բարձիր փայտով։ Հենց որ մոտենաս գյուղին, էշը բաց թող, դու նստիր ճամփի վրա, ասա մեռնում եմ, հետո գնա պառկիր ու ինչ որ հիմա քեզ սովորեցնեմ, ասա կնոջդ.

Հակոբը այդպես էլ արեց ու երբ թախտի վրա պառկած էր, կանչեց կնոջը.

-Հեղուշ ջան, ազիզ ջան, մեռնում եմ, բայց մի խնդիրք ունեմ, գիտեմ, ջահել կին ես, ինձանից հետո պետք է ամուսնանաս, լավ էլ կանես, ինձ ինչ օգուտ, որ մնաս, բայց դե խնդրում եմ մաճկալ Օհանի հետ պսակվես, միասին շատ ենք ընկերություն արել, լավ մարդ ա։

- Հանես ջան, հոգուս ինչ մեղք անեմ, դե որ մեռնում ես, քեզանից ի՞նչ թաքցնեմ, ես խանութպան Արշոյին եմ սիրում, - խոստովանում է Հանեսի կինը։

## ՀԱՆԵՍԸ ՆԵՂԱՆՈՒՄ Է ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՑ

Խուլ Հանեսը մի օր պատահեց Պըլը Պուղուն ու հարցրեց.
- Ա Պուղ, այդ ո՞ւր ես գնում:
- Ջրաղաց:
Հանեսը ուրիշ բան լսեց ու ասաց.
- Ես կարծեցի, թե ջրաղաց ես գնում:
- Հա, ջրաղաց եմ գնում, - ձայնը բարձրացրեց Պըլը Պուղին:
- Այ մարդ, ջրաղաց չես գնում, մի գնա, էլ ինչո՞ւ ես բարկանում վրաս, - նեղացավ խուլ Հանեսը ու բաժանվեց:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳԻՆԻ Է ՓՈԽ ԱՌՆՈՒՄ

- Մելիք Շահնազար, մի կարաս գինի պարտք տուր:
-Պուղի, հիշո՞ւմ ես, երկու տարի առաջ մի կարաս գինի էլ պարտք վերցրիր, - հիշեցրեց Մելիքը:
- Հիշում եմ:
- Բա որ հիշում ես, պարտք տալու փոխարեն ի՞նչ ես նորից մի կարաս գինի ուզում:
- Հեր օրհնած, դե որ մի կարաս գինի ունենամ, էլ ինչո՞ւ եմ պարտք վերցնում նորից, էնա քեֆ կանեմ, էլի՞:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ Է ԵՓԱԾ ՀՆԴԿԱՀԱՎԸ

Մելիք Շահնազարը խնջույք էր սարքել, հրավիրել Ղարաբաղի մյուս չորս մելիքներին ու հրճվում էր: Թոնդ պահին, երբ եփած հնդկահավ բերին հյուրերի համար, Մելիք Շահնազարը կանչեց Պըլը Պուղուն ու կատակով ասաց.

- Ա Պուղ, էս հնդկահավը կտորիր եւ այնպես բաժանիր հինգ մելիքների մեջ, որ ոչ ոք չնեղանա քեզանից:

- Աչքիս վրա, Մելիք Շահնազար, - ասաց Պըլը Պուղին ու բուդի մեկը պոկեց, տվեց Խաչենի Իշխանին.

- Կեր, որ բազուկդ ամրանա:

Ապա մյուս բուդը պոկեց ու տվեց Ջրաբերդի մելիքին.

- Թուրդ կտրուկ մնա, առ կեր:

Գյուլիստանի մելիքին տվեց զույգ կռները:

Մելիք Շահնազարին՝ հնդկահավի գլուխը, իսկ Դիզակի մելիք Ավան Յուզբաշուն՝ վիզը:

- Բա հնդկահավի մնացած մա՞սը, - հարցրին մելիքները:

- Սա էլ ձեզ սպասարկող նոքյարներին: Ադա, մի կուլա գինի վերցրեք սրա հետ, տվեք նրանց:

- Ա Պուղ, էստեղ մի քյալագ կա, մի բացատրիր տեսնենք ինչ ա նշանակում այս բոլորը:

-Մելիք Շահնազար, հնդկահավի երկու բուդը տվի Խաչենի եւ Ջրաբերդի Իշխաններին նրա համար, որ նրանք երբեք հողի վրա չեն կռվում իրար հետ, իսկ վտանգի ժամին իրար թիկունք են կանգնում: Թեւերը տվի Գյուլիստանի մելիքին նրա համար, որ թեւեր առնի, արծիվ դառնա, վիզը տվի Մելիք ավանին, քանի որ գործի ծանրությունը նրա վզին է, գլուխը տվի քեզ, քանի որ դու ես հիմա նրանց գլխավորը:

Մելիքները գոհ շարունակեցին իրենց քեֆը:





## ՄԵԼԻՔԸ ԲՈՍՏԱՆ Է ԴԱՌԵԼ

- Վայ, մեռա Պուղի, վազիր բժշկի մոտ, - մի օր ասաց Մելիքն ու պառկեց թախտի վրա:

- Ասեմ Մելիքի որտե՞ղն ա ցավում:

- Այ տղա, գնա ասա սաղ ջանը ուռել ա, փորը ձմերուկ ա դարձել, ոտները՝ խյարներ, կռները՝ բադրիջաններ, գլուխը եմիշ, կոկորդը:

- Կա՛ց, Մելիք Շահնազար, այդքանը մտիս չի մնա, ավելի լավ ա գնամ ասեմ, բժիշկ, Մելիքը բոստան ա դարձել:

## ԵՍ ՉԵՄ ԱՍԵԼ, ԳԻՆԻՆ Է ԱՍԵԼ

Աղքատ Յանեսը մի օր հարբած դուրս եկավ ու կանգնեց գյուղամիջում: Այդ պահին Մելիք Շահնազարն իր թիկնապահներով շրջապատված վերադառնում էր որսից: Մարդիկ դես ու դեն ցրվեցին, ճամփա տվին նրանց, իսկ Յանեսը մնաց կանգնած ու, երբ Մելիքը մոտեցավ նրան, բռնեց ձիու սանձն ու հարցրեց.

- Մելիք, այս ինչ լավ ձի ա, ծախիր, առնեմ:

Մելիքը ձին քշեց, անցավ այն մտադրությամբ, որ հաջորդ օրը կանչի նրան ու ծեծի նման կատակի համար:

Գիշերը Յանեսը ուշքի եկավ, կնոջից իմացավ գլխին եկածը եւ քունը չտարավ.

- Վաղը Մելիքը կկանչի ու գլուխս կկտրի, ես ո՞վ եմ, որ նրա ձին առնեմ, - ասաց սրտնեղած Յանեսը:

- Գնա քավոր Պուղու մոտ, նա մի բան կանի:

Երբ Յանեսը գնաց Պուղու մոտ, վերջինս մի փարչ գինի լցրեց կարասից ու տվեց Յանեսին:

- Դիր արխալուղիդ փեշիդ տակ ու վաղը գնա Մելիքի մոտ, որ հարցնի, թե ինչու՞ ես ասել ձիդ պիտի առնեմ, ասա ես չեմ ասել, այս գինու փարչն ա ասել:

Յանեսն էլ այդպես է անում: Մելիքը գոհ է մնում նրա պատասխանից եւ չի ծեծում:

## ՄԵԿԻՆ ԽՈՏ, ՄՅՈՒՍԻՆ՝ ՈՍԿՈՐ

Պըլը Պուղու տունը երկու հարուստ վաճառականներ են գալիս: Երբ ընկերներից մեկը դուրս է գալիս գյուղամեջ, Պըլը Պուղին մյուս ընկերոջը հարցնում է.

- Ընկերդ, որ հիմա գյուղում առեւտուր է անում, ինչպիսի՞ մարդ ա:

- Ի՞նչ ընկեր, հիմար անասուն ա:

Հաջորդ օրը Պըլը Պուղին մյուս ընկերոջն է կարծիք հարցնում.

- Ընկերդ, որ երեկ մնաց տանը, ինչպիսի՞ մարդ ա:

- Ի՞նչ ընկեր, շուն մարդ ա:

Պըլը Պուղին երկուսի կարծիքը իմանալուց հետո, կնոջը կարգադրեց մի խորում խոտ եւ մի քանի ոսկոր հավաքել, բերել տուն: Երեկոյան նա իր հյուրերից մեկի առաջ խոտ դրեց, մյուսի առաջ՝ ոսկոր:

- Կերեք, ձեզանից մեկը շուն ա, մյուսը՝ անասուն:

Հյուրերը հասկացան Պըլը Պուղու ակնարկը ու փախան:

## ԷԴ ԲԱԶՄԱԶՈՒՏ ԱՄԱՆԻՑ ՄԵԿՆ ԷԼ ԻՆՁ ՏՈՒՐ

Մելիք Շահնազարի տան ամանեղենը ընտիր էր: Սովորական կավե քրեղանի փոխարեն նրա քրեղանը նկարված է գեղեցիկ նախշերով: Մի անգամ նրանցից մեկի մեջ մեղր լցրին, երբ կերան, վերջացրին մեղրը, վերջում Մելիք Շահնազարը սկսեց մատով լիզել քրեղանը: Տեսնելով այդ, Պըլը Պուղին դարձավ նրան:

- Մելիք, էդ բազմազուտ ամաններից մեկն էլ տուր ես լիզեմ:



## ՄԱՏԱՆԻՆ ՉԻ ԿՈՐԵԼ

Մի օր ջրհորից ջուր քաշելու ժամանակ Մելիք Շահնազարի մատանին հորի մեջ կորավ: Մելիքը կանչեց Պըլը Պուղուն ու կարգադրեց որոնել, գտնել մատանին:

- Քո մատանին չի կորել, Մելիք:

- Ո՞նց թե չի կորել, մեծ թթենու տակ ջրի հորի մեջ ընկավ:

- Դե դրանից էլ լավ տեղ, ինքդ ասացիր, որ մատանին հորի մեջ է:

- Այո, բայց...

- Ոչ մի բայց, մատանին հորի մեջ ա, իսկ ինչի տեղը որ գիտես, կորած չի:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՒՏՈՒՄ Է ՓԼԱՎԸ

Մի անգամ Պըլը Պուղին եւ իր ընկերները պայմանավորվում են քեֆ սարքել: Պըլը Պուղին քեֆի համար ոչինչ չի տանում: Սպասում է, մինչեւ սեղանը բացում են, հետո ծոցից հանում է փայտյա մեծ գդալը եւ սկսում փլավն ուտել:

- Այ Պուղ, ոչինչ չե՞ս բերել, բացի գդալից, - հարցնում են ընկերները:

-Բա ոնց, գդալն էլ ուզե՞մ ձեզանից, չէ, Պուղին, ձեզ գլուխ չի ծռի մի գդալի համար,- ասում է նա ու շարունակում ուտել համեղ փլավը:

ՄԵԼԻՔԻ ԳԻՆԸ

Մելիք Շահնազարը զուգվել, զարդարվել էր ու նստել մելիքական աթոռին: Այդ հագուստների, զարդերի մեջ նա նման էր թագավորի: Պըլը Պուղին ծալապատակ նստել էր գետնին փռած գորգի վրա ու գիրք էր կարդում: Մեկ էլ Մելիքը կանգնեց ու հարցրեց.

- Ա Պուղ, քո կարծիքով ես քանի մանեթ արժեմ:

- Յալա մի շուռ տուր տնտղեմ:

Մելիքը շուռ ու մուռ եկավ ու նորից հարցրեց.

- Յը, քանի՞ մանեթ արժեմ:

- Յազար, - պատասխանեց Պըլը Պուղին:

- Ա շաշ, հազար մանեթի լիա ինձ վրա ոսկի կա:

- Ես էլ այդ ոսկու գինը ասացի, էլի, - ծիծաղելով պատասխանում է Պըլը Պուղին:





ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԾԻԾԱՂՈՒՄ Է

Պըլը Պուղին ու մոլլա Նասրեդինը միասին գնում էին անտառով, մեկ էլ նրանց հանդիպեց մի զինված ավազակ ու կարգադրեց.

- Պառկեցեք

Պառկեցին:

- Դե հիմա լողացեք, ոնց որ ջրի մեջ:

Պըլը Պուղին ու մոլլա Նասրեդինը սկսեցին սողալ, իբր թե լողանում են: Մեկ էլ Պըլը Պուղին սկսեց քրքջալ:

- Էս նեղ պահին ինչո՞վ ես ծիծաղում, Պուղի. - հարցրեց մոլլան:

- Այ մոլլա Նասրեդին, մեր վիճակով եմ ծիծաղում, հիմի էս ավազակի խելքին մեկ էլ տեսար քամի փչեց ու մեզ հրամայեց տակ անել, ո՞նց պիտի տակ անենք:

ԴՈՒ ՔՈ ՄՈՐԹՈՒՄ ՄՆԱ, ԵՍ՝ ԻՄ

Դիզակի Տող գյուղից ճանապարհը դեպի Ավետարանոց է ձգվում խոր, կուսական անտառների միջով: Մելիքից դժգոհ ղաչաղ Մանասը իսկում էր այդ ճամփաներին, աղքատներին պաշտպանում էր, հարուստներին՝ պատժում:

Մի անգամ Տողի Ավան Յուզբաշու տնից Մելիքն ու Պըլը Պուղին գիշերով ճանապարհ ընկան դեպի տուն:

- Ա Պուղ, սիրտս ահ է ընկել, ղաչաղ Մանասը որ ինձ ճանաչի, սաղ բաց չի թողնելու, եկ փոխենք մեր շորերը:

- Մելիք Շահնազար, դու ճանաչելուց ես վախենում, ես չճանաչելուց: Աիսր ղաչաղ Մանասը որ ինձ չճանաչի ավելի վատ ինձ համար: Չէ, ավելի լավ է, Մելիք, դու քո շորերում մնաս, ես իմ: Քեզ որ ճանաչեն, դու ինձ չես փրկի, բայց որ ինձ ճանաչեն, ես ինձ ու քեզ կփրկեմ, ղաչաղ Մանասը իմ խոսքից դուրս եկողը չի: Չէ՛, ավելի լավ է դու քո մորթում մնա, ես՝ իմ:

## ՂԱԶԱՐԸ ԽՈՍՈՒՄ Է ԿՆՈՋ ՀԵՏ

Ղազարի լաչառ կինը մահանում է, տանում են թաղելու: Գերեզման դնելուց առաջ, դիակը դնում են փոսի մոտ ու մխիթարական խոսքեր ասում հարազատներին:

Ղազարն էլ է մոտենում, որ կնոջը գնաս բարով ասի: Մոտենում է ու սկսում կնոջ հետ խոսել: Այնքան երկար է խոսում, որ մարդիկ սկսում են ձանձրանալ ու դժգոհել:

Պըլը Պուղին, որ ներկա է լինում այդ թաղմանը, դառնում է մարդկանց ու ասում.

- Խեղճ Ղազարը ի՞նչ անի, որ չխոսի, առաջին անգամ կինը նրան ոչ մի պատասխան չի տալիս:

## ԷՍ ՀՈ՞ ՄԵՐ ԾԱՂԻԿ ԿՈՎԻ ՈՏՔՆ Ա

Պըլը Պուղու կովը կորչում է: Մարդ ու կին սար ու ձոր ընկած որոնում են ու չեն գտնում:

- Ա բալամ, կովը հո՞ ասեղ չէ, ախր կեսօրին Թախտերում արածում էր, բա ո՞ւր կորավ, - դժգոհում է Պըլը Պուղին, իսկ կինը սկսում է լաց լինել:

- Էսքան քուլփաթը ո՞նց պիտի պահենք, առանց Ծաղիկ կովի, ա Պուղ, - լալիս էր կինը:

- Կնիկ, լաց մի լինի, հիմա գնամ տանուտերին գանգատ անեմ, թող տափի տակից ա, գլխից ա գտնի տա, - ասում է ու գնում տանուտեր Մոսու մոտ:

- Կովս կորել ա, այսինքն որ լավ իմանաս, գողացել են:

- Ո՞ւմ վրա ես կասկածում:

- Ո՞ւմ... ի՞նչ ասեմ, տանուտեր, մեղք անելը լավ բան չէ:

- Լավ ես ասում Պուղի, հիմա ես հյուրեր ունեմ, մի տարեկան երինջ եմ մորթել, կաց հյուրերիս պատվեմ, հետո քո կովի հարցով կզբաղվեմ:



Պըլը Պուղին այստեղ մատը կծում է, գլխի է ընկնում բանը ինչումն է. «Մոսին կովս գողացել ա, մորթել, նա ինձ կով չի տա, մնամ, գոնե մի քիչ խորոված էլ ես ուտեմ», - մտածում է ու նստում բակի թթենու տակ:

Մոսու կինը հյուրերին հրավիրում է նստել թթենու տակ բացված սեղանի շուրջը, իսկ Պըլը Պուղուն ուզում է մի բանով խաբել ու ուղարկել տուն:

- Վա՜յ, Պուղի, բա քեզ պես քուլփաթի տեր մարդու կովն էլ կգողանա՞ն... այ դրա գողանողի աչքերը ծլլան: Դե եկ, Պուղի ախպեր, եկ մեր երինջի ոտքերից մեկը տամ քեզ, տար մի լավ խաշ գցիր, խոխեքը թող ուտեն, կշտանան, - ասում է ու մորթած երինջի ոտքը բերում, հյուրերի ներկայությամբ տալիս Պըլը Պուղուն:

- Աղքատ մարդ ա, թող տանի ուտի, - ասում է Մոսին մեծահոգաբար:

Իսկ Պըլը Պուղին մնացել էր շվարած: Նրա աչքն ընկել էր պճեղից վերեւ սպիտակ խալին: Նա ոտքը շուռ ու մուռ տվեց ու չկարողացավ համբերել.

- Մոսի, ա ջան տղա, էս հո՞ մեր Ծաղիկ կովի ոտքն ա:

## ՅՈՐ ՓՈՐԻՐ, ԽՈՐ ՓՈՐԻՐ

Մելիք Շահնազարը շատ դաժան մարդ էր, շատ մարդկանց է խաբելով տարել իր տունը, հետո կտրել գլուխը:

Ցանկացավ այդպես վարվել նաեւ Մխիթար Սպարապետի հետ: Գաղտնի կերպով պայման կապելով պարսկական շահի հետ, նա խոստացել էր կտրել Ղարաբաղի եւ Սյունիքի ռազմական սղնախների ղեկավար Մխիթար Սպարապետի գլուխը: Դրա համար շահը խոստացել էր հազար ոսկի տալ նրան, բացի դրանից Մելիք Շահնազարին պիտի կարգեր Արցախի իշխան: Հաշտվելով Ղարաբաղի մելիքների հետ, Մելիք Շահնազարը մի նամակով հյուր կանչեց Մխիթար Սպարապետին, «կարեւոր գործի համար»: Թեեւ Մխիթար Սպարապետի զինակիցները խորհուրդ տվին նրան չգնալ Ավետարանոց՝ Մելիք Շահնազարի մոտ, բայց Մխիթարը առավ մի քանի քաջ մարդիկ ու գնաց: Նա լավ գիտեր, որ Մելիքի աղջիկը՝ Գայանեն, քաջ հայրենասեր է եւ նույնիսկ Վարանդայի գավառի քաջ աղջիկներից կազմել էր հեծելազորի մի մեծ խումբ: Գիտեր նաեւ, որ Մելիքի մոտ է ծառայում Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին, որը շիտակ մարդու համբավ ուներ: Բայց դա բոլորը չէ, ղարաբաղցիները իրենց ռազմական սղնախներից մեկը կոչել են քաջ Սպարապետի անունով: Դա Մխիթարաշենն է: Չէ, որքան էլ նենգ լիներ Մելիքը, Մխիթարը չէր կարող չգնալ նրա մոտ: Այդքան բարեկամների մեջ Մելիքը ի՞նչ կարող է անել:

Մելիք Շահնազարը Մխիթար Սպարապետին ընդունեց հյուրասենյակում, խոնարհաբար երդվեց միշտ հավատարիմ մնալ, խոստացավ հազար ձի, հազար զինվոր, հազար ոսկի տալ նրա բանակին: Երբ տեղ հասան, իր սովորության համաձայն, Մելիքը շքեղ սեղան սարքեց, առատ գինի խմեցրեց հյուրերին, հետո նրանց համար փափուկ անկողին բացեց: Մխիթարը քեֆից հետո ձեւացրեց, թե հարբել է, քնել է ուզում, նույնը արին նաեւ նրա զինվորները:



- Դե, Մելիք Շահնազար, քնելուց առաջ կատարիր խոստումդ, վաղը մենք լույսը չբացված պիտի ետ գնանք, երկիրը անտեր ա:

- Աչքիս վրա, - ասաց Մելիքն ու առաջ բերեց հազար ոսկին, հետո հրամայեց հազար ձի թամբել ու հազար զինվոր առանձնացնել՝ վաղը Սյունիք գնալու համար: Այդ գործը իր վրա վերցրեց Գայանեն:

- Իմ հոր բանակի հազարապետը ես պիտի լինեմ, - ասաց Մխիթար Սպարապետին:

Մխիթարը կատարեց աղջկա կամքը եւ կարգադրեց բանակը շտապ հանել բերդից: Ամեն ինչ կազմակերպված առաջ էր գնում: Մելիքը մտածում էր այսպես.

- Գիշերս կկտրեմ Մխիթարի գլուխը, վաղը էլի իմը կլինի այն ամենը, ինչ տվի նրան, հետո գլուխը կտանեմ Պարսկաստանի շահին, համ ոսկու տեր կդառնամ, համ՝ փառքի:

Առնելով Մելիք Շահնազարի «նվերները», Մխիթար Սպարապետը գնաց քնելու: Նրա համար փափուկ անկողին էին բացել Մելիքի եղբոր սենյակում: Իսկ Մելիքի եղբայրը մի քանի օր առաջ գործով գնացել էր Մուղան՝ թափառական ավազակ Փանահ խանին գտնելու եւ հետը դաշնակցելու: Ձեւացնելով, թե քնում է, Մխիթարը մարեց մոմերը, ապա կռահելով Մելիքի մտադրությունը, բարձրաձայն, այնպես, որ Մելիքն էլ լսի, կարգադրեց իր զինվորներին չհսկել իր ննջարանը:

- Դուք վիրավորում եք իմ բարեկամ Մելիք Շահնազարին, մենք գտնվում ենք մեր բարեկամի տանը, ամոթ ա, գնացեք, քնեցեք:

Մելիքը լսեց ու հրճվեց: Նա Մխիթարի գլուխը հաստատ համարեց իրենը: Մխիթարը մի քիչ պառկեց, հետո Պըլը Պուղու՝

նախօրոք ցույց տված գաղտնի ելքով դուրս եկավ սենյակից: Ուշ էր արդեն, երբ Մելիքի եղբայրը մի այլ ճանապարհով գյուղ հասավ ու գործից անտեղյակ, գնաց պառկեց իր սենյակում Միխիթարի համար բացած անկողնում ու քնեց: Ամբողջ գիշերը փակված իր խուց սենյակում, Մելիք Շահնազարը ձեւացնում էր, թե քնած է, բայց ահա նա ելավ տեղից, գողեգող մոտեցավ եղբոր սենյակի դռանը: Դուռն բացելն ու սուր քաշելը մեկ եղավ: Մթան մեջ գլուխը արագ փաթաթեց մետաքսյա մի շալի մեջ, իսկ դիակը գլորեց ցորենի դատարկ հորը:

Հարկավոր էր, արագ, շատ արագ Միխիթարի գլուխը հասցնել Պարսկաստան: Նա իր թիկնապահ զինվորներով լուսաբացից առաջ հենց ուզում էր դուրս գալ բերդից, աղջիկը՝ Գայանեն, մի խումբ ձիավորներով կտրեց հոր ճանապարհը:

- Հայր, այդ ո՞ւր, շնորհ արա Միխիթար Սպարապետի վրանը, նա հիմա հանգստանում է մեծ չինարու տակ:

Մելիք Շահնազարը ցույց է տալիս շալքի մեջ փաթաթված գլուխը:

- Ահա Միխիթարի գլուխը:

- Օհո՜, դա շատ հետաքրքիր է, Մելիք Շահնազար, մեր Սպարապետը մի գլուխ ունի, իր ուսերին, մի բեր տեսնենք այդ ինչ եք սարքել, - ասում է արդեն Գայանեի ջոկատում զինվորագրված Պըլը Պուղին:

- Այ գյադա, դու էլ ե՞ս այստեղ:

- Այստեղ եմ, Մելիք Շահնազար, բա որտե՞ղ պիտի լինեի քո կարծիքով:

Զինվորները Մելիք Շահնազարին տարան Միխիթար Սպարապետի մոտ, իջեցրին ձիուց ու բաց արին շալը:

- Յա՜:

- Վա՜հ:

Պըլը Պուղին ճանաչեց Մելիքի եղբոր՝ Հովսեփի գլուխը:



- Դմբո, Մելիք Շահնազար, սա քո եղբոր գլուխն ա, արա, էս ի՞նչ ա, բա հորս՞ ինքը, ո՞վ ա տեսել, գլուխը մարդուց բաժանված կյա:

Մելիք Շահնազարը ջջմել, կանգնել էր, բռնվել էր լեզուն, ոչինչ չէր կարողանում խոսել:

- Տղերք, եկեք Մելիք Շահնազարի գլուխն էլ դնենք իր եղբոր գլխի մոտ, - առաջարկեց մի զինվոր եւ սուրը բարձրացրեց նրա վրա, բայց Միխիթարը սաստեց նրան.

- Հարկավոր չէ, Մելիք Շահնազարը ինքը իրեն սպանել ա այս գիշեր:

Իսկ Պըլը Պուղին դարձավ չարագործին եւ ասաց.

- Էստեղ են ասել, Մելիք Շահնազար, հոր փորիր, խոր փորիր, վերջը դու ես ընկնելու մեջը...

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՖՐԱՆՍԻԱՑԻ ԱՍՏՂԱԳԵՏԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Ֆրանսիացի աստղագետը լսելով Պըլը Պուղու անունը, գալիս է Ղարաբաղ եւ երեք հարց առաջարկում նրան:

Երբ բազմությունը հավաքվում է, ֆրանսիացին գետնի վրա շրջան է գծում: Պուղին վերցնում է աստղագետի գավազանը եւ մեջտեղից կիսում այն: Աստղագետը գլխով է անում, հետո նույն շրջանագծի վրայով նոր մի շրջանագիծ գծում: Պըլը Պուղին նորից է վերցնում գավազանը եւ ինքն էլ նրա շրջանագծերը թողնելով ներսում մի մեծ շրջանագիծ է գծում: Աստղագետը նորից է գլխով անում ու ցույց տալիս ցուցամատը: Պըլը Պուղին եւ ցուցամատն է ցույց տալիս, եւ բթամատը:

- Վիվա Պուղի, վիվա (կեցցե՜ս Պուղի, կեցցե՜ս),- բացականչում է աստղագետը ու հեռանում:

Երբ ֆրանսիացու ընկերները հարցնում են,թե ինչ հարցեր է տվել Պըլը Պուղուն, նա բացատրում է այսպես.

- Ես ասացի երկիրը կլոր է. Պուղին ասաց ճիշտ է, կլոր է, բայց կեսը ջուր է: Ես ասացի երկրագունդը օդով է պատած, Պուղին պատասխանեց՝ նաեւ աստղերով, տիեզերքով: Յետո ցույց տալով ցուցամատս ասացի՝երկնքում միայն արեւն է, Պուղին ասաց՝ բա լուսի՞նը: Այս ճիշտ պատասխանների համար էլ ես գովեցի նրա իմաստությունը:

Իսկ երբ Մելիք Շահնազարը եւ ուրիշները բացատրություն պահանջեցին Պըլը Պուղուց, նա բացատրեց այսպես.

- Ֆրանսիացի աստղագետը մի կլոր շրջանագիծ գծելով հարցրեց՝ Պուղի, մի մեծ աման փլավ կա, կուտե՞ս, միջից կիսեցի, ասացի՝ կեսը կուտեմ: Յետո նա մի ուրիշ շրջանագիծ գծեց նրա վրայով, ասելով՝մի լագան խորոված կա, կուտե՞ս: Ես էլ մի շրջանագիծ քաշեցի, այսինքն ասացի՝բեր բերանը փակենք, շուտ չհովանա, մինչեւ փլավը ուտեմ: Այդքանից հետո նա մի մատը ցույց տվեց, ուզում էր ասել՝ Պուղի, աչքդ կհանեմ: Ես էլ իմ երկու մատը ցույց տվի եւ ասացի՝ աչքերդ էլ կհանեմ, ականջներդ էլ կպոկեմ, խելոք կաց, հա՛, քեզ հետ խոսողը ղարաբաղցի Պըլը Պուղին ա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ Է ԽՈՍՈՒՄ

Մելիք Շահնազարը Պըլը Պուղուն ուղարկեց Թեհրան, որ այնտեղ պարսկերեն գրել-կարդալ սովորի: Պըլը Պուղին վեց տարի մնաց այնտեղ ու երբ վերադարձավ Ավետարանոց, Մելիք Շահնազարը նրան հարցրեց.

- Պուղի, պարսկերեն սովորեցի՞ր:

- Սովորեցի, բա փեշակս ի՞նչ էր:

- Դե լավ, ուղտին ի՞նչ կասեն:

- Դա շատ ա մեծ, էդքան մեծ-մեծ բաներ չեմ սովորել:

- Մրջյունին ի՞նչ կասեն:

- Դա էլ շատ է պիծի, Մելիք Շահնազար, էդքան պիծի բաների հետ ի՞նչ գործ ունես:



- Ա տղա, բա գլխին ի՞նչ կասեն:

- Սյար:

- Մազերի՞ն:

- Սըրախոտ:

- Միրուքի՞ն:

- Սըրավել:

- Բեղերի՞ն:

- Սըրահաքի:

- Աչքերի՞ն:

- Սըրալուսամուտ:

- Ականջների՞ն:

- Սըրապատուհան:

- Վզի՞ն:

- Սըրակոթ:

- Քթի՞ն:

- Սըրանավ:

- Պուղի՛, այ տղա, դու հո կարգին գիտնական ես դարձել:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԾԱՆՈԹԸ

Ձմռան մի գիշեր, երբ Պըլը Պուղին Մելիքի տնից գնում էր իրենց տուն, փողոցում մի անծանոթ կանգնեցնում է նրան ու խեղճ-խեղճ խնդրում:

- Ախպերացու, ինձ մի գիշեր ղոնաղ չե՞ս պահի:

- Ղոնաղը տան վարդն ա, - ասում է Պըլը Պուղին ու նրան տանում տուն:

- Կնիկ, ջուրը տաքացրու, ձեռք ու ոտը լվանա ու մինչեւ մենք մի բերան զրույց կանենք, դու սեղան կբացես: Դե գործիդ կաց, մի հավ եփիր, գինի ու օղի բեր:

Այդ գիշեր Պըլը Պուղին իր հյուրին մի լավ պատվեց: Յյուրը ամեն բաժակը դատարկելով, դառնում էր տանտիրոջը.

- Ախպեր Պողոս, թե ոտդ ընկնի մեր գյուղը, էն ժամանակ ես գիտեմ՝ ինչպես կպատվեմ քեզ:

- Իսկ դու որտեղի՞ց ես:

- Սեյդիշենացի:

- Իմացանք, Թեւոս ախպեր:

- Չէ, ես ուզում եմ մի անգամ էլ դու հյուր մնաս իմ տանը:

- Այ Թեւոս ախպեր, սարն ա, որ սարին չի հանդիպում, մարդը մարդուն կհանդիպի:

Մի տարի հետո Պըլը Պուղին գործով գնաց Սեյդիշեն, Թեւոսի տունը, սա ձեւացրեց, թե չի ճանաչում նրան:

- Ադա, ես Պուղին եմ, էլի՛:

- Պուղին ո՞վ ա:

- Յա, էն որ մի գիշեր Ավետարանոցում մնացիր իմ տանը:

- Ասում ես, էլի, ով գալիս է, ասում է՝ ես Պուղին եմ, էդքան բախտը ինձ որտեղի՞ց, որ իմ ախպեր Պուղին գա ինձ մոտ, վեր կենամ ոչխար մորթեմ, հնգեր-հարեւան հավաքեմ, քեֆ անեմ:

Պըլը Պուղին հասկանում է ժլատ ու անհյուրընկալ Թեւոսի խորամանկությունը, կանչում է մեկ ուրիշ ծանոթի ու հարցնում.

- Ադա, Մարտիրոս, մի տեսեք էս ե՞ս եմ, կարող ա պատահի ճանապարհին փոխս եմ ընկել:



ԷԾԸ ՑԵԽՈՒՄԸ ԿՄՆԱ

Պըլը Պուղու հարեւան Ղազարը անտառից փայտ է բեռնում էշին, մի ջվալ լիքը տանձ էլ դնում բեռան գլխին ու բռնում տան ճանապարհը:

Քիչ հետո էշը նստում է ծանր բեռան տակ: Ղազարը պոչից քաշում է, որ բարձրացնի, բան չի ստացվում:

- Մի հոգի էլ հարկավոր է էշի գլխից բռնի ու բարձրացնի, - մտածում է Ղազարը ու բարձրաձայն մտմտում.

- Տեր աստված, մի մարդ լիներ, օգներ, էշը կբարձրանար տեղից:

Այդ պահին որտեղից-որտեղ անտառում երեւաց Պըլը Պուղին ու հոժարակամ սկսեց օգնել Ղազարին: Յենց էշը ուզում էր ոտքի կանգնել, Ղազարը սկսեց աղաչել աստծուն.

- Ես քեզ մատաղ, աստված... հո՛ւ, հո՛ւ, օգնիր բարձրացնենք:

Պըլը Պուղին լսելով Ղազարի աղերսանքը, բաց թողեց էշի վիզը ու անասունը նորից չոքեց ցեխի մեջ: Յետո Պըլը Պուղին շարունակեց իր ճանապարհը, իսկ Ղազարը նրա հետեւից կանչեց.

- Ա Պուղ, բա էշը ցեխից ո՞վ պիտի բարձրացնի, որ դու գնում ես:

- Աստված, Ղազար, ես աստծու մոտ ինչացու եմ, կանչիր աստված գա:

- Ա Պուղ, ես էլ հո՞ Մելիքը չեմ, որ պատժում ես, էսքան տարվա հարեւան ենք, հիմի էշը թողնում ես ցեխի մեջ նստած, գնամս:

- Այ Ղազար, ախր էշը քիչ էր մնացել ցեխից հանեինք, դու էդ աստծու անունը որտեղի՞ց տվիր, ես իմ հոգին, որ աստծո անունը տալիս ես, իմ էծերը գալիս են: Դե լավ, եկ էշը ցեխից հանենք, բայց մյուս անգամ չեղած բաներ չխոսես, թե չէ հույսդ որ աստված մնա, էշդ ցեխում կմնա:

## ՄԵԼԻՔԸ ԹՈՂ ԳԼՈՒԽԸ ՏԱՆԻ ԻՐ ՀԵՏ

- Խանում, Մելիքը տանն ա՞, - մի օր հարցրեց Պըլը Պուղին:

Մինչեւ խանումը կպատասխանի, Մելիքը գլուխը հանեց պատուհանով, թե տեսնի ով է կանչողը եւ նկատելով Պըլը Պուղուն, էլի ետ քաշեց. Պըլը Պուղին էլ նրան նկատեց, բայց բան չասաց:

- Տեսնես Պըլը Պուղու աղն է պակաս, թե մաղը, որ եկել ա ինձ մոտ, ասա Մելիքը գնացել է Ամարաս, - կնոջը շշնջաց Մելիքը. կինը դուրս եկավ պատշգամբ ու քաղցրությամբ ասաց.

- Մելիքը տանը չի, Պուղի, գործով գնացել ա Ամարաս, որ գա, ի՞նչ ասեմ նրան:

- Ասա մյուս անգամ որ տնից ուրիշ տեղ գնա, գլուխը իր հետ տանի:

## ՊԼԸ ՊՈՒՂՈՒ ՎՃԻՌԸ

Մի օր Ղազարի ղոչը մտնում է տերտերի հարեւան Արզումանի արտը. Արզումանը բռնում է ղոչը, գցում գոմը, հետո Ղազարին ու տերտերին կանչում իր մոտ: Արզումանը տերտերին աչքով է անում, բան հասկացնում, տերտերը կեղծ բարկանում է Արզումանի վրա, կարգադրում, որ ղոչը դուրս բերի գոմից, ու երբ ղոչը դուրս են բերում, տերտերը ահով ետ-ետ է գնում.

-Արզուման, էս ղոչը իր կամքով չի մտել քո արտը: Արա, պոզի տակ սատանաներ են նստած: Հիմի էսպես ա բանը, թե Ղազարը ղոչը թողնի քեզ մոտ, ինքն է մեռնելու, թե տանի տուն, կինն է մեռնելու:

Տերտերի միտքն այն էր, որ ղոչը ինքը վերցնի, բայց Ղազարը վազեց Պըլը Պուղու մոտ ու այս բոլորը ցավով պատմեց նրան:

- Կաց, Ղազար ջան, օրը կիրակի, ես ու դու էլ պարապ մարդիկ, ղոչը հոր մնա այնտեղ, որ դու մեռնես, եւ հոր բերես



տուն, որ կինդ մեռնի, բեր տանենք Ցուրտ աղբյուրի մոտ մորթենք, խորոված անենք, ուտենք, դու էլ ողջ մնա, կինդ էլ: Արզումանի արտն էլ ազատվի նրանից ու դեռ տերտերի ահն էլ անցնի, համաձա՞յն ես:

- Ղազարը քո իմաստուն զրույցից ե՞րբ ա դուրս եկել:

## ԽՆՈՒՇԻՆԱԿԻ ՏԵՐՏԵՐԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Պըլը Պուղին գործով գնացել էր Խնուշինակ: Այդ օրը ժամերգություն կար եկեղացում, Պըլը Պուղին էլ գնաց այնտեղ: Երբ սկսեց արարողությունը, տերտերը իբր թե ավետարան է կարդում ու երգում, սկսեց ինքն իր համար անհասկանալի մռթմռթալ, ապա երգեցիկ ձայնով արտասանել.

- Երկնքովը դուշ ա թռչում, դե-դին ա՛:

Հետո այդ նույն նախադասությունը ասաց բոլորովին ցածր ձայնով, ապա՝ նորից բարձր ձայնով: Նրա երգի հետ ժողովուրդը խոնարհվում, մոտենում էր, համբուրում խաչը ու փող դնում ավետարանի վրա:

Լսելով տերտերի այս տեսակ «ժամերգությունը», Պըլը Պուղին մոտենում է տերտերին ու նրա ականջին նույն երգեցիկ ձայնով շշնջում.

- Տեր հայր, էս ժողովրդի հերը որ անիծես էլ, տե-դին ա:

## ՀԱՎԸ ԽԵԼՈՔ Է ՄԵԼԻՔԻՑ

Ինչ շան լափ ասես, որ Պըլը Պուղին չէր թափում Մելիք Շահնազարի գլխին: Ճիշտ է, Պըլը Պուղու խայթոցից մեկ-մեկ բարկանում էր, բայց չէր ցանկանում պատժել նրան: Ասենք ինքը՝ Մելիք Շահնազարն էլ էր հասկանում, որ Պըլը Պուղին շատ խելոք, իմաստուն մարդ է, առանց նրան դժվար կլինի երկիրը

կառավարել, դրա համար էլ նրա խոսքերը միշտ կատակի տեղ է դնում:

Այս անգամ էլ երկու կին մի հավ բռնած մտան Մելիքի բակը եւ սկսեցին զանգատվել:

- Այս հավը իմն է, - ասաց նրանցից մեկը:

- Սուտ է, իմն է, - ձայնը բարձրացրեց մյուսը:

- Վկա ունե՞ք, - հարցրեց Մելիքը:

- Չէ, չունենք:

- Դե կռվեցեք, ով հաղթի, թող հավը վերցնի:

Պըլը Պուղին, որ լսում էր Մելիքին, անմիջապես կանգնեց կռվողների մեջտեղը.

- Կացեք, օրվա այս ժամին ես եմ վճռում բոլոր դատական գործերը, - ասաց նա ու կեղծ բարկացավ Մելիքի վրա:

- Արա, Մելիք Շահնազար, դու ի՞նչ իրավունքով ես խառնվում իմ գործերին:

- Լավ ես ասում, Պուղ, դատը սկսիր:

- Հավը տվեք ինձ: Այ, այդպես, դե հիմա թող Մելիք Շահնազարը եւ այս երկու կինը հետեւեն ինձ:

Պըլը Պուղին հավը գրկած Մելիքի եւ կանանց հետ դուրս եկավ փողոց, կանգնեց կռվարար հարեւանների տների արանքում ու հավը բաց թողեց: Արդեն իրիկուն էր, հավը գնաց իր տիրոջ բակը, մնացած հավերի հետ մտավ բունը: Կանայք հասկացան Պըլը Պուղուն ու դրանով էլ հարցը լուծվեց: Երբ հարեւանները հաշտ ու բարիշ տուն գնացին, Պըլը Պուղին Մելիք Շահնազարի ականջին շշնջաց.

- Մելիք, տեսա՞ր, հավը քեզանից խելոք դուրս եկավ:



ՈՒԶՈՒՄ Է ԿՈՏՐԵԼ ՔՈՌԱԿԻ ՄԵՋՔԸ

Ղազարի տունը տուրուդմբոց է ընկել: Երեւի էլի լաչառ կինը բարկացրել էր Ղազարին, Ղազարն էլ ինչ տղամարդ է, որ իր առավելությունը չհաստատի կնոջը ծեծելով: Որ շատ կռվեցին մարդ ու կին, Պըլը Պուղու կինը դարձավ ամուսնուն.

- Ա Պուղ, վեր կաց, միասին մտնենք Ղազարի տունը, լավ չի, էսքան տարվա հարեւան ա, կսպանի կնոջը, հետո ուշ կլինի մեր խոսքն ու խորհուրդը:

- Հա, կնիկ, գնալը գնանք, բայց ես իմ հոգին, մեջտեղ մի լուրջ բան չի լինելու:

Երբ ներս մտան, Ղազարը նստած չիբուխ էր քաշում, իսկ կինը կարտոֆիլ էր խորովում՝ օջախի տաք մոխրի մեջ:

- Արա, Ղազար, էլի ի՞նչ ա պատահել, էդ ի՞նչ ղալմաղալ է, ինչու՞ ես գժվել:

- Էլ ի՞նչ պատահի, երեկ Պարտավում ձիու մի սիրուն քռակ տեսա, էն ինչ մեջք ու ոտքեր ուներ, իսկական ջեյրան էր, մտքովս անցավ առնել, մեկ էլ հրաժարվեցի: Շատ էր պուճուր, նրան հիմա բեռան տակ դնելը մեղք ա: Քռակը թողեցի, մի ջրի առա: Հիմի էդ ձիու քռակի մասին ես պատմեցի, կինս թէ՝ ինչու չես առել բերել, որ նստեմ գնամ իմ հերանց տուն: Ասում եմ՝ այ կնիկ, ախր դեռ շատ ա մատղաշ, դիմիշդ ո՞նց կգա նրա վրա նստես, սա թէ՝ քո ինչ գործն է, դու բերեիր:

- Ուրեմն առնեմ, բերեմ, որ նստես մեջքը կոտրի՞, - հարցրի:

- Հա, թող կոտրի:

- Այ կնիկ, ուրեմն ուզում ես 10 ոսկիս վըզ գնա՞:

- Հա, թող գնա:

- Ես քո դեսը ուղարկողի, մինչեւ դու էն քռակի մեջքը կոտրես, ես քո կողերը կջարդեմ: Բա՞, Պուղի ջան, մարդ պիտի վատ կնկա ձեռքը չընկնի, որ ընկավ, էլ նրանից ազատում չկա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿԱՄ ԽԱԲԵԼ Է, ԿԱՄ ՉԻ ՀԱՍԿԱՑԵԼ

Մի օր երկու հաթերքցի գալիս են Պըլը Պուղու մոտ ու նրանից խորհուրդ հարցնում.

- Ա Պուղ, քո անունը, քո համբավը լսել ենք, եկել քեզ մոտ, ուզում ենք հարստանալ, ի՞նչ անենք:

Պըլը Պուղին իմանալով, որ սրանք «թոռնըս գնում» մարդիկ են, կատակով պատասխանում է.

- Լավ եք արել, որ եկել եք ինձ մոտ: Հարստանալու համար էս աշխարհում մարդուն երկու բան ա հարկավոր, խելք եւ ուժ, դուք ունե՞ք դրանցից:

- Ինչքան ասես, - պատասխանում են նրանք:

- Բա ինչու՞ չեք հարստանում:

- Էդա, էլի, որ չգիտենք:

- Դե լավ, ձեր կողմերում կաղի՞ն ա բսնում:

- Շատ:

- Գնացեք քաղեցեք, տարեք հանդերում շաղ տվեք, ոչխար է բսնելու:

Երկու հաթերքցին գալիս են մի-մի ջվալ կաղին քաղում, տանում շաղ տալիս հանդերում: Մի առավոտ էլ գյուղից նայում են, տեսնում հանդերը լցվել են ոչխարով: Սրանք մի-մի մահակ են առնում ու գալիս ոչխարը հավաքում, որ քշեն, բերեն տուն, հովիվը գալիս, բարկանում է նրանց վրա.

- Ի՞նչ եք անում:

- Քո ի՞նչ գործն ա, ինչ ենք անում, մեր ցանած ոչխարը հավաքում ենք, տանենք տուն:

- Ի՞նչ ոչխար, ի՞նչ բան, մեր տանուտերի ոչխարն են սրանք:



Այստեղ տալիս են ու կռվում:

- Էս ոչխարի սերմը՝ կաղինը, մենք ենք շաղ տվել, - պնդում են երկու հաթերքցիները:

- Արա, շաշ-շաշ մինչեւ այստե՞ղ, կաղինից խոզի ճտերն են բսնում, ոչ թե ոչխարներ, - տեսնելով, որ մարդկանց ծալը պակաս է, ասում է հովիվը:

- Չոբան ախպեր, էդ մեր խելքն էլ ա կտրում, ուրեմն Պըլը Պուղին կամ խաբել ա մեզ, կամ էդ հասարակ բանը չգիտեր:

## ՏԵՐՏԵՐԸ ԴԱՆԳԼԱ Է

Հաթերքցիք մի ուղտ, մի ձի, մի ջորի, երկու էշ ուղարկեցին Ավետարանոց՝ Պըլը Պուղուն որպես վարձ եւ խնդրեցին մի շաբաթ մնա իրենց գյուղում, բարի խորհուրդներ տա մարդկանց: Պըլը Պուղին ընդունեց վարձը ու գնաց:

- Ա Պուղ, ամենից շատ նեղվում ենք քշաթոխպից, գալիս, լցվում ա մեր հանդերն ու ձորերը, աչքներիս առաջը էլ տեսնում չընք: Գել ու գազան, գող ու ավազակ էդ մթան մեջ քեֆ են անում: Հիմի ի՞նչ անենք, որ էդ ամպերը էլ դեպի մեզ չգան, ի՞նչ ա, էս մեծ աշխարհում մեր հանդերից բացի ուրիշ տեղ չկա՞:

- Ժողովուրդ, զինվեցեք, որը մահակով, որը սրով, որը թրով, մեկ էլ որ քշաթոխպը եկավ, քշեցեք գնա:

- Թարսի պես այդ գիշեր քշաթոխպը պատեց, ու առավոտյան առանց Պըլը Պուղու հրամանի, ամենքը գործի անցան: Ամբողջ օրը հալածեցին ամպերին, բայց ոչ մի բան չստացվեց: Իրիկունը հավաքվեցին, գանգատվեցին տերտերին, այն տերտերին, որ իրենց հետ լուծը ձեռքին հալածում էր ամպերին:

- Պըլը Պուղին մեզ խաբել ա, գնանք պատիվ պահանջենք:

Տերտերի գլխավորությամբ եկան-կանգնեցին Պըլը Պուղու առաջ ու խիստ դժգոհեցին: Ամենից շատ, իհարկե, տերտերն էր դժգոհ:

- Ժողովուրդ, տեսնու՞մ եք տերտերի ձեռքի լուծը, մի տեսեք քանի ծակ կա նրա վրա, դե իհարկե, ամպը այդ ծակերով հետ է դարձել, եկել:

Մարդիկ նայեցին տերտերի լծին ու մեղմացան:

- Միտր, ասում ենք, որ Պըլը Պուղին մեզ չի խաբի, ո՞վ է մեղավոր, որ մեր տերտերը դանգալա յա, բա ծակ լծով ամպի դեմ կռիվ կգնա՞ն:

## ✓ ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ

Մի օր աղքատ Աբելը գալիս է Պըլը Պուղու մոտ ու գանգատվում.

- Ա Պուղ, արտս իրեն Քարահունջի քարափի գլխին, գյուղի մոտ: Մի քանի վատ հարեւան ունեմ, էշերը բաց են թողնում, գալիս են արտս մտնում:

- Այդ մասին հայտնե՞լ ես տանուտերին:

- Հայտնել եմ, ասում ա արտ ունես, պահիր, դե ես էլ հո բան ու գործ թողած տարին բոլոր պահակ չե՞մ կանգնելու իմ արտի վրա:

- Այդ իշատերերը ունեւոր մարդիկ ե՞ն, - հարցրեց Պըլը Պուղին:

- Ունեւոր են, քյասիբը քյասիբի արտը կա՞վերի՞:

- Լավ, այ Աբել, հիմա մի մեթոդ սովորեցնեմ, որ համ նրանց էշերը ընկնեն քարափից սատկեն, համ արտդ փրկվի, համ էլ սատկած էշերի համար քեզանից ջարման չառնեն: Մենակ թե ինչ-որ սովորեցրի, ես պիտի իմանամ, մեկ էլ՝ դու: Էսպես արա. հավաքիր օջախիդ մոխիրը, տար քարափի ծերին շաղ տուր, է-



շերը արածելուց հետո կգան, թավել կտան ու հոպ, կընկնեն քարափի տակ:

Աբելը կատարեց Պըլը Պուղու խորհուրդը, հետո նրա հետ նստեց եկեղեցու պատի տակ ու նայեց դիմացի քարափին:

- Հոպ, ա Պուղ, էս մեկ, - նա մի քար դրեց իր մոտ, աչքով արավ Պըլը Պուղուն:

Երեկոյան դեմ արդեն Աբելի մոտ 5 քար կար, դրանք քարափի գլխից ընկած էշերի թիվն էին:

## ԵՂԱԾԻՑ ԿԳՈՂԱՆԱՆ

Մարդիկ եկան ու բողոքեցին Պըլը Պուղուն.

- Բա չես ասի, ա Պուղ, քո խոսքերը, մտքերը, կատակները ուրիշները գողանում, տանում են:

Պըլը Պուղին լսում է ու ծիծաղում.

- Վնաս չունի, ձեզ մատաղ, միշտ եղածից են գողանում, չեղածից չեն գողանա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԿԱՑԻՆԸ

Պըլը Պուղին փայտ պիտի կտրեր, խնդրեց կնոջը կացինը բակ բերել: Կինը նույն բանը խնդրեց մեծ աղջկանը, մեծ աղջիկը՝ միջնեկ աղջկանը, միջնեկը՝ փոքր: Տեսնելով այդ ամենը, Պըլը Պուղին բարկացավ.

- Վա՜հ, ա բալամ, էսքան ժամանակ չգիտե՞ք, որ մենք միայն մի կացին ունենք, ամենքդ մի կացին որտեղի՞ց պիտի բերեք:

## ԳԵԼԵՐԸ ԽԱՉՈՒՆ ԹՈՂԵԼ, ԺԻՆՋԻԼՆ ԵՆ ԿԵՐԵԼ

- Ա Պուղ, քե մատաղ, խոջա Խաչին հու՞նց մարդ ար, - մի օր հարցրեց Պըլը Պուղու հարեւան Ղազարը:

- Հերը՝ խոջա Մոսին, ինչ էր, որ տղան ինչ լիներ: Մարդիկ Խաչուն տարան ժինջիլով կապեցին անտառի մի կաղնուց, գելերը եկան ժինջիլը կերան, իրեն թողեցին:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Մի վաճառական Մելիք Շահնազարի համար ոսկե շղթայով արծաթե ժամացույց բերեց: Մելիքը այն ցույց տվեց Պըլը Պուղուն.

- Այդ ի՞նչ ա, Մելիք, - հարցրեց Պուղին:

- Ժամացույց: Սրանով որոշում են ժամանակը:

- Լավ, հիմա ժամը քանի ՞սն ա:

- Ժամը երկուսը:

Հաջորդ օրը նույն ժամին Պուղին հարցրեց Մելիքին.

- Ժամը քանի ՞սն է:

- Ժամը երկուսը:

- Այ մարդ, ժամացույցիդ սլաքները մեխած ա, մի օր հետո էլի ժամը երկուսն ա ցույց տվել, բա իտի ժամացույց կինի՞:

## ՉԱՆԱԴ Է ԾՈՒՌ

Պըլը Պուղին Մելիք Շահնազարի անձնական վարսավիրն էր: Մի օր նա ծուռումուռ խուզեց միրուքը: Մելիքը հայելու մեջ տեսավ միրուքը, կանչեց Պըլը Պուղուն ու նախատեց.

- Ա մեռած, դու ե՞րբ ես կարգին դալլաք դառնալու:

- Ի՞նչ ա եղել, Մելիք Շահնազար:

- Արա, էս ինչու՞ ես միրուքս ծուռ խուզել:

- Ծուռ չեմ խուզել, Մելիք Շահնազար, չանադ ա ծուռ, հարկավոր ա գնալ դամրչի Ավետիսի մոտ, թակի չանադ տեղը գցի:



## ՈՒՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

- Արա Պուղի, մարդ ե՞րբ ա ուտում, ե՞րբ ա ուտելու լավ ժամանակը, - հարցնում է Մելիքը:

- Յա, էդ ի՞նչ հարցնելու բան ա, որ հարցնում ես: Դու երբ ուզես կարող ես ուտել, որովհետեւ հարուստ ես, իսկ ես կարող եմ ուտել, երբ ուտելու բան ունենամ:

## ՊԱՐԱՎՈԶԻ ԳՅՈՒՏԸ

Մելիք Շահնազարը լսում է, որ Ռուսաստանում մի գիտնական պարավոզ է ստեղծել: Մի օր նա այդ մասին պատմում է Պըլը Պուղուն:

- Էդ ի՞նչ բան ա, - հարցնում է Պըլը Պուղին:

- Տան նման բան ա, երդիկից ասում են՝ ծուխա դուրս գալիս ու էդ ծխով միանգամից 10-20 տուն ա տանում իր հետեւից:

- Հավատաս ոչ, որ ծուխը այդպիսի հունար ունենա, քո բաղնիքի ծուխը իր հետեւից Բաղդադ կհասցներ մեր գյուղի տները:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳԵՐԱՆԸ ՆՍՏԱԾ Է ԿՏՐՈՒՄ

Պըլը Պուղին նստել էր գերանի վրա ու կտրում էր այն, երբ բակ մտավ Մելիքը:

- Բարի օր, ա Պուղ:

- Աստծո բարին, Մելիք Շահնազար:

- Արա, քեզանից մուհալ մարդ չկա աշխարհում, էդ ինչու՞ նստած ես կտրում գերանը:

- Բա ի՞նչ անեմ, Մելիք Շահնազար, փորձեցի պառկած կտրել, չստացվեց, - կատակեց Պըլը Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՆՈՒՆ Է ԴՆՈՒՄ

- Քավոր Պողոս, արի մեր նորածին երեխան տար ժամ՝ տերտերի մոտ, մի լավ անուն դիր, - մի օր խնդրում է Ղազարը:

- Աչքիս վրա, - ասում է Պըլը Պուղին ու երեխան տանում եկեղեցի:

- Երեխի անունը ի՞նչ ես դնում, - հարցնում է տերտերը:

- Պողոս:

- Ադա, բա դա քո անունը չի՞, - հարցնում է տերտերը:

- Բան չկա, տեր հայր, ես երկու անուն ունեմ, համ Պողոս եմ, համ Պըլը Պուղի, իսկ Ղազարի տղեն ոչ մի անուն չունի: Անունը Պողոս կնքի, պրծնի գնա:

## ԿՈՐԱԾ ՄԱՆԵԹԸ

Կարկառը վարարում է, մի մարդ երկու ոչխարի հետ կանգնում է նրա ափին ու խնդրում Պըլը Պուղուն.

- Օգնիր, ոչխարներս մյուս ափը հանեմ:

- Աչքիս վրա, ամեն մեկին մի մանեթ ես տալու:

Այս պայմանով Պըլը Պուղին ոչխարներին կռնատակն է առնում, մտնում գետը: Ոնց է պատահում, ոչխարներից մեկը ընկնում է գետը, ջուրը քշում-տանում է: Մարդը հարայ-հրոց է բարձրացնում, իսկ Պըլը Պուղին հանգիստ ասում է.

- Դե ի՞նչ ես զահլա տանում, թքած մի մանեթի վրա, հիմի էլ մի մանեթ պակաս կտաս ինձ:



## ԳՈՂԸ ՄԵՂՔ ՉՈՒՆԻ՞

Պըլը Պուղին գանգատվում է Մելիքին.

- Ոչխարներս գողացել են:

- Ե՞րբ:

- Այս գիշեր:

- Բա դու որտե՞ղ էիր:

- Քնած:

- Ադա, բա ապրանք ունեցողը կքնի՞: Լավ, ինչպե՞ս տարան, փարախի դուռը բա՞ց էր, թե՝ փակ:

- Բաց էր:

- Ադա, բա փարախի դուռը բաց կթողնեն ու քնե՞ն: Լավ, շուն չունե՞ս:

- Ունեմ:

- Բաց թողա՞ծ էր, թե՞ կապած:

- Կապած էր:

- Ադա, բա ապրանք ունեցողը գիշերը շանը կկապի՞:

- Մելիք Շահնազար, հենց հարցեր ես տալիս, կարծես ես եմ մեղավորը: Լավ, բա գողը սկի մի բանում մեղավոր չէ՞:

## ԳԵԼԸ ՅՈՒ ՓՈՂ ՉՈՒՆԻ, ՈՐ ՄԻՍ ԳՆԻ

Գայլը ուտում էր Մելիք Շահնազարի ոչխարը, Մելիքը կանչում է չոբան Ապետին եւ նախատում.

- Ա շան որդի, գելը ինչու՞ ա կերել իմ ոչխարը:

- Չգիտեմ, Մելիք:

- Չոռ ու զահրումար իմանաս: Դե գնա, մի անգամ էլ որ նման բան պատահի, գլուխդ կկտրեմ:

Այս խոսակցությունը լսելով, Պըլը Պուղին դարձավ Մելիքին.

- Մելիք Շահնազար, հանդի գելը հո փող չունի՞, որ միս գնի: Նա պիտի ոչխար գողանա, ուտի, աստծուց ներդաց, որ նրան մսակեր է ստեղծել ու գցել չոլերը, թե չէ Ապետը ի՞նչ մեղք ունի:

ՓԱՐԻԶԵՑԻՔ ՅԱՄ ԼԱՎ ՄԱՐԴԻԿ ԵՆ.
ՅԱՄ ՎԱՏ

Պըլը Պուղին գնում է Փարիզ, մի քանի շաբաթ մնում ու ետ է գալիս Ավետարանոց: Մարդիկ հավաքվում են, հարց ու փործ անում:

- Ա Պուղ, ինչ կերել ես քեզ հալալ, ինչ տեսել ես, պատմիր, մենք էլ իմանանք:

- Ի՞նչ մարդիկ են փարիզեցիք, - հարցնում է մեկ ուրիշը:

- Յամ լավ մարդիկ են, համ՝ վատ:

- Ո՞նց:

- Էնպես, էլի, լավ մարդիկ են նրա համար, որ երբ սիրտդ ուզի, ինչ ցանկանաս, կարող ես մտնել ճաշարան, ուտել:

- Էդ լավ ա:

- Լավը լավ ա, եթե կերած հացի, կերակրի փողը չվերցնեն, շան որդիների երեսին աբռո չկա, հաց են տալիս ղոնաղին, հետո էլ թե՝ փողը տուր:

- Յա՛:

- Բա, Փարիզը էդպես ա, խելքդ մեզ չգնա, որ ղոնաղի առաջ աջառը պարան տանք, մորթենք ու քեֆ անենք հետները:



ԷՍՏԵՂ ԳԻՆՈՒ ՊԱԴՎԱԼԸ ՈՐՏԵՂ Ա

Ղազարը շատ էր խմում, ու երբ տուն էր դառնում, տան գործերը թողած, քնում էր երեսնիվայր: Կինը եկավ բողոքեց Պըլը Պուղուն.

- Պուղի, ես քե մատաղ, հարեւանընք, մի ճար արա, Ղազարը շատ ա խմում:

- Որ մեկ էլ հարբած գա տուն, ինձ կանչի:

Յենց այդ երեկոյան Ղազարի կինը կանչեց Պըլը Պուղուն: Պուղին գնաց տեսավ Ղազարը խռմփացնում է քնի մեջ:

- Մի դագաղ սարքեցեք, - կարգադրեց նա:

Երբ դագաղը բերին, Պուղին Ղազարին դրեց դագաղի մեջ, կափարիչը դրեց վրան ու մեխեց: Ղազարի կինը սկսեց սուգ անել:

- Վա՛յ, Պուղի ջան, Ղազարիս կենդանի մի թաղիր:

- Աղջի, ղալմաղալ մի արա, - ասաց ու դագաղը դրեց սեղանի վրա, կողքին նստեց այնքան ժամանակ, մինչեւ Ղազարը ուշքի եկավ ու սկսեց դագաղից կանչել կնոջը:

Պըլը Պուղին կարգադրեց, որ իրենից բացի ոչ ոք չխոսի:

- Վա՛յ, այս որտե՞ղ եմ ես, - նորից կանչեց Ղազարը:

- Մեռել ես, Ղազար, հիմա դագաղի մեջ ես, գերեզմանում:

- Արա, բա դու ո՞վ ես, որ իմ ձենը լսում ես:

- Ես Պըլը Պուղու պապն եմ, Մասխարա Զաքարը:

- Յոգուտ մատաղ, Զաքար, բա դու հիսուն տարի առաջ չե՞ս մեռել:

- Յա, էդքան ժամանակ կլինի:

- Ուրեմն, դու հին մեռել ես, որ այդպես ա, էստեղ գինու պադվալը որտե՞ղ ա:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՄԵՂԱ Է ԳԱԼԻՍ

Ձմեռուկ էին քաղում բանջարանոցից: Պըլը Պուղին նայեց նրա մանր թփերին ու ասաց.

- Աստված, ինչու՞ շատ բան թարս ես ստեղծել, ախր ճղպորին էնքան մեծ, պտուղը կաքավի ծվի չափ, իսկ ձմերուկի թաղը էսքան փոքր, պտուղը մի փթանոց:

Մի ամսից հետո, երբ ընկույզ էին թափում, ընկույզը կարկուտի պես թափվում էր նրա գլխին, ուսերին, նա չոքեց ու երեսը դարձրեց դեպի երկինք.

- Ես մեղա, ա կյապուտ երկինք, ես սխալ եմ, աստված՝ ճիշտ: Իմ հալը ի՞նչ կլիներ, որ ճղպորի ծառից ձմերուկի չափ ընկույզները գլխիս ընկնեին:

## ԵՐԿԻՐԸ ԴԱՐԱԴ ՉԻ ՄՆՈՒՄ

- Ա Պուղ, էս ֆրանցուզի գիտնականներն ասում են, որ երկիրը պտտվում է արեւի շուրջը, բա երբ արեւ չի լինում, երկիրը ի՞նչ բանի ա լինում, հո պարապ չի մնում:

- Չէ՛, Մելիք Շահնազար, երկիրը ջաղացքարի նման մի բան ա, պտտվում ա տեղում եւ ժամանակի աղունը աղում:



## ԶՈՒՌՆԱՆՉԻ ՅԱԲՈՒ ՎԱՐՁԸ

Մելիք Շահնազարը զուռնանչի Յաբու հետ պայմանագիր ուներ կնքած, տարեկան 12 ոսկի պիտի տար, իսկ Յաբին դրա համար պիտի իր խմբով գնար, նվագեր նրա տանը: Պըլը Պուղին գիտեր, որ Մելիքը հետո կամ չի կատարի իր խոստումը, կամ էլ պակաս կտա վարձը: Դրա համար մի օր կանչում է Յաբուն եւ հարցնում.

- Նվագի համար Մելիքը քեզ քանի՞ ոսկի ա խոստացել:

- Տարեկան 12 ոսկի:

- Շատ լավ: Ես խոստանում եմ քեզ տարեկան 22 ոսկի տալ, եթե նրա տանը չնվագես:

- Աչքիս վրա, էլ չեմ նվագի:

Անցնում է մի որոշ ժամանակ, Մելիքը տեսնում է, որ Յաբին չի գալիս իր տունը, չի ուզում նվագել: Մի օր էլ կանչում է ու հարցնում.

- Արա Յաբի, ինչու՞ չես գալիս, նվագում իմ տանը, ախր ես քեզ տարեկան 12 ոսկի եմ խոստացել:

- Մելիքն ապրած կենա, ախր Պըլը Պուղին էլ 22 ոսկի է խոստացել չնվագելու համար:

- Յա, արա այդքան ոսկին որտեղի՞ց է նրան, որ տա քեզ:

- Էդ Պուղուց հարցրու:

Մելիքը կանչեց Պըլը Պուղուն ու հարցրեց.

- Մեծ-մեծ խոստումներ ես տալիս, որտեղի՞ց ես տալու 22 ոսկին:

- Է՜, Մելիք Շահնազար, դու 12 ոսկի ես խոստացել, ես՝ 22-ը: Դե որ խոստպնալով է, ես ինչու՞ պետք է քիչ խոստանամ: Տղամարդ ես, էս գլխից էդ մարդու փողը տուր, վեճը փակենք, գնա: Ես ծառա մարդ եմ, իմ խոսքը որ սուտ դուրս գա, ոչինչ, իսկ դու Մելիք ես, խոսքիդ տեր եղիր միշտ:

Մելիք Շահնազարը ստիպված տալիս է հաբու վարձը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՔԱՎԱՐԱՆՈՒՄ

Պըլը Պուղին երազում մտավ քավարան եւ սկսեց խոստովանել իր մեղքերը:

- Տէր հայր, ասաց նա, - ամիսը մի անգամ եմ գնում եկեղեցի, աղոթում, որ Մելիք Շահնազարը ջուտ մեռնի:

- Մեղք ես գործում, այ Պուղի, - նախատում է քահանան:

- Պատահում է, որ մեկ-մեկ հայհոյում եմ տգետ ու ագահ քահանաներին:

- Ծանր մեղք ես գործում, ա Պուղ, աստծո ծառաներին չի կարելի հայհոյել:

- Խոստովանում եմ նաեւ, որ ամբողջ կյանքում երբեք պաս չեմ պահել:

- Անիրավ, ծանր, սոսկալի են գործած մեղքերդ: Չէ՞ որ այդ բոլորը աստված տեսնում է վերեւից:

- Եթե աստված տեսնում ա, ձենը կտրում, քեզ ի՞նչ ա եղել, ինչու՞ ես կռկռում վրես, տեր հայր:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԿԱՆՉՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ

Մի օր Պըլը Պուղին Ամարասից գալիս է, կանգնում Մելիք Շահնազարի բակում ու կանչում կնոջը.

- Խանում, հե՜ Խանում:

Մելիքը դուրս է գալիս պատշգամբ:

- Լսում եմ, Պուղի:

- Արա դու Խանումն ե՞ս, ես նրան եմ կանչում:

Մելիքը մտնում է տուն եւ ուղարկում կնոջը: Խանումը դուրս է գալիս ու հարցնում.

- Յը, էլի ի՞նչ կա, Պուղի, ինչու՞ ես կանչում:

- Մելիքին ասա դուրս գա, բան ունեմ ասելու:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԽՈՍՈՒՄ Է ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ՀԵՏ

Նադիր Շահը իր սովորության համաձայն ծպտյալ շրջում էր ժողովրդի մեջ: Մի անգամ նազիր-վեզիրների հետ գալիս է Ավետարանոց: Հեռվից նա տեսնում է, որ մի տան կտուրի վրա ցորեն է փռած, իսկ կողքին կանգնած մի խրտվիլակ հսկում է աղունը՝ ձեռքի ճիպոտով քշելով հավերին: Շահը զարմանում է այդ հնարամտության վրա եւ ճամփան թեքելով, մտնում է գյուղացու տունը, տեսնում մի մարդ գորգ է գործում եւ թոկի ծայրը կապելով ձեռքի գործիքից, երդիկով դուրս է հանել ու միացրել խրտվիլակի ձեռքին: Թելերի վար ու վեր շարժումից շարժվում է նաեւ ճիպոտը:

Շահը բարեւում է ջուլհակին:

Ջուլհակը կանգնում է, խոնարհվում անծանոթ հյուրի առաջ:

- Չլինի՞ թե..., - հարցնում է շահը:

Ջուլհակը պատասխանում է.

- Մի՜ թե:

Շահը նոր հարց է տալիս.

- Ինչու՞ ջուտ չես վեր կացել, հայ:

- Շուտ եմ վեր կացել, բայց ձեռքիցս թռել, գնացել է:

- Կարողանու՞մ ես 3-ը տեղավորել 12-ի մեջ:

- Կարող եմ, եթե չլիներ 32-ը:

- Եթե երկու ղազ տամ, կարող ես փետրել:

- Որ տաս, կփետրեմ:

Շահ Աբբասը հարց ու պատասխանից գոհ հեռանում է ու երբ հասնում է Արաքսի կամրջին, դառնում է իր նազիր-վեզիրին.

- Ավետարանոց գյուղում ես ի՞նչ խոսեցի այն մարդու հետ, ի՞նչ ասաց նա ինձ:

- Շահն ապրած կենա, ի՞նչ իմանանք, ինչ ես խոսել:

- Ձեզ երեք օր ժամանակ. մտածեցեք ու պատասխանեցեք: Եթե ճիշտ չպատասխանեք, երկուսիդ էլ կգլխատեմ:

Շահը, որի բանակը գտնվում էր Արաքսի ափին, մտնում է իր վրանը, իսկ Նազիր-վեզիրները սկսում են մտածել ու, չգտնելով պատասխանը, սաստիկ վշտանում են: Երկրորդ օրը հանկարծ նրանցից մեկը առաջարկում է գնալ Ավետարանոց, Շահից թաքուն այն մարդուց իմանալ հարցագրույցի պատասխանները ու վերադառնալ: Ձի են նստում եւ հասնում Ավետարանոց, խնդրում ջուլհակին, որ մեկնաբանի երկու օր առաջ տեղի ունեցած հարցագրույցը:

- Չեմ կարող, գաղտնիք ա:

- Լսիր, մենք քեզ ոսկի կտանք, միայն թե մեկնաբանիր գրույցը, մեր կյանքը վտանգված է: Ահա քեզ երկու քսակ ոսկին:

Ջուլհակը ոսկին վերցնում է, բաժանում աղքատներին ու սկսում այսպես.

- Ձեզ հետ եկող մարդը Նադիր Շահն էր, մտնելով իմ բնակարանը, նա ինձ հարցրեց.

- Չլինի թե ճանաչեցիր ինձ:

Ես նրան ասացի.

- Մի՞թե կարելի է չճանաչել Իրանի շահին:

Հետո նա ինձ հարցրեց.

- Ինչու՞ շուտ չես վեր կացել, այսինքն, ինչու՞ շուտ չես պսակվել, որ տանը հիմա երեխաներ լինեն, օգնեն քեզ:

Ես նրան ասացի.

- Շուտ եմ վեր կացել (շուտ եմ ամուսնացել), բայց երեխաներս աղջիկներ են եղել, մեծացել, ամուսնացել, թռել-գնացել են:

Հետո Շահը հարցրեց.

- Կարո՞ղ ես 3-ը տեղավորել 12-ի մեջ, այսինքն՝ ամռան երեք ամիսներն այնքան ե՞ս վաստակում, որ տարին բոլոր ուտես:

Ես ասացի.



- Կարող եմ, եթե 32 ատամներս տեղը չլինեին, այսինքն՝ առողջ եմ, աշխատածս շուտ էլ սպառում եմ:

Հետո նա հարցրեց, թե կարո՞ղ եմ փետրել իր տված երկու ղազը, ես ասացի կարող եմ, եթե տաս:

- Իսկ ովքե՞ր են այդ երկու ղազերը:

- Շահի Նազիրն ու վեզիրը, իմ այսօրվա «պատվարժան» հյուրերը: Դե՛, գնացեք, ղարաբաղցի զվարճախոս Պըլը Պուղին ձեզ հաջողություն է մաղթում, որտեղ ձերը ասեք, իմն էլ հիշեցեք:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՀԱՆԵԼՈՒԿ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

- Պուղ, մի բան պատմիր լսենք, - հենց որ ձանձրանում էր, Մելիք Շահնազարը դիմում էր Պըլը Պուղուն:

- Մի պայմանով, ես հիմա մի հանելուկ առաջարկեմ, եթե իմաստը ճիշտ հասկացար, մեկն էլ կպատմեմ, թե չէ՝ դու ինձ մի ոսկի կտաս:

- Արա, սկսիր, ղալմաղալ մի արա:

- Մելիք, երեկ Մազե կամուրջով երեք հոգի անցան: Մեկը կամուրջը տեսավ ու ոտքով անցավ, մյուսը կամուրջը տեսավ, բայց անոտք անցավ, երրորդը ոչ տեսավ կամուրջը, ոչ էլ ոտքով էր, բայց՝ անցավ:

Մելիք Շահնազարը երեք օր խնդրեց պատասխանի համար, բայց չկարողացավ լուծել Պըլը Պուղու առաջարկած հանելուկը:

- Պուղի, ա մեռած, մի հանելուկդ բաց, տեսնեմ այդ ի՞նչ ա, որ սարքել ես:

- Հիմա բացատրեմ, կամուրջով անցել է հղի կինը, գրկին երեխա: Էն որ տեսավ ու ոտքով անցավ, հենց այդ կինն է, էն որ տեսավ ու անոտք անցավ, գրկի երեխան էր: Էն որ ոչ տեսավ ու ոչ էլ ոտքով էր, բայց անցավ, մոր արգանդում գտնվող երեխան էր:Հիմա հասկացա՞ր հանելուկիս իմաստը:

- Հասկացա, ոչ թե մեկ, այլ 3 ոսկի արժե:

### ԻՄԱՑԱ ԹԵ ԽԱՆՈՒՄՆ ԵՍ

Պըլը Պուղին մի անգամ գիշերը այգում հանդիպում է Մելիք Շահնազարին, գրկում է նրան, սկսում համբուրել:

• -Սա ի՞նչ բան ա, ո՞վ է տեսել ծառան տիրոջը սչպչորի, - բարկանում է Մելիք Շահնազարը:

-Լավ, լավ, սփաթիդ կարոտալ չըմ, ես էլ իմացա Խանումն ես, եկել ես տանձ հավաքելու:

### ՆԵՐՍԻՑ ԻՆՁ Է ԷՐՈՒՄ, ԴՐՍԻՑ՝ ՁԵԶ

- Ա Պուղ, ասում են Մելիք Շահնազարը դրսում է չար ու կռպիտ, տանը բարի, հանգիստ մարդ ա, ղորթա՞, - մի օր հարցնում են Պուղուն:

- Ի՞նչ ասեմ, ձեզ մատաղ, մեր Մելիքը էն մարդկանցից ա, որ դրսում ձեզ է էրում, ներսում՝ ինձ:

### ՂԱԶԱՐԻ ԿԻՆԸ ՄԱՆ Է ԳԱԼԻՍ

Ղազարը գալիս է Պըլը Պուղու մոտ ու գանգատվում.

- Կինս ման ա գալիս, Պուղի, ուզում եմ բաժանվեմ:

-Արա, ա մեռած, ի՞նչ ես սարսաղ-սարսաղ դուրս տալիս, հի՞նչ ա, կարծում ես ուրիշների կանայք չորեքթաթ են տալի՞ս:



### ԹԱՅԴԻ ՊԵՆԸ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը հունձ էին անում Ամարասում: Կեսօրին Մելիքը Պըլը Պուղուն ուղարկում է ջրի:

- Գնա մի կուժ ջուր բեր, կեսօրին բրդուճ ուտենք: Շուտ արի, ջուշանաս, հա՛, - իմանալով նրա բնավորությունը, «պնդեցրեց» Մելիքը: Պըլը Պուղին գնաց ու ամբողջ օրը թթենու այգում, աղբյուրի մոտ մնաց: Երեկոյան կուժն ջրով լիքը վերադարձավ Մելիք Շահնազարի մոտ ու երբ տալիս էր նրան, ձեռքից գցեց ու կոտրեց: Մինչեւ Մելիքը կբարկանար նրա վրա, Պըլը Պուղին ասաց.

- Աստված կտրի թայդի պենը, որ միշտ վերջը վատ ա լինում...

### ԽԵՉՈՅԻ ՊՍԱԿԸ

- Պուղի, մի էն հացեցի Խեչոյի պսակը պատմիր լսենք, - մի օր, երբ գնում էին Ամարաս՝ առաջարկեց Մելիքը:

Յացեցի Խեչոյի կինը մեռնում ա, Խեչոն ցանկանում ա ամուսնանալ քենու հետ, տերտերը չի պսակում, դեմ ա կանգնում.

- Որդի՛ս, քենիդ չհաս ա, մեղքի տակ կմնաս, - ասում է նա:

Խեչոն տերտերին կաշառք ա տալիս իր երկար տեղանունով տափը եւ Մարալ ջրին, տերտերը պսակում ա նրանց եւ օրհնում, երգելով.

*Երկար տափը,*
*Մարալ ջրին,*
*Մեռնի կինը,*
*Առնի քենուն: Ամեն:*

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՄԻ ԹՐՄՓՈՑ Է ԼՍՈՒՄ

Մեռել էր Մելիք Շահնազարի հայրը: Թաղելուց հետո ընկեր, բարեկամ ցավակցել ու ցրվել են իրենց տները. Մելիք Շահնազարը Պըլը Պուղու հետ մնացել էր տանը մենակ, տխուր-տրտում նստած:

Այդ տխուր պահին Պըլը Պուղին սկսեց խրատ տալ Մելիք Շահնազար 2-րդին, մեռած Մելիքի որդուն:

-Շատ մի մտածիր, աշխարհի կարգը այդպես ա, մեծը պիտի գնա, որ փոքրը գա ու նստի նրա տեղը:

- Ա Պուղ, իմ հերը եւ չար մարդ էր, եւ՝բարի, հիմա մտածում եմ, թե էն աշխարհում դրախտ կլինի, թե՝դժոխք: Դու իմաստուն մարդ ես, ի՞նչ կասես այդ մասին:

- Ասա գինի բերեն, ողորմաթաս խմեմ ու գուշակեմ:

Մելիք Շահնազարը գինի է բերում, լցնում Պըլը Պուղու թասը. Պուղին խմում է ու թե՝

- Ադա, քո հերը երկու բաց դռան առաջ էնա կանգնած: Մինն էլ լցրու, տեսնեմ, որ դռնով ա ներս մտնում:

Երրորդ թասը խմելուց հետո լռում է ու ականջ դնում.

- Ա Պուղ, հոգի հանեցիր. դե ասա. իմ հերը ո՞ր դռնով մտավ. դրախտի, թե՝դժոխքի:

-Հենց հիմա մի թրմփոց լսեցի, ամա չիմացա ողորմած հոգին ուր ընկավ. դրա՞խտը, թե՝դժոխքը:



## ՁՈՒՆ ԳՅԱՎԱԼ ՉԻ

Պըլը Պուղին ու տանուտեր Ավետիսի մեծամիտ, անբան տղան խոտ էին հարում: Կեսօրին Պըլը Պուղին բոխչան բացեց. հավի եփած ձվերը դրեց առաջը ու մեկ-մեկ խփում էր գերանդու կոթին, կոտրում, քչվում եւ ուտում:

Հարուստ, ժլատ Ավետիսի որդին կարծելով, թե Պըլը Պուղին հանդը հաց չի բերի, ինքն էլ չէր բերել, որ նրան մի պատառ հաց չտար: Հիմա ամեն անգամ ձուն կոտրելիս նայում էր ու թքում էր՝ հիմա մեկն էլ իրեն կտա, բայց իզուր, Պըլը Պուղին որոշել էր պատժել նրան իր ախորժակով: Երբ Պըլը Պուղու առաջ երկու ձու մնաց, Ավետիսի որդին դիմեց Պըլը Պուղուն.

-Պուղի ախպեր, մի ձու էլ ինձ տուր, ես ուտեմ:

- Բալա, խե ձուն գյավալ ա՞, - ասաց նա:

## ԾԵԾ՝ԱՌԱՆՑ ՊԱՏՃԱՌԻ

Պըլը Պուղին շաբաթը մի անգամ ծեծում էր կնոջը: Մեկ-երկու եւ մի օր էլ կինը գնաց ու գանգատվեց Մելիք Շահնազարին.

-Մելիք, ախր Պողոսս գժվել ա, ամեն շաբաթ ծեծում ա, կանչիր, մի հարցրու պատճառը:

Մելիքը կանչեց ու խիստ նախատեց Պըլը Պուղուն ու հարցրեց.

- Ադա, ա մեռած, մի ասա տեսնեմ պատճառն ի՞նչ ա, որ ծեծում ես կնոջդ:

- Խելքիդ ձյուն գա, Մելիք Շահնազար, ուրեմն պատճառ էլ պիտի լինի՞, որ կնոջս ծեծեմ: Պատճառ որ լինի, էնա կսպանեմ, էլի..

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԵՎ ԼՈՂՄԱՆԻ ԻՄԱՍՏՈՒՆԸ

Մի մարդ եկավ Վարանդա, ասաց՝ ես Լողմանի իմաստունն եմ, լսել եմ ձեր Պըլը Պուղու համբավը ու եկել: Մի հարց ես կտամ իրեն, մեկը՝ ինքը ինձ, որ լուծի հարցը, թող նա էլ վայելի իմաստունի համբավը:

- Լավ,- ասաց Պըլը Պուղին,- քանի որ երկար ճանապարհ ես կտրել, եկել Վարանդա, առաջին հարցը դու տուր, ո՛վ իմաստուն Լողմանի:

- Թող Պուղի իմաստունը ինձ ասի, թե ի՞նչ ձեւ ունի այս երկիրը, որի վրա ապրում ենք մենք:

- Ով Լողմանի իմաստուն, այս երկիրը նման է Նավասարդի նախշած ձվի, - ասաց նա ու խնդրեց, որ մի նախշած ձու բերեն ու դնեն նրա առաջ:

- Ճշմարիտ ա: Հիմա հերթը քոնն ա, մեծանուն Պուղի:

-Ո՜վ իմաստուն Լողմանի, հիմա դու ինձ ասա՝ այս աշխարհում առաջ ձո՞ւն է եկե՞լ, թե՝ հավը:

Լողմանին մի պահ մտածեց ու դիմեց մարդկանց.

- Ով դուք արցախցի հայեր, իմաստուն է ձեր Պուղին եւ երջանիկ եք դուք, որ ունեք այդպիսի իմաստուն: Ես՝ Լողմանիս, գլուխ եմ խոնարհում նրա առաջ, քանզի ոչ ոք դեռ չի պարզել հավի եւ ձվի առեղծվածը: Այդ զրույցից հետո յոթ օր Պըլը Պուղին պատվեց իմաստուն Լողմանուն եւ մեծ պատիվներով նրան ճանապարհ դրեց դեպի իր աշխարհը:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՍՈՎՈՐՈՒՄ

Պըլը Պուղին մի տարի սովորեց Ամարասում, բայց այնուհետեւ մինչեւ մահը դաս էր տալիս մարդկանց: Մի անգամ, երբ նա սովորում էր Ամարասի Հովհաննես վարդապետի մոտ, որը լավ քերականագետ էր, նրան հարցրեց.

- Պողոս, մի շնչավոր առարկա ասա:

- Էծ, վարժապետ:

- Հիմա էլ մի անշունչ առարկա ասա:

- Սատկած էծ, վարժապետ:

- Ապրես, Պուղի, դու որ մեծանաս, կդառնաս Պողոս իմաստուն:

## ՄԻՏՔԴ ԾՈՒՌ Է, ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐ

Մի օր Մելիք Շահնազարը թախտի վրա թիկնած, հարցրեց Պըլը Պուղուն.

- Ա Պուղ, որ մի օր ես ու դու ծմակով գնալիս ղաչաղները վրա տան, ի՞նչ կանես:

- Թվանքով կզարկեմ:

- Բա որ թվանք չունենաս:

- Թրով կզարկեմ:

- Բա որ թուր էլ չունենաս:

- Փետով կզարկեմ:

- Բա որ փետ էլ չունենաս:

- Վա՜հ, ջան որդի, Մելիք Շահնազա՛ր, ոնց որ տեսնում եմ, միտքդ ծուռ ա, արա դու ղաչաղների կո՞ղմն ես, թե՝ իմ:

## ՅՈ ՉԻ ՓԱԽՉԵԼՈՒ

Մելիք Շահնազարը հոր գերեզմանի շուրջը պարիսպ քաշեց, մեծ գումար ծախսելով դրա համար: Պըլը Պուղին շատ զարմացավ ու մի օր, երբ վանքի դռանը մարդիկ հավաքված խոսում էին այդ մասին, Պըլը Պուղին հարցրեց Մելիքին.

- Մելիք Շահնազար, քո հորը թաղել ու վրան էլ մի մեծ քար ես դրել, էլ ի՞նչ կարիք կար նրա գերեզմանի շուրջը այդպիսի պարիսպ քաշել, հո՞ հանգուցյալը չի փախչելու իր գերեզմանից:

## ԴԱ ՅՈՒ ՔԵԶ ՆՄԱՆ ՔՈՌ Ը՛ԼՄ

Պըլը Պուղին Ամարասի ճանապարհով ոտքով գալիս էր տուն: Ճանապարհը՝ մեծ ու հարթ, ձգվում էր թթենու այգիների միջով: Մին էլ նայում է տեսնում դիմացից մի սայլ է գալիս, բայց սայլապանը եզներին չի հետեւում, իր համար էս ճղնան, էն ճղնան բռնելով թութ է ուտում ու քթի տակ երգում:

Երբ սայլը հասնում է Պըլը Պուղուն, սայլապանը հանկարծակի գալով «հո» է անում: Եզները սայլը քաշում են, ծառով տալիս, սռնին ջարդում: Սայլապանը նայում է Պըլը Պուղու կողմը եւ բարկանում նրա վրա.

-Արա, դու էդ ինչ ըշկավուր մարդ ըս, ամա աշկ օնիս, է՛, դայի, աչքով տվիր, ըրբաս կոտրից:

-Օնիմ, օնիմ, պա հու քեզ նման քոռ չում, վեր էս արեւ օրը սայլը պիրիմ քցիմ ծառավը, - պատասխանում է Պըլը Պուղին:



## ՈՐ ՏՂԱ ՉԷ, ԲԱ Ի՞ՆՉ Է

Պըլը Պուղու կինը իրար գլխի յոթ աղջիկ ծնեց:

Դա շատ վշտացրեց նրան, դե հո՞ հեշտ բան չէ յոթ աղջիկ մեծացնելը, ամուսնացնելը:

Երբ 8-րդ երեխան ծնվեց, Պըլը Պուղին գոմի կտուրին կանգնած անհամբեր սպասում էր: Տեսնելով, որ տատմերը ուշացումով է հայտնվում, մոտեցավ տան պատուհանին ու հարցրեց կնոջը.

- Աղջի, տղա յա՞:

- Չէ:

- Բա ինչա՞...

## ԲԱ ՅՈ Ե՞Ս ՉԵՄ ՅԱՉԵԼՈՒ

Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին մի որոշ ժամանակ մի սենյակում քնեցին: Մելիքը թախտի վրա, Պըլը Պուղին էլ օջախի մոտ՝ գետնի վրա: Այդպես լավ էր Մելիք Շահնազարի համար, երբ քունը չէր տանում, առաջարկում էր Պըլը Պուղուն մի առակ կամ զրույց պատմել: Մի օր էլ նա կտրուկ դիմեց Պըլը Պուղուն.

- Էլ իմ սենյակում չքնես:

- Ինչու՞, Մելիք Շահնազար, ի՞նչ ա պատահել:

- Գիշերը դու խռռացնում ես, շունն էլ հաչում ա, քնահարամ եմ դառնում:

- Վահ, այ մարդ, բա հո ե՞ս չեմ հաչելու, շունը խռռացնի:

### ԱՉՔԸ ԾԱԿ ՏՂԱՆ

- Ա կնիկ, մի օխտը դոլմա ինար, կուտի, - մի օր ասաց Պըլը Պուղին:
- Ապա, ես էլ կոտիմ, - ասում է որդին:
- Ա կնիկ, մի լավ խաշիլ ինար, կուտի:
- Ապա, ես էլ կոտիմ:
- Ա կնիկ, մի լավ խորոված ինար, կուտի:
- Ապա, ես էլ կոտիմ:
- Ա կնիկ, մեր գոմի թրքից մի ծվարան ինար:
- Ապա, ես էլ կոտիմ:

Այստեղ բոլորը ծիծաղում են, իսկ Պըլը Պուղին դառնում է աչքը ծակ իր որդուն ու ասում.

- Էշի քոռակ, թրեքը քթոցները սվաղելու համար եմ ասում, վեչ թա ուտելու:

### ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՄԵԼԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՉԽԱՐ Է ԲԵՐՈՒՄ

Մելիք Շահնազարը Պըլը Պուղուն ուղարկում է Խաչեն՝ այնտեղի մելիքից 10 ոչխար առնելու:

Ոչխարները առնում է, որ բերի:

Խաչենի մելիքը մի թուղթ է գրում, տալիս Պըլը Պուղուն եւ խնդրում, որ տա Մելիք Շահնազարին: Թղթի մեջ գրված է լինում, որ ինքը շատ պատվելի Պըլը Պուղուն 10 ոչխար է տվել:

Պըլը Պուղին Խաչենի մելիքի տված ոչխարները եւ թուղթը բերում է, տալիս Մելիք Շահնազարին:

Մելիք Շահնազարը հաշվում է, տեսնում ինը ոչխար է:

- Ա Պուղ, - ասում է, - բա ո՞ւր ա մի ոչխարը, ախր ինը ոչխար ես բերել:



- Հա, ինը ոչխար եմ բերել:
- Բա ո՞ւր ա մեկը:
- Ի՞նչ մեկ:
- Տասից մեկը:
- Բա դու չասացի՞ր ինը ոչխար ես բերել, - ասաց Պուղին ու մտքումը հայհոյեց Մելիք Շահնազարին, ասելով՝ «էս շան որդին հի՞նչ գիդաց, թե Ցեխ ձորում մի ոչխարը մորթել, քեֆ եմ արել»:

Տեսնելով, որ Պըլը Պուղին գլխի չի ընկնում կորած ոչխարի մասին իր հարցումը, 10 մարդ կանչեց ու Պըլը Պուղու բերած ոչխարները մեկ-մեկ կապեց նրանց ոտքից: Այդ 10 մարդկանց մեջ էր նաեւ ուշացումով բակ եկած Մելիքի կինը, որին ոչխար չհասավ:

- Ա Պուղ, դե հիմա հաշվիր, 10 հոգի են, ինը ոչխար, Խանումին ոչխար չի հասել, հիմա հասկացա՞ր, որ մեկը պակաս ես բերել:

Այստեղ Պըլը Պուղին խիստ բարկացավ.

- Արա քու կնգանտ էլ, քո ոչխարին էլ, քեզ էլ, ես հի՞նչ մեղավոր ըմ, որ կնեգդ բոլորից ուշ ա եկալ: Թող շուտ գար, բոլորից առաջ մին ոչխար էլ ուրան վըննան կպիր:

### ՉՈՐՍ ՁՎԻ ԳԻՆԸ

Մի օր Խնուշինակ գյուղից երկու մարդ գալիս են Մելիք Շահնազարի մոտ՝ գանգատի: Այդ մարդկանցից մեկի անունը լինում է Հարաբեդ, մյուսի անունը՝ Կարաբեդ: Դու մի ասի սրանք մի ժամանակ շատ սիրով խնամիներ են լինում, բայց անցնում է ժուկ ու ժամանակ, նրանց միջով սեւ կատու է անցնում: Կռվում են, իրար կրպտում, հետո էլ ետ վերցնում երկու կողմից իրար տված նվերները: Մեջտեղ մնում է 4 ձու, որ մի ժամանակ Կարաբեդը կերել է Հարաբեդի տանը:

- Մելիքն ապրած կենա, թող իմ 4 ձվի հախը տա, էլ ուրիշ գանգատ չունեմ: Էն էլ ասեմ, որ իմ չորս ձուն չորս հավ պիտի դառ-

նար, չորս հավը չորս տարում 400 ձու կածեն եւ այդ ձվերը քանի հավ կդառնար: Հիմա նա ինձ հազար մանեթ պիտի տա:

- Թող տա, եթե, իրոք, կերել է չորս ձուն: Արա, Կարաբեդ, կերե՞լ ես:

- Կերել եմ, չորսը:

- Դե հիմա այդ մարդու ձվերի, հավերի, հավերի ձվերի փողը տուր:

Այստեղ Պըլը Պուղին մատը դնում է Մելիքի ճակատին ու ասում.

- Մելիք, որ ասում եմ վերին հարկդ տերտակ ա, հավատում չես: Մի հալա հարցրու՝ տես էս մարդու ձվերը հում ա կերել, թա եփա՞ծ:

- Եփած, եփած, - ասում է Կարաբեդը:

- Ապրե՛ս, դե հիմա թող Կարաբեդը ասի ինձ, թե եփած ձվից ճուտ դուրս կգա՞, թե՝ չէ:

- Չէ, չէ, Պուղի, չի ստացվի, - Հարաբեդի փոխարեն գոչում են դատին ներկա գտնվող մարդիկ:

-Ապրե՛ք: Ուրեմն 4 ձու մնաց տակը: 4 ձուն 4 կոպեկ է, իսկ էս մարդիկ ամենքը մի մանեթ են խարջել, եկել, մի-մի մանեթ էլ խարջելու են գնան: Բան չկա, խնուշինակցի են, ճանապարհին հաշտվելու են ու ծիծաղեն իրենց արարմունքի վրա: Ազատ եք, գնացեք եւ Մելիքին մի օրը հազար ցանկացեք:

-Ապրի իմաստուն Պուղին, - բացականչում են խռով խնամիները եւ հաշտ ու բարիշ վերադառնում տուն:



ՂԱՐԱԲԱՂԵՆ ԱՐԱՂԸ

Խոսքի համար Պըլը Պուղին ձեռքը դեպի գրպանը չէր տանում: Այս անգամ էլ, երբ նստած քեֆ էին անում, Մելիքը տարավ-բերեց ու թե՝

- Ա Պուղ, էս հինչան ա, վեր մեր Ղարաբաղեն ժողովուրդը էսքան քաջ ա: Ախր էստեղ մի պեն կա, տղա-աղջիկ ասես մի-մի առյուծ են կռվի մեջ: Էսքան տարի մտածում եմ, մտածում, կարում չում պատասխանը քթնամ:

- Մելիք, Ղարաբաղեն արաղեն հունարն ա դա:

- Արա, ա շաշ, արաղը տղամարդիկ են խմում, բա կանա՞յք:

- Արաղեն օծը տղամարդկանցից անցնում է կանանց, կանանցից էլ՝ իրենց երեխաներին:

- Արա, ես էլ ասում եմ, հնե Իրանի շահը հրամայել ա կտրել բոլոր թթենիները: Վեր իտի յա, իմ անունից հրամայիր վաղվանից Վարանդայում ամեն ոք թթենու այգի տնկի:

ՏՈՆԱՇԵՆՑԻ ՏԵՐՏԵՐԸ

- Ա Պուղ, մի էն տոնաշենցի գիժ տերտերի «ալելայան» պատմի լսենք, - մի օր, երբ Ջրաբերդ էին գնում, խնդրեց Մելիք Շահնազարը:

Պըլը Պուղին ասես հենց դրան էր սպասում, անմիջապես սկսեց.

- Մեզանից մի քանի տարի առաջ Տոնաշենում մի «գիժ» տերտեր կար: Էս տերտերը գիրք չէր կարդում, գիր չէր կարդում, մոմ չէր վառում, հարս ու փեսա պսակելիս ասում ար.

- Ալելայա, ալելայա, հարսը տղա բերի, տղան գիժ լինի, գոտկում թուր լինի, ալելայա:

Թե որ կնոնք է լինում, ասում ար.

- Ալելայա, ալելայա, խոխեքը շատ, քյոխեքը շատ, ալելայա՜

Այսպես հինչ օրհնում ար, մեջը ալելայան կար ու կար: Մի օր տոնաշենցի չարչի Փիլոն ժամի մոտ կանգնում ա եւ ասում.

-Մեր տերտերը ամեն օր վաղ առավոտյան ժամ ա գալիս ու երբ ժողովուրդը սկսում ա հավաքվել, ինքը գնում ա: Ես սուտ մեռնեմ, ինձ բերեք ժամ, տեսնեմ առավոտյան, տերտերը որ ժամ ա մտնում, ինչ ա խոսում, ինչ ա անում:

Այդպես էլ անում են, սուտ մեռած Փիլոյին դնում են դագաղում, բերում դնում ժամի մեջ: Առավոտ ծեգին տերտերը գալիս, բացում է ժամի դուռը ու կանգնում Փիլոյի դագաղի վերեւում ու թե.

- Չարչի Փիլո, գլխից մինչեւ ոտներդ ալելայա:

Հետո կանգնում է ոտների մոտ ու ասում.

- Հիմա էլ ոտից գլուխ ալելայա, չարչի Փիլո:

Հետո կանգնում է աջ կողքին ու ասում.

- Հիմա էլ աջ կողքից ալելայա:

Այստեղ Փիլոն չի համբերում, փորթկացնում ա եւ ուզում ա բան ասել տերտերին, տերտերը ձեռքի խաչով խփում ա նրա գլխին՝ մեկ, երկու... չորս, մինչեւ Փիլոն իսկական մեռնում ա:

Մարդիկ գալիս, նախատում են տերտերին, թե՝ այդ ի՞նչ արիր: Տերտերն էլ իր հերթին նախատում է մարդկանց, ասելով.

-Հոգիս դուրս եկավ, մինչեւ իսկական մեռցրի նրան, բա դուք խիղճ չունե՞ք, թողեք մարդը կարգին մեռնի, հետո բերեք ժամ, ալելայա, ալելայա:



ԴԵՍԻՑ-ԴԵՆԻՑ

Ամեն անգամ Պըլը Պուղին գյուղամիջով անցնելիս մտնում էր չարչի Մանգասարի խանութը ու հարցնում.

- Ի՞նչ ես ծախում, Մանգաս, ծափ տամ, պար գաս:

- Դեսից-դենից,- դժգոհությամբ պատասխանում է Մանգասարը, իմանալով, որ Պըլը Պուղին հենց այնպես է հարցնում, ծեռ առնելու համար:

Մի օր Պըլը Պուղին մի ջահի է տալիս նրան, թե՝ Մանգաս եղբայր, մի քիչ դեսից-դենից տուր:

- Ա Պուղ, ի՞նչ տամ, չիր, չամիչ, թել, ասեղ, ի՞նչ տամ:

- Դեսից-դենից տուր, էլի:

- Կոնկրետ ի՞նչ:

- Դեսից-դենից, - իրենը պնդում է Պըլը Պուղին:

- Ադա, քո դես-դենը անուն չունի՞:

- Թե որ ունի, ինչու՞ ամեն անգամ իմ «ինչ ես ծախում» հարցին պատասխանում ես դեսից-դենից: Դե հիմա էդ դեսից-դենից եմ ուզում, էլի, այ Մանգաս, ծափ տամ, պար գաս:

ՄԿՆԵՐԸ ՔՈՐՈՒՄ ԵՆ ՄԵԼԻՔԻ ԳԼՈՒԽԸ

Մեկ-մեկ Մելիք Շահնազարը հանում էր իր մեծ փափախը ու դառնում Պըլը Պուղուն.

- Ա Պուղ, հանց ըրա, շատ ապրիս դու, գլուխս քորիր:

Պըլը Պուղին քորում էր:

- Օխա՜յ, ա Պուղ, օխայ, խե տեղն էլ թուշին գիդումըս ու քորում, օխա՜յ:

Տեսնելով, որ Մելիքի գլուխը հաճախակի է քոր գալիս, մի օր Պըլը Պուղին, երբ քնում է իր տերը, մի մուկ է բռնում,

փափախի աստառը ծակում, գցում մեջը ու կարում: Մելիքը փափախը գլխին է դնում թե չէ, մուկը սկսում է խուտուտ գալ ու ականջից քորել նրա գլուխը:

- Յա՛, Հիսուս Քրիստոս, էս հուվ ա գլուխս այսքան քաղցր քորում:

Պըըը Պուղին ծիծաղում է ու ասում.

- Մելիք Շահնազար, աստված որ ցավը տալիս ա, դարմանն էլ հետն ա տալիս, սուս արա ու փափախդ պինդ պահիր գլխիդ:

ՊՈՒՂԻՆ ՉԻ ՀԱՐԲՈՒՄ

Պըըը Պուղին լսում է, որ ղզլեցեք մարդ հարբեցնող են: Վեր է կենում մի ուշ աշնան օր նստում Մելիքի ձին ու գնում Ղզղալա: Դեռ գյուղ չմտած, այգիների մոտ մի խումբ մարդիկ, որ հնձանում գինի էին քամում, կանչում են նրան իրենց մոտ:

-Դեսը ծռվիր, - ասում են նրանք: Պըըը Պուղին ձիու գլուխը թեքում է հնձանի կողմը, բարեւ տալիս, իջնում ձիուց:

- Ի՞նչ մարդ ես, ո՞ւր ես գնում, ինչու՞ ես գնում, - հարցնում են նրան:

- Վարժապետ եմ, - ասում է Պըըը Պուղին,- գնում եմ Աշան, երեխոցը դաս տամ:

- Որ վարժապետ ես, շատ բան կիմանաս, եկ համ գինի խմիր, համ էլ մի բան ասա լսենք, գյուղացի մարդիկ ենք:

- Լավ կլինի, - համաձայնվում է Պըըը Պուղին:

- Տղերք, հիմի էս վարժապետին պար կածի մեր գինին, մի քիչ կուրախացնի, - ասում են մարդ հարբեցնող ղզղալացիները ու մեծ բաժակով գինի տալիս նրան: Պըըը Պուղին խմում է, գովում նրանց գինին:

- Ադա, այս ինչ լավ գինի եք քաշում:



- Խմիր, վարժապետ, տեղը շատ կա:

Պըըը Պուղին խմում է, նրանք լցնում են մեծ գավաթը: Որ մի տասը գավաթ խմում է, ասում են.

- Վարժապետ, մի երգ ասա, լսենք:

- Հալա երգելու հավաս չի գալիս:

Մի տասը գավաթ էլ են խմեցնում ու խնդրում.

- Վարժապետ, արի մենք ծափ տանք, դու պարիր:

- Հալա պարելու հավաս չի գալիս:

- Ադա, մի էդ գավաթը կորցրեք, գուշը բերեք, - տեսնելով, որ հյուրը չի հարբում, առաջարկում է ավագը:

Պըըը Պուղին հիմա էլ սկսում է մեծ գուշով գինի խմել ու գովել գինեգործներին: Տեսնում են, որ իրենց հյուրը չի հարբում, բարկանում են.

- Վարժապետ շան որդի, դու հարբեցողը չես, մեր գինին էլ վերջացողը չի, վեր կաց շարունակիր ճանապարհդ:

- Ես էլ այդ եմ ասում, էլի, ախր շատ ուշացա ձեզ մոտ, այ սարսաղ ղզղալացիներ:

ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ՝ ԻՄԱՍՏՈՒՆ

Մելիք Շահնազարը ուզում է փորձել Պըըը Պուղու իմաստուն լինելը: Նրանից թաքուն մի սերկեւիլ է դնում վերմակի տակ ու նրան կանչում իր մոտ.

- Ա Պուղ, ուզում եմ քննություն ընդունել քեզանից, թե որ ապացուցեցիր, որ իմաստուն ես, մի փութ ցորեն կտամ: Հիմա ասա, ի՞նչ կա դոշակիս տակ:

- Մին պուլուր պեն, Մելիք, ձվի նման պուլուր:

- Ճիշտ ա:

- Որ ձվի պես ա, ուրեմն եւ դեղին ա, եւ սպիտակ:

- Ճիշտ ա:

- Մելիք, որ դեղին ա, ուրեմն սերկեւիլ ա:

- Ճիշտ ա, ապրես, Պուղի:

Հեռանալով Մելիքի տնից, Պըլը Պուղին ծիծաղով պատմեց իր քննության մասին եւ ասաց.

- Խելքիդ ձյուն գա Մելիք, չի էլ ասում, որ սերկեւիլի հոտը կմատնի իր տեղը:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԵՎ ԱՐՋԸ

- Ա Պուղ, մի անտեր մնացած արջ կա ծմակումը, ամեն գիշեր իջնում է այգի, հավաքում մալանչենի տանձի կաթուկը, կարում ըս մի դրա աչքը վախեցրու, - մի օր խնդրում է Մելիքը:

Պըլը Պուղին գնում է այգի, գիշերվա համար խոտից մի փափուկ տեղ պատրաստում, պառկում ու քնում: Գիշերվա կեսին, երբ Պըլը Պուղին խոր քնի մեջ էր, արջը գալիս է ու տանձի կաթուկ հավաքում: Մեկ էլ արջը նկատելով խոտի կույտը, հավաքած տանձը տանում ու լցնում է նրա մեջ: Պըլը Պուղին քնի մեջ կարծում է, թե Մելիք Շահնազարն է, իրեն տանձ է տալիս, ասում է.

- Բոլա, Մելիք, բոլա:

Տեսնելով, որ տանձը թափվում է իր փորի վրա, աչքերը բացում է ու գոռում.

-Ասում եմ բոլա , Մելիք Շահնազար:

- Բուվա՛,- վախից իր հերթին գոռում է արջը, վազում անտառը: Այն գնալն է, որ գնում է, նրանից դեսը դեռ չի վերադարձել: Իսկ Պըլը Պուղին ասում է, թե արջը Մելիք Շահնազարի անունը լսել է ու փախել, կորել անտառում:



## ՀԱԲՈՒ ԽՆՁՈՐԸ

Մելիք Շահնազարը մեռավ: Սգի մեջ էր ողջ Վարանդան: Մի քանի օր շարունակ մարդիկ Մելիքի տանը սուգ արին: Հասարակ գյուղացիների հերթն էլ հասավ: Նրանք էլ խումբ-խումբ եկան ու Մելիքի դագաղի շուրջը սուգ ու շիվան բարձրացրին:

Այդ ժամանակ Պըլը Պուղու հարեւան Հաբին ծոցից մի կարմիր խնձոր հանեց, դրեց Մելիքի դագաղում ու լացով ասաց.

- Մելիք Շահնազար, էս խնձորը կտաս հորս, սերտն օզալա հիվանդ վախտը, քըթալ չընք տանք:

Այդ պահին Պըլը Պուղին քաշեց Հաբու փեշը ու ականջին շշնջաց.

- Ա շաշ, Մելիք Շահնազարը ռիսեկեր մարդ ա, տրան տվածը տեռնի համար կորած ա, խնձորը յերկալ տար տուն, թե չէ ուտլականա:

## ՄԱՍՆԸ ՏՈՒՐ, ԹՈՂ ՍԱՏԿԻ

Մելիք Շահնազարը մահամերձ էր, բայց հոգին դուրս չէր գալիս, քանի օր է չարչարվում էր:

- Մինչեւ չխոստովանես հանցանքդ, հոգիդ դուրս չի գա, - ասում էր կաթողիկոսը:

Մելիքն ուզում էր պատմել իր մեղքերը, Պըլը Պուղին կաթողիկոսի թիկունքում կանգնած առարկում է.

-Հարկավոր չէ, սուրբ հայր, հարկավոր չէ, մասնը տուր, թող սատկի ու իր մեղքերի հետ դժոխքի ծոցը գնա, հարկավոր չի:

## ՊԱՀԻՐ, ՔԵԶ ՀԵՏ ԿՏԱՆԵՍ

Պըլը Պուղին հիվանդ պառկած էր մահվան անկողնում: Մելիք Շահնազարը շտապ մի նամակ գրեց ու բերեց նրա մոտ:

- Ա Պուղ, դե որ գնում ես էն աշխարհը, առ էս նամակն էլ տար, կտաս հորս, շատ եմ խնդրում:

Պըլը Պուղին աչքերը բացեց ու դարձավ Մելիք Շահնազարին:

-Պահիր, քեզ հետ կտանես, ես դրախտ եմ գնում, իսկ քո հերը դժոխք ա գնացել:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՓՈՂ Ա ԽՈՍՏԱՆՈՒՄ

Պըլը Պուղին մեռնում էր,տերտերը գնաց տեսության ու հարցրեց, թե հո խոստովանելու բան չունի՞:

-Չէ, տեր հայր, մեղք չեմ գործել, բայց որ եկել ես, քո ձեռքով մի կտակ գրիր:Գրիր, որ ես՝ Պողոսս, հազար մանեթ եմ կտակում մեծ հարսիս, հազարը՝ փոքր հարսիս, հազարը՝ կնոջս, հազարը քեզ, տեր հայր...

Այստեղ տեր հայրը կիտում է հոնքերը ու ասում.

- Ինձ երկու հազար կտակիր, Պողոս եղբայր, փողը պահում ես, ի՞նչ անես:

- Լավ, թող այդպես լինի, հիմա բեր ստորագրեմ կտակը:

Պըլը Պուղին ստորագրում է կտակը, ամենքը ուրախանում են եւ սպասում, թե երբ կմեռնի նա, որ փողը վերցնեն:Մեկ էլ տեր հայրը դառնում ու հարցնում է մեռնող Պըլը Պուղուն.

- Եղբայր Պողոս, ո՞րտեղի՞ց պիտի տաս այս փողերը մեզ:

Պըլը Պուղին վերմակի տակից հանում է ոտքը եւ ասում.

- Վըններես տական կտամ, տեր հայր, որտեղի՞ց կտամ:



## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԿՏԱԿԸ

Պըլը Պուղին մեռնելու ժամանակ կանչեց իր հարեւան Հանեսին ու կտակեց.

- Ես մեռնում եմ, չկարողացա տեսնել Մելիքի մահը, թե որ Մելիքը մեռնի, կգաս գերեզմանիս չոքես, ձեն տաս.

- Պողոս, Մելիքը գյոռ բա գյոռ ա իլալ, հանգիստ մնա: Կգաս, հա, չմոռանաս, հալբաթ մի լավություն էլ ես կանեմ քեզ

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՊՈՉԸ

Պըլը Պուղու հարսը նրան լավ չէր խնամում: Մի օր Պըլը Պուղին նստեց ու մտածեց. «Պուղի, արի դու սրան մի լավ դաս տուր, որ համ ինքը հիշի, համ էլ՝ ուրիշները»: Մտածեց ու կանչեց հարսին:

- Հարս ջան, մի կճուճ ոսկի ունեմ թաքցրած, էսօրվանից դենը ինչիս ա պետք, սիա կտակ եմ թողնում քեզ, որ մեռնեմ, ոսկին կվերցնես: Ասաց ու ցույց տվեց ծրարած ու կնքված թուղթը: Հարսը կտակը տեսնելով սկսեց ավելի լավ խնամել, կերակրել, մաքուր լվանալ հագուստները: Հարեւանները շատ զարմացան, իմանալով, որ Պըլը Պուղու հարսը դարձել է պարկեշտ, շատ քնքուշ, ու մարդավարի է վերաբերվում կեսրայրին: Երբ Պըլը Պուղին մեռավ, նրան թաղեցին, երեկոյան մարդ ու կին քանդեցին Պըլը Պուղու ցույց տված հողը, կճուճի փոխարեն մի երկար ու կեռ պոզ գտան, որի մեջ մի թուղթ կար: Հարսը վերցրեց ու կարդաց թուղթը.

- Էս պոզը աչքդ, հարս, խե վեր մեծը մծանա, պիծինը կպլանա՞:

## ՏՆԱՔԱՆԴԸ

Մելիք Շահնազարը մահվան անկողնում պառկած ժամանակ կանչեց Պըլը Պուղուն ու հարցրեց.

- Պուղի, էս աշխարհի գործերի վերջը ի՞նչ ա դառնալու:

- Ի՞նչ ասեմ, Մելիք Շահնազար, գիժը մի քար գլորեց ծոռը, օխտը խելոք չկարողացան հանել: Հիմա դու գնում ես էս աշխարհից, գնալիդ յոթ տարի, յոթ ամիս, յոթ օր բիդար, բայց էն քարը, որ գցեցիր մեր հորը, ո՞նց պիտի հանենք, ա տնաքանդ-տնաքանդի տղա:

## ՍԱ ԲՈԼՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆ Է

Պըլը Պուղին հոգեվարքի մեջ էր, Մելիքը լսեց, ուրախացավ.

- Հիմա գնամ Պուղուն խոսքի տակ թողնեմ, - ասաց ու գնաց Պըլը Պուղու մոտ:

- Ա Պուղ, հիմա քեզ մի այնպիսի տան մեջ եմ դնելու, որ ոչ լուսամուտ է ունենալու, ոչ էլ դուռ, թե կարողանաս դուրս գալ այդ տնից, կեցցե՛ս:

- Մելիք, էդ տունը բոլորի համար ա, գնում ենք, թե որ մի օր դու այդ տունը չմտնես, կեցցե՛ս, - պատասխանում է Պըլը Պուղին վերջին շնչում:

## ՇՆԵՐԻՑ ՍՈՒՐՈՒ ՉԻ ԼԻՆԻ

Շունը բողոքեց հովվին.

- Ես տասը թուլա եմ ունենում, ոչխարը մեկ կամ երկու գառ, բայց ոչխարից սուրու ես պահում, շներից մեկ, երկու հատ, դա ո՞նց հասկանանք:

- Մի նեղացիր, շներից սուրու (հոտ) չի լինի, թեկուզ տասը չէ, քսան թուլա էլ ունենաս: Ոչխարն ուրիշ է: Աստված ասել է. «Շների հազարը մեկ դառնա, ոչխարների մեկը՝ հազար...»:



## ՏԱՆ ԿԱՐԳԸ ԵԿ ՓՈԽԵՆՔ

Ղազարի տղան աչք բացեց, տեսավ իրենց տանը լվացքը Ղազարն է անում, բազարը մայրն է գնում, խմորը Ղազարն է անում, ցախը՝ մայրն է բերում: Տղան մեծացավ, պիտի պսակվեր, հորը, մորը կանչեց, ասաց.

- Պիտի տանը կարգը փոխել, այսուհետ դու մայրիկի արած գործը արա, ինքն էլ՝ քո:

- Էսքան տարի գործ ենք անում, չենք փոխել, հիմա ինչո՞ւ փոխենք մեր տան կարգը:

- Փոխեք, թե չէ, որ տունը հարս եկավ, տան սովորության համաձայն լվացքը ես պիտի անեմ, խմորը ես պիտի անեմ, տունը ես պիտի սրբեմ... Բա էլ ինչո՞ւ եմ հարս բերում, որ նրա գործերը ես պիտի անեմ...

## ՈՐՍԻ ՇՈՒՆԸ

Պուղին ուր գնում էր, իր հետ տանում էր Մելիք Շահնազարի փոքրիկ տղային:

- Ա Պուղ, էս երեխան ինչո՞ւ ես հետդ ման ածում:

- Որսի շանը թուլա ժամանակն են բան սովորեցնում, հիմա ինչ սովորի, որ մեծանա, էն է անելու, հետո տանում եմ, որ լավ բան սովորի, լավ բան անի,-պատասխանում է Պուղին:

## ՁԵՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է

Պըլը Պուղու թուլան հետեւից գալիս է Մելիք Շահնազարի տան բակը: Պուղին մտնում է Մելիքի տունը, թուլան անվերջ դրսում հաչում էր, երեւի Պուղուն էր ուզում:

- Ա Պուղ, էս ինչո՞ւ քո շան թուլան անվերջ մեր դռանն է հաչում:

- Մելիքն ապրած կենա, հաչելը սովորում է, հենց որ հավանես, կգնա մեր դռանը կհաչի...

## ՔՈ ԱՆՈՒՆԸ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՉԿԱ

Պուղին Ամարասից էշերի քարավանով ցորեն էր տեղափոխում Չանաղչի՝ Մելիք Շահնազարի տունը: Ճամփին սուտ լուր են տարածում, թե Մելիքը ցորեն է բաժանում իր մահլի աղքատ մարդկանց: Այդ լսելով, Ղազարը վազում է, կես ճանապարհին կանգնեցնում Պուղուն.

- Պուղի, իմ բաժինը տուր, ճանապարհից տուս տանիմ Թաղավարդի ջրաղացում աղեմ:

Պըլը Պուղին գլխի ընկնելով, որ Ղազարը խաբվել է, ասում է.

- Ղազար, էս անգամ քո անունը ցուցակում չկա...

## ԱՂՎԵՍՆ ՈՒ ՈՋՆԻՆ

Աղվեսն ու ոզնին խաղողի այգում իրար դեմ ելան.

- Այս ո՞ւմ եմ տեսնում, այս ո՞ւմ եմ տեսնում,- ասաց աղվեսը եւ ցանկացավ «համբուրել» ոզնու մերկ դունչը, սակայն ոզնին գլուխը քաշեց փշոտ քուրքի մեջ, մնաց անտարբեր:

- Վա՜յ, քոռանամ ես, ինչո՞ւ ես այդպես խռովել ինձնից, ես իմ հին վարքը թողել եմ դրսում, այգի եմ մտել քեզ պես խաղող ու մրգեր ուտելու: Բաց երեսդ բեր պաչեմ, դունչդ, թող որ տեղը գա վախեցած շունչդ:

*- Ես շատ եմ լսել քո երդումները,*
*Յուղոտ, մեղրոտ քո զրույցները,*
*Թե որ համբուրես, լիզես իմ դունչը,*
*Պիտի կտրես հոգիս ու շունչս...*





## ԱՏԱՄՆԵՐԸ ՉԵՄ ՅԱԾԿԵԼ

Պուղին իր քավոր Ղազարի որդու համար հարեւան գյուղից մի աղջիկ ուզեց: Երբ հարսը բերին տուն, մի քանի օրից հետո Ղազարը եկավ Պուղու մոտ ու ասաց.

- Ա Պուղ, բերած հարսդ լավն է, խունար, տնարար է երեւում, բայց մի այիբ ունի, բերանում սկի ատամ չկա:

- Ղազար ջան, դե ես քո տղայի համար հարս եմ ուզել, հո ձի չեմ առել, որ ատամները հաշվեմ,-պատասխանում է Պուղին:

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՃԱԾԱԿ ՉՈՒՆԻ

Պուղին ինչ անում է, ինչ հանդից տուն է բերում, կինը հավան չի կենում, անվերջ բողոքում է, որ Պուղին խելք չունի, ճաշակ չունի: Մի օր էլ, երբ նա հարեւանների մոտ սկսեց սովորական դժգոհությունը, Պուղին կանգնեց գոմի կտրին ու կնոջը ասաց.

- Դուզ ես ասում, այ կնիկ, ես խելք չունեմ, որ ունենայի մեր շենի գեղեցիկ, խելոք աղջիկների մեջ քեզ չէի ընտրի...

## ԲԵՌԼԻՆՈՒՄ ԵՍ ԿԱՐԴԱՑԵԼ

Մելիք Շահնազարի գյուղատնտես տղան հոր այգում թզենի էր տնկել, բայց ամեն տարի ցրտից չորանում էր: Դե Քիրսի տակ ի՞նչ թզենի: Մի օր նա դիմում է Պըլը Պուղուն.

- Պուղի, էս ինչի՞ց է, թուզը իմ տնկած այգում չորանում է, նռնենին եմ տնկում, չորանում է:

- Էդ նրանից է, որ Բեռլինում ես սովորել ծառ տնկելը, որ Ամարասում սովորեիր, կիմանայիր, որ Քիրսի տակ թուզը, նուռը, խաղողը, ծիրանը չի աճում, ցուրտը չի թողնում, որ աճի... Բեռլինի գիտությունը ղարաբաղցուն հաջար չի...



## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՍԵՐԸ

Պուղին եւ իր կինը երկար ապրեցին: Արդեն թոռ ու ծոռան տեր մարդ ու կին, ձմռան երկար գիշերին բուխարիկի առաջ նստած, ամեն մեկը իր մտքերի հետ ժամանակ էր սպանում, մեկ էլ կինը դարձավ Պուղուն:

- Ա Պուղ:

- Ա ջան, ասա:

- Ասեմ՝ էն որ ասում են սեր, էդ սերը ի՞նչ ա, դրա երեսը սկի ես ու դու չտեսանք:

- Պահո՛, պահո՛, էդ քավթառ էշին գարի ես ուտեցնում... Սերը էնա, է՛, էն, որ գալիս էի թաքուն ձեր դուռը, միասին գլովում էինք խոտի դեզի մեջ... Էնքան դանգլա-դորդոշ ես, մինչեւ հիմա չգիտես ինչ ա սերը... Բա էն յոթ աղջիկները ո՞նց ես բերել, ա դանգլա դորդոշ...

## ՊՈՒՂԻՆ ՄԵՂՐ ԷՐ ԾԱԽՈՒՄ

Պուղին մեղր էր ծախում շուկայում, սակայն մեծ-մեծ տառերով վրեն «պանիր» էր գրել:

- Ադա, Պուղի, ա մասխարա, էս ինչո՞ւ մեղրի վրա պանիր ես գրել, հարցնում են ծանոթները ու ծիծաղում:

- Բա ինչ անեմ, էս անտեր ճանճերը ջլաման չեն տալիս, պանիր եմ գրել, որ չգան զահլես տանեն...

## ԻՄ ԲԱԺԻՆԸ ԹՈՂ ԼԱՑ ԼԻՆԻ

Պուղու կինը օրորում էր երեխային, իսկ լացկան երեխան կարծես քնելու միտք չուներ: Հենց որ չէր օրորվում, լաց էր լինում:

- Ա Պուղ, մի քիչ էլ դու օրորիր, էս երեխան հո՛ մենակ իմը չէ, քոնն էլ է:

- Թող իմ բաժինը լաց լինի, դու քո բաժինը օրորիր,- ասում է Պուղին:

## ՊՈՒՂԻՆ ԵՎ ՀԱՐԲԱԾ ԱՂԱՄԸ

Պուղին փողոցում պատահում է հարբած Աղամին: Աղամը տակից, գլխից թոխրում է, Պուղին բան չի հասկանում: Աղամն ավելի է թեժացնում իր «զրույցը»:

- Աղամ, էն աստվածը, չեմ իմանում ինչ ես ասում, կաց մտնեմ դուքան, Մոսու մոտ, մի երկու գավաթ էլ ես թող անիմ, բալքի լեզուդ հասկանամ...

## ԱՂԱՄԸ ՎԱՐՁ ՉԻ ՈՒԶՈՒՄ

Աղամը մի զույգ չուստ է կարկատում Պուղու համար, Պուղին ուզում է վարձը տալ, Աղամը առաջարկում է.

- Պուղի, բա ամոթ չի՞, էլ ո՞ր օրվա հարեւաններ ենք, ավելի լավ չէ՞ Ամարասի թթենու այգուց քաշած օղուց տաս: Ղազարին էլ եմ լավություն արել, թող նա էլ մի գառ մորթի, վերցնենք, գնանք Միտորաշեն, Սոսի ծառի տակ խմենք նրա կենացը...

- Ա թաղված, բազի մարդ էլ ասում է՝ Աղամը խելք չունի, Սողոմոն իմաստունի խելքը էնա գլխումդ, բա քեֆից ո՞վ կհրաժարվի...

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԽԱՂ ԳՑԵԼԸ

Հատկապես ձմռանը Պուղին շուտ-շուտ խաշ էր գցում, ճռռիկով թթի օղին սեղանին դնում ու կանչում ընկերներին: Եկավ մի ժամանակ, երբ էլ խաշ չէր գցում Պուղին: Նրա քեֆի ընկերները մի օր զարմանքով հարցրին.

- Էլ մեզ խաշի չես կանչում, Պուղի:

- Ծան որդիներ, կարծում եք մեր դռան չորսոտանիները կաստելներով պիտի հանդ գնա՞ն,- զարմանում է Պուղին:



## ՊՈՒՂԻՆ ԱՌԱԿ Է ՊԱՏՄՈՒՄ

- Պուղի, մի առակ ասա, լսենք, ամա տես, ավարա-մավարա բաներ չասես, ինձ կատաղեցնես, մեկ էլ տեսար գլուխդ ուսերից թռավ, ընկավ գյոռոտը:

- Պատմեմ, Մելիք Շահնազար, պատմեմ գլուխ ուտողի, փառքի հետեւից ընկածի եւ անմեղ աղավնու մասին:

Հեռու քեզանից, մի իշխան է լինում, նա ունենում է երեք տղա: Սրանք մեծանում են; չափահաս դառնում: Մի օր, երբ ես տղաները մենակ մնալով սկսում են զրուցել, հայրն ասում է՝ մի լսեմ, տեսնեմ ինչ են խոսում սրանք:

Տղաներից մեծն ասում է, որ մենք մարդ չինենք, կենդանի լինենք, ես կուզեի առյուծ լինել, որ թագավոր լինեմ կենդանական աշխարհում:

Միջնեկ տղան ասում է.

- Ես էլ կուզեմ արծիվ լինել, որ բոլորից վեր լինեմ:

Փոքր տղան ասում է.

- Ես էլ կուզեմ աղավնի լինել, ոչ ոքի նեղություն չպատճառել, ապրել բարի վարքով ու անունով:,

Հիմա Մելիք Շահնազար, հաշվիր, թե այդ իշխանը դու ես, իշխանությունդ որի՞ն կտաս:

- Պուղի, ա մեռած, պել ես, բայց խելոք պել ես, որի՞ն՝ խորհուրդ կտաս, որ կտակեմ իշխանությունս:

- Դու ասա, Մելիք:

- Չէ, դու ասա:

- Դե երդվիր, որ խոսքդ կկատարես:

- Երդվում եմ:

- Ավետարանի վրա երդվիր:

- Երդվում եմ, ձեռքը Ավետարանին դնելով երդվեց Մելիքը:

- Ուրեմն, իշխանությունդ տալիս ես փոքր տղայիդ՝ աղավնուն:

-Խոստանում եմ, ա Պուղ, բայց ես դարն աղավնու դար չէ, արծվի դար է:

- Մելիք, Պուղին չի այդպես պահանջում, առակն է պահանջում...

## ԷՍ ՄԱՐԴԸ ՂԱՐԱԲԱՂՑԻ ՉԷ

Շուշվա շուկայում հավաքված տաք-տաք խոսում էին, երբ նրանց մոտեցավ Պըլը Պուղին:

- Ա՛, բարեւ, բարով տեսանք Պուղի ախպեր,- ամեն կողմից մոտենում են մարդիկ, բարեւում են նրան:

Նրանց մեջ մեկը շվար կանգնած է մնում:

- Էս մարդը ղարաբաղցի չէ,- ասում է Պուղու ընկեր Ղազարը:

- Դուզա, բա ո՞նց իմացար,- հաստատում է մի շուշեցի:

- Որ ղարաբաղցի լիներ, կճանաչեր մեր Պուղուն...

## ԵԿԵՔ ՁԵՐ ՀԱՐՍԸ ՏԱՐԵՔ

Ղազարի աղջիկը ուզում են, տանում հարեւան գյուղը հարս, մի երկու օրից հետո փեսան բերում է, թողնում հերանց տանը ու ինքը գնում: Սպասում են, չեն գալիս հարսի ետեւից, ստիպված Ղազարը գնում է խնամու տուն եւ ասում.

- Ձեր հարսը ինչո՞ւ չեք տանում:

- Հարսը բանեցրած է:

- Բանեցրած է, թե անբան է, ձեր հարսն է, եկեք տարեք...

## ԴԵ ԷՆԱ ԱՍԱՑԻ ԶՐՆԳ, ԷԼԻ

Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին գնում են Թիֆլիս, հյուրանոցը շատ թանկ է լինում, Մելիքն ասում է.

- Ա Պուղ, եկ ինձ համար տոմս վերցնեմ, դու էլ հետս արի, մի անկյունում կքնես:

- Բա որ ստուգե՞ն:

- Ստուգեն, կնստես գետնի վրա, ես չուխայով կծածկեմ քեզ:

- Հետո՞:



- Հետո որ հյուրանոցի տերը հարցնի, կասեմ՝ զանգ է, եկեղեցու համար եմ առել:

Այս պայմանով Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին տեղավորվում են հյուրանոցում: Հենց որ հյուրանոցի տերը գալիս է, Մելիքը չուխայով լավ ծածկում է Պուղուն:

Հյուրանոցի տերը լավ նայելուց հետո նկատում է հյուրանոցի մի անկյունում գտնվող տարօրինակ բանը եւ հարցնում.

- Էս ի՞նչ է:

- Զանգ է, եկեղեցու համար եմ առել:

Հյուրանոցի տերը ձեռքի բանալիով խփում է «զանգին»: Պուղին, որ լսում էր այդ բոլորը, ասում է՝ զրնգ:

Մարդու ձայն լսելով, հյուրանոցի տերն ավելի ամուր է խփում.

- Էշի քուռակ, դե էնա ասացի զրնգ, էլի,- չուխայի տակից բարկությամբ ասում է Պուղին...

## ՇԱՔԱՐ, ԹԵ ԶԱՓՐԱՆ

Զանաղչի գյուղում մի մարդ կար, անունը Շաքար: Պուղին շատ էր զարմանում, թե էդ Շաքար անունով մարդը ինչու է այդքան ամբարիշտ, կռվարար, կծու, ճամփից դուրս:

Մի օր փողոցում պատահելով նրան, հարցրեց.

- Անունդ ո՞վ է դրել:

- Տեր Մինասը:

- Նա էլ է շուն-շան որդի, դու էլ... արա, բա որ դու Շաքար ես, Զափրան ո՞վ ա...

### ՈՐ ԳՅՈՒՂԵՆ ՄԻ ՄԱՏ ՀԵՌՈՒ ԳՆԱՐ

Կռվի դաշտում ծանր վիրավորվում է Մելիք Շահնազարը: Նրան տուն են բերում, հետո ծայր է առնում զրույցը:

- Այդ ոնց եղավ, որ Մելիքը վիրավորվեց, մի տես, է՛, լավ է ճակատին չի դիպել:

- Ի՞նչ եք ամեն մեկդ ձեր գողից մի զարի գցում: Մելիքն է մեղավոր, եթե թշնամու գյուղից մի մատ հեռու լիներ, յա թա չէ, գյուղան մի մատ հեռու գնար, Մելիքը չէր վիրավորվի,- ասում է Պուղին:

### ԻՆՔԸ ԷՏ ԷԼ ՉԻ ԱՆԻ

Մեռավ գյուղի քյոխվա Միրզեն: Պուղին գերեզմանի կես ճանապարհից թաղման թափորը թողեց ու ետ դառավ:

- Ա Պուղ, ուր ես գնում, ետ դառ, ամոթ է,- նկատեց Ղազարը:

- Ղազար, ես իմ արեւը, ես որ մեռնեի, Միրզեն էդ կես ճանապարհն էլ չէր գա իմ դիակի հետեւից...

### ՔԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ

Պըլը Պուղուն հարցրին.

- Պուղի, քանի տարեկան է Մելիք Շահնազարը:

- Երբ ես ջահել էի, նա հիսուն տարեկան էր. հիմա չեմ իմանում՝ ինչքան կլինի էդ շան որդին...



### ԲԵՐԱՆԴ ԼԱՎ ԲԱՑ ԱՐԱ

Առավոտ-առավոտ Ղազարը պատահեց Պուղուն ու սկսեց նախատել նրան.

- Էդ խե ամեն օր Մելիքի հետ կռվի մեջ ես լինում, Պուղի:

- Հիմի որ քեզ հետ էլ կռվեմ, ասելու ես մեղավոր եմ: Արա, պատահել ես, մի բարի լույս ասա, մի անուշ խոսք ասա, բերանդ լավ բաց արա, այ Ղազար...

### ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ

Մելիք Շահնազարի փոքր աղջկա անունը Աննա Խաթուն էր: Քանի դեռ օրորոցում էր, Պուղին նրա վրա ուշադրություն չէր դարձնում: Երբ սկսեց բակում խաղալ, հաճախ էին կանչում նրան.

- Աննա Խաթուն, այ Աննա Խաթուն, արի տուն:

Մի օր փողոցում պատահելով տեր Մինասին, հարցրեց.

- Մելիք Շահնազարի աղջկա անունը դո՞ւ ես դրել:

- Հա:

- Ղալաթ ես արել: Աննան բոլա, Խաթունն էլ պահեիր մեկ ուրիշի համար,- շատ լուրջ դիտողություն է անում Պուղին:

## ՁԵՌՔԵՐԸ ԴՐԵԼ Է ՔԱՄԱԿԻՆ

Մի կին շուկայում ծմակի զկեռ էր ծախում: Պուղին մոտեցավ, ձեւի համար հարցրեց.

- Ի՞նչ արժե զկեռի կիլոն:

- Հինգ շահի:

- Յա, քոլի զկեռի կիլոն հինգ շահի՞,- զարմացավ Պուղին:

Կինը չարացավ Պուղու վրա:

- Սրան տեսեք, ձեռքերը քամակին է դրել, կարծես չգիտենք, որ մասխարա Պուղին է:

- Այ կնիկ, քեզ հորով չասացի, մորով չասացի, ի՞նչ ես չարացել, իմ ձեռքերը իմ քամակին եմ դրել, բա հո՞ քո քամակին չեմ դնելու...

## ԽՈՍՔԵՐԻՍ ՀԵՏ ԳՈՐԾ ՉՈՒՆԵՔ

Չանաղչին մեծ գյուղ է, գյուղամիջում, Մելիքի տան մոտ բազար կար: Առավոտից մինչ իրիկուն այնտեղ էին հավաքվում մարդիկ, հատկապես՝ ձմռան օրերին ու զրուցում: Դա ոչինչ, լավ էր, վատն այն էր, որ մարդիկ հաճախ էին Պուղուց բողոքում Մելիքին:

- Պուղուն ասա լեզուն իրեն պահի:

Մեկ-երկու, Մելիքը կանչում է Պուղուն եւ դիտողություն անում:

- Բազար եկողները շատ են գանգատվում քեզանից, ասում են լեզուն իրեն չի պահում:

-Մելիք Շահնազար, դրանք ինչ գործ ունեն իմ լեզվի հետ, հիմի ես իմ նղարեն չխփեմ, թե իրենց քունը տանում է...



## ՇՈՒՆ-ՇԱՆ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԿԵՆԱՑԸ

Պըլը Պուղին իր թայ-թուշի հետ հաճախ էր քեֆ անում: Մի ամռան օր էլ թաշախուստով, ընկերներով գնացին Քիրսի թթու ջրի մոտ քեֆ անելու: Հինգ-վեց հոգի էին՝ Պուղին, Ղազարը, դուքան Մոսին, տուտուշ Մուքին, դալլաք Խեչոն... Գնացին, որ մի գիշեր մնան այնտեղ, լավ քեֆ անեն:

Երբ մթնեց, լավ կրակ վառեցին, նորից սեղան բացին, գինու կժերը հանեցին սառը ջրից ու անուշ կենացներով տաքացրին քեֆը: Որ շատ խմեցին, Պուղին Ղազարին ասաց.

- Մի ազիզ կենաց ասա:

- Պուղի, որ ինձ խոսք ես տվել, շատ շնորհակալ եմ, միշտ խոսքում լինես, բայց ես ի՞նչ կենաց ասող եմ, խնդրում եմ նեղություն քաշես՝ իմ փոխարեն էլ երկու խոսք ասես:

- Դե լավ, որ էդպես է, ես մի բաժակով էլ իմ անունից էն շուն-շան որդի Մելիք Շահնազարի կենացը խմենք:

Բոլորը գոհ խմեցին շուն-շան որդի Մելիք Շահնազարի կենացը:

## ՀԱՐՎԱԾ ԲՈՒԹ ԳՈՐԾԻՔՈՎ

Միլիցիայի տեղամասային տեսուչն արձանագրություն է կազմում երկու խուլիգանի համար, որոնք կռվել ու իրար քիթմռութ են ջարդել:

- Պարզվում է, որ Աբել Բալայանն ընկերոջ երեսին խփել է բութ գործիքով, այսինքն՝ գլխով,-կարդում են նրա կազմած արձանագրության մեջ:

## ՊԱ ԼՅԱ ՄԻՆԸ ԻՆԻՎԵՉ ԷՍ ՍԱՂ ՉԵՆՈՒՄԸ

Սանթուրի թոռը նոր ուսումնական տարում պիտի հաճախեր դպրոց: Երկու ամիս առաջ ուսուցչուհի Աշխենը դռնեդուռ ընկած ցուցակագրում էր առաջին դասարանցիների անունները: Երբ հերթը հասավ Սանթուրի թոռանը, պապը թոնթորեց, դժգոհեց, որ իր թոռն էլ պիտի դպրոց գնա: Ուսուցչուհին զարմացավ:

- Սանթուր ամի, ինչո՞ւ ես դեմ գնում, երեխան ծրի 1 1 տարի կկարդա, գրագետ մարդ կդառնա:

- Աշխեն, քեզ մատաղ, վախտա գալու, մեր գյուղում անգրագետ մարդկանց ճրագով են ման գալու, պա լիա մինը ինիվե՞չ սաղ չենումը...

## ԵՐԵՎԻ ՑՐՅԵՂԵՂ ԵՆ ՈՒԶՈՒՄ ԱՆԵԼ

«Խորհրդային Ղարաբաղ» թերթի հին համարներից մեկում գրված է, որ որոշված է, որպեսզի Բադարա գետի վրա կառուցվեն 30 միլիոն, իսկ Կարկառ գետի վրա՝ 20 միլիոն խորանարդ մետր ծավալով ջրամբարներ:

Լսելով այդ մասին, հին ստեփանակերտցիները կատակեցին.

- Հալբաթ ուզում են մեր քաղաքը ջրհեղեղի տակ թողնել:

Անցել են շատ տարիներ, էլի կրկնում են այդ հին երգը, իսկ Ստեփանակերտն աշխարհի միակ մայրաքաղաքն է, որ չունի ոչ մի շատրվան, ոչ մի պլպլակ, եւ ոչ կարգին ծորակ: Օրինակ, եթե մարդ ծարավ է Ազատության հրապարակում, պետք է մեկ կամ կես կիլոմետր ճամփա անցնի՝ բնական աղբյուրից ջուր խմելու: Այդ տեղանքին ծանոթները, իսկ անծանոթները պիտի ծարավ դուղու կանչեն եւ սպասեն Բադարայի 30 միլիոն խորանարդ մետր ջրին...

Էդ ե՞րբ կլինի...



## ՍԱՄՎԵԼ ԱՊՈՐ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մաճկալաշենցի Սամվել ապան ասումար՝ ա խոխեք, ինձանա ձեզ հիշատակ, լսեցեք էս խոսքերը եւ լավ հիշեցեք, տեսեք ինչքան դուզ պեն կա տրա մեջ:

Էդ խե մինը կյողա, մինը խելոք, մինը պել, մինը բախտավոր, մինը անբախտ, մինը հզոր, մինը թույլ, էդ հինչանա՞:

- Հինչանա՞, Սամվել ապա,- հարցնում են նրան:

- Էդ նրանայա, վեր մարդ իր մոր արգանդումը ձեւավորվելիս մի սհաթ կա, կինը էդ ժամին հինչի հանդիպում ա, հինչ տեսնում ա, արգանդում տպավորվում ա: Օրինակ, եթե շան ա հանդիպում, խոխան շան վարք ա ունենում, եթե էշիյա հանդիպում, խոխան դանգլայա ինում, եթե խելոք մարդու ա հանդիպում, խոխան խելոք ա ինում: Իտի էլ բոլոր հարցերում: Էս հինչ ասում ըմ, լսալում Ափունց դերից, խոխա վախտս: Տեսեք քանի տարի ա անցկացալ, ես էդ բանի վրա դեռ միտք եմ անում: Դե հալբաթ դերն էլ մի իմաստունից ա լսալ, կամ կարդացալ ա Սողոմոն իմաստունի մոտ, ախր շատ ճիշտ պենա ասալ դերը...

## ՏՈՒ ԿԱՐԵԼ ՉԸՍ ԻՏԻ ՂԱԼԱԹ ԱՆԻՍ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը ղոնաղն քինում Գանջու խանի մոտ: Խանը ընդունում ա իրան պալատումը, իրան թայ-թուշի հետ: Ուտում ըն, խմում, լավ քեֆ անում: Մելիք Շահնազարը թանկագին նվերներ ա տամ, գորգեր, զենքեր, ոսկի:

Էս խանի պալատի պատերին նախշուն նկարներ ա ինում քաշած: Պուղին մի տեղ նկարի վրա յեշումա տեսնում հայերեն կրած՝ «Նաղաշ»: Ըստեղ մաննը կծում ա, կարում ֆի դոզում անե, ասումա խանը ապրած կենա, էս պալատը տուվըս շինամ, թա՛ ովի՞շը:

Խանը դուզն ասումա, չէ, ես չըմ շինալ,- ասում ա,- իմ հար ա շինալ, շինողն էլ հայերըն իլալ:

- Ախր հինչքան մտածում ըմ, տու կարել չըս իտի ղալաթ անիս,- ասում ա Պուղին:

## ԹԱԼԻՇԵՑԻ ԱՂՈՆԻԿԸ ԵՎ ԳԱԼՍՏԻԿՈՎ ՄԱՐԴԸ

Թալիշեցի Աղոնիկը Երեւանից գյուղ է գալիս: Այնպես է պատահում, որ կողքին նստում է մի ջահել մարդ, գալստիկը կապած, կոստյումը հագին, գիրքը ձեռքին. «Սա անպայման վարժապետ կլինի»,- մտքում մտածում է Աղոնիկը: Որոշ տեղ ճամփա գնալուց հետո, գալստիկով մարդը հարցնում է.

- Քույրիկ ջան, անունդ ի՞նչ է:
- Աղոնիկ:
- Որտե՞ղ ես աշխատում:
- Կոլխոզում:
- Ի՞նչ ես անում:
- Հավարած եմ, հավերի ֆերմայում եմ աշխատում:

Ճամփի կեսին այս մարդը նորից է հարց ու փորձ անում, հարցնում կնոջ անունը, գյուղը, գործատեղը:

Աղոնիկը նորից տեղը-տեղին պատասխանում է:

Իրիկնապահին, երբ ավտոբուսը մոտենում էր Մարտակերտին, գալստիկով մարդը նորից է հարցնում նրա անունը:

Աղոնիկը սրտնեղած ասում է.

- Միթամ հորս հրցընես, որ մտեդ պահում չես...

## ՉՐՈՒՑՑ ԱՎՏՈԲՈՒՍՈՒՄ

Մի ճարտարեցի ավտոբուսումը նստում ա մի խնուշինակեցու կողքին եւ հարցնում.

- Ներողություն, աքուր, ջտղացելըս:
- Խնուշինականըմ,- պատասխանում է կինը:
- Հա, լավ կինի, անումդ իհնչա՞:
- Հայկանուշ ա:
- Հա՛, քանի խոխա օնիս:
- Ութ:
- Հա՛, մարթ օնիս:



- Քյուլիմ կլոխդ, պա էդ ութ խոխան փոնջը՞մ ըրալ:

Էս ճրտրեցեն տեսնում ա վեր խնուշինակեցի կնեզը նեղացել է իր հարցերից, ասում է.

- Հայկանուշ, նեղանալ մեր, քո անունով մի կին էլ մեր շենումը կա, մարդ չոնե, բայց ամեն տարի մի խոխայա պիրում, արդեն ութ ըրախա օնե:

Հայկանուշը շոֆերին խնդրում ա մաշինը կանգնեցնի: Մաշինը վեր կանգնում է, ասումա՝ ա ժողովուրդ, մի լոխ սուս ըրեք, մին պեն ասիմ.

Ասումա՝ մեր գյուղի անուննա ա եր իլալ, մեզ ըն դոնգեբուրգեցի ասում, ճրտրեցեք բոլորից դոնգի են, մին հարցրեք էս մարդան, էս իհնչ անիամ զրուցա վեր անումա ինձ հետ...

## ՇՈՒՇԵՑԻ ՉՈԲԱՆԻ ԳՅԱՓԸ

Շոշ գյուղում մին չոբան ա ինիս, զեռ չոբան, էս գյուղումը մի «թոռնս քիս» օղլուշաղ էլ է ինիս: Մի օր էս չոբանը էս օղլուշաղին մոշ քղելիս ասում է.

- Նուբար, եկ ես ու տու գյափ անինք:

Ասումա՝ անինք:

Գյափն անում, իրենց գործը տեսնում, բաժանվում, քյնում ըն:

Մին շաբաթ հետո էս չոբանը հեռվից տսնաս ա Նուբարին եւ կնչես.

- Նուբար, Նուբար:

Նուբարը թա՝ իհնչա, աղտ ա պակաս, թա՝ մաղտ:

Տա թա՝ եկ գյափ անինք:

Նուբարը թա՝ կյամչում:

Տա թա՝ խե կյամ չըս:

Նուբարը թա՝

- Գյափը ծակես ցավ ա տաս...

## ՅՈՐ ԵՄ ԵՐԿԱՐ ԾԱԾԿԵԼ, ՈՐ ՊԻՏԻ ԲԱՑԵՄ

Աղոնիկը մի դույլ լիքը ձվեր էր տուն տանում ֆերմայից: Դույլի բերանը ծածկել էր:

Ճամփին պատահում է հարեւան Շահումը, հարցնում.

- Աղոնիկ, էս ինչ ես տանում, մի բաց արա տեսնեմ:
- Շահում, միթամ հոր եմ ծածկել, որ պիտի բացեմ...

## ՅԱՆՑ ՍՈՒՏ ԱՍԱ, ՂՈՐԹԻՑ ՄՈՏԻԿ ԼԻՆԻ

Շահումը գնում է Թալիշի կոլտնտեսության նախագահ Յայկազի մոտ ու գանգատվում, ասում է՝ իրենց հարեւան Աղոնիկը ամեն օր 100 ձու է բերում ֆերմայից, ուղարկում Մարտակերտ:

Յայկազը, որ մտերիմ հարաբերությունների մեջ էր Աղոնիկի հետ, կանչում է հաշվապահ Աբելին ու հարցնում.

- Մեր հավերը օրական քանի՞ ձու են ածում:
- 90-95-100, ոչ ավել:
- Լավ, Շահում, որ Աղոնիկը օրեկան 100 ձու գողանա, կոլխոզը իր ձվամթերմը որտեղի՞ց կտա... տնաշենի կին, հանց սուտ ասա, որ ղորթից մոտիկ լինի...



## ՄԵԼԻՔ ՇԱՅՆԱԶԱՐԸ ԵՎ ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՈՐՍԻ ԵՆ ԳՆՈՒՄ

Պըլը Պուղին եւ Մելիք Շահնազարը որսի են գնում: Մելիքը հրացանով, Պուղին մի հին, ժանգոտված սուր կողմից կախ: Երբ մտնում են մթին ձորի անտառը, Պուղին նկատում է, որ քիչ առաջ իրենց քայլող կածանով արջ է անցել: Նոր, թաց գետնի վրա հսկա արջի թաթերի հետքերը տեսնելով, Պուղին կանգնեց ու ասաց.

-Մելիք Շահնազար, արջ չէ, ասես մի փիղ է անցել էստեղով:

- Աղա, բա ի՞նչ անենք:

- Դու առաջ գնա կամաց-կամաց, տես էդ անտերը ուր է գնում, ես էլ հետ գնամ, տեսնեմ էդ որտեղից է ընկել մթին ձորի անտառը...



## ՊՈՒՂԻՆ ՍՊԱՆՈՒՄ Է ՄԵԼԻՔԻ ՇԱՆԸ

Մելիքը թվանքը տվեց Պըլը Պուղուն եւ ասաց.

- Գնա մեր մարագը, աղվեսը էնտեղ բուն է դրել, սպանիր:

Պուղին գնաց, սպանեց Մելիք Շահնազարի շանը, որ հսկում էր կալի մարագը:

- Արա, շան որդի, ես ասում եմ գնա աղվեսին սպանիր, տու շոնն ես սպանո՞ւմ:

-Մելիք Շահնազար, նախ իսկական շուն-շան որդին դու ես, հետո էլ շունը որ շուն լիներ, աղվեսը մարագում բուն չէր դնի...

## ԷՍ ՄԵԿԸ ԲՈԼԱ ՄԵՐ ՕԽՏԸ ՊՈՐՏԻՆ

Ղազարի տղան երկար ժամանակ չէր ուզում ամուսնանալ: Երբ շատ ստիպեցին, ասաց.

- Ապա, ես ուզում եմ երկու կին ունենալ:

-Ա շան տղա, երկու կինը ի՞նչ ես անում:

- Ես էդպես եմ ուզում:

- Լավ, դեռ մի անգամ պսակվիր, հետո երկրորդը կուզես:

Այս պայմանով պսակվեց Ղազարի տղան: Անցավ մի քանի ամիս, երկրորդ կնոջ մասին ոչ մի խոսք չէր ասում հորը:

Ղազարը ստիպված մի օր հարցրեց որդուն, թե երբ է ուզում երկրորդ կինը առնել:

- Ապա, էս մեկը բոլա մեր օխտը պորտին, երկոորդը էլ հարկավոր չի.- խեղճացած ասում է Ղազարի տղան:

## ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ԾԻԾԱՂԵՆ ՎՐԱՍ, ՔԱՆ ԼԱՑ ԼԻՆԵՆ

-Պուղի ապա, գիտե՞ս որ մարդիկ քեզ վրա ծիծաղում են:

- Լավ են անում, դրանց ցավը տանեմ ես, ավելի լավ է ծիծաղեն վրաս, քանց թե լաց լինեն,- պատասխանում է Պուղին:



## ՄԵԼԻՔԸ ԻՐ ՁԻՆ ՉՃԱՆԱՉԵՑ

Մելիքի ձին նիհարել է, Պուղին ձին բաց թողեց, որ ազատ մի քանի օր հանդում արածի գիշեր-ցերեկ: Հետո Պուղին ձիու պոչն ու յալը խուզեց, որ ձին ավելի ազատ զգա իրեն: Անցավ մի ամիս, Մելիքը կարգադրեց, որ ձին բերեն, նստի գնա Ամարաս: Ձին Պուղին բերեց, բայց Մելիքը չճանաչեց իր ձիուն:

- Ա մեռած Պուղի, ձիս հանցա փոխսն քցալ, թա սա իմ ձին է, բա պոչի, յալի մազերը հորա՞:

- Խուզել եմ, Մելիք Շահնազար: Հաշվիր քո բեղերն ու միրուքն էլ եմ խուզել, ուրեմն խանումը քեզ չպիտի ճանաչի՞:



## ՊՈՒՂԻՆ ԲԱԽՏ Է ԳՈՒՇԱԿՈՒՄ

Մի կին գալիս է Պուղու մոտ եւ խնդրում,որ բախտին նայի: Պուղին կնոջը նստեցնում է իր դիմաց, մի գավաթ ջուր դնում նրա առաջ, երկար ջրին նայում ու հարցնում:

- Աղջի, սիրեկան ունե՞ս:

- Վայ, չէ, ա Պուղ, էդ ի՞նչ ես ուզում:

Պուղին նորից է նայում ջրի երեսին ու ասում.

- Այ աղջիկ, ջրի երեսին երեքով եք, մի կին, երկու տղամարդ:

- Էդ մեր հարեւան Ռուբենը կնի, էնքան ասացի ինձ մոտ գալը թարգ արա, խե լսե՞ց...

## ՂԱԶԱՐԸ ՃԱՆԱՉԵՑ ՊՈՒՂՈՒՆ

Մի տարի Ղազարը բոստանչի էր Մելիք Շահնազարի բոստանում: Բոստանի ամենից թեժ ժամանակը բոստանչիները ձգտում են մարդ չտեսնել, մարդ չճանաչել: Դրան սովորել էր նաեւ Պըլը Պուղին եւ ձգտում էր ամռանը բոստանների կողմերում չերեւալ: Այս անգամ կորել էր Պուղու կովը, եւ նա դուրս եկավ հանդերը որոնելու եւ այդպես հասավ բոստանների կողմը: Նրան տեսնելով հեռվից, Ղազարը կանչեց.

- Ա Պուղ, դեսը եկ:

-Յա, էդ ո՞նց ճանաչեցիր ինձ, Ղազար:

- Ո՞նց թե...

- Արա, դե այս օրերին բոստանչիները սովորաբար մարդ չեն ճանաչում...



## ԴԱԼԼԱՔ ԽԱՉԻՆ

Պուղին ձեռ է առնում դալլաք Խաչուն, ասում է նրա թրաշած երեսի վրա էնքան մազ է մնում, որ մոշահավերը կարող են բուն դնել նրանց մեջ:

- Բա որ գլուխ է խուզում,- հարցնում են ջահելները:

- Էդտեղ էլ չաղալները, արջերն են բուն դնում:

## ՀԱՍԿԱՆԱԼԻ Է...

Ղազարը Մելիք Շահնազարի խաղողի այգու պահակ էր: Այգին հսկում էր հեռվից, բլրի վրա շինած հոլիկից: Մեկ էլ նկատեց, որ մեկը իր համար արխային մտել էր այգին ու քաղում է խաղողը: Հեռվից սկսեց գոռգոռալ, հայհոյել նրան. կողքից հասկացրին, որ Մելիքի տղան է բաղը մտել:

- Հասկանալի է, հասկանալի է,- խոսքի ոձը փոխեց Ղազարը...

## ՈՒՄ ՀԵՏ ԱՄՈՒՍՆԱՆԱՄ

Մի մարդ Սարուշենից գալիս է Պուղու մոտ, խորհուրդ հարցնում նրանից:

- Միասին 30 տարի ապրելուց հետո կինս մահացել է, ի՞նչ խորհուրդ ունես, ո՞ւմ հետ պսակվեմ:

- Զոքանչ ունե՞ս:

- Ունեմ:

Քենի էլ ունե՞ս:

- Ունեմ, մարդն էլ մեռած:

- Էդ է, որ կա, գնա քենուդ առ, մեղք ես, որպեսզի նորից մի նոր զոքանչի գերի չմնաս,- բարի խորհուրդ է տալիս Պըլը Պուղին:

## ԴՈՒ ԵՐԲ ԵՍ ԽԵԼՔ ՈՒՆԵՑԵԼ, ՈՐ ԿՈՐՑՆԵՍ

Պուղին նախատեց Մելիք Շահնազարին, ասաց Մելիք, դու բացարձակ դավաճանել ես հայ ժողովրդին, Շուշին տալով Փանահ խանին:

- Ա Պուղ, հալբաթ խելքս կորցրել եմ:

- Մելիք Շահնազար, էնպիսի սուտ ասա, որ սազի, դու երբ ես խելք ունեցել, որ կորցնես:

## ՄԵԼԻՔՍ ՈՐ ԴՈՒ ԵՍ, ԹԻԹԵՌ ԷԼ ԵՄ ԴԱՌՆՈՒՄ

- Ա Պուղի, շատ ես մաշվել, ուղղակի ծիտ ես դարձել:

- Մելիք Շահնազար, որ մելիքս դու ես, թիթեռ էլ եմ դառնալու,- պատասխանում է Պուղին...

## Ի՞ՆՉ ՄԱՐԴ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ

Քյոխվա Ավետիսը ջրաղացի ճանապարհին բռնեցրեց Պուղուն ու հարցրեց.

- Ա Պուղ, Մելիք Շահնազարը ի՞նչ մարդ ա:

- Չեմ ասի, Ավետիս, զոռով ինձ վատամարդ մի դարձրու, չեմ ասի...

## ԵՐԲ ԵՆՔ ԹԱՂԵԼՈՒ ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՆ

Թաղում էին Պըլը Պուղու հասակակից մի մարդու: Մի խումբ երիտասարդներ շրջվեցին Պուղու շուրջը եւ սկսեցին ձեռ առնել նրան:

- Պուղի ապա, բա քեզ երբ ենք թաղելու առաջ-փառաջ:

- Ղուռում սաղեր, հույս ունեք, որ այդ ժամանակ դուք սաղ եք լինելո՞ւ...



## ԱՐԱՂ ԱԾԵԼԸ ՔՈ ԳՈՐԾԸ ՉԷ

Ամեն անգամ օղի լցնելիս Ղազարի ձեռքը դողում է, օղու կեսը թափվում: Մի օր էլ, երբ դողդողացող ձեռքով նա օղի է լցնում Պուղու բաժակը, Պուղին բռնեց նրա ձեռքը եւ ասաց.

- Ղազար, դու կարող ես լավ աղ ցանել Մելիք Շահնազարի կտրած մատի վրա, յա թա չէ լավ կաշի դաբաղել, արաղ ածելը քո գործը չէ, էլ էդ գործով չզբաղվես...

## ԷՇԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ա Պուղ, դե որ իմաստուն ես, մի հարց տամ, պատասխանիր,- մի օր ասաց Մելիք Շահնազարը:

- Տուր, էլի մի դանգլա բան ես ասելու:

- Էշի եւ մարդու տարբերությունը ո՞րն ա:

- Մելիք Շահնազար, այդ տարբերությունը մեծ ա: Էշը երբեք մարդ չի դառնա, բայց բազի մարդ հեշտությամբ էշ է դառնում...

## ԱՇՈՒՂԸ

Մի աշուղ, դե հուվա գիդում թե էդ աշուղը հուվա իլալ՝ աշուղ Դոստին, աշուղ Վահեն, աշուղ Առստամը, աշուղ Բորջին, վերջը մի աշուղ ա իլալ: Էս աշուղը շոռ կալավ կյամա Սոս գյուղում մի տան ղոնաղ ընկնում: Էս աշուղը տեսնումա վեր էս տան մարդը շատ տգեղ ա, ամմա կինը մի հուրի-փերի ա: Տեսնում ա, զարմանում: Վեր հացն ուտում, էս կնոջ մարդը տուսակամ տոռնը թա ջուր քինա, թա հինչ անի, աշուղը մենակ ա մնում կնոջ հետ եւ հարցնում ա նրանից, թե էս հի՞նչ զատա, էս հալա իտի պեն տեսած չըմ, տու էդքան գեղեցիկ, մարդըդ էդքան գեշ, էդ հունցա՞ իլալ, վեր քեցալս տրան:

Էս կինը աշուղեն ասում ա.

- Աշուղ ախպեր, ինձ հղցա տուս չոնիս, Աստված իմ փայը տայա տվալ... Էս վեր իստիյա ասում, աշուղը իմնչիլան նիետ երա կենում սազը յոր օնում, սուսուփուս տուս կյամ տանան ու քինում, թա շտեղ ա քինում, մինչեւ միենգ ոչ ոք գիդում չի: Պա՛, տի կնեգ էլ ա ինում, վեր մարդին փափախը միշտ պեցուր ա պահում: Չուր չի ասված, վեր Սոս, նշանակում է պեցուր, մեծ, անառիկ...

ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԿՏԱԿԸ

Պուղին մեռնում էր, տեսնելով, որ այլեւս վեր չի կենա, կնոջը ասում է, որ կանչի տերտերին, թող կյա կտակս գրավոր օրինի: Կանչում են, տերտերը գալիս է Պուղու դիմաց նստում, երեսը խաչակնքում, դավթարը բացում, արծվի փետով գրիչը գոտուց վերցնում, թանաքամանը գրպանից հանում եւ սպասում:

- Դե գրիր, տեր հայր, գրիր, որ մեծ աղջկանս՝ Վարդիթերին, որ 10 ըրախա օնե, 10 ոսկի եմ կտակում, միջնակ աղջկանս, որ 5 ըրախա օնե, 5 ոսկի եմ կտակում, հետո գրիր, որ մնացած աղջիկներիս երեք-երեք ոսկի եմ կտակում, կնոջս՝ 6 ոսկի, քեզ՝ տեր հայր, մի ոսկի:

Տեր հայրը ասում է.

- Ա Պուղ, ես քեզ բոլորից շատ եմ սիրում, հարգում, խե իմս բոլորից քիչ ես տալիս:...

- Լավ,- ասում է Պուղին,- քեզ էլ երկու ոսկի եմ կտակում:

Տերտերը կտակը կազմում է, գնում տուն, կնոջը պատմում, որ Պուղին իրեն էլ երկու ոսկի է կտակել: Կինն ասում է.

- Արա, էդքան ոսկին Պըլը Պուղուն որտեղի՞ց է, որ կտակել է բոլ-բոլ:

Տեր հայրը ոտքի վրա հետ է դառնում, գալիս Պուղուն հարցնում, թե որտեղի՞ց պիտի այդքան ոսկին տա: Պուղին տնքալով ոտը հանում է յուրղանի տակից ու ասում.

- Վըններես տական ըմ տըլական, ա տեր, վըններես տական...



ԱՊԱՆ ՀՈՒՆՑ ՄԵՌԱՎ

Տռնավարզ գյուղում երկու ախպեր միասին ապրում են հայրական տանը: Նրանց հանդերը Գեւորգավան են: Ամառը գալիս է, արտերը հնձելու ժամանակ էտ երկու ախպերը, վեր մինին անունը Բեղի ա ինում, մինին անունն էլ Աբել, քնումըն հոնձ: Մի անգամ կսօրանը յետը խաբարը հսնում ա, որ իրենց հարը մահացալ ա: Կուձի ախպերը մեծ ախպորը ասում ա՝ Բեղի, ես հոնձ անիմ, տու քինի ապորը թաղե՝ եկ:Հինչըմ ասում, ասում ա փոքր ախպերը, ու գնում գյուղ, հորը թաղում, անցկենում կյամ իր գործին կենում: Միենգ կեսօրին քանի անգամ փրթուշըն ոտում, կուձի ախպերը ասում ա՝ դե նաղլ ըրա տեսնեմ ապորը հո՞ւնց թղեցեր: Մեծ ախպերը սկսում ա պատմել, կուձի ախպերը փրթուշը քթուլիարում ա, տակեն սկի պեն չի մնում: Մեծ ախպերը նկատում ա, վեր կուձի ախպերը ամեն օր ապոր թաղման նաղլը պատմելա տամ, որ ինքը շատ ոտե փրթուշը: Մեհետ էլ, վեր նստումն հացի, էլի կուձի ախպերը ասում ա՝ մի կարգին պատմե-տեսնեմ ապորը հունց թղեցեք, հունց մեռավ:

Մեծ ախպերը բարկացած ասում ա.

- Ապորը հերն էլ, քո հերն էլ, դե հունց մեռավ, հա հունց մեռավ, փուի արեց մեռավ, թղեցե, եկե, պրծա՞նք,- ասում է եւ սկսում փրթուշը քթըլահարել...

## ՅԻԼԻՍԵՑԻ ՅԱՐԱԲԵԴԻ ԲԱԶԱՐ ՔԻՆԱԼԸ

Իրիկունը հիլիսեցի Յարաբեդը պատրաստություն է քաշում, առավոտյան վերցակը վեր կանչում ա, երա կենում, էշը փլանում, խուրջինը յրա քցում, ինքն էլ կուպծլիգ նստում էշի վրա եւ ճանապարհ ընկսում դեպի Աղդամ: Օզում ա շուտ տեղ հսնե, տեսա-տենա ծախե, հինչ հարկավոր է առնի ու շուտ էլ կյա տուն:

Յարաբեդը լիա վեր հսնում է վագոնեն հղեն՝ Ձաստավը, տեսնում ա էսա կուկուշկան ծենը-ծվվոցը քցած հանդերը, կամա Ստեփանակերտա: Կյամ-կյամ, թուշին Յարաբեդի ճանապարհը կտրում, կանգնում, վեր ջուր յորոնե: Ասումա՝ էս լիա ինծ հետեյա եկալ. Ըղդամա մաչավն քնում, էշս քմկան կապիմ, ես էլ նստեմ, շուտ հսնիմ, առեւտուրս անիմ, ետ տեռնամ կյամ: Իտի էլ անում է: էշը կապում ա վագոնեն վեռան, հավգան յոր օնում, նստում պեց-պիցիար վագոնում: Կուկուշկան սաս ա անում, հղե ինում, նրա ճխկճխկոցից Յարաբեդի քեֆը գալիս ա: Աղդամում էլիա վագոնը կանգնում է: Յարաբեդը քշանում ա թա էշը յետ անե վագոնից, տեսնում ա մենակ էշի գլուխն ա մնացլ, մնամ ա ցմաքած.

- Պա ես մհենգ հուր կենզատ անիմ,- դարդս հո՞ւր պատմիմ,- մնումա շվար կանգնած:

Էս պենը որ ջենումը լսումն, մինչեւ մհենգ պատմումն, իսկ Յարաբեդը ասումա էդ բոլորը դորթա. էշի պատմությունը սխալ, էշը դասիդ եմ վգոնեն վեռան կապալ...



## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԱՐՏԸ

Պըլը Պուղին ու իր կինը Շուշի քաղաքից ծի նստած գալիս են, իրենց արտի կածանով ծռվում դեպի ջրաղացի ձորը: Կինը նայում է արտին եւ ասում.

- Պա՜հ-պա՜հ-պա՜հ, էս ինչ լավ արտ է, ասես սանդրած լինի, հասկերը մեծ-մեծ, բողումնը հաստ, տեսնես ո՞վ է տարը մեռածը, իստի բախտավորներ էլ կան, է՞:

Պուղին ասում է.

- Ա քնծահար, մեր արտն ա, խե ուշունցմ տամ, խե աչքավս տամ

Պուղու կինը իսկույն փոխում է խոսքը եւ ասում.

- Ես էլ ասում եմ խե իստի քոսակ արտա, հասկերը ցեկ, մաչը քաղհանով լիքը, յանի սա արտա՞, վեր վարալս, պասկի ուրիշների օրորվող արտերին եշում չը՞ս... Էս կոտըս վարա՞լ, թա՞ ցորեն, վեր իստի ցեկա մեր արտը...

## ԱՐՋՆ Ա ՄԱՐԴԸ

Արջն ու մարդը ընկերանում ըն: Մարդը արջին ասումա՝ միասին ցանինք, միասին հնձինք, միասին կալսինք, եղածը կալսինք, եղածը կես անինք, իտի ապրինք իրար օգնելով: Արջը ասումա հինչ կինի, լավ կինի: Իտի էլ անումըն, ամմա մարդը երկու անգամ լավ խաբում ա արջին: Մին դոնում տերմանը տամար արջին, ցորենը ինքը յոր օնում, մին դոնում էլ՝ պեղըն ա յոր օնում, տերեւը տամ արջին: Էդ վեր իտի ա անում, արջը էլ համբերում չի, թքում ա մարդու երեսին, լուռ հեռանում:

Էտ վատությունը սկի արջերը սերնդե-սերունդ մոռանալ չըն, վեր մարդըն տեսնում, թքոտում ըն:

Պա հունց չի թքոտի, յանի մարդը իտի նամարդ պենը կանե, վեր ըրավ...

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԳԻՆԻՆ

Մելիք Շահնազարը գինի էր վաճառում: Տարին բոլոր նրա տան ներքնահարկում, խանութպան Մոսին, թշերը տռոզ, փորը տռոզ, ոնց որ գինում տիկ, գինի էր ծախում: Թեեւ գիտեին, որ նա գինու վրա ջուր էր լցնում, բայց առնում էին: Պուղին մի քանի անգամ բողոքեց Մելիք Շահնազարին, նա Պուղուն ծեռ առնելով ասաց.

- Այ գյադա, Մոսին մի կարաս գինին երկուսն է շինում, էստեղ ի՞նչ վատ բան կա:

Մի տարի շատ անձրեւ եկավ, խաղողի բերքը փչացավ. Մելիքը ոժգոհեց.

- Էս անտեր երկինքի տակը ծակվել ա, անձրեւը կժերով է գալիս:

- Տակից չի ծակվել, Մոսու գինում վրա լցված ջրերը հավաքվել են երկնքում, հիմա լողացնում են քո խաղողի այգիները...

## ԱՍՏԾՈՒՑ ՉԵՍ ՎԱԽԵՆՈՒՄ, ՇՆԻՑ ՎԱԽԵՑԻՐ

Մի տերտեր գյուղի ծայրին մենակ էր ապրում: Ամեն գիշեր, անցնելով գյուղի փողոցները, գնում, շնություն էր անում մի կնոջ հետ: Մի գիշեր էլ նրան հանդիպեց թափառող մի շուն եւ քոլոլեց:

Երբ այդ մասին լուրը տարածվեց գյուղում, Պուղին ասաց.

- Աստծուց չի վախենում մեր տերտերը, թող գոնե շնից վախենա...



## ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՆ

Մի մարդ մի չար կին ուներ եւ չորս տղա: Մի օր կռվելով մարդու հետ, ասաց, որ չորս տղաներից միայն մեկն է իրենից, իսկ երեք տղաները ուրիշից են: Երբ մեռնում էր այդ մարդը, կտակեց, որ իր հարստությունը տան հարազատ որդուն: Նրա մահից հետո չորս որդիների մեջ վեճ եղավ: Ամեն մեկը ասում էր, թե ինքն է հարազատ որդին: Երբ գործը դատարան հասավ, դատավորը կարգադրեց մեռածին հանել եւ դնել մի քարի վրա, ապա ասաց.

- Ահա նետն ու աղեղը, ով ձեզանից զարկի այնպես, որ նետը խրվի նրա սրտի մեջ, նա էլ կստանա կտակը: Տղաներից երեքը իսկույն նետահարեցին մեռած մարդուն, իսկ այն, որ իսկական որդին էր, զասումով ելավ եղբայրների դեմ եւ ուզում էր ծվատել նրանց, ասելով, թե այդպիսի անխղճություն չի կարելի անել:

Դատավորը ճանաչեց իսկական որդուն եւ հարստությունը տվեց նրան:

## «ՀԻՎԱՆԴ» ԵԶԸ

Եզը մի օր որոշեց հիվանդ ձեւանալ, որ լծեն, եւ երբ հաջորդ օրը հանդ տարան, չոքեց գութանի ակոսի մեջ եւ սկսեց տնքալ, ինչ արին չարին՝ չբարձրացավ տեղից: Պըլը Պուղուն կանչեցին ասացին՝ տես ինչ ես անում, մի ճար արա, բարձրացրու տեղից: Պուղին ուշադիր զննեց եզանը, նայեց նրա աչքերի մեջ, տեսավ, որ եզը հիվանդ չէ, մոտեցավ եւ նրա ականջին շշնջաց.

- Հիվանդ մի ձեւանա, քո տերը ուզում է մորթել քեզ, դրա համար է ինձ կանչել:

Եզը այդ լսելով, ելավ տեղից եւ մտավ լծի տակ...

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Անտառում լուր տարածվեց, թե առյուծը ծննդաբերել է: Ինչպես կարգն է, անտառի բոլոր բնակիչները գնացին աչքալուսանքի: Երբ աղվեսը առյուծի մոտ նկատեց նրա միակ ձագին, չկարողացավ պահել զարմանքն ու տարակուսանքը եւ հարցրեց.

- Դուք առյուծ լինելով, ինչո՞ւ մի ձագ եք ծնել:

- Ով ողորմելի, ես ծնում եմ մի կորյուն, որ մեծանալով առյուծ է դառնում, իսկ դու ծնում ես շատ ձագեր, որոնք միշտ աղվես են մնում...





ԽԵԼՔ ԾԱԽՈՂ ԽԱՆՈՒԹՊԱՆԸ

Թագավորը լսեց, որ իր քաղաքում մի խանութպան դատարկ խանութում նստած խելք է ծախում: Այդպիսի բան նա ոչ մի տեղ չէր տեսել, ուստի գնաց իմանալու, թե ինչ մարդ է նա:

- Ծի՞շտ են ասում, որ դու խելք ես ծախում,- հարցրեց խանութպանին:

- Այո՛, ճիշտ են ասում:

- Ի՞նչ արժե մեկ կիլոգրամը:

- Թագավորը ապրած կենա, կիլոգրամով չի, իմ մեկ խորհուրդը 50 ոսկի արժե:

- Այդ դեպքում վերցրեք այս 50 ոսկին եւ ինձ մի խորհուրդ տվեք:

Խանութպանը ոսկին վերցրեց եւ թագավորին ասաց.

- Ինչ անում ես, մտածելով արա:

Թագավորը ուզեց ետ վերցնել տված ոսկին, բայց հետո մտածեց, թե դրանով կգցի իր պատիվը: Համենայն դեպս, միշտ իրեն խաբված էր զգում, բայց նազիր-վեզիրներին հանձնարարություններ տալիս ասում էր.

- Ինչ անում եք՝ մտածված արեք:

Իսկ գլխավոր նազիր-վեզիրը արդեն կաշառել էր թագավորի վարսավիրին, որ նրան թրաշելու ժամանակ կտրի վիզը: Վարսավիրը վերցրել էր կաշառքը եւ սպասում էր հարմար պահի: Եվ ահա թագավորը իր ոտքով գնաց, նստեց վարսավիրի առջեւ, ու մինչեւ վարսավիրը փութաջանորեն սրում էր ածելին թագավորի վիզը կտրելու համար, թագավորը նրան ասաց.

- Ինչ անում ես, մտածելով արա:

Վարսավիրը, կարծելով թե թագավորը գիտե իր մտադրության մասին, ընկնում է նրա ոտքերը, աղաչում, պաղատում, որների, խոստովանելով, որ իրեն հանցագործության է մղել նազիր-վեզիրը:

Թագավորը կարգադրում է բռնել վեզիրին, հարցաքննել եւ բոլոր մեղավորներին ենթարկում է մահապատժի, իսկ վարսավիրին ազատում է, նրա հետ գնում խելք ծախող խանութպանի մոտ:

- Հիմա համոզվեցի, որ խելք ես ծախում եւ այն էլ՝ շատ էժան: Առ այս 150 ոսկին, քո խորհրդի շնորհիվ ես փրկվեցի մահից...






## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ ՈՉ ՄԻ ԱԶԳԻ ՉԻ ՊԱՏԿԱՆՈՒՄ

Մելիք Շահնազարը ուզում էր պսակել իր տղային: Նա մարդիկ ուղարկեց Վարանդայի բոլոր գյուղերը, որ գտնեն ամենագեղեցիկ աղջկան եւ բերեն իր մոտ՝ որպես հարսնացու: Նա ուզում էր գեղեցիկ թոռնիկներ ունենալ: Գտան նրա ցանկացած սիրուն աղջիկը եւ բերին նրա մոտ: Մելիքը հավանեց նրան եւ պսակեց իր տղայի հետ, բայց մինչեւ հարսը զավակ կունենար, Մելիքի տղան մեռավ: Մելիքն ուզեց հարսին կին վերցնել, տերտերը դեմ դուրս եկավ, կաթողիկոսը դեմ դուրս եկավ, իսկ ժողովուրդը սկսեց անիծել նրան: Մի քանի հոգի հավաքվեցին, գնացին Պուղու մոտ, խնդրեցին խրատել Մելիքին: Պուղին իր հերթին խրատ կարդաց Մելիք Շահնազարին, բայց նա, կարծես, չէր լսում նրա խրատը: Պուղին բարկացավ եւ ասաց.

- Մելիք Շահնազար, գիտեմ, որ դու ինչ մտածել ես՝ կանես, քանի որ դու ոչ մի ազգի չես պատկանում...

## ԵԶԸ ԵՎ ՁԻՆ

Եզը եւ ձին օգտվում էին նույն ախոռից, եզը խոնարհ ուզում էր իր բաժինը եւ լուռ մտորում, իսկ ձին ուտում էր եւ անհոգ խրխնջում: Մի օր վերջապես եզը դարձավ նրան եւ ասաց.

- Ես օրնիբուն դաշտում, կալում աշխատում եմ, արտ եմ անում, աշան եմ անում, սայլ եմ քաշում, իսկ դու եւ քո տերը իմ աշխատանքը խժռում եք եւ գոնե չգիտեք ինձ մոտ ձեզ համեստ պահելը:

## ՀԱՐԱՄԸ ԵԿԱՎ ՀԱԼԱԼՆ ԷԼ ԻՐ ՀԵՏ ՔՇԵՑ ՏԱՐԱՎ

Պըլը Պուղին Մելիք Շահնազարին հաճախ էր խրատում. մի օր էլ նա ասաց.

- Մելիք Շահնազար, աստված վերեւից նայում է, ժողովրդից քիչ հարկ վերցրու. քո արտերը, այգիները, հոտերը, մալը, դովլաթը բոլորից շատ է, իսկ դու բոլորից քաշում ես, համ քաշում:

Մելիքը չէր լսում նրան, շարունակում էր քամել ժողովրդի վերջին ունեցածը:

Ամառ էր, դեռ կանգնած էին Մելիքի արտերը, այգիներում հասնում է բերքը, երբ օրը մթնեց, ամպրոպ եղավ եւ հասուն արտերն ու այգիները կարկուտն ու սելավը առան իրենց տակ, կարծես դա քիչ էր, սարերից էլ լուր բերին, թե սելավը քշել է Մելիքի ոչխարի հոտը:

Մելիքը շվար կանգնած էր գյուղամիջում, ոչ ոք չէր ցավակցում նրան, ընդհակառակը, Պուղին մոտեցավ Մելիքին եւ նախատեց.

- Մարդ ես, մարդու կարկատան ես, մի բան որ ասում ենք, գոնե մի անգամ լսիր: Էն որ զոռով առար՝ հարամ էր, էն հարամը եկավ հալալն իր հետ տարավ, ի՞նչ անենք, աստծո կամքը էդպես է...



## ԳՐԱԳԵՏ ԳԱՅԼԸ

Ձին բաց էին թողել ազատ արածելու: Այդպես անհոգ արածելով, հասավ անտառին, որ գայլը, արջը, աղվեսը սպասում էին որսի: Ձիուն մենակ ու ոտնակապի մեջ տեսնելով, ուրախացան եւ մոտենալով նրան, մտերմաբար ասացին.

- Ձի ախպեր, լավ է, որ պատահեցիր մեզ, մի ամբողջ օր է վիճաբանում ենք, թե ով է մեզանից ամենից մեծը, աղվեսն ասում է՝ես Ադամից էլ առաջ եմ ծնվել, արջը ասում է՝ես գալիս եմ նախամարդու քարանձավից, ինչ մնում է ինձ՝ գայլիս, ում չի հայտնի, որ Հռոմը ես եմ հիմնադրել, մեզ հարկավոր է մի ավագ ընտրել մեր մեջ, դու քանի՞ տարեկան ես, ձի ախպեր:

-Իմ տարիքը գրված է հետեւի ոտքիս տակ,- ասաց ձին ու ոտքը բարձրացրեց:

Գայլը շտապեց կռանալ ու կարդալ նրա ծննդյան թիվը: Ձին նալած ոտքով այնպես քացի տվեց գայլի դնչին, որ աչքերը կայծին տվին, ընկավ եւ սկսեց թավալվել: Արջը վախից ետ-ետ գնաց, իսկ աղվեսը՝ խաչակնքեց դեմքը եւ ասաց.

- Շնորհակալ եմ քեզնից, աստված, որ ինձ անգրագետ ես թողել...

## ԷՇԻ ԹՈՌԸ

Էշը թոռ ունեցավ: Նրան աչքալույսի գնացին այծը, ոչխարը եւ կովը:

- Ինձ ի՞նչ, եթե մեկ թոռ չի, տասն էլ ունենամ, իմ բեռը չի թեթեւանա,- տխրությամբ նրանց ասաց էշը:



## ԱՌՅՈՒԾԻ ԿԱԹԸ

Ղարաբաղի Դիզակի Մելիք Ավանը պարտություն չի տեսել իր օրում:

Մի օր Մելիք Շահնազարը հարցրեց Պըլը Պուղուն.

- Ա Պուղ, էդ ինչից է, որ Մելիք Ավանի զինվորները միշտ հաղթող են դուրս գալիս, իմը՝ չէ:

- Էդ նրանից է, Մելիք Շահնազար, որ նրանք մարտից առաջ մի-մի թաս առյուծի կաթ են խմում:

- Արա, բա որտեղի՞ց ճարենք այդ կաթը:

Քո պալատի նկուղներից: Թթի օղին է առյուծի կաթ կոչվածը: Փառք աստծո, Վարանդայում ինչն է բոլ, թթի օղին...

- Մելիք Շահնազարը այնուհետեւ իր զինվորներին մի-մի բաժակ առյուծի կաթ տալով համոզվեց, որ Պուղին ճիշտ է նկատել, որ թթի օղին առյուծի կաթ է:

## ԽՈՍԵԼՆ ԷԼ ԵՆ ԱՐԳԵԼՈՒՄ

Մի մեծ կյուլ, մի ջանավար կյուլ, ինչքան օգում ա ոչխարների հոտից մի ոչխար գողանա ստի, կարում չի: Հովվի շները թույլ չեն տալիս նրան՝ մոտ գա հոտին:

Կյուլը շատ հեռվից քարշ է գալիս հոտի հետեւից: Սովածությունից փորը սկսում է վեց-վեց անել: Ճարը կտրած մտնում է անտառ, մի քոլի տակ նստում եւ իր համար ոռնում: Որ ոռնում է, ձենը հասնում է հովվի շներին, նրանք գալիս են ղալմաղալով շրջապատում կյուլին: Սոված կյուլը զարմանումա եւ ասում.

- Ախպեր, մինչեւ հիմա արգելում էին միս ուտել, հիմա էլ խոսե՞լն են արգելում:

## ՀԱՇԻՎ ԵՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ

Էշը կալից ցարի է բերում տուն, քուռակը ետ ու առաջ ընկնելով հարցեր է տալիս մորը: Երբ հասան տուն, քուռակը նկատեց, որ խոզը պարապ-սարապ տան բակում առատ ցարի է ուտում:

-Էդ ինչո՞ւ խոզը գործ չի անում, բայց ուտում է մեր բերած ցարուց,- հարցրեց քուռակը:

- Թող ուտի, հետո նրանից հաշիվ են պահանջելու,- ասաց մայրը:

Եկավ հաշիվ պահանջելու ժամանակը եւ մորթեցին խոզին:

Հաջորդ օրը քուռակը տեսնելով, որ մայրը ցարի է խժռում, վախով ասաց.

- Մի կեր, մայրիկ, քեզանից էլ են հաշիվ պահանջելու...

## ԱՅԾԵՐԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՅԼԵՐԻ ՀԵՏ

- Մինչեւ երբ խռով կենանք գայլերից, եկենք հաշտվենք նրանց հետ, հանգիստ ապրենք,- մի օր ասաց այծերի առաջնորդը:

- Հաշտվենք,- ասացին ցեղակիցները եւ մի նամակով դիմեցին գայլերին՝ հաշտություն խնդրելով նրանցից:

Գայլերը ուրախացան եւ պայման դրին, որ կատարյալ հաշտության համար հարկավոր է մեջտեղից վերացնել շներին, իսկ հովիվներին ազատել աշխատանքից, քանի որ ոչ մի վտանգ այլեւս չի լինի:

Երբ այծերը գայլերի այս առաջարկը կատարեցին, գայլերը վրա հասան եւ կերան բոլոր այծերին...



## ԼԱՎ Է ՄԵՌՆԵԼ ԿԱՆԳՆԱԾ, ՔԱՆ ԱՊՐԵԼ ԾՆԿԱՉՈՔ

Քամին ուժգին փչեց: Հզոր կաղնին շառաչեց, կանգնելով քամու դեմ համառորեն, իսկ նրա չորս կողմում փարթամորեն աճած խոտերը մեկնեցին գետնի վրա, սպասեցին մինչեւ անցնի փոթորիկը:

Ուժգին փոթորիկը տապալեց կաղնուն, եւ երբ փոթորիկը անցավ, խոտերը կանգնելով նախկին դիրքով, սկսեցին ընկած կաղնուն խրատ կարդալ:

- Եթե դու էլ կարողանայիր մեզ պես պաշտպանվել քամուց, հիմա կանգնած կլինեիր մեզ պես:

- Ողորմելիներ, ավելի լավ է մեռնել կանգնած, քան թե ապրել ձեզ պես ծնկաչոք,- պատասխանեց մեռնող կաղնին:

## ԵՍ ՀՈ ԵՐԵԿՎԱ ԵՐԵԽԱՆ ՉԵՄ

Այնպես պատահեց, որ արջը, աղվեսը ու ուղտը ընկերացան եւ ճամփա ընկան՝ հասնելու համար դրախտի դուռը: Ճանապարհին մի գաթա գտան եւ որոշեցին, որ այն ուտի նա, ով որ նրանց մեջ ավագ էր:

Աղվեսն ասաց.

-Ես Նոյի տապանից եմ գալիս, ուրեմն գաթան ես պիտի ուտեմ:

Արջը առարկեց նրան, ասելով, որ ինքը կար ջրհեղեղից առաջ:

Ուղտը լսելով նրանց, գաթան առավ բերանը, եւ հանգիստ ասաց.

- Էնպես եք խոսում, կարծես ես ձեզ մոտ երեկվա երեխան եմ...

ՇՀԱՂԸ ԷՆ ԳԼԽԻՑ

Մի ջրաղացպան ջրաղաց գնացած մարդկանցից շհաղը (աղունի վարձը) վերցնում էր, հետո աղունը լցնում տաշտի մեջ: Երկար այնպես, որ մեռավ այդ ջրաղացպանը, նրան փոխարինեց նրա որդին, որը շհաղը վերցնում էր ջրաղացի բակում:Մի այրի կին տեսնելով այդ, սկսեց օրհնել հանգուցյալ ջրաղացպանին:

Ջրաղացպանի որդին հարցրեց.

- Ինչու օրհնեցիր իմ հորը: Նա նույնպես անում էր այն, ինչ ես եմ անում հիմա:

Դա ճիշտ է, բայց նա դա անում էր, երբ աղունը տաշտի մոտ էինք տանում, իսկ դու շհաղը վերցնում ես ջրաղացի դռանը...

ՄԵԼԻՔԸ ԸՆԿՆՈՒՄ Է ՓՈՍԻ ՄԵՋ

Մելիք Շահնազարը մի քանի բաժակ գինի էր կոնծել ու քեֆը քոք գնում էր որսի: Ինչպես միշտ, առջեւից գնում էր ինքը, հետեւից՝ Պըլը Պուղին: Մելիքը մի գլուխ գովում էր իրեն:

- Հեյ, գիտի ջահելությունն, յոթը քուլի վրայով մի ցատկով էի անցնում,- խոսքը դեռ բերանում, նա ընկավ մի փոսի մեջ ու կանչելով Պուղուն,հարցրեց.

- Այ գյադա, ho մարդ չտեսա՞վ:

- Չէ՛, Մելիք Շահնազար, չտեսավ, բայց խոսքը մեր մեջ, դու սկի ջահել ժամանակ էլ չէիր մի բան...



ԿԱՐԱՊԵՏ ԴԱՅՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ

(Սամվել Մամունցի պատմածը հին ու նորից)

Հայրենական մեծ պատերազմից հետո Մարտակերտի կոլտնտեսության նախագահ Կարապետ դային որոշեց մարզում առաջինը բացել մանկապարտեզ եւ բացեց: Նրա հոգսը այնքան երեխաները չէին, որքան նրանց մայրերը: Պատերազմից վերադարձած զինվորի ընտանիքներում երեխաներ էին ծնվում, բամբակի դաշտում աշխատող կանանց թիվը քչանում էր: Հարկավոր էր մանկապարտեզ բացել, որ երեխաների մայրերը շարունակեն աշխատել դաշտում:

Ամռանը Կարապետ դային «մանկապարտեզը» տեղափոխեց դաշտ: Մաքրեց ֆերմայի շենքի մի թեւը, առաջը ցանկապատեց դամիշով եւ խնդրեմ, «Մանկապարտեզը» պատրաստ էր:

Երբ Կարապետ դային ձի նստած դաշտ էր գալիս, «մանկապարտեզի» դաստիարակչուհիները երեխաներին շարք էին կանգնեցնում ու դալի մեջ պտտեցնում: Այդ պահին երեխաները ձեռք-ձեռք տված երգում էին.

- Այսքան ուրախ կյանքը մեզ

Ընկեր Ստալինն է տվել...

Կարապետ դային լսում եւ ուրախանում էր, բայց մի օր քեֆը լավ էր, լսեց ու տրտնջաց.

- Ուրեմն, Կարապետ դային հե՞չ... դե թող ընկեր Ստալինը Հոռաթաղի, Մեծ շենի, Թալիշի, Լենինականի երեխաներին էլ ուրախ կյանք տա, բա խե՞ չի տալիս...

Իրավացի էր Կարապետ դային...

## ՑԱՔԻ ԴԱՅԻՆ ՈՒ ՍԱՄՎԵԼ ՄԱՄՈՒՆՑԸ

Ցահել տղա էի, ինձ նշանակեցին ոչխարաբուծական ֆերմայի հաշվապահ: 10 հազար ոչխար ուներ կոլտնտեսության ֆերման, որի անփոփոխ վարիչն էր Ցաքի դային: Մի Ցաքի դայի էր, մի Մարտակերտ: Այն կարծիքը կար, թե Ցաքի դային, իսկապես, անփոխարինելի էր, փառքը տեղը, անունը տեղը, ոչխարների թիվը տարին բոլոր տեղը, պլաններն էլ կատարում էր, հո կատարում: Թեեւ հաշվապահ էի, բայց Ցաքի դային շարունակում էր ինձ երեխայի տեղ դնել: Մի օր կշռեցի պանիրը եւ ակտ կազմեցի, մեկ օրում 25 կգ պակասել էր... Ցաքի դային ջուկա էր գնացել...

Հետո բրդի վրա եղավ վեճ, հետո խոտի դեզերը չափեցինք ես ու Յաշա Բաղունցը, պարզվեց, որ Ցաքի դային չափ ու կշռի հետ գործ չունի: Նրա աչքաչափն էր ու խիղճը:Պետք է խոստովանեմ, որ Ցաքի դային խղճով մարդ էր, նրա կատարածը մանր զանցանքներ էին, որ գալիս էր նրա մեծ հեղինակությունից եւ վարքից: Մեկ-երկու օր ընդհարվեցինք, Ցաքի դային գնաց-զանգատվեց Կարապետ դայուն, սա էլ որպես հին կոմունիստ, կանչեց ինձ ու Յաշային . ասաց.

- Ա խոխ՛եք, թայղի մի ընկեք, մինա, իմ ու Ցաքու տեղը դուք պիտի աշխատեք էքուց, ալոր...

Երբ սոցիալական աշխատանքի հերոսի կոչում ստացա, Ցաքի դային դեռ ապրում էր եւ առաջինը եկավ ու շնորհավորեց ինձ...



## ԱԽ, Ա ԳՐԱԳԵՏ

Սանթուրը դասատու էր Մաճկալաշենում: Դասերից հետո նստում էր գյուղ մտնող ճանապարհի եզրին, թթենու տակ, աղբյուրի մոտ ու օրվա մնացած ժամերը անց ու դարձողի հետ զրույցով սպառում:

Հանդից խոտ շալակած գալիս էր գյուղի նահապետը՝ 90-ամյա Սամվել ապան: Անծանոթ մարդիկ նրան տեսնելիս ասում են՝ հազիվ 60 տարեկան լինի:

Սանթուրը տեսավ, որ Սամվել ապան ամեն օրվա պես կանգ չառավ իր մոտ, հետեւից կանչեց.

- Սամվել ապա:

- Աջան, Սանթուր, ասա, ի՞նչ ես ասում:

- Էս իրիկուն կլուբումը թատրոն-մատրոն ա ինական, գյուղը փահլեւան է եկել, կգաս:

Սամվել ապան լսեց ու բազմանշանակ բացականչեց.

- Ախ, ա գրագետ Սանթուր, ախ, ախ...

Սանթուրը սկի վարժապետի նման չէր խոսում:

## ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ

- Մելիք Շահնազար, դենը նայիր, հա՛, մեր գյուղի չուրջը յոթ սար կա, ամեն սարում՝ յոթ ծառ, ամեն ծառում՝ յոթ բույն, ամեն բնում՝ յոթ ծիտ, ամեն ծիտ ունի յոթ ձագ:

Էդ բոլորը քանի՞ ծիտ ու ձագ եղավ:

## ՏՈՂԵՐ ԴԵՍԻՑ-ԴԵՆԻՑ

***

Գայլը, ոչխարն ու խոտը պետք է անցկացնեն գետի մյուս ափը: Նավակում քեզ հետ դրանցից միայն մեկը կարող է տեղավորվել: Ինչպե՞ս անել, որ նույն ափին գայլի ոչխարի հետ չմնա, իսկ ոչխարն էլ՝ խոտի, որ գայլը ոչխարին չուտի, ոչխարն էլ՝ խոտը:

***

Ցրին ասին՝ ինչո՞ւ ես անվերջ ձեն հանում, վաշ-վիշ անում:
- Ի՞նչ անեմ, ընկերս քարն է,- պատասխանեց ջուրը:

***

Առավոտ գիշերով Ղազարը գալիս է Պողոսն արթնացնում եւ հարցնում:
- Ա Պուղ, էսօր բազար ե՞ս գնում:
- Հա:
- Դե մեր կնոջն էլ հետդ տար, լավ, նղանաս վեչ, վեր խնդրում եմ:
-Պա-պա-պա, էդ պենա՞ վեր ըսեցիր, Ղազար, բեռս որ կին լինի, մինչեւ Թեհրան էլ կգնամ նրա հետ...

### ՁԻՈՒ ՏԱՐԻ

Պուղի, լսե՞լ ես, ասում են՝ գալիք տարի ձիու տարի է լինելու:
- Քեզ ի՞նչ, Մելիք Շահնազար, դու էլի քո էշն ես քշելու,- խորիմաստ ասում է Պուղին:



### ՊՈՒՂԻՆ ԷԼ Է ՎԱԽԵՆՈՒՄ

Պուղին ու Մելիք Շահնազարը գնում էին Պարտավ: Ճամփին նրանց պատահեցին Պարտավից վերադարձող մարդիկ ու ասացին.
- Նռան դարայում մի խումբ ավազակներ թալանում են մարդկանց, զգույշ կացեք:
Մելիքի սիրտը ահի ընկավ:
- Վա՜յ ինձ, որ ճանաչեն, կասեն մելիք է ու կթալանեն, դեռ շորերս էլ կհանեն,- վախեցած ասում է Մելիքը:
- Վա՜յ ինձ, որ չճանաչեն ինձ, կկարծեն, թե ես էլ եմ հարուստ, կսպանեն, մոտս գրոշ չգտնելով,- մտահոգվում է Պուղին:

### ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՄԱՐԴԸ

- Պուղի, ա մեռած, կարող ես ասել, թե ով է Վարանդայի ամենաերկար ապրող մարդը:
- Ես, Մելիք Շահնազար,- պատասխանում է Պուղին:
- Ադա, էդ ո՞նց:
- Էնպես: Իմ մի օրը հոգսերով լի մի տարի է, Մելիք Շահնազար, քո տարին քեֆերով լի մի օր է, դրա համար ես երկար եմ ապրում...

***

- Պուղին մի կարճ ժամանակով Շոշ գյուղում հաճախում է տեր Ավագի «դպրոցը»՝ գրաճանաչ դառնալու համար:
Հենց առաջին օրը տեր Ավագը տափին ծլպատակ նստած Պուղուն հարցրեց.
- Պուղի, ասա տեսնեմ, ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը:
- Տեր հայր, ես եկել եմ քեզանից սովորելու, ոչ թե քեզ սովորեցնելու համար,- պատասխանում է Պուղին...

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՄՈՒՏԸ ՂՈՐԹԻ ՏԵՂ ԵՆ ԴՆՈՒՄ

Ապրիլի մեկին Պուղին մի ոսկե դրամ ձեռքին դուրս է գալիս գյուղամեջ եւ հանդիպելով Ղազարին, դիմում նրան:

- Ղազար, երեկ գնացել էի Ղոնդեզ՝ ուխտի: Արա, հենց մոտեցա վանքի դռանը, պատը փլվեց, պատից մի կարաս ընկավ ոտքերիս տակ, կոտրվեց, ոսկյա փողերը լցվեց առաջս: Ես մեկը վերցրի, բերի, որ ցույց տամ, համ էլ մի ջվալ վերցնեմ, գնամ լցնեմ, բերեմ:

Ղազարը, աղբյուրը ջրի գնացող կանայք Պուղու լուրը կայծակի արագությամբ տարածեցին գյուղում եւ գյուղն, ասես, դատարկվեց, որը ոտքով, որը էշով, որը ձիով շտապեց Ղոնդեզ: Պուղին գյուղում մենակ մնալով, մի ջվալ էլ ինքը վերցրեց եւ նստելով էշը, շտապեց հասնել Ղոնդեզ, ինքը իր հետ խոսելով.

- Ա Պուղ, սոտ կա, ղորթի տեղ է անցնում, մհե բալի քո սոտն էլ ա ղորթ, գնա, մի բան էլ ես բերեմ տուն...

## ԾՈՑՈՒՄՍ ԵՄ ՊԱՀԵԼՈՒ

Պըլը Պուղին պսակվել էր: Երբ հարսի ձեռքը դրին նրա ձեռքի մեջ, զոքանչը եկավ-կանգնեց Պուղու առաջ եւ շշնջաց.

- Քե մատաղ, Պուղի, լավ կպահես աղջկաս:

- Արխային կաց, ծոցումս եմ պահելու, ծոցումս,- ուրախ-ուրախ պատասխանեց Պուղին:



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՉԻ ՎԱԽԵՆՈՒՄ ՍԱՏԱՆԱՅԻՑ

Պըլը Պուղու կնոջ եղբայրը որոշում է վախեցնել Պըլը Պուղուն: Սատանայի տեսքով նա մի գիշեր կանգնում է Պուղու դիմաց: Պուղին ուշադիր նայում է նրան, ճանաչում ու քթի տակ ժպտում.

- Չիմացար ես ո՞վ եմ,- հարցնում է կնոջ եղբայրը:

- Իմացա, սատանան ես:

- Բա ինչո՞ւ չվախեցար:

- Ինչո՞ւ վախենամ, 40 տարի է ամուսնացած եմ քո քրոջ հետ,- խորիմաստ պատասխանում է Պըլը Պուղին:



## ԱՂԱՄԻ ՀԻՆԳ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Լուր է տարածվում, թէ Վարանդայում ով հինգ երեխա ունի, Մելիք Շահնազարը նրան հինգ հատ ոսկի է տալիս: Պուղու հարեւան կոշկակար Աղամը, որ տարվա մեծ մասն ուրիշ գյուղերում է լինում եւ ամեն գյուղում մի կին ուներ, այդ ամենը կնոջից թաքուն էր պահում: Բայց այդ լուրը լսելով, ուրախացավ եւ կնոջը ասաց, որ ինքն ուզում է գնալ ուրիշ գյուղերից իր երկու երեխաներին բերել, որ իր տան երեխաների հետ դառնան հինգը: Ոսկու խաթեր կինն ասում է՝ լավ կլինի:

Աղամը գնում է երկու երեխա բերում, մթնում է, տեսնում է իր երեխաները չկան:

- Այ կնիկ, էս ո՞ւր են մեր երեխաները:

- Դրանց էլ իրենց հերերը եկան տարան,- հանգիստ պատասխանում է կինը:





## ԱՆՆԱ ԲԻԲՈՒ ՀԱՑ ՓՈԽ ՕՆԵԼԸ

Աննա բիբին կանչեց թոռանը՝ Լուսինեին եւ ասաց.

- Լուսո, բաբոն մատաղ բոյիդ, վազիր հարեւան Աշխենի մոտ, երկու հաց փոխ բեր, կոզի նրանց հացը հացի վեռա չի ինում:

Լուսինեն գնաց ու ասաց.

- Աշխեն բիբի, բաբոն ասում է՝ երկու հաց փոխ տուր, կոզի ձեր հացը հացի վեռա չի լինում:

Աշխենը երկու հաց ձեռքին փռփրած եկավ Աննա բիբու մոտ.

- Աղջի, էդ որ իմ հացը հացի վեռա չի, բա ինչո՞ւ ուրիշից չես հաց փոխ օնում,-ասաց ու հացը դրեց հարեւանուհու սեղանին, թոնթորելով գնաց:

## ՂԱԶԱՐԸ ՊԱՐՏՔ Է ՈՒԶՈՒՄ

Ղազարը գնում է Պուղու մոտ եւ խնդրում.

- Պուղի, ուզում եմ կնոջս՝ Հեղինեի համար ուստա Բաղամից մի արծաթե քամար առնեմ, փող չունեմ, մի հարյուր մանեթ տուր, մի տարի էլ ժամանակ, մինչեւ փողը մի տեղից գտնեմ, քեզ տամ:

- Ղազար, այ Ղազար: Ժամանակը ինչքան ասես, ես կտամ, մենակ թե երբ փող գտնես, ինձ չտաս, պահիր քեզ համար եւ հաշվիր ես եմ տվել...

## ՊՈՒՂԻՆ ՉԻ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԱՍՏԾՈ ԳՈՐԾԵՐԻՑ

Պըլը Պուղին պսակվեց, առաջնեկը՝ աղջիկ, երկրորդը՝ աղջիկ, երրորդը՝ աղջիկ, չորրորդը՝ աղջիկ, այսպես տարին մեկ աղջիկ: Ամուսնության առաջին յոթ տարում յոթ աղջիկ:

Յոթ տարուց հետո պսակվեց նաեւ հարեւան Ղազարը: Առաջնեկը՝ տղա, երկրորդը՝ տղա, երրորդը՝ տղա, չորրորդը՝ տղա...

Մի օր գյուղամիջում, երբ ամեն օրվա պես հավաքվել-խոսում էին, Պուղին ասաց.

-Ես աստծո արարքից բան չեմ հասկանում: Ես ու Ղազարը մի տարում, մի օրում, մի ժամում ենք ծնվել, էս ոնց է, որ նա տղաներ է արտադրում, ես՝ աղջիկներ...

## ՊՈՒՂՈՒ ԶՈՔԱՆՉԻ ԿՌԻՎԸ ՊՈՒՂՈՒ ՀԵՏ

Ամեն անգամ, երբ Պուղու կինն աղջիկ էր ծնում, զոքանչը մի պարկ անեծք էր բերում ու թափում Պուղու գլխին՝ աղջիկ ունենալու ողջ մեղքը գցելով Պըլը-Պուղու գլխին: Մի օր էլ նա բարկացավ զոքանչի վրա:

Գյուղամիջում բոլոր մարդկանց ներկայությամբ Պուղին զոքանչին նախատեց.

- Քո աղջիկը աղջիկներ է բերում, ինձ ես մեղադրում,- ասաց նա:

- Բա ո՞ւմ մեղադրեմ, իմ աղջիկը հող է, դու մշակ, ինչ սերմ տալիս ես, էն էլ հասկ է շինում քեզ տալիս,- բարձրաձայն շպրտեց զոքանչը:

Պուղին նեղանալու փոխարեն ծիծաղեց ու դիմեց ժողովրդին.

-Ա խալխ, էսքան տարի չգիտեի, որ զոքանչս իսկական գիտնական է, հիմի ի՞նչ կասեք դրա փիլիսոփայությանը...



## ՊՈՒՂՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՄԱՍԻՆ

-Պուղի, էսքան տարի ապրում ես Մելիք Շահնազարի մոտ, դու բոլորից լավ գիտես նրան, ո՞նց մարդ է:

- Մարդ չէ, շուն-շան որդի է: Հերիք չէ հրեշի տեսք ունի, հոգին էլ ծախեց սատանային, բարեկամացավ, գող, ավազակ Փանահի հետ,- իր հեղինակավոր կարծիքը հայտնեց Պըլը Պուղին...

## ԳՅՈՒՂԻ ԳՈՂԸ

Գյուղի բացարձակ գողը Մանասն էր: Մի օր հանդում բռնում է հարեւան Ղազարի այծը, մորթում, գլուխը, ոտները, փորոտիքը դեն նետում, միսը մորթու մեջ փաթաթում, սպասում, որ մութն ընկնի: Մութն ընկնելուց հետո միսը կռնատակին գյուղ է մտնում: Ղազարը կորած այծին որոնելիս պատահում է նրան ու կասկածով հարցնում:.

- Մանաս, ա մեռած, էդ ի՞նչ է կռնատակիդ:

- Տկճորով գինի է, Ղազար, խնամուս գյուղից եմ գալիս,- պատասխանում է Մանասը:

Անցնում է մի տարի, ձմռան մի օր Ղազարը հարցնում է Մանասին.

- Ա մեռած, ամռան գողության մասին ձմռանն են պատմում, ճիշտն ասա, մեր այծը դու ես գողա՞ցել:

- Ղազար, ես ձեր այծը շատ եմ ճանաչո՞ւմ, իրեն մորթիները թաղթափուշու տակ, գնա տես որն է ձեր այծը:

## ՅԻՆ ՈԽԸ

Յարեւան Ղազարի հետ Պուղին հին ոխ ուներ: Ղազարի հայրը Պըլը Պուղու հոր տունը վառել էր: Դա այն ժամանակ էր, երբ Ղազարն ու Պուղին ոտաբոբիկ երեխաներ էին: Անցան տարիներ, Ղազարի տղան Պուղու աղջիկն ուզեց: Շատերը զարմացան գյուղում, թե ոնց է Պուղին մոռացել այդ թշնամությունը: Մի օր Մելիք Շահնազարը Պուղուն հարցրեց.

- Էդ ո՞նց համարձակվեցիր քո թշնամու որդուն աղջիկ տալ: Բոլորը գիտեն, որ նրա հերը ձեր տունը պաժառ է տվել:

- Մելիք Շահնազար, ես իմ աղջկա հինարը գիտեմ, իմ աղջիկն էլ նրանց տունն է պաժառ տալու...

## ՎԵՐՑԱԿԱՆ ԵՎ ՅԱՎԱՆ ՕՐԻՆԱԿ ՉԵՆ ՎԵՐՑՆԻ

Պըլը Պուղու հարեւան Աբելը ման էր գալիս ուրիշ կանանց հետ: Կինը բողոքեց: Աբելը արդարացավ, օրինակ բերելով իրենց աքաղաղը: Կինը լռեց ու ինքն էլ օրինակ վերցրեց հավերից: Բանը հասավ Դիվան Բաշուն, իսկ ՎարանդայիԴիվան Բաշին ինքը՝ Պըլը Պուղին էր:

Մարդ ու կին եկան նրա մոտ:

- Ես ձեզ վաղ եմ ասել, որ վերցակից ու հավից օրինակ չըն յորոնում, պա խե լսեցեք վեչ... Դի հիմա գնացեք հավն էլ մորթեցեք, աքաղաղն էլ մորթեցեք, կերեք եւ հաշտվեցեք իրար հետ...



## ՊՈՒՂԻՆ ՓԱԼՉԻ

Պըլը Պուղին գործով գնում է Մուղանի դաշտը, տեսնում է մոտիկ ղամուշոտներում մի ուղտ է արածում, մոտն էլ մի նախշուն խալիչա է ընկած, գլխի է ընկնում, որ ուղտի վրայից է ընկել: Ձիուց իջնում է, խալիչան վերցնում, տանում բոլորովին ուրիշ տեղ թաքցնում:

Պուղին երեք օր հետո գնում է ուղտատիրոջ մոտ, դեսից-դենից խոսում, հարցնում նրա օր ու հալից:

Թուրքն ասում է.

- Աշնա, ամեն ինչ լավ է, մենակ երեք օր առաջ գողերը ուղտի վրայից հանել են նոր գործած խալիչան:

- Աշնա,- ասում է Պուղին,- գետնի վրա մի քանի խազեր քաշելով:

- Ես կորած, գողացած ապրանք գտնող եմ,- ասում է ու գրպանից մի քար հանելով, աչքերը փակ գցում գետնին գծած գծերի վրա:

- Խալիչան չեն տարել, խալիչան մնում է, ինձ տար ուղտի արածած տեղը:

Թուրքը նրան տանում է մոտիկ ջամշոտը:

Պուղին նորից է խզմզում գետինը ու քարը նետում վրան: Էնա հա՛, խալիչան աչքով է անում,- ասում է, թուրքին ուղարկում ուղիղ խալիչի մոտ: Ու էսպես, գիտնականի անունն է ձեռք բերում թուրքերի մոտ:

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՆ ՉԿԱԽԵՑԻՆ

Մելիք Շահնազարը որոշել էր կախել Պըլը Պուղուն: Հերիք է, ինչքան իրեն խայտառակել է խալխի առաջ: Կախաղանի օրը ժողովուրդը հավաքվեց Չանախչու մեյդանում եւ սկսեց վաշ-վիշ անել, ասել, որ Պուղին մեղք չունի, արդար է, ազնիվ է, դե նա ո՞ւմ չի ձեռք առնում, էդ մարդու փեշակն էլ էտ ա... Ափսո՛ս, Պուղի:

Պուղին հանգիստ էր, մի դառը ժպիտ կար նրա երեսին:

- Հիմա ինձ կախո՞ւմ ես, Մելիք Շահնազար.- վերջապես խոսեց Պուղին:

- Հա, կախում եմ, որովհետեւ լեզուդ օձի փուշ է:

- Դե կախիր,- ասաց ու գնաց դեպի կախաղանի պարանը. ժողովուրդը աղմկեց:

- Ազատել Պուղուն, նա արդար է:

- Ի՞նչ է, ուզում եմ մեղավոր ու հանցագործ լինե՞մ,- հարցրեց Պուղին:

- Ո՛չ, ո՛չ,- կրկին աղմկեց ժողովուրդը:

- Դե թողեցեք ինչպես կամ, այնպես էլ կախի ինձ Մելիքը:

Մելիք Շահնազարը լսելով նրան, մոտեցավ պարանին, թրով կտրեց այն ու դարձավ Պուղուն:

- Ա մեռած, օխծե խելքը էնա քո գլխում, գնա ապրիր:

## ԷԼ ՀՈՐՍ ԹՈՔՈՒԾ ԱՍՈՒՄ

Լինում էր՝ Մելիք Շահնազարը սխալ վճիռ էր հանում, մարդկանց պատժում, փոշմանում եւ դարդահան լինում Պըլը Պուղու հետ: Մի օր էլ, երբ խոսք բացվեց այդ մասին, Պըլը Պուղին ասաց.

- Մելիք Շահնազար, էշը քերծի գլխից գլխիվար ցած ես գցում, հետո թոկուշ ասում...



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԶԱՐՄԱՆՈՒՄ Է

Պըլը Պուղին առավոտյան գնում է հարեւան Ղազարի տուն, տեսնում է Ղազարը քնած է, բարձի տեղ գլխատակին մի տիկ գինի է դրած:

- Էս ի՞նչ նաղլ ա, Ղազար, էս ի՞նչ գինու տիկ ա:

- Հոգեպահուստ ա, դրել եմ գլխիս տակ, քնել, որ երեխաները չխմեն:

- Ղազար, կեցցե՛ս դու, որձաքարի պես տղամարդ ես, արա, պա քունդ ո՞նց ա տանում, գինին գլխատակիդ դրած՝ չես խմում:

## ՇԱՏ ԵՍ ԴՈՆԳԻ, ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐ

Մելիք Շահնազարը մի օր Պըլը Պուղուն խիստ նախատում է.

- Պուղի, շատ ես ժուլիկ, է՛, շատ:

- Վա՜հ, Մելիք Շահնազար, դու էլ շատ ես դոնգի, է՛, շատ, դրանից է, որ իմ խելոք գործերը քեզ ժուլիկ են թվում...

## ՄԵԼԻՔԸ ԲՈՂՈՔՈՒՄ Է ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԿԾՈՒ ԽՈՍՔԵՐԻ ԴԵՄ

- Ա Պուղ, ինձ շատ ես քննադատում, շատ ես կծու խոսքեր ասում:

- Մելիք Շահնազար, ես ի՞նչ անեմ, որ կծու խոսքս չես ընդունում, ախր քաղցր խոսքերին էլ արժանի չես, ես հիմա գնամ ո՞ր գետն ընկնեմ, որ քշի տանի ինձ...

## ՏԵՐՏԵՐԻ ԽՐԱՏԸ

Տերտերը մի օր Պըլը Պուղու գլխին երկար քարոզ կարդաց, երբ խոսքն ավարտեց, Պըլը Պուղին դարձավ նրան ու հարցրեց.

- Տէր հայր, էդ քո կարդացած քարոզներից քեզ սկի բաժին չի՞ հասնում: Տարիներ բոլոր ուրիշների համար ես քարոզ կարդում, մի անգամ էլ քո համար կարդա, ի՞նչ կլինի, հո՞ ջրհեղեղ չի լինելու:

## ՄԱՆԱՍ-ՍԱՆԱՄ

Պըլը Պուղին հարեւան Մանասին պատահելիս բարեւում է եւ ասում.

- Բարեւ, բարեւ, Սանամ, լավ է, որ քեզ տեսա:

Մանասը նեղանում է դրանից:

- Ապուշ, չես տեսնու՞մ, որ ես Սանամ չեմ, այլ բեղ ու մորուքով Մանաս եմ:

- Դու եւ Մանաս ես, եւ Սանամ:

- Էդ ո՞նց:

- Էնպես: Հենց որ անունդ թարս եմ կարդում՝ Սանամ է դուրս գալիս...



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳՏՆՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԱԽԵՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԸ

Պըլը Պուղին փորձում է իր երեխաներին վախեցնելով լռեցնել: Երբ երեխաները չարություն էին անում, ասում էր.

- Այ լակոտներ, հիմա սատանային կասեմ՝ կգա, ձեզ տանի դժոխք:

Լռում, սպասում էին երեխաները ահով, իսկ սատանան չէր գալիս: Իմանալով, որ սատանան չկա, սատանան սուտ է, երեխաները սկսում են նորից չարություն անել:

Պուղին մտածեց, մտածեց եւ գտավ ելքը: Մելիք Շահնազարից էլ լավ սատանա՝ բոյը երկար, ականջները՝ երկար, գլխի մազերը՝ ցից-ցից, միրուքը՝ ցանցառ, քիթը՝ երկար ու կեռ, աչքերը՝ չարությամբ լիքը, ունքերը՝ խուրձ-խուրձ ցախավելներ: Երեխաները չէ, մեծերն էլ են վախենում նրա տեսքից:

- Մելիք Շահնազար, ես այսքան տարի ծառայում եմ քեզ մոտ, մի օր էլ դու ինձ ծառայի:

- Ա շաշ, էդ ի՞նչ պիտի ծառայեմ:

Հեչ, պիտի գաս մեր տուն, էն լակոտներին վախեցնես, որպես սատանա:

## ՊՈՒՂԻՆ ԱՅԾ Է ԳՆՈՒՄ

Շուկայում Պըլը Պուղին հանդիպեց մի մարդու, որը մի կով եւ մի այծ էր ծախում: Կովի գինը գրված, կախված է նրա ճակատից, այծինը՝ չէ: Դրա համար էլ Պըլը Պուղին հարցրեց կովի տիրոջը:

- Ախպերացու, այծը քանիսո՞վ ես ծախում:
- Այծը կովի հետ եմ ծախում, այսինքն՝ ձրի:
- Որ այդպես է, այծը տուր ինձ, կովն էլ Մելիք Շահնազարը կառնի,- ու դառնում է Մելիքին.- Ճիշտ չե՞մ ասում:

Մելիքին մնում է համաձայնվել Պըլը Պուղու հետ ու կատակով ասել.

- Ա մեռած, դու ե՞րբ ես սխալ խոսել:

## ՁԻԱԳՈՂ ՂԱԶԱՐԸ

Ղազարը գողացավ Պըլը Պուղու օրից տված ձին, տարավ գիշերով բազարում ծախեց իր ծանոթ թուրքի վրա: Պըլը Պուղին ինչ արեց, չարեց, չկարողացավ հաստատել, որ Ղազարը ձին գողացել է: Մի շաբթից հետո Պուղին նկատեց, որ պարանը, որով օրից է տվել ձին, Ղազարի էշի վրա է:

- Արա, Ղազար, բա ասում ես ձին դու չես գողացել, ա մեռած, բա քենդիրը որտեղի՞ց է:
- Գտել եմ,- ասաց Ղազարը:
- Որտեղի՞ց ես գտել:
- Խմհատի ձորից:
- Ա մեռնես դու, գյուղը պրծնի քեզանից, դե քենդիրը գոնե տուր ինձ:
- Գտած բանը տիրոջը չեն տալիս, բայց որ խնդրում ես, կտամ... Դե համ էլ ուրիշ չես, մեր Պուղին ես, էլի...



## ՂԱԶԱՐԸ ԲԵՐՈՒՄ Է ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՊԱՐԱՆԸ

Ղազարը սկի էլ պակաս չէր Պըլը Պուղուց: Եթե Պողոսին պել Պուղի էին ասում գյուղում, Ղազարն էլ հայտնի էր մախսարա Ղազար անունով: Ղազարը Պուղու ձիու օրից պարանը հետեւից քաշ տալով բերում է Պուղու բակը: Պուղին նայում է ու ծիծաղում:

- Ա մեռած, էդ խե պարանը հետեւից քաշ տալով ես բերում: - Բա ի՞նչ անեմ, Պուղի, էս անտերը առջեւից չի գալիս, ոտներիս տակն է ընկնում:

## ԱՅԾԵՐԻՑ ՎԱՏԸ

Մի տարի այծերը մտան Պուղու այգին, ահագին վնաս հասցրին նրան: Դա դեռ ոչինչ, ամռան կեսին նրան հյուր եկան կնոջ եղբոր երեխաները՝ էլ խակ խնձոր, խակ տանձ, խակ սալոր, խակ ծիրան, ինչ որ այգում տեսան, քաղեցին, կերան: Մի շաբաթ հետո ծառերի վրա ոչ միրգ կար, ոչ տերեւ, որովհետեւ երեխաները ճղնակոտոր էին արել ծառերը:

- Կնիկ, էս դաշնիկները այծերից բեթար են,- տխուր ժպտալով ասաց Պուղին:

## ԱՂՎԵՍՆ ՈՒ ՂԱԶԱՐԸ

Աղվեսը տյուս ա կյամ գողությունի, դե գյուղում հուր օնար Մելիք Շահնազարի ղազերի չափ ղազեր: Թուշին կյամա մտնում նոր ղազերի մեջ, մինը փռնում, սկսում ուտելը: Ղազերը լոխ մին տեղ շրջապատումըն աղվեսին ու սկսում իրենց ղլմղալը.

- Սը՛ս, սը՛ս, սը՛ս, սը՛ս...

Աղվեսն ասումա.

- Տուք վեր սուս անիք, ես լիա սուս ըրածըմ, հու սուս ըրած...

## ԱՆՈՒՆԸ ԹԱՄԱՄ ԴՐԵՑ

Պուղին իր 7-րդ աղջկա անունը Թամամ դրեց՝ այսինքն հերիք է, ինչքան աղջիկ ծնվեց: Բայց հետո միտքը փոխեց, տղա ունենալու համար բախտը նորից փորձեց: 8-րդը նորից աղջիկ էր: Սրա անունն էլ Բավական դրին: Անցավ մի տարի, Պուղին իղի կնոջ հետ ուխտ գնաց Ղոնդեզ, աղոթք արեց, սրբին խնդրեց մի տղա նվիրել: Այս անգամ էլ աղջիկ ծնվեց, սրա անունն էլ Հերիքնազ դրին:

Պըլը Պուղու աղջիկները սիրուն, գեղեցիկ, տնարար, անող, թողող, մեծի, փոքրի տեղը իմացող էին եւ նրանցից ոչ մեկը տանը չմնաց...

Աղջիկներին մարդու տալուց հետո Պուղին, երբ կնոջ հետ մենակ մնաց, ասաց.

- Այ կնիկ, էդ ի՞նչ շուտ փակեցիր զավոդդ, ասում եմ նորից սկսենք...

## ԲԱ ԷՆՏԵՂԻՑ ՆՈՐ ՉԵԿԱ՞Ր

Մելիք Շահնազարը, Պըլը Պուղին եւ Ղազարը գնում են Մելիքի բաղը ընկույզ թափելու: Ղազարը պիտի բարձրանար ծառը, լատանով ընկույզ թափեր, Պուղին էլ պիտի հավաքեր, լցներ մեշոկները: Դե Մելիքն էլ աղա մարդ էր, պիտի իր համարման գար, կարգադրություններ աներ:

Պուղին Ղազարի ոտի տակից պահում է, մինչեւ նա բարձրանում է ընկուզենին: Մի քիչ հետո ընկույզների հետ ծառից ընկնում է նաեւ Ղազարը, բարեբախտաբար, ոչինչ չի պատահում եւ Ղազարը ուզում է նորից բարձրանալ ծառը: Մոտ է գալիս Մելիքը: Պուղին նայում է Ղազարին ու ծիծաղով ասում.

- Արա, Ղազար, էդ ո՞ւր ես բարձրանում, բա էնտեղից նոր չեկա՞ր...



## ՕՂՏԸ ՆԱԼՈՒՄ

Աղվեսը ձմռան մի օր քարին նստած արեւգուևաշի ար տամ: Մին էլ տեսնում է նապաստակը լեղապատառ վազ ա տամ:

- Արա, չլդիկ, էդ ի՞նչ կա, խե իտի սրտաճաք ըս իլալ:

- Պա ասել չըս, թագավորի մարդիկ եկել, մեր մահլումը օղտն նալում:

- Թող նալեն, քեզ ի՞նչ, դու հո օղտը չըս:

- Աղվես քույրիկ, ախր իրցնում չըն, հուվըս, հու չըս, հու վեր պտահումա, նալումըն...

## ՃՎԱՐԱՆԸ ՏԱՐ ՏՈՆ

Մի չար կնեզ մարթին նհետ բրուշում չի: Հալա վեր մարթը պռավում չի՞, առեյա հրսոտվում: Տղեն յեխան օնում ա, թա տար քահոր կուրցրու: Տղան ասումա՝ պա շտե՞ղ կուրցնիմ, տար, ասումա, քցի Ծուշվա քերծնիվեր:

Տղան մի մեծ ճվարան ա անում, հորը տնում մեջին, վեր տանե քերծնիվեր քցի: Հարը կլխի ա ընգում, մտքումը ասումա թող տանե, մհե ստի ապրելը հուր ա պետք : Վեր տեղըն հսնում, հարը ասումա.

- Ա տղա, ես ջհաննամը, ճվարանն էլ չի քցիս քերծնիվեր, ճվարանը տոն տար, հարկավեր կկյա...

## ՎԽՃԱՐԵՆ ՔԱՄԱԿԸ

Մի սուրու էծեր, չոբանեն շները եւ մի ոչխար պետք է ճղացեն արխավը անց կենան: Չոբանի շները նստումըն արխեն դրաղեն, վեր ապրանքը անցնի արխը, հետո իրենք անցնեն:

Էծերը իծըվարի լոք-լոք ընելավ անցըն կենում, ոչխարն էլ ա լոք տամ: Վեր լոք ա տամ, տմակը պիցրանումա, քամակը պեց ա ինում, շները տեսնումըն ու սկսում ծիծաղելը: Ոչխարն ասում ա.

- Էդ հունցա, սաղ վախտը էծերը վռնեն պեց ըն շոռ կյամ, ծիծաղում չըք, իմ տմակս մեհետ պեց ա իլալ, ծիծաղում ըք...

## ԻՄ ԼՅԱՎԸ ՔԵԶ, ՔՈ ԲԱԲԱԹՆ՝ ԻՆՁ

Մելիք Շահնազարը առավոտը հանդիպում է Պըլը Պուղուն ու հարցնում.

- Ա Պուղ, հունցը՞ս:
- Լավըմ, Մելիք Շահնազար, լավըմ, տու հունցը՞ս:
- Ես վեչինչ, բաբաթըմ:
- Դե վեր իտի ա, եկ իմ լավը քեզ տամ, քո բաբաթը ինձ տուր,- խորհուրդ է տալիս Պուղին:

## ՅԱՆՑՈՒ ԽԱԲԱՐԸ ՏԱՆԻՄ

Մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին գնում են Գանձակ: Վեր իսնում ըն Թարթառին, տեսնում են գետը շատ է վարարել, նստում են գետի ափին, մտածում, հունց անին, հինչ անին, վեր գետը անցնին, ախր էդ տարի վարար սելերը կամուրջը տարել են:

Որ շատ մտածում են, Մելիքն ասում է.

- Յը՞, Պուղի, հինչըս առաջարկում հիմա:
- Մելիքն ապրած կենա, վերկաց մտիր գետը, որ անցար, ես էլ կանցնեմ, թե որ գետը քշեց քեզ, էնա խաբարը ես կտանեմ գյուղ...



## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՇՏԱՊՈՒՄ ԷՐ

Պըլը Պուղին ու Մելիք Շահնազարը պիտի գնային Ղարղա բազար: Լույսը չբացված, Պուղին գնաց արթնացրեց Մելիքին:

Մելիքը բարկացավ.

- Ա տնաշեն, սպասիր լույսը բացվի, խերն ու շառը բաժանվեն, կգնանք:
- Մելիք, ճամփա գնացողը պիտի գնա, լույսը ես եմ, չեմ բացվում, հիմա պիտի բազարից ընկնե՞նք...

## ԱՄԵՆԱԴԺՎԱՐ ԳՈՐԾԸ

Պուղուն հարցրին, թե աշխարհի ամենից դժվար գործը որն ա, ասաց.

Մելիքի տանը ծառա լինելը, շուն լինես, գել լինես, Մելիքի տանը ծառա չլինես...

Ով ում անիծում է, ասի Մելիքի տանը ծառա դառնաս դու...

## ԵՍ ԻՄԱՆԱՄ, ՄԵԿ ԷԼ ԴՈՒ

Պըլը Պուղու հարեւան Խոսի բաբան բերանում տաք ջուր չէր պահում: Մի օր կեսօրին հանդիպեց Պուղուն եւ ականջին փսփսաց.

- Բանի խաբար չես, Պուղի:
- Յը, ինչ ա իլալ:
- Տանուտեր Մոսու հարսը բանեցրած են բերել: Բայց տես, ուրիշ տեղ չասես, ես գիդամ, մեկել՝ դու:
- Ա մեռած, դուզն ասա, մինչեւ հիմա քանի հոգու մոտ ես դու ասել:
- Արա, դե ասելու բանը կասեն, էլի,- արդարացավ Խոսի բաբան...

## ԱՌՅՈՒԾԻ ԿԱԹԸ

Ղարաբաղցին գնում է Մոսկվա՝ ռուս խնամու տուն: Նրա համար չորաթան, ընկույզ, խնձոր, գաթա եւ ուրիշ բաներ է տանում, հետն էլ մի շիշ թթի օղի: Ռուս խնամին նրա տարած բոլոր նվերները դեն է դնում, առաջը քաշում թթի օղու շիշը:

- Էս ի՞նչ արաղ է,- հարցնում է նա:

- Խնամի, էդ արաղ չի, առյուծի կաթ ա:

Ռուսը, որ մի բաժակ խմում է, սկսում է հարցեր տալ ղարաբաղցի իր խնամուն, թե էդ ինչ ազգեն այդ ղարաբաղցիք, որ առյուծներ են պահում ու կթում:

- Դարագոյ, ղարաբաղցին նույն հայն է, միայն թե որակի նշանով...

- Դա՜..., խորհրդավոր բացականչում է զարմացած ռուսը, որ արդեն հարբել էր:

## ՊՈՒՂԻՆ ԶԱՐՄԱՆՈՒՄ Է

Մի մեծ կռվից հետո Պուղին իրենց գյուղացի մարդկանց հետ գնաց վիրավորներին բերելու:

Իրենց հետ սայլ էին բերել. երկու մեռած եւ մի վիրավոր դրին մեջը, բռնեցին գյուղի ճամփան:

Ճանապարհին վիրավորը ցավից տնքում, լալիս էր: Պուղին վիրավորին ճանաչում էր, իրենց գյուղացի Սանթուրն էր:

- Արա, Սանթուր, ես էլ քեզ կարգին մարդ էի կարծում,խալխը մեռել են, սկի ձեն չեն հանում, դու ուտից վիրավորվել ես, հարայ-հրոց ես անում, բա սկի կողքի  մեռելներից չես քաշվում...



## ԷՇԴ ՅԻՆՁՍ ԿՈՐՑՐԱԼ

Մելիք Շահնազարը Դիզակի Մելիք Ավանի քրոջ մարդն էր: Նրանք որպես բարեկամներ լավ գիտեին իրար: Երբ Իրանի շահ Նադիրը եկավ Ղարաբաղ, մեծ ժողով հրավիրեց Ամարասում, բոլոր մելիքներին կանչեց ժողովի, որ հանդիսավոր այդ ժողովում ճանաչեն նրա խանությունը:

Մելիք Շահնազարը եկավ Պըլը Պուղու հետ, եկավ նոր շորերով, նոր զենքերով, այնպիսի հանդիսավորությամբ, ասես իրեն պիտի խան ընտրեին: Մելիք Ավանը, որ արդեն ծերացել էր, աչքերը լավ չէին տեսնում, մի պահ չճանաչեց Մելիք Շահնազարին եւ Պուղու ականջին շշնջաց.

- Ա Պուղ, էս ով ա, էս հանցա մեզանից չինի:

Պուղին ծիծաղեց ու թե՝

- Է՜, Մելիք Ավան, ծերությունը մի բան չի, ոնց որ տեսնում եմ էշդ կորցրել ես...

## ՃԻՇՏ ԲՆՈՐՈՇՈՒՄ

Պուղու կինը նրան նախատեց.

- Ես չգիտեմ, ոնց ես խմում էդ աղու, լեղի, կծու արաղը, էդ զահումարը:

-Ողորմի քո հորը, անջախ մի դուզ խոսք ասացիր: Թե չէ կարծում էի, թե ես խմում, մխիթարվում եմ, քեզ ու խոցը մոռացած,- զոհանում է Պուղին կնոջ դիտողությունից:

## ՀԱՄՈԶՎԵՑԻ, ՀԵՏՈ ԵԿԱ ՔԵԶ ՄՈՏ

Պուղու կինը տնից դուրս եկավ եւ էլ ետ չեկավ:

Պուղին սպասեց մեկ օր, երկու օր, երեք օր, չորս օր, հինգերորդ օրը գնաց դարդը պատմեց Մելիք Շահնազարին:

- Արա, բա ինչո՞ւ շուտ չասացիր:

- Օրեր հաշվեցի, սպասեցի, որ համոզվեմ ու նոր գամ քեզ մոտ:

- Հիմա ի՞նչ անենք:

- Էլի հույս պահեմ, ինչ պիտի անեմ...

## ՄԻ ՄԵՌԵԼԸ ՀԱՐԿԱՎՈՐ ՉԻ ԵՐԿՈՒՍԸ ՇԻՆԵԼ

Արդեն 40 տարի է, ինչ Պըլը Պուղին ծառայում էր Մելիք Շահնազարի մոտ: Ճիշտ է, նրանց միջեւ շատ անգամ է սեւ կատու անցել, բայց Մելիքը չէր ուզում բաժանվել նրանից, Պուղին էլ յոլա էր գնում: Ճիշտ է, Մելիքը չար մարդ էր, բայց հացն ու ջուրը միշտ կար ու կար: Նեղ օրեր էին, Պուղին զսպեց իրեն, մնաց:

Հաճախ,երբ ուզում էին ձեռ առնել Պուղուն, նրան ասում էին.

- Պուղի, շատ ես հավատարիմ Մելիքին:

- Ծառան պիտի հնազանդ լինի տիրոջը, այդպես է կարգը:

- Բայց դու հաճախ անիծում ես նրա հորը:

- Էտել ա հարկավոր:

Գյուղի ջահելները, որպեսզի վերջապես իմանան Պուղու հավատարմությունը, հարցնում են.

- Ա Պուղ, եթե մի օր Մելիքը ընկնի Քուռի մեջ, Քյուռը քշի տանի նրան, դու էլ կընկնես գետի մեջ, նրա հետեւից:

- Սարսաղ-սարսաղ խոսել միք, մի մեռելը ինչու եք օզում երկուսը շինել,- պատասխանում է Պուղին:



## ՏՈՒՐՈՒՐ ԿԱԼՍ ԻԳՈՐԱ, ՊԻՏԻ ՏՂԱ ԲԵՐԵՐ

Բարսեղը Ավետարանոցի հովիվն էր, մի քիչ ծալը պակաս էր, դրա համար էլ ում դուռ գնում էին աղջիկ ուզելու, նոս դառած հետ էին դառնում: Տարիքը անցնում էր, արդեն 40-նն անց էր: Հիմա էլ ինքը չէր ուզում ամուսնանալ: Նրա ծեր հայրն ու մայրը եկան Պըլը Պուղու մոտ, խնդրեցին մի ճար անել, լավ-վատ մի կին բերել իրենց տղայի համար: Պուղու մերը չմեռնի, ում խնդիրն է տափը գցել, որ դա մերժեր:

Կանչեց Բարսեղին, լավ դաս տվեց.

- Ամոթ է, էսօր կան ծնողները, վաղը չեն լինի, ջրերդ լվացող ա պետք, հացդ թխող ա պետք, կլոխդ քթվող է պետք, հետո էլ օջախի ծուխը քեզանից հետո պահող ա պետք:

Բարսեղը լսեց, կակղեց , ասաց.

- Պուտի ապա, դե որ շատ ասում ես, մի հալալ ծծկեր գտիր, բեր, պսակվեմ հետը:

Պուղին միջնորդ եղավ, մոտ Սզնեքից տան մնացած մի աղջիկ բերեց, պսակեցին Բարսեղի հետ:

Իննը ամիս որ անցավ, Բարսեղի կինը մի աղջիկ բերեց:

Պուղին առաջինը գնաց աչքալուսանքի, համ էլ սիրտ տվեց Բարսեղին.

- Աղջիկ բերողը տղա էլ կբերի, շատ չտխրվես, Բարսեղ: Ես յոթ աղջիկ ունեմ, սկի դարդ չեմ անում:

- Չեմ տխրվում Պուղի ապա, մենակ զարմանում եմ, որ աղջիկ է բերել, ախր իմ տուրուր կալս իգորա, տղա պիտի ծներ...

## ԱՊՈՒՆ ՄԵԿԸ ԲՈԼԱ

Ղազարի տղան չէր պսակվում, մայրը ամեն օր երեսը պոկում է.

- Էլ կարում չըմ ներս ու դուրս անեմ, մի աղջիկ օգի գա քեզ փրթչակե:

Որ շատ խոսեցին երեսին, մի իրիկուն, տղան ասաց.

- Դե լավ, որ էդպես ա, գնացեք էրկու կին բերեք:

- Վա՜յ, քոռանամ ես, երկուսը հաչքաթ չի, մինը հերիք է:

- Չէ, երկուսը բերեք, մեկը՝ ապուն, մեկը՝ ինձ:

- Ա տղա, քումար բոլա ապուն, մինը բոլա, մինը բերենք քեզ համար,- խեղճ-խեղճ ասում է Ղազարը...

## ԴԵՌ ԹԻԹԵՌ ԷԼ Է ԴԱՌՆԱԼՈՒ

Մելիք Շահնազարը նկատում է, որ Պուղին օր-օրի մաշվում է, վերջապես մի օր ասում է.

- Ա Պուղ, մաշվել, չոր չոփ ես դարձել:

- Որ Մելիքը դու ես, դեռ թիթեռ էլ եմ դառնալու,- պատասխանում է Պուղին:

## ԿԻՆԸ ՏԱՆ ԱՍՏՎԱԾՆ Ա

Պըլը Պուղուն հարցնում են.

- Ա Պուղ, կինը տան հինչն ա:

- Կինը տան Աստվածն ա, կոզի տունը կշինի, կոզի՝ կքանդի,- պատասխանում է Պուղին:



## ԲԱԼԻ ԽԱՆՈՒՄԸ ԲԱՐՁԸ ՓՈԽԵԼ Ա

Մելիք Շահնազարի տղան աչքաբաց, լավ կարդացող էր: Մելիքը դրան կասկածով էր նայում ու մի օր հարցրեց.

- Ա Պուղ, էս խոխան ոչ ինձ է քաշել, ոչ մորը, էս ո՞ւմ է քաշել:

- Ի՞նչ ասեմ, Մելիք Շահնազար, էն տարին, որ նա ծնվեց, քո տունը գիտուն մարդիկ եկան, ով գիտե, գուցե խանումը բարձը փոխել ա...

- Արա, շան որդի, էդ ինչեր ես խոսում,- բարկանում է Մելիք Շահնազարը:

- Ես խոսքի օրինակ եմ ասում, Մելիք Շահնազար, դու որ բարկանում ես, նշանակում է փեչատում ես ասածս...

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՍՈՒՐԸ

Մելիք Շահնազարը բողոքում է Պուղուն.

- Ա Պուղ, խելքս կորցրել եմ:

Պուղին ծիծաղում է նրա խոսքի վրա:

- Ա շաշ, ի՞նչ ես ծիծաղում:

- Մելիք Շահնազար, էնպես բան ես ասում, որ եփած հավն էլ կծիծաղի:

- Արա, էդ ի՞նչու:

-Ախր դու երբ ես խելք ունեցել, որ կորցնես:

- Ձենդ, հարամ զադա, ի՞նչ ռեխդ է գալիս, ասում ես, քար ու քոլ չես նայում,- նեղանում է Մելիքը:

## ԱՆՄԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՄԲ

Երբ Մելիք Շահնազարը իր Շուշի բերդը տալիս է թափառական Փանահ խանին, Պըլը Պուղին կանգնում է գյուղամիջում ու կանչում.

- Ա ժողովուրդ, մեր Մելիքը անմահանալու նոր ձեւ գտալ,- նա կրկնեց Վասակ Սյունեցուն ավելի խայտառակ կերպով: Դավաճանությամբ նա մեր Կարկառ-Շուշի բերդը տվեց թափառական Փանահին...

## ԱՂՁԻ, ՄԵՌՆՈՂԸ ԵՍ ԵՄ, ԹԵ՛ ԴՈՒ

Պըլը Պուղին մեռնում էր, նա տղա երեխա չուներ, բայց տղա թոռ ուներ, որ պսակվելու հասակում էր: Պուղու թոռան անունը Վանի էր: Կնոջն ասաց կանչի Վանուն, վսյաթ ունեմ անելու: Վանին եկավ, ասաց պապի ես լսում եմ քեզ:

- Լավ ես անում: Դու իմ մեծ թոռն ես, ես էս տունը, էս այգին, եղած-չեղած թողնում եմ քեզ, մենակ թոթխար բաներ կան, խնդիրքս էնա, որ տան պատի թոթխարը տեղ տաս...

Պատի անունը լսեց թե չէ, կույի մորթեն ընգավ Պուղու կնգա ճիտը:

- Էս տանը էլ ուստա չպիտի գործ անի:

- Յա, մորաքույրերիդ հարսանիքով կպսակես:

- Չէ մի, յոթ գիշեր, յոթ օր ենք հարսանիք անելու,- էլի թոնթորեց կինը:

- Կովը կծախես, մի ծի, մի երինջ կառնես,- շարունակեց Պուղին:

- Էդ լինելու բան չի,- նորից մեջ ընկավ կինը:

Պուղին գլուխը բարձրացրեց ու ղժգոհեց.

- Աղճի, մեռնողը ես եմ, թե՛ դու, դե թող գոնե հիմա վսյաթս անեմ ու նոր գնամ էս աշխարհից...



## ԴՆԳԸԼԲԱՂԸ ԻՄ ԾԻՏՆ ԵՆ ԳՑԵԼ, ԿՈՊԱԼԸ ՏՎԵԼ ՄԵԼԻՔ ՇԱՅՆԱԶԱՐԻՆ

Չանախչում մեծ ժողով էր, մելիքական ժողով: Մելիքի կողքին դատավոր պետք է ընտրեին: Ժողովուրդը կանգնեց, թե՛ մեր դատավորը պիտի Պուղին լինի: Պուղին մի քիչ չեմ ուզում արեց, բայց իվերջո համաձայնվեց: Վարանդայի բոլոր գյուղերից եկել էին տանուտերեր ու տերտերներ: Ընդհանուր ժողովում օրը ցերեկով Պըլը Պուղուն ընտրեցին Վարանդայի դատավոր: Անցավ մի քանի տարի, ժողովուրդը սկսեց դժգոհել Պուղուց:

-Սկի էլ արդար չի վճռում դատը մեր Պուղին,- բողոքում էին շատերը:

Վերջապես բողոքը դարձավ ընդհանուր: Ժողովուրդը հավաքվեց գյուղի մեյդանում եւ պահանջեց, որ Պուղին բացատրություն տա իր արարքների մասին:

- Ժողովուրդ, դուք ճիշտ եք բողոքում, բայց ես ի՞նչ անեմ, դնգլբաղը գցել եք իմ ճիտը, կոպալը դրել Մելիքի ձեռքին, ոնց ուզում է, էնպես էլ դնգացնում ա...

## ՄԻ ՈՉԽԱՐ ՄՈՐԹԻ, ՊՐԾՆԻ ԳՆԱ

Պըլը Պուղին ղոնաղ էր Վերին Թաղավարդում իր խնամի Ավետիսի մոտ:

- Խնամի Պողոս, լավ մածուն կա, ծվածեղի համար թարմ ձու, դե որ մնաց, ոչխար կմորթեի,- ասում է խնամի Ավետիսը, հասկացնելով Պուղուն, որ առավոտյան եկել է, երեկոյան գնա:

- Ավետիս, մածունի, ծվածեղի գործը շատ բարդ եւ ջանջալ ա. կոթավոր բեր, մածուն կտրիր, հետո էլ կտրած մածունը ջուր կդառնա: Արի, էդ ջանջալ բաները մի կողմ թող եւ մի ոչխար մորթի, պրծնի գնա,- իր հեղինակավոր կարծիքը հայտնեց Պուղին...

## ԱԶԱՆԻ ԳԻՆՈՒՆ Ի՞ՆՉ ՄԱԶԱ

Առավոտյան գիշերով Պուղին հանդիպեց տանուտեր Մանասին:

- Բարի լույս, Մանաս:

Ա՛, բարի լույս Պուղի. թե ասեմ ծովի դեպի տուն, լավ գինի ունեմ. Աջանի գինի, բայց մազա չկա, մենակ մի պոլիգ մածուն կա ստոլեն յրա:

- Վա՛հ, այ Մանաս, բա գինու մազան մածուննա, էլի. համ էլ Աջանի գինուն ի՞նչ մազա,- ասաց Պուղին ու էլ չթողեց Մանասը պռոշը երկու անի, թեքվեց դեպի Նրա տունը...

## ՊՈՒՂԻՆ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ ՏԵՐՏԵՐԻ ԽՆԴԻՐՔԸ

Պուղին գնում է եկեղեցի՝ աղոթելու: Տերտերը նկատում է, որ բոլորը եկեղեցուց դուրս են գալիս երեսը դեպի եկեղեցու բեմը:

- Որդի Պողոս, երբ եկեղեցուց դուրս ես գալիս, բոլորի պես երեսդ դեպի բեմը արա, ետ մի շրջվիր:

- Չեմ կարող, տեր հայր, թարս քայլել չեմ կարող, ինչ որ թարս է, աստծո դեմ է, չեմ կարող...

- Որդի Պողոս, դարձի եկ, տեսնում ես, բոլորը իմ ասածի պես են դուրս գալիս եկեղեցուց:

- Տեր հայր, իմ պապը Օրշ գյուղում թոնրի պսակի ժամանակ այդպես է արել ու ընկել թոնրի մեջ... չեմ կարող,- համառում է Պուղին:



## ԵՍ ՍՈԽԱԿ ՉԵՄ, ՈՐ ԵՐԳԵՄ

Պուղին դպրոց է գնում: Նա բոլոր առարկաներից հինգ է ստանում, երգից՝ մեկ: Վարժապետը միշտ ասում է.

- Եթե ուզես, երգից էլ հինգ կստանաս:

- Չեմ կարող:

- Կարող ես:

- Չեմ կարող, վարժապետ. երգելու հավաս չունեմ, ձայն չունեմ, համ էլ հինչ ա, ես սոխա՞կ եմ, որ երգեմ:

## ՊՈՒՂԻՆ ՀԱՎ Է ԹՈՒԽՍ ԴՆՈՒՄ

- Ա Պուղ, վառը երկու հավ կա, թուխս դիր,- մի օր ասում է Մելիք Շահնազարը:

- Աչքիս վրա:

- Չմոռանաս, հավը ձվերի վրա դնելիս ասա լոխ ծակ, էս մինը լավ:

Պուղին, երբ հավերը թուխս էր դնում, կանչեց Մելիք Շահնազարին եւ նրա ներկայությամբ թուխս դրեց հավերը, ամեն անգամ ասելով

- Լոխ լավ, էս մինը ծակ:

- Ադա, Պուղի, էդ ի՞նչ ես ասում:

- Մելիք Շահնազար, ոտդ ծանր է, էդպես թարս ասացի, որ հակառակը դուրս գա,- արդարացավ Պուղին:

## ՊԼԸ ՊՈՒՂԻՆ ԽԻՍՏ ՎՇՏԱՆՈՒՄ Է

Մի տարի Իրանի կողմից ամպերի պես մորեխի երամներ են գալիս Ղարաբաղ: Էլ արտ, էլ այգի, էլ սար ու ձոր չի մնում, սեւանում է, ամայանում:

- Ա քալամ, ով է տեսել, որ մորեխը աշխարհը ուտի, ախր մորեխի ռեխը որնա, հունարը որնա, ես էս տեսակ աստծո հերը անիծեմ: Աստված ուզում է պատժել մեզ, թող պատժի մարդավարի, ախր նամարդություն է անում... Բա սա մի տեղ գրելի բան ա, մորեխը գա, աշխարհը ավերի...

## ՄԻՐՅԱՎԻ ՄԻՍԸ

Մելիքը հիվանդ էր: Բժիշկը եկավ դես նայեց, դեն նայեց ու թե Մելիքը պիտի միրհավի մսով սպաս ուտի, որ լավանա:

- Բա դա Է՞ դժվար բան, մեր սարերը լի միրհավեր են, գնամ մեկը սպանեմ, բերեմ,- ասաց Պուղին: Առավ Մելիքի հրացանը ու գնաց միրհավ որսալու: Դես ման եկավ, դեն ման եկավ, նապաստակ խփեց, աղվես խփեց, բայց միրհավ ոչ պատահեց, ոչ էլ խփի: Մերը չմեռնի Պուղուն, երբ չի եղը գտել նեղ տեղից դուրս գալու համար: Յանդերը լի սեւ ագռավներ էին, մեկը խփեց, մաքրեց առվի մոտ, լավ լվացավ, կոտորեց դանակով, փաթաթեց մի փալասի մեջ, եկավ տուն, տան բարձերից մեկը հանեց, մեջը միրհավի փետուր կար, լցրեց մի հին մածունի քսակի մեջ ու գնաց Մելիքի մոտ:

-Բերիր,- հարցրեց Մելիքը:

- Բերի, հալա փետուրներն էլ բերի: Ցորտ աղբյուրի մոտ մորթեցի, մաքրեցի, որ ջուտ կրակին դնենք,- ասաց եւ անմիջապես պղնձի կաթսան դրեց կրակի վրա...

Երբ պատրաստ էր սպասը, Մելիքը եւ ուտում էր, եւ գովում Պուղուն:

Յաջորդ օրը Մելիքը ոտքի վրա էր ու գովում էր «միրհավով» սպասը...



## ՊՈՒՂԻՆ ԽՈԶԻ ՄԻՍ Է ՈՒՏԵՑՆՈՒՄ ՓԱՆԱՅ ԽԱՆԻՆ

Թուրքերը, պարսիկները, մուհամեդի բոլոր ծառաները ոչ միայն խոզի միս չեն ուտում, այլ խորշում են նրանից: Խոզը դավաճանել է Մուհամեդին, ցրիվ տալով հողի մեջ թաքցրած նրա կաթով լի տիկը, որով ուզում էր գետին խփելով, ջրի փոխարեն կաթ հանել հողից ու զարմացնել Քրիստոսին:

Երբ Փանահը հյուր գնաց Մելիքին, Պուղին մի վայրի խոզ որսաց, մի եղնիկի հին մորթին էլ դրեց ջրում, ապա փռեց գոմի կտորին, վրան մոխիր ցանեց, իբր թե եղնիկ է մորթել:

Խոզի խորովածը ախորժակով կերան Փանահն ու նրա ծառաները:

Երբ հյուրերը գնացին, Մելիքը ասաց.

- Ա մեռած, Պուղի, հանցա մեզ խոզի մսով ես հյուրասիրել:

- Մելիք, բերանդ երկու չանիս, էդ բանը ես իմանամ, դու, մեկ էլ աստված...

## ՈՎ Է ՋՐՈՒ ՀԱՅՐԸ

Պուղին Մելիքին հարցնում է.

- Մելիք Շահնազար, ասում ես Վարանդա մահլի ամենից խելոք մարդը ես եմ, մի հարց տամ, պատասխանիր:

- Տուր:

- Ասա տեսնեմ, ջրու հայրը ho՞վա:

- Ջրու հայրը... ինչքան մտածում ըմ էշը պիտի լինի:

- Բա որ էշն է, ինչու է ինքը ջրի:

- Դե քալիքի ձին:

- Բա որ ձին է, ինչո՞ւ է ինքը ջրի:

- Դե լավ, դու ասա, ո՞վ է նրա հայրը, Պուղի:

- Մելիք Շահնազար, էդ բանը ինքը աստված էլ չգիտե: Էդպիսի հանելուկ է հավի ու ձվի առեղծվածը, ով կարող է ասել, առաջ հավն է ստեղծվե՞լ, թե՝ հավի ձուն...

## ԴՈՒՔ ԽՈՍՔԸ ԷՇԻՆ ԿԱՍԻՆ

Պուղին իր ասելիքը Մելիք Շահնազարին ասում էր առակի միջոցով: Մի օր էլ Մելիքը դարձավ ու հարցրեց Պուղուն:

- Ադա, Պուղի, այ գաղա, էդ ինչո՞ւ խոսքդ ամեն անգամ փակ ես ասում, վերագրելով աղվեսին, գայլին, արջին, էշին, ջորուն:

- Մելիք Շահնազար, թամամ խոսքը էշին են ասում, ով խելք ունի, թող իմ խոսքը հասկանա,- պատասխանում է Պուղին:

## ՊՈՒՂԻՆ ՄԱՏՌՎԱԿ

Պուղին սովորություն ուներ, երբ հարսանիք, քեֆ, խնջույք էր լինում, մշտական սեղանապետ ումատռվակ, առաջինը գինու կուլայից լցնում էր իր բաժակը, խմում, սրբում բեղերը եւ ապա հերթով լցնում հյուրերի բաժակը:

Մելիք Շահնազարը այդ տեսնելով, նրան նախատեց մի օր:

- Ադա, Պուղի, հարամ զատա, դա ինչ բան է, գինու գլխից մինչեւ չես խմում մի բաժակ, մերը չես լցնում.

- Մելիք Շահնազար, դու չար, նենգ մարդ ես, մեկ էլ տեսար գլխիդ ծի քացի տվեց, թունավորեցիր գինին, լավ ա ես մեռնեմ, քան քո հյուրերը, վախենում եմ:

Մելիքը ստիպված լռեց...



## ՊՈՒՂԻՆ ՀՐԵՇՏԱԿԻ ԴԵՐՈՒՄ

Պուղին գիտեր, որ Մելիք Շահնազարը չար, սնահավատ ու վախկոտ մարդ էր: Ամռան գիշերները Մելիքը քնում էր տան առաջ գոմի կտրին, Պուղին՝ բակում, խոտի դեզի վրա: Մելիքը քնելուց առաջ հրացանը, թուրը դնում էր կողքին: Դա նրա սովորությունն էր: Պուղին որոշում է վախեցնել Մելիք Շահնազարին: Ցերեկը հանդից իր համար եղեգից թեւեր է սարքում, պոզեր դնում, այծի միրուք կախում, փաթաթվում մի մեզարի մեջ եւ գիշերվա կեսին կամաց մոտենում քնած Մելիքին ու բացում թեւերը եւ կամաց ասում.

- Մելիք, քնա՞ծ ես, թե՞ արթուն:

Մելիքը աչքերը բացում է, հազիվ շշնջում.

- Քնած եմ:

- Արթնացիր, ես Գաբրիել հրեշտակն եմ, եկել եմ քեզ տանեմ...

Մելիքի լեզուն բռնվում է: Պուղին տեսնելով, որ կատակը դագանակ պիտի դառնա, ասում է.

- Լավ, որ վախենում ես, գնամ Պուղուն տանեմ հիմա,- ասում է ու հեռանում: Գնում է Մելիքի մարագում թաքնվում:

Լուսաբացին Մելիքը զենքը հավաքում է ու մի երեք անգամ կրակում: Ձայնի վրա գալիս են մարդիկ, լսում Մելիքի պատմածը: Տեսնում են՝ Պուղին չկա, տեղը տեղն է, ինքը տեղում չի: Հաստատ համոզվում են, որ հրեշտակը Պուղուն տարել է:

Երբ արեւը ծագում է, Պուղին գալիս է իր հերթին պատմում, թե ինչպես Գաբրիել հրեշտակը իրեն դրել է ձիու վրա ու արդեն Քիրս էր հասցրել, երբ թվանքի տրաքոցի վրա նրան թողեց Կաղնուտի ձորում ու ինքը գնաց, վերացավ: Փառք աստծո, հիմա եկել է սաղ սալամաթ...

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՃԱՐԱԿ ՉՈՒՆԻ

Մելիքի տան անցուդարձը, հյուրասիրությունը կառավարում էր Պըլը Պուղին: Մի օր Մելիքը կանչեց ու բավականին կոշտ խոսքեր ասաց նրան:

- Անտաշ, անկիրթ, անճաշակ մարդ ես դու, Պուղի, չեղավ մի անգամ, որ իմ սրտով մի գործ բռնես:

- Մելիք Շահնազար, որ անտաշ, անկիրթ, անճաշակ չլինեի, քեզ մոտ չէի ծառայի, Շահ Աբբասի պալատում կլինեի, մինը կեր, մինը մատաղ տուր, որ քեզ մոտ եմ ծառայում,- իրենը ասաց Պուղին:

## ՔԵԶ ՉԱՏԻՍ ԵՄ ԴՆՈՒՄ

Պըլը Պուղին ու գյուղի տերտեր Ստեփանը շատ մոտ հարաբերությունների մեջ էին: Պատճառն այն էր, որ դեր Ստեփանը նույնպես սրամիտ էր եւ գնահատում էր Պուղուն: Լավ, անուշ ընկերություն են անում: Ի վերջո, տեր Ստեփանը սկսում է կասկածել Պըլը Պուղու ազնվության վրա եւ մի օր էլ կնոջը ասում է.

- Ես թաքնվում եմ տանը, Պուղին որ գա հարցնի, ասա, որ ես տանը չեմ, ու թաքնվում է, կնոջը պատվիրելով, որ հրավիրի Պուղուն: Պուղին գալիս է Ստեփանի երկհարկանի տան բակում կանգնում ու կանչում.

- Ստեփան, Ստեփան:

Տերտերի կինը դուրս է գալիս պատշգամբ

- Արին տա՞նն է:

- Չէ, գնացել է ջրաղաց:

Պուղին շրջվում է, որ գնա, Ստեփանի կինը ասում է.

- Պուղի, արին տանը չի, ես հո տանն եմ, արի մի ստաքան արաղ խմիր:



- Ինձ արին ա հարկավոր, դիրակին, քեզ չատիս եմ դնում...

Ստեփանը, որ ողջ խոսակցությունը լսում է, դուրս է գալիս ու ծիծաղելով կանչում ընկերոջը.

- Եկ, եկ, ա Պուղ, քեզ փորձելու համար եմ սարքել այս բոլորը, խնդրողնու լավ գինի ունեմ, արի միասին խմենք, մինչեւ կարասի գինին հասնի խազին:

## ՉԱՆԱՂՉԻ ԳՅՈՒՂԻ ԱԼՎԱՐԴԸ

Չանաղչի գյուղում մի կին կար Ալվարդ անունով: Սիրուն, փափուկ, անմարդ կնիկ էր: Բոլորը գիտեին, որ Ալվարդը, հատկապես, գիշերները ընդունում են ծանոթ մարդկանց... Ու էսպես անունը գյուղից դուրս էր եկել, մտել ուրիշ գյուղերի մեջ:

Մի օր էլ իրիկնապահին մի ջահել ձիավոր է գալիս Չանաղչի: Մոտենում է գյուղամիջում նստոտած մի խումբ մարդկանց ու ճանաչելով Պուղուն (դե նրան ով չէր ճանաչում), հարցնում է.

- Պուղի ապա, Ալվարդի տունը որնա:

Պուղին գլխի է ընկնում գործը ինչումն է, ասում է.

- Տղա ջան, էդ Ալվարդին մենք էլ ենք ճանաչում, բայց նա պսակվել, գնացել է մեր գյուղից:

Երբ անծանոթ ձիավորը հետ է դառնում, հեռանում, մարդիկ հարցնում են Պուղուն, թե ինչու խաբեց նրան:

- Լավ եմ արել, միթամ Ալվարդը մեր գյուղի տղաներին հերիք է, որ ուրիշ տեղերից են գալիս...

## ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԱՂՈԹՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՀԱՄԱՐ

Պըլը Պուղին ամեն օր գնում է եկեղեցի՝ մոմ վառում եւ աղոթում Մելիք Շահնազարի համար, որ երկար ապրի: Պուղու ընկերները իմանալով այդ մասին, մի օր նրան նախատեցին:.

- Պուղի, մենք էլ քեզ արդար, ազնիվ մարդ էինք կարծում, արա, ինչու ես ամեն օր աղոթում Մելիք Շահնազարի համար, որ երկար ապրի, որքան շուտ հողը թումբ անի, այնքան լավ մեզ համար:

- Տղեք, Մելիք Շահնազարի հայրը՝ Մելիք Բաղրը վատ մարդ էր: Ես նրան անիծեցի, շուտ մեռավ, տեղը նստեց որդին՝ Մելիք Շահնազարը, որը հորից ավելի վատ գործ կատարեց, Շուշին տվեց թափառական մաղկապ Փանահին, հերիք չէ, հիմա էլ հարեւան մելիքներին պոզահարում է: Հիմա որ նրան էլ անիծեմ, շուտ կմեռնի, նրա տեղը կնստի նրա տղան, որը կարող է հորից վատ լինել...

Ի՞նչ անեմ, իմ բանն էլ նրանց հետ է...

## ՊՈՒՂՈՒ ԷՇԸ ՔՈՒՌԱԿ ՈՒՆԻ

Մելիք Շահնազարը Պուղուն շնորհավորեց, որ էշը քուռակ է ծնել: Ուզեց կատակել, ասաց՝ Պուղի, էշդ բեր աչքալուսանք տանք:

Պուղին գնաց էշը բերեց: Մելիքի խոսքը ոնց կտրեր: Մելիքը իսկապես էշին աչքալուսանք տվեց, խրախուսանքի խոսքեր ասաց.

- Լավ դառավ, քուռակ ունեցար, բեռդ կթեթեւանա:

Էշը այդ խոսքի վրա զռռաց եւ Պուղին թարգմանեց նրա զռռոցը.

- Մելիք, իմ անունն է էշ, բայց խոսքը մեր մեջ, դու էլ ես էշ մնացել: Ով է տեսել, որ էշը քուռակ ունենա, մոր փալանը մեջքից վերկյա:



## ԱՌԵ ՇԱՏ ԲԱՐԵՎ

Պուղին ոտքով գնացել էր Ղարղա բազար ու ետ էր գալիս: Երբ հասավ Խազազի անտառի հով ծառերի մոտ, նստեց ծառի տակ, հետո էլ մեջքի վրա պառկեց, որ լավ հանգստանա: Այդ պահին մի ձիավոր եկավ եւ ձեռք առնելով Պուղուն ասաց.

- Ես ում եմ տեսնում, ես ում եմ տեսնում. բարեւ, բարեւ Պուղի ապա, բարեւ:

Պուղին աչքերը փակեց, իբր քնած է ու մնաց սուս:

Ձիավորը իջավ ձիուց, մոտեցավ մտրակի կոթով հրեց Պուղուն:

- Ասում եմ՝ բարեւ, Պուղի ապա:

Պուղին աչքերը բացեց ու անմիջապես ցատկեց, նստեց ձիու վրա ու թե.

- Առե շատ բարեւ,- ձին քշեց, հեռացավ...

## ՊՈՒՂԻՆ ՈՒԶՈՒՄ Է ՓՈԽԵԼ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ԳԼՈՒԽԸ

Պուղին շատ էր դժգոհ Մելիք Շահնազարից, բայց թե ինչ աներ, ստիպված էր ծառայել նրա տանը, մտածելով նաեւ, որ ինքը ինչ որ չափով զսպում է նրան: Մի տարի Մելիքը ավելացրեց գյուղացիների հարկը:

Ցուրտ ձմռան մի օր Մելիքը Պուղուն ուղարկեց Շուշի, ղասաբխանայից մի տավարի գլուխ բերելու, որ խաշ զցեն: Պուղին գնաց եւ երկու գլուխ բերեց:

Աղա, Պուղի, երկու գլուխը բերել ես ի՞նչ անես, մեկը մի շաբաթ մեզ հերիք է:

- Մելիք Շահնազար, երկուսն եմ բերել, որ մեկը խաշ զցենք, մեկն էլ ուզում եմ փոխել քո գլխի հետ... տավարի գլխով մարդու հետ հեշտ է յոլա գնալը, քեզ հետ դժվարա...

## ԱՔԼՈՐԸ, ՇՈՒՆԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Աղվեսը ցնծության մեջ էր: Նա լրագրերում կարդացել էր, որ բացատում հավերի ֆերմա են կառուցելու: Իր հերթին վայրի հավքերի անունից լրագրում շնորհավորեց այդ իմաստուն նախաձեռնությանը:

Եղավ այնպես, որ այդ օրերին տանտիրոջ շունն ու աքլորը նեղացան նրանից ու խռքները մեկ արած դուրս եկան գյուղից, գնացին անտառ: Երբ մթնեց, աքլորը թառեց ծառի ճյուղին, իսկ շունը պառկեց քիչ այն կողմ, թփերի մեջ:

Լուսադեմին աքլորը սկսեց կանչել: Լսեց աղվեսը եւ սիրտը թունդ առավ: Նա կանչի վրա գնաց եւ կանգնեց այն ծառի տակ, որի վրա թառել էր աքլորը:

- Նախշուն խորոզ, այս ինչ բան է, դու հյուր գաս անտառ ու ես քեզ չպատվեմ: Իջիր ծառից, գնանք տուն, ես քեզ պատվեմ... Բարի լուրեր եմ լսել, ասում են այստեղ հավերի ֆերմա են ուզում կառուցել ձեր գյուղացիները.

- Հա, ճիշտ ես լսել,- գլխի ընկնելով բանը ինչումն է,- ասաց աքլորը:

Աղվեսը ուրախությունից պտույտ եղավ տեղում, լիզեց շուրթերը:

- Դե իջիր ծառից, բարեկամս:

- Աղվես եղբայր, ես մենակ չեմ:Այստեղ է նաեւ իմ ինժեներ ընկերը: Նա է իրագործելու ֆերմայի կառուցումը: Ահա այդ թփի մեջ քնած է նա: Խոսիր հետը, մինչեւ ես իջնեմ ծառից:

Աղվեսը իմանալով, որ աքլորի ընկերը հավը կլինի, ցատկեց թփի վրա ու ընկավ կիսարթուն շան գիրկը: Շունը նրան լավ գզեց, բայց աղվեսը կարողացավ ազատվել նրա ճանկից ու ծլկել: Նա բարձրացավ մոտիկ բլրի գլուխը եւ ասաց.

- Ո՛վ դու խորամանկ աքլոր, շատ գործարարն ես երեւում, քո ինժեները որ այդ շունն է, այստեղ ոչ թե հավերի ֆերմա, գյուղ էլ կշինեք դուք...



## ՊՈՒՂԻՆ, ՆՐԱ ԿԻՆԸ ԵՎ ԱՐԱՂԸ

Պըլը Պուղին ամբողջ օրը փայտ է կտրում, հոգնած գալիս տուն ու տխուր մտնում տեղը: Կինը որքան ուզում է նրա քեֆը բացել, չի կարողանում: Վերջը Պուղին դեմքը շրջում է, գլուխը թաղում բարձի մեջ ու լուռ մտորում էս աշխարհի բաներիմասին: Կինը հազում է, շարժվում, հիշեցնում ջահել օրերի հանդիպում-ների մասին, Պուղին ձեն չի հանում:

- Նշանած վախտդ հանգիստ չէիր տալիս, հա գալիս ես, հա խոսում... հա՛...

Պուղին էլի լուռ էր, անտարբեր: Դա շատ բարկացրեց կնոջը եւ նա սկսեց թոնթորել բարձրաձայն.

- Սառել է, լալկվել, չի խոսում, մարթին տղան զարգացել ա, հեռու կացեք... էլի ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն:

- Միե վեր մի կուպրոն արաղ իներ կողքիդ, խտտիցդ պեց կթողի՞ր:

- Խե անխելք եմ, որ բաց թողնեմ արաղը,- վերջապես խոսեց Պուղին...

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒՆ ՊԱՏԺՈՒՄ Է ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԸ

Պուղին լեզուն իրեն չպահեց, քննադատեց Մելիք Շահ-նազարին, սա էլ բարկացավ ու նրան գոմում, էշի հարեւանու-թյամբ բանտարկեց: Մեկ ու գիշեր գոմում պահելուց հետո նրան ազատեց ու կանչեց իր մոտ զրույցի:

- Հը, Պուղի, էստեղ է լա՞վ, թե՝ գոմը:

- Գոմը,- պատասխանեց Պուղին:

- Ա սարսաղ, գոմը ոնց կարող է իմ պալատից լավ լինել:

- Գոմում հանգիստ էի, էշը ինձ հիմար հարցեր չէր տալիս քեզ նման,- պատասխանեց դառնացած Պուղին:

## ՎԵՐՋԸ ՎԱՏ Է ԼԻՆԵԼՈՒ

Օր չէր լինում, որ Պուղին չկռվեր Մելիք Շահնազարի հետ: Պուղին իր ամեն անգամ մեղավոր չէր լինում, որ Մելիքը սպառնում էր նրան.

- Տես հա, վերջը վատ է լինելու, Պուղի:

Մի օր Պուղին Մելիքին բռնեցրեց.

- Մելիք, մարդ ես, խոսքիդ հաստատ կաց, միշտ ասում ըս, որ վերջը լավ ա լինելու, հենց որ քեզ մի ցորտ խոսք եմ ասում, ասում ես՝ վերջը վատ ա լինելու: Մարդու համար ամենից վատը մեռնելն է, դրանից դենն էլ կա՞ վատ բան, Մելիք Շահնազար...

## ԱՄԵՆԱՀԱՃԵԼԻ ԲԱՆԸ

Պըլը Պուղուն հարցրին, թե կյանքում ամենից հաճելի բանը որն ա, ասաց.

- Տղերք, կասեմ, կարողա դեմ լինեք իմ ասածին, բայց ես դուզ խոսք եմ ասում:

Կյանքում ամենից հաճելի բանը էնա, որ երբ գլուխդ քոր է գալիս, քորում ես:

- Ղորթ ա, ղորթ ա, ամեն կողմից հավանություն տվին Պուղու խոսքին:



## ՆՐԱ ԱՆՑՅԱԼԸ ՄՈՒԹ Է

Ղարաբաղում բոլորը գիտեին, որ Խնձրիստանի Մելիք Միրզան դավաճանությամբ է ձեռք բերել իր մելիքությունը: Մի օր Ամարասի վանքում ժողով կար, որին մասնակցում էին Ղարաբաղի բոլոր մելիքները: Նրանց մեջ էր նաեւ Մելիք Միրզան, որին չէր ճանաչում Ղարաբաղի գահերեց Մելիք Ավանը: Նա կռացավ եւ Պուղու ականջին շշնջաց.

- Ադա, Պուղի, ես այդպիսի Մելիք չգիտեմ Ղարաբաղում, որտեղի՞ց է լույս ընկել, ի՞նչ անցյալ ունի, ո՞վ է նա:

- Մելիք Ավան, Մելիք Միրզան անցյալ չունի... Մելիք Ավանը հասկացավ Պուղուն եւ հաջորդ ժողովներին էլ չէր կանչում նրան...

## ՇԱՆ ՓԱՅ ԴԱՌՆԱԼՍ ՈՐՆ Ա

Մելիք Շահնազարը հիվանդ էր: Նրան տեսության գնացած մարդիկ լավ լուր չէին բերում: Ասում էին մեկ վատանում է, մեկ ետ է գալիս: Եղավ մի պահ, որ Մելիքը շտապեց եւ այդպես երկար մնաց: Կարծելով թե Մելիք Շահնազարը արդեն մեռել է (շատերն էին ցանկանում նրա մահը), Պուղին խնդրեց, որ նամակով հայտնեն մելիքներին հայտնի նրա մահը: Պուղին սիրով Ղարաբաղի բոլոր մելիքների, տանուտերերի, տերտերների անունով նամակներ գրեց եւ ուղարկեց: Երբ այսքանից հետո նա եկավ պալատ, ասացին, որ բժիշկ է եկել Շուշիից, բուժել, հիմա Մելիքը անկողնում նստած ճաշում է:

Պուղին բարկացավ:

- Արա, շան տղերք, նրան սաղացնում եք, ի՞նչ անեք, էնա Աստված տանում էր նրան, թողնեիք գնար... Հիմա ինչ պիտի ասենք եկվորներին, դեռ սաղ է, մեռնում էր թողեք կարգին մեռներ, էլ շան փայ դառնալս որն ա...

## ԿԱՊԻԿՆԵՐԸ ՆՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ

- Պուղի, էդ ինչից է, որ երբ կապիկներին խնձոր, տանձ կամ ճղուպուր ես տալիս, որ ուտի, վերցնում է ու քամակը ցույց տալիս,- մի օր հարցնում է նրա հարեւան Ղազարը:
- Նրանք Մելիք Շահնազարի հանգերն են անում:
- Արա, Պուղի, դե իո ուրիշ տեղ էլ չկա Մելիք Շահնազար:
- Կա, Ղազար, կա, ամեն ժողովուրդ իր Մելիք Շահնազարը ունի, դու լավություն արա նրանց, նրանք իրենց քամակն են ցույց տալիս քեզ ...

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՔԱՎԹԱՌ ԷՇԻ ՎԵՐՋԸ

Պուղու քավթառ էշին գայլերը կերան: Պուղին իր քավթառ էշը գիշերը թողել էր հանդում: Գայլերը ցրիվ են տվել: Յաջորդ օրը նա կնոջ հետ գնաց տեսնելու. Նոխտան, փալանը, նալերը, գոնե մնում են, որ բերի տուն: Գնացին տեսան ոսկորներ են մնացել՝ իսկ փալանն ու սանձն էլ գողացել են:

- Էս քո բաներն է, այ կնիկ, էշը ժամանակին գոմը չգցեցիր, որ մի անգամ էլ դրսում թողեցիր վայդ տարել է: Յենց հանդից գալիս է, գցիր գոմը... Կինը քթի տակ ժպտաց: Պուղին որ չէր կատակել, հիմա էլ ասում է, որ էշը գա, գցի գոմը, ամաա կգա, հա՞...



## ՊՈՒՂԻՆ ԽՄՈՒՄ Է ՆԱԵՎ ԸՆԿԵՐՈՋ ՓՈԽԱՐԵՆ

Պըլը Պուղին գինետուն մտնելով, պատվիրեց երկու գավաթ գինի: Դրանից մեկը ընկերոջ համար էր, թեեւ ընկերը չկար: Իր գավաթը առավ, խփեց ընկերոջ գավաթին ու ասաց.

- Կենացդ, Ղազար,- ասաց ու խմեց:

Քիչ հետո խմեց հաջորդ գավաթի գինին ու քեֆը բոք, քթի տակ երգելով, ելավ փողոց:

Այդպես լավ էր: Թե չէ մի գավաթ գինով ինչ կլինի: Պատահած տեղն էլ ասում է.

- Էսօր համ Ղազարի տեղ խմեցի, համ Ղազարի կենացը:

Գինետանը արդեն գիտեին, որ Պուղին երկու բաժակով է գինի խմում:

Մի օր մտամոլոր գինետուն մտնելով, նա հրաժարվեց երկու բաժակից, խնդրեց մի գավաթ գինի բերել, որ ճիշտն ասենք, մեկ գավաթի փող ուներ:

- Էդ ինչո՞ւ, Պուղի, միշտ երկու գավաթ էիր ուզում, հիմա մեկն ես խնդրում:
- Հա, բայց հիմա ես թարգ եմ արել, մենակ ընկերոջս փոխարեն եմ խմում:

## ՓԱՌՔ ԱՍՏԾՈ

Պուղին տուն էր դարձել օյաղ: Կինը զարմացել էր:

- Փառք աստծո, էս որ խաչից է, այսօր խմած չես:

Պուղին լսեց ու նեղացավ կնոջից:

- Տես, է՛, բա դա արդարություն է, ես օյաղ տուն եմ գալիս, դու ինձ փառք տալու տեղ, աստծուն ես փառք տալիս...

### ԷՇԻՑ ՅԱՐՑՐՈՒ

Պուղին պահակ էր Մելիք Շահնազարի այգում: Ոնց է պատահում, էշը մտնում է այգի եւ ուտում նոր պատվաստած թթենիների տերեւներն ու ցողունները:

Երբ Մելիքը գալիս է այգի, նկատում է այդ եւ հարցնում:

- Արա, Պուղի, էս ինչ է, էս ծառերի վիճակը խե էս պես ա: Էս ովա փչացրել էս նախշուն ծառերը:

- Էշը, Մելիք Շահնազար, քո էշը դրա համար էլ հանել, կապել եմ ճղպորի ծառից:

- Արա դուզ:

Դուզ, թա հվատում չըս, հարցրու իրեն...

### ԷԴ ՈՒՐԻՇ ԲԱՆ Ա

Մի օր երբ Մելիք Շահնազարը շատ բարկացած էր Պողու վրա, ասաց.

- Մեկ էլ որ խոսքիս խոսք բերիր, պատուհանից շպրտելու եմ:

Պուղին լսեց ու ծիծաղեց:

- Ինչո՞ւ ես ծիծաղում սարսաղ-սարսաղ:

- Մելիք Շահնազար, քո տան փանջարեքը կթողնեն, որ ինձ շպրտես:

- Լավ, բալկոնից կշպրտեմ:

- Էդ ուրիշ բանա, դրան հավատում եմ, Մելիք, դա կանես...



### ԴԵ ՄՅԵՆԳ ԹՈՂ ԿՅԱ

Ասում են Պուղին հենց օրորոցում էլ սրամիտ էր: Երբ լաց էր լինում, մայրն ասում էր սուս արա, թե չէ Գաբրիել հրեշտակը գալու է քեզ տանե:

Մի քիչ լռում էր, հետո սկսում տզտզալ:

Մայրը նորից էր վախեցնում, նորից լռում ու քիչ հետո սկսում է տզտզալ երկար: Երբ մայրը երրորդ անգամ ասում է սուս ըրա, թե չէ Գաբրիել հրեշտակը գալու է քեզ տանի, ասում է.

- Դե միենգել կամա, թող կյա...

### ԴԵ ԵՐԿԱՑ, ԵՍ ՆՍՏԵՄ

Պուղին ուշացած գնում է տանուտեր Մոսու տղայի հարսանիքին, տեսնում է մի տղա նստած է սեղանի ամենից լավ տեղը: Պուղին կարծելով թե տղան Մոսու բարեկամն է, հարցնում է.

- Տղա ջան, Մոսու ինչն ես:

Չեչ մի բանը:

Գուցե Մելիք Շահնազարին ես բարեկամ:

- Չէ:

- Ողորմի քո հարը, դե երկաց, ես նստեմ:

### ԲԱ ԴՈՒ ՄԻ ԷՇԻ ՉԱՓ ԷԼ ՉԿԱՍ

Գյուղամեջ իջնելիս Մելիք Շահնազարը միշտ Պուղու երեսին խոսում է.

- Արա, Պուղի, էս փողոցի նեղ, քարքարոտ բանը ինչու չես շինում, հիմի որ վեր ընկնիմ, ոտս կոտրվի, ինչ պատասխան ես տալու:

- Մելիք Շահնազար, էս փողոցի ինչնա պակաս, որ բողոքում ես, տես փետով բեռնած էշերը ոնց են գնում, բա դու մի էշի չափ էլ չկաս, խե՞...

## ՔՅԱՓՈՒՌԸ ՉԻ, ՊՈՒՂԻՆ Ա

Պըլը Պուղին մարդը մեռած Զանիին աղբյուրի մոտ հանդիպում է, հետը անուշ խոսում եւ ասում.

- Ուզում եմ էս գիշեր գալ քեզ մոտ:

- Եկ, գոմի կտրին ենք քնում, էնպես արա, որ էծերը դրսում են լինելու, ղալի մեջ, չխրթնեն, պատրոնս չարթնան քնից, խայալթը կոշտ ա:

- Լավ, լավ, Զանի, Պուղին խոխա չի, որ նրան բան ես սովորեցնում:

Ամռան գիշերին Պուղին գողեգող գնաց Զանիանց տուն: Զանիի պատրոնը, աղվես Մուխտարը պղնձե կաթսաները դարսել էր իրար վրա,թոկով կապել այնպես, որ եթե թոկին դիպչես, կաթսաները ընկնեն քարերի վրա ու ձեն հանեն:

Պուղին որքան էլ զգույշ մոտեցավ, մեկ է, կաթսաները ընկան, զնգոցով գլորվեցին դեպի այծերի ղալը: Այծերը խրթնեցին, ղալմաղալի վրա հարեւանի շունը սկսեց կատաղի հաչել: Մուխտարը քնաթաթախ կարծելով, թե գայլ է մտել փարախը, սկսեց կանչել.

- Այ քյափուռ, այ քյափուռ:

Պուղին կամաց ասաց.

- Քյափուռ չըմ, Մուխտար, Պուղին ըմ, Պուղին...

## ՄԵԼԻՔԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Մելիք Շահնազարը մի օր հարցնում է Պուղուն,

- Պուղի, ա մեռած, էս աշխարհի վերջը հինչա տոնլական:

- Աշխարհի վերջը չգիտեմ,բայց քո վերջին օրը քեզ վրա լացող չինական, Մելիք Շահնազար...



## ՄԻ ԹՈԹ Է ՊԱԿԱՍ

Պըլը Պուղին յոթ աղջիկ ուներ, նրանցից ամենից փոքրը՝ Նոյեմը, իրեն տղայի նման էր պահում: Պուղին մի օր գյուղամիջում ընկերների հետ զրուցելիս ասաց.

- Ա խոխեք, մեր Նոյեմին մի «թոթ» է պակասում, որ տղա դառնա, քանի որ աստված դա էլ տար նրան, ինչ կլիներ...

(Թոթ ասելով, Պուղին նկատի ուներ երեխայի առնանդամը):

## ԿԱՐԱՍՆԵՐԻ ՁԵՆԻ ՀՆԱՐԸ

Զուռնաչի Հակոբը լավ գիտեր, որ հարսանիքում ինչ եղանակ էլ նվագի, մեկ է, մինչեւ երեք-չորս բաժակ չխմեն, նրա նվագը մակարների ոսկորը չի ընկնելու, դրա համար էլ թամադային հասկացնում է շուտ-շուտ կենացներ հիշել:

Մի օր էլ, երբ գյուղում հարսանիք էր ու սեղանապետ էր Պուղին, լավ խմեցնում է բոլորին ու ասում.

- Հակոբ, հիմա փչիր զուռնադ, ուզում ես սահարի, ուզում ես տասիրի չորս, մեկ է բոլորը պարելու են, համե էլ գիդա, որ էդ քո զուռնի հիրսը չի, Մելիքի կարասների ձենի հնարն ա...

## ՊՈՒՂԻՆ ԵՂՆԻԿ Է ՈՐՍՈՒՄ

Պուղին գնում է Մելիքի որսասարից եղնիկ որսում:

Մելիքը կանչում է, երեսին խոսում:

- Ա մեռած, բա դու չգիտես, որ ուրիշ մարդիկ այնտեղից որս չպիտի անեն:

- Մելիքն ապրած կենա, ես ուզում էի սաղ բռնել եղնիկը, փախավ, ես էլ կրակեցի, յանի լավ չեմ արել, թե չէ պիտի ասեին Մելիքի ծառան մի եղնիկ էլ չի կարողանում սպանել,- արդարանում է Պուղին: Համ էլ ես որտեղի՞ ուրիշ եմ, որ ուրիշ ես համարում:

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՆԿԱՐԸ

Պըլը Պուղին իր գրպանում պահում էր Մելիք Շահնազարի նկարը:

Իմանալով այդ մասին, Պուղու ընկերները սկսում են նախատել նրան:

- Պւղի, մենք էլ քեզ կարծում էինք կարգին մարդ ես, արա մարդ չես գտել նկարը ծոցումդ պահելու համար, որ Մելիքի նկարն ես պահում, բա դա նամուս է, որ դու ունես, բա քեզ սազում է էդ շողոքորթությունը:

Պուղին լսեց ու խիստ բարկացավ:

- Շան որդիներ, ես Մելիքի նկարը պահում՝ եմ, որ ամեն անգամ վատ բան անելուց հետո հանեմ, ու երեսին թքեմ...

## ՊՈՒՂԻՆ ԿՈՏՐՈՒՄ Է ՄԱԾՆԻ ՊՈԼԻԳԸ

Երբ Պուղին պատանի էր եւ պահում էր գյուղացիների ուլերն ու գառները, մայրը ամեն օր նրա հետ մի խիցի (կուճուր պուլիկ) մածուն էր դնում, կեսօրին հանդում ուտելու համար: Խիցին շատ փոքր էր եւ Պուղին չէր կշտանում: Մի օր նա մորը բողոքեց, թե ա մեր, շատ է փոքր խիցին, մերը թե.

- Մաման քեզ մատաղ, Պողոս, կոզի կուճի յա խիցին, կյոդա: (Այսինքն՝ մածունը շատ ա տանում):

Պուղին մածունով լի խիցին տալիս է քարով, կոտրում, ասելով.

- Էս որ կուճուր ա, գողա, պա վեր մծանա, հինչա տռնլական...



## ԳՈՄՇԱԿՌԻՎԸ ՊՈՒՂՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ

Պըլը Պուղին լսում է, որ սոսեցի տանուտեր Ավիսը մի կռվան լավ գոմեշ ունի, ամեն կիրակի բերում է Ամարասի վանքի մոտ կռվեցնում ուրիշ գոմեշների հետ, մարդիկ թամաշա են անում:

Այդ ամռանը, Պուղին Մելիք Շահնազարի երկու գոմեշները լծած, արտերից խուրձ էր կրում կալը: Իմանալով, որ վանքի մոտ այդպիսի հանդես են սարքում, Մելիքի գոմեշներից մեկը վերցնում է գնում: Նա համոզված էր, որ Մելիքի գոմեշը հաղթելու է, ուստի նրան քաշում է հանդեսի:

Երբ կռվեցնում են գոմեշները, տանուտեր Ավիսը գոմեշը այնպես է պոզահարում Մելիքի գոմեշին, որ նախ պոզով ծակում է նրա կողը, ապա ընկնում եւ կոտրում է ոտքը:

Պուղին մարդկանց օգնությամբ վիրավոր գոմեշին դնում է իր սայլի մեջ, քշում դեպի Մելիքի կալը:

- Էդ ի՞նչ ես բերում,արա, Պուղի,- հարցնում է Մելիքը:

- Մեռել, Մելիք, իմ ու քո անունը գետնով տվեց, ամոթից հիմա մեռնում ա...

## ՊՈՒՂԻՆ ԴԱՏԱՎՈՐ

Պըլը Պուղուն հաշտարար դատավոր նշանակեցին Վարանդա մահլում: Անցավ մեկ-երկու տարի, նա էլի մնաց հին աղքատը: Ղազարը գնաց մի օր նրա մոտ եւ հարեւանի իրավունքով խորհուրդ տվեց.

- Պուղի, եկ էդ պաշտոնը զուր տեղը մի փչացրու, գոնե ինձ գզիր վերցրու, ինձ էլ պահեմ, քեզ էլ...

## ՓՈԽԱՆ ՈՒՆԵՍ

Պուղու կինը մարդու երեսը պոկում է ամեն օր: Ասում է՝ մի նոր փոխան առ:

- Կառնեմ, կառնեմ, հալա եղածով յոլա գնա, մինչեւ:

Մի օր էլ Պուղին գնում է Շուշի, կինը պնդացնում է.

- Առանց փոխան չգաս:

Պուղին մի խանութի առաջ Մելիք Շահնազարին կանգնեցնում է, մտնում խանութ, դես ու դեն նայում ու հարցնում:

- Խանութպան ախպեր, փոխան ունես:

- Ունեմ, բա առանց փոխանըմ:

- Բա հորա՞:

-Էս ա կեցիս:

- Այ արա, ես կնկա փոխան եմ ուզում:

- Ա՛, դե էդպես ասա, էլի...

- Ոնց ասեմ, խանութպան ախպեր, դարդս մեծ ա, ուրիշները իրենց կնկա փոխանը հանում են, ես պիտի կեց տամ,- խոսքի տակ չի մնում Պուղին:

## ՍՈՒՍ ԱՐԱ, ՈՒՐԻՇՆԵՐԸ ՉԻՄԱՆԱՆ

Պուղին ու Մելիք Շահնազարը ուզում են գնալ Պարտավ: Ամառ է լինում, որոշում են գիշերը գնալ, որ արեւի տակ չընկնեն:

Գնում են, գնում, լերբ Ասկերանը անցնում են, Մելիքը ուզում է չիբուխը վառել, բայց Ասկերանի քամին խե թողնում ա:

- Եկ քամուն դեմ թարս կանգնենք,- ասում է Պուղին: Կանգնում են, վառում չիբուխը, ծխում ու գիշերվա մթնում զրուցելով շարունակում են ճիերը տանել նրանց: Մեկ էլ տեսնում, որ կանգնած են Մելիքի դռանը:

- Յա, այ գադա, էս ո՞նց եղավ,- չարանում է Մելիքը:

- Սուս, Մելիք Շահնազար, սուս, քանի խայտառակ չենք դարձել...



## ԷԼԻԱ ՔԵԶ ՇՂՎՑՐԵՐ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԵՏ

Ղազարը պինդ խմում է, ութ գոելով ուշ գիշերին տուն գնում: Իմանալով, որ Ղազարը տանը չի, նրա կնոջ սիրեկանը գալիս է գործը տեսնում ու քնում Ղազարի կնկա հետ:

Ղազարը գալիս է, շորերը հանում, որ մտնի տեղը, տեսնում է էնա մի տղամարդ էնտեղ քնած:

- Էս ո՞վ ա,- կնոջը հարցնում է Ղազարը:

Տեսնելով, որ մարդը ամեն օրվա պես լավ հարբած ա, կինը բարկանում է նրա վրա եւ ասում.

- Էլիա քեզ շղվցրիր ուրիշների հետ...

## ԿՅՈՒԼԸ ՄԻՍԸ ՀՈՒՄ ՈՒՏՈՒՄ

Պուղին ու Մելիք Շահնազարը հաճախ են վիճում: Այս անգամ էլ վեճը երկարեց Սխտորաշենի աղբյուրի մոտ: Պուղին Մելիքին հավատացնում է, որ աղբյուրի մոտ, հին սոսու տակ քեֆ է արել Տիգրան Մեծը: Դե որ Տիգրան Մեծը քեֆ է արել, Մելիք Շահնազարին ի՞նչ է եղել, նրա գործը հենց քեֆ անելն էր:

Վեճը ծագեց Մելիք Շահնազարի մի խոսքից: Նա հավան չէր Պուղու արած խորովածին, ասում է լավ չի խորովել, միսը հում է մնացել:

- Հում չի, կեր, Մելիք Շահնազար, խոզի միսը հեղե-հեղե կուտեն:

- Պուղի, ադա, միսը հում է, հում միսը ոնց ուտեմ, փորս կցավի,- պնդեց Մելիքը:

- Խոսում ես, էլի, Մելիք Շահնազար, էսքան ժամանակ մի կյով չտեսանք, որ փորը ցավի, ընդհակառակը, հում միս են ուտում, փզները հաստանում է, ուժեղանում են:

- Պուղի, ա մեռած, ասածներիդ մեջ ճշմարտություն կա, մի էդ գինու փարչը դեսը տուր տեսնեմ, խմենք-ուտենք, բալքի ճիշտն էս ա...

## ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՎԱՏ ԵՐԱԶԸ

Մելիք Շահնազարը վատ երազ տեսավ. իբր իրենց ջրաղացի քարը թույլ ընգած գնում էր: Արթնացավ, քունը փախավ աչքերից, չսպասեց, որ Պուղին գա, կանչեց նրան ու հարցրեց.

- Պուղի, մի մեկնաբանիր էս գեջ երազը:

- Մելիք Շահնազար, էնա դու էլ գիտես էդ երազի մեկնաբանությունը, մալ ու դովլաթդ ձեռքիցդ գնում է: Աստծո կամքն ա, ով ինչ անի, իրեն կանի: Բա ի՞նչ էիր մտածում, երբ բոշա Փանահին բերար տնկեցիր քո էդ դրախտ երկրի սրտում...





## ՊՈՒՂԻՆ ԿՆՈՋ ՀԵՏ ԳՆՈՒՄ Է ԲԺՇԿԻ ՄՈՏ

Պուղու կինը Պուղուն դանգատ ա անում, ականջի միսը ուտում:

- Մի խմիր, խմելը հիվանդություն ա ու էլի նման բաներ: Պուղին Գերմանիայում ուսում ստացած բժիշկ Ահարոնին «տեսնում է», մի ոչխար տալիս ու ասում, որ կնոջ հետ գալու է խորհուրդ հարցնելու խմելու-չխմելու մասին: Լավ կլինի, որ նրա մոտ ինքը մի քիչ գովի խմելու սովորությունը: Երբ նշված պահին Պուղին ու իր կինը գնացին բժշկի, Ահարոնը այնպիսի մի զրույց ունեցավ, որ Պուղու կինն էլ սկսեց առավոտյան մի բաժակ օղի խմել.

- Բա որ ասում եմ խմելը վատ չէ, տեսա՞ր, դոխտուրը ինչ ասաց, դե ամեն առավոտ մի բաժակ թթի օղի խմիր, խուխատոնդ թքանա...

## ԵՐԿՈՒ ՈՏՆԱՆՈՒՆ ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼԻ ՉԻ

Պուղին անբաժան էր Մելիք Շահնազարից: Այդպես էր կարգադրել Մելիքը: Ով չի ցանկանա Պուղու պես կատակասեր զրուցընկեր ունենալ: Բայց նա մենակ զրուցընկեր չէր: Պուղին նրա հավատարիմ թիկնապահն էր:

Մի շաբաթ է՝ Մելիքը մտահոգության մեջ էր:

- Մելիք Շահնազար, դու ինձ մոտ ես, միտքդ հեռվում, ինչա հլալ,- մի օր հարցնում է Պըլը Պուղին:

- Է՛, Պուղ, երկու ոտնանուն լավություն անելի չի... էդ բոշա Փանահը կա, որին տեղ է արել, շան որդին ուզում ա ես էլ իրեն զուռնի տակ պարեմ:

- Կպարես, դու չպարես, քո տղան, թոռը կպարեն... ի՞նչ էիր մտածում, երբ բերար ու գլխից վրա նստեցրիր...

## ՊՈՒՂԻՆ ԵՐԿՐԱԲԱՆ Է ԾՆՎԵԼ

Հեռու աշխարհից երկու հոգի գալիս են Ղարաբաղ, դոնաղ լինում Մելիք Շահնազարի տանը: Հաջորդ օրը Մելիքը կանչում է Պուղուն ու պատվիրում.

- Ա Պուղ, էս մարդիկ Ինգլիզի երկրից են եկել, ուզում են մեր երկրի հանքերը ստուգեն, տեսնեն ոսկի, արծաթ, արճիճ կա՞:

- Կա,- ասում է Պուղին ու դեռ հազար տարի առաջ էլ հալում էին թուր ու թվանք սարքում, ոսկուց, արծաթից կանանց համար զարդեր սարքում:

- Ադա հի՞նչս գիդում:

- Գիդում չես, երկրաբան եմ ծնվել,- թող գան դաս տամ իրենց...

## ՇՈՒՆԸ ԻՆՉՈՒ Է ՀԱՉՈՒՄ ՏԻՐՈՋ ՎՐԱ

Մելիք Շահնազարի շունը սկսեց հաչել նրա վրա. Մելիքը շատ զարմացավ:

- Պուղի, էս շունը չինի կատաղել է, վրաս հաչում ա, զինքը ուտում ա, թվում ա, եթե բաց ընկնի, ինձ պիտի քոլոլի:

- Մելիք Շահնազար, շունը իմաստուն կենդանի է, հավատարիմ, մի տես ինչ վատ բան ես արել նրան, որ չի ընդունում:

- Ադա, բալքի ինքն էլ է նեղացել ինձանից, որ բարեկամացել եմ թուրք Փանահի հետ:

- Էտա որ կա, պատճառը գտել ես...



## ✓ ՊՈՒՂԻՆ ՉԱՍԱՑ ՀԱՐՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ✓

Մելիք Շահնազարի տունը շատ հյուրեր էին գալիս: Մեկն էլ եկավ, թե ուզում եմ իմաստուն Պողոսի, այսինքն՝ Պըլը Պուղու հետ զրուցեմ երկնքի աստղերի մասին:

Մելիքը Պուղուն կանչեց օտար աստղագետի մոտ, ինքն էլ նստեց նրանց մոտ:

- Պուղի, դե որ տիեզերքից բան ես հասկանում, ասա տեսնեմ արեգակն է մեծ, թե մի աստղը:

- Չեմ ասի:

- Ադա, խե չես ասում, ասա,- զրույցին խառնվեց Մելիք Շահնազարը:

- Չեմ ասի, թե ինքը իմանում ա, թող իր համար պահի, թե չի իմանում, հոր ասեմ, սովորի...

## ԽԵ՞ ԳՅԱՎԱԼԱ

Պըլը Պուղին խոտ էր հարում Խմհատում: Կինը կեսօրվա հացի համար երեք ձու էր պինդ եփել, մի փափուկ հացի հետ դրել նրա խուրջինում, համ էլ ասել.

- Կեսօրին գնա համ հաց կեր Մթնաձորի աղբյուրի մոտ, համ մի երկու փունջ ջրուկուտեմ քաղիր, բեր:

Պուղին կեսօրին գնաց հաց ուտելու, նստեց աղբյուրի մոտ, ուռենու հովտում: Ձվերը հանեց, ջրուկուտեմ քաղեց ու մեկ-մեկ ձվերը կամաց խփում էր աղբյուրի քարին, կոտրում, կլպում ու թոնրահացի հետ անուշ անում:

Աղբյուրի մոտ ուրիշներն էլ եկան: Եկավ Ղազարի որդի Աբելը եւ տեսնելով,որ Պուղու առաջ դեռ երկու ձու կա, ասաց.

- Պուղի ապա, մի հատ ձու էլ ինձ տուր:

- Յա,- զարմացավ Պուղին,ա խոխա, ձուն գյավալ ա, խե...

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԶՈՒՌՆԱ ԱԾԵԼԸ

Պըլը Պուղին ուզում էր զուռնաչի դառնալ: Գնաց Շուշի, մի զուռնա առավ, եկավ ամբողջ գյուղը գլխին հավաքեց: Առավոտից մինչեւ ուշ գիշեր փչում էր, հա՛ փչում: Էնքան փչեց, բոլորի զահլեն գնաց: Հարեւանները հավաքվեցին, եկան Մելիք Շահնազարի մոտ, գանգատվեցին:

- Մելիքն ապրած կենա, հիվանդ կա, քնած երեխա կա, մեռնող կա, էդ դանդալոշին ասա, էլ զուռնա չփչի:

Մելիքը Պուղուն կանչեց, ամեն օր մի շահի խոստացավ, եթե զուռնա չփչի:

Պուղին ամեն օր իր «վարձը» ստանում էր, չէր փչում զուռնան:

Մի օր հարեւան Ղազարը հարցրեց.

- Էլ չես փչում զուռնադ:

- Ղազար, որ Մելիքը քեզ էլ ամեն օր 20 շահի տա, դու էլ ձենդ կկտրես...

## ՀԱԶԱՐԸ ՉԵՍ ՏԱԼԻՍ, ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐԸ ՏՈՒՐ

Պուղին մի օր հազար դրամ է ուզում Մելիքից:

- Էդքան չունեմ, Պուղի,- ասում է Մելիքը.

- Լավ, որ էդքան չունես, կես տուր, կեսն էլ հետո կտաս...



## ԴՈՒ ԷԼ ՍՏՐԱ ՔԹԻՆ

Մի սով տարվա ձյուն-ձմռանը, երբ Պուղու տանը այլեւս ոչ մի բուռ փոշի կար, ոչ էլ գոնե մի եփելու լոբի, Պուղին մտածեց գնալ Մելիք Շահնազարի մոտ, մի կոտ ալյուր խնդրելու: Եվ գնաց: Մելիքը տանը չէր: Կինն էր տանը, Աննա խանումը, որ մայր հնդկահավի պես ուռվել էր:

- Էսպես, էսպես,- Պուղին երկար-բարակ պատմեց, որ տանը նրա յոթ աղջիկները սոված են:

- Հույսս դուք եք, ամանըգոնը, Աննա խանում...

Խանումի խիղճը շարժվեց, վեր կացավ, գնաց մառանը՝ Պուղուն էլ իր հետ տանելով: Հենց որ կռացավ կոտը ալյուրով լցնելու, մի անգամ բաց թողեց:

Պուղին անմիջապես վրա բերեց.

- Սրա քթին, խանում:

Խանումը կոտը դատարկեց եւ ուզում էր դատարկ ետ ուղարկել Պուղուն, բայց Պուղին նրա ոտքերն ընկավ, աղաչեց, պաղատեց.

- Խանում, ասենք ես մի հիմարություն արի, բա դրա համար ըրախեքը սոված ես թողնում:

Աննա խանումը զղջաց, գնաց նորից կռացավ, որ կոտը լցնի ալյուրով, նորից տռեց.

- Խանում, թեկուզ ըրախեքը կոտորվեն սովից, դու էլ սրա,- իրեն զսպել չկարողացավ Պըլը Պուղին:

ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ԳՈՒՇԱԿՈՒՄ ԷՐ

Պուղին միշտ ասում էր, որ Շուշին մի օր առաջվա պես կազատվի թուրք խաներից, բայց դա հետո կլինի, շատ հետո: Պուղին երկար ապրեց ու ամեն անգամ հարցնում էին.

Պա հինչ դառավ Շուշվա ազատությունը:

Երբ ուզում էր մեռնել, Մելիք Զումշուդին, որ Մելիք Շահնազարյանների խայտառակությունները ուզում էր սրբել, խնդրեց իրեն թաղել Շոշ գյուղի մոտ, Զախլիկ աղբյուրից վեր, բլրի վրա, որտեղից Ամարասից եկող ճամփան գնում, մտնում է Շուշի:

- Մեռած ժամանակ էլ եմ տեսնելու Շուշվա ազատությունը,- ասաց մահից առաջ:

Պուղին իմաստուն էր. Շուշիի ազատագրման ժամանակ առաջին հայ զինվորը Աշոտ Ղուլյանն էր, որը վայրի ծաղիկներ էր դրել նրա գերեզմանին եւ հենց նրա նշած տեղով մտել Շուշի...

ՔՈ ՀԵՐԸ ԻՆՉ Է ԻՄԱՆՈՒՄ
ԵՍ ՔԵԶ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՄ

Երբ Պըլը Պուղին Մելիք Շահնազարի մոտ ծառայության մտավ, Մելիքը կանչեց եւ ասաց.

- Պուղի մեզ մոտ օրենք է, ով ծառայում է մելիքական տանը, պիտի գնա խոնարհվի իմ հոր գերեզմանին:

- Մելիք Շահնազար, ես պաշտում եմ օրենքները, բայց ձեր տան այդ օրենքը սկի մի բանի նման չի.

- Ինչի, ադա:

-Ասեմ, քո հերը տասը տարի առաջ է մահացել, հիմա նա ինչ ա իմանում քեզ մոտ ծառայում եմ, թե չեմ ծառայում:



ՇԱՔԱՐԻ ԳՈՂԸ

Ղազարը հենց որ գալիս է Պուղու տուն, աչք է գողանում, շաքարամանից շաքար գողանում: Պուղին գլխի էր ընկնում, բայց որ չէր տեսել, ինչ ասեր: Մտածում էր, բալքի սկի Ղազարը չի գողացել, երեխաներն են վերցրել:

Մի օր էլ, երբ Ղազարը գալիս է Պուղու մոտ, տանը ոչ ոք չի լինում: Պուղին մի ճանճ է բռնում, դնում շաքարամանում, բերանը փակում, դնում սեղանին, Ղազարի առաջ, ինքը դուրս գալիս բակ ու ու ետ գալիս: Գալիս է բացում շաքարամանի բերանը ու տեսնում ճանճը էնտեղ չի, շաքարն էլ պակասել է: Հիմա որ համոզվում է, նախատում է հարեւանին.

- Ղազար, արա շաքարը կերար, ճանճը ինչու բաց թողիր,- կատակով նախատում է Պուղին...









*Մելիք Շահնազարի տանը ուրախություն է*

***

*- Դուք լսել եք Պըլը Պուղու անունը:*

*- Վահ, խե իտի մարդ կա Ղարաբաղում, վեր գյուղում չի հուկա Պուղին:*

*- Նրան հու պոզեր չիլալ, հասե ինձ նման մարդ ա իլալ...*







# ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԱՐՑԱԽՅԱՆ ԽՈՀԱՆՈՑԸ

***

Հարուստ է արցախյան խոհանոցը:
Այստեղ սիրված կերակուրներ են.
Խորոված (գլխավորապես՝ խոզի մսից):
Դոլման (տավարի, խոզի եւ ոչխարի մսից):
Խաշը (տավարի ոտներից, թափանից):
Կոլկոտը (խոզի եւ տավարի մսից):
Խաշլաման (ոչխարի եւ տավարի մսից):
Թանովը:
Կծեխաշը (ցորենը, լոբին եւ սիսեռը միասին):
Քյուլունգոշը:
Աճիկը:
Կաթնով ճաշը:
Փլովը:
Բորշչը:
Փթրոկը:
Տապակած կարտոֆելը:
Եփած կարտոֆիլը:
Եփած եւ փորը ախտով լցրած հավը:
Եփած հնդկահավը:
Ղազանի խորովածը:
Հնդկահավի խորովածը:
Կոտլետը:
Դիրի լոբին:
Կանաչ լոբին:
Խորոված բադրիջանն ու խորոված պոմիդորը:
Կանաչ սալաթը:
Խորոված սոխը եւ այլն:



ԲՈՒՍԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

Եփում եւ տապակում են
Թալը.
Ծաղցամը.
Սպանաղը.
Ծնեփակը.
Բանջարը (եղինջ).
Բանջարամերը.
Ավելուկը.
Փերփեռը (չեն տապակում).
Ճակնդեղի թեւերը.
Օրիշը.
Խնջլողը (չեն տապակում).
Լոբին.
Դդումը.
Կաղամբը.
Բադրիջանը եւ այլն:

ՀՈՒՄ ՈՒՏՈՒՄ ԵՆ

Գազարը.
Տոմբալանը.
Բողկը.
Ղոլանը.
Խազազը.
Մոշի նաբաթը.
Ծրիկուտեմը.
Դաղձը.
Սամիթը.
Կինձը.

Նանան.
Կակաչի նաբաթը.
Խաղողի վազի նաբաթը.
Թրթնջուկը եւ շուրջ 100 անուն
վայրի բույսեր:

ԹԹՈՒ ԵՆ ԴՆՈՒՄ

Պոմիդորը.
Վարունգը.
Ճակնդեղը.
Պղպեղը.
Բադրիջանը.
Դդումը.
Կաղամբը.
Շուշանը.
Կինազոխը.
Կապարը.
Սխտորը.
Տանդուրը.
Կանաչ լոբին.
Կրմուզուկը.
Սիբեռը եւ այլն:

ՉՈՐԱՑՆՈՒՄ ԵՆ

Նանան.
Կինձը.
Կարմիր պղպեղը.
Սամիթը.
Ավելուկը.



Կարմիր մոշը.
Ուրցը.
Մոշեհամուկը
եւ դեղատու բոլոր բույսերը:

ՉՈՐԱՑՆՈՒՄ ԵՎ ՁՄՌԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՄՐԳԵՐԸ

Հոնը (կորիզովը ախտա արած (անկորիզ).
Հասած մոշը.
Թութը.
Քոլի խնձորը (չիր).
Քոլի տանձը (չիր).
Խաղողը (չամիչ).
Սալորը.
Միասուրը.
Սեզնը:

ԼԱՎԱՇ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հոնից.
Սալորից.
Ծիրանից.
Ալչից.
Տամբուլից.
Մոշից:

ՄՈՒՐԱԲԱ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Մոշից,
Կեռասից,
Բալից,
Սալորից,
Հոնից,
Թզից,
Մոռից,
Մորուց,
Թթից,
Սերկեւիլից,
Խնձորից,
Վայրի խնձորից,
Սեխից,
Ձմերուկից,
Մասուրից եւ այլն:

ՈՐՊԵՍ ԳՈՒՅՆ
ԹԵՅ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սարի չայից (դարչին),
Մասուրից,
Ուրցից,
Սեզնի ծաղկից,
Սեզնից,
Սզնի ծառի բնափայտից,
Այրած հացից,
Այրած շաքարից,
Թթենու բնափայտից,
Կարմիր խնձորի քչեից եւ այլն:



ԺԵՆԳՅԱԼՈՎ ՀԱՑ

Ժենգյալով հացը հանդիսանում է արցախյան խոհանոցի թագուհին: Առավել մասսայական այդ կարկանդակը արցախցիները պատրաստում են ավելի շատ՝ վաղ գարնանը: Այսինքն՝ այն ժամանակ, երբ դաշտում, բանջարանոցներում, գետերի եւ առուների ափերին, մարգագետիններում լինում է կանաչեղեն: Այն պատրաստում են հետեւյալ կերպ՝ ընտրած, լվացած կանաչեղենը փունջ-փունջ են անում, մանր կտրտում, լցնում մեծ ամանի մեջ, աղ ցանում, ավելացնում թթու (հոնի ախտա, սալորի լավաշ, թրթնջուկ եւ այլն), վրան ձեթ ցանում եւ թեթեւ հունցում (խառնում): Առանձին հունցում են ոչ պինդ խմոր (ալյուր, ջուր, աղ): Մոտ կես ժամ հանգստանալուց հետո, խմորը բաժանում են բռնցքաչափ գնդերի, գրտնակում, ստեղծում լավաշի չափ բարակ գանգվածներ, մեջը լցնում պատրաստի կանաչի, լավաշի ծայրերը միացնում իրար եւ ստեղծում մեծ-մեծ էլիպսաձեւ հացեր: Դրանք պետք է թխել չուգունի հաստ սաջի վրա: Վարպետ ժենգյալով հաց թխողներն օգտագործում են մինչեւ 15-20 տեսակի վայրի եւ բանջարանոցային բույսեր:

Համով են, հատկապես, այն ժենգյալով հացերը, որոնց մեջ լինում են՝

Ծոծռոկ,
Կինձ,
Սամիթ,
Սպանախ,
Թրթնջուկ,
Կրմնձուկ,
Պառավի պորտ,
Թալ,
Բանջար (եղինջ),

Ճակնդեղի թեւեր,
Կարտոֆիլի թեւեր,
Կռնականչ,
Պուտ,
Վարթոկ,
Պզտոփի,
Սոխ,
Շրեշ,
Խազազ,
Սիմսիմուկ,
Տկարու ճակատ,
Ծեթուկ,
Խաշխաշ,
Տտպաշար,
Ուտեմ-տիտեմ,
Նանա,
Տեսնը (վայրի նանա),
Քյարավուզ,
Պինջիրիմար,
Շուշան եւ այլն:

Ի դեպ, այս բույսերի մի զգալի մասը, որպես մոլախոտ, աճում է մշակված արտերում ու բանջարանոցներում: Այնպես որ, արցախցի կանայք եւ աղջիկները քաղելով այդ բույսերը ակամայից մաքրում են արտերն ու բանջարանոցները: Ժենգյալով հացի թխումը մի տեսակ տոնական տեսք է տալիս հայի օջախին: Տանուտերը հրավիրում է բարեկամներին, ընկերներին ու հարեւաններին, որոնք ուտում ու խմում են կարմիր գինի եւ գովում խոհարարին:

Պըլը Պուղին բարկանում էր իր այն հայրենակիցների վրա, որոնք ձմռանը մի կարաս թթու դրած կինազոխ, սիբեղ, շուշան, տանդուրն չունեն:



- Բերեք, բերեք աղ դրեք, որ ձմռանը ուտեք ու վրան գինի խմեք,- զարնանը բոլորին խորհուրդ էր տալիս Պըլը Պուղին:

- Չորացրեք, պահեք, արեւն էլ իր ծրի ա: Ամռան եւ աշնան ամենաթեժ օրերին նա նախատում է ծառի տակ նստած իր հարեւան Ղազարին, նրա կնոջը:

- Արա, Ղազար, ինչո՞ւ ես էլի պարապ-սարապ նստել:

- Բա ի՞նչ անեմ, Պուղի,արտ չունեմ որ հնձեմ,տավար չունեմ պահեմ, ի՞նչ անեմ:

- Արա մեր ձորերը լիքը-լիքը բարիք է, թութը թափիր, մոշ քաղիր չորացրու, հոն ու մասուր քաղիր չորացրու, լավաշ ու ախտա ար, էն վայրի տանձից, խնձորից բեր լցրու խոտի դեզի մեջ, չիր արա: Արա, Ղազար, աստված ղարաբաղցու ուսերն ի վեր ա ածալ բարիքը, բա էս լիքը բնության մեջ մարդ սոված կմնա՞:

Ինքը՝ Պուղին, տարվա մեծ մասը ապրում էր «Աստծո տվածով», այսինքն՝ բնության այն բարիքներով, որը ստեղծում էր բնությունը, առանց մարդկանց միջամտության:

Պըլը Պուղին ուներ խոհանոցային մի մատյան, որտեղ գրված էր զուտ ղարաբաղյան ճաշատեսակները:

Երբ Մելիք Շահնազարը խորովածից, խաշլամայից կշտանում էր, խնդրում էր Պըլը Պուղուն քինդոշ, շփոթ, ածիկ, խաշ, խաշիլ, կորկոտ, եփած խնչլոզ, եփած փերփետ, տապակած բանջար, թթու, կճեխաշ եւ այլ տեսակի ճաշ տալ իրեն:

Պուղին միշտ էլ կատարում էր Մելիքի կարգադրությունը: Կանգնում էր նրա առաջ եւ ասում:

- Մելիք Շահնազար, իմ խոհանոցի ճաշերը ուտողը 100 տարի պիտի ապրի, չեմ ուզում, որ դու այդքան ապրես:

- Արա, ինչո՞ւ չես ուզում, ա մեռած, քեզ ի՞նչ եմ արել:

- Ինձ չէ, ժողովրդին ես արել: Հարկերը պակասացրու, քեֆերը շատացրու, քասիբներին հող տուր, թող ժողովուրդը ազատ շունչ քաշի:

- Թող քո ասածը լինի, մենակ թե մի աման խաշիլ բեր ուտենք ես եւ դու: Հա, մի թռնգի էլ գինի բեր, Աշանի գինի, յոթ տարեկան:

## ՄԱԾՆԱԲՐԴՈԾ

Մածնաբրդոշը, հատկապես, ամռան ամիսներին ամենից անուշ, զովարար սնունդն է:

Պըլը Պուղին բրդոշ անում էր չոր հացը բրդելով մի մեծ գավաթի մեջ, վրան լցնելով մածուն: Խառնում էր, կոկում այնքան, որ բրդոշը թռսխում էր, ասես աղաչում էր՝ Պըլը Պուղին փայտե գդալը վերցնի ու գդալիարի: Մի ամառ Պուղին ու իր տղան հունձ էին անում եւ ջուտ-ջուտ նայում փանջարի ստվերին... Ամռան օրը ասես տարի է, ե՞րբ կգա կեսօրը: Վերջապես կեսօրին,երբ նստեցին հաց ուտելու, տղան ասաց.

- Ա հեր, ամմա կերանք, հա:

- Ինչո՞ւ չպիտի ուտենք, մենք ումի՞ց ենք պակաս, որ չուտենք, ես մի ասլան, դու մի ասլան բալասի:

## ՔԼՆԳՈԾ

Այս կերակրատեսակը կարծես թե մոռացվել է արցախյան խոհանոցում: Պատճառն այն է, որ հիմա շատ քիչ մարդիկ են չորաթան սարքում: Մինչդեռ չորաթանը կարելի է պահել 3-4 տարի եւ բնավ էլ չի կորցնի իր համն ու հոտը: Այն հարմար է նաեւ հեռու տեղ տանելու համար: Քլնգոշ եփելու համար չորաթանը թրջում են ջրում, պահում 2 ժամ, ապա կավե ամանի մեջ հարում այնքան, որ ստացվի թան:

Պատրաստի թանը լցնում են կաթսայի մեջ, եփում մարմանդ կրակի վրա: Եռացման պահին ավելացնում են չոր հացի կտորներ եւ շարունակում եփել 15-20 րոպե:

Եփելուց 5 րոպե առաջ ավելացնում են սոխառած: Քլնգոշի 1 լիտր թանին հասնում է 30 գրամ յուղ եւ 4-5 կտոր հաց: Քլնգոշը լավագույն միջոց է չոր հացը օգտագործելու համար: Այն մատուցում են տաք վիճակում:



## ԱՎԵԼՈՒԿ

Ավելուկը քաղում են գարնան վերջին: Թարմ ավելուկը մաքրում են, լվանում սառը ջրով, դնում մարմանդ կրակին եւ եփում մինչեւ արմատի փափկելը: Հինգ րոպե մնացած մինչեւ եփելը, գցում են աղ, չորացրած հոն կամ մանր կտրած հոնի լավաշ: Ավելուկը օգտագործում են տաք եւ սառը վիճակում: Ձմռանը ավելուկ ունենալու համար այն քաղում են ամռանը եւ հյուսում (ծամ անում), ապա չորացնում ստվերում եւ պահում ձմռան համար: Ձմռանը չորացրած ավելուկը մի քանի անգամ լվանում են տաք ջրով, որպեսզի լավ մաքրվի եւ փափկի, այնուհետեւ եփում են այնպես, ինչպես թարմ:

## ՏԱՊԱԿԱԾ ԲԱՆՋԱՐ (ԵՂԻՆՋ)՝ ՁՎՈՎ

Մատղաշ բանջարը լավ լվանում են եւ եփում նախապես եռացող ջրում: Այնուհետեւ քամում են փլավքամիչով: Առանձին թավայում պատրաստում են սոխառած, վրան լցնում քամված բանջարը եւ տապակում 5 րոպե: Վերջում գցում են ձուն եւ աղը: Մատուցում են տաք վիճակում: Բաղադրատոմսն է՝ 1 կգ բանջարին՝ 20 գրամ հալած յուղ, 1 ձու:

## ԵՓԱԾ ՓԻՓԵՐԹ

Եփած փիփերթը սիրված կերակրատեսակ է Արցախում: Շատերն են ցանկանում իրենց խոհանոցում ունենալ եփած փիփերթ: Արցախում փիփերթ կարելի է ձեռք բերել գրեթե տարվա բոլոր եղանակներին: Այն առատորեն աճում է գյուղամերձ բանջարանոցներում, այգիներում: Փիփերթը, հատկապես շուկայից գնածը, պետք է մի քանի անգամ լվանալ տաք ջրով, քամել, ա-

պա լցնել եռացող ջրի մեջ: Ջուրը պետք է փիփերթից բարձր լինի 3-5 սմ: Եփում են մինչեւ փիփերթի զոխերի փափկելը: Վերջում գցում են աղ եւ մանր կտրտած մաղադանոս: Փիփերթը ուտում են իր հյութի հետ միասին: Կարելի է ավելացնել ծեծած սխտոր, գինու քացախ եւ բրդել չոր հացի կտորներ:

## ԿՈՐԿՈՏ

Ձմռան ցուրտ օրերին, հատկապես, գյուղական վայրերում կորկոտ սարքելը մի յուրատեսակ տոն է մարդկանց համար:

Արցախյան յուրաքանչյուր գյուղ ունի իր կորկոտ գցողները, այսինքն՝ այն վարպետ խոհարարները, որոնք խոզի ճարպոտ մսից եւ ցորենի կորկոտից մի աննման կերակուր են եփում: Կորկոտ գցելու համար պետք է միսը կտրտել ոչ մեծ կտորներով (40-50 գրամ): Ապա վերցնել թակած վիճակում երկանքով աղած, թեփահան արած կորկոտը: Կաթսան պետք է մեծ լինի եւ ունենա լայն նստիկ: Նախ հարկավոր է շարել մսի ճարպոտ կտորները, ապա վրան այնքան կորկոտ լցնել, որ միսը ծածկի: Այդ պրոցեսը կարելի է կրկնել եւ կաթսայի մեջ ստեղծել մի քանի շերտ միս ու կորկոտ: Յուրաքանչյուր շերտ պետք է ունենա իր աղը: Որպեսզի ջուրը լցնելու պահին տակնուվրա չարվեն մսի եւ կորկոտի շերտերը, անհրաժեշտ է կաթսայում դնել համապատասխան ափսե: Կորկոտի կաթսան պետք է միշտ ունենա ազատ տարողություն, քանի որ եփելուց՝ 2 անգամ ավելանում է ծավալը: Կորկոտը եփում են մարմանդ կրակի վրա, լավ վառած թոնրի մեջ եւ ուտում են վաղ առավոտյան՝ ծանոթների եւ բարեկամների հետ միասին, նրան տալով տոնական տեսք: Այս կերակրի պատրաստման գործում մեծ համբավ են ձեռք բերել հադրութցիները:



## ՉՈՐԱԹԱՆ

Չորաթան պատրաստելու համար մածունը հարում են խնոցիով, յուղը առանձնացնում, թանը լցնում սպիտակ շորից (քաթան) կարած տոպրակը եւ թողնում, որ քամվի: Ստացված զանգվածը լցնում են ամանը, ավելացնում աղ, ալյուր եւ խառնում, մինչեւ որ միաձույլ զանգված ստացվի: Պատրաստի զանգվածը բաժանում են 40-50 գրամանոց գնդիկների (պզկաթան) եւ չորացնում արեւի տակ:

Չորաթանը պատրաստում են հետեւյալ հաշվառումով՝ 1 կգ մածնին՝ 1 թեյի գդալ ալյուր, մի պտղունց աղ:

## ԼՈԲԱՃՈՐՎԱ (Լոբով ապուր)

Լոբաշորվան արցախյան հին կերակրատեսակ է: Այս վիտամիններով հարուստ ուտեստը պատրաստելու համար վերցնում են չոր լոբին, ընտրում, լվանում, լցնում կաթսան եւ եփում: Աղը գցում են եփելուց 5 րոպե առաջ: Պատրաստի լոբին քամում են փլավքամիչով, տրորում, ավելացնում լոբաջուրը, խառնում, հանում լոբաթեփը, դնում մարմանդ կրակին եւ հասցնում եռման: Եռալուց հետո ավելացնում են մաքրած, լվացած բրինձ եւ շարունակում եփը, մինչեւ բրնձի պատրաստ լինելը: Վերջում հինգ րոպե մնացած, գցում են մանր կտրտած չոր սոխ եւ աղ: Այնուհետեւ գցում են ծեծած ընկույզ եւ կանաչի: Մատուցում են տաք վիճակում:

## ԽԱՃԻԼ

Խաշիլ եփելու համար պետք է նախ ցորենը բովել (աղանձ պատրաստել) ու աղել երկանքով: Աղած կորկոտը մաղել, առանձնացնել ալյուրը (փոխինձ), մեկ բաժակ բոված կորկոտին լցնել 3 բաժակ ջուր: Յետո մարմանդ կրակով այնքան եփել, որ

թանձրանա, ապա վրան լցնել փոխինձ: Առանձին պատրաստել չորաթանի թան եւ սոխառած: Խաշիլը մատուցում են տաք վիճակում, մեծ ամանի մեջ: Խաշիլի մեջտեղը փոս են անում, լցնում սոխառած, իսկ չորս կողմը թան լցնում:

## ԽԱՇԼԱՄԱ ԿԱՆԱՉ ԼՈԲՈՎ

Այս վիտամիններով հարուստ կերակրատեսակը պատրաստելու համար օգտագործում են կանաչ լոբի (ամբողջական), հասուն ամուր պոմիդոր, կանաչ պղպեղ (քաղցր), գլուխ սոխ, սամիթ, մաղադանոս եւ աղ: Լայն նստիկ ունեցող կաթսայում շարում են օղակաձեւ կտրտած պոմիդորը, ավելացնում նույն ձեւով կտրտած գլուխ սոխ, պղպեղ եւ մաքրած լվացած կանաչ լոբի: Վերջում ցցում են աղը եւ կանաչին: Այդ պրոցեսը կարելի է կրկնել 2-3 անգամ, ամեն շերտին ցցելով իր բաժին աղն ու կանաչին: Պատրաստի շերտերին լցնում են մսի արգանակ կամ ջուր եւ եփում մարմանդ կրակի վրա՝ մինչեւ լոբու պատրաստ լինելը: Մատուցում են տաք եւ սառը վիճակում, վրան ցանելով մանր կտրտած մաղադանոս:

Խաշլամայի բաղադրամասն է 1 կգ լոբուն՝ 500 գրամ պոմիդոր, 400 գրամ գլուխ սոխ, 300 գրամ տաքդեղ, 100 գրամ կանաչի, 20 գրամ աղ:

## ԲԱՔՄԱԶ (դոշաբ)

Բաքմազ (դոշաբ) պատրաստելու համար հասուն թութը լցնում են լայն նստիկ ունեցող կաթսան, ավելացնում սառը ջուր եւ եփում՝ ժամանակ առ ժամանակ խառնելով: Թթի հյութը դարչնագույն դառնալուն պես, վերցնում են կրակից եւ քամում քաթանից պատրաստի տոպրակով: Ստացված մաքուր թթահյութը կրկին դնում են կրակին եւ եփում այնքան ժամանակ, մինչեւ թթահյութի թանձրանալը:



## ԱՐՑԱԽԻ ԳԱԹԱ

Արցախի գաթա թխելու համար ալյուրը մաղում են, մեջը փոս անում, առանձին ամանում խաշը բացում գոլ ջրով, աղով անում, խառնում ալյուրին, հունցում ոչ պինդ խմոր եւ դնում տաք տեղ (1,5-2 ժամ)՝ խմորման համար:

Այնուհետեւ պատրաստում են հաս: Դրա համար շաքարափոշին խառնում են փափկեցրած յուղին, լավ հարում, ավելացնում ալյուր եւ խառնում այնքան, մինչեւ որ ստացվի ոչ պինդ զանգված:

Պատրաստի խմորը բաժանում են 500 գրամանոց գնդերի,թերթեւակի գրտնակում, մեջը տեղադրում (300 գ) հասը, խմորի եզրերը միացնում մի քանի տեղից, ծածկում: Հետո շրջում, մյուս կողմից նույնպես ծակում, գրտնակում երեսը, խմորջուր քսում, նախշում եւ տալիս 2 սմ հաստությամբ բլիթների տեսք:

Արցախի գաթան, ինչպես ընդունված է, թխում են թոնրի մեջ, տեփի օգնությամբ:

## ՏԱՊԱԿԱԾ ՇԱՂԳԱՄ

Գարնանը մեր բանջարանոցներում, այգիներում, հացահատիկի դաշտերում առատորեն աճում է վայրի շաղգամը: Այն պետք է քաղել այն ժամանակ, երբ ունենում է հաստ ու հյութալի թարմ ցողուն: Շաղգամի հասակ առած թերթերը պետք է խուզել, թողնել յուղալի զոխերը: Սառը ջրում լավ լվանալուց ու քամելուց հետո լցնում են եռացող ջրի մեջ եւ եփում մինչեւ զոխերի փափկելը, որից հետո քամում են փլավքամիչով եւ տապակում ինչպես որ բանջարը, ավելացնելով 1-2 ձու: Մատուցում են տաք վիճակում, վրան ցանելով մանր կտրտած մաղադանոս:

## ԵՓԱԾ ԽՆՁԼՈՂ

Արցախցու խոհանոցում վաղ գարնանը տեղ է գտնում եփած խնձլողը:

Խնձլողը վայրի վիճակում առատորեն աճում է անտառների բացատներում, թթենու այգիներում, առվի եզրերին, քարափներում ու թփերի տակ:

Այն սովորաբար արմատագլխիկով հանում են հողից, լվանում սառը ջրի մեջ, բարակ ջերտով մաքրում սոխի պես սպիտակ գլխարմատը: Նախքան կաթսայի մեջ լցնելը, պետք է ջուրը եռացնել: Դա արվում է հատկապես նրա համար, որ չկորցնի կանաչ գույնը: Աղը գցում են եփելուց հինգ րոպե առաջ: Խնձլողը եփած է համարվում, երբ նրա գլխիկները փափկած են: Վերջում ավելացնում են մանր կտրտած մաղադանոս: Կարելի է վերջինս օգտագործել նաեւ չորացրած վիճակում: Քացախը պետք է մատուցել՝ըստ ճաշակի: Կարելի է մեջը բրդել նաեւ չոր հաց: Ստամոքսաաղիքային հիվանդություններով տառապող մարդիկ կարող են խմել եփած խնձլողի թանձր հյութը:

## ՏԱՊԱԿԱԾ ՇԻՐԻՇ

Շիրիշը շուշանազգի բույս է, աճում է դաշտային Ղարաբաղում, հատկապես Գետրգավանում: Վաղ գարնանը ծաղկող բույսերից է: Ունի սննդարար եւ բուժիչ հատկանիշներ, որի համար օգտագործվում է լայնորեն: Շիրիշը աճում է փնջաձեւ եւ նրա քաղելը առանձին դժվարություն չի ներկայացնում: Շիրիշի ջրային մասը չափազանց շատ է, դրա համար պետք է եփել շատ մեծ կաթսայի մեջ: Ստամոքսաաղիքային հիվանդություններ ունեցողները կարող են այն ուտել թեթեւ աղով անելուց հետո, իսկ ընդհանրապես, որպես կերակրատեսակ, պետք է տապակել բանջարի նման: Չարկ է նկատի առնել, որ զուտ շիրիշով կարկանդակը բոլոր մարդիկ չէ, որ կարող են ուտել հաճույքով: Ուստի, խորհուրդ է տրվում շիրիշով կարկանդակի մեջ գցել հոնի ախտա, սալորի լավաշ կամ կանաչ սալոր:



## ԿԾԵԽԱՇ

Նախապես ջրում թրջված 200 գրամ սիսեռը 200 գրամ ցորենի հետ եփում են 10 րոպե, ավելացնում 200 գրամ ընտրած, լվացած չոր լոբի եւ շարունակում եփել մինչեւ պատրաստ լինելը: Եփելուց հինգ րոպե առաջ գցում են աղը: Մատուցում են տաք վիճակում: Կծեխաշը հայկական ազգային տոների ու ծեսերի հետ կապված կերակուր է: Այն հատկապես օգտագործում են մանուկների ատամների ծլման ժամանակ, լցնելով նրա գլխին, որի շուրջը հավաքված երեխաները վերցնում եւ ուտում են: Այս ծեսի ժամանակ որոշվում է նաեւ մանկան զբաղմունքը: Նրա առաջ դնում են մկրատ, գդալ, մատիտ եւ այլ իրեր: Ըստ ավանդության, երեխան, որը վերցնի դրանցից, այն էլ կդառնա նրա աշխատանքային գործիքը:

## ԹԹՈՒ՝ ՉՈՐԱՑՐԱԾ ՀՈՆԻՑ

Մեկ բաժակ չորացրած հոնը լվանում են, լցնում կաթսան, ավելացնում 2 բաժակ սառը ջուր եւ եփում մարմանդ կրակով, մինչեւ հոնի փափկելը: Եփած հոնը տրորում են, անջատում կորիզը: Ստացված թանձր արգանակին ավելացնում են 1 հացի գդալ ջրով բացած ալյուր եւ շարունակում եփել եւս 15-20 րոպե: Չինգ րոպե մնացած մինչեւ եփելը՝ գցում են աղը: Մատուցում են տաք վիճակում: Այս կերակրատեսակը շատ օգտակար է մրսածների եւ, հատկապես, գրիպով հիվանդների համար:

### ԱԾԻԿ

Ածիկ պատրաստելու համար ցորենը թրջում են, մառլայով փաթաթում եւ թողնում մինչեւ ծիլի դուրս գալը (3-5 օր): Այնուհետեւ  զգուշությամբ լցնում են խոնչաների մեջ, դնում տաք տեղ եւ թողնում, որ ծլի (3-4 սմ): Ամեն օր պետք է ջուր լցնել: Ծլած ցորենը տրորում են մինչեւ ջրային միածույլ զանգված ստանալը: Ստացված զանգվածը դնում են մարմանդ կրակին, ավելացնում ալյուր (10 գրամ ցորենին՝ 50 գրամ ալյուրի չափով) եւ անընդհատ խառնելով, հասցնում եռման: Եռալուց հետո շարունակում են եփը 15-20 րոպե, մինչեւ որ ածիկը դառնա դարչնագույն եւ ոչ պինդ: Այնուհետեւ վերցնում են կրակից եւ թողնում, որ սառչի: Օգտագործում են սառը վիճակում:

### ՇՓՈԹ

Շփոթը նույնպես տիպիկ արցախյան կերակրատեսակ է: Այն եփելու համար պետք է ունենալ թթի դոշաբ: Առաջներում շփոթը եփում էին ցորենի ալյուրով: Բայց այն կարելի է եփել նաեւ եգիպտացորենի ալյուրով, քանի որ այդ դեպքում եփելով, այն դառնում է ոսկեգույն եւ բավականին համ ու հոտ է հաղորդում շփոթին: Եգիպտացորենի ալյուրը պետք է բացել սառը ջրով, գցել աղ եւ խառնելով եփել մարմանդ կրակի վրա, մինչեւ տեսքը դառնա ոսկեգույն: Պատրաստի շփոթը լցնել ամանի մեջ, խաշիլի ձեւով մեջտեղը փոս անել, լցնել տրխառած, իսկ չորս կողմը լցնել դոշաբ:





# ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ





## ՍԱՏԱՆԻ ԿԱՄՈՒՐՋ

Այս անունով կամուրջը գտնվում է Թարթառ գետի վրա, Տոնաշենի մոտ: Այստեղ գետը խորացել է նեղ ժայռերի մեջ: Մինչեւ նրա վրա քարե կամուրջ կառուցելը, գետի վրա գցում էին կաղնի հաստ եւ ծուռ գերան: Գերանի վրա կար հատուկ հատված, որը պիտի անցնել առանց կոխելու, մեծ քայլով: Թշնամիները չիմանալով այդ, կոխում էին, գերանը ծռվում էր, եւ նրանք հայտնվում էին վիհի մեջ:

Պատմում են, որ Ջրաբերդի քաջերը՝ Դալի Մահրասան եւ Թուն Արզումանը Սատանայի կամուրջի վրայով անցնում էին ցատկելով: Հաճախ նրանք թշնամուն ցույց էին տալիս, որ նահանջում են, քաշելով բերում էին եւ գցում ծուղակի մեջ:

## ՏՐՏՈՒ-ԹԱՐԹԱՌ

Արցախի մեծ գետը՝ Տրտուն, մի քանի անուն ունի: Նրան կոչում են նաեւ Թարթառ, Տարտարոս եւ Քաշքաքամի անուններով: Ասում են՝ մեր գետն իր անունը ստացել է Ալեքսանդր Մակեդոնացուց:

Նրա բանակը Թարթառի հովտով պիտի իջներ դեպի Կասպից ծովը: Գարուն էր, եւ կատաղած գետը ամեն քայլափոխի կուլ էր տալիս Մակեդոնացու զինվորներին: Այդպիսի բան մեծ զորավարը չէր տեսել աշխարհի ոչ մի երկրում: Տեսնելով իր բանակի կորուստները, նա բարկությամբ ասել է.

- Սա գետ չի, սա տարտարոս է:

Շատ տարիներ են անցել, եւ մեր խենթ Տրտուն, մեր աննման Թարթառը, որ իր զորությունը տվել է իր երկրի որդիներին, շարունակում է դեն շպրտել ամեն տեսակի թամբ ու սանձ եւ որոտալ իր ձորերի մեջ, որպես մի թագավոր, որ իր գլխի վերեւ չի ճանաչում ոչ մի հովանի:

ՀԱԴՐՈՒԹ

Այս տեղանունը մեզանում հնչում է պարսկական ձեւով, որը հայերեն կոչվում է Միջագետք:

Իրավ, Հադրութը գտնվում է երեք գեղատեսիլ լեռների մեջ: Արեւելքում Իշխանի գետի երկարությամբ ձգված Հադրութի հովտում ծաղկում են 4 նշանավոր գյուղեր: Այս գյուղերն ունեին իրենց կենտրոնը՝ Վանք գյուղը Հադրութի հարեւանությամբ:

Պարսիկները Հադրութ չէին մտնում, որովհետեւ հավատում էին, որ Հադրութը Արցախի աշխարհի այն դուռն է, որով ներս մտած թշնամին այլեւս հետ չի դառնում:

Հադրութի շրջանի Տող եւ Տումի գյուղերում ձեւավորվել են իշխանական տներ, որոնց տերերն իրենց նշանավորել են նմանը չունեցող քաջագործություններով:

ԱՎԵՏԱՐԱՆՈՑ

Պարսից արքան կանչում է մեր Համամ անունով թագավորին, որը նաեւ մատենագիր էր, եւ երկու պայման դնում նրա առաջ.

- Դու պետք է կամ գահից հրաժարվես, կամ՝ Քրիստոսի հավատից:

- Եթե Քրիստոսի ուսմունքից հրաժարվեմ, մի՞թե իմ պահած գահը կփրկի իմ ժողովրդին,- մտածեց հայրենասեր Համամը եւ հրաժարվեց գահից ու քաշվեց Արցախ աշխարհի գեղատեսիլ գյուղերից մեկը, որը կոչվում էր Բրուտաշեն:

Արքան իր հետ բերել էր ոսկեզօծ կազմով մի ավետարան եւ Քրիստոսի խաչի հետ պահում էր մի մատուռում:

Արցախի բոլոր գյուղերից այստեղ ուխտի են գալիս մարդիկ: Այդպես գնալով, այնքան տարածվեց այդ ավետարանի հռչակը, որ գյուղը կոչվեց Ավետարանոց:

Այստեղ՝ Ավետարանոցում են թաղված Համամ Արեւելցի թագավորը եւ իր կինը:



ԿՈՏՐԱԾ ԿԱՄՈՒՐՋ

Թարթառի վրա, Հաթերք գյուղի ուղղությամբ, այնտեղ, ուր գետի ափերը մոտենում են իրար, երեւում է հին կամուրջի հետքերը:

Այդ կամրջի մասին այսպես են պատմում: Արաբ զորավար Բուղան մտնում է Արցախ եւ բանտարկում շատ իշխանների ու ավերում նրանց բերդերն ու պալատները:

Բուղան, սակայն, չի կարողանում մեծ բանակով անցնել հորդ ու խենթ Թարթառը, գրավելու համար Հաթերք բերդը: Նա հրամայում է կամուրջ կառուցել գետի վրա, եւ կառուցում են:

Բուղան անցնում է կամրջի վրայով, կռվում, բայց չի կարողանում ծնկի բերել Հաթերքի տիրոջը: Թշնամու զորքը ետ մղելուց հետո, հայ իշխանը կամուրջը առնում է հսկողության տակ: Գալիս է մի ծեր գյուղացի եւ ասում իշխանին.

-Քանդիր այդ կամուրջը, քանզի չար նպատակով են շինել այն եւ չարն է անցել նրա վրայով: Կամուրջը դաշինքի համար են շինում, իսկ այս կամուրջը շինել են մեր տունը քանդելու համար...

Եվ քանդում են...

Կոտրեցե՛ք այդ կամուրջի մեջքը: Ավելի լավ է գետն ընկնենք, քշի տանի մեզ, քան թե անցնենք թշնամու շինած կամրջով...

ՋՐԱԲԵՐԴ

Անհիշելի ժամանակներում գոյություն ուներ Ջրաբերդը: Արցախի հերոսական պատմության էջերում շատ փառահեղ անցքեր կան՝ կապված Ջրաբերդի հետ:

Ջրաբերդը գտնվում է Թարթ եւ Թրղի գետերի միախառնման կետում: Շնորհիվ իր բնական, անմատչելի դիրքին, Ջրաբերդը երբեք չի պարտվել: Թշնամին նրան կոչել է նաեւ Չարաբերդ, քանի որ միշտ էլ պարտվել է:

Այս բերդի մասին այսպես են պատմում.

-Երբ Արցախի մայրաքաղաքը Բերդ-Բերդակն էր, որ կոչվում էր նաեւ Պարտավ, արաբները մտնում են Արցախ, գրավում Պարտավը, բայց չեն գտնում ոչ թագավորին, եւ ոչ նրա գանձերը:

Իմանալով, որ թագավորը գտնվում է Ջրաբերդում, արաբները գնում են եւ պաշարում բերդը: Երկար պաշարումից հետո, տեսնելով, որ թշնամին չի հեռանում, պաշարվածները որոշում են խաբել թշնամուն: Նրանք շատ մոխիր են քամուն տալիս եւ լուր տարածում, որ ալյուրի պաշարները հորերում փչանում են, դրա համար օդափոխում են, չորացնում արեւի տակ: Թշնամին այդ տեսնելով, ասում է.

-Սրանք որ այսքան հաց ունեն, մեր այստեղ մնալն իզուր է, գնանք, քանի դեռ Ջրաբերդի չարքերը չեն իջել բերդից...

## ԳՏԻՉ

Գտիչ վանքը գտնվում է լեգենդար Քթիշ լեռան հյուսիսային լանջին: Գտիչը Արցախի այն հինգ նշանավոր հոգեւոր կենտրոններից մեկն է, որտեղ 5-րդ դարում դպրոց է հիմնել Մեսրոպ Մաշտոցը:

Գտչավանքը Դադիվանքից, Գանձասարից հետո երրորդ ճարտարապետական կոթողն է, որ զարդարում է Արցախի հողը:

Ամարասի հասակակիցն է Գտիչը:

1241 թվականին եպիսկոպոս եղբայրներ Սարգիսն ու Վրթանեսը Տումի տորոնածայն քարից կառուցեցին մի նոր փառահեղ տաճար:

Կառուցողները վանքի պատերին թողել են վիմագիր հարուստ արձանագրություններ: Այդ արձանագրություններից մեկը մեզ հուշում է Դիզակի սահմանները, որի մեջ մտնում է նաեւ Բայլական քաղաքը՝ Կարկառ գետով:

Գտիչը մեր կիտիչ բառն է, որը նշանակում է՝ դեզ: Այստեղից է գալիս նաեւ Դիզակ գավառի անունը:

Գտիչ բառից է առաջացել նաեւ Քթիշ անունը:



## ԵՂՆԻԿԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Առաջներում Գտիչ վանքի մոտ աղբյուր չկար: Վանքի համար ջուր էին բերում Տումուց: Մի անգամ վանքի վանահայրը նկատում է, որ ամռան տապին Քթիշ սարից մի եղնիկ իջնում է վանքի մոտ, ոտքով քանդում է հողը ու սկսում լիզել այն: Վանահայրը շատ է զարմանում, երբ կրկնվում է այդ դեպքը: Մի անգամ էլ նա գնում, ստուգում է այդ տեղը, տեսնում է եղնիկի քանդած տեղում մի բարակ սալի վրայով ջուր է հոսում, այնքան աննկատ, որ կարծես քրտնած է: Նա քանդում է այդ տեղը, որտեղից մի մատ ջուր է դուրս գալիս: Վանահայրը աղբյուր է կառուցում, որին տալիս են Եղնիկի աղբյուր անունը:

Հիմա Գտիչ նշանավոր վանքի մոտ դեռ բխում է Եղնիկի աղբյուրը:

## ԴԻԶԱՓԱՅՏ

Դիզակ, Դիզափայտ անուններով է հայտնի Արցախի շատ նշանավոր այս լեռը:

Դիզակի ամենից մեծ սարը իրավ նման է մեծ դեզի, որը երեւում է ամեն կողմից:

Որպեսզի նոր դիզած խոտը քամին չտանի, նրա գլխին սուր եւ երկար փայտ են տնկում, դա էլ կոչվում է դիզափայտ: Երբ մեկն ու մեկը երկար ու պարապ կանգնում է մեկի դիմաց, նրա մասին ասում են՝ «Հանցա տիզափադ ինի առաջին կանգած»:

Դիզափայտը փոքր Քիրսն է, որի փեշերը, հարավում իջնելով, հասնում են Երասխի ափերին:

Դիզակ լեռան կատարին է գտնվում Կատարավանքը: Հայոց աշխարհում նրանից բարձր վանք չկա: Ուշքից գնացողները ուխտ գնալով այս վանքը, բուժվում են:

Դիզափայտի ուխտավայրը բուժում է նաեւ չբեր կանանց:

## ՀԱՐԱՄԻ

Սա հայոց թագավոր Արամի դաշտն է, Արաքսի եւ Քուռի միջագետքում: Առաջ այս դաշտը կոչվել է հայոց Արա թագավորի անունով: Այս թագավորը Երասխ գետից միջանցք է բացել, ընդարձակ դաշտը հերկելու համար: Այդ ջրանցքը եւ նրա հիմնադրած քաղաքը գոյություն է ունեցել մինչեւ 13-րդ դարը: Ջրանցքը եւ քաղաքն ավերել են թաթար-մոնղոլները, ծաղկուն դաշտը ամայացել է: Այդ դաշտում ուշ աշնանը ձմեռելու էին գնում թուրք խաշնարածները, որոնք էլ Արամի անունը դարձրել են Հարամ, այսինքն՝ ավազակների տեղ...

## ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ԽՈՐ ԱՆՈՒՆՈՎ ԳՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ

Երասխի ափին, Դիզակ գավառում Խոր անունով մի գյուղ կա: Երբ այս խորի տանուտերը լսեց, որ Մեսրոպ Մաշտոցը Ամարասում դպրոց է բացել, հավաքեց մի խումբ աչքաբաց մանուկների, այդ թվում նաեւ իր որդի Մովսեսին ու բերեց Ամարաս:

Մովսեսը, որ իր հայրենի գյուղի անունով հետագայում կոչվում էր Խորենացի, առաջադիմեց ուսման մեջ: Նրան ուղարկեցին իմաստունների քաղաք՝ Ալեքսանդրիա, քերթողական, ճարտասանական, քերականական արվեստներում կատարելագործվելու համար:

Մովսես Խորենացին Հայաստան է վերադառնում գիտության աһռելի պաշարներով եւ որպես բազմակողմանիորեն զարգացած քերթող, գրում է բանաստեղծություններ, շարականներ, կազմում պատմական Հայաստանի «Աշխարհացույց»-ը:

Սակայն նրա ստեղծագործությունների գլուխգործոցը դառնում է «Հայոց պատմությունը», որին այնքան քաջատեղյակ է Խորենացին:



## ԳԵՏՆԱԹԱՂ ԵԿԵՂԵՑԻ

Ամարաս գետի աջ ափին, Ամարաս- Գտիչ ճանապարհի վրա կա մի մեծ բլուր: Այս փոքրիկ «սարի» տակ կա մի եկեղեցի: Այս եկեղեցու մասին այսպես են պատմում, Բատուն խանը գալիս, ավերում է Ամարասը: Նրան ասում են, որ Ամարասի գանձերը պահվում են վանքի մոտ գտնվող մի եկեղեցում եւ ցույց են տալիս տեղը: Բատուն խանը խուզարկում է այդ եկեղեցին եւ ոչինչ չգտնելով հրամայում է եկեղեցին իր միաբաններով թաղել հողի տակ: Նրա մեծաքանակ զորքի յուրաքանչյուր զինվոր մի պարկ հող է բերում ու լցնում վանքի վրա եւ այսպես վանքը մնում է այդ հողի բլրի տակ:

## ՇԱՎԱՐՇԱՎԱՆ

Ամարասի հովտում, Սոս եւ Հերհեր գյուղերի միջեւ կա մի հնավայր, որը կոչվում է Շավարշավան: Այս Շավարշավանի դաշտը հերկելիս հայտնվում են կարասային դամբարաններ, բրոնզե զարդեր, զենքեր, քարե աղորիքներ, խեցեղեն ջարդված ամաններ:

Մեր պատմիչները ասում են, որ Շավարշը հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի որդին էր:

Պատմում են, որ մի ժամանակ Շավարշի անունով էր կոչվում նաեւ Վասպուրական նահանգի Ավարայր դաշտը, ուր 451 թվականի մայիսին մարտիրոսվեց մեր քաջարի սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Շավարշը ապրել է մեր թվարկությունից առաջ 5-րդ դարում:

Տես թե քանի դար է պահում Շավարշավանը շերտ-շերտ ծածկված մեր պատմության լռսեղեն էջերը:

Շավարշավան է կոչվում նաեւ Ամարաս գետակի այն հատվածը, որ անցնում է Հերհեր գյուղի ջրաղացների մոտով:

## ՈՉԽԱՐԻ ՔԱՐԵ ՀՈՏԸ

Տիգրանակերտի մոտ, Հովվասարի սարի փեշին ոչխարի հոտի պես շատ քարեր կան փռված: Ասում են՝ մի աղքատ մարդ, գարնան մի օր անցնում էր այս սարի ծաղկած լանջով, նայում է սարի փեշին ու հառաչում.

- Աստված, ի՜նչ կպակասի, որ ես նախշուն սարի փեշին ոչխարի մի հոտ ունենամ:

Աստված լսում է նրա ձայնը եւ իսկույն մի հոտ տալիս նրան: Տալիս է ու մտածում. «Ես այս մարդուն լավություն արի, մի կաց փորձեմ, տեսնեմ նրան տված հազար ոչխարից մեկը ինձ կտա՞...»:

Ասում է եւ իսկույն մուրացկանի շորերով հայտնվում ոչխարի հոտի տիրոջ առաջ:

- Ախպեր,- ասում է,- ի՞նչ կլինի, որ մի ոչխար տաս ինձ:

Հովիվը հրաժարվում է:

- Դե լավ, որ ոչխարը չես տալիս, էն սեւ ոչխարը կթիր, կաթը տուր խմեմ:

Հովիվը դրանից էլ է հրաժարվում:

Աստված իսկույն կերպարանափոխվում է, մտնում իր դերի մեջ ու անիծում.

- Թող քար դառնա քո ոչխարի հոտը, դու էլ՝ հետը:

Եվ քար են դառնում հովիվն ու ոչխարի հոտը, եւ մնում մինչեւ հիմա որպես անեծք...

## ԿՆՈՋ ՔԱՐԵ ԱՐՁԱՆ

Խնձրիստան գյուղի մոտ կա կնոջ պատկերով մի քար: Թվում է, կինը գլխին կաթսա է պահում:

Ասում են՝ մի ջահել հարս հաց էր տանում իր հնձվոր մարդուն: Հանկարծ թուրքերը ընկնում են նրա հետեւից, որ բռնեն:

Տեսնելով, որ փախչելով չէր կարող ազատվել նրանց ձեռքից, կանգնում եւ աղաչում է Աստծուն՝ իրեն քար դարձնել:

Աստված լսում եւ կատարում է նրա կամքը:

Կինը ազատվում է ավազակների ձեռքից եւ փրկում իր պատիվը: Մինչեւ հիմա Խնձրիստանի հանդում կա այդ բնական քարե արձանը:



## ԹԱՂԱԼ ԱՂԲՅՈՒՐ

Տումի գյուղից վեր, հին բերդի ստորոտում բխում է մի վարար աղբյուր: Նրա անունը Թաղալ է, Թաղալ աղբյուր:

Դիզակի քաջ իշխան Աբու Մուսեի ժամանակ այս աղբյուրի ջուրը կավե խողովակներով հասցվել է Քթիշ անառիկ ամրոցը: Այս Քթիշը կոչվում է նաեւ Գտիչ: Սա մեր քաջ Մելիք Ավանի բերդն է: Աղբյուրի հեռավորությունը բերդից 15 կմ է:

Արաբական բանակի Բուղա անունով թուրք զորավարը գալիս, պաշարում է Աբու Մուսեի Քթիշ ամրոցը: Մի ամբողջ տարի նա պաշարած պահում է բերդը, 28 անգամ գրոհում, բայց իզուր: Աբու Մուսեն միշտ էլ ետ է մղում նրա գրոհը: Բուղան մտածում է կտրել բերդի ջուրը, բայց որքան որոնում են, չեն գտնում ոչ ջրմուղը, ոչ էլ աղբյուրի ակունքը:

Վերջապես մի պառավ վիուկ կաշառվելով, խորհուրդ է տալիս 7 օր ծարավ պահել մի ջորի ու բաց թողնել: Ծարավ ջորին ոտքերով քանդում է հողը, ուր Թաղալ աղբյուրի ակունքն է:

Թշնամին գտնում է թաքցրած Թաղալ աղբյուրը եւ կտրում ջրանցքը, բայց բերդում պաշարվածները ծարավ չեն մնում, շարունակում են գաղտնի ջուր վերցնել Իշխանագետից:

## ՍԽՏՈՐԱՇԵՆԻ ՍՈՍԻՆ ԿԱՄ ԾԱՌ ՏԱՃԱՐԸ

Ծառ տաճար է Սխտորաշենի սոսին: Այս ծառ-տաճարին տարին բոլոր երկու մեծ ակունքով ջուր է տալիս նրա գլխավերեւում կառուցած աղբյուրը: Ծառի դիրքը այնպիսինն է, որ նրա բոլոր արմատները հավասարապես սնվում են միշտ խոնավ հողից: Դրա շնորհիվ է, որ ամռանը երկու հազարամյա այս ծառը կանաչ սարի պես դեռ շատ հեռվից կանչում է մարդկանց:

Այս սոսին Արցախը Տիգրանակերտ քաղաքի հասակակիցն է: Ծառը՝ ի պատիվ Տիգրան Մեծ զորավարի հաղթանակների, Արցախ է բերել արքայի հեծելազորի գլխավոր հրամանատար Փառնավան Արցախեցին:

Այս սոսու շվաքը վայելել են Գրիգորիս Լուսավորիչը, Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Դավթակ Քերթողը, Փրիկը, Նահապետ Քուչակը, Սայաթ Նովան եւ էլի շատ նշանավոր մարդիկ:

Սխտորաշենի սոսին ակամայից դարձել է սրբավայր:

## ՍՈՍԻ ՍՈՍԻՆ

Սոս գյուղից վեր, Լուսավորիչի սարի ստորոտում մի աղբյուր է բխում: Այս աղբյուրի ծորում աճում էր սրբազան մի սոսի ծառ, որ բերվել է Հայոց աշխարհի Արմավիր գավառի Սոսի անտառից:

Սոս գյուղի Սոսին եւ Սխտորաշենի սոսիները միասին են տնկել:

Սոսի սոսին ապրել է 1000 տարի: Մի գիշեր Ամարասի եպիսկոպոս Մատթեն երազ է տեսնում: Երազում Սոսի սոսին նրան ասում է. «Ես հզորանում եմ օր-օրի, բայց հիմա այս աղբյուրի ջուրը ինձ չի հերիքում, ծարավից մեռնում եմ, ջուր տուր ինձ»:

Հաջորդ օրը Մատթեն գուշակներ կանչելով գնում է այդ ծառի մոտ: Գուշակները մեկնաբանում են ծառի տերեւների խշխշոցը: Ծառը ասում է. «Ես դատապարտված եմ մահվան, քանի որ ծարավից մեռնում եմ: Իմ ոստերից տնկեցեք Արցախի բոլոր մեծ ջրերի ակունքի մոտ: Դրանից հետո ես հանգիստ կմեռնեմ»:

Մատթե իմաստուն ու բարեգործ եպիսկոպոսը Սոսու ապրած տարիների քանակով ոստեր է կրում ու բաժանում Արցախի մեծ աղբյուրներին: Հաջորդ տարին Սոսին չորանում է, իր անունը թողնելով գյուղին:

Սոսի սոսու բոլոր ոստերը աճել եւ այսօր խշշում են Արցախում:

Զարմանալի է, մինչեւ հիմա Սոս գյուղում ոչ ոք սոսի չի տնկել...



## ԿԿՈՒ

Կա մի թռչուն, որ միշտ «կու-կու» է կանչում: Դրա մասին այսպես են ասում. «Քույր ու եղբայր պահմտոցի էին խաղում ու երբ իրար դժվար էին գտնում, «կու-կու» կանչելով մատնում էին իրենց տեղը:

Մի անգամ էլ, երբ քույրը թաք է կենում, եղբայրը նրան որոնելիս ընկնում է ավազակների ձեռքը: Նրան գողանում, տանում են: Շատ սպասելով, քույրը «կու-կու» է կանչում, բայց եղբայրը չկար ու չկար: Աղջիկը վշտից մի հավք է դառնում եւ սկսում ամեն անկյունում կու-կու կանչել»:

Մինչեւ այսօր էլ կանչում է եւ լսելով իր ձայնի արձագանքը, կարծում է, եղբայրն է պատասխանում, որքան մոտենում է իր արձագանքին, այնքան հեռանում է այն...

## ՏՌՆԱՎԱԶ ԳՅՈՒՂ

Այս գյուղի հին անունը Հայկաշեն է եղել: Հայկաշենը գտնվում էր Տռնավազ գյուղի հյուսիսային մասում: Պահպանվում է Հայկաշենի եկեղեցին, գերեզմանատունը:

Գյուղը հիմնահարկ ավերվել է 13-րդ դարում, թաթարների կողմից, բայց բնակիչները փախել ու հետո վերադարձել են տեր Ավազի գլխավորությամբ ու հիմնադրել նոր գյուղ, որը կոչվել է Տռնավազ: Այս տեր Ավազը խելոք եւ գործունյա հոգեւորական է եղել: Նրա շնորհիվ գյուղում կառուցվում են քարակերտ աղբյուրներ, եկեղեցի, սրբավայրեր:

Շինարար տերտերը իր միջոցներով մի սքանչելի աղբյուր է կառուցում Տռնավազ գյուղի ճանապարհի վրա, որը մինչեւ հիմա կոչվում է Դերին աղբյուր:

Նա նորոգում, շենացնում է նաեւ Հայկաշենի հին եկեղեցին, գյուղացիների համար Մուղանի դաշտում վերցնում ընդարձակ վարելահողեր, հանում քյահրիզ եւ տնկում թթենու, նռան եւ խաղողի այգիներ:

Տեր Ավազը իր վաստակով անմահացրեց իր անունը: Նրա ամենամեծ հիշատակը հենց իր հիմնադրած Տռնավազ գյուղն է:

## ՏՌՆԱՎԱԶԻ ԱՂՋԻԿԸ

Տռնավազ գյուղում շատ ուժեղ մի աղջիկ է եղել: Մի անգամ Պարսկաստանից հարկահաններ են գալիս Տռնավազ գյուղը:

Երեկոյան գոմշակովը կթելու պահին հարկահանները մտնում են այդ քաջ աղջկա հոր տան բակը: Գործից անտեղյակ աղջիկը կթում էր գոմշակովը, իսկ գոմեշի ձագը խանգարում էր նրան: Վերջապես համբերությունը հատած աղջիկը գյադակի պոչից բռնում է ու դեն շպրտում:

Հարկահանները այս տեսնելով, թողում են գյուղը եւ հեռանում, ասելով.

- Այս գյուղի աղջիկները որ գոմեշի գյադակ են շպրտում, տղամարդիկ փղեր կշպրտեն, գնանք, քանի ուշ չի:

Եվ գնում, հեռանում են գյուղից, քաջ աղջկա համբավը տանելով Պարսկաստան:

## ԱՂՋԱԲԱԴԻ

Աղջաբադին առաջներում հայկական մեծ գյուղ է եղել: Այս գյուղը հիմնադրել են եղբայրներ Աղաջանն ու Բադին՝ Հայրապետը: Նրանց անունից էլ առաջացել է Աղջաբադի անունը: Հիմա էլ մնում են այդ գյուղի հայերեն գրերով գերեզմանաքարերը, եկեղեցին, խաչքարերը:

Բատուն խանը ավերել է այս գյուղը, կոտորել հայերին: Երկար ժամանակ մնացել է ամայի: Հիմա այնտեղ թուրքեր են ապրում եւ ասում են՝ այս եկեղեցին, այս խաչքարերը մերնա:

Այդպես է քոչվոր թուրքը, որտեղ նստեց, կասի սա իմն է...



## ՊԱՌԱՎԱԹՈՒՄԲ

Առաջ այս գյուղի անունը Ծաղկաբլուր է եղել: Շատ փոքր գյուղ է եղել: Մարդիկ այստեղ շատ երկար են ապրել, այնքան երկար, որ երբ ծերացել են, դժվար է եղել իմանալ, թե ով է պապը, ո՞վ է տղան, ո՞վ է թոռը: Այնքան շատ են եղել հասակավոր տղամարդիկ եւ կանայք, որ ով եկել է գյուղը, ասել է՝ սա հո պառավների գյուղ է: Այդպես էլ կոչվել է Պառավաթումբ, իսկ ավելի ուշ Պռաթումբ:

Իրականում Պառավաթումբը եղել է Կաղարծի (Կաղանկատույք) գյուղի մի թաղամասը: Կաղարծին եւ Պառավաթումբը իրարից բաժանվում են մի հեղեղատով...

## ՑԱՆՀԱԶԻ ՄԱՏՈՒՌԸ

Ցանհազը Մելիք Շահնազարի աղջիկն էր: Նա Կուսաբերդ հարս է գալիս: Նրա մասին ասում են, Լեն-պառակ հանդամասում հին ժամանակ եկեղեցի է եղել: Ցանհազը գնում է, գտնում նրա ավերակը եւ նրա տեղում մի մատուռ կառուցում: Հետո քյահրիզ է հանում, ջուր բերում այստեղ, մատուռի շուրջը խաղողի, դեղձի, ծիրանու, նռան այգիներ տնկում, մի իսկական դրախտ ստեղծում:

Ցանհազը ապրում է 100 տարի եւ խնդրում է, որ մեռնի, իրեն թաղեն իր կառուցած մատուռի մեջ: Այդպես էլ անում են: Նրա անունով այս վայրը կոչվում է Ցանհազ:

## ԾՈԽՏ ԽԱՉ ԱՎԴՈՒՌՈՒՄ

Ավդուռ գյուղի հանդում երկու տարբեր վայրերում դրված է մի-մի խաչքար: Այս սրբավայրերը առանձին-առանձին կոչվում են Ծոխտ խաչ: Դրանք երկու եղբայրներ են եղել, կռվել են թշնամու դեմ եւ զոհվել տարբեր վայրերում: Ժողովուրդը քաջերի վրա խաչքար է դրել եւ կոչել Ծոխտ խաչ անունով:

Ասում են՝ այդ եղբայրներից մեկի անունը Ավո է եղել, մյուսինը՝ Տոնի: Ավո եւ Տոնի անուններից էլ առաջացել է Ավդուռ անունը: Ավդուռ գյուղում ապրում են հայկական Բայլական քաղաքից այստեղ եկած հայեր... Գյուղի իսկական անունը նշանակում է Ավետյալ դուռ...

## ՆԼԲԱՆԴԻՆ ՍՈՐՓԸ

Աշան գյուղում մի մարդ է եղել, ինքը՝ Նալբանդ, անունը՝ Յայրապետ: Ողորմի նրան, լավ մարդ է եղել: Մի գիշեր այս Նալբանդը երազ է տեսնում՝ սպիտակ ձիու վրա նստած, սպիտակ շորեր հագին Գաբրիել հրեշտակը գալիս է, թե պիտի առնեմ քո հոգին: Ասում է, փաթաթում սավանի մեջ, վերցնում, գնում: Գնումկանգնում է գյուղից վեր, Պիծի թումբի վրա, թե՝ այստեղ քեզ թույլ եմ տալու: Դնում է գետնին, որ թռչի տա, Նալբանդը արթնանում է, տեսնում ինքը իրենց տանը: Առավոտը վեր է կենում, գնում, որ տեսնի, թե որտեղից պիտի թռչի ընկներ: Տեսնում է երազի մեջ հրեշտակը ձիու վրա դեռ այնտեղ է, կողքին էլ մի մատուռ կա:

Յրեշտակը հարցնում է.

- Դու Նալբանդն ե՞ս:
- Յա, Նալբանդ Յայրապետն եմ:
- Բա ինչու չես նալում ձիս:
- Կնալեմ, որ ասում ես, կնալեմ,- ասում է նա:
- Դե առ այս ոսկե նալերը, նալիր ձիս:

Նալբանդը նալում է Գաբրիել հրեշտակի ձին, Գաբրիել հրեշտակը նստում է ձին, գնում: Յետո էս բանը ում պատմում է Նալբանդ Յայրապետը, ասում են՝ հալբաթ երազով ես ընկել: Նալբանդը ասում է.

- Լավ, ասենք երազ է եղել, բա մատուռը...

## ԱՐԶՄԱՆ ՄԵՉԻԴ

Մի ժամանակ պարսիկները Ղարաբաղից մանուկներ էին գողանում, տանում Պարսկաստան: Տղաներին մամլուկ էին դարձնում, աղջիկներին պահում հարեմում կամ ծախում:

Այդ ժամանակ Պարսկաստանում պսակվում են մի տղա եւ աղջիկ: Անցնում է ժամանակ, տղան կնոջը ասում է՝ ես հայ եմ, իմ անունը Արզման է եղել, հայրս Մեծ Թաղլար գյուղացի, անունը Արշակ, մորս անունն էլ Մարգարիտ է:



Աղջիկը լաց է լինում, թե՝ ես էլ եմ հայ, ես էլ եմ մեծ Թաղլարից, էդ քո ասած Արշակն ու Մարգարիտը նաեւ իմ ծնողներն են: Պարզվում է, որ քույր ու եղբայր են:

Յետո հիշում են, որ իրենց միեւնույն օրը, միեւնույն ժամին են տնից բշել, տարել, երբ շատ փոքր են եղել: Սրանք գնում են մոլլայի մոտ, պատմում իրենց դարդը: Մոլլան դրանց ասում է՝ պետք է մի տեղ գտնենք, որ յոթ ճանապարհի գան ու հատվեն եւ այնտեղ մի մեչիդ կառուցեք, որպեսզի ձեր մեղքին թողություն լինի:

Սրանք որպես արդեն մահմեդական, գալիս են Մեծ Թաղլարի հանդում մի եկեղեցի կառուցում, անունը դնում Արզման մեչիդ...

## ՊԱՐԻՆ ՊԻԺ

Այս սրբավայրը գտնվում է Բերդաձորում. Պարինպիժը նշանակում է Բարի բժիշկ: Այդ բժիշկը Վաչագան թագավորի տղան է եղել, որի անունը Պանդալյոն էր: Սա իմաստուն բժիշկ է եղել, Սողոմոն իմաստունից էլ իմաստուն: Աշխարհում մի հիվանդություն էլ չի եղել, որի դարմանը նա չիմանար: Այն էլ ասենք, որ նրա բոլոր դեղերը Ղարաբաղի բույսերն են եղել:

Իմանալով նրա մեծ հռչակի մասին, թշնամիները ցանկանում էին նրան գողանալ: Նա էլ գալիս է ու ապրում Բերդաձորի մի քարայրում: Երբ մեռնում է, այստեղ էլ թաղում են: Նրա գերեզմանի վրա խաչքար կա եւ քարի վրա քանդակված են ծաղիկներ...

## ԲՐԴԱՅՈՒՆՔ

Բրդահունքը մեծ բերդ է, կրկնակի պարիսպով, ջրի վիմափոր, թաղակապ ջրավազաններով, ժայռի մեջ փորած պահեստներով, թաքստոցներով, ցորենի հորերով ու թոնիրներով: Նրանից ներքեւ կա գյուղատեղ, եկեղեցի, գերեզմանատուն:

Այս բերդը գտնվում է Թաղավարդ գյուղի մոտ, մի գեղեցիկ ու բարձր սարի վրա: Բերդի ջուրը բերվել է հեռվից, բացի դրանից բերդի տակ կա մի վարար ու սառը աղբյուր:

Բրդահունցի բերդը շինված է զուտ պահպանվելու համար, այնտեղ մարդիկ երկար չեն ապրել: Թշնամին չի նվաճել, չի քանդել այդ բերդը: Երկարատեւ խաղաղ ժամանակներում բերդը լքվել է, մարդիկ իջել են բերդից, այսինքն՝ նահանջել են բերդից:

Այսպես էլ բերդը կոչվել է Բրդահունջ (բերդ եւ նահանջ բառերից):

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԿԱՅՈՒՄ Է

Պեխ աղբյուր: Թուրքերը Ղարաբաղում հեշտությամբ էին փոխում հայկական տեղանունները եւ նույնիսկ երգեր էին ծնում նրանց մասին: Այդպես. դեռ այն գլխից Շուշիի հռչակավոր Պեխ աղբյուրը, որը կառուցել էր նշանավոր քարագործ Իսահակը՝ շուշեցի Դավիթ Ճգնավորյանցի հիշատակին, սակայն թուրքերը նրան կոչում էին Իսախռւլաղ:

ԼՂՀ պատմական հուշարձանների Շուշիի մասնաճյուղի աշխատակից Հրաչիկ Հարությունյանի պրպտուն ջանքերով գտնվել է 1871 թվականին վիմագրված Բոք աղբյուրի գլխագիր հուշաքարը:

Թուրքերի այդ աղբյուրի թուրքացած անվան մասին շատ երգեր ունեն: Մի երգի մեջ էլ ասված է.

- Այ աղջիկ, արի գնանք Իսաբուլաղ,
Քո արեւը, ղոնաղ էր անելու քեզ...
Լսելով այս երգը, ղարաբաղցի հայ կանայք հեգնում էին.
- Իսաբուլա՛ղ... Հի՞նչ կասիս...

## ԽԾԱԲԵՐԴ

Արցախի մեծ եւ հզոր իշխաններից մեկը երեխա չի ունեցել: Դա նրան շատ է վշտացնում: Մի օր գուշակ է գալիս նրա մոտ եւ ասում.

- Դու որդի կունենաս, բայց երբ ամուսնանաս , առաջին գիշերը օձը նրան կխայթի եւ նա կմահանա:



Գուշակն ասում է, գնում:

Իշխանը իսկապես որդի է ունենում: Երբ մեծանում է, ամուսնության ժամանակը գալիս է, նա հիշում է գուշակի խոսքերը եւ որոշում որդու համար իր երկրի ամենից ցուրտ վայրում մի դղյակ կառուցել: Դե Դիզափայտի փեշերից էլ ցուրտ տե՞ղ: Այնտեղ նա Սահունասարի վրա դղյակ է կառուցում, որդուն ամուսնացնում ու դնում նրա մեջ:

Ամուսնության առաջին գիշերը իշխանի տղան ուզում է նախօրոք այնտեղ տեղափոխած խաղողի կողովից խաղող հանի հարսի համար, դու մի ասա, կողովը օձ էր մտել: Խաղողը վերցնելու ժամանակ օձը խայթում է նրա ձեռքը, եւ տղան մեռնում է:

Այդ օրվանից բերդը կոչվում է Օձաբերդ. Օձաբերդն էլ դառնում է՝ Խծաբերդ:

## ՇԱՀՄԱՍՈՒՐ ԳՅՈՒՂ

Գտնվում է Ջրաբերդում: Փոքր գյուղ է: Այս գյուղի վրայով է անցնում Գանձասարի ճանապարհը: Մի անգամ Պարսկաստանի շահերից մեկը գալիս է, որ թալանի Գանձասարի գանձերը: Մի ղոչաղ մարդ թաքնվում է գյուղի մոտ, ճամփի վրա գտնվող թփերի մեջ: Հենց որ շահը հավասարվում է իրեն, նա սուրը խրում է նրա կողը եւ սպանում: Մարդիկ զարմանում են, թե օրը ցերեկով, առանց կռվի շահին ո՞նց են սպանել: Գալիս են, տեսնում շահը մահացել է սրից:

Գնում-պատմում են, որ շահը մահացել է սրից: Այստեղից էլ առաջացել է Շահմասուր (Շահի մահը սրով բառերից):

## ԹՂԱՍԸՌ

Հադրութ ավանի մոտ մի փոքրիկ գյուղ կա, անունը Թղասըռ: Այս գյուղի բնակիչները եկել են Բայլական քաղաքից: Այս քաղաքի ավերակները հայտնի են Օրան ղալա անունով:

Հա, ուրեմն Բայլականը ժամանակին հայկական քաղաք է եղել, մտել է Դիզակի մեծ իշխան Եսայի (Աբու Մուսե) իշխանի տիրույթի մեջ:

Թաթարները այս քաղաքն ավերում են: Ամեն ազգի մեջ էլ լավ մարդ է լինում, սրանց մեջ էլ մի զինվոր աղաղակով կանչում է հայերին.

- Դաղա սուրուն, դաղա սուրուն, այ էրմանլար, դաղա սուրուն...

Ասել է թե՝ փախեք սարերը, փախեք սարերը, այ հայեր, փախեք սարերը:

Մահից փրկված մի խումբ հայեր գալիս, գյուղ են հիմնադրում այստեղ, անունը դնում Թղասըռ (սարը փախածներ):

## ՕՀԱՔԱՐ

Բերդաձոր չմտած, սարեն գլխեն մի քար կա,անունը Օհաքար:

Պարսկաստանի շահ Աղա Մուհամեդ Կաջարը գալիս է Ղարաբաղը գրավում: Ասում ա՝ պիտի գնամ Զանգեզուրն էլ գրավիմ: Գալիս-դեմ է առնում Բերդաձորին: Այստեղ էլ ամեն քարու քմակե մի հայ ա կաղնած, հո՞ւնց քինի Զանգեզուր: Նստում ա ձորի գլխին, նայում եւ ասում.

- Գալըը բու դարա (մնաց այս ձորը):

Ասում է եւ հետ դառնում գնում Շուշի, որտեղ սպանվում է: Այն քարի վրա, որ նստել է Կաջարը, կոչվում է Օհաքար:

Դրան Շնաքար էլ են ասում, դե Կաջարը մի կտաղած շըներ, էլի՜...

## ՇԱՀ ԱԲԲԱՍԻ ՓԱՀԼԵՎԱՆԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՑԻ ԲԵԴԻՆ

Շահ Աբբասը մի զորբա փահլեւան է ունենում. նրան ոչ ոք կարում չի հաղթե:

Սա մի օր գալիս է Ղարաբաղ, Մելիք Շահնազարի մոտ, թե՝ ես պիտի կռիվ կենամ մահլի ամենից ուժեղ մարդու հետ: Ամենից զորեղ մարդն էլ տռնվզեցի Բեժին ա լինում, նախրապան Բեգին:

Մելիքը Բեդուն կանչում ա, թա՝ ա մեռած, կկարի՞ս էս փահլեւանի հետ կռիվ բռնիս:



- Տեսնանք,- ասում ա Բեդին:- Որ կռիվ բռնիս, պիտի հաղթիս:

- Տեսնանք,- էլի նույնն է ասում Բեդին:

Վերջը՝ ժողովուրդը հավաքվում է գյուղի մեյդանում, զուռնանչին կռիվի եղանակ է փչում, Շահ Աբբասի փահլեւանն ու մեր Բեդին մտնում են կռիվի շրջանը: Բեդին դիկ փետի պես կանգնում է, սպասում, թե ի՞նչ պիտի անի փահլեւանը, որ ինքն էլ անի:

- Բեդի, ա մեռած, էդ գիտես ո՞վ ա, էդ էնա է, որ էն տարին Ծաղիկ կովտ խմհատից զողացավ:

Բեդին այդ լսելով, փահլեւանին վերցնում է, բարձրացնում գլխից վեր, տափովը տալիս եւ ասում.

- Շան որդի, հալա երես օնիս, եկալ ըս, ինձ հետ էլ կռիվ ը՞ս փռնում...

## ՎԸՍԿԱԽԱՉ

Ամարաս գնալու ճանապարհին, Վաչագան Բարեպաշտ թագավորը մի գիշեր մնացել է Աշան (պատմական անունը՝ Արաժան) գյուղում:

Նա գյուղի եկեղեցուն ոսկե խաչ է նվիրել, այդ խաչի անունով եկեղեցին կոչվել է Ոսկե խաչ կամ Վըսկախաչ:

Հետագայում Վըսկախաչ եկեղեցու ավերակի վրա զորացել է մի փառահեղ կաղնի: Այստեղ նաեւ կա մի պատվական աղբյուր:

Աշանի Ոսկեխաչ անունով վայրում հետագայում կանգնեցվել է մի խաչքար, որը նշանավոր սրբավայր է:

## ՄԸՀԱՍԵՌ

Աշան եւ Նոր շեն գյուղերի սահմանագիծը հայտնի է Մըհասեռ անունով: Երկու գյուղերի միջեւ շատ անգամ է սահմանի վեճ ու կռիվ եղել միշտ այդ տաք վեճերը վերջացել են մարդկանց մահով: Հենց այդ բարձունքն էլ, որի վրայով անցնում է երկու հարեւան գյուղերի սահմանագծերը, կոչվել է Մըհասեռ: Վերջին անգամ այդ սահմանի վրա խաչքար է դրել Պողին եւ ասել.

- Ա՛ շան տղեք, ամեքդ ձեր սահմանը ճանաչեցեք, հո՞ թոր-քեր չեք, որ ըռնու բոբար գործեր ըք բռնում:

Հիմա երկու գյուղից էլ ուխտ են գնում այդ խաչքարը եւ օրհնում Պըլը Պուղուն...

## ԱՐՅՈՒՆՈՏ ՋՐԱՂԱՑ

Քթիշ ամրոցի ուղղությամբ, Իշխանագետի վրա դեռ մնում է ջրաղացի մի ավերակ:

Այս ջրաղացը կոչվում է Արյունոտ ջրաղաց: Դրա մասին այսպես են պատմում. «Բուղան չկարողանալով գրավել Քթիշ ամրոցը, դրսի գյուղերից բերդի մոտ է քշում մի քանի հազար հայերի եւ պահանջում Աբու Մուսեից անձնատուր լինել, թե չէ, ինքը կկտրի ջրաղացի ջուրը եւ նրա արխում կմորթի այնքան գերի հայերի, որ նրանց արյունով պտտի ջրաղացի քարը:

Աբու Մուսեն մերժում է բռնակալի առաջարկությունը, եւ երբ Բուղան սկսում է կոտորածը, ասես գետնի տակից դուրս են գալիս Աբու Մուսեի զինվորները եւ հողմացրիվ անում թշնամուն: Սակայն այդ օրվանից ջրաղացը կոչվում է Արյունոտ: Սա ավանդություն չէ, այլեւ՝ իրական պատմություն...

## ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂԲՅՈՒՐ

Աբու Մուսեի որդին՝ Գագիկը, իրեն թագավոր է հռչակում Արցախում: Նրա նստավայրը Տումին էր: Այստեղ նա ուներ շատ շքեղ մի պալատ: Թագավորը իր պալատի մեջ սրբատաշ քարերով մի հոյակապ աղբյուր է կառուցում: Այդ աղբյուրի քարե նովից միանգամից կարող էին ջուր խմել հայրուր ձի: Աղբյուրը ուներ մի քանի ակ, ամեն ակի մոտ քարե նստարան:

Թագավորի հրամանով նորապսակները գալիս էին աղբյուր եւ իրար մի-մի բուռ ջուր տալիս:

Հիմա էլ Տումի գյուղում կա թագավորի այդ աղբյուրը, բայց չունի հին շքեղությունը:



## ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱԼԱՏ

Տումի գյուղի մոտ, Կարմիր Եղցու շրջապատում շատ հին ավերակներ կան:

Այստեղ է եղել Գագիկ թագավորի պալատը: Դա հին շենքերի մի համալիր էր՝ բնակելի տներով, ջրավազաններով, զորանոցով, եկեղեցով, պահեստներով, բաղնիքով, ձիթանոցով, որի հսկա քարը մնում է մինչեւ հիմա:

Այդ շենքերից մեկի ավերակի մեջ գտնվել է վիմագիր արձանագրություն Գագիկ թագավորի մասին, որը հիմա գտնվում է Ստեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանում:

## ՉՈԲԱՆԻ ՍԱՐ

Գյուլիստանում, Մռով սարի փեշին մի սար կա, անունը Չոբանի սար: Այս Չոբանի սարի փեշին մի աղբյուր կա, որը կոչվում է Խանի աղբյուր: Այս Խանի կինը հայ է եղել: Մի օր այս սարում ոչխար պահելիս է լինում մի հայ չոբան: Ավազակները գալիս են շրջապատում նրան, բռնում, թե պիտի քեզ սպանենք, ոչխարներդ տանենք:

- Դե որ պիտի սպանեք, մի խնդիրք ունեմ, սպանելուց առաջ թողեք նվագեմ սրինգս:

- Նվագիր,- ասում է ավազակապետը:

Հովիվը նվագում է:

Այդ պահին Խանի հայ կինը կուժը ուսին գալիս է ջրի, գալիս է տեսնում իրենց գյուղի ջահելները քեֆ են անում աղբյուրի մոտ: Այս հեռվից լսում է չոբանի սրնգի ձայնը: Այդ նվագով չոբանն ասում է. «Տեղս նեղ ա, ավազակները եկել, շրջապատել են ինձ, ո՞ւր եք, ընկեր տղաներ, հասեք»: Խանի հայ կինը լսում է, սիրտը փոթորկվում է, բայց անխոս հարսը ո՞նց իմաց տա տղաներին: Ծարը կտրած ջրով լի կուժը քարովն է գալիս, կոտրում:

Դրանով ուզում էր ասել, որ «Էն չոբանի կյանքն էլ էս կժի պես կկոտրեն. հասեք»: Տեսնում է, որ տղաները չեն հասկանում, ամոթը, բանը մի կողմ է դնում եւ ասում.

- Ձեր տունը քանդվի, էն չոբանը սարի գլխին հարամու ձեռքին չալիղ է գալիս, դուք քեֆ ե՞ք անում: Շուտ հասեք:

Ձաhելները հասնում են, փրկում չոբանին: Էդ օրվանից սարը կոչվում է Չոբանի սար, իսկ աղբյուրը՝ Խանի աղբյուր:

## ՉՈՒԽՏ ԲԱՐԵՎԱԾԱՌԵՐԻ ՀՐԱՇՔԸ

Ծառերը լուռ իմաստուններ են, եթե հասկանաս նրանց լեզուն, նրանք քեզ կբուժեն:

Ծառերը, ծաղիկները կարող են լինել կողմնացույց եւ իմաստուն գուշակներ:

Մեզանից շատ առաջ Թաղավարդ գյուղում կար մի իմաստուն վարդապետ, որը նստում էր Ձուխտ սոսու տակ ու գուշակում մարդկանց բախտը:

Գալիս է մի վաճառական եւ ասում, որ ինքը չի հավատում այդ հրաշքին:

- Իսկ եթե հավատաս, ի՞նչ նվեր ես տալու մեր վանքին:

- Իմ երկու ջորին՝ իրենց թանկարժեք բեռով:

Իմանալով, որ ահա ծառերը կխոնարհվեն, վարդապետը դառնում է ծառերին եւ ասում.

- Սուրբ սոսիներ, եթե այս մարդը իր խոսքի տերն է, խոնարհվեք նրա առաջ եւ թող Աստված ների նրա բոլոր մեղքերը:

Այդ պահին սոսիները սվսվում են, փոթորկվում եւ կռանում վաճառականի առաջ:

Այդ հրաշքի առաջ վաճառականը ուշագնաց է լինում, եւ երբ ուշքի են բերում, կատարում է իր խոսքը, ջորիները բեռնելով նվիրում է վարդապետին:



## ԹՈՆԻՐ ԱՂԲՅՈՒՐ

Վարարակն գյուղում, որ հիմնադրել է Վաչագան Բարեպաշտը, կա մի աղբյուր,որ բխում է վարդագույն քարե մի կարասի միջից:

Արեւի տակ ջուրը պտույտ է տալիս, բոցի պես փայլում, հուրհրատում, ինչպես կրակը թոնրի մեջ: Եթե հիվանդները յոթ օր խմեն այդ ջրից, կառողջանան:

Եթե խմորը այդ ջրով հունցեն, հացը կուտ չի գնա:

Եթե աղջիկները այդ ջրով լողանան, ավելի կգեղեցկանան:

Եթե թշնամին խմի այդ ջրից, նրա շուրթերը կրակի պես կվառվեն:

Եթե երեխաները այդ ջրից խմեն, շուտ կմեծանան:

Եթե սիրահար տղան ու աղջիկը այդ ջրից խմեն, Լեյլի-Մեջնուն կդառնան:

Եթե ծծմայր կանայք այդ ջրից խմեն, նրանց կաթը կվարարի եւ կանուշանա...

Թոնիր աղբյուրը հիմա էլ կա եւ գտնվում է Կրկժանում, որ Ստեփանակերտի հին թաղամասերից մեկն է:

## ՀԱՑԻ ԳՅՈՒՂ

Հայաստան աշխարհում Հացի անունով երկու գյուղ կա, երկուսն էլ շատ նշանավոր:

Դրանցից մեկում ծնվել է մեր մեծ ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցը:

Հիմա իմ խոսքը Հացի գյուղի մասին է: Այս գյուղը մեր թվարկությունից առաջ եղել է հեթանոս հայերի սրբավայրը: Այստեղ Բռի·եղցու տեղում եղել է Անահիտ աստծո հավաքատեղին: Այս գյուղում միշտ էլ առատ է եղել հացը, հողը եղել է առատաբեր: Եվ Արամազդը նրան կոչել է Հացի ու պատվիրել իր դուստր Անահիտին միշտ բարի աչքով նայել նրան:

Հայոց մեծ տիկինը այստեղ ունեցել է իր դիցարանը, իր անունով աղբյուրը: Նրա ոսկեփայլ արձանը դիտելու էին գալիս օտար աշխարհի մարդիկ...

Այժմ այդ ամենից մնացել է այս ավանդությունը...

## ԱՊՐՈՒՆՑ ՔԱՇՔԸ

Վարանդա գավառի Հերհեր գյուղում Ապրի անունով մի մարդ է լինում: Այս Ապրին նկատում է, որ ամեն գիշեր քաշքը մտնում է գոմը, ձին այնքան քշում, որ կորչում է սեւ քրտինքի մեջ: Ապրին սրտոտ մարդ է լինում, թուրը վերցնում է, գիշերը թաքնվում գոմի մի անկյունում: Մեկ էլ այն է տեսնում, ձին ծառս է լինում: Ճրագը վառում է, որ սրով զարկի, բայց քաշքը իսկույն անհետանում է:

Հաջորդ օրը Ապրին ձիու մեջքը կուպրով է քսում եւ նորից թաքնվում գոմում: Քաշքը նորից է գալիս, որ հեծնի ձին, քշի: Հենց որ նստում է ձիու մեջքին, մնում է ձիու մեջքին կպչած: Ապրին նայում է, տեսնում քաշքը մի սիրուն աղջիկ է: Որպեսզի չանհետանա, նրա ձեռքը ասեղ/աչքահուլունք է կապում եւ տանում տուն: Ինչ ասում են, քաշքը թարսն անում: Ասում են՝ տար կուժը լցրու, տանում է կոտրում, ասում են՝ դուռը բացիր, փակում է: Դրա համար նրա հետ սկսում են թարս խոսել:

Մի օր էլ նրան ուղարկում են աղբյուրը: Քաշքը գնում է, տեսնում իր պես մի սիրուն աղջիկ կուժը լցնում է ջրով: Ապրունց քաշքը ասում է.

- Ձեռքս ցավում է, այս ուլունքի թելը ետ ըրա, թուլացրու:

Աղջիկը ուլունքի թելը ետ է անում, քաշքը իսկույն սուզվում է ջրի մեջ եւ անհետանում:



## ՄՅՈՒՐԻՇԵՆ

Գյուղ է Վարանդայի գավառում, Ավդուռի մոտ: Վաչագան թագավորը Մաթե անունով մի իմաստուն մատենագիր է ունենում, որը նրա համար նամակներ է գրում, օրինակում մատյաններ:

Թագավորը մի օր կանչում է նրան եւ ասում.

- Ուզում եմ քեզ համար մի գրատուն կառուցել, որտե՞ղ ես ուզում կառուցել:

- Իմ հայրենի գյուղի՝ Ավդուռի մոտ,- պատասխանում է մատենագիր Մաթեն:

Թագավորը կատարում է խոստումը: Ավդուռի մոտ, գեղատեսիլ մի անկյունում, մի շատ սիրուն վանք է կառուցում: Այդ վանքը մինչեւ հիմա կոչվում է Մաթեգա վանք:

Արաբները, թուրքերը, պարսիկները մատենագրին ասում են Մյունշի:

Այս մյունշին էլ դարձել է Մյուրիշեն, այսինքն՝ մատենագրի գյուղ...

## ՄՈՒՇԱԴԻ ՇԵՆ

Այս գյուղը իր անունը ստացել է Սուրբ Գրիգորիսի նահատակման համար: Առաջ այս գյուղի բնակիչները ապրում էին Ամարաս գյուղաքաղաքում եւ ունեին վանքապատկան հողեր ու այգիներ:

Երբ նահատակվում է Սուրբ Գրիգորիսը, Ամարասի միաբանությունը ցրվում է, Ամարասից հեռացածները վանքից ոչ հեռու մի ամուր քարաժայռի մեջ բնակվում են: Հետո գյուղ են հիմնում եւ անունը դնում Նահատակի գյուղ, այսինքն՝ Գրիգորիսի շեն (Մեշադ՝ պարսկերեն նշանակում է նահատակ):

Նահատակ անունը պարսկերեն թարգմանել են իրենց լեզվով՝ շինել Մեշադիշեն: Մի ժամանակ այս գյուղը Ամարասի հովտի ուրիշ գյուղերի հետ միասին հարկ էր տալիս Պարսկաստանի խանին: Մի անգամ գալիս են, որ հարկերը հավաքեն, մուշադիշենցիները սպանում են հարկահաններին, նրանցից մեկը ազատվում է, փախչում եւ ասում.

- Ալլահ, ալլահ, այս գյուղում անգամ սեւ քաշն էլ տեր չի հանի, հինչ գործ օնիմ նրանց մոտ,- ասում է եւ գնում. էն գնալն է, որ գնում է...

### ԾՈՎԱՏԵՂ

Առաջ այստեղ փոքրիկ մի լիճ է եղել, բնական լիճ, աղբյուրի ջրից առաջացած:

Այդ լճի ափին իշխան Փաշիկը դղյակ է կառուցում՝ ամառը այնտեղ անցկացնելու համար: Հետո շատ է հավանում այս «ծովատեղին» եւ իր հին բերդից, որը գտնվում էր Խազազ սարի վրա, տեղափոխվում է այստեղ: Նորակառույց գյուղը կոչում են իշխան Փաշիկի անունով, բայց գյուղը հիշվում է Ծովատեղ անունով, լճի ափին կառուցած լինելու համար:

Հետագայում գյուղը մեծացավ, եւ լիճը կորցրեց իր հմայքը, չորացավ; քանի որ աղբյուրի ջուրը օգտագործվում էր ուրիշ նպատակներով, իսկ գյուղը իր հին անունը շարունակում էր պահել եւ կոչվում էր Ծովատեղ...

### ԿԱՉԱՂԱԿԱԲԵՐԴ

Խաչենի բարձր լեռների մեջ իր ընդգծված տեսքով դեռ շատ հեռվից առանձնանում է Կաչաղակաբերդը: Բնական այդ լեռը աշտարակի պես բարձրանում է Քոլատակի անտառի մեջ եւ իշխում շրջապատի վրա:

Հին հեթանոս հայերի մոտ կաչաղակը սուրբ թռչուն էր համարվում, որովհետեւ նա բարի լուր էր բերում մարդկանց:

Մի անգամ, երբ երկար ժամանակ մարդիկ պաշարված մնում են այդ բերդում, մի կաչաղակ գալիս, բարի լուր է հաղորդում: Գուշակները կաչաղակի ուրախ կչկչոցը թարգմանում են այսպես. «Թշնամու բանակում զինվորները մեռնում են հազարներով, նրանք սարսափահար փախչում են Արցախից»:

Պաշարվածները դուրս են գալիս բերդից եւ անցնում իրենց խաղաղ գործին: Հետո նրանք բերդի ճակատին քանդակում են այդ կաչաղակի պատկերը: Դրանից հետո բերդը կոչվում է Կաչաղակաբերդ:

Կաչաղակաբերդի վրա կա երկու ժայռափոր ջրավազան: Ոչ մի կողմից բերդը ջուր չի ստանում: Հսկա ժայռի տակ բխում է սակավաջուր մի աղբյուր...



# ԱՐՑԱԽՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

Մեր խաղերն ամենամեծ մասով գալիս են շատ հին ժամանակներից, դրանց մոտիվներն ավանդական են: Նման բաներ, նման կենցաղային դեպքեր միշտ կրկնվել են կյանքի մեջ, քանի իշխել են նույն բարքերը, ուստի եւ հին խաղերը շարունակել են ապրել: Բայց դրանք, հարկավ, նորոգվել են՝ ժամանակի նորույթներն ընդունելով իրենց մեջ:

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ



◈

Ըստեղերեն յեր հանդեր ա,
Արա հո՜, արա հո՜,
Լոխ ըրծաթէ բանդեր ա,
Արա հո՜, արա հո՜:
Տենակ պերեք սերտ ճղինք,
Արա հո՜, արա հո՜,
Լոխ բողում-բողում դարդեր ա,
Արա հո՜, արա հո՜:

◈

Յունձ եմ արել, նեղացել,
Գետն եմ մտել, լողացել,
Ես յոթ օրվա հիվանդի,
Ծոցդ մտե, սղացե:

◈

Տանս էն ղոլը բաղա,
Յու օզի, մեջը խաղա,
Ես մի ջահել յար օնիմ,
Յամ մելիք ա, համ աղա:

◈

Արտ եմ վարել, հսել ա,
Տոպը մեջին փսել ա,
Խաբար տարեք իմ յարին,
Բոյս բոյին հսել ա:

◈

Էսօր ուրբաթ ա, պաս ա,
Գլխինս նախշուն խաս ա,
Ա դեր, վեր ինձ ժամ պիրին,
Բուրդան չասիս չիաս ա:

◈

Թամամ ա հա, թամամ ա,
Անունս հենց Թամամ ա,
Ինձ օզող տղան գիտե,
Ծոցինս ճոխտ շամամ ա:

◈

Կյարմուր վերցակը բաղումը,
Ճոխտ ոտները շաղումը,
Ես մի դաստա գյուլ բդի
Իմ յարի փափախումը:

◈

Նազ անում, հա՛, նազ անում,
Ձինչու ասիս, տազ անում,
Կուճի հարսը յարի հետ
Խաղ ընելան հազ անում:



◈

Միասուրը քոլին դառել ա,
Մատս փուշը տարել ա,
Ծենումը մի տղա կա,
Ուշքս, միտքս տարել ա:

◈

Մեր դռանը խնկի ծառ,
Նախշուն հավքեր վրան թառ.
Ձինչքան բիդի քեզ եշիմ.
Յար, վախտն ա, եկ ինձ տար:

◈

Այ ափը կյաս, ափը կյաս,
Մեծ ղզղանեն քյափը կյաս,
Թա վեր ուրիշին օզիս,
Բոյավդ մին տափը կյաս:

◈

Էս աղջիկը Սառան ա,
Նշանածը սարան ա,
Ձի՞նչ պտահեց նրա հետ
Վեր սիրածից սառալ ա:

◈

Խոջայա հա, խոջայա,
Տոնտ լիքը խոնչայա,
Ինձ մի ջահիլ յար բիդար,
Նշանածս գոջայա:

◈

Ֆի՞նչ անեմ, դեմս պատ ա,
Քու հերը հիմար զադ ա,
Ես սրել եմ, ես կառնեմ,
Աստված ինքը շիադա:

◈

Գոլպա ունեմ, խաշար ա,
Մեր տան տեղը ղաշարա,
Քումար մեռնի, Շահնազար,
Էս խե յարս մաշալա:

◈

Գոթանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում,
Ճան տղա, շատ մի խոսա,
Դոշս քեզ բարձ եմ բերում:



◈

Ջուր եմ դրել, եփ կգա,
Ալիր մաղեմ, թեփ կգա,
Ինձ հու կասի քու յարը
Ղարիբթունա ե՞րբ կգա:

◈

Ալավ ա հա, ալավա,
Կեցը կարմիր հալավա,
Ճեկ տղա, սպիտակ աղջիկ,
Սերը կրակ, ալավա:

◈

Մեր տունը ձեր տան բոլթ ա,
Քաղածս կարմիր թութ ա,
Ես ու դու իրար սիրենք,
Թող գեղով ասեն՝ սուտ ա:

◈

Այ հոփա, հոփա տղա,
Ճալակդ չոփա, տղա,
Ցեխը տնիմ ըռաջիդ,
Գիդաս թա փոփ ա, տղա:

◈

Ավատ, ավատ, այ տղա,
Թոխկան սավադ, ա տղա,
Նշանածդ ո՞ւր մնաց,
Լոխճան նամարդ ջան տղա:

◈

Արան ա, հա՛, արան ա,
Յարս Գյունե Ճրտարան ա,
Յարիս անունը էլ չտաք,
Յարս սրտիս յարան ա:

◈

Ասին էր, հա Ասին էր,
Էն հովիսի տասին էր,
Ես տու իրար սիրեցինք
Սաբաբը մեր հասին էր:

◈

Սարին ա, հա՛, սարին ա,
Ձեր տունը էն սարին ա,
Ինձ ծոցիդ մեջ վառում ես,
Յետո ասում՝ սարին ա:



◈

Էսօր զուգանը մերն ա,
Մաճ բռնողը իմ հերն ա,
Էն հոտաղ սեւաչ տղան
Աշխարհի գիտե, իմ տերն ա:

◈

Կանգնել եմ, գալ չեմ կարող,
Լվացվել եմ, լալ չեմ կարող,
Գնացել ու չես գալիս,
Անունդ տալ չեմ կարող:

◈

Սարի արտը գարի ա,
Արտի լորը մարի ա,
Քանի օր է չեմ տեսել,
Թվում է՝ մի տարի ա:

◈

Սարի էն դոլը ծյուն ա,
Էս դոլը հավքի բուն ա,
Էս ա կյամ ա իմ յարը,
Օելակը կաթուկ հուն ա:

◈

Ղասումը, հայ Ղասումը.
Կարմիր գինին թասումը,
Հրսանիքս Ե՞րբ կլինի,-
Վարդավառի պասումը:

◈

Աղջիկ, աղջիկ, այ աղջիկ,
Աչքերդ չալ-չալ աղջիկ,
Դու մեր տանը հարս պիտիր,
Իմ քույրը քեզ՝ տալ աղջիկ:

◈

Կուճուր աղջիկ, լավ աղջիկ,
Դու ինձ համար ցավ աղջիկ,
Ես քեզ թաքուն սիրեցի,
Դու արեցիր ցավ, աղջիկ:

◈

Ես մի պուճուրիկ տոխ եմ,
Շուշվա ղալեն կկոխեմ,
Ամեն յարի հավան չեմ,
Յար կտամ, յար կփոխեմ:



◈

Ձեր տան տակին վար կանեմ,
Չար ագռավին քար կանեմ,
Թող իմ սիրածն ինձ տան,
Գժությունս թարգ կանեմ:

◈

Չափար, բասմա կոխել մի,
Շահին ղալբա, փոխել մի,
Ինձ մի կարմիր խնձորով
Ցրի ճամփին խաբել մի:

◈

Ցաղացը բանի, բանի,
Իմ քունը էլ չի տանի,
Ինչ անեմ քեզ պես նանը,
Որ ինձ մարդու չի տալի:

◈

Ղարիբ հավքը բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի,
Ինձ նման սեւաբախտը
Աշխարհիքումս ի՞նչ ունի:

◈

Այ բաղվանչի, բաղվանչի,
Բաղս բաղիդ նման չի,
Մի խումբ տղերք են գալիս,
Մինը յարիս նման չի:

◈

Բաղ ու բախճին քար պիտի,
Վարդի ծառին խար պիտի,
Ինձ նման սիրուն աղջկան
Բոյ ու բուսաթով յար պիտի:

◈

Ղարաբաղը հանդ արի,
Չոլ ու չիման վարդ արի,
Էնքան տվի անունըդ,
Սերս սրտիդ բանդ արի:

◈

Ղոշա վանքի ղշերը,
Յարիս կարմիր թշերը,
Տեղ եմ քցալ՝ խանի տեղ,
Յարս թող կյա քշերը:



◈

Տանը պատին նալ կնի,
Նախշուն հարսին խալ կնի,
Յու գիդում չի, թող գիդա,
Խռոված ին կյալ կնի:

◈

Կանգնալա մեր կտերը,
Ծլվլում են ծտերը,
Ազափ տղի դեղն հինչա՜,
Կոկոն, շամամ ծծերը:

◈

Ամպել ա, ձյուն չի գալիս,
Մթնել ա, տուն չի գալիս,
Էն նախշուն բարձի վրա,
Առանց յար քուն չի գալիս:

◈

Չափար, բասմա կոխել մի,
Իմ հոր անա վախել մի,
Յու հինչ օզի թող ասի,
Դու քո խոսքը փոխել մի:

◈

Արազն անցա էն կուռը.
Քաղեցի կարմիր նուռը,
Կարմիր նուռը ի՞նչ անեմ.
Ինձ տարեք յարիս դուռը:

◈

Այ հեւա, հեւա սիրտս.
Մի հավքի թեւ ա սիրտս.
Արար աշխարհի ծաղկալա.
Ցի՞նչ անիմ. սեւ ա սիրտս:

◈

Յոռի ծառին բար չինիլ.
Տակը քար ա. վար չինիլ.
Էն աստվածը, էն երկինքը.
Ով սիրում ա. ճար չինիլ:

◈

Ա տղա, կանգնել ես հողին,
Ձիբդ լիքը տկողին.
Մինն ուզեցի. չտվիր.
Յարամ լինի ուտողին:



◈

Վեննս ընգավ մոշավը.
Մոշին փոշավը.
Ծերքս հիբա անց կնական
Յարիս շիմշատ տոշավը:

◈

Քռակեն. քռակեն.
Օկլուկու տամ ճիտակեն.
Թա իմ դայու հավան չըս.
Եկ մեր էշի քուռակեն:

◈

Խաղ ասիմ. խաղի գլխին.
Իմ հերանց բաղի գլխին.
Ի՞նչ անեմ ուզող չկա,
Յողս տամ կաղի գլխին...

◈

Ծաղկել ա բաղի միջին.
Մի հատ ա թաղի միջին.
Գիշեր-ցերեկ առանց քուն
Գովում եմ խաղի միջին:

◈

Էն ծտեն եշի, էն ծտեն,
Վեննը տիրավ էն լծեն,
Ես մի սիրուն աղջիկ տեսա,
Աչքս մնաց ճոխտ ծծեն:

◈

Գոլպա կանեմ, տափը կանաչ,
Ման կգամ համանչ-համանչ,
Ով որ չուզի յարս գա,
Ոչ կապի կարմիր-կանաչ:

◈

Բար ու բերքի բաղում եմ,
Յայլա բռնել խաղում եմ,
Ես էս կուճի տեղովս
Տղաներին դաղում եմ:

◈

Տեմաց տեղը հունծ կանիս,
Չինդ կոտրե, հո՞ւնց կանիս,
Ես քո ճինին կոթ պիտի,
Գլխիդ թանծր շոք պիտի:



◈

Կուճի աղջիկ, ժամ ունես,
Վարդի հոտ ու համ ունես,
Ով քեզ վրա աչք գցում,
Խելքը գլխից հանում ես:

◈

Այ տղա, եկ կալը տես,
Մեր բաղը, մեր սարը տես,
Իմ հար քեզ աղջիկ չի տալ,
Վախտին գլխիդ ճարը տես:

◈

Ծինչքը ա պետք խանումս,
Դարդ ու ցավ կա ջանումս,
Ես կմեռնեմ, կգնամ,
Կմնա փուչ անունս:

◈

Աղջիկ ուզեց, դարդ արավ,
Ծանդը վարեց, արտ արավ,
Շարմաղ, շամամ աղջիկը
Ծոցը բացեց, վարդ արավ:

◈

Էն մեր սարն ա՝ Քիրսը մեծ,
Կեսը փոքր, կեսը մեծ,
Ես մի նախշուն յար օնիմ,
Ինքը փոքր, հիրսը՝ մեծ:

◈

Թխել եմ գարի յոխա,
Գարի հաց, գարի յոխա,
Մի գյուղ ա, երեք տերտեր,
Երեք ժամ, երեք քյոխա:

◈

Ամպը գալիս է ծորից,
Ցուրտ է, ձմեռ է նորից,
Ինչ կա անուշ աշխարհում
Սիրած յարից ու մորից:

◈

Թառամեց վարդի թաղը,
Շատ խոր է սրտիս դաղը,
Գառ չունեմ մատաղ անեմ,
Ախ, ես եմ քո մատաղը:



◈

Ինչ տամ սրտով սիրածին,
Անուշ-անուշ սիրածին,
Մարդուն ջահել կպահի
Մեկ լավ կինը, մեկ լավ ձին:

◈

Հիվանդ եմ ղարիբ հողում,
Ցավից իմ սիրտն է դողում,
Այս ինչքան շատ ծերացա,
Ղարիբ տեղ, ղարիբ հողում:

◈

Այս կյանքը հավքի թեւ ա,
Իմ բախտը ուղտ ու դեւ ա,
Կակաչը այնքան կարմիր,
Սրտիս պես սիրտը սեւ ա:

◈

Իմ յարը էստեղ լիներ,
Համբույրը ինձ դեղ լիներ,
Շլլվենք մի շապիկում,
Շապիկն էլ խիստ նեղ լիներ:

◈

Էս դարը ցավի դար ա,
Բռնության, դավի դար ա,
Որ խոսցնես, արյուն կլամ,
Բախտս սեւ, օրս դառն ա:

◈

Ում հարցրի, լուռ մնաց,
Սրտումս մրմուռ մնաց,
Ղարիբները տուն դարձան,
Բա իմ յարը ո՞ւր մնաց:

◈

Էն ջահել վախտս լիներ,
Մի խոտի թախտս լիներ,
Յարիս հետ քուն մտնեի,
Առաջվա բախտս լիներ:

◈

Յորղա ձիուն նալ չի պետք,
Նախշուն հարսին խալ չի պետք,
Ինձ պես խանդոտ ուզողին,
Բաղ ու բախչա, բար չի պետք:



◈

Մռովի պես սար լիներ,
Ոչխար լիներ, գառ լիներ,
Չոբան տղան ծոցս գար,
Գիշերը շատ երկար լիներ:

◈

Այ օխա, օխա տղա,
Քյաքուլդ թոխա, տղա,
Լողվա, լողվա այնպես ման եկ,
Որ ասեն՝ քյոխա տղա:

◈

Իմ այգու բարն է անուշ,
Բարերի նուբարն է անուշ,
Քույր ու եղբայր, հեր ու մեր,
Ձեզանից յարն է անուշ:

◈

Տունս սարի թամբին ա,
Ղղեն մոշի շամբին ա,
Ինձ հունց պահիմ, վեր չասին՝
Աչքը յարի ճամփին ա:

◈

Ուր ես գնում առանց ինձ,
Այդպես մենակ, առանց ինձ,
Ծոցդ լիքը վարդերով,
Ուց ես քնում, առանց ինձ:

◈

Օրդ անուշ, ջուրդ պաղ,
Ծաղիկներդ շող-շափաղ,
Արար աշխարհի ման եկա,
Քեզ պես չկա, Ղարաբաղ:

◈

Աղբյուրը գուռ կունենա,
Այգին նուշ, նուռ կունենա,
Ցավն էլ ինչքան սեւ լինի,
Հույսի մի դուռ կունենա:

◈

Էս սարումը տուն ունեմ,
Մեջը ոսկե սյուն ունեմ,
Ալ տղա, դու քիչ խոսիր,
Քեզ պես հազար շուն ունեմ:



◈

Արխալուղս կարել եմ,
Կոճակ-սուրմա շարել եմ,
Նանի ջան, դարդ մի անի,
Ես իմ յարը ճարել եմ:

◈

Խնձոր ունեմ կճած ա,
Չորս կողմն արծաթած ա,
Ախպերս ուզեց, չտվի,
Աsի յարիս կճածն ա:

◈

Տեղ եմ գցել, փոթ եկավ,
Հանդից նախշուն խոտ եկավ,
Մեռնեմ միջին քնողին,
Միջից խնկահոտ եկավ:

◈

Լուսնյակը բոլորել ա,
Ամպի մեջ մոլորել ա,
Յար ջան, ծոցիդ նռները
Ինձ համար բոլորել ա:

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Գլխիս նախշուն շալ կուզեմ,
Հենց որ եկա ձեր տունը,
Ոսկին ծալիծալ կուզեմ:

Այ միտքը խային աղջիկ,
Մազերդ ղալին աղջիկ,
Ես քեզ որտե՞ղ սիրեցի,
Քու հերանց կալին, աղջիկ:

Մեր տան մոտ կանաչ բաղ կա,
Վարդի բույր, վարդի թաղ կա,
Ես բլբուլ, յարի կարոտ,
Յարի մուռ, յարի դաղ կա:

Ղարաբաղը հանդ արի,
Չոլ ու չիման վարդ արի,
Էնքան տվի անունդ,
Սերս սրտիդ բանդ արի:



Հոռի ծառին բար չինի,
Տակը քար ա, վար չինի,
Էն աստվածը, էն երգինքը,
Ով սիրումա, ճար չինի:

Չափար, բասմա կոխել մի,
Իմ հոր անա վախել մի,
Հու հինչ օգի, թող ասի,
Դու քո խոսքը փոխել մի:

Վեննս ընգավ մոշավը,
Ձեր չափարի փոշավը,
Ծերքս հբա անցկնական,
Յարիս շիշմած տոշավը:

Վարդերը ինձ խաբեցին,
Արտերը ինձ խաբեցին,
Յարս հանդ էր գնացել,
Հանդերը ինձ խաբեցին:

Ծաղիկները լուռ լացին,
Թառամեցին, գնացին,
Երանի այն աղջկան,
Որ կտան իր սիրածին:

Վայ ինձ, Խանդութ-Խաթունս,
Որ թողեցիր, ինձ, տունս,
Ինչքան մուրազ ունեի,
Ողջը թողիր սրտումս:

Ձահել, ջիվան վախտս լիներ,
Մի չոր փայտե թախտս լիներ,
Դու իմ կողքին լինեիր,
Իմ բախտավոր վախտս լիներ:

Հանդերին ձյուն է եկել,
Աչքերիս քուն է եկել,
Ով մեռած, ով սաղ կնի,
Որ զարուն տեսնի մեկել:



Գյուղ ունեմ, անունը Վանք,
Յար ունեմ, նախշուն զարմանք,
Դե մի տեսեք նրա պես
Ով ունի սեր ու լավ վարք:

Մեր դռանը թթի ծառ,
Ձեր դռանը թթի ծառ,
Զարմանում եմ թե դու երբ,
Երբ այդքան դու մեծացար:

Կկուն նորից ձեն ածեց,
Լացեց, լացեց, հա՜ լացեց,
Միթամ քիչ էր հոգսերը,
Նա էլ մի նոր դուռ բացեց:

Թե մի օր նստես թախտին,
Երնեկ տաս դու քո բախտին,
Իմացիր ամեն ծաղիկ,
Բացված է միշտ իր վախտին:

◈

Տեսնում ես, սեւ եմ հագել,
Ագռավի թեւ եմ հագել
Իմ բախտը ինձ հետ է միշտ,
Ասես թե դեւ եմ հագել:

◈

Իմ զուլլան, քարին դիպավ,
Գնաց ու ծառին դիպավ,
Երանի այն տղային,
Որ խոսքն իր յարին դիպավ:

◈

Անիծվես դու, իմ չար բախտ,
Իմ դժբախտ բախտ, աջալ բախտ,
Մեկին մի ծով դարդ տվիր,
Մյուսին՝ դեղ ու ճար, բախտ:

◈

Արի, տար ինձ մեր տնից, այ տղա,
Մեղք եմ, հանիր մեր գյուղից, այ տղա,
Յորս՛, մորս, մի նայիր,
Ինձ փրկիր այս շան հալից, այ տղա:



◈

Տեղս քարոտ թող լինի,
Բարձս քարոտ թող լինի,
Ինչ տեղում էլ որ լինեմ,
Սերս նարոտ թող լինի:

◈

Ախ, ես ինչեր չտարա,
Ցավ ու ճիչեր չտարա,
Լավ օրվա համար է, որ
Այսքան թուք, մունջեր տարա:

◈

Սեւ է, սեւ է, սեւ իմ բախտ,
Ագռավը թե, խեւ իմ բախտ,
Մեկը չկա սպանի
Յոթ գլխանի դեւ իմ բախտ:

◈

Սարերին ձյուն է դրել,
Սրտիս սեւ սյուն է դրել,
Դարդերս շատացել են,
Վիշտը սրտիս բուն է դրել:

◈

Գուքանս Նոր նորթել եմ,
Խոփը թազա զողել եմ,
Յարիս խոսք ու հանաքին
Ես միխիլա կարոտել եմ:

◈

Մեր Թարթառը վարար ա,
Գեղը միշտ էլ արար ա,
Սիրուն աղջիկ, սեւ տղա,
Որ առել է, հալալ ա:

◈

Իմ հերը բաղ, մալ ունի,
Յորենի հոր, կալ ունի,
Մի լավ տղա ինձ ուզեր,
Ասին՝ գնալ-գալ ունի:

◈

Բախտի ձեռքին ո՞ւր գնամ,
Լալով գնամ, լուռ գնամ,
Նշանեին ինձ հիմա,
Նշանածիս հյուր գնամ:



◈

Քարն էլ կարոտ սեր ունի,
Սարն էլ կարոտ սեր ունի
Էլ ինչո՞ւ եք զարմանում,
Որ յարն էլ կարոտ սեր ունի:

◈

Ձեր բաղի բարն անուշ ա,
Այգու նուբարն անուշ ա,
Նշանված տղա-աղջիկ,
Դա մեզնից անուշ ես:

◈

Յավիս համար դեղ ունես,
Ինձ սազական գեղ ունես,
Յար ջան դու լավ իմացիր,
Որ իմ սրտում տեղ ունես:

◈

Վարդ քաղեցի, փուշ դառավ,
Ի՞նչ սիրեցիր հուշ դառավ,
Բախտ բաժանող, մեռնես դու,
Ձահել կյանքս փուչ դառավ:

◈

Գիշերը շատ շուտ անցավ.
Արագ գնաց, լուսացավ.
Էլի յարս եկավ տուն,
Մինչեւ լույս ես չկշտացա:

◈

Ասա տեսնեմ ո՞ւր հասար,
Մեղք գործելով ո՞ւր հասար,
Տուն քանդելը մեղք է մի,
Սերը քանդելը հար-հազար:

◈

Նոր բացված վարդ ունեմ,
Նախշուն-նախշուն զարդ ունեմ,
Իմն են կոկոն ծծերդ,
Կյանքում էլ ինչ դարդ ունեմ:

◈

Աշնանը թոռ կլինի,
Այգում միշտ հոն կլինի,
Թե որ սիրածս ինձ տան,
Մեր գյուղում տոն կլինի:



◈

Արեւը ընկավ ուրթին,
Իմ յարի տան ու հուրթին,
Արեւի շող ես լինեի,
Դիպչեի յարիս շուրթերին:

◈

Ինձ իմ ուզած տեղը դիր,
Սրտիս սիրո դեղը դիր,
Ինձ տար ձեր տուն, յար արա,
Թեկուզ ձեր շան տեղը դիր:

◈

Վրես հաչում են, հաչում,
Թագի-թուլա են հաչում,
Էլ չեն ասում թե ով է
Ծարմաղ ծծերս պաչում:

◈

Մեր տունը միշտ լայն լինի,
Դեմը ձունոտ սար լինի,
Տաք օջախի մոտ քցած
Փափուկ դոշակ, յար լինի:

Մեռա-մեռա կարոտից
Իմ յարի սեր կապոտից,
Լուռ մխում եմ առանց յար,
Ձեն չեմ անում ամոթից:

Գարունն էլի ետ կգա,
Հետը վարար գետ կգա,
Եղբորից մի խռովիր,
Մեկ է, մի օր պետք կգա:

Կարասիս մեջ թան չունեմ,
Ամբար չունեմ, դան չունեմ,
Իմ էս աշխարհին է որ կա,
Էն կյանքի հետ բան չունեմ:

Կոկոն վարդիս բաղը մնաց,
Բլբուլի հին խաղը մնաց,
Յարս գնաց, հեռացավ,
Նրա տված դաղը մնաց:



Մեր բոստանը ման արի,
Սիրո խոսքով դամ արի,
Դու հարս չեկար մեր տունը,
Հարեւանի տուն արի:

Վրնջաց ձին մեր բակում,
Դարբասը ո՞վ է թակում,
Թե ինձ չտան սիրածիս,
Կփախչեմ թաքուն-թաքուն:

Սարերին նստեց ձյունը,
Փախել է ինձնից քունը,
Երանի հնար լիներ,
Իմ յարը գար մեր տունը:

Ես էս գեղին հավան չեմ,
Տան ու տեղին հավան չեմ,
Հորս ինչպես ասես, որ
Ես էս տղին հավան չեմ:

◈

Պառավ մարդը ի՞նչ անեմ.
Թոշնած վարդը ի՞նչ անեմ,
Ես ջահել ու մարդս ծեր,
Այսքան դարդը ի՞նչ անեմ:

◈

Այս գյուղը նոր հարս է գնում,
Սիրտդ զուլալ, պարզ է գնում,
Յարս ինչ անի, փեսան ինչ,
Ժամանակը թարս է գնում:

◈

Կտրվի թող քո այդ ցեղդ,
Սեւ մոր դառան հացդ, դեղտ,
Ինձ թողիր, ուրիշն առար
Այրվի թող տունդ, տեղդ:

◈

Օղըդ անուշ, ջուրդ պաղ,
Սարերդ շող ու շափաղ,
Դրախտ դառնա աշխարհը,
Քեզ չի հասնի, Ղարաբաղ:



◈

Մեր ծորինը համամ է,
Ծոցինդ ջուխտ շամամ է,
Եկ քեզ տանեմ մեր տոնը,
Եթե խելքդ թամամ է:

◈

Մթնում լինեմ, ճրագ ես դու,
Կտրում լինեմ, կրակ ես դու,
Քեզ այդ ինչ մեր է բերել,
Որ, ասես, արեգակ ես դու:

◈

Արտս լի ցորեն ա,
Ճուրջը միքը մորե ա,
Դե հունց անիմ, սեւ բախտից
Նշանածս Խորենն ա:

◈

Ծաղկել ա բախչան, բաղը,
Բացվել ա երգն ու խաղը,
Աստված թող ընդունի
Մեր սիրո մատաղը:

◈

Ծովի ափին ջրահարս տեսա,
Մի երազ, մուրազ տեսա,
Ոսկ եղավ, մի սատանա
Ու մի նոր տնազ տեսա:

◈

Աման, աման, արտս մեծ ա,
Բաղս մեծ ա, հանդս մեծ ա,
Ես ուր գնամ, ես ինչ անեմ
Որ բոլորից դարդս մեծ ա:

◈

Ծարավ եմ, ինձ ջուր բերեք,
Ինձ սիրո մի հուր բերեք,
Իմ ուզածը ուրիշ է,
Ինձ շամամ ու նուռ բերեք:

◈

Էլ հույս չունեմ, որ կգաս,
Հոգնել եմ ես սպասելուց,
Էլ հույս չունեմ, որ կգաս
Հոգնել եմ ես, արտասվելուց:



◈

Այս բաժակը գինով լցված
Քո կենացն եմ ուզում խմել,
Բայց կարծես թե գինու տեղյակ
Դառը արցունք լինի լցված:

◈

Անձրեւ է գալիս, իմ սերն է լալիս:
Լալիս է սիրտս քեզ համար միայն,
Հոգիս է լալիս, լալիս սիրելիս,
Ինչու է դրսում անձրեւ գալիս:

◈

Ուր է Խանդութ-Խաթունս,
Մութ է, ցուրտ է, տես տունս,
Դեռ ուզում ես իմանալ,
Ոնց է փախել քունս:

◈

Գնաց Խանդութ-Խաթունս,
Մութ է հոգիս ու տունս,
Ինչ հույս, մուրազ ունեի,
Ողջը մնաց սրտումս:

◈

Ամառ է, մոտ բեր կուլան,
Ջուր բերեք, թող գլգլա,
Իմ սիրտը դատարկ կուլա,
Սեւ բախտից միշտ էլ կուլա:

◈

Ցավ ունեմ, ճար չի լինի,
Քեզնից լավ յար չի լինի,
Ասում են՝ ով սիրում է,
Սիրողը չար չի լինի:

◈

Արթնացել են հույսերս,
Ինձ լուր բերին ղշերը,
Տեղ եմ գցել խանի տեղ,
Ցարս կգա գիշերը:

◈

Այ սարեր, այ ջան սարեր,
Ինչու եք ինձնից սառել,
Ձեզ համար մատաղ կանեմ,
Իգիթիս դուք եք պահել:



◈

Սար ու ձոր թաց են լինում,
Ճամփեքը բաց են լինում,
Սիրածս կռվում ընկավ,
Սարերը լաց են լինում:

◈

Ուզում ես բարդ լինեմ,
Երգդ ու տաղդ լինեմ,
Իսկ թե մատաղ ես ուզում
Նաև մատաղդ լինեմ:

◈

Սարի դոշինը արտ է
Ճամփի եզրինը վարդ է,
Ինձ ինչ այս ջուխ զարունը,
Իմ ջալակինը դարդ է:

◈

Ձեզ ով ասաց, որ դարդ տաք ինձ,
Ինչ տալիս եք, որ բարդ տաք ինձ,
Աստված, ասի ինչ կլինի
Մի անգամ որ վարդ տաք ինձ:

◈

Ցավիս համար դեղ ունես,
Դու անունով գեղ ունես,
Երբ էլ հյուր գաս մեր տունը,
Աչքիս վրա տեղ ունես:

◈

Բաղումը հոն կլինի,
Աջնանը թոն կլինի,
Սիրածը սիրածին տան,
Ողջ գյուղում տոն կլինի:

◈

Մեր գյուղում նախշուն մի բաղ,
Բաղի մեջ միշտ երգ ու տաղ,
Պակասը ես ու դու ենք
Իմ ջանը միշտ քեզ մատաղ:

◈

Ամպը սարի թամբին է,
Ձեր տունը մեր բանդին է,
Դու որ խոսք ես տվել ինձ,
Աչքդ էլ ո՞ւմ ճամփին է:



◈

Գյուլբա կանի, տափը կանաչ,
Ման կգամ, համանչ, համանչ,
Ով որ չուզի յարս գա,
Ոչ կապի կարմիր-կանաչ:

◈

Յար ունեմ, անունը Նուբար է,
Բաղի պես բերք ու բար է,
Հենց որ մոտս է գալիս,
Իմ շուրթը երգ ու պար է:

◈

Երկնքի շուշին նայիր,
Վարդերի փշին նայիր,
Թե ուզում ես դրախտ տեսնել,
Սիրունի դոշին նայիր:

◈

Խոսք ես տվել, վաղ եկ,
Երեսիդ առ մաղը եկ,
Որ մեր բաղը չես տեսել,
Հարեւանի բաղը եկ:

Ուր ես գնում առանց ձի,
Մենակ, տխուր, առանձին,
Ոնց ես քնում մեն-մենակ,
Առանց սիրո, առանց ինձ:

Ցուրտը հալած կլինի,
Սեղանը բաց կլինի,
Չոռով տարած աղջկա
Աչքը միշտ թաց կլինի:

Հավքի պես օրը թռավ,
Նետ դարձավ, ծորը թռավ,
Երազ է կյանքս թվում,
Երբ նախշուն օրըս թռավ:

Աղջի, այդ ի՞նչ եք ասում,
Իմ մասին քիչ եք խոսում,
Թող տանեն ու քար բեռնեն,
Որ ասեմ ճիշտ եք ասում:

Բախտս սեւ է, ի՞նչ անեմ,
Դեմս դեւ է, ի՞նչ անեմ,
Ինձ ինչո՞ւ եք անիծում,
Յարս խեւ է, ի՞նչ անեմ:

Հանդերը լի լալազար է,
Մազերդ նախշուն զառ է,
Աչքերիդ թարթիչները
Նետերի հավասար է:

Գիշերները, գիշերները,
Ձմեռ լիներ ու մեր սերը,
Ծաղկեր ծոցում երկուսիս,
Տարի դառնար գիշերները:

Բաղումը վարդ կլինի,
Հանդումը արտ կլինի,
Յարը յարին թե սիրի,
Ով ասաց դարդ կլինի:

◈

Իմ յարը խլած տեսա,
Սիրտս սուր խրած տեսա,
Երազում, թե արթմնի
Ծիրիմս փորած տեսա:

◈

Ճախարակ մանի, մանի,
Նանը թող գուլպա անի,
Բալքի ջենան մի տղա
Գա ու մեր Մանին տանի:

◈

Ուր ես գնում առանց ինձ,
Այդպես մենակ, առանց ինձ,
Ծոցդ լիքը վարդերով,
Ոնց ես քնում առանց ինձ:

◈

Ես դուշ եմ թեւս դեղին,
Ման կգամ յարիս գեղին,
Իմ ջանը մատաղ կանեմ,
Իմ յարի ցավոտ տեղին:



◈

Սարի սինձը ինչ անեմ,
Կաթով բրինձը ինչ անեմ,
Թող իմ սիրածը ինձ տան,
Ոսկին, արծաթը ի՞նչ անեմ:

◈

Թեզ անեմ, թեզին մեռնեմ,
Ման եկած տեղին մեռնեմ,
Երեք օր է տեսել չեմ,
Նոր ծլած բեղին մեռնեմ:

◈

Ջուր եմ դրել կեծա,
Ոչխարի առաջը էծա,
Մեռնեմ իմ յար չոբանին,
Որ թագավորից էլ մեծ ա:

◈

Չիթ ես հագել, սազումա,
Գլուխդ շատ մազովա,
Յալքաթ ես էլ նազ կանեմ,
Եղբորս յարը նազովա:

◈

Նոր խլեղս կարել եմ,
Նախշուն կոճակը շարել եմ,
Դու գնա կորիր, գեշ տղա,
Քեզնից լավը ճարել եմ:

◈

Ձան գյուղումով կշարեմ,
Տոպրակ կածեմ, կշարեմ,
Գնամ գյուղերը ման գամ,-
Քեզնից լավը կճարեմ:

◈

Դեզ եմ դրել, հավան չեմ,
Ես եմ գլխին դիվան տեր,
Ինձ կոտորեք խանչալով,
Ես էդ յարին հավան չեմ:

◈

Քաղել եմ հոնի խակը,
Լվացել աղբրի ակը,
Ով իմ յարին ինձ չտա,
Ոչ տեսնի սիրո թագը:



◈

Էսօր ուրբաթ լավ օրա,
Տղի գեշը էլ որն ա,
Ով իմ յարին ինձ չտա,
Սեւ շան նման թող ոռնա:

◈

Ձաղացի դուռը բացա,
Սեղանին պաղարձ հացա,
Մեռնեմ կեռ-կեռ ունքերիդ,
Թե ինձ չտան, լոխ լացա:

◈

Իմ տեղը հով ու քամի,
Քաքուկդ քամին տանի,
Դու հեռու սարում, ձորում,
Իմ քունը էլ ունց տանի:

◈

Լույս եմ տալիս երկնքին,
Ճողքս թողած քո դեմքին,
Քո ողջ կյանքում ման կգաս,
Իմ էս չալ-չալ աչքերին:

◈

Կուժն առա, իջա ջրի,
Ջուր խմի, որ համ չունի,
Իմ հոր, մոր ինչ ասեմ,
Խե տվին ինձ ես տղին:

◈

Ես չոբան եմ, ջոն չունեմ,
Դարդիման եմ, տոն չունեմ,
Իմ սիրածը ինձ տվեք,
Ջհանամը, տոն չունեմ:

◈

Պուլիկ ունեմ, վարդով լի,
Սանդուղ ունեմ, զարդով լի,
Վարդն ու զարդը ինչ անեմ,
Երբ իմ սիրտն է դարդով լի:



# ԾԻՍԱԿԱՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ





ՀԱՐՍ ԵՆՔ ԲԵՐԵԼ

1.

Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Գլուխդ քթվող ենք բերել,
Շորերդ թափող ենք բերել,
Ոտներդ լվանող ենք բերել,
Մեջքդ քորող ենք բերել...

2.

Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Ալերդ մաղող ենք բերել,
Խմորդ հունցող ենք բերել,
Տյափդ բռնող ենք բերել,
Խմորդ պուլող ենք բերել,
Թոնիրդ էրող ենք բերել,
Հացդ թխող ենք բերել...

3.

Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Շուշան քաղող ենք բերել,
Փիրփետ հնդրող ենք բերել,
Ճրագ վառող ենք բերել,
Կրակ անող ենք բերել,
Խորակ եփող ենք բերել,
Հաց-ջուր անող ենք բերել...

4.
Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Գոմդ քերող ենք բերել,
Մարագդ սրբող ենք բերել,
Կովդ կթող ենք բերել,
Յորթդ կապող ենք բերել,
Ուլըդ բռնող ենք բերել,
Այծդ կթող ենք բերել,
Խնեցի հարող ենք բերել,
Մածունդ մերող ենք բերել,
Թանդ կտրցնող ենք բերել,
Յուղդ հալող ենք բերել...

5.
Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Տոնդ սրբող ենք բերել,
Կուժդ ուսող ենք բերել,
Բաղչեդ ջրող ենք բերել,
Լոբիդ քաղող ենք բերել,
Ճորդ կարող ենք բերել,
Գլուխդ լվացող ենք բերել,
Ասեղդ թելող ենք բերել,
Գուլբեքդ անող ենք բերել:

6.
Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Ճերեփդ խլող ենք բերել,
Մառանդ մտնող ենք բերել,
Չանչ-կրող անող ենք բերել:



7.
Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Գլուխդ հողող ենք բերել,
Տունդ քանդող ենք բերել,
Գլխիդ բամփող ենք բերել,
Ումբրդ թաղող ենք բերել,
Տեղդ խլող ենք բերել,
Պոչդ պոկող ենք բերել,
Ծամերդ քաշող ենք բերել,
Տունդ տիրող ենք բերել...

8.
Թագավորի մեր, տանեն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել,
Սատանայի ճուտ ենք բերել,
Մութ դժոխքից դեւ ենք բերել...
Ինչ որ ա՝ քու ապրանքն ա,
Դու ես միայն սրա տերը,
Եկ բռովի կոլավն ընկնի,
Երնիդ գցի ու ներս քաշի,
Թե տերն ուզի բախտի քո օջախը
Թամուզ կպահի սիրտը հարսի:

(*Երվանդ Լալայան, Երկեր, h.2, էջ 356-358*):

## ԱՂՋԿԱ ԲՈՂՈՔԸ

- Աղջի, նանե...
- Ասե, ջանե...
- Մեր շենին ջահիլ-ջուհուլին
Կարկուտը տանե...
- Խե՛, աշկերդ քեզ կենա,
Ցանի, խե տանե:
- Վեր մինը կավեչ,
Կյա ինձ տանե:
-Պա վեր տանե
Լավ չի պահե:
-Ձհաննամը,
Հինչ լավ չի պահե,
Թաքի տանե,
Տանե, առե
Թող սպանե...

## ՊՈՒՂՈՒ ՉԱՐՄԱՆՔԸ

Ա յերե Աստված
Շնուրհակալ ընք,
Մարդըս ստեղծալ,
Մարդկանց համար էլ
Վարդըս ստեղծալ,
Առե հինչ անինք,
Մարդկանց միարել
Դարդըս ստեղծալ,
Գուղում չըմ թա տու
Հինչ մտծեցեր,
Վեր մարդկանց
Կողքեն,
Ճանքըս ստեղծալ...



## ՏՄԲԼԱ

1.
Դըռ-հա, դըռ-հա, տմբլա,
Տմբլաս թխիմ՝ բլբլա...
Հրսանեքը թիժանա,
Հարսը պերինք Ըշանա,
Ղավալ-մակառ քեֆ անինք,
Հարսը փսեն կեֆ անինք,
Ծափ տանք, պար կյանք, դինջանանք,
Ասին՝ ապրին, Խչանանք,
Համ տանան ըն, համ՝ շանան,
Հարս ըն տանում Ըշանա...
Դըռ-հա, դըռ-հա, տմբլա,
Տմբլաս թխիմ՝ բլբլա...

## ԳՈԴԻ

Գոդի, Գոդի,
Այ Գոդի,
Մարդը մեռած,
Այ Գոդի,
Տղան մեռած,
Այ Գոդի,
Ծվծվոցատ
Նղացալ ըմ,
Կթկթոցատ
Նղացալ ըմ,
Կյարմուր արեւ ըմ օզում,
Կանաչ սարեր ըմ օզում,
Ցուրտ-ցուրտ ըխպրեք ըմ օզում...

Մի ծու տվեք
Թաթեն տինիմ,
Փուշի տվեք
Վարար քսիմ...
Գոդի, Գոդի,
Այ Գոդի,
Բախտը կորած,
Այ Գոդի...

## ԲԱՐԽՈՒԴԱՐ
*(Օրորոցի երգ)*

Բալամ, բալամ, Բարխուդար,
Աշանա միալին տար, Բարխուդար,
Մեծ-մեծ մուլքերեն տար, Բարխուդար,
Լա՛յ, լա՛յ, լա՛յ, Բարխուդար, լա՛յ,
Յորդ մեծ բաղեն տար, Բարխուդար, լա՛յ:
Երե բաղը, Ներքե բաղը,
Խաչին հարթը, Բաղեն տակը,
Բարխուդարա տափը, Յին Խմհատը,
Գյուլին Ղուշեն, Ծմալա հարթը,
Խսրեն տափը, մեր տուրունատեղը
Լոխ քեզ մատաղ, Բարխուդար, լա՛յ,
Օխտը ըխճկա, ետը հլած բալա,
Ազիզ բալա, բեկ բալա, լա՛յ, լա՛յ...



## ՃՈԼԻ

Ճոլի-ճոլի,
Ճոլ չկա,
Խավիծ անիմ,
Եղ չկա:
Ճոլին ընկավ ջուրը,
Տյուս օնող չկա,
Քյանդիր պերեք,
Տյուս օնինք,
Չաթու պերեք,
Կցան տանք,
Եղ պերեք,
Վարսը քսինք,
Ծու պերեք
Թաթեն տինինք:
- Դե պերե՛ք,
Պերեք տեսնանք,
Յինչը՞ք պիրում,
Վեր ես ջոր
Չմանը վարիմ...

## ՅԱՐՍՆԱՄԵՐ

Մեջքդ կոտրի, հարսնամեր,
Կուռդ կոտրի, հարսնամեր,
Ոտքդ կոտրի, հարսնամեր,
Աչքդ դուրս գա, հարսնամեր,
Ա Բեմուրվաթ, էս ի՞նչ ա,
Խոխատ զնում ա, էլ չի գա:
Էդ ո՞ր օր էր, ո՞ր սհաթ,
Որ յաղին կոխեց քո մղակ,

Ինչի՞ չառար դու մահակ,
Որ չկոխեն քո մղակ...
Եկան ու քեզ խաբեցին,
Չիր-չամիչով կապեցին,
Քու դովլաթը խլեցին,
Քու աղբաթը պատռեցին...
Լացիր հիմա, սրտամեռ,
Բանն անցել ա, գնացել,
Ռախեդ թռչան պաչ արա,
Կոլավեն ընկեր, ճիտարա,
Ասա բարով դու գնաս,
Լավ հարս ու լավ տուն դառնաս...

## ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Լա՜յ-լա՜յ, բալա, լա՜յ-լա՜յ,
Լա՜յ-լա՜յ, բալա, լա՜յ-լա՜յ,
Նի կապիմ՝ քոնդ տանի,
Թող անիմ, շոնը տանի:
Քու մար ամեն ճիրա խմալ չի,
Քու մար ամեն խոտա կծալչի,
Լա՜յ-լա՜յ, բալա, լա՜յ-լա՜յ,
Լա՜յ-լա՜յ, բալա, լա՜յ-լա՜յ...

## ԿՆՈՋ ԲԱԽՏԸ

Հորն ընկա,- խոր հորն ընկա:
Մորն ընկա,- դռնեդուռ ընկա:
Աղբորն ընկա,- աղբահորն ընկա:
Քուրն ընկա,- ջուրն ընկա:
Մարդն ընկա,- զարդն ընկա,
Շաղաթաթախ վարդն ընկա:



## ԹԱՓԱՆ ՕՏՈՂ ՇՈՇ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Վեր էշը զռաս ա,
Հարսը ուրախնաս ա,
Գիդաս ա, վեր
Ապեր Շուշուց կաստ:
Վեր ապերը կաս ա,
Թափանը պիրիս ա,
Թափանը վեր պիրիս ա,
Հարսը իփիս ա,
Ապերը նստես ա,
Ուզես ա
Թափանը կծես ա, ծքիսա,
Ծքիսա, ծքիսա,
Վեր շատ ծքիս ա
Ճկատեն տրքցնես ա,
Վեր ճկատեն տրքցնես ա,
Հարսը ուրախնես ա,
Վեր հարսը ուրախնես ա,
Ապերը լախ-լախ ծծղես ա...

## ԹԹՈՒ ԹԱՆ

Թան, թան, թթու թան,
Օխտը տղա օնիմ, օխտը կոփթան,
Պիրում ըն տոնս լցնում,
Մեր տռնավը, մեր հուրթավը:
Մինին պերածը մազ ա,
Մինին պերածը պուրթ ա,
Մինը միենգ ա պիրում,
Մինը սուրթա...
Բայց գործերս միշտ պուրթ ա:

Օխտը տղա օնիմ, օխտը կուլթան,
Մին հարս օնիմ՝ թամամ քյոլթա...
Թան, թան, թթու թան...
Էսպիսի բան...

ՔԱԹ-ՔԱԹ

Քաթ-քաթ
Չվալ-ցակատ.
Վեչ կոթ օնե,
Վեչ արկաթ,
Ծղացեն կտրեն
Օխտը կյուլ,
Օխտը կյուլին
Մին բլբուլ:
Հասան-Հասան,
Տոռնդ պեց,
Փադի մասան,
Տոռնը պեց...
Մին հավ օնիմ
Կուր-կտոց,
Մի ծյու ածեց՝
Լոխ տղնոց,
Պապեն կերավ
Քեցավ հոնծ,
Բերեց մի մեծ
Չալ-չալ կլոնծ,
Մելիքը մաչան կծից,
Օհանը տական կծից,
Սանթուրը քյունջան կծից,
Ղազարը էն մին
Քյունջան կծից
Լոխ կերան, կշտացան,
Պըլը Պուղուն պեն չմնաց...



ԱՍՏՎԱԾ ՄԵԾ Ա

Ասիս, չասիս,
Աստված մեծ ա,
Համ տանող ա,
Համ բերող ա,
Համ տվող ա,
Համ առնող ա,
Համ քանդող ա,
Համ շինող ա,
Համ պատժող ա
Համ ներող ա...

ՏԱՆՈՒՄ ԵՆ

- Տանում են, աղե ջան, տանում են,
Աղջիկը հոր տնից հանում են:
Սպիտակ ծին նալն ինչ կանի,
Վա՜յ աման, աղե ջան, տանում են,
Սիրունը խալը ինչ կանի,
Վա՜յ աման, աղե ջան տանում են:

- Թող տանեն, աղջիկ ջան, թող տանեն,
Աղջիկը հոր տնից թող հանեն:

- Զյունել է Քիրսա սարը,
Վայ աման, աղե ջան, տանում են
Չգիտեմ ով է յարս,
Վա՜յ աման, աղե ջան, տանում են:

- Թող տանեն, աղջիկ ջան, թող տանեն,
Աղջիկը հոր տնից թող հանեն:

\- Չգիտեմ ուր եմ գնում,
Վայ աման, աղի ջան, տանում են,
Տեսնես ում տուն եմ գնում,
Վա՜յ աման, աղի ջան, տանում են:

Թող տանեն, աղջիկ ջան, թող տանեն,
Աղջիկը հոր տնից թող հանեն...

ՊՈՒՂՈՒ ՍՈՒԳԸ
ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՎՐԱ

Ա տափը եկած, խե մեռեր,
Ա գյոըբագյոռ, խե մեռեր,
Ա յեթիմ-եսիր, խե մեռեր,
Ա խանի վեզիր, խե մեռեր:

Բեղերդ հանցա ջրիպիտեղն,
Լեն իրեսդ մին լուբատեղ,
Պա առանց քեզ հո՞ւնց կանինք,
Հազար դարդ կա ու կարիք:

Չռչափռաշ վեներ օնիս,
Լոլակ-լոլակ ծնկեր օնիս,
Գերան-գերան կռներ օնիս,
Օռած-փչած մեծ փոր օնիս:

Գիդում չընք թա հի՞նչ անինք,
Լաց ինինք, թա ծիծաղինք...
Ա տափը եկած, խե մեռեր,
Ա գյոըբագյոռ, խե՞ մեռեր...
Պա տու մի քանի անգամ մեռածի՞ր,
Վեր երկացիր ու մեռեր...



ՀԻ՞ՆՉ ԱՆԻՄ

Վարթըս էրալ ըն, տեղը փոշ տիրալ,
Հազար տարվա տոնըս ավեր ըն ըրալ,
Ըրտըսունքաս՝ Քոռ-Արախսն ա վրարալ,
Թարթառը, Կարկառը քըըքար ըն իլալ,
Պլոկված ըմ, հի՞նչ անիմ:
Իրիկնակը իմ դարդաս ա խռավալ,
Խեղճ լուսնըգան լաց ա ըլալ, պռավալ,
Դայաղ չօնիմ, լայաղ չօնիմ ըշխարքումս
Աստուծ ա անզոր, բանդան անչոռ
Ես էլ մի խեղճ ռանչպար ըմ, հի՞նչ անիմ:
Կծկծամ ա Մարիամ աքու աշկերը,
Վնատակ ա նրա ցած վարսերը,
Սրտիս նման սեւ ա բախտիս աստղերը,
Իմ դուշմանը, համ օժավա, համ նաշար,
Առռե աստծո հավասար ըմ, հի՞նչ անիմ:
Դարդոտ Մարիամ, բախտեդ աշկը քոռ ըրա,
Ուլանաս վուչ, հինչ վեր անիս, սօր ըրա,
Զոռդ շատ ա, հավաք ըրա, տոն ըրա,
Թշնամու թոխկան քաշի, մշկահոռ ըրա,
Ասիս վուչ թա՝ ես սիրիմ, հի՞նչ անիմ:

# ԽՐԱԽՃԱԿԱՆՆԵՐ

***

Պուղին գնաց շուկա, դես նայեց, դեն նայեց, վերջը տեսավ մի գյուղացի մեկ լավ տանձ, մեկ լավ խնձոր, մեկ լավ դեղձ եւ մեկ լավ սերկեւիլ է դրել առջեւը եւ սպասում է.

- Ի՞նչ արժեն մրգերը,- հարցրեց Պուղին:
- Բոլո՞րն ես առնում:
- Չէ, այդքան փող չունեմ:
- Այդ դեպքում գնիր երեք հատը:

Բոլորն առանց խնձորի արժե 48 կոպեկ, առանց տանձի՝ 45 կոպեկ, առանց դեղձի՝ 43 կոպեկ, առանց սերկեւիլի՝ 38 կոպեկ:

- Այդքան փող չունեմ,- խոստովանեց Պուղին:
- Որ այդպես է, եթե իմանաս, թե բոլոր մրգերը միասին ի՞նչ արժեն, ձրի քեզ կտամ:
- Մերը չմեռնի Պուղու, մտածեց, մտածեց ու որոշեց բոլորի գումարը, մրգերը ձրի առավ ու եկավ տուն:

Տեսնես ո՞րն էր նրա որոշած գումարը: -

***

Պուղին ձի էր ծախում: Ղազարն ուզում էր առնել, բայց բողոքում էր, որ թանկ է, գինը՝ 40 ռուբլի:

- Ղազար, այ Ղազար, դե որ ձին թանկ է, արի դու նրա երկու ոտքերի նոր խփած պայտերի երեքական մեխերի գինը տուր, պրծնի գնա: Առաջին մեխին տուր 1 կոպեկ, երկրորդին՝ 2 կոպեկ, երրորդին՝ դրա կրկնապատիկը՝ 4 կոպեկ եւ այդպես. ձիու համար փող չեմ ուզում:

Ղազարը հաշվեց, տեսավ Պուղին մի բան էլ ավել է վերցնում, բայց գնեց ձին:

Եկեք իմանանք, տեսնենք որքա՞ն էր մեխերի գինը:



***

Պուղին 8 լիտրանոց ամանը գինով լցրեց, գնաց շուկա՝ վաճառելու: Ղազարը եկավ նրա մոտ եւ խնդրեց գինու կեսը լցնել իր երկու ամանների մեջ, որից մեկը 5 լիտրանոց է, երկրորդը՝ 3 լիտրանոց: Պուղին թողեց, որ Ղազարը գտնի ելքը, իսկ նա չգտավ:

Պուղին դա կատարեց սրամտորեն ու դեռ Ղազարին էլ իր ամանից մի փարչ գինի խմեցրեց:

Այդ ինչպե՞ս կատարվեց:

***

Պուղու հարեւան Պողոսը 5,7 եւ 12 լիտրանոց կավե պուլիկները գինով լցնում է, տանում շուկա՝ վաճառելու: Նա իր հետ վերցնում է նաեւ մեկ լիտրանոց գինու գավ, որպեսզի նրանով չափի գինին, բայց 5 եւ 7 լիտրանոց ամանների գինին վաճառելուց հետո թասի պես մեկ լիտրանոց գավը կոտրվում է: Պողոսը մնում է շվարած, քանի որ նրան են մոտենում երկու հոգի եւ ցանկանում են գնել վեցական լիտր գինի:

Պուղին հրաշալի բաժանում է 12 լիտր գինին ու տալիս նրանց:

Հարեւան Պողոսը այնուհետեւ ամենուր գովաբանում է Պուղու խելքը:

Պուղին ինչպե՞ս բաժանեց գինին:

***

Մելիք Շահնազարի տանը չորս ոտանի աթոռներից բացի, կային նաեւ եռոտանի աթոռներ:

Կիրակի օրերին Մելիքի մոտ հավաքվում էին բոլոր տանուտերերը, ամեն մեկը զբաղեցնելով մի աթոռ: Պուղին մարդկանց հաշվելու փոխարեն հաշվում էր աթոռների ոտքերը, որի գումարը կազմում է 29:

Քանի՞ մարդ է նստում սենյակում:

***

Պուղին Շոշ գյուղում հովիվ էր: Նրա հոտում այծերը շներից շատ էին տաս անգամ, ոչխարներն էլ այծերից էին 10 անգամ շատ: Այդ բոլորը 222 հատ էին: Պուղին այդ 222 հատն ամեն օր պահում էր հանդում ու սաղ-սալամաթ բերում տուն:

Ո՞վ կասի շների, այծերի, ոչխարների ստույգ թիվն առանձին-առանձին:

***

Պուղին ուներ հինգ կշռաքար, դրանցով նա կշռում էր մինչև 121 կգ: Ո՞վ կասի, ինչ կշռաքարերից էր նա օգտվում:





# ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԲՈՒԺԱՐԱՆԸ

## ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԴԵՂԱՏՈՒՆԸ

Վայրի դեղաբույսերը աճում են Ղարաբաղի բոլոր վայրերում: Գարնան եւ ամռան առաջին ամիսներում սարահարթերում եւ ալպյան արոտավայրերում ծաղիկները հյուսում են նախշուն գորգեր: Ծմակի վարդը, մանուշակը, մեխակը, կակաչը, հերիկը, թրաշուշանը, երիցուկը, զանգակը, խնծաղան, ձնծաղիկը, անթառամը, աստղիկը, ուրցը, դեղին ճյուղավոր շուշանը, ջրաշուշանը, շահոգրամը, նունուփարը, նապաստակի ականջը, նախածաղիկը, մրջնածաղիկը, մլմլուկը, անմոռուկը, մեղրածոծը, մաշը, մոմխոպրապը, ճաճուղուկը,համասպրումը, հալվեն, կապույտ ծաղիկը, ծեփիկը խաչափայտը, խաշխաշը, թառթը, թագավորապսակը, Եղբոր ծաղիկը (եղբայրացարյուն) եւ հարյուրավոր ծանոթ ու անծանոթ ծաղիկներ են աճում Ղարաբաղի դաշտերում, հովիտներում, քերծերի մեջ, անտառներում, արոտավայրերում, առվակների ու աղբյուրների մոտ:

Յազվագյուտ ծաղիկ է «Աղբերանց արյուն» կոչվող ծաղիկը, որը, ըստ ավանդության, բուսել է հայրենիքի համար մարտում ընկած յոթ եղբոր արյունից: Դեռ միջնադարյան տաղասացները շատ երգեր են հորինել ծաղիկների մասին, որից մեկն էլ վերաբերում է «Աղբերանց արյուն» ծաղկին.

*«Այ իմ Աղբերանց արյուն,*
*Որ բուսար ի մեջ քարերուն,*
*Աչուիդ ի Նարգիզի նման,*
*Մէկն ի քուն ու մէկն արթուն...»:*

Ընդունված է այն կարծիքը, թե Լեռնային Ղարաբաղը ի-րենից ներկայացնում է բնության-բուժարան: Յիրավի, մեր երկ-րամասի փարթամ բուսականության մեջ մեծ տեղ են գրավում դեղաբույսերը:

Բուսաբաններն ու հնագետները հաստատում են, որ բնաբուժությունը սկզբնավորվել է մեր թվարկությունից դեռեւս 3000 տարի առաջ: Գիտությունը դեռ չի պարզել, թե ինչու համար են հեթանոս հայերը բնության մեջ պաշտել մի քանի ծառատեսակներ: Սակայն հայտնի է, որ հնդիկ ու չին, արաբ ու պարսիկ, հույն եւ հայ բժիշկները հնում մարդկանց հիմնականում բուժում էին բույսերի միջոցով: Հայտնի է, օրինակ, որ սխտորով, մեղրով եւ սպիրտով բուժում էին ուռուցքներ, արյան ճնշումը, ստամոքսային խոցը, սրտամկանային հիվանդությունները եւ այլն:

Բուսական բժշկությունը Լեռնային Ղարաբաղի հայերի մոտ այսօր էլ շարունակվում է: Ընդհանրապես, այստեղ ազգային շատ սովորություններ են մնացել անարատ եւ այժմ դժվար չէ կռահել, որ այդ սովորությունները գալիս են դարերի խորքից, իրենց հետ բերելով շատ գաղտնիքներ: Եթե դուք ուզում եք կազմել դեղատու բույսերի ցուցակը, առանց վարանելու մոտեցեք դաշտում կամ այգում աշխատող որեւէ մի ղարաբաղցու եւ նա ոչ միայն կթվարկի ու ցույց կտա շատ դեղաբույսեր, այլեւ կտա նրանց ճիշտ օգտագործման դեղատոմսը: Դրանք շատ են..մասուրը, սեզնը, ընկույզը, թութը, փշատերեւ դափնին, հոնը, ապա՝ նաեւ վարդը, անանուխը, խոճկորիկը, բանգին, եզան լեզուն, ավելուկը, խաշխաշը, մատուտուկը,կատվախոտը, դաղձինը, լոշտակը, ուրցը: Բույսերից պատրաստած դեղամիջոցները մարդիկ օգտագործում են թարմ վիճակում, հաճախ էլ 2,3 օրվա համար: Կան այնպիսի բույսեր ու ծաղիկներ, որոնցից պատրաստած հեղուկը փակ շշերում կարելի է պահել մի քանի տարի:

Ինչպես հայտնի է, 20-րդ դարի սկզբին տորոնի արտադրությունը Ղարաբաղում ավելի է մեծացել: Այդ բույսերից ստացվում է կարմիր ներկ, բայց տորոնը նաեւ դեղատու բույս է եւ չորացրած վիճակում իր բուժիչ հատկությունը կարող է պահել 25 տարի:



Բուսաբուժությունը հիվանդների մոտ տխուր հետքեր չի թողնում, բացի դրանից մի շարք դեղատու բույսեր նաեւ սնունդ են հանդիսանում:

Հազի ու թոքային հիվանդությունների դեպքում եփել խոճկորիկի տերեւները եւ եփուկը խմել: Բացի դրանից այդ բույսի տերեւները ունեն թարախազերծելու հատկություն: Այս երկու միջոցներն էլ հայտնի են եղել Հիպոկրատին: Խոճկորիկով բուժում են անգինան, հարբուխը: Խոճկորիկը բուժիչ հատկությունները շատ են: Հանրահայտ դեղաբույս է եղինջը (բանջարը): Բացի նրանից, որ ուտում են թարմ եւ եփած վիճակում, եղինջը բուժում է հիպերտոնիկ հիվանդությունները: Թրթնջուկը բուժում է աղիքաստամոքսային խանգարումները, ուրցը՝ ռադիկուլիտը, անմոռուկը՝ լեղապարկի եւ լյարդի խոցերը, շուշանը՝ սրտի նեւրոզը: Եգիպտացորենը համեմատաբար նոր բույս է Ղարաբաղում, բայց արդեն նրա հասկի մազափնջերի եփուկով բուժում են միզապարկը:

Հազարամյակներ շարունակ մարդիկ ապրելով բնության մեջ, իրենց անձնական օրինակով համոզվել են, թե բույսերից որն է բուժիչ, որը թունավորող: Այսպես, տուղտի արմատը հրաշալի դեղ է թոքերի, միզապարկի, սրտի, լյարդի, աղիքների, ստամոքսի, երիկամների, նյութափոխանակության խանգարումների՝ լուծի, ապա՝ դեղնախտի, խոցային բորբոքումների, ասթմայի, արյունահոսության, կոկորդի, բերանի հիվանդության եւ արտաքին խոցերի դեմ:

Բուժիչ է նաեւ մղամուճի (պարազիտ բույս է, կանաչ փաթաթվող, բուսնում է ծառերի վրա) բուժիչ հատկությունը: Նրա տերեւները 5 րոպե եփելուց հետո օգտագործվում է գլխապտույտի, գլխացավի, ջղաձգության,արյունահոսության դեմ: Ի դեպ, մղամուճը աճում է մեր բոլոր անտառներում, հատկապես՝ բոխի եւ կաղնի ծառերի վրա:

Մեր բնաշխարհը մի բաց դեղատուն է, որտեղից մարդիկ օգտվում են ձրի:

Քանի որ ավելուկը չափազանց գործածական մեր սերնդի մեջ, ապա մենք այստեղ տալիս ենք այդ բույսի հին դեղատոմսը:

Ինչպես տեսնում եք, ավելուկը բուժում է նաեւ քաղցկեղը:Դժվար է ասել, թե որ չափով, հիվանդության որ աստիճանում, սակայն փաստն այն է, որ այդ բույսը քաղցկեղի դեմ օգտագործել են վաղ միջնադարում: Գուցե դա որպես դեղատոմս գալիս է ավելի հնից: Մեր նախնիները բույսերի միջոցով կատարել են նաեւ գուշակումներ, մեծ մասամբ բնության երեւույթները ըմբռնելու համար: Կան բույսեր, որոնք բուսնում են միայն այն հողերի վրա, որոնց տակ ջուր կա: Իսկ որոշ ծաղիկներ՝ մանուշակը, ձնծաղիկը, ծմակի վարդը, շուշանը մարդկանց թելադրել են եղանակի վիճակի մասին, դեռեւս բնության երեւույթները կատարվելուց մեկ-երկու օր առաջ:

Մեր պապերը, օրինակ, վաղ գարնանից գուշակում էին այդ տարվա բախտը եւ երբեք չէին սխալվում, որովհետեւ նրանք առաջնորդվում էին բնության ստույգ եւ անխախտելի օրենքներով:

√ Անժխտելի են ավելուկի, տուղտի, առյուծագու, արհուկի (աղեւքույրիկի), ծնեբակի, փերփետի,եղինջի, եզան լեզվի, բանգու, արջընկույզի, անանուխի, խատուտիկի, մանուշակի, երիցուկի, կնտատասկի, մոշեհամուկի, սարի չայի, ուրցի, սեզի, սամիթի, կինձի, թրթնջուկի եւ շատ ու շատ բույսերի բուժիչ հատկությունները:

Հին դեղաբանները տուղտը համարել են դեղաբույսերի մայր:

Կա մի ծաղիկ, որը Ղարաբաղում կոչվում է օձի սխտոր: Հին դեղատոմսերում այս ծաղիկը կոչվում է նաեւ թագավոր, որովհետեւ, ըստ ավանդության, նրանով են բուժել հիվանդ մի թագավորի:

Տիպիկ ղարաբաղյան բույս է լափռին, որը հայտնի է նաեւ չիչխան անունով, քանի որ այս բույսը այժմ վերացման վտանգի տակ է, ուստի ուզում ենք հանգամանորեն խոսել նրա մասին:



Չիչխանը (օբլեպիխա, իսկ Ղարաբաղի բարբառով՝ լափուխն, որը դափնի բառի հնչյունափոխված ձեւն է) Լեռնային Ղարաբաղի արժեքավոր բույսերի անհետացող տեսակներից մեկն է: Ինչ-որ ժամանակ այն լայնորեն տարածված է եղել Խաչենի եւ Թարթառի մերձգետային քարքարոտ եւ ավազոտ ափերին: Սակայն մարդկանց տնտեսական գործունեության հետեւանքով չիչխանի թփուտները Խաչեղեն գետի ավազանում լիովին ոչնչացվել են: Ներկայումս այստեղ չկա չիչխանի եւ ոչ մի թուփ:

Արցախում չիչխանի կարելի է հանդիպել միայն Թարթառ գետի միջին հոսանքի ձախ ափին, Սարսանգի ջրամբարի ափին եւ ավելի բարձր, որտեղ նա բուսնում է բուսական բազմաթիվ ներկայացուցիչների ընկերակցությամբ:

Չիչխանը խոշոր թուփ է, կամ 4-5 մետր, երբեմն էլ 6-8 մետր բարձրությամբ ծառ է՝ 2-7 սանտիմետր երկարություն ունեցող սուր փշերով: Տերեւները հերթականորեն նշտարաձեւ գծային են՝ 2-8 սանտիմետրանոց երկարությամբ եւ շուրջ 0,5 սանտիմետր լայնությամբ: Արցախում աճող այդ բույսի պտուղները հյութալի են, նարնջագույն, գնդիկաձեւ կամ էլիպսաձեւ կորիզներով: Սակայն հանդիպում են նաեւ գրեթե կարմիր պտուղներ ունեցող տեսակներ: Չիչխանը սովորաբար ծաղկում է մինչեւ տերեւները դուրս գալը՝ ապրիլ-մայիս ամիսներին: Պտղաբերում է՝ սկսած 4-5 տարեկան հասակից եւ շատ առատորեն: Պտուղները հասունանում են աշնանը, նոյեմբերը եւ դեկտեմբերը չիչխանի հյութալի, նուրբ, նարնջագույն եւ կարմիր պտուղները հավաքելու եռուն ժամանակն է: Սակայն հասունացած պտուղները ծառի ճյուղերի վրա կարող են մնալ մինչեւ հաջորդ տարվա գարունը: Հասունացած պտուղների համը վաղ աշնանը դառնանում է, սակայն առաջին իսկ սառնամանիքներից հետո հաճելի թթու համ են ստանում:✓

Չիչխանի պտուղները տեղական բնակչությունը չի օգտագործել եւ չի օգտագործում նաեւ ներկայումս: Այստեղ վաղնջա-

կան ժամանակներից մինչեւ մեր օրերը մեծ քանակությամբ կտրում, հավաքում են չիչխանի փշփշոտ ճյուղերը՝ այն բանի համար, որպեսզի դրանցից պատրաստեն անանցանելի ցանկապարիսպներ: Չիչխանի անտառների ոչնչացումը անցյալում կապված է եղել մերձգետային տեղամասերը գյուղատնտեսական կուլտուրաների համար օգտագործելու հետ: Մինչդեռ չիչխանի պտուղները բազմավիտամինային արժեքավոր հումք են: Չիչխանի պտուղներից ստանում են ճարպայուղ, որը նույնպես պարունակում է մեծ քանակությամբ վիտամիններ:

Չիչխանի կարմրավուն-նարնջագույն յուղը ունի վերքերը բուժող եւ ցավերը հանգստացնող հատկություններ: Այն կիրառում են ստամոքսի եւ տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդության, այրվածքների, ցրտահարությունների, էկզեմաների (մաշկախտ), օրգանիզմի ճառագայթման ախտահարումների, վատ ապաքինվող արտաքին խոցերի, աչքի հիվանդությունների բուժման համար, գինեկոլոգիական հիվանդությունների դեպքում, եւ որպես պրոֆիլակտիկ միջոց կերակրափողի լորձաթաղանթի դեգեներատիվ փոփոխությունները նվազեցնելու համար՝ քաղցկեղի ճառագայթային թերապիայի ժամանակ: Անհրաժեշտ է նշել, որ չիչխանի յուղը կարելի է օգտագործել բժշկի հսկողությամբ եւ նրա հանձնարարականով, քանի որ այն հակացուցական է սուր խոլիցիստով, աղիքաստամոքսային տրակտի խանգարումներ եւ ենթաստամոքսային գեղձի հիվանդություններ ունեցող հիվանդների համար:

Բացի վիտամիններից եւ ճարպայուղից, չիչխանի պտուղները պարունակում են շաքար եւ օրգանական թթուներ, թարմ վիճակում: Օգտագործում են սննդի մեջ, նրանցից պատրաստում են մուրաբա, գինի, կիսելներ, խյուսեր, մրգահյութեր, թուրմեր եւ այլն:

Չիչխանի պտուղները եւ տերեւները դեռեւս հինավուրց ժամանակներից օգտագործվել է ժողովրդական բժշկության մեջ



Մոնղոլիայում, Հունաստանում, Տիբեթում մաշկային եւ ստամոքսային հիվանդությունները եւ ռեւմատիզմը բուժելու համար: Այս ծառի պտուղների եւ տերեւների եփուկներով բուժել են նաեւ կենդանիներին:

Չիչխանի պտուղների եւ ճյուղերի եփուկներն օգտագործում են թե ներքին եւ թե արտաքին բուժումների համար, մազերը թափվելու եւ ճաղատանալու դեպքերում: Չիչխանի պտուղներով կարելի է դեղին գույնով ներկալ գործվածքները եւ բուրդը: Չիչխանը նաեւ լավ մեղրաբույս է:

Չափազանց սննդարար եւ արժեքավոր է ընկույզը: Ընկուզենին աճում է քարքարոտ, անպիտանի ձորալանջերում եւ ապրում 300-400 տարի:

Ընկույզը ոչ միայն բարձրարժեք սննդամթերք է, այլ օժտված է մի շարք բուժիչ հատկություններով: Ընկույզի մեկ կիլոգրամ միջուկը որպես սննդանյութ կարող է փոխարինել մեկական կիլոգրամ մսին, հացին, ձկանը, կարտոֆիլին, տանձին եւ մեկ լիտր կովի կաթին միասին վեցրած:

Ընկույզը հարուստ է չհագեցած թթուներով, որոնք մեծ չափով նպաստում են սրտի եւ լյարդի անոթների ու լեղուղիների նորմալ աշխատանքին: Ընկույզը պարունակում է նաեւ մեծ քանակությամբ վիտամիններ:

Արեւքույրիկը (զվերաբոյ) որպես դեղաբույս, մարդկությանը հայտնի է դեռ շատ հին ժամանակներից: Իր բուժիչ հատկությունների շնորհիվ այն լայն կիրառություն ունի գիտական եւ ժողովրդական բժշկության մեջ:

Արեւքույրիկը բազմամյա խոտաբույս է: Ամեն տարի նրա բարակ կոճղարմատից մի քանի ճյուղավորված ցողուններ են աճում: Տերեւները հակադիր են, առանց տերեւակոթերի նստած ցողունի վրա, ամբողջաեզր՝ եզրագծերի մոտ եւս կետերի պա-

ռունակությամբ: Ծաղիկը բարդ է, վառ դեղին գույնի, պտուղը՝ բազմասերմ, սերմերը մանր-մանր են, գորշ գույնի:

Ղարաբաղում արեւքուրիկը ծաղկում է մայիսից մինչեւ հուլիս ամիսը: Այս հրաշք դեղաբույսը աճում է մեր Ղարաբաղի բոլոր վայրերում: Նրան կարելի է հանդիպել մարգագետիններում, անտառի հատած տեղերում, թփերի արանքներում լեռների չոր լանջերին, ճանապարհների եզրերին, դաշտեզրի չմշակված հողերում եւ այլուր:

Արեւքուրիկի մթերումը կատարում են նրա ծաղկման ժամանակաշրջանում: Վերցնում են ամենաթարմ ճյուղերը՝ տերեւների ու ծաղիկների հետ միասին: Կարելի է վերցնել նաեւ ամբողջ ցողունը՝ հողից կտրելով 10-15 սմ բարձրության վրա:

Արեւքուրիկ խոտաբույսը պարունակում է մարդու եւ կենդանիների օրգանիզմների վրա ներգործող բազմազան նյութեր: Դրանցից մեկը հիպերիցինն է, որը կենդանիների մաշկում հատուկ լուսազգացողություն է առաջացնում: Այսպես, երբ սպիտակ գույնի կենդանիները արեւի տակ արածելիս խոտի հետ արեւքուրիկ են ուտում, նրանց մաշկածածկույթը ուռչում եւ բորբոքվում է: Կենդանիները սկսում են քորել բորբոքված տեղերը, ճանկռոտում ու վերքեր են առաջացնում: Ստվերում մաշկի քորը եւ բորբոքումը անհետանում է:

Արեւքուրիկի բաղադրության մեջ հայտնաբերված են հիպերոզիդ, կվերցետին, ռուտին, մեծ քանակությամբ կարոտին, մոտ 10 տոկոս դաբաղանյութեր, եթերային յուղեր, խեժանյութեր, խոլին, վիտամին, անտոցիան: Ացետոնի միջոցով այդ բույսից ստացվում է ֆենոլային միացություններ, որոնք վնասակար շատ բակտերիաներ են ստանում:

Արեւքուրիկի ջրային լուծույթը, (թուրմը) օգտագործում են որպես կծկեցնող եւ հականեխիչ միջոց աղիքային կատարի ժամանակ: Այդ նույն լուծույթով ողողում են բերանի խոռոչը եւ կոկորդը՝ նշված տեղերում լորձաթաղանթի բորբոքային հիվանդություններ լինելու դեպքում: Այս լուծույթի եւ 40 տոկոսանոց սպիրտի խառնուրդը օգտագործում են լնդերի բորբոքումը բուժելու համար:

Արեւքուրիկից ստացվում են հակաբակտերային պատրաստուկներ՝ իմանին եւ նովոիմանին, որոնք հաջողությամբ կիրառվում են արտաքին թարմ վերքերը, այրվածքները, խոցերը բուժելու ժամանակ: Այդ պատրաստուկները վաճառվում են դեղատներում: Միանգամայն վերջերս փորձերով հաստատվեց, որ ասկարիդների եւ սրատուտների դեմ ամենաարդյունավետ պայքարը արեւքուրիկով է կատարվում:

Անհիշելի ժամանակներից Լեռնային Ղարաբաղի բնակիչները զբաղվում են թթաբուծությամբ եւ պատահական չէ, որ թթենին դարձել է ղարաբաղցու կյանքի ուղեկիցը, նրա ամենամեծ հարստությունն ու ամենաիմաստուն բժիշկը ու նաեւ նրա տան ու տոհմի նահապետը: Թթենին այն ծառ-բարեկամն է, որ միշտ փրկել է մարդկանց սովից, ամենատարբեր հիվանդություններից ու մոր պես միշտ մնացել անշուք, մեծ ու բարի, գնահատված ու չգնահատված:

Այն, ինչ կատարում է թթենին, չի կարող կատարել ուրիշ ոչ մի ծառ: Ծաղկում է անշուք, աննկատելի, սակայն ամռան երկու երկար ամիսների ընթացքում անուշահամ պտուղ է տալիս մարդկանց: Հնում մարդիկ նրան կոչում էին կյանքի ծառ: Թթենին նաեւ հին աշխարհի բժշկության մեջ մի ամբողջ բուսական դեղատուն էր: Դրան գումարած, անփոխարինելի մետաքսի աղբյուր ու նաեւ՝ տնային գործածության կահ-կարասիի պատրաստման անփոխարինելի շինափայտ:

Թթենին, մեր հրաշք թթենին...

Դուք տեսե՞լ եք, թե ինչպես են զորացել նրանք ձորալանջերին, քարափների տակ ու քարափների վրա, հեղեղատներում, ի-

րենց արմատներով պահելով ժայռն ու հողը: Մեր պապերը չափազանց խելոք են վարվել, թթենին տնկելով այնպիսի տեղերում, որ բոլորովին պիտանի չէ ոչ արտի, ոչ խոտհարքի համար: Եղել են բացառություններ: Թթենին տնկել են ջրովի, հարթ հողահանդակներում: Նման դեպքերում այգու տերերը ամեն տարի պարտադիր կերպով երկու բերք են ստացել: Գարի են ցանել ծառերի տակ, եւ արտը սովորաբար տաս օր շուտ է հասել թթից: Հնձել են ու սկսել թթահավաքը: Իսկ եթե թթենիները մատղաշ են եղել, երկար տարիներ հողն օգտագործել են բանջարանոցի համար:

Այդպես սիրել, փայփայել են թթենին, թեեւ միշտ նրան բաժին է ընկել մեծ մասամբ քարն ու ապառաժը: Երբեւ չեն տվել ծառերին, նրան չեն խնամել, ինչպես խաղողի վազին, բայց եւ այնպես պաշտել են նրան: Թթենու տերերը սովորաբար թակի վրա փաթաթել են թաղիք, որպեսզի հարվածներից չվնասվեն ծառի ճյուղերը: Եվ այսպես, թթենին զորացել է մեր հովիտներում, տվել մետաքսի համար անփոխարինելի տերեւներ, անուշահամ սնունդ: Օղի, դոշաբ, չամիչ, իսկ ձմռան ցրտին՝ վառելափայտ:

Մարտակերտի շրջանի Թարթառ հովտի գյուղերից մեկը միջնադարում ուներ թթոտ անունը:

Թթենին երաշտադիմացկուն է եւ ամեն տարի պարտադիր կերպով պտղաբերում է: Պատահական չէ, որ այդ ծառի մասին ասում են՝ թթենու մեկ ծառը գյուղացու համար մի կթան կով է: Տարիներ շարունակ կազմվել են նաեւ թթենու ժողովրդական բժշկության դեղատոմսեր: Պարզվում է, որ թութը, դոշաբը, օղին բուժում են հետեւյալ հիվանդությունները. հազը, լուծը, երիկամների, ստամոքսի, աղիքների, լյարդի, սրտի, միզափամփուշտի, թոքախտի, ասթմայի, խոցային բորբոքումների, արյունահոսությունների, կոկորդի, բերանի բորբոքումների, ջրագողության, կոլիտի, դիզենտերիայի, անգինայի, մինչեւ անգամ աթերոսկլերոզի թարախազերծումները: Ընդհանրապես, թթենին բնաբուժության ասպարեզում մրցակից չունի: Այս ծառի մասին գովեստով են խոսել հին բժիշկներ Մխիթար Հերացին, Գրիգորիսը, Պանտալիոն բժիշկը, Ամիր Դովլաթը, Լողվանին եւ ուրիշներ:



Հայտնի է, որ երկար ժամանակ թթենու՝ այդ հրաշք ծառի բուսումն արգելված էր: Այն աճեցնում էին թագավորական պալատների պարտեզներում, գաղտնի հսկողության տակ, որովհետեւ թթենին մետաքսի արտադրության միակ աղբյուրն էր: Սակայն, որքան էլ գաղտնի կերպով պահեին այդ ծառը, այնուամենայնիվ, թթենին շարունակեց ճամփորդել աշխարհով մեկ: Աշխարհագրական բոլոր միջավայրերում չէ, որ նա կայարան է գտել:

Մեր թվարկության առաջին դարում թթենին արդեն համարվում էր մեր լեռնաշխարհի հնագույն բնակիչը: Պատմահայր Մովսես Խորենացին եւ աղվանից երկրի պատմիչ Մովսես Կաղանկատվացին հավաստի տեղեկություններ են հաղորդում թթաբուծության մասին, նշելով, որ մետաքսագործությունը խիստ զարգացած էր մեր լեռնաշխարհում: Բայց թողնենք պատմական այս էքսկուրսները, դիմենք մեր ժողովրդի հիշողությանը, հարցնենք, թե ինչ է տալիս թթենին, ինչու դարեր շարունակ ղարաբաղցին տուն շինելուց առաջ իր տան բակում նախ տնկել է թթենի, իսկ թե հեռացել է հայրենի հողից, հաճախ նա իր հետ տարել է ջահել թթենին:

Թթենին նաեւ ղարաբաղցու նման երկարակյաց ծառ է, նա ինչ-որ չափով խորհրդանշում է ղարաբաղցու աշխատասիրությունը, համեստությունը, մարդկանց ծառայելու բոլորանվեր ցանկությունը:

Մի ֆրանսիացի Պըլը Պուղուն հարցրել է, թե ո՞րն է ղարաբաղցիների երկար ապրելու գաղտնիքը, Պուղին պատասխանել է.

- Օղը, թութը, բահի կոթը:

ՀՐԱՇԱԳՈՐԾ ԽՆՁՈՐԸ

- Ա Պուղ, չաղանում եմ, ճար ունե՞ս տես,- մի օր խնդրեց Մելիք Շահնազարը:

- Խնձոր կեր,- Մելիք Շահնազար, թթու խնձոր:

Մի ամսից հետո Մելիքը մի բուռ մանր դրամ լցրեց Պուղու գրպանը:

- Սա ինչի՞ համար ա:

- Խնձորի, կերա ու բախակեցի:

Անցավ ժամանակ, Մելիքը նորից դիմեց Պըլը Պուղուն.

- Ա Պուղ, հիշողությունս կորել ա, ճար ունես, արա:

- Յանի ունեցե՞լ ես հիշողություն:

- Ադա, կարծեմ ունեցել եմ:

- Դե որ ունեցել ես, խնձոր կեր, կարմիր, անուշ խնձոր:

Մելիքն այս անգամ էլ առատ վարձատրեց Պուղուն:

Անցավ ժամանակ, Մելիքը էլի բողոքեց.

- Փորս գահ-գահ ցավում ա, ասես մեկը ներսից մախաթով ծակում ա, ի՞նչ անեմ:

- Տանձ ես կերել, խնձոր կեր, խնձոր:

Մի օր էլ Մելիքը Պուղու ականջին շշնջաց.

- Ա Պուղ, ես քեզ մատաղ, ճար ունես, տես, ուժս պակասում է, կարծես ծերանում եմ...

- Պահո՜, Մելիք Շահնազար... էդ օրն ես ընկե՞լ... խնձոր կեր, խնձոր կեր, որ ուժեղանաս:

Եվ իսկապես հրաշագործ խնձորն ամեն անգամ փրկեց Մելիքին:

- Ա Պուղ, մի հրաման արձակիր իմ անունից, որ Վարանդայում բոլոր մարդիկ խնձորի այգի տնկեն: Զարգար Հակոբին էլ ասա, թող մի ոսկի խաչ սարքի, անունը դնի՝ «Խնձորի խաչ», դնի Բովուրխանի գլխին: Թող մարդիկ դարեդար իմանան, որ խնձորը հրաշք դեղ ա:



Եվ կատարվեց Մելիքի հրամանը: Արցախ աշխարհի Վարանդա գավառում շատացան խնձորենու այգիները: Այնուհետեւ մարդիկ սկսեցին ապրել առողջ եւ երկար:

Հիմա էլ Արցախում մահամերձ հիվանդների համար խնձոր են տանում, հավատալով, որ եթե ուտի, կլավանա: Այդպիսինն է հրաշագործ խնձորը:

ԱՎԵԼՈՒԿԸ

Ավելուկը, որն առատորեն աճում է գետերի, առվակների, աղբյուրների եզրերին, մեծ տեղ ունի ղարաբաղցու սննդի մեջ: Ավելուկը եփում եւ ուտում են ինչպես թարմ, այնպես էլ չորացրած վիճակում: Այն անփոխարինելի է թե՛ որպես սնունդ, թե՛ որպես դեղ:

Ավելուկը բուժում է գլխացավը, փորացավը, արյունահոսությունը, փորլուծությունը, բերանի խոցը, հազը:

Ավելուկը հում ծեծում են, դնում քաղցկեղի վերքի վրա եւ այն ունենում է իր բուժիչ ազդեցությունը:

ԸՆԿՈՒՅԶԸ

Ընկուզենին Ղարաբաղի անտառների զարդն է: Հսկա ծառերն ապրում են 300-400 տարի եւ պտղաբերում են առատ: Հաճախ մեկ ընկուզենին տալիս է 200 կգ ընկույզ: Ընկույզը փոխարինում է յուղին եւ օժտված է մի շարք բուժիչ հատկություններով: Մեկ կիլոգրամ ընկույզի միջուկը որպես սննդանյութ կարող է փոխարինել մեկական կիլոգրամ մսին, հացին, ձկանը, կարտոֆիլին, տանձին, մեկ լիտր կովի կաթին՝ միասին վերցրած:

Ընկույզը լավագույն դեղամիջոց է շաքարախտի դեմ: Չորացրած ընկույզն իր գոյությունը պահպանում է 5-6 տարի: Ընկույզը ժոգայի թշնամին է:

## ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԸ

Այս ծաղկի մասին այսպես են պատմում. ծանր հիվանդանում է Վաչագան թագավորի աղջիկը եւ ապարդյուն են անցնում ամեն ջանք ու միջոց:

Թագավորը մի պարկ ոսկի է խոստանում բուժողին: Այդ ժամանակ Չանաղչի գյուղից մի ծեր մարդ է գալիս եւ ծաղկով բուժում թագավորի աղջկան: Թագավորը մի պարկ ոսկի է տալիս նրան եւ խնդրում ցույց տալ այդ ծաղկի տեղը:

- Ահա դեղը,-ասում է իմաստունը եւ ցույց տալիս մի խոտաբույս:

- Թող այսուհետ այդ խոտաբույսը կոչվի արքայադուստր,- ասում է թագավորը:

Արքայադուստրը բուժում է լորձաթաղանթի բորբոքային հիվանդությունները: Նրա հյութը մարդու օրգանիզմում ուղղակի հրաշքներ է կատարում: Նա բուժում է փակ եւ բաց բոլոր տեսակի վերքերը:

Այս ծաղկի դեղատոմսում հատկապես նշված են կոկորդի, բերանի բորբոքումների, աղիքների, լյարդի, սրտի, միզափամփուշտի խոցերի բուժման մասին:

## ՍՈՒՆԿԸ

Մելիք Շահնազարը սունկ շատ էր սիրում: Նրանից անուշ էլ ի՞նչ կարող էր ուտել Վարանդայի տերը: Բայց այդ դմբոն չէր ճանաչում, չէր զանազանում թունավոր սնկերը անուշ, հյութալի սնկերից եւ մի անգամ, առանց Պուղու խորհրդի, կերավ ու թունավորվեց: Պիտի թողնեին մեռներ, բայց դե բժշկի պարտքը եւ Հիպոկրատի երդումը Պուղուն հուշեց փրկել նրան եւ փրկեց:

Հեշտ չփրկեց. նա դդումի սերմը աղեց, ջրի հետ խառնեց, ապա քացախով ձեթ եռացրեց, բողկը ծեծեց եւ ջուրը խմեցրեց, ապա թթու մածուն տվեց:

Սունկը տապակիր յուղով, մեջը գցելով տանձի չիր, կամ չոր թուզ եւ համեմիր կինձով կամ սամիթով: Երբ սունկ ես ուտում, գինի խմիր հետը:



## ԴԴՈՒՄ

Դդումը կամ կարկաժը ցանովի բույս է: Դեղնախտով հիվանդներին բուժում են դդումի հյութով: Չոր դդումի եփած միջուկից խմոր են անում, ուտեցնում հիվանդներին, իսկ հյութը քսում մարմինը, աչքերը:

Չոր դդումը ծակելով, նրա մեջ աղ են լցնում, 40 օր պահում մութ տեղ, հետո նրանից ստացվում է սեւ ներկ, որով ներկում են մազերը: Թարմ, կանաչ դդումը եթե եփես եւ ուտես, գլխացավդ կանցնի: Դդումը ազնվացնում է մարդու արյունը:

## ԵՂԻՆՋ

Եղինջը բանջարն է, այն՝որ կծում է, այն՝որ գարնանը քաղում եւ ուտում են հում: Լավ է գինու հետ: Հում բանջարը գինով ուժեղացնում է մարդուն, մաքրում է արյունը, ազնվացնում: Բանջարը սպանում է փորի ճճվին: Քիչ-քիչ կծեցնելով չոր ցավող ոտքերը եւ ձեռքերը, ցավն անցնում է: Երբ քթից արյուն է հոսում, բանջարի տերեւը եւ կանաչ ցողունը ծեծիր եւ դիր քթիդ, արյունը կկանգնի: Եթե չոր բանջարը աղես եւ մեղրով ուտես, կկապի փորլուծը:

Եթե թարմ բանջարը ձեթով դնես խոցի վրա, կլավանա: Եթե գարնանը բանջարը հում կամ տապակած ուտես, կանցնի թուլությունդ:

## ԲՈՂԿ

Սա ցանովի շաղգամն է: Բողկը ծակիր, մեջը լցրու նրա սերմից, ծեփիր խմորով եւ դիր մարմանդ կրակի մեջ, թող լավ եփի (խորովվի): Հետո նրա հյութը 3 օր խմիր հաց ուտելուց առաջ եւ կհալեցնի քարը: Բողկը լավ մանրիր եւ ձեթ լցրու վրա ու թող մնա մեկ օր եւ կեր. կբուժի քոսը, քորը, ցանը, մկնատամը, կլավանա մաշկը: Ասված է նաեւ, որ բողկը վնասում է ատամներին եւ խզում է ձայնը:

ՄԱՍՈՒՐ

Պըլը Պուղու մոտ մասուրը հրաշալի պտուղ է, որը կարելի է մաքրել եւ ուտել, անուշահամ հյութեր եւ գինի սարքել:

Մասուրի հյութը բուժում է ջերմը, մաքրում է աղիքները: Թույլ, հյուծված մարդիկ օրական մի բաժակ մասուրի հյութ խմելով, կվերականգնեն իրենց կորցրած առողջությունը: Մրսածի համար օգուտ է մասուրի թեյը: Մասուրի միջուկը մաքրել, եփել ջոր հացի հետ եւ ուտել որպես ապուր: Դա սնունդ է եւ դեղ բազում հիվանդությունների համար:

ԹԱԳԱՎՈՐԱՊՍԱԿ

Սա բոլորովին էլ իր անվան նման չէ, այլ խոտ է հասարակ՝ նման կորնգանի: Մեզ մոտ՝ Ղարաբաղում, նա ոչ թե թագավորապսակ է, այլ՝ իշակորնգան: Այս բույսն ունի միսը թարմ պահելու զարմանալի հատկություն: Նույնիսկ ամռան տապին, եթե միսը դնես թագավորապսակի մեջ, չի հոտի:

Ասում են՝ արեւելքի մեծ թագավորներից մեկը զոհվել է Արցախում: Նրա դիակը լավ պահպանելու համար դագաղը լցրել են իշակորնգանով: Այդպես, իշակորնգանը դարձել է պսակ՝ անփառունակ թագավորի համար:

Հիշենք եւ ճանաչենք թագավորապսակը:

ՍԽՏՈՐԸ

Սխտորը շատ հիվանդություններ է բուժում: Նրանից փախչում են օձերը, ճանճերը, միջատները: Եթե դուք արյան ճնշում ունեք, սխտորը ծեծեք եւ կերեք մեղրի հետ, ճնշումը կանցնի: Եթե ստամոքսի խոց ունեք, նույնը արեք: Եթե ունեք զանազան ուռուցքներ, նույնը արեք: Սխտորը լավ է նաեւ, երբ մածունով ես ուտում: Այդ դեպքում մածունը կտրում է նրա սուր հոտը: Ամռանը սխտորը քսեք ոտներիդ, եւ օձերը կփախչեն ձեզանից: Սխտորը դիր մսի մեջ եւ նա չի հոտի:



ՄԱՏՈՒՏԱԿ

Աճում է գետերի հովիտներում: Օգտագործում են կոճղարմատը: Լավ է արմատը հանել գարնանը եւ չորացնել: Չորացրած մատուտակի արմատը 5-6 տարի պաշտպանում է բուժիչ հատկությունը: Օգտագործում են դիզենտերիայի բուժման նպատակով: Լավ է նաեւ արյունահոսությունների, ամորձագրգռողության դեմ: Օգտագործել կոճղարմատի եփուկը քիչ-քիչ, օրը 3 անգամ:

ԱՐՋԸՆԿՈՒՅԶ

Ծաղիկները սպիտակ են, պտուղը փշոտ եւ ունի թմրեցնող հատկություն: Արջընկույզի եփուկը հանգստացնում է երիկամների, նյարդերի, հոդերի, ստամոքսի ցավերը: Այս բույսի տերեւներն ու ծաղիկները հավաքում են հուլիսին, իսկ պտուղները՝ հոկտեմբերին: Կպչող մոլախոտ է, հալածվում է մարդկանց կողմից, մինչդեռ ինքը հանգստացնում է տարբեր ցավերից տառապողներին:

ՉԻՉԽԱՆ

Չիչխանը լափուխն է, այսինքն՝ դափնին: Բայց փշոտ այս թփից ի՞նչ դափնի: Այս անունը նա ստացել է իր հրաշապատում պտուղների համար: Չիչխանի պտուղները ուշ են հասունանում նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները նրա պտուղների հավաքման լավագույն շրջանն են: Չիչխանի պտուղներն ունեն ցավը մեղմացնելու, հանգստացնելու հատկություն: Չիչխանի պտուղներից ստացվող ճարպը բուժում է այրվածքը, ցրտահարությունը, էկզեման, աչքի ցավը, ստամոքսի խոցը, ակտիվացնում է սեռական օրգանները: Բուժիչ են նաեւ չիչխանի տերեւները, հատկապես՝ ռեւմատիզմի համար: Չիչխանի պտղայուղով բուժում են նաեւ մազերը, օգտագործելով ճաղատանալու դեմ:

ՆԱՐԳԻԶ

Այս ծաղիկը ծաղկում է հունիսին, պտղաբերում է հոկտեմբերին: Որպես դեղամիջոց հավաքում են ծաղիկները: Նարգիզի եփուկը գլխի թեփը անցկացնելու հատկություն ունի: Եփուկը խառնել կտավհատի ձեթի հետ, թողնել հովանա: Կարելի է քսել նաեւ կոշտ ու ցոր մաշկը: Նարգիզի յուղը բուժում է այրվածքը, թարախային վերքը: Նրա հումքը դնել 90 աստիճանի սպիրտի մեջ եւ այդ սպիրտով շփել մարմնի ցոր ցավող տեղերը: Նարգիզը բուժում է նաեւ գրիպը: Նարգիզի ծաղիկները տալիս են կարմիր ներկ:

ՆՈՒՌ

Նուռը (շահենին) տալիս է ընտիր գինի: Նրա կեղեւի եփուկը բուժում է լուծը, իսկ նռան հատիկները՝ շաքարախտը: Նռան հատիկները ծեծել, այծի ճրագուի հետ խառնել եւ դնել խոցի վրա եւ խոցը կլավանա: Այդ նույնը արա ականջի ցավի համար: Թթու նուռը կտրում է ջերմը, սպանում է փորի ճիճուն, ուժեղացնում է մարդուն:

ԹԶԵՆԻ

Դրախտի առաջին ծառն է, որի տերեւներով Ադամն ու Եվան ծածկեցին իրենց մերկությունը: Թուզը շատ երկրներում չի բուսնում: Սուրբ գրքում թզենին հիշվում է խաղողի հետ միասին, եւ տունկը նույնպես կատարվում է ոչ թե սերմերով, այլ ոստով: Թուզը ստամոքսը կակղ է պահում: Եթե միսը ուշ է եփում, թզենու մի տերեւ գցիր կաթսան: Թզենու կաթնուկը բուժում է գորտնուկը: Կանաչ (խակ) թուզը գցելով գինու կարասի մեջ, բերանը պինդ փակիր: Հետո երբ բացես, եւ թուզն անուշ կլինի, եւ գինին: Ոչխարի կաթը շատացնելու համար նրան տուր թզենու տերեւ: Թուզը ցորացրու արեւի տակ եւ պահիր ձմռան համար:



ՈՒՌԵՆԻ

Այս նազուն, գեղեցիկ, բայց վշտահար ծառը, շատ իմաստունների ուշադրությունն է գրավել: Հին իմաստուններն ասում են, որ եթե ուռենու տերեւներով ծածկես երեխային, ապա տաքությունը կանցնի: Ուռենու արմատը, ծաղիկը եւ տերեւը եթե ծեծես ու ջուրը խմես, ապա հիվանդը կլավանա: Դըր Դուղին հիշեցնում է, որ այս ծառի անունով է կոչվում մեր հին վանքերից մեկը՝ Ուռեկա (Հոռեկա) վանքը:

ՀԱՄԱՄ

Սա մի բույս է, որ աճում է խոնավ հողերում: Համամ անունը ստացվել է Հայոց Արեւելից կողմանց թագավոր Համամի անունից: Համամը լավ է գլխացավի համար: Նրա եփուկը օգուտ է մրսածի, փորացավի, աղիքային խոցերի բուժման համար: Այս բույսի առավելությունը գտնվում է ամենից առաջ նրանում, որ բուժում է ուշագնացությունը, վերականգնում հիշողությունը:

ԲԱՆԳԻ

Բանգին կանեփն է: Այս բույսը, բացի բուժական հատկանիշներից, տալիս է ընտիր եւ ամուր թել: Բանգին բուժում է գլխացավը, կտրում է կծուն, աղուն, բուժում է ցրտահարությունը, ստամոքսի խոցը, մաքրում է արյունը: Բանգին ուժեղ դեղ լինելով, նաեւ վնասակար է: Առանց բժշկի չի կարելի բուժման նպատակով օգտագործել բանգին:

ՕՇԻՆԴՐ

Օշինդրը ծեծիր եւ կեր մեղրով, կանցնի գլխացավդ, կսպանի փորի ճիճուն, եթե գինին խմես, չես հարբի: Գինին երկար պահելու համար, գինով լի կարասում քաթանի մեջ փաթաթած

չոր օշինդր են գցում: Օշինդրի եփուկը ուժեղացնում է ներկը. դրա համար մատենագիրները թանաքի հետ խառնում են օշինդրի հյութը: Օշինդրի ծուխը սպանում է միջատներին, եւ սողունները հեռու են փախչում նրանից: Գինու մեջ օշինդրի եւ մեղրի եփած հյութը օգնում է կակազողներին:

## ԲՈԳԻ

Աճում է լեռներում, ծաղկում է օգոստոսին, այդ ժամանակ էլ քաղում ու չորացնում են ստվերում: Չոր վիճակում իր բուժիչ հատկանիշը պահում է 2 տարի: Բոգին տալիս է առողջարար թեյ, իջեցնում է բարձր ջերմությունը, բուժում է սրտի թուլությունը, նպաստում է շնչառությանը: Բոգին բուժում է գրիպը: Եփուկը պատրաստել 3-4 ծաղկից, մինչեւ թեյի պես եռա ջուրը: Այնուհետեւ օրը 3 անգամ մի բաժակ խմել մեղրով:

## ԳԱՌԱՆ ԴՄԱԿ

Աճում է քարերի մեջ, հին շենքերի պատերի ճեղքերում: Ունի մանր դեղին ծաղիկներ եւ հաստ ու գառան դմակի պես գոդուն: Լավ է օգտագործել կանաչ վիճակում: Ցողունի հյութը կակղեցնում է մարդու մաշկը: Օգուտ է մազոլին, կոշտուկներին, բուժում է գորտնուկը:

## ՄԱՍՈՒՐԸ ՍՈՒՐՃԻ ԴԵՐՈՒՄ

Ձմռանը, երբ դուք գնում եք անտառ, փորձեցեք ուտել 5 կամ 10 հատ հասած մասուր: Անմիջապես ձեզ վրա գալիս է մի կայտառություն: Այդպես է, հասած մասուրը ուժ է տալիս մարդուն: Իսկ եթե տանը մասուրով թեյ խմեք, ապա կանցնի միզապարկի ցավը, կհեշտանա միզելու պրոցեսը, կանցնի գրիպը:



## ԳԱՐԻ ՀԱՑԻ ՈՒԺԸ

Մի մարդ ծերանում է, կինը մեռնում է, իսկ հարսը ուզում է, որ կեսրայրն էլ մեռնի, նրան սակավ հաց է տալիս: Իմաստուն ծերունին տեսնելով, որ հարսը նեղում է իրեն, սկսում է ինքն իրեն գանգատվել աստծուն, ասելով.

- Մեկը չկա հարսիս ասի գարի հաց տուր էդ պառավին, թո շուտ մեռնի:

Հարսը լսում է եւ սկսում նրան շատ գարի հաց տալ:

Անցնում է ժամանակ, ծերունու թշերը կարմրում են, քայլվածքը դառնում է շիտակ, աչքերը փլստրակին են տալիս:

Ծերունին իր գյուտի վրա ժպտում է եւ ասում.

- Գարին էդպես ա, քավթառ էշն էլ որ ուտում է, ձիու հանգա յոր օնում:

## ԳԻՆԻՆ ՈՒ ՄԵՂՐԸ ՈՐՊԵՍ ԲԱԼԱՍԱՆ

Հնում զորավարները պատերազմի դաշտ են տարել կարասներով գինի եւ խեցեղեն ամաններում մեղր: Կռվի դաշտում վիրավորներին գինի են խմեցրել, իսկ վերքերի վրա մեղր են դրել ու կապել: Գինին ու մեղրը բուժել են մարդկանց: Հիմա էլ կտրված վերքի վրա մեղր են լցնում ու կապում: Մեղրով կապած վերքը լավանում է արագ:

## ՄԵՂՐՈՎ ԹԵՅԸ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՂ

Հիշողությունը վերականգնելու համար պետք չէ դեղամիջոցներ փնտրել: Եթե դուք ամեն օր առավոտյան ճաշից հետո մի բաժակ թեյ խմեք մեղրով, ձեր հիշողությունը կդառնա գերազանց:

## ՄԵՂՐԸ ԳԻՇԵՐԱՄԻԶԻ ԴԵՄ

Շատ երեխաներ գիշերը միզում են անկողնում, ստեղծելով տհաճ վիճակ: Մեծանալով, դա արատ է դառնում նրանց համար: Որպեսզի խուսափեն մայրերը այդ վիճակից, պետք է շատ փոքրուց երեխաներին քնելուց առաջ մի փոքր բաժակ մեղրով թեյ տան, կամ էլ մի թեյի գդալ մեղր տան: Այդպիսով, կկանխեն միզելու սովորությունը:

## ՈՒՌԵՆԻՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՄ

Պարզվում է, որ ուռենին կարող է մարդկանց օգնել, վերացնել նրանց հիվանդությունները, կազդուրել նրանց, եթե մարդը խելքով վարվի նրա հետ: Մարդու աղիքային որդերը կոչնչանան, եթե ուռենու կանաչ կեղեւը չորացնես, աղես եւ փոշին լուծելով ջրի մեջ, խմես:

Այս ձեւով ուռենու կեղեւի չորացրած փոշին բուժում է նաեւ դեղնախտը:

## ԱՉՔԱՑԱՎԻ ԴԵՊՔՈՒՄ

Աչքացավով հիվանդանում են ամեն հասակում: Եթե հիվանդը երեխա է, պետք է մոր կաթով սրբել աչքերը, կաթեցնել աչքի մեջ, իսկ եթե հիվանդը մեծ է, պետք է սեզնի մուգ թեյով լվանալ աչքերը: Լավ օգնում է նաեւ այծի կաթը եւ արաժանը:

## ԹՈՒՂԸ ՄՐՍԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Թուզը հրաշալի դեղամիջոց է մրսածության դեմ, որը իր հետ բերում է մի քանի հիվանդություններ: Երեք հասած թուզը եփես եւ ջուրը խմես, մրսածությունդ կանցնի:



## ՀՈՆԸ ՋԵՐՄԻ ԴԵՄ

Եթե ջերմող մարդը հասած հոնի կաթուկ ուտի, ջերմը կանցնի: Եթե չորացրած հոնը թրջոց դնես եւ ուտես, ջերմը կանցնի:

## ՍԱՌԸ ՋՈՒՐԸ ՋԵՐՄԻ ԴԵՄ

Առաջներում ջերմող մարդկանց լողացրել են ցուրտ ջրի մեջ եւ ջերմը անցել է: Սակայն շատ քչերն են գնում այդ ռիսկին: Դողացող մարդուն դժվար է համոզել մտնել սառը ջրի մեջ, դրա համար էլ հոնի թթուն, հոնի մուրաբան, հոնի կամպոտը լավագույն միջոցներն են ջերմը բուժելու համար:

## ԽՆՁՈՐԸ ԳԻՐԱՆԱԼՈՒ ԴԵՄ

Խնձորը չի թողնում, որ մարդ գիրանա: Հատկապես, գեղեցիկ կանայք գիրանալուց խիստ վախենում են, դրա համար էլ նորմալ չեն սնվում: Եթե ամեն օր ուտելուց առաջ մի բաժակ խնձորի մաքուր հյութ խմեն կամ թեկուզ մի խնձոր ուտեն, չեն գիրանա: Խնձորը գիրանալու թշնամին է:

## ԱԿԱՆՋԻ ՎՇՇՈՑԻ ԴԵՊՔՈՒՄ

Ականջի վշշոցը առաջանում է մրսածությունից, երբեմն էլ խուլ, ուժեղ ձայնից: Նման դեպքում պետք է ձվի դեղնուցը քսել տաք քեչայի վրա: Տաքանալուց անցնում է ականջի վշշոցը:

## ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Եթե ստամոքսային հիվանդությամբ երկար տարիներ տառապող մարդը մի ամառ շարունակ հասած թութ ուտի, իսկ հետո էլ ձմռանը ամեն օր մի բուռ չորացրած թթի չամիչ ուտի, նա լրիվ կբուժվի:

### ՍՏԱՄՈՔՍԻ ԽՈՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Լավագույն դեղը հացից առաջ 3-4 թեյի գդալ դոշաբ խմելն է: Դոշաբը հրաշագործ դեղ է: Այն կենդանություն ու ուժ է հաղորդում մարդուն:

### ԼՆԴԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հիվանդ լնդերը բուժելու համար հարկավոր է կաղնու միջուկը եւ կեղեւը դնել մի աման մաքուր ջրի մեջ, պահել այնքան, որ ջուրը իր գույնը փոխի: Հետո այդ ջրով ողողել բերանը որքան պետք է:

### ՄԱԶԱԹԱՓՄԱՆ ԴԵՄ ՀՐԱՇԱԼԻ ՄԻՋՈՑ

Սովորական եղինջի հասած սերմերը ծեծում են այնքան, մինչեւ նրանից յուղ է ստացվում: Հենց այդ յուղն էլ մազաթափման դեմ հրաշալի միջոց է:

### ԴԴՈՒՄԻ ԿՈՐԻԶԸ ԴԵՂԱՄԻՋՈՑ

Օրգանիզմում առաջացած որդերը ոչնչացնելու համար պետք է դդումի կորիզները մաքրել եւ ուտել: Կորիզը չպետք է կրակի վրա բովել, որովհետեւ կիսով չափ կորցնում է դիմադրողականությունը:

### ՄԵՂՐԱՋՈՒՐԸ

Օգտակար է առավոտյան քաղցած վիճակում մեղրաջուր խմելը: Լավ մաքրում է կուրծքը, թոքաթաղանթը, բուժում է փայծաղը, մանրացնում, տարալուծում է երիկամների ու միզապարկի քարերը, օրգանիզմից հեռացնում է թունավոր նյութերը: Նաեւ բարելավում է սեռական կարողությունը: Կոկորդը ողողելու դեպքում ներծծում է թարախապալարները, վերացնում նշագեղձերի բորբոքումը, ամրացնում է լնդերն ու ատամները, մաքրում է բերանի խոռոչի վերքերն ու խոցերը:

Մեղրաջուրը հագեցնում է ծարավը:



### ԼՈՒԾԻ ԴԵՄ

Լուծի դեպքում ա) 2 բաժակ եռաջուրը լցնել 1 թեյի գդալ չորացրած, մանրացրած օշինդրի վրա, 1-25 րոպե եփել, ապա 30 րոպե թողնել, որ թրմվի ու քամել: Ընդունել բաժակի մեկ քառորդ մասով, օրը 4 անգամ, ուտելուց առաջ, բ) 1 ճաշի գդալ գարին լցնել եռացրած ջրի մեջ, թրմել 5 ժամ: Այնուհետեւ թուրմը եռացնել 10 րոպե, քամել: Եփուկը խմել ճաշի գդալով, ուտելուց առաջ, գ) 1 բաժակ եռաջուրը լցնել 1 ճաշի գդալ ծմերուկի չորացրած, մանրացրած կեղեւի վրա, եփել 2 ժամ, հետո ընդունել՝ 0.5 բաժակ չափաբաժնով, օրը 3 անգամ, ուտելուց առաջ:

### ՇԱՔԱՐԱԽՏԻ ԴԵՄ

Շաքարախտի դեմ երկու շատ հասարակ ու արդյունավետ ժողովրդական միջոց.

ա) 12-15 հատ ընկույզի միջնապատերը 1 բաժակ ջրով եռացնել 10 րոպե: Ստացված հեղուկը բաժանել 3 մասի եւ խմել օրվա ընթացքում:

բ) 15 գ դափնետերեւների վրա լցնել 3 բաժակ եռաջուր եւ թրմել 3 ժամ: Ընդունել 150-ական մլ, օրը 3 անգամ:

Լավ օգնում է նաեւ կապույտ հապալասի տերեւների ու մասրենու ճյուղերի եփուկը:

ԳՈՐՏՆՈՒԿՆԵՐԻ ԴԵՄ

Գորտնուկների դեմ լավագույն միջոցը քացախաթթուն է: Պետք է ամեն երեկո, քնելուց առաջ, քացախաթթվի մեկ կաթիլ շատ զգուշորեն կաթեցնել յուրաքանչյուր գորտնուկի վրա: Չի թույլատրվում օգտագործել մեկ կաթիլից ավելի: Գորտնուկները մի քանի օրից կվերանան:

ԼԵՂԱՔԱՐԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Լյարդն ու լեղապարկը մաքրելու համար եւ լեղաքարային հիվանդությունների դեպքում խորհուրդ է տրվում. գազերը դուրս գալու համար 2լ հանքային ջուրը լցնել կաթսայի մեջ, ավելացնել 2 հատ կիտրոնի հյութ: Խմել օրը 2-3 անգամ մեծ կումերով: Անմիջապես պառկել աջ կողքի վրա՝ աջ ոտքը դեպի կուրծքը ծալած: Այդպես պառկել 20 րոպե: Մաքրման օրը խորհուրդ է տրվում ոչինչ չուտել:

ԲՐՈՆԽԻ ԴԵՊՔՈՒՄ

ա) Խոզի փորոտիքի ճարպը հալել թույլ կրակի վրա եւ օգտագործել տաք վիճակում:

բ) Սեւ բողկը քերել, մառլյայով քամել, խառնել մեղրի հետ, օգտագործել առավոտյան եւ երեկոյան ուտելուց առաջ:

գ) 300 գ մեղրի, կես բաժակ ջրի եւ մանր կտրտած հալվեի տերեւի խառնուրդը 2 ժամ թույլ կրակի վրա եփել, խառնելով փայտե գդալով: Պահել սառը տեղում: Օգտագործել օրը 3 անգամ, 1 ճաշի գդալ: Խորհուրդ է տրվում այս դեղամիջոցը օգտագործել նաեւ երեխաների թոքաբորբը բուժելու համար:

դ) Արդյունավետ է նաեւ եզան լեզվից պատրաստած հյութը՝ մեղրի հետ: Խառնուրդը 20 րոպե եփել մարմանդ կրակի վրա, ընդունել տաք վիճակում, օրը 3 անգամ, ուտելուց առաջ՝ 1-ական ճաշի գդալ:



ԱՏԱՄՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ատամները ամրացնելու համար պետք է սննդի մեջ ավելացնել աղացած, փոշացած ձվի կճեպ:

Օգտակար է նաեւ ծամել կիտրոնի, նարնջի ու մանդարինի կեղեւը: Ցիտրուսային այս պտուղների կեղեւը պարունակում է ատամների համար անհրաժեշտ ֆիտոցիտային նյութեր:

ՕԳՏՎԵՑԵՔ ԽԵՑԵՂԵՆ ԱՄԱՆՆԵՐԻՑ

Պարտադիր չէ, որ մարդուն շրջապատող բնակարանային իրերը լինեն շքեղ: Դրանք պետք է ընտրել՝ ըստ անհրաժեշտության եւ հավուր պատշաճի: Կահ-կարասին օգտակար լինելուց բացի, պետք է նաեւ դրական հույզեր առաջացնի: Հասարակ, սակայն սիրելի մթնոլորտ ստեղծել տանը: Օրինակ, խեցեղեն իրերը հրաշալի թալիսմաններ են, որոնց ներքին էներգետիկայով է պայմանավորվում բնակարանի ներդաշնակ մթնոլորտը:

ՌԵՎՄԱՏԻԶՄԻ ԴԵՄ

Ռեւմատիզմի դեմ հնագույն միջոցներից մեկը հետեւյալն է. շշի մեջ լցնել 4 ճաշի գդալ հալած մեղր, 1 ճաշի գդալ խնձորի քացախ, դնել անտառային մեծ, կարմիր մրջյունների բնում: Երբ շիշը մինչեւ կիսով չափ կամ մի քիչ ավելի կլցվի մրջյուններով, բերանը ամուր փակել: Տանը, շշի մեջ լցնել 70-80° C տաք ձեթ եւ թրմել 12 օր, մութ տեղում: Այնուհետեւ, պարունակությունը քամելով, քսել ցավոտ տեղերին եւ փաթաթել բրդյա շորով:

ԼՆԴԵՐՔԸ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Արնահոսող լնդերը ամրացնելու եւ բերանի վատ հոտը վերացնելու համար 2 ճաշի գդալ բուսական յուղը (ցանկալի է ձիթապտղի) խառնել 1 թեյի գդալ աղի հետ: Այդ խառնուրդով բերանը ողողել 3-5 րոպե, օրը 2 անգամ՝ առավոտյան ու երեկոյան: Ողողումից հետո կես ժամ չուտել եւ չխմել: Շարունակել մինչեւ լրիվ բուժումը:

ՎԱՌՎՈՂ ՄՈՄԸ ԵՎ ՀՈՍՈՂ ՋՈՒՐԸ

Մղձավանջային երազից թոթափելու համար պետք է երազը պատմել վառվող մոմին կամ հոսող ջրին: Այդպիսով, վերանում է ներքին տագնապը: Իսկ որպեսզի տիրած երազը երբեւէ չիրականանա, ըստ ժողովրդական հավատալիքի, այն պետք է պատմել հոսող ջրին, սեփական սարսափի վերաբերյալ ողջ տեղեկատվությամբ ջրի միջոցով վերացնելու համար:

ՍԽՏՈՐԱՋՈՒՐԸ

150-200 գ սխտորը մանրել, 1 ճաշի գդալ աղի հետ լցնել 200 մլ եռացրած ու սառեցրած ջրի մեջ, խառնել: Սխտորաջուրն ավելացնել օրվա ընթացքում օգտագործվող պինդ եւ հեղուկ ուտեստներին: Սխտորաջուրը օրգանիզմի մաքրող եւ ախտահանող լավագույն միջոցներից է:

ԿԻՏՐՈՆՆ ՈՒ ՄԵՂՐԸ

1 կիտրոնը եփել ջրում, քամել ամանի մեջ, վրան ավելացնել մեղր եւ 1 թեյի գդալ բժշկական գլիցերին: Անչափ օգտակար է բրոնխները մաքրելու, հազը վերացնելու համար:



ԵՐԵՍԻ ՄԱԶԱԿԱԼՄԱՆ ԴԵՄ

Դեմքից եւ մարմնի այլ մասերից մազերի հեռացման միջոց. ընկույզի կեղեւը այրել, մոխիրը լուծել ջրում եւ այդ հեղուկով շփել ավելորդ մազերով ծածկված մաշկի հատվածները: Դրական արդյունքի համար բուժումը կատարել հաճախակի:

ՎԱՌՎՈՂ ՄՈՄԻ ԿԱԽԱՐԴԻՉ ՈՒԺԸ

Յոգեկան խռովքի, խոր վիրավորվածության, անքնության ղեպքում պետք է առանձնանալ եւ մոմ վառել (ցանկալի է՝ եկեղեցական մոմ): Ուշադիր նայելով այրվող մոմին, անշտապ եւ շշուկով պետք է պատմել սեփական ցավի մասին: Իսկ եթե լաց լինելու ցանկություն է առաջանում, ապա պետք է լաց լինել: Մոմի թրթռացող բոցը հանգստացնելու հատկություն ունի, իսկ նրա հալվելուն զուգընթաց, անհետանում է ցավն ու վիրավորանքը:

ԱՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Անքնության դեպքում առաջարկվում է. կարմիր գինու մեջ, մարմանդ կրակի վրա եփել սամիթի սերմ եւ, որպես քնաբեր, ըմպել երեկոյան: Խորհուրդ է տրվում ընդունել նաև մեղրի, գինու եւ օշինդրի խառնուրդ: Մշտապես անքնությամբ տառապողներին խորհուրդ է տրվում քնել սեւ գույնի անկողնային պիտույքների մեջ, ինչը գերազանց արդյունք է տալիս:

ԱՅՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Այրվածքների դեպքում անմիջապես հարկավոր է վնասվածքի վրա քսել խմորի սոդայի եւ ձեթի խառնուրդ: Իսկ եռացրած ջրով այրվածքների դեպքում պետք է մաշկի վնասված մասերի եւ առաջացած բշտիկների վրա դնել մգի թրջոցներ:

## ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆ

Հրաշալի միջոց է սրտի բուժման, օրգանիզմի դիմադրողականության եւ տոնուսի բարձրացման համար:

Վերցնել 350 մլ կարմիր գինի, 150 մլ հալվեի հյութ, 250 գ մեղր: Հալվեի տերեւները մանրացնել, հյութը մզել եւ խառնել նշված նյութերին: Ընդունել օրը 3 անգամ, ուտելուց 30 րոպե առաջ, մեկական ճաշի գդալ:

## ԿԱՎԱՋՈՒՐԸ ՇԱՔԱՐԱԽՏԻ ԴԵՄ

Շաքարախտով հիվանդները պետք է ամեն օր խմեն մի քանի կում կավաջուր: Թափանցիկ շշի մեջ ջուրը լցնել, ավելացնել 4-5 ճաշի գդալ կավափոշի եւ բավական երկար պահել արեւի տակ: 2-3 օրում, 15-30 րոպեն մեկ, քիչ-քիչ խմել, ամեն անգամ շիշը թափահարելով: Պետք է խմել փոքր կումերով, բերանում հեղուկը մի քիչ պահելով:

## ԼԱՎ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տեսողության թուլացման դեպքում աչքերը պետք է վարժեցնել հետեւյալ կերպ. 1-2 րոպե հայացքը մի կետի վրա սեւեռելուց հետո ակնախնձորակները 30 րոպե պտտեցնել վերեւ-ներքեւ-աջ -ձախ: Վարժությունները պետք է կատարել ամեն օր:

Կարելի է նաեւ լվացվելիս սառը ջուրը բռերով շփել աչքերին: Սա ակտիվացնում է արյան շրջանառությունը:

## ՓՌՇՏՈՑԸ

Փռշտոցը առողջություն է:

Փռշտալու համար բռնոթի են «քաշում» քթանցքներով:

Բռնոթին պահում են հատուկ սրվակի կամ եղեգի մեջ, կամ էլ ուղղակի փոքրիկ քսակ են պահում դրա համար, որը կոչվում է քիսա:



## ՄԱԶԱԹԱՓՄԱՆ ԴԵՄ

Բուժիչ հեղուկ մազաթափության դեմ, որ նաեւ շեկ երանգ է տալիս մազերին: Կաղնու կեղեւը, գլուխ սոխի կճեպը հավասար չափով խառնել, մանրացնել: 1 բաժակ խառնուրդի վրա լցնել 1 լիտր եռաջուր եւ 1 ժամ պահել մարմանդ կրակի վրա: Ապա վերցնել կրակից, սառեցնել: Այս հեղուկով թրջում են մազերը, կապում տաք գլխաշոր եւ մեկ ժամից հետո, չորացնում առանց սրբիչի (ֆենով կամ սանրելով):

## ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տեսողությունը լավացնելու եւ կարճատեսությունը կանխելու վարժություն. ձեռքը պարզած վիճակում պահել վառվող մոմը եւ դեմքի շուրջ պտտել ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ: Վարժանքը պետք է կատարել 15-20 օր՝ աչքերով հետեւելով մոմի շարժմանը:

## ԽՆՁՈՐԻ ՔԱՑԱԽԸ

Խնձորի քացախը ոչ միայն սննդամթերք է, այլ նաեւ՝ բուժամիջոց: Այն օգտագործվում է իբրեւ դիետիկ սնունդ: Շատ օգտակար է տարբեր հիվանդությունների դեպքում:

Օրինակ՝ խորհուրդ է տրվում, գիրանալու դեմ օգտագործել հետեւյալ խառնուրդը. 1 բաժակ ջրին խառնել 2 թեյի գդալ խնձորի քացախ եւ խմել ամեն օր՝ առավոտյան:

Ցանկալի արդյունք կլինի մոտ 2 ամիս հետո:

## ՉԱՂՈՒԹՅԱՆ ԴԵՂԸ

Աշխատիր դաշտում, այգում, տանը:

Վազիր:

Խնձոր կեր:

Աշխատիր կուշտ չուտել:

### ԳԼԽԱՑԱՎ

Եթե մազերիդ մեջ օձի հալավ դնես,
Գլուխդ չի ցավի:

Եթե տաք ջրով լվանաս գլուխդ, չի ցավի:

Եթե ավելուկ ուտես կամ նրա ջուրը խմես, գլուխդ չի ցավի:

Եթե մասուրի թեյ խմես, գլուխդ չի ցավի:

Եթե ճակատդ լաչակով պինդ կապես, պառկես հարթ հատակին, ոտներդ գլխից մի քիչ բարձր պահես, գլխիդ ցավը կանցնի:

### ՓՈՐԱՑԱՎ

Եթե հաճախակի է ցավում, պետք է ուղտի բրդից գոտի գործել եւ կապել:

Ոչխարի անլվա բուրդը մդեկել բամբակի կտորի վրա եւ կապել փորը:

Գինին եփել, մեջը պղպեղ գցել ու խմել:

Պորտը վեր քաշել:

Տաք մոխիրը հունցել, «մոխրածոծ» անել եւ դնել փորին:

Ուրցի թեյ խմել:

Օղով մերսում անել:

Քացախ քսել:

Այս բոլորը մի կողմ. Պուղին իր փորացավը թրի պես կտրում է մի բաժակ թթի օղով:

### ՉՈԲԱՆ

Չոբանը կամ ոլոռները սովորաբար լինում են մարդկանց «նեղ» տեղերում կռնատակին, վզին, ջեքին: Դրանք լինում են երկու տեսակի՝ էգ եւ որձ: Էգը իր ջուրջը ունենում է սպիտակ



քթով շատ բշտիկներ: Որձը մի հատ է լինում, մեծ, կարմիր: Սա թարախ գցելու փոխարեն արյունը իր մեջ, ասես, եփում է, թանձրանում պատճառելով ուժեղ ցավեր:

Չոբանը ծանր վերք է եւ միշտ սպի է թողնում:

Չոբանի վերքը բացելու, թարազերծելու համար կաղամբի, մոշի եւ կերտնակոռնի թեւեր են դնում:

Խմորը մեղր կամ դոշաբ են քսում ու դնում վրան:

### ՋԵՐՄ

Եթե ջերմողը հոնի կոթուկ ուտի, ջերմը կանցնի:

Եթե ջերմի ժամանակ մտնի ցուրտ ջրի մեջ, ջերմը կանցնի:

Եթե «սարի չայ» խմի, ջերմը կանցնի:

Եթե մասուրի թթու ուտի, ջերմը կանցնի:

Եթե ջերմելիս մի բաժակ թթի օղի խմի, ջերմը կանցնի:

### ԱՉՔԱՑԱՎ

Լվանում են մուգ թեյով:

Կաթ են քսում:

Մայրերը իրենց կաթը քսում են երեխաների աչքերը:

Քերթ գյուղի մոտ գտնվող սրբավայրերից կավահող են վերցնում եւ քսում կոպերը: Մայրերի կաթով լվանում են աչքերը:

Ծոծրակից արյուն են առնում:

Խուսափում են արեւին նայելուց:

### ԱՏԱՄՆԱՑԱՎ

Ցավող ատամը հանում են: Ցավող եւ շարժվող ատամը ամուր թելով կապում են եւ միանգամից քաշում: Հանում են նաեւ ղալլաքները:

Ցավը մեղմելու համար ծխում են եւ ծուխը պահում բերանում:

Մի կում օղի են լցնում բերանը եւ պահում:

Ջոր ուրց են ծամում:

Խոզի չհալած ճարպ են դնում ցավող ատամի վրա:

Կաղնի ծառի միջուկը դնում են ջրի մեջ, մինչեւ գույն ստանա, հետո այդ ջրով ողողում են բերանը:

## ԱԿԱՆՋԱՑԱՎ

Ձեթ են կաթեցնում ցավող ականջի մեջ:

Բամբակ են դնում:

Խորոված սոխի հյութի մեջ թաթախում են բամբակը եւ դնում ականջի մեջ:

Երկնաքարի աչքով խաչը դնում են ջրի մեջ, մի օրից հետո այդ ջրով լվանում ականջը:

Բամբակը թաթախում են ձեթի եւ օղու մեջ, մզում են, դնում վրա:

Մի տափակ եւ կլոր գետնաքար են վերցնում, տափակը դնում են ցավող ականջի վրա, կլորով խփում նրան:

Այդ ձեւով մաքրվում է ականջի մեջ գտնվող թարախը, կեղտը:

## ԱՅՐՎԱԾՔ

Օփում են սառը ջրով:

Հում կարտոֆիլը ծեծում կամ բարակ շերտերով կտրում են դանակով, դնում այրված տեղի վրա ու կապում: Ձեթ են քսում:

Վերքը չորացնելու համար բոված լոբին աղում են, մաղում, փոշին ցանում վերքի վրա:

Ձեթը եփում են մեղրամոմի հետ եւ դնում վերքի վրա:



## ԿՏՐՎԱԾՔ ԵՎ ՊԱՏՌՎԱԾՔ

Արյունը դադարեցնելու համար միզում են վերքի վրա:

Կապում են կտրված տեղից:

Փալասի մի կտոր են վառում եւ տաք մոխիրը՝ խանձիլը, դնում վրան:

Մեղրը լցնում են պատռված տեղը:

Օղով դաղում են:

## ԳՈՐՏՆՈՒԿ

Գլխավորապես լինում է ձեռքերի, մատների վրա՝ թողնելով տհաճ տպավորություն:

Գորտնուկը կանցնի, եթե «վայր»-ը գտնես ու արմատից պինդ կապես այնպես, որ նա չորանա:

Դանակով կտրել եւ թզենու կաթնուկ քսել:

Կտրել եւ «էշի կաթնուկ» կոչվող բույսի հյութ կաթեցնել վրան:

Դաղել կրակով:

Ուխտ են գնում Տոնավարզ գյուղի գորտնուկախաչին: Նրա տակից հող են վերցնում, ցեխ անում, դնում վրան:

Երբ լուսինը նորում է, գորտնուկ ունեցողը նայում է նրան եւ ասում,

- Լուսինը՝ նոր,

Գորտնուկը՝ չոր:

## ԹՈՔԱԽՏ

Այս սարսափելի հիվանդությամբ տառապում էր Ջուջեցի մի հարուստ մարդ: Նա յուղ ու մեղր էր ուտում, խորոված ու դոլմա, բայց հիվանդությունը գնալով ավելի էր խորանում:

Չի օգնում անգամ ամենազորեղ դեղը՝ էշի կաթը, ոչ էլ շան թուլայի միսը:

Մարդը վեր է կենում, գնում աշխարհ-աշխարհ ման գալիս, մինչեւ Դավոս կոչվող քաղաքում մի իմաստուն բժիշկ է գտնում:

- Ինչքան փող, ոսկի ուզես, կտամ, միայն թե բուժես ինձ,- ասում է ջուջեցի հարուստ հայրը:

- Շատ լավ,- համաձայնվում է բժիշկը: Հենց որ իմանում է, որ հիվանդը ղարաբաղցի է, ասում է.

- Այ մարդ, քո ցավի դեղը հենց քո հայրենիքում է: Գնա Ղարաբաղ, ամեն օր քնելուց առաջ ջրակուտեմ կեր: Հենց քնեցիր, բերանիդ ջուրը կգնա: Ամեն օր բարձիդ երեսը փոխիր: Առավոտները յուղ ու մեղր կեր, քնելուց առաջ ջրակուտեմ: Այսպես ամեն օր սրտիդ «ջրերը» կքամվեն, կգնան, իրենց հետ տանելով հիվանդության միկրոբները, եւ դու կառողջանաս: Հիվանդը լսում ու զարմանում է, իսկ բժիշկը շարունակում է իր խոսքը:

- Այդ հիվանդությունը նոր է մտել ձեր երկիրը, առաջներում չկար, քանի որ, ինչպես վկայում է ձեր իմաստուն Պըլը Պուղին, Ղարաբաղում առաջներում մարդ չկար, որ ջրակուտեմ չուտեր: Կատարելով բժշկի խորհուրդը, ջուջեցի մեծահարուստ հիվանդը վերադառնում է Ղարաբաղ եւ բուժվում հրաշք դեղերով՝ ջրակուտեմով ու դեռ ինքն էլ իր հերթին, իր փորձով բուժում է շատ մարդկանց:

ՀԱԶ

Կաթ են խմում:

Թերխաշ ձու են խմում:

Ավելուկը եփում են ու ջուր խմում:

Սոխը խորովում են, ուտում:

Դոշաբ են խմում:

Ուխտ են գնում Սարգսաշենի «Ըխտլահագի խաչ»-ին: Քարի վրա փոս կա, սրա մեջ էլ ջուր են լցնում եւ խմում, որից հետո հազը անցնում է:



ՄԱԶՈԼ

Մազոլը դառնում է հատկապես տղամարդկանց ձեռքի ափերը, կանանց ոտների կրունկները:

Մազոլը բուժելու համար այծի ճրագն տաքացնում են եւ կաթեցնում ճաքած տեղի վրա:

Կաթի սեր են քսում:

Քացախ են քսում:

Կտրում են դանակով:

Քերում են դանակով:

Ոմանք տներում պահում են չիչաքար, որով քերում են ոտների մազոլը:

ՄՈԼՈՔՈՐ

Մոլոքորով հիվանդանում են գլխավորապես երեխաները: Ամբողջ մարմինը ծածկվում է կարմիր փոքերով, որը ուղեկցվում է ուժեղ քորով:

Լողացնում են սառը ջրով, փաթաթում կարմիր շորի մեջ:

Այդ հիվանդությունը բուժելու համար գնալ գյունե Ճարտարի Դագաչիչակ աղբյուրը, ջուր խմել, լողանալ եւ կանցնի մորուքը:

ՔՈՍ

Անիծված հիվանդություն է: Ես՝ Պըլը Պուղիս, քանի-քանի՛ անգամ եմ ասել՝ աստված Մելիք Շահնազարին քոս տա, եղունգ չտա, որ քորի, ջանը դինջանա:

Բուժումը.

Կրաջրով լողացնել:

Օղին յուղի մեջ լուծել ու քսել ջանը:

Քոսը կանցնի, եթե քոսոտը լողանա Հյունոտ գյուղի մոտ

գտնվող ջրվեժի տակ: Ղարաբաղում կա Քոսեն աղբյուրը, որի ջրով լողանալով բուժվում է հիվանդը: Այդ աղբյուրը գտնվում է Մխտորաշենի հանդում:

### ՄԵՋՔԸ ԸՆԿՆԵԼ

Երբեմն մարդիկ, երեխաները, կանայք ծանր բեռ վերցնելիս, մեջքը ընկնում է: Մեջքը ընկնում է նաեւ թույլ-թույլ կռանալիս: Մեջքը ընկածի ոտները կապում են երկու փայտի արանքում: Ապա մեջքը ձգողը երկու ոտքով կանգնում է այդ փայտի վրա ու մեջքը դնում հիվանդի մեջքին, ձեռքերը գցում կռնատակերը ու ձգում: Տեղից շարժվող ոսկորը ընկնում է տեղը: Տաք մոխիրը հունցում են ու դնում ընկած տեղի վրա:

Աղը տաքացնում եւ կապում են ընկած տեղի վրա:

Ձեռքերի, ոտքերի դուրս ընկածը նույնպես ձգելով են տեղը գցում:

Բայց դա պիտի արջի պես չանել: Ղարաբաղում այդ հիվանդությունը լավ բուժում էր Մուշադիշենցի Կաքունց Մոսին:

### ԿՈՏՐՎԱԾՔ

Տարին բոլոր ոտքի, ձեռքի կոտրվածք ունեցող մարդկանց բուժում են սնղչիները: Բոլոր գյուղերը ունեն իրենց «բժիշկ» սնղչիները: Նրանք շոշափելով գտնում են կոտրված ոսկորները, դնում իրար վրա եւ կապում:

Վերքը փաթաթում են «յախու» գցելով: Դա պատրաստում են ձվի դեղնուցի, կրի եւ բամբակի խառնուրդից:

Այդ յուղատեսակ կոծիկը պնդում ու դառնում է կաղապար:

Ղարաբաղում հայտնի սնղչիներ են ղավախանեցի Ամիրբարը, կուսաքերոցի Սիմոնը, խերխանեցի Խանլարը:



### ՕՁԻ ԿԾԱԾԸ

Արագ ու պինդ կապում են, այնպես որ թույնը արյան հետ չմտնի երակների մեջ, ապա դանակով կտրում են կծած տեղը, ծծում ու թքում:

Հետո լվանում են մածնով եւ փաթաթում: Եթե այս ամենը ժամանակին չի արվում, հիվանդը մահանում է:

### ՄԱՏՆԱՇՈՒՆՉ

Մատներից մեկը սկսում է ուռչել եւ եթե բուժումը ժամանակին կամ ճիշտ չի կատարվում, ապա վերքը դառնում է մշտական: Մատը դնում են տաք ջրի, տաք կաթի, մածնի մեջ: Խմորը բաքմազ են քսում եւ դնում վերքի վրա: Մածունի մեջ գարու ալյուր են եփում եւ քսում մատը ու փաթաթում:

### ՄՐՍԱԾ ԵՎ ՑՈՒՐՏ ՏԱՐԱԾ

Ձյունի մեջ մնացած եւ ձեռքն ու ոտքը տարածին պառկեցնում են ցուրտ տեղը, ձյունով շփում են ձեռքերը, ոտները, երեսը: Այսպես կամաց-կամաց նրան ընտելացնում են տաքին: Ցրտահարվածին տալիս են խմելու սառը ջուր եւ սառույց՝ ուտելու համար: Հետո քրտնեցնում են, խմեցնելով թեյ (սարի չայ): Ոտները դնում են տաք ջրի մեջ: Քրտնելու համար ուրցը եփում են մի ամանի մեջ, դնում անկողնում: Հիվանդը իր դեմքով ծածկում է եռացած ուրցով լի ամանի բերանը եւ քրտնում:

### ԾԾԻ ՈՒՌՈՒՑՔ

Պատահում է (հաճախ երիտասարդ կանանց մոտ) ուռչում է ծիծը: Դրա բուժումը կատարում են կանայք, հազվագյուտ

դեպքում նաեւ դալլաքները՝ երբ հարկավոր է լինում կտրելով բացել վերքը: Կաթը գարի ալյուրի հետ եփում են, խմոր շինում, թաթախում մեղրի կամ բաքմազի մեջ, դնում ուռած տեղի վրա: Հասունացած վերքի վրա կաղամբի տերեւ են դնում:

Կերտնուկկոռն են դնում:

Մոշի տերեւ են դնում:

Եթե վերքը չի ծակվում, թթխմորի վրա քացախ են ածում ու դնում վրա: Եթե այս բոլորը չի օգնում եւ վերքի մեջ շարավը (վահրը) «եփել» , պնդել է, վերքը կտրում են դալլաքները՝ հատուկ սուր դանակով, որը նշտար է կոչվում: Շարավը դուրս բերելուց հետո վերքը կապում են՝ վրան ցանելով աղավնու չոր ծրտի փոշի: Ուխտ են գնում Հացի գյուղի Քոչեն խաչին, մոմ են վառում եւ խաչի մոտ գտնվող կավահողը լուծելով ջրում, լվանում են ծիծը:

ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ

Թունավորումը հաճախակի պատահող երեւույթներից մեկն է մարդկանց մեջ: Բոլոր թունավորումների առաջին տեղը մածունն ու թանն է: Տաք ջուր են խմում եւ հետ տալիս: Ձկից ցթունավորվելու համար սովորաբար գին են խմում: Դրա համար էլ Պըլը Պուղին ասում է.

- Ձուկը կերար, ջուր խմեցիր, վայ քո գլուխ:
Ձուկը կերար, գինին խմեցիր, վայ ձկան գլուխ...

ՄԻՋԱԿԱՊՈՒԹՅՈՒՆ

Փորի վրա ջրի մեջ թրջած բուրդ են դնում: Սեռական օրգանը դնում են գոլ կաթի մեջ: Ճինջեխ են ածում: Մտնում են տաք ջրի մեջ: Թեյ են խմում: Լանջի վրա պառկում են գլխավայր: Տաք ջուր են լցնում սեռական օրգանի վրա, մերսում անում:



ՑԱՎԱ

Այս սարսափելի վերքը, որ չի բուժվում, պատահում է մարդկանց եւ անասունների մոտ: Դա բաց վերք է, որը հաճախ լինում է մարդկանց դեմքի, ոտքի, կրծքի, հետույքի վրա: Վերքը կարմիր տեսք ունի: Այսպիսի վերքի վրա տզրուկն են կպցնում, որը դանդաղորեն ծծում է փուտ (վարակած) արյունը եւ թեթեւացնում ցավը:

ԺՈԳԱ

Խնձոր են ուտում:

Խնձորի հյութ են խմում:

Ժոգան թրի պես կտրելու հատկություն ունի ընկույզը:

ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաները հաճախակի են ունենում փորլուծություն, որը ուղեկցվում է ծակոցներով ու ոլորուն ցավերով:

Հոնի թթու են ուտում:

Մեղր են ուտում:

Դոշաբ են խմում:

Եփած կարտոֆիլ են ուտում:

Մուգ թեյ են խմում:

Մեծերը աշխատում են ոչինչ չուտելով:

Փորլուծության դեղը, որ թրի պես կտրում է, բոված չաթանն է: Այնքան ուժեղ է չաթանի դաշտային տատասկի բոված սերմերի ազդեցությունը, որ կարող է հակառակ պրոցես տեղի ունենալ: Նռան հյութ են խմում:

ԳՐԻՊ

Ուժեղ ցուրտը կտրում է գրիպը:
Քթանցքները օղի են քսում:
Ուրցի թեյ են խմում:
Սառը ջրով լվացվում են:
Ձյունով շփում են դեմքը:
Ձեռքերը շփում են օղիով, քսում երեսը:
Քթով սառը ջուր են ներս քաշում:
Յոնի թթու են ուտում:

ՄԿՆԱՏԱՄ

Մաշկի հիվանդություն է: Բուժումը կատարում են՝
կիրը լուծելով ձեթի կամ յուղի մեջ, քսում են մաշկը:
Կաղնու միջուկը եփում են, ջրով լվանում վերքը:
Քերթից բերած լուսահող են քսում:
Լողանում են սառը ջրով:

ՔԹԻՑ ԱՐՅՈՒՆ Է ԳԱԼԻՍ

Պառկում են գլխիվայր եւ մատներով պինդ փակում քթանցքները:

Սառը ջուր կամ սառույց են դնում քթի, երեսի, վզի վրա:

Եթե կնոջ քթից արյուն է գալիս, ձախ ծիծը պինդ կապում են:

Եթե տղամարդու քթից արյուն է գալիս, կապում են ամորձիքը:

Քթի տակ թանձր ծուխ են դնում:



ՅԱՎԿՈՒՐ

Քաշի սաղուզ կոչվող սեւ քարի (օքսիդանի) ապակու պես կտորը մուրճով փշրում են, աղում, փոշին խառնում ճաշի հետ եւ ուտում:

Ձկան յուղ են խմում:

Ամենից լավ էֆեկտը տալիս է տավարի թոքը:

ՄԱԶԵՐԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼ

Եթե աղջիկները ուզում են երկար մազեր ունենալ, գլուխը լվանում են անձրեւաջրով:

Լվանում են մոխրաջրով: Դրա համար մոխրի վրա ջուր են լցնում եւ պահում մի շաբաթ: Որից հետո մոխրաջուրը օճառի պես փրփրում է:

ԷԿԶԵՄԱ

Այս մաշկային հիվանդությունը հաճախ այլանդակում է ամենից գեղեցիկ տղաների եւ աղջիկների երեսները: Դրա բուժումը կատարվում է վեսե կոչվող բույսի յուղով: Այդ բույսը աճում է սարի մերկ, քարքարոտ լանջերին: Նրանից կազմած խարույկը նման է նավթի հրդեհի: Վառված բույսից մնում է թաց չանչերը: Յենց դրանից կաթող յուղն էլ լավագույն դեղ է էկզեմայի համար:

ՄԻԶԵԼԸ

Եթե մեկը քնած ժամանակ թրջում է տակը, այսինքն՝ միզում է, ապա նրան պետք է լողացնել, սեւ հավի արյունը խառնելով ջրի հետ:

## ՉԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄԸ

Եթե երիտասարդ ամուսինները երեխա չեն ունենում, նրանց բուժելու համար պետք է օձ սպանել այն պահին,երբ նա գորտ է ուզում կուլ տալ: Սպանված օձի եւ գորտի մաշկը չորացնել, զույգից թաքուն դնել նրանց բարձի մեջ:

Եթե երեխան ծնվում ու մահանում է որոշ ժամանակ անց, ապա նույն ձեւով օձի եւ գորտի չորացրած մաշկը դնում են երեխայի բարձի մեջ:

## ԾԱՂԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Հիվանդին առանձնացնում են, ապա ջրի ընկույզը ծեծում ու խառնում են մեղրամոմի հետ եւ մոմեր շինելով վառում հիվանդի շուրջը:

## ԱՍԹՄԱ

Այս հիվանդությամբ տառապող մարդիկ պղնձե դրամներ են կախում •կրծքից, այնպես, որ դրամը անմիջապես շփվի մարմնին: Մեղրամոմ են ծամում:

## ՎԱՀԱՆԱԳԵՂՁԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Այս հիվանդության բուժումը կհեշտանա, եթե հիվանդը վզին մշտական կրի պնդուկի ուլունքներով վզնոց:



## ՍԱՆՁՈՒ

Լավ է, որ ամռանը հիվանդը պառկի արեւի տակ:

Նաեւ մեջքի վրա պառկի տաք սալերի կամ ավազի վրա:

Տանը ձմռան ամիսներին կարող է քսակի մեջ տաքացրած ավազ կամ աղ դնել ողնաշարի վրա:

## ԽՈԼԵՐԱ ԵՎ ՏԻՖ

Այս հիվանդությունները համարվում են աստծո անեծք: Անզոր լինելով վարակիչ այս հիվանդությունների դեմ, ժողովուրդը հաճախ թողնում է հին բնակավայրը եւ տեղափոխվում ուրիշ վայրեր:

Պելը Պուղին առաջարկում էր խոլերայով կամ տիֆով հիվանդներին մերկացնել ու դնել նոր մորթած այծի կաշվի մեջ, փաթաթել ու պահել այնքան, մինչեւ հիվանդը քրտնի ու հիվանդությունը ծծվի այդ կաշվի մեջ: Այնուհետեւ կաշին վառում են կրակի վրա կամ խոր թաղում առվից ու աղբյուրից հեռու մի տեղ:

## ԿԱՅԾԱԿՆԱՀԱՐ

Կայծակնահար եղածին դնում են հողում, մոտ երկու-երեք ժամից հետո հանում: Կայծակնահար եղած մարդիկ լավանալուց հետո երկար են ապրում:

## ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Վախից մարդիկ հոգեկան հիվանդություն են ստանում: Դրանց բուժման գործով զբաղվում են գրբացները, փալչիները:

Բուժելու համար գիր են անում, կամ պղնձի մի ամանի մեջ ջուր լցնելով, մոմը հալում ու լցնում են նրա մեջ, ապա հիվանդի ներկայությամբ ջրի երեսի մոմը լցնում են եղեգի մեջ ու վառում:

Հոգեկան հիվանդներին տանում են սրբավայրերը: Սովորաբար հոգեկան հիվանդները ժամանակի ընթացքում կամաց-կամաց բուժվում են: Հոգեկան հիվանդների բուժման համակարգի մեջ էր մտնում նաեւ ծեծը, որը վերցրեց Պըլը Պուղին: Հոգեկան հիվանդները միշտ շրջապատի մարդկանցից մեկից վախենում ու քաշվում են:

ԴԵՂՆԱՑԱՎ

Մի տարի Մելիք Շահնազարը հիվանդացավ: Գավառում ինչքան բժիշկներ կան, եկան-հավաքվեցին, բայց չկարողացան բուժել: Պուղին էլ կոթը բոշ արեց, մտածելով, որ էսա գյոռբագյոռ կնի:

Վերջը եկան Պուղու մոտ, խնդրեցին բուժել, նա էլ բուժեց՝ կարգադրելով Մելիքին ամեն օր երեք ոջիլ կուլ տալ (առավոտյան, կեսօրին եւ իրիկունը):

ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄ

Եթե մարդիկ սատկած անասուն են մաշկում, հոտած լեշ կամ դիակ են թաղում, պետք է մի շորով փակեն քիթն ու բերանը: Պետք է շնչեն քամու հակառակ ուղղությամբ: Ձեռքերը պետք է լվանալ օղով, թանով, շմարթով, մածունով, կավահողի կամ ավազի ցեխաջրով, մոխրաջրով, օճառով, քացախած հոնի, տանձի, մոշի, թթի ջեջայով, կրաջրով, սեփական միզով: Նման դեպքում, եթե մոտդ սխտոր կա, ծեծիր ու շփիր ձեռքերդ: Սրանցից որը կատարես, լավ է:





# ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԽՐԱՏԱՆԻՆ

- Ճպատող քոլաղ կտրե։
- Յթյաթղ կտրցնում էլ։
- Իրիսատեղ պահե։
- Փլանեն մաչը վեր մեր ածել։
- Վեր կռեվըս անում, հրվնափայ պահե։
- Թամահղ պահե, ավել թամահը տոն ա քանդում։
- Ծանը ռեխը իզուր քզերա մի անի։
- Ըխուռետ յրա զռա։
- Էղ խե էշը թողած փլան ըս թակում։
- Օղտն ըս երիլալ, կզկոզ ըս շոռ կամ։
- Յոր մեր փորել, տու վըս ընգլական մաչը։
- Սեւ էծը սեւ օրա ծնում։
- Ըսողեն լսող պիտի։
- Էշը վեր էշա, մեհետ ա ցեխում մնում։
- Տենակը վսկեռեն տեմ չանիս։
- Յոգին պերան մել հվաքել։
- Իրես պահե, վեր իրես պնցնիս։
- Կթնատու կովի նման տված քացի մի տոր, պարանտալ։
- Յարամը կամա, հալալն էլ հետը տանում։
- Կռկռամել, կռկլոցը ցավա պիրում։
- Պտկան ծաղկում էլ, պտկան ծաղկումը բերք չի տամ։
- Երկու իրսանի մի կենա։
- Յատ հա պահե, չեղ՝ չէ։
- Օխտը անգամ չափե, մեհետ կտրե։
- Ծոնը սպնողեն ըն քաշ տալ տալիս։
- Քիթղ երգինքումը չպահիս։
- Լյուն օղտը մի շինիլ։
- Մազը գերան մի դարծրու։
- Կծոտող ծիու քամակին կանգնիր, քացի տվողի՝ առաջը։

- Ինչը վարիս, էն կինձիս:
- Փալանը փոխելով, էշը ջորի չի դառնա:
- Փալաննա փոխալ, էշը էլի նույն էշն ա:
- Լավություն արա, գցիր ջուրը, էլի քո առաջն՝է գալու:
- Քեզ իզորա խոսի:
- Ծենն առանց շոն չինում:
- Ծմակումը չախկալ կընի:
- Էշը թկելավ ձորի չի տեռնալ:
- Մին նալեն մեր թխել, մին մեխեն:
- Պելեն աղումը աստուծա աղում:
- Կյառնը կյուլին պահ մի տար:
- Իմացիր, ուղտը որ ստակի էլ, կաշին մի էշի պեռնա:
- Այծը ոչխարի հետեւից չի գնա:
- Արջը վախից է տռոտում:
- Այծի համար մի այծը լավ է, քան մի սուրու ոչխարը:
- Սեւ էծը սեւ օր կծնի:
- Գայլը հինչ կոզի, թոխպ օր:
- Գայլի գլխին ավետարան մի կարդա:
- Եզը որ ընկնի, դանակավորները կշատանան:
- Մարդ կա եզը տեսնում է, հորթ ուզում:
- Էշից գարուն մի հարցրու:
- Էշին պոչ չքսեց, ասին քոռակ է:
- Էշ նստելը մի այիբ, իջնելը՝ երկու:
- Օձի կծածը լավանում է, լեզվի կծածը՝ չի:
- Ողտին ասին վիզդ ծուռ է, ասաց իսկ որտեղս է դուզ:
- Ուզում ես լալաջավահիր թափիր, մեկ է, Մելիք Շահնազարը իր էշն է քշում:
- Մարդ կա, երկու էշի գարին չի կարողանում բաժանել:
- Մարդ կա, ով էշ է, ինքն էլ միշտ փալան է:
- Մարդ կա, սատկած էշի նալի է ման գալիս:



- Քավթառ շանը քոչի-քոչի են անում:
- Թամամ խոսքը էշին կասեն:
- Մարդ կա, ողտը թողած, լվից է խոսում:
- Կատվի վազքը մինչեւ մարագը կլինի:
- Տեսեք, տեսեք, չանաղից դուրս է եկել, չանաղին հավան չի:
- Ուրիշի ձի նստողը, շուտ կիջնի ձիուց:
- Յավի պես մի ծու է ածել եւ ամբողջ օրը կչկչում ա:
- Նվեր տված ձիու ատամները չեն հաշվի:
- Տեղ կա, Երասխին կոզնի մկան կյուզը:
- Մոկն ի՞նչ է, որ մի կարաս գինի է մուրտառում:
- Լավ, աստված որ արծիվ է ստեղծել, բա ճանճը ինչ՞ւ է ստեղծել:
- Ձուկը, որ գլխից չի որդնի, աշխարհի բանը լավ կլինի:
- Ձին ու ջորին կռվեցին, մեջտեղ էշը տուժվեց:
- Շոնը հաչելով կսատկի:
- Շները կռվեցին, օզողի (մուրացկանի( գործը լավացավ:
- Կոկան կծից առաջ է կոտրվում:
- Շոն կա, տիրոջ տանը հաց է ուտում, հարեւանի դռանը հաչում:
- Մարդ կա տված պարտքը շան մսից հարամ է անում:
- Մարդ կա շնից էլ բեթար ա:
- Դատարկ ձեռքին շոն չի հաչի:
- Մարդ կա, ասես շնից ծնված է:
- Շոն կա, պատառ ես տեմ անում, ձեռքդ է կծում:
- Շանը յուղոտ պատառ չի լինի:
- Յաչում ա, կծում չի:
- Շոն լինես, գայլ լինես, տանը փոքր չլինես:
- Օձը գլուխքոր ցավում է, գալիս մեկնվում է ճամփի վրա:
- Մարդ կա օձի խեւը ունե:
- Մարդ կա հավի պես դոնգի ա:

- Օձ կծի քեզ, որ էդքան անիծված ես:
- Արջի ճանկն ընկնես դու:
- Ինչ ես ցորցորում, հոքած արջ չես:
- Աջանի եզը աջանից կոտի:
- Մեղր ծախողը մատը կլիզի:
- Մարդ կա, ձվից էլ է մազ խուզում:
- Մարդ կա յոթ զոմեշ կտա, մի անգամ մեղա՛ աստված չի ասի:
- Այծի քամակը միշտ պեցա, բայց ինքն ուրիշների վրա է ծիծաղում:
- Աշխարհի բանն է այսպես. էշն աշխատում է, ձին՝ ուտում:
- Էշը էշին կողքին կապես, յա խուն կսովորի, յա խասյաթը:
- Էշի վրա ձիու թամբ չեն դնի:
- Էշը ամեն տեղ մնում է էշ:
- Էշի գլխին քարոզ չեն կարդա
- Գեշ է, հո՝ էշ չէ:
- Օնքը շինիլին տեղ աչքն էլ վերածից:
- Լամպը իրեն տակին իշեղ չի անում:
- Տանա դերին օրհնյա դեր չինիլ:
- Կաթնդ ի գորա պռանչի:
- Ձիդ պահե՝ կոխ չտա մեզ:
- Տրան պիտի կարճ կապիս, երկան թակիս:
- Կկողան՝ մին, պենդան երկու տուս կկյա:
- Փորը քուշտացալա, մեծ-մեծ խոսումա:
- Փողքը՝ ճղած, ռեխը՝ մեծ:
- Խոսկ պիտար, կռեւը չէ, ես լոխ մին-մին հսկցնի տրան:
- Տակռետ խինդեղնի տակռեյա:
- Էշին պոզ չփսավ, ասացին քոռակ ա:
- Էշին պոչի պես ոչ երկարում ես, ոչ՝ կարճանում:
- Իրեսան հիլիա, տկռիան ծիլի:
- Յացը ծոյնանը քուրդ ա:



- Ցորեն հաց չոնիս, ցորեն լեզու էլ չոնի՞ս:
- Տանա կյողին ճար չինիլ:
- Կյողը վեր տանա ինի, եզնը հուրթավը տուս կոնին:
- Տռուտող վեռը թոբա չանիլ:
- Երգդ երգված ա:
- Գետն ընկնիր, գշի տանի, դուշմանի կամուրջով անց մի կենա:
- Սոտ ասողին տա խրեզ ա:
- Սոտ ասողի տոնը վառվեց, ոչ ոք չհավատաց:
- Կռվեցին, ուրուր կերան:
- Կռվեցեն, հրվնափայ չպհեցեն:
- Խոսք կա մի փութ մեղրով կուլ չի քինիլ:
- Թաքի տանը հաց ինի, թող կորեկ ինի:
- Թրան արունը կաթում ա:
- Տղայա, հզերումը հնդրած:
- Ռխեն քաքերը ցրեւա տամ:
- Մարդս, մարդու կրկատանըս:
- Աշկեն իշեղը քաշած ա կենում:
- Աշկեն մոխերա փչում:
- Սրտի փոշա տուս օնում:
- Յանց խոսում ա, ասիս սերտդ պուղերեն ա ընգալ:
- Սրան տես, լիա քլվսրու պիհիր ինի:
- Մարդ չի, դոնգի դոդոշ ա:
- Մին տաս, երկու կոգի:
- Ճակատդ շան ճակատ ա:
- Թայդի ընգողը երկու տեղ ա կուկուզ կենում:
- Աստված սարին եշում ա, ծունը տնում:
- Օանը յշեցիք, ռխեն տրխեն:
- Արա, պա տրան մի լավ նախշիմվոչ:
- Կորավ ապրանք, կորավ հոգի:
- Քեզ ըսեցե, շանը ռեխը մզերա չանիս:

- Աստված չոնի. ալի-վալի չի եշում:
- Երկու վեննը մի չմշկում ա տըրալ. ասում ա ես ըմ, վեր կամ:
- Դե տա մեզ հինչ բարեկամ ա. էշը ըխպիարեն թավիլ ա տվալ:
- Տարը կորածեն փոշման կնի. կյուկը՝ մնացածին:
- Թա ջրվարմդ փիթրաղ չկա. խե յա դավի անում:
- Փեշակ ունեցող մարդը սոված չի մնալ:
- Ծաիի առաջ խանձած խոզ կտանե:
- Յավան երգնքումն ա պահում:
- Մին տեսեք հունցա քերը երգինքին կալալ. լահա ասիսի կնյազ Կուտուզով ինի:
- Պաբա-պաբա, տեն կացեք. Բբեն աղջիկը ըրամակա ընգալ:
- Ես ասում ըմ. ես ըսկանում:
- Տրան հինչ կա. համ քարն ա ծերքին. համ՝ ճղուպուրը:
- Քարին մինը վեր պենդ ինի. մինն էլ կակող պիտի լինի:
- Յա նրա խոսքը. յա քո վեռետ տըռը:
- Ծատել խոսում է. ըռխեն հովա եշում:
- Յացի կտրածը թուրը կարել չի կտրե:
- Յացեն երկու անուն չինիլ:
- Էս ինչ օրի ենք հասել վեռը կլխեն խելքա նիաշտամ:
- Աշքը շատ ա ծակ. աշխարիը վեր տաս իրան. կշտանալ չի:
- Յինչս ամեն անգամ շան նման վեննաս կենում:
- Տրմանի տակավ քնող ճուր ա:
- Վախե էն կետան. որ վեչ թշում ա. վեչ վշում:
- Արեւ օրը չուխատ երկալ. թոռ օրը՝ կոլան:
- Նեղ օրին լեն օր էլ կնի:
- Մարդվան-մարդվան տարի ա. հալբաթ մզետե էլ մին լուս կլուսանա:
- Մի սրա շենք ու շնորքին նայեցեք. իրեն խոսելին:
- Մի ծեռքը ծափ չի տա:
- Ձան ասե, որ ջան լսես:



- Օղտը գյոզռակավն ա կոլ տամ:
- Էս ծերքը. էն ծերքին տեղը տամ չի:
- Քոնիլածը մեռածը մին կնին:
- Յանց խոսում ա. ասիս գուբերնատոր ա:
- Խնե խռավալս. էշիդ հուվա չու ասալ:
- Յայ-հայը քեցալա, վայ-վայն ամնացալ:
- Աշկը օնքան պցրացալ ա:
- Քոսուտ էծը երե ակնան ճուր կխմե:
- Դու տըզ արա, ես մեղր անիմ:
- Մորը եշի, դանան առ:
- Արազ կա օրն ա կատարվում, արազ կա՝ տարին:
- Գիժ մարդուն մին հուշտը բոլա:
- Ըրած ցեխեն մի քթոլ ճուրը բոլա:
- Լու ա տռնլական պատան կենա:
- Մարդ չի, աշկի կրող ա:
- Տուվելըս ուրանց փարչավը ճուր խմալ:
- Դե քինի սերտդ մի պով տեղ քսե. դիլակդ կատարվեց:
- Կրակեն յրա նոթ ածող մարդ ա:
- Ըրեմը ես իմ նղրես թխլական չըմ, թանիինչա քու քոնդ տանումա:
- Ընջուկեն տակեն զուռնա ըն փչում, վեջըն էլ չի:
- Կռվեն պենը գիդվալ չի. մնել տեսար միակը նիյեկավ:
- Աչքից հեռու, սրտից տուս:
- Ցիլավը պեցս թողալ, միենգ հունց փռնիմ:
- Յողը խաբար կտանի:
- Քոռողը տա Կարաբեղը. ջարման քաշի Յարաբեղը:
- Քթվորեն վեռան յղծվին խաթրի պաչումն:
- Եղը տանումն տմակը քսում:
- Տնազեն ըսացեն շտեղս քինում. ասաց քինումում տնազ անիմ:

- Կուլին վեցը վեր ենքան հաստա, ընդանայա, վեր իր դատը իր ձեռքովն ա անում:
- Էս մարդու յուղը մոխերնա տեռալ:
- Անողը պրծավ, ասողը վեչ:
- Երեսին թքում ես, ասում է անձրեւ է գալիս:
- Շատս խակը վեր անում:
- Տռիմ ես, բոմփեմ քեզ:
- Համ տանանա, համ ջանան:
- Նաիանց տակռեն խինդեղնի տակռեյա:
- Հոգիս վեր ծերքիս ինի, պեց կթողիմ:
- Քարին քացի տալավ ապրում ընք:
- Մին պարկ արունա կլոխը կալալ:
- Կոխած տեղը պիտի լապատկով հող յոր օնիս, թող անիս:
- Կնեգը սատանա կինի:
- Տռէ, դինջաց:
- Խոխան վեր ասալա քաքս կամա, քըլական ա:
- Կթկթոցից պրծանք, ծլծլոցի տակն ընկանք:
- Էս տո̈նը հարսըս եկալ, կեցենդ հանե, մերը կեց:
- Փեսան վեր հառնանը սրտավը ինի, տռանը ջոնն էլ տուր կա իրեն:
- Սկեսուրը հարսնեն հավան չի, կռեվ ա անում, թե հավը ծոռ ա թառ իլալ:
- Տամն-երկալ, օզումն-տռ:
- Ճոտը ծվումն ա սաս անում:
- Մեր ջենին ջահելները լոխ մի ճպատավ քշածըն:
- Նամուսը տվին ջանը, կերավուչ:
- Ծունավ ծածկած կեղտը ջուտ կբացվի:
- Խելքը էնա հալա դբանումը:
- Համ Տռնվազա կնոնքան ա ընգալ, համ Շոշվա ժաման:
- Եթիմին խորհուրդ տվող շատ կնի, ծերքեն հաց տնողը՝ քիչ:



- Գործը ծառան ծռատակ հեշտ կթվա:
- Գետը ամեն անգամ գերան չի բերի:
- Քամուն բերածը քամին կտանի:
- Ամռան գողությանը ծմռանը կասին:
- Էրալ չի, մրկալա:
- Էդ հունցա ծոխը երիլալ, վեր կրակ չիլալ:
- Լեջ օտող ղուշի կտուցը կեռ կինի:
- Էդ մարդուց լոխ եխա են ճղում:
- Քոռանա էն աչքը, վեր ավալ իրեն չտեսնի:
- Սաղ վախտը խտեսս, կաղ վախտը կտեսս:
- Խելոքը մինչեւ մտածի, գիժը կանցնի գետը:
- Շատա խոսում, հանցա ճղացու չանչախ ինի:
- Արա, հինչս ծիծի տեռալ, ջլաման տո մի խոսք էլ մունք ասինք:
- Դարդը ամենից ուժեղ մարդուն էլ ա վերքցում:
- Սրտենդ քցերաընցի:
- Փորը հացոտ ա իլալ, մարդ չի ճանաչում:
- Ճուտը կճուտին, խոսքը մեծին:
- Պուրթ ա տամ, պեմբակ կզում:
- Տարեն պուլուր մարթ ու կնեգ իրար անա թերխաշն կենում:
- Էդ յաղոց էս մարթին տոը վեռան շիլա ընգալ:
- Յա մեծ մարթը, յա խոխան:
- Պըլեն խրատը հինչ անի:
- Երկու վախը մի մահա:
- Վեցը տեռալա թնխրավի չոփ:
- Ծառը կտրելուց հետո ա ըովածվեր մեծ ա:
- Փորը վեր կա, ձեռքի եխտա:
- Ախպերն ասաց քուր չոնիմ, քուրը ասաց ախպեր օնիմ:
- Մունք ըտիընք, Բրասխեն ղրաղեն վեր մին պեն ինի, ջուրջուփը մեզ նիկկյա:

- Օրորոցը տանը թագավերեն թախտն ա։
- Յոր անեծքը ծանր կինի։
- Խոսքը լակ-լակ. կլոխը թակ լակ։
- Մեծակու հոքմ օնիս։
- Թարթը կոթեն հսցնում չի։
- Բախտ չոնե, ամագը սելը տարած ա։
- Ճելի երկնալան չի, բախտը տալան ա։
- Յա ըսովի խոսքը, յա լցնովի հողը։
- Յաքին մնացալա սառնումը։
- Փողը վեր կա, ծերքի եխտա։
- Կաշառքը դժոխքի տոռնն էլ կպենա։
- Յա աչքը հանած, յա տեղը վարած։
- Կոտրած շուշան սղանալ չի։
- Սերտը շոշայա, վեր կոտրեց, ուղանալ չի։
- Կանգնած ջուրը կհոտե։
- Պեն անող խոփը ժանգոտել չի։
- Պառավը գիտկան չեր, կլոխը եկած ա։
- Էշան կյարունք աիրցնում։
- Ապրել կա ապրել ա, ապրել կա մեռնել ա։
- Յմնչողեն տղա չինիլ։
- Յին տերմանս քամուն տամ։
- Պտուղը ծառան հեռու չի ընկնի։
- Ինձ ըսեղավ ծկողին, մրթըսեղով կծակիմ։
- Մարթին անա վերթնա պտկում, իրան օտում
- Խոսքը խոսք ա պիրում։
- Ծետը երազումը կորեկա տեսնում։
- Պենը պենան անցակացալ։
- Կերած տեղերը հեռում ա։
- Գեղ կանգնի, գերան կկոտրի։
- Շեն կոխել չս եկալ։



- Շելակս շլոր ա տեսալ։
- Էշը հինչա գիդում, մոշը հինչա։
- Սրան տես է, քթան փռնիս, ջանը տուս կկյա։
- Մին տան շան նման կացեք։
- Լոկեն նաղլը վերա պերալ։
- Ամեն խոսքի հվատալ չըն։
- Յացը օտումա, խոնչան կրակին տեմ անում։
- Եղը վերածիս, կիվաքվե։
- Դուզ խոսողեն փափախը ծոռ կինի։
- Եկավ սովը, պահից կովը։
- Եղը իժանա, ճմոռը թանգ։
- Անճարը կերավ պենջար։
- Մարդու վերջը պիտի բարի լինի։
- Բաղդադ էլ կա շատ խուրմա, մեզ հի՞նչ։
- Մեծ-մեծ տներ, տուզնը շներ։
- Անարխա տեղը կաց, անբույթա տեղը՝ չէ։
- Ասեղեն ծակումը իր գործը տեսնում ա։
- Խուխեն հետ խոխա, քյոխեն հետ քյոխա։
- Ապրում ա,մի ծերքը եղեն մաչին, մինը՝ մեղրեն։
- Յամ հավեն ա փչում, համ տաքեն։
- Պելեն պոզեր չի ինում։
- Պա հուր կտան հարեւանի աղջիկը, տան-տռան, աջի կռնան։
- Կուլը տանե քեզ։
- Յաղու բաժին տեռնաս։
- Անի Յուռին, ծաղկի Փունին։
- Օղտեն պեռնը խրեգար, մաղն էլ քմական կախ տվեն։
- Թորքեն վեր թակիս, աշնա կտեռնա։
- Կյամ չի, կյավուչ, հետան կարմուր խնձոր չըմ ուղարկալ։
- Վերցը էքան ճոկում չի։
- Ոլը-ոլին կոտե, ոսկորը թող չանել։

- Խաթիրը մեհետ-երկու հետ կինի:
- Երեք տարի երաշտ եղավ, սով չեղավ, մի տարի անձրեւային էր, սով եղավ:
- Աղվեսը երկու ոտքով ա թակարգ ընգում:
- Պելը պլան, հղեն ըրկնանա:
- Նալեն ու մեխեն ղաթումը իր գործը տեսնում ա:
- Յոթ քահանա մի տղա կնքեցին, անունը դրին Կիկոս:
- Ծուկունը ջրումը առեւտուր չեն անում:
- Քոչի մեջ ճախարակ է մանում:
- Աշխարքս տմակա, հուր ծեռք հսնում ա, կտրումա նեստա:
- Աշխարքս մորեխը կերավ:
- Յու հինչ անի, իրան կանե:
- Սեւ օխծան վախողը սեւ չաթվան էլ ա վախում:
- Մարթ կա մարթ ա, մարթ կա վարդ ա:
- Յինչ օնիս կրմնջումը, վեր փթաթվիս յափունջումը:
- Ուրիշի ծերքավ կրակա յորոնում:
- Մինին յեղում ա, մինին դաղում:
- Յրվանեն աղջիկը օգում ցըն, թա ըխպիարեն կյուցիլիս տեսալ ընք:
- Անումը տո, սուփրան քցի:
- Յերթը մեզ եկավ, կետերը ցմքեցեն:
- Լհա վեր հերթը մեզ ա հսնում, ջղացեն ցեցը կոտրումա:
- Տերմանը չի քոնը, տրմնանոցն էլ չի քո՞նը:
- Էծը-էծին հետե լավա, քան մի սուրու ոչխարը:
- Նմանը նմանին կհավանի:
- Նմանը նմանին շուտ ա գտնում:
- Նմանը նմանին կսիրի:
- Յափռումը աղ չկա:
- Թաթը կոթին հսցնում չի:
- Ես աղա, դու աղա, մեր դանը հո՞ւ կաղա:
- Էդ վաղար, վեր էշը կաղար:



- Միակը վեր յոր օնիս, կյող շոնը կգիդա:
- Յինչ վարիս, էն էլ կինձիս:
- Վեչ մծանաս, վեր իտի ըս մծանում:
- Քարին կուճուրը չի մծանում, մարդու կուճուրը մծանում ա:
- Ժողովուրդը քնած առյուծ ա, որ արթնացավ էլ չի քնի:
- Անտեր ոչխարը գել կոտի:
- Ով աշխատի, ով ուտի,
- Աղքատը որ հավ ուտի, յա հավն ա հիվանդ, յա տերը:
- Յարուստը նոր շոր հագավ, ասին շնորհավոր, աղքատը նոր շոր հագավ, ասին որտեղից է:
- Մինչեւ հաստը բարակի, բարակը հոգին կտա:
- Մոտիկ հարեւանը հեռու բարեկամից լավա:
- Բարեկամի հետ քեֆ արա, բայց առեւտուր մի արա:
- Կռվի մեջ չիր ու չամիչ են բաժանում:
- Կոշտը սովածին մանր է բրդում:
- Ագռավի խնամին քչեղակը կլինի:
- Կրակը ձմռան վարդն է:
- Էժան մսից լավ կերակուր չի լինի:
- Լավա թագավորը ընկնի թախտից, քան երեխան օրորոցից:
- Խոխան հորով եթիմ չի մնում, մորով ա եթիմ մնում:
- Գեղեցիկ հավատարիմ կինը գին չունի:
- Սոխ ու հաց, սիրտը բաց:
- Շորը ասաց դու ինձ պահիր բոխչի մաչին, ես քեզ պահիմ մարդամիջի:
- Մեկ կա հազար արժե, հազար կա մեկ չարժե:
- Բրատու ծառին քարավ կտան:
- Շատ իմացողը քիչ կխոսի:
- Որ աղբից ջուր խմես, քար չգցես ակի մեջ:
- Լավա մարդ աչքով քոռ լինի, քան մտքով:
- Դժոխք գնացողը կոզի ընկերներ շատ ունենա:

- Յարամ ուտողի մեկը երկու չի դառնա:
- Աղջիկը օրական, պեծինքը՝ տարեկան:
- Դատարկ կարասի ձենը մեծա լինում:
- Երես տվին, աստառ ուզեց:
- Դրսում քահանա, ներսում սատանա:
- Օձը ծակից կհանի:
- Թուխպ օրը գայլի համար հարսանիք է:
- Ես իմ զուռնեն չփչեմ, թա հինչա քո էշը խրթնում ա՛:
- Գիժը գնաց հարսանքատուն, ասաց էստեղ լավ ա, քան մեր տանը:
- Խոզի գլուխը խալիչի վրա չի մնա:
- Դռնովը հանում ես, հուրթավնա կյամ:
- Պոպիկն ասաց տակս ոսկի ա, գդալն ասաց, բա ես որտեղից եմ գալիս:
- Մարդ կա, որ օձի վրա թքի, օձը կսատկի:
- Կոտրած գդալի պես ամեն բանի մեջ ա ընկնում:
- Քացախը որ թունդ լինի, իրեն ամանը կկոտրի:
- Յնդրողը հնդրվասկավ կնգե:
- Էշի ականջում քնած մարդ ա:
- Տաշած քարը գետին չի մնա:
- Ցուրն ընկնողը անձրեւից չի վախենա:
- Էդ քեզ խրատ, էլ չվարես կտվիատ:
- Ուրիշի կինը սերուն կթվա:
- Արկաթը տաք-տաք կթակեն:
- Մինչեւ ցամաք առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա:
- Շատ մի սիրիր, վերջում ատել կա:
- Մի ձեռքով երկու ձմերուկ չեն բռնի:
- Ա կոժ քեզ ասեմ, ա կոլա դու լսիր:
- Ամառվա նուշը, ձմեռվա փուշը:
- Աշխարհը դմակ, մարդը դանակ:



- Արունն արունով չեն լվանա:
- Մինչեւ երեխան լաց չինի, մերը ծեծ չի տա:
- Բեղից ընկած բրինձ ա:
- Աչքովը մեկ մոխիր չարժե:
- Գելի անունն ա դուրս եկել, աղվեսը աշխարհա քանդում:
- Վատ խաբարը շուտ տեղ կհասնի:
- Ուրիշի պատիվը չիմացողը, իր պատիվն էլ չի իմանա:
- Խոսք կա մարդուն վեր կհանի, խոսք կա վեր կբերի:
- Ամեն մարդու հալավ իր ջանին մոտ ա:
- Մեռնի էն աչքը, որ առաջ իրեն չտեսնի:
- Լավ եզը լծի տակ կուրվա:
- Վարար ջրի տակ կեղտ չի մնա:
- Լավա մի մնանոց բախտ ունենաս, քան մի կարաս ոսկի:
- Չոր քարի վրա գնա, կանաչ կբսնի:
- Քահանան ու սատանան մին են:
- Սար ու ձոր, տերտերի փոր:
- Բախտից ավել մարդուն տամ չըն:
- Աստված որ տալիս է, չափը չի հարցնում:
- Աստված, դարդը նրան տուր, ով դարման կգտնի:
- Լացն ու ծիծաղը ախպեր են:
- Աղջիկը ուրիշի տան ճրագա:
- Ղոթի խոսքը կատակով կասեն:
- Յանաքը դանակ ա դառնում:
- Գեղէեցիկ կինը, ի՞նչ եմ անում, երեսին հո փլավ չեմ ուտելու:
- Ցաղացից ես եմ գալիս, դու ես ալրաթաթախ:
- Անունը տուր, սուփրան գցի:
- Շունը շնից, երկուսը մի տնից:
- Շաքարը շան բերանում:
- Կաթիլը քար է ծակում:

❖ Ձին ծիից վեր է քաշում:
❖ Արջի քոթոթը հոր պլլներով կխաղա:
❖ Ի՞նչ ես աղվեսի պես պոչդ խոր թաղում:
❖ Արջի ականջում քնած մարդ է:
❖ Եթե խոզը ծառը բարձրանա, քո գործն էլ ամալ կկյա:
❖ Գայլի աչքեր ունի:
❖ Պառավի էծերը կոտորելուց հետո առե արեւ անի, ի՞նչ:
❖ Տղամարդը մեռնի անունը կմնա, եզը սատկի, կաշին կմնա:
❖ Յանց ա լիա անպոզ կյումաշ ինի:
❖ Էշի պիհիրը որ դուրս պրծնի: ալավ իրեն վեռեն կծեփի:
❖ Էշը կերել, հաքվին ես դեմ ընկել:
❖ Ամեն շենա մի պել բերեք, Խանցքից՝ով պատահի:
❖ Ամեն շենա մի պել բերեք, Յաթերքից՝ով պատահի:
❖ Խնուշինակոց անուննա դոնգի, իմաստուններ են:
❖ Շուտ գնա, շուտ եկ, որ Սեյդի շենում ղոնաղ չմնաս:
❖ Էս մարդը խոզ մարդ ա:
❖ Էս մարդը աղվես մարդ ա:
❖ Էս մարդը շոն մարդ ա:
❖ Էս մարդը վեթես մարդ ա:
❖ Էս մարդը թոռնս քինում ա:
❖ Էս մարդը կոշտ մարդ ա:
❖ Էս մարդը փսվեր եշողա:
❖ Աստված կտրե տրա պորթ-պռթոտ խսյաթը:
❖ Յանցա աղու տաքդեղ կծած ինի:
❖ Յանցա աղու տանձ կծած ինի:
❖ Յանցա սարա եկած ինի:
❖ Յանցա շնկոտեգ ինի:
❖ Յանցա մարդու վեռա ընգած չին:
❖ Յանցա շան կաթնա ծծալ:



❖ Թա մարագս վառվեց, հալա մի մկները կոտորվեցին:
❖ Անիրես ճանճի նման ա:
❖ Մի սրան նայեցեք, լիա դիրիզեցու չփառու պիհիր ինի:
❖ Աղջիկ չի է՞, մարալ է, մարալ:
❖ Ծմակի նմա տղա է:
❖ Տղա է, հզերումը հնդրած:
❖ Աղջիկ է, հզերումը հնդրած:
❖ Շան օրա անում:
❖ Քո ախոռի վրա զռա:
❖ Յանի տա մարդ ա, տա պառ օնե՞:
❖ Յանց պահում ա իրան, ասես մեծ բաղեն գուլն ա:
❖ Սաղ օրը շան թուլի պես մթմթում ա:
❖ Ամեն մարդ Յասան չի դառնա, ամեն փադ մուսան չի դառնա:
❖ Չինով հունձ անողը, սամով էլ հունձ կանի:
❖ Լինում է, որ շաբաթը շուտ է գալիս, քան կիրակին:
❖ Մի տարի հարթնություն ար, 10 տարի՝ գելություն:
❖ Յղետ ճինաչի, հղցավդ դուզ կինա:
❖ Յարփալա, Փ գրելով է տուն գնում:
❖ Մի հլավում քնած ըն:
❖ Կթնըկորեկ ըն, քթուլփոխն անում:
❖ Յալալ ամագ, հալալ տոն:
❖ Սկի կնեգ չի է՞, շատ ա վռվերեգ:
❖ Մարդ չի է, կութանա, կութան:
❖ Կինը մեշակ կնեգա:
❖ Քյոխա կնեգա:
❖ Խանդութ-խաթուն կնեգա:
❖ Կնեգչի է՞, Յուրի-փերի ա:

# ՊԵԼԸ ՊՈՒՂՈՒ ԶՐՈՒՅՑԸ
# ԱՍՏԾՈ ՀԵՏ

Աստված, կռներես ուժավը ապրումըմ, գիդումս թա դու ես պահում ինձ:

***

Աստված, թա կարումչըս մեզ պահիս, դու քշաց, ես պիցրանամ, համ քեզ պահեմ, համ մեզ:

***

Աստծո ինչն ասեմ, որ եղը տանումա տիմակը քում:

***

Թա Աստվածըս, պա հորա՞ արդար դատաստանդ:

***

Աստված կարկուտի նման ա, թակած տեղն ա թակում:

***

Աստված էլ նաշար տեղեր շատ օնե, մինին յեղումա, մինին՝ դաղում:

***

Աստված, խե ինծանա խռավալըս, հինչա, ես քեզ հետե շոն ըն դարկա՞լ:

***

Աստված էլ զորութընդ վերնա՛, վեր քու քանդած տոնն կնեգը շինում ա, կնգանը քանդածը տու կարում չըս շինիս:

***

Աստված մինին թեւեր ա տվել, վեր թռչի, մինին էլ ասալա՝ դու պիտի սողաս:

***

Աստված վեր տամա, չափ չի տինում:



***

Աստծո տվածից նեղանալ չըն:

***

Աստված, տու վեր էն երգինքավը թռչող նախշուն յուղոնիգը շինալըս, պա ծանծը հորը՞ս շինալ:

***

Աստծո մի երեսը սեւ ա, մինը՝ սպիտակ:

***

Թա Աստված հայ չի, պա խե Նոյի տապանը Մասիսի գլխին ա թառ տվալ, խե էս մեծ աշխարհում Մասիսից մեծ սար չկա՞:

***

Աստված հայ ա, ինքն էլ՝ ղարաբաղցի:

***

Աստված իրան հավասարին սիրում չի: Պահումա, պաշտում, բայց վեր կյամա թա հավասարվի իրեն, պարանա տամ:

***

Աստծո տվածը Աստված էլ տանում ա:

***

Աստծո դարդը իրան նման մեծ ա:

***

Աստծո անունը տո, բայց չինին կոթը պինդ փռնե:

***

Աստծո պարտքի տակից դեռ ոչ ոք տուս չի եկալ:

***

Շատ էլ Աստծո անունով ուրթումն ես ուտում, խե նա գիդում չի՞, ղորթըս ասում, թա սուտ:

***

Աստծո գործերին խառնվող մարդը էս աշխարհիքումըս լավ օր չի տեսնալ:

***

Աստված վեր քզանա խռավե, հույսդ տիր կռներիդ յրա:

***

Աստված վեր օգնւմա մեկին վատութուն անել, առաջ նրա խելքն ա խլում:

***

Աստված վեր մին տեղա կտրումա, մի տեղա էլ տամա:

***

Յավը վեր հավ ա, ճուտ խմելիս էլա  ձնորհակալ լինում Աստծուց, փառք ա տամ նրան:

***

Աստված ընեծի քեզ, Մելիք Շահնազար:

***

Աստված կլխեդ քարեր վեր ածե, Մելիք Շահնազար:

***

Աստված քեզ քոս տա, ղեյնը չտա, թա քորիս, Մելիք Շահնազար:

***

Աստված կլխադ փախչի, Մելիք Շահնազար:

***

Աստված կտրե ջան խասյաթդ, Մելիք Շահնազար:

***

Աստված տանե քեզ, Մելիք Շահնազար:

***

Աստված հետադ պլոր անե, Մելիք Շահնազար:

***

Աստված տունդ քանդի, Մելիք Շահնազար:

***

Աստուծանա ոչ մխիթարվիս դու, Մելիք Շահնազար:

***

Անաստված տեղը կաց, անբութա տեղը՝ չէ:



## ՀԱՎԱՏՔ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒՄՆԵՐ

◈◈◈

Եթե ծիածանի տակով աղջիկն անցնի, տղա կդառնա, եթե տղան անցնի, աղջիկ կդառնա:

◈◈◈

Եթե ծիծեռնակները ցածր են թռչում, նշանակում է՝ անձրեւ է գալու:

◈◈◈

Եթե ծիերն անհանգիստ վազում են, խրխնջում, Նշանակում է՝ երկրաշարժ է լինելու:

◈◈◈

Եթե օձերը դուրս են գալիս բներից, նշանակում է՝ երկրաշարժ է լինելու:

◈◈◈

Եթե շունը երկար ոռնում է, նշանակում է՝ հեռվում տիրոջ բարեկամներից մեկը մեռել է:

◈◈◈

Եթե հավը եռանդուն քթոթանի, նշանակում է՝ անձրեւ է գալու:

◈◈◈

Եթե կաչաղակը տան մոտ նստի ու չռչռա, նշանակում է՝ տունը հյուր է գալու:

◈◈◈

Եթե կաչաղակը չռչռա տան մոտ, տան տերը պիտի ասի.
- Թե չար ես, տեղըդ փոխիր, թե խեր ես, վեռուքդ շոռ տո:

◈◈◈

Եթե կաչաղակը մի տան մոտ նստի, տանտիրոջ ցախերի վրա ու ծղրտա, տանտերը կհարստանա:

◈◈◈

Եթե մի տան տանիքի վրա բուն կռնչի, տան տերը կմեռնի:

◈◈◈

Եթե մեկը գողության գնա ու ագռավը կռնչա նրա հետեւից, նշանակում է՝ նա կբռնվի:

◈◈◈

Եթե կատուն ճանկռոտում է տան դուռը կամ պատուհանը, նշանակում է՝ անձրեւ է գալու:

◈◈◈

Եթե խոզերը դաշտում հավաքվում են մի տեղ, նշանակում է՝ անձրեւ է գալու:

◈◈◈

Եթե շունը տիրոջ առաջ կանգնի ու սկսի տխուր ոռնալ, նշանակում է՝ տիրոջը այդ օրը վատ բան է պատահելու:

◈◈◈

Եթե տիրոջ ձեռքին սովորած ձին առավոտյան մի տեղ գնալիս նրան վայր գցի, նշանակում է՝ տիրոջը վատ բան է սպասվում:

◈◈◈

Եթե գորտ ես սպանում, մեջքի վրա մի թող, նա ձեռքերը պարզած անիծում է քեզ:

◈◈◈

Եթե օձը տեսնես ու չսպանես եւ ասես հղետ բարի, նա կբարեկամանա քո տան հետ:



◈◈◈

Եթե օձի շապիկը դնես գլխարկիդ մեջ ու դնես գլխիդ, գլուխդ չի ցավի:

◈◈◈

Եթե ականջդ կանչում է, ասա՝ ով որ ես, քո ականջն էլ կանչի:

◈◈◈

Եթե ոտքիդ տակը քոր գա, նշանակում է՝ երկար ճանապարհի ես գնալու:

◈◈◈

Եթե աջ ձեռքդ քոր գա, փող կստանաս, եթե ձախը քոր գա, փող է դուրս գալու:

◈◈◈

Եթե սեղանը գցելիս հացը ընկնի, նշանակում է՝ հյուր է գալու:

◈◈◈

Նմանապես երբ հացը հունցելիս խմորից մի կտոր թռչի, նշանակում է՝ հյուր է գալու:

◈◈◈

Որպեսզի ճանապարհը բարի լինի, հետեւից ջուր են շպրտում:

◈◈◈

Որպեսզի ճանապարհորդը հետ չդառնա, հետեւում խեցեղեն աման են ջարդում:

◈◈◈

Որպեսզի հարսի եւ փեսայի հետ վատ բան չպատահի, նրանց ոտքի տակ ափսե են դնում, որը կոտրելով, չարը հեռացնում են իրենցից:

◈◈◈

Նորապսակների ձեռքին լավաշ կամ թոնրահաց են դնում, որ ռուզով լինեն:

◈◈◈

Գիշերը չեն կռանա ջրի վրա, որպեսզի քաջքերը չկուփեն:

◈◈◈

Եռման ջուրը գիշերը դրսում չեն թափի, որ թափեն, սատանի ոտքերը կայրեն ու նա կչարանա:

◈◈◈

Ժամաժենքին դռները բաց են թողնում ու խաչակնքում, որպեսզի օրվա շառն ու խերը հաշտ բաժանվեն իրարից:

◈◈◈

Ժամաժենքին բախտ բաժանողն անցնում է բոլորի տան մոտով եւ վաղվա համար բախտ է բաժանում բոլորին:

◈◈◈

Սեղանի սփռոցը դրսում թափ չեն տա, եթե թափ տան, տան խեր բարաքյաթը կգնա:

◈◈◈

Ով այրված հաց ուտի, գայլից չի վախենա:

◈◈◈

Ում ձեռքից հացը ընկնի, նա կաղքատանա:

◈◈◈

Ով ղզղանի տակը սրբի, նրա հարսանիքին անձրեւ կգա:

◈◈◈

Ով կերակուրը ուտելիս իր ամանը մաքուր ուտի, նշանածը գեղեցիկ կլինի:



◈◈◈

Ով սխտորի ճեպը գցի կրակի մեջ, մեղք կգործի:

◈◈◈

Սխտորը ձեռքից ձեռք չեն տա, նրա մեջ աջի կա, պիտի դնել գետնին, որ մեկ ուրիշը վերցնի, աջին մնա գետնի վրա:

◈◈◈

Եթե տան դարպասի վրա ձիու նալ խփես, չարը կհեռացնես քո տնից:

◈◈◈

Եթե տան պատի մեջ նալ դնես, այդ տունն այլեւս անեծք չի վերցնի:

◈◈◈

Եթե տան մոտ ձիու կարկած ցից հանես, տունը չար աչքից կպահպանվի:

◈◈◈

Եթե առավոտյան տնից դուրս գաս ու քո առջեւով կատու անցնի, գործերդ վատ կգնան այդ օրը:

◈◈◈

Եթե առավոտյան տնից դուրս գաս ու քեզ չար աչքով մարդ պատահի, գործերդ վատ կգնան:

◈◈◈

Եթե հանդում նապաստակ պատահի, վատ կլինի գործերդ:

◈◈◈

Եթե հանդում աղվես պատահի, գործերդ հաջող կանցնեն:

◈◈◈

Եթե լուսինը բռնվում է (խավարում է), պետք է պղնձե ամանների տակը թակել:

◈◈◈

Եթե կատու ես սպանել, պիտի յոթ եկեղեցի շինես, որ մեղքից ազատվես:

◈◈◈

Եթե երեխայի թեւից աչքահուլունք կապես, երեխային աչքով չեն տա:

◈◈◈

Եթե տանը Ավետարան չկա, երդվիր կրակի վրա:

◈◈◈

Եթե գյուղում եկեղեցի չկա, հարս ու փեսին պսակեցեք թոնրատանը:

◈◈◈

Տան օջախում կրակը ջրով չեն հանգցնի:



## ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐ

Յացահատիկի, այրտի պարկերը դրսում թափ չեն տալիս, որպեսզի տան բարաքյաթը չգնա:

◈◈◈

Եթե այրված հացը ուտես, գայլից չես վախենա:

◈◈◈

Եթե երազում գլխարկդ ընկնի, կինդ կմեռնի կամ կդավաճանի քեզ:

◈◈◈

Եթե երաշտ ժամանակ կանայք լծվեն արորին ու գետը վարեն, անձրեւ կգա:

◈◈◈

Եթե անձրեւ ժամանակ ճոլի շինեն ու շրջեն դրսում, անձրեւը կդադարի:

◈◈◈

Եթե հավը թուխս դնելիս չասես «լոխ ծակ, մինը լակ», բոլոր ձվերը լակ դուրս կգան, մեկը՝ ծակ:

◈◈◈

Եթե գորտ սպանես, պիտի երեք անգամ թքես գետնի վրա, որպեսզի ձեռքերիդ վրա գորտուկներ չբուսնեն:

◈◈◈

Առաջին թխած հացը, լավաշը չեն կտրի, քանի որ կարող է թխողի մարդը մեռնել:

◈◈◈

Նա, ով կտրի անասունի ականջը, պոչը, լեզուն, իր որդիները պակասավոր կլինեն:

◈◈◈

Եթե երեխայի ձեռքը աչքահուլունք կապես, նրան աչքով չեն տա:

◆◆◆

Եթե մի նպատակով տեղ գնալիս պատահես չար կամ չար աչքով մարդու, գործդ ձախ կգնա:

◆◆◆

Երեխայի գլխատակին դանակ, մկրատ կամ քարուջաղ են դնում, որ քաջքերը մոտ չգան:

◆◆◆

Եթե ճանապարհին կամ հանդում աղվես պատահի, գործերդ հաջող կգնան:

◆◆◆

Եթե ճանապարհիդ սեւ կատու պատահի, գործերդ վատ կլինեն:

◆◆◆

Խմորը հունցելուց առաջ եւ հետո տաշտի վրա խաչակնքում են, որպեսզի քաջքերը վրան չնստեն:

◆◆◆

Եթե ազապ տղան կամ աղջիկը սրբում են կաթսայի տակը, նրանց հարսանիքի օրն անձրեւ է գալիս:

◆◆◆

Եթե ականջդ կանչում է, իմացիր, որ հեռվում քեզանից խոսում են:

◆◆◆

Եթե հացի պատառը ձեռքիցդ ընկնի, հյուր կգա:

◆◆◆

Եթե ձախ աչքը խաղա, հյուր կգա:

◆◆◆

Որպեսզի հարսը խելոք լինի, առաջին օրը տուն մտնելիս դռան մեջ ափսե են դնում, որ կոխի, կոտրի: Կոտրած ափսեի հետ չարը վերանում է:



# ՊՈՒՂԻԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Թա իմանամ՝ խիլյա պենա, անճյուր ճեղաց, անկրակ պեղարծ:
*(Երկանք եւ մեղրահաց)*

Քմակին հոփ տամ, արուճ անի: *(Մկրատը)*

Լիգը տանեմ, տերտակ հանիմ: *(Գդալը)*

Ծպռոտ Պողոսը ծառեն թառ իլած: *(Չկեռը)*

Էն հինչնա,
Յարի դյուզ,
Մարը կեռ,
Տղան դիթ,
Թոռնը պել:
*(Խաղողի ողկույզը, գինին եւ օղին)*

Տյուսը կոկլեգ, մեջը պրթպրթոտ: *(Մասուրը)*

Էրկու օթաղ մին սյունանի: *(Քիթը)*

Փաղի կյուշ, քարի փրթուշ: *(Կամնը)*

Պիծի խոխա դնգլե տալիս: *(Լեզուն)*

Վեններ չոնի քինում ա, պերան չոնի կոլ ա տամ:
*(Գետը)*

Էն հինչնա, ամեռնը կապում ըմ, ձմեռնը ետ անըմ:
*(Չորաթանը)*

Էն հինչնա, ծոռ կյեշի, դյուզ կը կքինա: *(Գութանը)*

Անճուր տեղ ծառեր փսած, ճղեր ունի, տիրեւ չոնի:
*(Եղնիկի եղջյուրները)*

Լոխճու կեց տամ, զըթարըմ, ամմա ինքը էլլա տկլոր ա:
*(Ասեղը)*

Մեղրան քաղցր, արկաթան ծանրը, վեչ դյուքանըմ կծախվի, վեչ բազարըմ:

*(Քունը)*

Էն հինչն ա, վեր մեչանա հսնում:

*(Ձմերուկը)*

Էն հինչն ա, ծյուր կխմի, կյուզել չի:

*(Յավը)*

◈

Պստիկ, ճստիկ,
Աշխարքս մեջս տիտիկ:

*Աչք*

◈

Վեց ոտքով են,
Երկուսը օդումը,
Չորսը՝ տափին:

*Ձիավորը եւ ձին*

◈

Մեզ մինն օնինք,
Օխտը հալավ կա հագին,
Որ հանիս, քեզ կլցնե:

*Սոխը*

◈

Գալիս է փափուկ,
Գնում է ծածուկ:

*Ձյուն*



◈

Լոխճան կուժի,
Լոխճան պեցուր:

*Գլխարկը*

◈

Ռաչիդ չոքիմ,
Ծակդ պենամ:

*Սնդուկը*

◈

Մի տուն օնիմ,
Ոչ պատ ունի,
Ոչ էլ՝ սյուն:

*Երկինք*

◈

Մենք մինն օնինք,
Իրիկունը ծովն ա մտնում,
Ըռուքանան ծովան տուս կյամ:

*Արեգակ*

◈

Ըստեղ պուպուզ,
Ընդեղ պուպուզ,
Մին էլ տեսար
Յուղթավը տուս:

*Ստվեր*

◈

Էն ի՞նչ հավ ա,
Ապրում է 30 օր,
Մեռնում ա
Ու նորից ելնում:

*Լուսին*

◈
Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Երկու կաքավ
Գնում գալիս,
Իրար երբեք
Ձեռք չեն տալիս:
*Լուսին եւ արեւ*

◈
Մի պղնձում երկու ձու,
Մեկը եփած, մեկը՝ հում:
*Լուսին եւ արեւ*

◈
Մի ամանում երկու հավ,
Մեկը կածկած, մեկը՝ հավ (հով):
*Լուսին եւ արեւ*

◈
Մի մեծ տափ, քարով լիքը,
Եշում եմ, մոտիկ ա,
Գնում եմ, հեռու ա:
*Երկինք եւ աստղեր*

◈
Գիշերը ցանեմ,
Ցերեկը հնձեմ:
*Աստղեր*

◈
Քիրսին չոքիմ,
Ըրասխան խմիմ:
*Ամպ*



◈
Մեզ մինն օնինք
Կյոռում ա Քիրսում,
Եվ հետո...կյուզղում:
*Կայծակը եւ ամպը*

◈
Սառա նանը այուր մաղեց,
Յանդ ու այգի իսկույն պաղեց:
*Ձյուն*

◈
Պաղը կյոռաց, լաց իլավ,
Նախշուն գոտին պեց իլավ:
*Ծիածան*

◈
Երինիմ ծառը,
Ծենտամ ծյորը:
*Քամի*

◈
Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Տասներկու գութան,
Ելել ու կերթան,
Տեղ հասան թե չէ,
Նորից ետ կգան:
*Տարվա ամիսները*

◈
Անա, անա,
Կարմիր դանա,
Սոխակը գա,
Դուռը բանա:
*Տարին, գարունը*

◈

Գոմեշի կաշի,
Ոչ կհալչի,
Ոչ կմաշի։

*Դաշտ*

◈

Մինը օնինք,
Ոտներ չունի,
Ման է գալիս,
Բերան չունի,
Կուլ է տալիս։

*Գետը*

◈

Առավոտ ծեգին
Կարմիրս տնիմ
Քամոր ծեռքին։

*Անթեղած կրակը*

◈

Ձին գնաց,
Թամբը մնաց։

*Գետը եւ կամուրջը*

◈

Երկար շմալ,
Ծողք չունի։

*Ձայն*

◈

Մի կով ունեմ, հանդին ա,
Պոզերը կռմռանդի ա,
Տարին մեհետ կաթ կտա,
Ինչ էլ անես, տուն չի գա։

*Պտղատու ծառ*



◈

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Հայրը դյուզ, մայրը կեռ,
Տղան շիթ, թոռնը պել։

*Վազ, խաղող, գինի*

◈

Մի եզն օնիմ,
Մինչեւ պոչը կտրում չում,
Տոն չի կյամ։

*Տանձը*

◈

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Պիծի կարաս,
Կրակով լիքը։

*Նուռ*

◈

Կանաչ հինիմ,
Սպիտակ թիլ տամ,
Կարմուր կյործիմ,
Թոխ կտրիմ։

*Մոշ*

◈

Կարմիր հինիմ,
Թոխ կտրիմ։

*Մոշ*

◈

Ճպռոտ Պողոսը
Չփարեն յրա
Կուկուզ կացած։

*Ձկեռ*

◈

Չաթուն ճուր տամ,
Դանան օռչի:

*Դդում*

◈

Պապը նստալ ա տանը,
Պլնեն օռչալա տռանը:

*Դդում*

◈

Յայրը հալա օրորոցում,
Տղան քինաց բազար:

*Վարունգ*

◈

Ինքը հորումը,
Քյաքուլը չոլումը:

*Գազար*

◈

Սեւ թխսկան,
Կարմիր ծվան:

*Կարտոֆիլ*

◈

Ծահեցի, պահեցի,
Փափուկ խոտը հարեցի,
Տակի ջրից խմեցի:

*Ոչխար*

◈

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Ոռը դնում ա քարին,
Գլուխը դնում ա ոռին,
Աչքը գցում ա ծովին:

*Կով եւ կթվոր*



◈

Մսի թաս,
Ըրկաթե ղփըլ:

*Ձիու նալը*

◈

Էն ի՞նչ ծառ ա,
Էն ի՞նչ ծառ,
Ճղներ ունի ծալվեծալ,
Առանց տերեւ, առանց ծամ:

*Եղջերու*

◈

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Տակը քար ա, քար չի,
Գլուխը քար ա, քար չի,
Խոտ ա ուտում, կով չի,
Ձու ա ածում, հավ չի:

*Կրիա*

◈

Յողե լուլա,
Մսե գյուլլա:

*Մուկ եւ ծակը*

◈

Երինիմ ծառը,
Ծեն տամ ծորը,
Մեռած մարդուն
Տամ հարություն:

*Աքաղաղ*

◈

Էն հի՞նչն ա,
Ձուր կխմի, կյուգիլ չի:

*Դավը*

◈

Մինը կա
Տոն ա շինում իր համար,
Ինքը մաչին,
Վեչ տոռնը օնե,
Վեչ ակուշկա,
Վեչ էլ հուրթ:
*Ծերմառողը*

◈

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Առաջ չորս ոտով ա ման գալիս,
Հետո՝ երկու, վերջը՝ իրեք:
*Մարդը*

◈

Երեք հոգի կամուրջից անցան,
Մեկը կամուրջը տեսավ՝ ոտքով անցավ,
Մյուսը տեսավ՝ անոտք անցավ,
Երրորդը՝ ոչ տեսավ, ոչ ոտով էր,
Բայց անցավ:
*Հղի կին, գրկին երեխա*

◈

Մի մարդ ու մի աղջիկ
Նստած էին ձիու վրա.
Մի ուրիշ մարդ տեսնելով՝ ծիծաղեց:
Աղջիկն ասաց.
- Ի՞նչ ես ծիծաղում, սրա մայրը
Իմ մոր սկեսուրն ա,
Իմացիր՝ ես սրա ի՞նչն եմ:
*Հայր ու աղջիկ*



◈

Մի կին, մի տղա
Ձին նստած գնացին,
Մի մարդ պատահեց
Ու հարցրեց՝
- Այդ տղան քո ի՞նչն ա,
Կինը ասաց.
- Սրա մայրը իմ մոր աղջիկն ա,
Էս տղան էլ իմ տեքոր ախպորը տղան է:
*Մայր ու տղա*

◈

Գլոր ա,
Պլոր ա,
Մեջը ոսկի
Ծլոր ա:
*Ձու*

◈

Մի թակ,
Օխտը ծակ:
*Գլուխ*

◈

Պուկուր ծմակ,
Էծերով լիքը:
*Գլուխը եւ ոջիլները*

◈

Կյոքտամ պահիմ
Թմարիմ, շահիմ,
Հախտամ հնձիմ,
Ըխպիարը քցիմ:
*Գլխի մազերը*

◈
Երկու տուն,
Մեկ սյուն:
*Քիթ*

◈
Քշերը աղա,
Ցերեկը ծառա:
*Աչքեր*

◈
Մսի չանթա,
Պրինձով լիքը:
*Բերան եւ ատամներ*

◈
Մինը խոսում ա,
Երկուսը լսում ա,
Երկուսն էլ մտիկ տալիս:
*Բերան, ականջներ, աչքեր*

◈
Մսի լոչա,
Յացի գյոլլա:
*Կոկորդ եւ հաց*

◈
Մի հավք գիտեմ
Իր բնում
Եվ քնում է,
Եվ բլբլում,
Ծնված օրից
Իր բնից
Ոչ մի տեղ էլ չի գնում:
*Լեզու*



◈
Էն ինչն է, ի՞նչը,
Թումբեն տակին մի դյուզ տեղ,
Դյուզին տակին երկու ծառ,
Ծառին տակին երկու գյոլ,
Երկու գյոլին երկու նով,
Երկու նովին մի ճեղաց,
Ճղացին տակին մի մեծ թումբ:
*Գլուխ, ճակատ, հոնք, աչք, քիթ,*
*բերան, ծնոտ, ատամներ*

◈
Երկու կոլա,
Ճերմակ քոլա
Մի սարից կախ:
*Ատինքներ*

◈
Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Օտքմն, կիրումքն,
Ստոլեն տինումքն,
Ուրիշին տամ չըն:
*Ծիծը*

◈
Մեղրից քաղցր,
Արկաթան ծանրր,
Վեչ դյուքանումը կծախվի,
Վեչ բազարումը կառնվի:
*Քունը*

◈
Ծինողին պետք չի,
Առնողին պետք չի,
Տանողին պետք չի,
Ում հարկավոր է,
Նա էլ մեզ հետ չի:
*Դագաղ*

◈

Մսի յուլա,
Ըրկաթե գյուլա:

*Խորոված եւ շիշ*

◈

Ամառը սվաղի,
Ձմեռը հալի:

*Ջուրաթան*

◈

Անջուր ջաղաց,
Անկրակ բաղարջ:

*Մեղրահաց*

◈

Ոչ ցորեն եմ, ոչ գարի,
Եվ ոչ ոք ինձ չի ցանի,
Ջրաղացով աղած չեմ,
Տաշտում մաղով մաղած չեմ,
Թոնիր, կրակ տեսած չեմ,
Բայց դե հաց եմ, տեսաք, չէ՞

*Մեղրահաց*

◈

Մի սուրու էծեր
Մին ղալրւմ տռտռում ըն:

*Աղանձ եւ սաջ*

◈

Մեզ մինն օնինք,
Տափին տակին կգռռգռռա:.

*Գինու կարասը*



◈

Ծիք տամ՝ նիքիցիմ,
Ծիք տամ՝ տյուս քցիմ:

*Ռռնամանը, գույպան*

◈

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Ծոռ կնայի,
Դուզ քինա:

*Արորը*

◈

Ձիլի տամ,
Ձիլի-միլի տամ,
Տափին տակովը
Ծիլի-միլի տամ:

*Խոփը*

◈

Փայտե գուշ,
Քարե բողուշ:

*Կամը*

◈

Ձանը փառ ա,
Կրքները՝ քար,
Կերածը տերման,
Թրքածը՝ դան:

*Կամը*

◈

Կոկիմ, ծամիմ,
Ծակր քաղիմ:

*Թել եւ ասեղ*

◈

Կուճի պապեն
Չափար ա անում:

*Բիզը*

◈

Տափլակս տփլակետ,
Տուտուշս ծկլակետ,
Հափուռ-հափուռ նի ածիմ,
Մոմռալով տուս ածիմ:

*Երկանք*

◈

Ծեբեթը մին օր
Քու մոր ռաջին կլկոնծի տամ:

*Խնոցի*

◈

Էի ի՞նչն ա, ի՞նչը,
Գնա-գա,
Քամոր փորին հարու տա:

*Խնոցի*

◈

Մթեն տոն,
Դավիթի մեջը քոն:

*Թուր եւ պատյան*

◈

Մեջտեղը կրակ,
Չորս կողմը ջուր:

*Ինքնաեռ*

◈

Մի հարս օնինք մեր տանը,
Համ մեծի հետ ա պռոշտի անում,
Համ փոքրի:

*Ջրի փարչը*



◈

Ալ եզը,
Չալ եզը,
Ինչքան բարծեմ,
Տար, եզնը:

*Գդալ*

◈

Փաղի գուշ,
Մեջինը լալկան խլուշ:

*Օրորոց եւ երեխա*

◈

Իրիկունը պարան տամ,
Մեջը մտնեմ, թավալ տամ:

*Տեղաշոր*

◈

Սպիտակ դաշտ,
Սեւ-սեւ այծեր:

*Թուղթ եւ գիր*

◈

Դաշտը սպիտակ,
Սերմը սեւ,
Ձեռքով ցանեմ
Աչքով հնձեմ:

*Գիրքը*

◈

Փետե տղա,
Երկաթե մազեր,
Ծերքս օնիմ, ընջղնջա:

*Քամանչա*

◈

Ալալում,
Բալալում,
Տանիմ խաղանիմ,
Պիրիմ կախ անիմ:

*Թառ*

◈

Մինը կա, ցամաքեց
Ջուրը մտնում,
Էլ դուրս չի գալիս:

*Նավ*.

◈

Տապանը փետե,
Մեռելը երկաթե,
Ձենը դմբդմբան,
Ինքը քեզ պաշտպան:

*Հրացան*

◈

Մթին տոն,
Հարամին մեջը քոն:

*Փամփուշտ հրացանի մեջ*

◈

Էն ի՞նչն է, ի՞նչը,
Մի սյուրու տավար,
Մի չաթվավ կապած:

*Թազբեհ*

◈

Մի ոտանի,
Որտեղ ուզես,
Քեզ կտանի:

*Գավազանը*



◈

Մարդու շինած ուլունք չի,
Ծովից հանած գոհար չի,
Անգին ակից թանկ է նա,
Ծիլ ու ծաղկին կյանք է նա:

*Ցողը*

◈

Կա մի թռչուն,
Որ տասներկու բուն ունի,
Ամեն բնում չորսական
Միատեսակ ձու անի,
Ամեն բնում յոթնական ձագ ունի:

*Տարին*

◈

Հարը խելոք,
Մարը խելոք,
Տղան պել:

*Թթի ծառը եւ օղին*

ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ՀԱՐՑՆՈՒՄ Է,
ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ՝ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ

1.
Էն ի՞նչն է, Մելիք Շահնազար,
Ոչ ածուխ է, ոչ փոշի,
Բայց որ ուզում ա, սեւացնում ա,
Կեղտոտում ուրիշին:
- Ասա միտքդ, ա պել:
- *Լեզուն ա, լեզուն:*
- Ղորթ որ, ա պել...

2.
- Էն ի՞նչնա, ինչը՞, մելիք Շահնազար,
Ծնվում է գետնի վրա, մեռնում է օդում:
- Ա մեռած, ասա
- *Ծուխն է, ծուխը:*
- Հա ըլի, ա մեռած...

3.

- Էն ի՞նչնա, ի՞նչը
Սալորի չափ է,
Բայց տեղավորում է իր մեջ
Սարեր, ձորեր... ողջ աշխարհը:
- Ասե, ա մեռած:
- *Աչքն է, մելիք Շահնազար,*
Ես էլ կարծում էի աչքդ ծակ է,
Կհասկանաս...



4.
Ունես կանգուն մի վրան,
Երկու դուռ ունի վրան,
Ամբողջ տարին դռնբաց,
Դե ճանաչիր դու նրան:
- Էլի ասա, ա գիժ մեռած:
- *Քիթն է, քիթը...*
- Ղորթ որ, ա պել մեռած...

5.
Մի ծառ ունեմ, 4 ճյուղանի,
Ամեն ճյուղին երեք խնձոր,
Թող գրողը նրան տանի,
Ով որ հարցն իմ հեռուն տանի:
- Ա մեռած, ասա:
- *Տարին, իր չորս եղանակով, 12 ամիսներով:*
- Ղորթ որ, ա մեռած...

6.
Կա մի հովիվ, որ ցերեկը քնում է,
Գիշերները ոչխարները հանդ տանում:
- Ասա տեսնեմ, ա պել մեռած
- Մելիք Շահնազար՝ լուսինն է, աստղերը...

Բայց իմ բոլոր հարցերին չպատասխանեցիր դու, քեզ հարկավոր է կախել, շատ ես դանգլա, Մելիք Շահնազար:

## ՊՈՒՂԻԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Աբռաշ մարդ- եզան նման անխելք, բռի:
Աշկը շոր - կնամոլ:
Անաբուռ - անամոթ:
Գյադա - արժանապատվություն չունեցող:
Դոնգի-դոդոշ - անխելք:
Եսիր - գերի, խոնարհ, կամակատար:
Դանգլա - անխելք:
Դավաքար - ազահ-կռվարար:
Ռիխեվեր - շատակեր:
Ռիսալի - մեծ--մեծ խոսող:
Ռաշիդ - աշխատասեր:
Թամբալ - անգործ, գործից, խուսափող:
Թուլուբոշ - գործից խուսափող, անեռանդ:
Իգիփաքոռ - սիրուց կույր, սիրուց խաբված, միամիտ:
Լոպազ - մեծամիտ:
Լոթի - կատակասեր, ուրախ մարդ:
Ծիպիլի ծատուր - փոքրիկ մարդ, չնչին արարած:
Ծվծված ետ պերած - մաշված, հիվանդոտ:
Ծխըծոռ - ծոռ, մի քանի տեղից ծուռ, ծուռ մտքով մարդ:
Կյոփան - աշխատասեր, եռանդուն:
Կուլ - շատակեր, գործից չվախեցող:
Կլոխը գեռ - չհասկացող, պնդաճակատ:
Կտըզ - փոքր:
Ղամազ - անխելք:
Նանուշ - անգործունյա, անտարբեր, անմիտ, թույլ:
Նահե - շատ իմացող:

Չըռչըռ - շատախոս, կաչաղակ:
Պտկան ծաղկած - մեծամիտ, չտես:
Պիրանան չոր - չուտող, քչակեր:
Պապե - շատ գիրացող:
Ցուղուբատու - երես առած:
Սեւ քար - անտարբեր, ծանր բնավորության մարդ:
Սեւ սար - տեղից չշարժվող, խուլ, չլսող:
Տոպրակ - մեծամիտ, մեծ-մեծ խոսող:
Օշափ - շատակեր:
Կռակլավ - կռնչան բու, անվերջ վատ խոսող մարդ:
Կոտրած գդալ - տեղի անտեղի գործին խառնվող մարդ:
Կորե- դանդաղաշարժ:
Կոտեգ - շան թուլա, ձագ:
Լակոտ -շան թուլա:
Եզնը - անհասկացող, բթամիտ:
Թութակ - ուրիշներին կրկնող, նմանակող:
Թամբալ - անբան:
Կյումաշ - շատակեր:
Ղոչ - խիզախ, տղամարդ:
Ճիճի - ճպուռ-շատախոս մարդ, կին:
Ճորի - անպտուղ, անհասկացող:
Վեխճար - անմիտ, խեղճ:
Ցոն - կծու բնավորությամբ մարդ, կնամոլ:
Վերցակ - անիմաստ մեծամտություն:
Փալանդուզ - փալան կարող:
Փիղ - հզոր, խելոք, մեծ:
Փլզծամե - կանանց հետ քաղցրախոս տղամարդ:
Քչեղակ - թեթեւասոլիկ, շատախոս:

## ԱՆԵԾՔՆԵՐ

Աստված խռավե քզանա:
Աստված դվանտ անե:
Աստված քեզ քոր տա, ղեյնը չտա ջանդ քորիս:
Աստված անիծի քեզ:
Աչքդ ամեն հինչի վրա մնա:
Աչքդ տուս կե:
Աչքերդ ծլլան:
Աչքերդ քոռանան:
Աստուծ տանե քեզ:
Աստված մինին յեղում ա մինին ղաղում:
Բալադ մեռնե:
Բալադ թուրնը ընգե:
Բալադ տափը մտնե:
Բալադ խրվխարավ կյա:
Բոյդ թաղիմ:
Բոյիդ թիլ չափիմ:
Բոյիդ եշիմ, թա խելքեդ:
Գրիչդ հափռումը մնա:
Գուլուխարավ ինիս տու:
Դալուտ տափռումը տինիմ:
Դալուտ տերտակ մնա:
Դլվեդ ծուն կա:
Դալուտ թաղիմ:
Եթիմ-եսիր մնաս:
Եղըմըտ մնաս:
Յըղփարա տեռնաս:
Ըռնըթաթախ տեռնաս:



Ռեխտ կապե:
Ռեխեվեր ջոն:
Ռեխդ քեզ պահե:
Թաղիմ քեզ:
Թաքուն ցավան ընգիս:
Իլածդ կտրվե:
Իրփվերի մնաս տու:
Իշեղդ հանգի:
Իրեսդ սվանա:
Իրիսատեղ պահե:
Լուզուտ լալկվի:
Լուզվադ օխծը կծի:
Լուզունը տետ ածակում:
Լեչակդ սեւ մնա:
Լուզուն սրա, պաքա, պաքա:
Խվարվիս տու:
Խփանվիս տու:
Խռխեքդ կտորվին:
Խեր չտեսնաս տու:
Խրթա պրծնվիս վուչ:
Խասյաթդ կտրվի:
Խասյաթը ջան խասյաթ ա:
Ծենդ կտրե:
Ծոցդ տերտակ մնա:
Ծեծդ չորանա:
Ծեծը ջան ծեծա:
Ծծած կաթնդ քեզ հարամ:
Կոնդըտ մոշավ անիմ:
Կլապանդ կապե:

## ԱՆԵԾՔՆԵՐ

Աստված խռավե քզանա:
Աստված դվանտ անե:
Աստված քեզ քոր տա, ղեյնը չտա ջանդ քորիս:
Աստված անիծի քեզ:
Աչքդ ամեն հինչի վրա մնա:
Աչքդ տուս կե:
Աչքերդ ծլլան:
Աչքերդ քոռանան:
Աստուծ տանե քեզ:
Աստված մինին յեղում ա մինին դաղում:
Բալադ մեռնե:
Բալադ թուրնը ընգե:
Բալադ տափը մտնե:
Բալադ խրվխարավ կյա:
Բոյդ թաղիմ:
Բոյիդ թիլ չափիմ:
Բոյիդ եշիմ, թա խելքեդ:
Գրիչդ հափռումը մնա:
Գուլուխարավ ինիս տու:
Դալուտ տափումը տինիմ:
Դալուտ տերտակ մնա:
Դլվեդ ծուն կա:
Դալուտ թաղիմ:
Եթիմ-եսիր մնաս:
Եղըմըտ մնաս:
Յրըփարա տեռնաս:



Ռեխտ կապե:
Ռեխեվեր շռն:
Ռեխդ քեզ պահե:
Թաղիմ քեզ:
Թաքուն ցավան ընգիս:
Իլածդ կտրվե:
իրփվերի մնաս տու:
Իշեղդ հանգի:
Իրեսդ սվանա:
Իրիսատեղ պահե:
Լուզուտ լալկվի:
Լուզվադ օխծը կծի:
Լուզունո տետ ածակում:
Լեչակդ սեւ մնա:
Լուզուն սորա, պաբա, պաբա:
Խվարվիս տու:
Խփանվիս տու:
Խոխեքդ կտոըվին:
Խեր չտեսնաս տու:
Խթա պրծնվիս վուչ:
Խասյաթդ կտրվի:
Խասյաթը շան խասյաթ ա:
Ծենդ կտրե:
Ծոցդ տերտակ մնա:
Ծեծդ չորանա:
Ծեծը շան ծեծա:
Ծծած կաթնդ քեզ հարամ:
Կոնդըտ մոշավ անիմ:
Կլապանդ կապե:

Կերածդ քթծկարվդ վեր ածիս։
Կլոխդ թաղիմ։
Կլխես մատաղ ինիս տու։
Կռնուկուտուր տեռնաս
Կռակլավս։
Կռկլան քաշ։
Կռվարար շոն։
Կռներդ կտրատե։
Կռներդ չորանան։
Կռներդ սրտեդ խաչիմ։
Հրիշտրակը քեզ տանի։
Հիշտեղ քինիս, հղետ ցաքվի։
Հացդ վեչ թոռնան կենա։
Համեղ պատառ չտեսնաս։
Հալդ խարաբա։
Ճաքած-տրաքածա։
Ճակատդ դղլարու կաշի ա։
Ճակատդ շան ճակատա։
Ճրաքդ հանգի։
Ճիրմանդ ք... իմ դայի։
Մաննա վեչ հսնի պիրանիդ։
Մոխրվես տու։
Մադարդ մեռնե։
Մարթըտ մեռնե։
Մաշկետ հոռը կոտրե։
Մինակ մնաս։
Յա քմակետ տոռը, յա նրա խոսքը։
Յաղին տանի քեզ։
Եթիմ մնաս։



Եղդ մոխիրը տեռնա։
Շորերդ նոթում տինիմ։
Շան փայ տեռնաս։
Շնացալս։
Շելակդ շլորինի միշտ։
Շեքդ ք... իմ ապեր։
Չուլուխանաս։
Չոր չորանաս։
Չոռ օտիս, զիար ոտիս։
Չոռը պկատ կենա։
Չոլի չոբան ըս։
Պոչերդ պկավդ տամ։
Պռշնեդ չորացած մնա։
Պտռնե տեսնաս տու։
Պլանաս տու։
Պելը պլան, հղեն ըրկնանա։
Ջանդ տուս կա։
Ջանդ հեռ ընգե։
Ջնահեռ հինչա օզում մզանա։
Ջանդ վերթափե։
Ռեխդ նի կենա։
Ռեխդ ցրեւ մի տա։
Ռեխդ լիզնա քաքավ։
Ռխետ թեթ ասե, նստե։
Ռեխդ քեզ պահե։
Ռխեվեր շոն։
Ռխեն եշի, կծած տրխեն։
Ռխեն քաքերը ցրեվ ա տամ։
Վեչ լավ օր տեսնաս։

Վեց քաղցր պատառ տեսնաս:
Վեց մխիթարվիս տու:
Վեց մծանաս տու:
Վեղս գլխիդ:
Վենդ կոտրե:
Վերթափես տու:
Տափը տրաքիս տու:
Տափը մտնիս տու:
Տափերը տփտփիս տու::
Տուներեն փուչի հվաքիս տու:
Տուներեն մնաս տու:
Տոնդ պրիշակ տեռնա:
Տոնդ աստված քանդի:
Տղաք թաղիմ:
Տըըպերցաում մնաս:
Քեզ թաղիմ:
Քեզ կեղիմ:
Քթեդ ծուխերը եր հնի:
Քթեդ մոլ անիմ:
Քեզ յաղին տանի:
Քթեդ տռող չկա:
Քեզ գուլլա ծեփե:
Քմակավա մտածում:
Քեզ օխծը կծե:
Քուռանաս տու:
Քեթը ցեց ջոն:
Օխտը ցավի տիրանաս:
Օխծը կծի քեզ:
Օռվիս տու:



# ՄԵՂՎԱԽԱՅԹԵՐ

ԱՆՏՆՏԵՍԸ

Մի ամբողջ գերան
Այս մարդը տաշեց,
Մինչեւ նրանից
Մի ծողիկ քաշեց:

ԱԳԱՀԸ

Հինգ գյուղ է կերել
Այս նախագահը,
Բայց չի կշտացել
Դեռ այս ագահը:

ԱՆԲԱՆԸ

Աշխատանքում
Նա անբան է,
Սեղան նստեց՝
Ճիշտ կոմբայն է:

ԷԳՈԻՍՏԸ

Նա հարեւանի
Կովն էլ կմորթի,
Միայն դիզլն իր
Ունենա մորթի:

ՄԵՂԱՎՈՐԸ

Գալիս իմ գլխին
Քարոզ է կարդում
Գողն ինքն է,
Մեղքը վրա է բարդում:

ԲԱՄԲԱՍՈՂԸ

Հիմնարկի պետին
Բամբասեց, խանդեց,
Ինքը պետ դարձավ,
Հիմնարկը քանդեց:

ՋՈՐՆ ՈՒ ԳԵՃԸ
Ինչից որ խոսես,
Միշտ կընկնի մեջը,
Բայց չի տարբերի
Նա ջորն ու գեճը:

ԱԳԱՀԸ

Նա քո մի մազը
Կանվանի գերան,
Ինչ փույթ, թե ինքը
Պահեստը կերավ:

ԻՐԵՆ Է ՔԱՇՈՒՄ
Կացնի հոգսն է
Նա անվերջ քաշում,
Բայց ուրագով է
Գերանը տաշում:

ՊԱՇՏՈՆԱՎՈՐԸ

Երբ պաշտոն չուներ
Կարգին ընկեր էր,
Պաշտոն տվեցին,
Հիմա փքվել է:



ԺԼԱՏԸ

Մի օր հյուր եղա
Ես նրա տանը,
Նա ինձ յուղի տեղ
Տվեց իր թանը:

ԾԱՅԱՄՈԼԸ

Քանի պետ եկավ
Բոլորին գովեց,
Նրանց կրակին
Իր պեկլան բովեց:

ԽԱՆԴՈՂԸ

Ամուսնուն այնքան
Ջուր տեղը խանդեց,
Որ տունն իր գլխին
Այս կինը քանդեց:

ԲԱՄԲԱՍՈՂԸ

Բամբասելու թեմա չուներ
Բամբասողը երեկ,
Բռնեց փեշից եղանակի
Եվ քրքրեց... արևին:

ՏՆԱՎԵՐԸ

Յոթ որդուց մեկը
Գյուղում չպահեց,
Մարդն այս իր ձեռքով
Օջախն իր մարեց:

ՔԾՆՈՂԸ

✓ Յանդիպելիս
Խոնարհվում է,
Կանգնած տեղը
Ասես հալչում,
Բայց թե նեղը
Ընկար մի օր,
Առաջինը քո հասցեին
Ինքն է հաչում:

ՏԵՍՈՒՉԸ

Քեֆի է նստում
Նա որսի մսով,
Որսագողերին
Խիստ բամբասելով:

ԱՆԿԱՐՈՂԸ

Տանուլ է տալիս
Նա միշտ էլ մարտը,
Բայց ինձ վրա է
Թափ տալիս մատը:

ԲՈՌԸ

Տարին բոլոր
Մեղուն բանի,
Անբան բոռը
Բերքը տանի:



ԱՆՏԱՐԲԵՐ

Կուզես դու քանդիր
Դրացու տունը,
Բնավ չի խախտի
Իր լռությունը,
Բայց թե մի թեթեւ
Դիպչես իր շահին,
Նա կփոթորկվի
Իսկույն այդ պահին:

✓ ԵՐԴՈՒՄ Է ՈՒՏՈՒՄ

Ոչ մի կրոնի
Նա չի հավատում
Բայց սուտ խոսելիս
Երդում է ուտում:

ԵՐԱԽՏԱՄՈՌԸ

Աղբյուրն ասաց
Կով կթողին.
- Այսքան տարի
Գաղտագողի
Օգնում եմ քեզ
Ես ամեն օր,
Իսկ դու, անգին,
Տեսնում եմ, որ
Քանի փառքդ
Բարձրանում,
Այնքան շատ ես
Գովքը անում,
Մարալ կովի...

ՔԱՄԵԼԵՈՆ

Նա ուզած պահին
Կփոխի մորթին,
Մարդն այս զգացումը
Չունի ամոթի:

ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ

Թշնամուդ անգամ
Լավություն արա,
Թե օձ չէ, նրա
Գինը կիմանա:

ԾԱՓԵՐԻՑ ՓԱԽԻՐ

Փախիր անգինս,
Ինչպես դահիճից,
Փախիր ծափերով
Հարուստ դահլիճից:

ՇԱՆՏԱԺԻՍՏԸ

Նրա զենքը կուռ
Միշտ իր ստաժն է,
Ում էլ հանդիպի
Լեզվին շանտաժն է:

ՄԻ «ՁՈՒ» Է ԱԾԵԼ

Գիտեք ինչո՞ւ է
Այդքան շատ խոսում,
Մի «ձու» է ածել
Նա մի սովխոզում:



ՆԱԶԱՐԸ

√ Մի հիմնարկ էր
Ու մի Նազար,
Ինքը մեկ էր,
Բախտը՝ հազար:

ԼԻԴԵՐԸ

Այս մարդն իր գործը
Այն գլխից գիտեր,
Դրա համար էլ
Դարձել է լիդեր:

ՔՆՆԱԴԱՏԸ

Քննադատում է
Նա մեզ անընդհատ,
Բայց ոչ գրող է,
Ոչ էլ քննադատ:

ՇՆԻԿԸ

Կա մի շնիկ, որ փողոցում,
Ինձ տեսնելիս միշտ հաչում է,
Իսկ երբ մոտ եմ ուզում գնալ,
Պոչը ծալում ու փախչում է:

ՓԱՌԱՄՈԼԸ

Գնաց ժողովում
Նա երկար ճառեց,
Իրեն անվանեց
Բակունց ու Չարենց:

ՁԱԽԵՆՑԸ

Հայրական տունը
Իր գյուղում ծախեց,
Այս բանաստեղծը
Անունը Ձախենց:
Հիմա քաղաքում
Ողբում է, լալիս,
Թե մարդիկ ո՞նց են
Գյուղերը թողնում
Ու քաղաք գալիս:

ՁԱՅՆԱՊՆԱԿ ՉԵՄ

Ձայնապնակ չեմ.
Ցանկացած պահիդ
Չեմ կարող երգել:
Երգելու համար
Մինչեւ եռ չգա
Արյունը սրտիս
Եվ մինչեւ ինքը՝
Նորին մեծություն,
Երգը իր ոտքով
Չգա իմ դուռը
Չեմ կարող երգել...
Ձայնապնակ չեմ...

ԱՌՈՒ ԵՎ ԳԵՏ

Պետն այս արդեն
Թոշակառու
Իր գործը գիտե,
Նրա համար թոշակն առու,
Պաշտոնը՝ գետ է:



ՊԵՏԸ

Ինչ անուշ բան է
Պետը, կնիքը.
Հիմնարկի ավտոն,
Հիմնարկը՝ ինքը.
Զարխանում դարձավ
Պետի կնիկը.
Պետն՝ ամենագետ.
Գրպանը լիքը:

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

Այն օրվանից, երբ
Պաշտոն ունեցավ.
Ընկեր, բարեկամ
Ասես շատացան,
Ուր էին նրանք,
Երբ պաշտոն չուներ,
- Խոր քնած էին,
Հիմա արթնացան:

ՆԱԶԱՐԱԿԱՆԸ

Նազարական իր մեծ բախտով,
Փափուկ, հզոր աթոռ-բախտով,
Ապրեց մեր մեջ Նազար քեռին
Ու պար ածեց այսքան տարի
Ողջ հիմնարկը նա իր ձեռքին:

ՊԵՏԻ ԲՈՂՈՔԸ

Աչքն այս պետի իրեն տեսավ,
Առավ կոչում, պարգեւ, նվեր,
Լիացան աղջիկն ու փեսան,
Բայց նա գիտեր անվերջ նվել
Ու բողոքել իր «կույր» բախտից,
Թե մի կաթիլ օգուտ չունի
Աթոռ-թախտից:

ԳԼՈՒԽԳՈՎԱՆԸ

Նա շատ էր գովում
Աշնան իր հերկը,
Ամառը եկավ
Չտեսանք բերքը:

ՏԵՂԱԿԱԼՆԵՐԸ

Տեղակալները մի միտք են լուծում,
Ոնց փոխարինեն իրենց պետերին,
Տեսնես պետերը ի՞նչ են մտածում:

ԱՐԺԵՔԸ ԸՆԿԱՎ

Քանի դեռ պետ էր, ընկեր, բարեկամ
Մեծարում էին: Գործից հանեցին,
Հին դրամի պես արժեքը ընկավ:

ՎԱՐԱԿԸ

Քանդեց հիմնարկը բամբասանքը սին,
Քանի չի հասել ծեզ այս վարակը,
Խեղդեցեք տեղում ամեն մի բացիլ:



ԱԳԱՀ ՊԵՏԸ

Կա մի քաղաքում շատ ագահ մի պետ,
Որ եթե տային «Վոլգան» հիմնարկի,
Վաղուց թռչակի կտաներ իր հետ:

ԾԱՆՈԹ ՊԱՇՏՈՆԱՎՈՐԸ

Պաշտոնավորվեց մի մեծ հիմնարկում
Եվ այդ օրվանից ապրում են անհոգ
Ծանոթ, բարեկամ նրա շվաքում:

ԱՌԵՂԾՎԱԾ

Իմ հարեւանը
Մեռել էր հեռվում,
Լուրը մեզ հասավ
Երկու օր հետո,
Երկու օր առաջ
Շունն իր ոռնում էր
Ու լաց էր լինում
Իր տիրոջ համար...

ՆԱՅԱԾ ՈՒՄ ՀԱՄԱՐ

Բարձունքն ասում են,
Թե շատ է հարմար,
Այնտեղից լավ են
Մարդիկ երեւում,
Ճիշտ է այդ,
Սակայն
Նայած ում համար...

***

Փշեր ունեցող
Ծառերը հաճախ
Պաշտպան են կանգնում
Այգու ծառերին...

Ավա՜ղ, վատ մարդիկ
Փշահարում են
Միշտ էլ լավերին:

***

✓ Մարդ կա
Հողի մեջ
Մի հոնի կորիզ չի տնկել անգամ,
Բայց բողոքում է
Ու միշտ պահանջում
(Եվ չի ամաչում),
Որ իրեն բաժին դրախտը փարթամ
Հիմա իրեն տան,
Մի բան էլ ավել,
Եվ թողեն որջը,
Մենակ վայելի...



ՍԵՎ «ՎՈԼԳԱՆ»

Նա ամբողջ կյանքում
Քնած, թե արթուն
Երազում էր միշտ
Սեւ «Վոլգա» գնել,
Ուրիշ հոգս ու վիշտ,
Ուրիշ գործ չուներ:
«Վոլգայի» համար
Նա ինչե՜ր չարավ
Ու երբ այն առավ...
«Վոլգան» ջուր եկավ,
Հաշմանդամ դարձավ...

***

Քեզ հարկավոր է
Ճիպոտահարել,
Հրաչյա Բեգլարյան,
Դու քեզ կեղծում ես,
Սխալ ծրում ես,
Ծուռ բան տեսնելիս,
Ինչո՞ւ լռում ես...

***

Խենթ է քամին.
Թվում է՝ նրան
Ինչ-որ դեղին է,
Ոսկի է մաքուր:
Ու գիշեր-ցերեկ
Մանեման, անքուն
Ժողովում է նա

Խաչամը դեղին,
Փչում դես ու դեն,
Տեղի-անտեղի
Եվ ապա տանում
Երեսով տալիս
Ում որ պատահի:
Ու դատարկաձեռն
Նստում է լալիս,
Թե տեսեք, տեսեք,
Ձմեռը եկավ
Գանձերս խլեց
Եվ ինձ պարտքերի
Յոգիս մեջ խրեց...

## ԾԱՌՆ ՈՒ ՔԱՐԸ

Ծառը լավ է
Քերծի վրա,
Քերծը նրան
Սնում, պահում
Պաշտպանում է
Ամեն բանում:
Ծառն էլ կանաչ
Իր սաղարթով
Որ քերծին է
Միշտ զարդարում:
Լավ է ծառը
Քարի ճեղքում,
Բայց թե հանկարծ
Նա տեղ գտավ
Մեր հին վանքի
Պատի վրա,
Իմացիր, որ
Մահն է նրա...



## ԱՆԲԱՆԸ

Երազում է մի հարմար
Ու մեծ պաշտոն ընդունի,
Չի աշխատում իր համար,
Թափառում է մեր Թյունին:

- Թյունի, գնա գործարան
Խառատություն սովորիր,
- Ծաղրում ենք ինձ անպայման,-
Ասաց գոռոզ մեր Թյունին:

- Գուցե՞ դառնաս շինարար,
Դա քեզ մեծ փառք կբերի,
- Էդ էր պակաս,- ասաց նա,-
Ընկեր դառնամ քարերին:

Ասի, Թյունի, ճիշտ ճամփից
Մոլորվել ես դու արդեն,
- Փողոցները,- ասաց նա,-
Յինգ մատիս պես ես գիտեմ:

ՍՏԱԼԻՆ

Ես վախենում եմ
Այս բեղավորից.
Բոլոր մեղքերի
Այս մեղավորից:

Թվում է մի օր
Նա ետ է գալու,
Եվ մեզ վչտերի
Նոր գետ է տալու:

Կրեմլում նրա
Ոգին չի մեռել,
Թեեւ անունն են
Քարերից քերել:

Ես վախենում եմ
Այս բեղավորից.
Բոլոր մեղքերի
Այս մեղավորից:





## ԳՈՐԲԱՉՈՎ

Մեր տունը ոչ ոք
Այդպես չի քանդել,
Մեր գործը ոչ ոք
Այդքան չի բարդել:
Մեզ մեր տանն այսպես
Ոչ ոք չի բանտել,
Մեզ կյանքում ոչ ոք
Այդպես չի խաբել,
Ոչ ոք մեր գլխին
Այդպես չի ամպել,
Ոչ ոք Կրեմլից
Այսքան հուսախաբ
Մեզ տուն չի ճամփել...
Ո՞վ է այս մարդը,
Յուդան, տմարդը,
Այս բիճ Հասանը,
- Դա Գորբաչովն է,
Իլյիչի սանը:





***

Լավ բան տեսնելիս
Դեմքը մթնում է,
Քո խնդությունից
Ինքը տրտում է...

***

Թեկուզ դու նրան
Կաթ էլ տաս մեղվի,
Մեկ է օձի պես
Կշինի լեղի:

***

Ոչ փողից է կշտանում
Եվ ոչ էլ փառքից,
Ինչեցրեք այս կավատին
Ձեւսի սեւ կառքից:

***

Մի բաժակ թեյ տուր
Նրան զգովի,
Եվ նա  քո մասին
Երգեր կձոնի:

***

Քայլում է ինչպես
Կենդանի դիակ,
Յուդան այս, հագած
Յիսուսի դիմակ:



***

Ես զարմանում եմ,
Ես զայրանում եմ
Ինքս ինձ վրա,
Այս մարդ ճիվաղին
Ինչո՞ւ եմ պատվել
Ես աղ ու հացով,
Իսկ նա իժի պես
Իմ տունն է եկել
Միշտ թույն ու մաղձով...

***

Ով հարկավոր չէ՝
Վրան հաչում է,
Ով հարկավոր է,
Ոտքը պաչում է:

***

Մի բուռ ցորեն է աղում
Եվ մի բուռ կորեկ,
Իբր հաց է արարում
Եվ ասում՝ կերեք:

***

Պետք ես նրան,
Նա քեզ գովում է,
Պետք չես,
Կրակին նա քեզ բովում է:

***

Աղամանդները
Մնացին ծովում,
Ծովի երեսին
Փրփուր է լողում:

ՓՈՂԱՄՈԼԸ

Փողապաշտ է,
Փող է ուզում, իմացիր,
Մեծ գռփող է,
Սրիկա է, իմացիր,
Այսքան տարի
Չի կշտանում նա փողից,
Փող տուր նրան,
Թեկուզ հերը անիծիր:

ՆԱԽԱՆՁԸ

Լավ բան տեսնելիս
Դեմքը մթնում է,
Ընկերը լավ է,
Ինքը տրտում է,
Ով է այս մարդը,
Ճանաչենք նրան,
Նախանձից ինքը
Իրեն ուտում է:



ԳՌՓՈՂՆԵՐԸ

Լաց է լինում,
Թե փող չունենք,
Տանող-բերող,
Առնող չունենք.
Գերդաստանով
Մարդկանց գռփում
Դեռ ասում են՝
Գռփող չունենք:

ՃԻՎԱՂԸ

Դու նրան հաց տուր,
Փորձանքից փրկիր,
Վտանգի պահին
Նա քեզ կլքի,
Մարդ չէ, ճիվաղ է
Այս ողորմելին,
Միշտ կերած հացի
Վրա կթքի:

ԸՆՉԱՔԱՂՑԸ

Մեզ մոտ է գալիս
Միշտ հացի ժամին,
Գիտե, որ պիտի
Մի փոր հաց ջահի:

***

Ասացին քանդենք կոլխոզ ու սովխոզ.
Ես էլ քանդեցի ու կերա անխոս,
Հիմա ձեռքերս քամակիս կապել,
Ուզում եմ քեֆիս լրջորեն կպեն...
Մենակ մի բան եմ ես սխալ արել,
Կերել, ուրիշին բաժին չեմ հանել:

## ՉԱՐ ՄԱՐԴԸ

Անպակաս է միշտ այս մարդու նվնվոցը,
Ում տեսնում է, փշշացնում է, ինչպես օձը:

## ԿԾՈՒ ՄԱՐԴԸ

Մարդ չէ, ասես, թե կծու տաքդեղ է,
Բայց թիկունք ունի եւ միշտ տաք տեղ է:

## ԳԼՈՒԽԳՈՎԱՆՆԵՐԸ

Դու ինձ գովիր,
Ես՝ քեզ,
Ես մի հանճար,
Դու՝ կես:

***

Ինչ որ տվին, առավ կրծեց,
Վերջն իր տիրոջ ոտքը կծեց:



***

Սա միշտ քարեր է գրպանում պահում,
Թեեւ գալիս է ու քեզ հետ պարում:

***

Մեկին գիտեմ, թունդ քացախ է,
Ինչ որ բռնի, վերջը ձախ է,
Տարին բոլոր նա իր թանը
Նռան գինու տեղ ծախում է:

## ՇՈՂՈՔՈՐԹԸ

Ում հասցեի երեկ հաչում,
Այսօր սրտանց երգ է ձոնում,
Գձուձությամբ նրանց կառչում,
Շողոքորթի մեղր է ծորում:

Բայց ի՞նչ արժե խոսքը նման,
Անտեր շանը ո՞վ է սիրում,
Որ պոչ շարժում սրան-նրան,
Բայց ժանիք է անվերջ սրում:

## ԷՇԻ ԿԱՐԾԻՔԸ

Հիվանդ պառկած էր առյուծ մեծ արքան,
Կենդանիները վեր կացան եկան,
Օրենքին հլու,
Հնազանդ ու լուռ:
Բայց թե ինչու է արքան զառանցում,
Ոչ ոք չգիտեր: Միա այդ հարցում
Կարծիք էր պետք,
Որ մեկը անգետ

Մխալ դիազնոզ, դեղ չտար նրան
Եվ անժամանակ տաներ գերեզման:
- Մինչեւ որ արքան կարգին չքրտնի,
Դժվար թե նորից նա ելնի ոտքի.-
Բարբառեց արքը,
Այդ խուլ-ականջը,
- Միշտ որ մրսել է արքայից արքան.-
Ասաց աղվեսը...
Բայց խոսքի կեսը
Դեռ չէր ավարտել, մեջ ընկավ էշը.
- Չե՞ք տեսնում ծայնը ինչքան է խզել.·
Անշուշտ, արքայիս գարին պակաս է:

ՇԱՆ ՀԱՉՈՑԸ

Փողոց դուրս եկավ Կայծակ Շանթունին
Պատահեց այնտեղ հանկարծ՝ շան թուլի,
Եվ թուլան ասաց՝ հա՛փ, հա՛փ, կկծեմ,
Մի ոսկոր տվեք, նստեմ կրծեմ:
Մի ոսկոր տվին, նորից կրծեց,
Բայց շան հաչոցը բերնից չզգեց:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԲՈՂԱՐԸ

Աղվեսն ասաց
Բողարին.
- Ինձնից մնա
Արխային,
Էլ մոտ չեմ գա
Ձեր գյուղին,
Ոչ էլ փոքրիկ
Այն հյուղին,
Որի շուրջը



Ամեն օր
Ման են գալիս
Հավ, աքլոր:
Բողարն ասաց.
- Հա՛վ, հա՛վ, հա՛վ,
Չեմ հավատում
Քեզ բնավ,
Հենց որ աչքս թեքում եմ,
Դու ծանկում ես
Մի չաղ հավ:

Մի «ՊՈԵՏԻ»

Մի երգ-գրեցիր, սիրով շտկեցին,
Տարար տպարան, տպագրեցին,
Ուրիշի գրչով, ուրիշի ուժով
Քեզ որպես պոետ թեւավորեցին:

Եվ հեծած պեգաս հրեղեն քո ծին
Ցանկանում էիր բարձրանալ պառնաս,
Հայացքդ հառած անհաս բարձունքին
Իմանում էիր պոետ կդառնաս:

Բայց կարծ եղավ քո թռիչքը համառ,
Եվ ճամփադ եղավ մթին ու մռայլ,
Չիմացար, որ միշտ թռչելու համար
Պետք է սեփական թեւեր ունենալ:

## ՔԱՄԵԼԵՈՆԸ

Ում մոտ գնաց,
Ծվար գնաց,
Հագավ նրանց
Հագուստները,
Գռփեց նրանց
Պահուստները,
Փոխեց հազար
Երես, աստառ,
Կեղծեց հացի
Ամեն պատառ,
Փոխեց հունը,
Լքեց բույնը,
Ծռվեց-ծալվեց
Հազար տեղից,
Հազար ու մի
Սիրով տարվեց,
Տաղեր ասաց,
Խաղեր ասաց
Սրան-նրան,
Ծառա եղավ
Ամեն դռան,
Փոխեց հոգին
Այս անհոգին,
Ամբողջ կյանքում
Չճանաչեց
Իմն ու քոնը...
Ճանաչեցի՞ք
Ո՞վ է այդ մարդ
Քամելեոնը...



## ԱՆՄԵՂ ՄԵՂԱՎՈՐԸ
*(Առակ)*

Աղվեսը մի օր գաղտնի գյուղ մտավ,
Ման եկավ ու մի հավաբուն գտավ,
Թաթերով քանդեց,
Կտուրը ծակեց,
Մտավ հավաբուն ու մի հավ բռնած
Ուզում էր գնալ, երբ էշը զռռաց.
Շներն արթնացան,
Իրարով անցան,
Աղվեսը մի կերպ գլուխն ազատեց,
Սակայն իր մտքում էշին խիստ ատեց.
Նույն օրը նստեց,
Մի դիմում գրեց,
Մի շարք հարցերում էշին զրպարտեց,
- Երես է առել այդ անպիտանը,
Նրա զռռոցից դրսում, թե տանը
Հանգիստ քուն չունեն մարդ ու անասուն,
Պետք է կտրել շատախոս լեզուն:
Դատավոր գայլը
Դիմումը հարգեց
Եվ տեղն ու տեղը էշին գլխատեց:

## ԳԼՈՒԽ ԳՈՎԱՆԸ

Նա շատ էր գովում
Աշնան իր հերկը,
Ամառը եկավ,
Չտեսանք բերքը:

ԳՕՈՒԾԸ

Ինչից էլ խոսես,
Կշեռի հարցը,
Մինչեւ չպոկի
Իր օրվա հացը:

ԾՈՎՆ ՈՒ ՔԱՄԻՆ

Ծովն այդքան մեծ,
Ծովն այդքան խոր,
Միշտ մտքի մեջ
Միշտ մտախոհ,
Քամին թեթեւ,
Քամին անբան,
Ո՞նց է այդպես
Յսկա ծովին
Խաղացնում
Ձեռքերի մեջ...

ԻՆՉՊԵՍ ԱՊՐԱՐ ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ

Լավ եմ արել, որ ամեն տեղ
Բուն չեմ դրել կկվի նման,
Ամեն խոսքի ունկ չեմ դրել,
Վիզ չեմ ծռել ամեն դռան:

Լավ եմ արել, որ սեւին՝ սեւ,
Սպիտակին սպիտակ ասել,
Բայց թշնամուս նեղ օրվա մեջ
Օգնության եմ միշտ էլ hասել:



Լավ եմ արել, որ շիտակ եմ
Ապրել կյանքում եւ աշխատել,
Ուրիշները գողանալով
Ի՞նչ են շահել, ո՞ւր են հասել:

Լավ եմ արել, որ չեմ քաշել
Ընկերոջից, բարեկամից
Ուրագի պես միշտ չեմ տաշել
Ու մնացել միշտ դեպի ինձ:

Լավ եմ արել, որ ես կյանքում
Ասպետական կյանք եմ վարել,
Զմռան ցրտին այրվել թաքուն
Ուրիշներին տաք եմ պահել:

Լավ եմ արել, որ արդարին
Բաց չեմ թողել, որ հոշոտեն,
Թեեւ հաճախ փոխարենը
Ինձ են խոցել ու ցեխոտել:

Լավ եմ արել, որ բռնել եմ
Արդարի գործի, խոսքի ուղին,
Եվ ողջ կյանքում մնացել եմ
Ազնիվ, արդար Պըլը Պուղի:

ԱՔԱՂԱՂԻ ՏԱՐԻ

Արարիչին ես ի՞նչ ասեմ,
Մարդն է տերը տիեզերքի,
Մարդու ձեռքն է երկինք հասել
Եվ խոսքերը՝ մութ ընդերքի:

Մարդուն թողած, նա կապիկին
Կարիքին է բերել հանդես,
Սրանց կողքին շունը եւ ձին,
Եվ դեռ օձին դու կտեսնես:

Հիմա էլ տես, աքաղաղը
Թառել է մեր բախտի ծառին.
- Ես եմ Ներկան ու ձեր վաղը,
Ես եմ Աստված, ես եմ բարին:

Կարծում է թե, երբ մի օր
Ժամանակին նա չկանչի,
Արեգակը մեր փառավոր
Պիտի քնած մնա, հանգչի:

Երեկ էլ դեռ մեր ժողովում
Իրեն երկար փառաբանեց,
Ասաց՝ դուք ինձ քիչ եք գովում,
Եվ ծափ զարկեց, երկար պարեց:

- Հավքերի մեջ ես եմ,- ասաց,-
Ուսադիրով մարշալական,
Իսկ արծիվը բիրտ է, անսանձ,
Հայտնի տիպ է քրեական:



Աքաղաղիս պաշտեք կարգին,
Թե չէ էլ չեմ կանչի ձեզին,
Կզրկեմ ձեզ արեգակի
Լույս երեսից ու... իմ տեսքից...

ՇԱՆՏԱԺԻՍՏԸ ԵՎ «ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ»

Մի շանտաժիստ,
Զուներ հանգիստ,
Բամբասում էր սրան-նրան,
Բայց սպառվեց նրա թեման
Եվ չգիտեր
Էլ ի՞նչ աներ,
Ում բամբասեր,
Ում հասցեին
Նոր սուտ ասեր
Մեկ էլ լսեց
Որ աղջիկն իր
Դաս էր սերտում,
Ընթերցելով
«Շունն ու կատուն»:
Ականջ դրեց մտքով արթուն
Եվ վճռեց գործն իր արագ,
Նամակ գրեց վերադասին
Երկար-բարակ:
- Թումանյանը ճիշտ չի գրել
«Շունն ու կատուն»
Շունը կատվին, չէ, չի ատում,
Բարեկամ են նրանք վաղուց
Հենց իմ բակում:
Թումանյանը զուր է նրանց
Ողջ աշխարհում խայտառակում...

## ՈՒՄ ԳԱՆԳԱՏՎԵՄ

Հազար տարվա աղբյուրներս ցամաքեցին,
Ում գանգատվեմ դրա համար,
Մոզերն այսօր կուռքերն իրենց խորտակեցին,
Ում գանգատվեմ դրա համար:

Համբակները դաս են տալիս խելոքներին,
Ում գանգատվեմ դրա համար,
Պոռնիկները ծեռք են առնում սուրբ կույսերին,
Ում գանգատվեմ դրա համար:

Մեծարվում է ջորին որպես հրեղեն ձի,
Ում գանգատվեմ դրա համար,
Քիչ է մնում կրիան կոչվի հզոր արծիվ,
Ում գանգատվեմ դրա համար:

Բաց է հիմա բեմի վրա շեք ու հետույք,
Ում գանգատվեմ դրա համար,
Ծուռները մեծ ու փոքրին կերան ստույգ,
Ում գանգատվեմ դրա համար:

Հրեշտակ է իրեն կոչում սեւ սատանան
Ում գանգատվեմ դրա համար,
Ում ինչ տվին առավ որպես տուրք ու ավար,
Ում գանգատվեմ դրա համար:

Ինձանից դուրս ոչ ոք ձայնս էլ չի լսում,
Ում գանգատվեմ դրա համար,
Աստված ինքն է խելագարված կաշառք ուզում,
Ում գանգատվեմ դրա համար...



## ՊՈՒՂԻԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Աշխարհում կա սպիդից վատը,
Երբ նախանձով է վարակվում մարդը:

***

Ծերմակ շորեր է հագնում այս դեւը,
Որպեսզի ծածկի իր հոգու սեւը:

***

Պահում է իրեն իբր մտքի լեռ,
Սնանկ է, սակայն, ու չար՝ ինչպես Ներ:

***

Ինձ հանդիպելիս հալվում, հալչում է,
Հենց հեռանում է, վրաս հաչում է:

***

Մեկ անգամ մեզ հետ միտինգ է եկել,
Ասում է՝ ես եմ Արցախը փրկել:

***

Սա միշտ գալիս, իմ ականջին
Ինչ-որ բան է փսփսում,
Չեմ իմանում հայհոյում է,
Թե ինձ գովում այս քսուն:

***

Օձաբարո մարդիկ կան, որ
Ինչ էլ անես, ինչով էլ որ սիրտը շահես,
Մեկ է, պիտի խայթի նա քեզ:

## ՈՒՂՏԻ ԲՈՂՈՔԸ

Ուղտը չոքեց
Ճամփի կեսին,
Բեռը մեջքին
Ու չէր ելնում,
Չէր էլ նայում
Տիրոջ դեմքին:
Տերն աղաչում,
Պաղատում էր,
Նստած ուղտին
Ելնել տեղից,
Ուղտը սակայն
Հավատարիմ
Իր հին ուխտին,
Որոշել էր
Ուղտապանին
Մի լավ նեղել,
Թեեւ տերը,
Ճիշտն ասած,
Վատ չի եղել:
Ու տերն հիմա
Նայում նրան,
Աղաչում է.
- Ուղտ, սիրելիս,
Բա ես քեզ տամ
Չիր ու չամիչ,
Քեզ զարդարեմ
Թագավորի նառին վայել,
Պահեմ, պաշտեմ,
Ախպոր նման,



Դու քեզ պահես
Այդքան անգութ,
Ու անվայել:
- Այ ապերախտ,-
Ուղտը ասաց,-
Մարդ էլ չինի
Այդքան անխելք,
Ես ուղտ լինեմ,
Կաշիս մի բեռ
Մեջքիս բեռը
Ասես մի լեռ,
Իսկ դու այսօր
Շահաստանի
Ճամփի վրա,
Իմ քարվանին
Քարվանբաշի
Կարգես էշի՞ն...
Դեռ ինձնից
Նեղանում ես,
Թե ինչ է սա,
Դա տանելու
Բան է, ասա...

√ ՕԶԻ ՏԱՐԻ

Գրողը տանի,
Տարին դուր եկավ Օձերի տարի:
Ասում են՝ խելքի եւ իմաստության
Տարի է հիմա,
Բայց մինչեւ այսօր,
այդ ով է տեսել օձերի բարին,
Կամ նրանց խելքը ում է հարկավոր,
երբ նրանք ողջ են կոկ տալիս զոհին,
Թաքուն խայթելով մեծին, հզորին:
Զգույշ, բարեկամ,
Բոլոր քայլերդ չափիր ու ձեւիր,
Թե տանդ օձ կա
Նրան մի ների,
Մի տաքացրու օձը քո կրծքին,
Արթնացավ, քեզ է խայթելու ուժգին...
Օձից էլ վատ է մարդն օձաբարո,
Նրանց հետ ճամփադ մի մաղթիր բարով,
Աշխարհի բեռը ասես ծռել է,
Երբ օձն ու մարդն են բարեկամանում,
Աշխարհի վերջը էլ ո՞նց է լինում:



# ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ, ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ, ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

Աբուռ չունե:
Ազղուն մարդ ա՝ ուժեղ, անվախ, խիզախ:
Ազիզ մարդ ա:
Ազգը ծաղկի:
Ախճկանը վաթան չինիլ:
Ախճիգը կտրելու ձմերուկ ա:
Ախճիգը մորը կքաշի:
Ախճիգը տանն ա մնացալ (չի ամուսնացել):
Ախճկանը փախցրին:
Ախճիգը հասալա, մարթու քինիլի նաբաթը կաթու ա:
Ախ ու վախով պեն չի տեռնալ:
Ախմախ մարդ ա (անխոհեմ, կռվարար, անբարիշ):
Աղ չես, որ հալվես:
Աղա մարդ ա:
Աղն ու մաղը պակաս ա:
Աման-չաման հվաքե, քինա կորեթ:
Ամոթից տափը ճղում չի, թա նի մննե մաչը:
Ամոթ չինի հրցնելը:
Ային-օյին մարդ ա:
Ամեն մարդ իր էշն ա քշում:
Ամեն մարդ իր արշինով ա դափում:
Ամեն մարդ իր սրփին ա ծիք տամ:
Ամոթը դեն:
Անիրես, անաբուռ մարդ ա:
Անծուխը կրակ չի դեռ:

Անմրուք դերա գտալ, էլ հինչ դերա։
Անտուն, անբան, նվաթան մարդ ա։
Անշուն շեն չինիլ։
Անդանակ մորթեցին։
Անեծքը բռնեց։
Անիծված երկիր ա։
Անլվա կատու։
Անկողինը պղծելա։
Անկոչ ղոնաղ։
Անկրակ խորովեցի։
Անձնական հաշիվ ա պահում։
Անողը պրծավ, ասողը՝ չէ։
Անտակ ծով ա։
Անտառի արքա առյուծը ծերացել ու աղվեսնեն շատացալըն։
Անցած-գնացածի մասին մի խոսիր։
Անունը տո, սուփրան քցի։
Անունիդ մեռնեմ, բալա։
Անունով մարդ ա։
Անուշ լեզու ունի։
Անուշ մարդ ա։
Աշխատանքը ջուրը քշից։
Աշխարի բերողն ա մեղավոր։
Աշխարհը գլխին մթնեց։
Աշխարհը քանդողին նայիր։
Աշխարհը դղրդացրեց։
Աշկես պրտողս ըռվամ։
Աշկա տամ, իշեղ չի տամ։
Աշխարհը իրեն տան, չի կշտանա։
Աշխարհի ծայրը փռնած միշտ մնալու չի։
Աշկերը ծլլա։
Աշկը ծակ ա։



Ասե տեսնամ հուվա հնգերդ, ասիմ՛ հինչ մարդս տու։
Ասինք վերջը լավա ինան, վեր սրտնես ճաքեվել։
Ածքածակի մեկն ա։
Աչքաբաց երեխայա։
Աչքի տակից նայում ա։
Աչքի ընկավ իր գործերով։
Աչքը ճամփին ա։
Աչքս մնաց վրեն։
Աչքիս ծուռ ես երեւում։
Աչքերը նախշուն ախճից ա։
Աչքով-ունքով ա անում։
Աչքս ծուփ ա կտրալ։
Աչք ածել։
Աչք-աչքի գցել։
Աչքի գովել (հայտնի դառնալ, աչքի ընկնել)։
Աչքդ լույս։
Աչքդ դուրս գա։
Աչքդ բարին տեսնի։
Աչքերը մթնից։
Աչքերը բռնվեց։
Աչքը արուն կոխել ա։
Աչքա բացել, ինձ տեսել։
Աչքին թոզ են փչել։
Աչքերը լի ըն արտասուքավ։
Աչքդ խավարի։
Աչքը ճուր կտրից։
Աչքերը վրաս չռեց։
Աչքերը պլշից (ակնապիշ նայեց)։
Աչքերը տրորեց։
Աչքերին քուն չի գալիս։
Աչքերով ուտում են իրար։
Աչք գողացավ, իր գործը տեսավ։

Աչք բաց արեց եւ ապրում է իր համար:
Աչքը դրսում հարս ա (ման եկող է):
Աչքը կուշտ ա էս աշխարհից:
Աչքը խռթեց թերությունը:
Աչք է ծակում նրա արածը:
Աչքի կուկուն հանած ա կենում:
Աչք է դրել ուրիշի ունեցածի վրա:
Աչքը ունքից պիցրացալա:
Աչքդ վրա պահիր:
Աչքը շոր մարդա (կնամոլ է):
Աչքերը չորս ա արել (ուշադիր նայում է, որոնում):
Աչքը ջուր դառավ:
Աչքերս սվըղեղեն ըն անում:
Աչքս տամ, իշեղ չի տամ:
Աչք ա փակում հինչ անե, պենը պենան անցա կացալ:
Աչքի լույսի պես եմ պահում հորս հիշատակը:
Աչք եմ հանել, թե տեղդ եմ վարել:
Աչքդ հանել եմ, քեզ հինչըմ ըրալ:
Աչքդ չափով կլինի մի 1Օ կլ:
Աչքիս վրա տեղ ունես:
Աչքի տակ փանար ըն տիրալ (ծեծել, կապտեցրել եմ աչքի տակը):
Աչքիդ տակ պահիր (հսկիր, հետեւիր):
Աչքերից կրակ ա թափում:
Աչքից հեռու, սրտից դուրս:
Աչքի փուշ ա դառել:
Աչք է շլացնում:
Աչք է դրել ուրիշի ապրանքի վրա:
Աչքում իշեղ չկա:
Ապրելը որ էս ա, պա մեռնելը ո՞րն ա:
Ապրուստի ճունդը փռնալա:
Ապրումա գռռոնը երինիլավ:



Ապրուստը ծով ա:
Ապրել էլ կա, ապրել էլ:
Ապրուստը քամուն ա տվալ:
Ապրուստը շաղ ա տվալ:
Առյուծի բաժինը վերցրեց ինքը:
Առյուծի կաթ (խմիչք, Ղարաբաղում՝ թթի օղին):
Առյուծի սիրտ ունի (քաջարի, անվախ մարդ):
Առոք-փառոք:
Առ ու փախ (շտապ մի բան առնել ու գնալ):
Ասած տեղից (խոսքի տեր մարդ):
Ասեղ գցելու տեղ չկար (հոծ բազմություն):
Ասեղի ծակով անց կկենա (ամենից նեղ տեղից դուրս կգա):
Ասեղ կուլ տված (նիհար մարդ):
Ասեղ մաշկող (ծայրահեղ խաբեբա, ագահ):
Ասլանի կաթ (առյուծի կաթ, թթի օղի):
Ասպարեզ տալ (օգնել մեկին, որ դրսեւորի իրեն):
Աստծո բանը հինչ կիմացվի հունց կնի:
Աստծո աչքից ընկած մարդ ա (չար, անպետք մարդ):
Աստծուց վախ չունե:
Աստծո կամքին եմ թողել ամեն ինչ:
Աստծո կրակ ա (չար, անիծված մարդ):
Աստծո մատը խառն ա (վաղուց գրված ճակատագիր):
Աստված որ տալիս է, չափը չի հարցնում:
Աստղով աղջիկ ա (հաճելի, դուրեկան աղջիկ):
Աստծո գառ ես (խոնարհ, ազնիվ):
Աստված պահի:
Աստված, վեր Աստված (ամեն բան անող ա՞, ամեն բանի ընդունակ):
Աստված ընողանց պարտական ա:
Աստված հարու տվող կովին պոչեր չի տվել:
Աստված բոլորին տեսնում ա:
Աստված համ օղտա ստեղծել, համ՝ լու:

Աստծո քանդածը կնեգը կշինի, կնկա քանդածը Աստված չի կարող շինել:
Արկաթը տաք-տաք կթակին:
Արտ կտրող մորեխա (վնասակար մարդ):
Աստծո առաջ խանձած խոզ կտանի:
Աստված վկա, սիրում եմ նրան:
Աստված նրա հետ (մարդ, որ ոչ ոքի խորհուրդ չի լսում):
Աստված քեզ օգնական:
Աստված խելքը խլել ա (մարդ, որ բացարձակ սխալ է կատարում):
Աստված նրա դատաստանը անի:
Աստված ձեր օջախը շեն պահի:
Աստված մեզ հետ ա (արդար գործի վրա մարդիկ գիտեն, որ աստված իրենց հետ է):
Աստված շատ շնորհավոր անի:
Աստված քեզ դատավոր:
Ավազի վրա տուն չեն շինի:
Ավարա մարդ ա (գործից փախած):
Ավել-պակաս ներել (ներողամիտ լինել նկատած թերությունների դեպքում):

Բախտավոր աստղի տակ է ծնվել
Բախտի դուռը բացվեց:
Բաղդադ էլ կա շատ խուրմա, մեզ ի՞նչ:
Բազար ա սարքալ (մի բանի շուրջը երկար վիճել):
Բաժակ զարկեցին (հաշտվեցին):
Բախտախնդիր մարդ ա:
Բարը հու տնկե, բարը հու քաղե:
Բախտը ծռվել ա (գործերը անհաջող են գնում):
Բախտի դուռը բացվելա (գործերը հաջող են գնում):
Բախտը է որոնում ուրիշ ափերում (հայրենիքից դուրս մայրող մարդ):



Բան ասե, բան լսենք:
Բանդ անել (մեկին պահել մի տեղ):
Բանը բուրդ ա (գործը բարդ է, մեղադրանքով լի):
Բանը բանից անցել ա (ինչ որ պիտի լիներ, եղել է):
Բանից գնա (զուր մի խառնվիր ուրիշի գործերին, գործիդ կաց):
Բան ու գործ թողած, ի՞նչ ես անում:
Բիրդան զարգացած մարդուց հեռու շոռ տո:
Բարակ մանելավ մեռավ (հիվանդոտ մարդ, որ երկար տարիներ հյուծվում է եւ մեռնում):
Բարի պտուղ չի (ազնիվ մարդ չէ):
Բարով-խերով լինի:
Բեղից վեր ընկած բրինձ (վարքից ընկած մարդ):
Բեյնը հաստ ա՝ բթամիտ (հաստագլուխ մարդ):
Բերան չբացեց՝ ոչ մի խոսք չասած:
Բերնեբերան ընկնել՝ դառնալ բամբասանքի թեմա:
Բերանում լեզու ես դրել:
Բերանը շաղ տվեց (հայհոյեց խիստ):
Բերանում տաք ջուր պահող չի:
Բերանի հացը կտրել (մեկին նյութապես տուժել):
Բերանից կրակ է թափում:
Բկից մնա գողացածդ փողերը (բացահայտվի գողությունը):
Բոյդ հողումը դնեմ:
Բոյից թել չափիմ:
Բռունցք թափ տալ:
Բոլդի մարդա (շատ շարժուն):
Բուռը հավաքել - օգտագործվում է եւ դրական, եւ բացասական իմաստով:
Բուրդը քամուն տալ (սաստիկ ծեծել):
Բուրդը զզել են (մեկին խիստ պատժել են):
Բանգի դա կռի կերած ա (ուշքը կորցրած մարդ, խելագար):

Գաղա-գողա եկան լցվեցին մեր շուրջը:
Գաղայից բեկ չի ստացվի:
Գալ-գնալ ունեն:
Գառը գայլին պահ չեն տա:
Գարին չորս (մեկը որ անտեղի ծիծաղում է, չարություն անում):
Գետնին գցեց խոսքս (խնդիրքը չկատարել):
Գետինը մտնես:
Գետնի տակից էլ ա կգտնի (ճարպիկ մարդ):
Գերեզմանին լույս կաթի:
Գիժ դամարը երա կացալ:
Գրբաց մարդ ա - գուշակ է:
Գլխիս վրա (հոժարակամ):
Գլխի գցել (հասկացնել):
Գլխից մատաղ մեկին հարգել, նրա համար նվեր տանել. կորուստը համարեն մատաղ:
Գլուխ բերել (մի բան հաջողացնել):
Գլխին գելի ավետարան կանդալ (մեկին զուր խրատներ տալ):
Գլխին զոռ է տվել (անհասկացող մարդ):
Գլխին կանգնեց (անսպասելի հայտնվեց գործի վրա):
Գլուխ պահել (մարդ, որ մտածում է միայն իր մասին, խուսվում է ընդհանուր գործից):
Գլխին կրակ թափեցին (խիստ քննադատեցին, պատժեցին):
Գլխից ձյուն գա (անմիտ, գործից անտեղյակ մարդ):
Գլխին նստեցնել (երես տալ մեկին):
Գողան կարի չի վեր ընգում (անմիտ մարդ):
Գողը տերտակ ա (գլուխը դատարկ ա):



Դայի, դայի, սբլղրան դայի (ասում են նրանց մասին, ովքեր գնում են քրոջ երեխաների մոտ, դատարկաձեռն):
Դանակ տաս, արուն չի կաթիլ (խիստ խռով, դժգոհ մարդ, կնիկ):
Դանակը ոսկրին հասցնել (համբերությունից հանել, խորացնել թերությունը):
Դառնության բաժակը մինչեւ վերջ խմեց:
Դատարկ գրպանով ո՞ւր գնամ:
Դարդերս նորեցին:
Դեմքը փոխելա (կարծիքը փոխելա):
Դժվար տեղ են գցել:
Դիմակը պատռեցին:
Դռնեդուռ գցել (մուրացկան դարձնել):
Դռներն ընկնես դու (մուրացկան դառնաս, անտեր մնաս):
Դուրս ընկած կին (անառակ կին):
Դուրս պրծած:
Դու քո Աստվածը:

Եզ մարդ ա (անխելք, անշառ, իր գործի վրա հաստատ, բայց անտարբեր):
Եզը բարձրացնում են, տակից հորթ ուզում:
Եկած հղետ կտրվի:
Եղած-չեղած մի բան է:
Եղանակը փոխեց իր ելույթով (կարծիքը փոխեց):
Եղի պես են գնում նրա գործերը:
Եղ ու մոխրի մեջ է ապրում:
Երկու կրակի մեջ է մնացել:
Ես իմ աստվածը:
Երազի պես անցավ, գնաց:
Ետ քաշվիլ (փոշմանել, ետ դառնալ որոշումից):
Երգը երգված է (ամեն բան վերջացած է, մահը մոտ է):
Երես ենք տվել, աստառ ա ուզում:

Երես պահել:
Երեսը բրդաջրով լվացած ա (անամոթ, սանձարձակ):
Երեսը պատռած ա
Երեսին մեռոն չկա:
Երեսից հայելի, տակից ածելի (կեղծ, խարդախ մարդ):
Երեսին փարդան ճղած ա (աներես, անամոթ):
Երկար երազ ունի:
Երկու սարի արանքում:
Եփող-թփող (գործունյա կին):

Զահլա տանել(ծանձրացնել, ջատախոսել՝ անվերջ մի բան պահանջել):
Զարզանդել (խիստ վախենալ):
Զույգ աչքիս վրա (լրիվ համաձայնություն):
Զուռնա փչել (իր ասածը պնդել խոսքում):
Զոռ տալ գլխին (իր սխալը պնդել:
Զիզի-բիզի բաներ:

Էժան փառք է ձեռք բերում:
Էժան պրծավ (առանց մեծ տուժանքի ազատվեց):
Էծերը եկած ժամանակ (կատաղած ժամանակ):
Էշը մի անգամ է ցեխում մնում:
Էշին եշումն, կարին գցում:
Էշը արածացնող մարդ ա:
Էշդ կորցրել ես:
Էշը ցեխից հանել:
Էշը թողած, փալանն ա թակում:
Էշի ականջում քնած (անտարբեր, անտեղյակ):
Էշի նալի ման եկող (ընչաքաղց):
Էշը էշի մոտ կապիս, յա խուն կսվերե, յա խսյաթը:
Էշը էլի նույն էշնա, փալանն ա փոխվել
Էշը հինչա գիդում, մնեջակը հի՞նչա:



Էշնա ա երիլալ, էշին ջոռ ա կյամ:
Էշը անե, ծին օտե:
Էշը թկելավ ճորի չի դառնալ:
Էշին պոզ չի փսալ, թա քոռակա:
Էշի քուռակը մոր առջեւից կգնա:
Էշի նահատակ (հզուր զոհ):
Էշա կտրալ (հիմարացել է):
Էշը թավիլ ա տվալ ըխպիարեն (հեռու ազգակից, ծանոթ):
Էշի քոռակ (հիմար երեխա):
Էշի տղա (էշի քոռակ):
Էշդ կորցրել ես (մի բանի մասին խոսել, որ ոչ մի կապ չունի ներկա թեմայի հետ):

Ընգեր գետը, քշի տանի, նամարդի կամուրջով անց մի կենա:
Ընկավ նրա վարկը (նախկին փառքից զրկվել):
Ընկեր կա, ընկեր էլ:
Ըշանեն եզնը ըշանան կոտե:
Ըրասխեն ղրաղին որ էշա թավիլ տամ, մոխիրը մեզ ա հսնում:
Ըսեղեն ծակում իր գործը տեսնում ա:

Թամամ խոսքը էշին կասին:
Թայի ընգողը տղա չի բերի:
Թամբալի աղուն աստված կաղի:
Թան չըս տեսալ, թնըթաթախ քսակ էլ չըս տեսալ:
Թաթըդ քաշի ինձանից:
Թանթուրդ դեն տիր:
Թախտից գցեցին թագավորին:
Թակարդ դնել (դավ լարել):
Թակ ու միակ անել:
Թանն ընկած մուկ:

Թարսի ծին ա երիլալ (թառսվել. հակառակվել)։
Թողդ օրիշ տեղ թափ տռ։
Թիկունքդ ցույց տուր (հեռացիր. գնա)։
Թիկունք լինել։
Թիկունքդ գետին դնեմ։
Թողը եր անել։
Թող հացը միշտ բոլ լինի. կինին կողքին գոլ լինի։
Թորքեն վեր թակիս. աշնա կտեռնա։
Թող արալ ախճիգը (մարդու չի տվել. լավ աղջիկը անարժան տղայի է տվել)։
Թիկունքը բաց թողնել (հեռանալ ընկերոջից. բարեկամից)։
Թութունը թութմիշ անել (խիստ բարկացնել)։
Թոք ու մոր անել (պարսավանք տալ)։
Թքում ես երեսին, ասում է անձրեւ է գալիս։
Թքած դրանց վրա (արհամարհել բոլորին)։
Թքած. նեստա տված (սուտ տեղը մի բան անել, որը երկար չի մնա)։
Թուքս կուլ տվի (բարկությունս զսպեցի)։
Թոք ու մոր վերցնել։
Թուխտ է մրրում (գրողը. որ թուղթ է մրում, գրական որակ չունի գրածը)։

Ժամանակը ոսկի ա (ժամանակը խնայել)։
Ժամանակը խլեց մեզնից (մի բան անել, որ կարելի է այդ ժամից դուրս անել)։
Ժամս կորավ (իզուր վատնած ժամանակ)։

Իժ է, իժ (օձ է, օձ. պիտի հեռու լինել նրանից)։
Իժի լեզու ունի (օձի լեզու ունի, վտանգավոր է)։
Իծան-պիծան առաջ ընկան (մեծ-փոքր. լավ. վատ առաջ ընկան)։
Իմը ինձ հասավ (վիատվել, պարտվել, հավատը կորցնել)։



Իմ հոր տղան չինեմ, թե նրա հախիցը չկամ։
Իմ Աստվածը, ասածս պիտի անեմ։
Ինձ տոր, որ քեզ տամ։
Ինչ ես բերել, որ ինչ ուտես։
Ինչ հող տամ գլխիս (անճար մարդ)։
Ինձ հետ յոլավ ա բան խմում (հոգով անհաշտ)։
Ինձ ասեղով ծակողին, մախաթով կծակեմ։
Իշտահը հուր տվին, փլավը՝ հո՞ւր։
Իրես օնե, խոսում էլա։
Իրեսան հիլի, տական ծիլի։
Ինքը իրենից զարմացալ ա։
Իրեն աչքի գերանը թողած, ուրիշի աչքի մազն ա տեսնում։
Ինքը տեսքի. թեզ ու կես, արարմունքը գազ ու կես։
Իրեք պեն պենդ պահե, հին բարեկամիդ. հին կնոջդ. հին հարեւանիդ։
Իրեն հարցնես, բոլորից խելոք ա։
Իրար է խառնել ամեն բան։
Իր խաչը նա փառքով կրեց։
Իր խոսքի տերն ա։
Իր արշինով ա չափում բոլորին։

Լավ աղջիկը օխտը տղա արժե։
Լավ է կույր լինել աչքով, քան կույր լինել մտքով։
Լավ կինը գին չունի։
Լավ ա, թա փիս. իմ ախպեր ա։
Լավ բարեկամը նեղ օրն ա ուրվամ։
Լավ օրը բարեկամները շատ կընին։
Լավ ա լավ մարդու հետ քար կրել. քան վատ մարդու հետ քեֆ անել։
Լացով ոչ ոք մեռել չի սաղացրել։
Լացը լաց կբերի։
Լեն օրեն նեղ օր էլ կընի։

Լաց ու կոծ անել։
Լեզվակռիվ անել։
Լեզուն բացվել ա։
Լեզվին տալ։
Լեզվի տակ չմնացի (խոսողի պատասխանը տալ)։
Լեզվի կծածը օձի կծածից թունդ ա լինում։
Լեզվի տակից դուրս գալ (բամբասանքից ազատվել)։
Լեզու բանեցնել (համոզել, ավելորդ անգամ խնդրել, աղաչել)։
Լեզու ծեծել (երկար խոսել)։
Լեզուն բերանում չորացել ա (մարդ, որ չի կարողանում զարմանքից խոսել)։
Լեզուն երկարեց (խոսելու առիթ, պատճառ ունենալ)։
Լեզուն կարճ ա (խոսելու պատճառ չունի, մեղավոր է)։
Լեզուն կծեց։
Լեզուն իրեն չի պահում։
Լեզու է ցույց տալիս։
Լոպը (ղլոթը) կերած ա (երես առած է)։
Լուծը դեն շպրտեց (ազատվեց գերությունից)։
Լույս դառնա նրա հոգին։
Լույս կաթի նրա գերեզմանին։
Լուլ դառնալ (սաստիկ հարբել)։
Լուն օղտը շինող մարդ ա։
Լու մաշկող մարդա։

Խաչը տերն ա զրավուր անում։
Խաչը իմն ա, զորությունը ես գիտեմ։
Խելք ունես, քեզ համար պահիր։
Քմել ես, գնա քնիր։
Խոզից մազ պոկելը էլի մի պենա։
Խակը շատ ա վեր անում։
Խալխին յրա շոն ա հաչում, ինձ վրա էլ կատու ա մլավում։



Խամ խոխա, խոլխոլուտ բազար։
Խելունքն էլա պլացալ։
Խելունքին մին, անխելքին հազար ու մին։
Խե սկի լսում ա ինձ։
Խե քզհետե աղաթ ա, ինձ հետե՝ բեղաթ։
Խշտում ա բշտում սրան նրան։
Խոզը տրին խալիչին, թուլ ընգավ ընկավ ցեխի մեջ։
Խոխան մահնա, մարթը շահնա։
Խոսքը բիղար, կռիվը՝ վեչ։
Խոփս քարեն դեմ ընգավ։
Խոխեն պենի տիր, հետան քինա։
Խունկ եմ ծխելու քեզ համար, սկի չգայիր։
Խունջիկ-մունջիկ անելդ էլ վեր նա, որ կյաս։

Ծալը պակաս է։
Ծակ բերան մարդ ա (գաղտնիք պահող չի)։
Ծակ ու ծուկ լցրել ա (հարստացել է)։
Ծանր խոսք ասել։
Ծանր կնստի դա նրանց վրա։
Ծնկի բերել։
Ծիտը երազում կորեկ կտեսնի։
Ծառան ճեղնը վեր կընգնի։
Ծառան ծռատակ հեշտ ա տեսնալը։
Ծուկունը կլխան ա վերթնում։
Ծվի կյողը ծի էլ ա կյուղանում։

Կաթնդ իգորա պռանչի։
Կալին եզնը ըշանան կոտի։
Կավեն կթնատուն էլ հուր ա պետք, վեր քացի ա տամ, պարան տամ կաթնը։
Կարկուտը թակած տեղը կթակե։
Կավը վեր օզիվեչ, բողուն նրան եր չինիլ։

Կթվերեն կոթան պաչումն յողուծվին հետե։
Կամ աղնա պակաս, կամ՝ մաղը։
Կամքը կոտրեցին (համառությունը վերացնել)։
Կածակը քեզ տանի։
Կաշին դաղլարի կաշի ա։
Կատվի վազելը մինչեւ մարագը կնի։
Կատու է դառել (խեղճացել է)։
Կատու ներկող մարդիկ են (խաբեբաներ են)։
Կեռեքը ըռնոտ ա հլալ (արդեն վարժվել է գողության մեջ)։
Կծեգը թոլ ա ընգալ (գործերը անհաջող են գնում)։
Կյանք տալ հող ու ծառին (խնամել լավ)։
Կողքի ընկնել (թարսվել)։
Կողքը հաստ մարդ ա։
Կոպեկ չարժե նրա խոսքը։
Կռվելու նաբաթը կաթում ա (առիթ է որոնում կռվելու համար)։
Կռները կպոտիս, էլի գողություն կանի։
Կրակի հետ չեն խաղա։
Կրակի մեջ ընկնել (փորձանքի մեջ ընկնել)։
Կրակի վրա նավթ լցնել (բորբոքել կռիվը)։
Կլխեն կրակ անիս, խոսել չի։
Կնգանը մազը էրկան կինի, խելքը՝ կարճ։
Գողը տերտակ ա (խելք չունի, անխելք է)։

Հազարների մեջ հնդրած մարդա։
Համ տանանա, համ շանան։
Հանդարտ քինի, երկար քինի։
Հազար մանեթ պարտքս ինի, մրթըմեչին մարդս ինի։
Հա ասե, հազար ասե, հուվա լսում։
Համբերությունը կյանք ա։
Հայի վերջին խելքը իմս բիդար։
Հայ-հայը քեցալա, վայ-վայն ա մնացել։



Հարամ թիքան կոլ չի գնա։
Հասկացողին մեկ, չհասկացողին հազար ու մեկ։
Հաստ ու պերակ մին գին ա, վայ պերակ մնողին։
Հիվանդի աչքը ճանապարհին կլինի։
Հալալ ծծկեր ա (մաքուր, ազնիվ է)։
Համը հանում ա (ձանձրացրել է)։
Հանաքը մի կողմ։
Հավան առնել (մեղմացնել, համոզել, որ կռիվ չանի)։
Հարամը գալիսա, հալալն էլ իր հետ տանում։
Հացի տեր դառնալ (հարստանալ)։
Հին դարմանը քամուն չեն տա։
Հողս գլխիտ։
Հոր ծոխը վեր է տանում։
Հում խոխա (անփորձ երեխա է)։

Ձախ ձեռքը աջի  ձեռքի տեղը չի բռնի։
Ձայնը գլուխը գցել (գոռգոռալ)։
Ձեռք բռնել (օգնել)։
Ձեռքը կարճ (պակաս ապրող մարդ)։
Ձեռք մեկնել (օգնել)։
Ձեռքը ձեռք է լվանում (իրար օգնում են)։
Ձեռքից-ձեռք ընկնել (մի քանի մարդու գնալ)։
Ձեռքերի վրա պար է ածում մարդկանց (մարդ, որ կարող է իր նմաններին խաբել, ուզածը անել)։
Ձեռքը բաց մարդ ա (ունեւոր, սրտաբաց, օգնող)։
Ձեռքը թեթեւ (տվածի վրա գալիս է նորը, հաջողը)։
Ձեռքը ծոցում (մոլոր, շվար)։
Ձեռքի տակ պահել (հովանի լինել)։
Ձեռք-ձեռքի տանք։
Ձեռքը-ոտքը կապել։
Ձվից մազ խուզել (գծուծ, ագահ մարդ)։
Ձուկը ծովում, առեւտուր չեն անում։

Ղոնաղը աստծունն ա:
Ղոնաղը վեր իրիգունը կամա, պիտի առավոտը քինի:
Ղուշը կլխին թառա իլալ (երջանկացած մարդ):
Ղուղու կանչիս տու (մենակ մնաս):

Ճիրաքը իրան տակին լույս չի տա:
Ճակատը պինդ մարդ ա:
Ճակատին ինչ գրված ա, են էլ կլինի:
Ճակատին մուր են քսում (անպատվում են):
Ճակատեցին իրար հետ (կռվեցին իրար հետ):
Ճանապարհի բերել:
Ճարը կտրած:
Ճպատըդ քոլատ կտրե:
Ճուրը իր հղեն քթնական ա:
Ճուրը մի տեղ վեր երկան կենա, ջուտ կվետե:
Ճոտը ծվումը սաս կանե:
Ճուրը ընգողը օծից էլ կփռնե:
Ճրին պերածը ճուրը կտանե:
Ճուր տո, քշի:

Մախաթը պարկում չի մնա:
Մարիփաթը բազարում ծախում չեն:
Մարթին աչքը փողը կկշտացնի:
Մարթ վեր էշ չինի, էշի գինը հազար մանեթ կնի:
Մարթ հինչ անում ա, իրեն ա անում:
Մարթին իրեն գործովըն ճինանչում:
Մարթ կա մարթ ա, մարթ կա դարդ ա:
Մարթու կլխում վեր խելք ինի, պոլկումն էլ եղ կնի:
Մաշտեղ ստող, դրաղ շոռ տվող:
Մեծեն հետան ընգավ, կուճուրն էլ կորցրեց:
Մեր փիս օրը քինի, էլ կյավուչ:
Մոկնեն կյուզը Ըրասխեն փեյդայա:



Մինչեւ ցամաք արխ ճուր կյա, կեռտնուկեն աչքը տուս կկյա:
Մուրազդ փորումդ մնա:
Մինչեւ հաստը պրակե, պերակի հոգին տուս կկյա:
Մին պել քեցավ հարսանքի, ասից ըստեղ լավա, քանց մեր տանը:

Յա աղն ա պակաս, յա մաղը:
Յոթ անգամ չափիր, մի անգամ կտրիր:
Յա տոնս, յա կտորս:
Յա ըծովի վեղը, յա ըսովի խոսքը:
Յալի են պար կյամ (բոլորը մեկի սածով են գնում):
Յոթ պորտին գիտեմ, շան ցեղ են:
Յոթ սարի ետեւ (հեռու տեղ):
Յոթ փակի տակ (խիստ գաղտնի, փակ տեղ):
Յուղ չես, որ հալվես:

Ներակ էն մարդուն, որ ոչ դարդ օնե, ոչ ղեյդ:
Նեղ ծկատով մարդու սիրտն էլ կինի նեղ:
Նեղ օրվան լեն օր էլ կնի:
Նազ ու տուզ ա անում:
Նախլատ քեզ, չար սատանա:
Նամուսը գաղա-գուղուների կերակուրը չի:
Նամարդի հետ հղե չըն քինալ:
Նամուսը տվին շներին, չկերան:
Նամուսը ոտքի տակ տվեց:
Նամուսդ տափը կոխիմ:
Նամուսի գերի մարդ ա:
Ներսըս ինձ ա այրում, դուրսըս՝ քեզ:
Նստում եմ վայա, կանգնում եմ՝ վայա:

Շան երես ոնե:
Շնից բեթար ա:
Շան որդի ա:
Շան պես պոչ ա խաղացնում:
Շանսատակ արին նրան:
Շան տեղ չեմ դնում:
Շան ցեղը կտրվի:
Շան փայ դառնաս դու:
Շան քթից ջուր են խմում:
Շան օր են գցել:
Շան պես հաչեցնում են:
Շառդ հեռու տար ինձնից:
Շեն տեղ ապրիր:
Շաբաշ տվողը շեն կենա, շենի տական տեն կենա:
Շվաքի տակ ապրում ա:
Շոնը շանը վենը կոխել չի:
Շոնը շնություն կանի:
Շները կապեցին, նրան բաց թողին:
Շները գաթա չեն օտում, էս հինչ այամա:
Շոնը շնից, երկուսը մի տնից:
Շունն ու տերը ջոկվում չի:
Շոնը հավատարիմ կենդանի ա:
Շոն մաշկող ա:
Շոնը հաչելով կսատկի:
Շունչս բերանիս ա հասել:

Ոնց եկել ես, էնպես էլ գնա:
Ոնց առել եմ, էնպես էլ ծախել եմ:
Ոնց ուզում ես, ապրիր:
Ողորմած հոգին լավ մարդ ար:
Ողորմի ձեր անցյալներին:
Ոչ մի խնդություն տեսած եմ օրում, ոչ էլ մի անգամ աչքս լիացավ:



Ոչ ձմեռն է ձմեռ, ոչ էլ ամառն է ամառ:
Ոչ արեւ ա անում, ոչ էլ անձրեւ ա գալիս:
Ոչ մի օգնություն չունեմ:
Ոչ մեռած եմ, ոչ էլ սաղ:
Ոչ ուտում է, ոչ խմում:
Ոչ մի բանի առաջ կանգ չի առնում:
Ոսկե ձեռքեր ունի:
Ոսկե սարեր է խոստացել:
Ոսկորներդ շները քաշ-քաշ անին:
Ոտը թեթեւ (արագաշարժ, բարի):
Ոտը կախ անել (քայլելիս դանդաղել, սպասել):
Ոտքի կանգնել (մի գործի մեջ հաջողության հասնել):
Ոտքի տակ տալ (շատ ման գալ, շատ տեղ լինել):
Ոտներս ջուր կտրեց:
Ոտքը շատ է առաջ դնում (երես առնել):
Ոտքերի տակ հող չունի:
Ոտքի տակ են գցում (պաշտոնաթող են արել):
Ոտքը քարին առավ:

Չալըխ ա կյամ սաղ տարին:
Չախկ-չուխկ եմ անում (աշխատում եմ ոչ սիստեմատիկ):
Չամիչ չեն բաժանում կռվում:
Չանգալ գցել (մեկին բռնեցնել, խաբեությամբ գաղտնիք կորզել):
Չափը պահել:
Չափը կուրցնել:
Չափը տեղը պահել:
Չափը անցկացնել:
Չափ ու սահման չունի:
Չորն ու թացը խառնվել են իրար:
Չորս պատի մեջ է (մենակ):
Չոր տափի վրա մի նստիր:
Չոր տախտակ ա դառել:

Չոր փետը քեզ օրինակ:
Չորը քեզ մոտ կյալը, շատ տեղեր են գնացել:
Չկա չարիք, առանց բարիքի:
Չիավան, քեթը ցեց մարդ ա:

Պակաս-պռատի վրա եմ աշխատում:
Պաղ ջուր լցրու:
Պապը ամեն օր գաթա չի ուտում:
Պառավ տեղովը տես ինչեր ա անում:
Պովթոնեն եշում էլ, հալա դուփ ա:
Պարանդ կարիմ:
Պատին սեղմել:
Պատիվը գետնովը տալ:
Պատիվը գողանալ:
Պատիվը ճանաչել:
Պատիվը շոշափել:
Պատիվը ցեխը գցել:
Պատիվ պահանջել:
Պատիվ տալ (հյուրասիրել, մեծարել):
Պատ քաշել (վերջ տալ անցուդարձին):
Պարան տալ (քանդել, ավերել, վայր գցել):
Պարտքի մեջ խրվել:
Պար, լեռնապար (շուրջպար, լեռների շարք):
Պարտքի տակ թողեց (լավություն արեց):
Պղտոր ջրում ձուկ է որսում:
Պոզավոր ստեր է ասում:
Պոչա խաղացնում:
Պոչից քաշ է գալիս:
Պառը շատ կոշտ ա:
Պար չըմ կյամ, հա պար չըմ կյամ, վեր պարըմ կյամ, տուս չըմ կյամ:
Պապունց տանը հրսանիք, նրա մեջ էլ կնանիք:
Պումբռոնը թակած տեղը կրակե:



Ջաղաց անելով էն մեծ քարը բերել ենք էստեղ:
Ջաղացի ջուրը կտրել են (մի բան պակասացրել են եղածից):
Ջեբը ծակ ա (փող չպահող, չխնայող):
Ջրի գին է դառել (էժանացել է):
Ջրի ճամփա է դառալ քաղաք գնալ-գալը:
Ջրի պես երկարի կյանքդ:
Ջուխտ ոտքով ա թալակ ընգալ:
Ջուրը տանի նրան:
Ջուր ծծեց երկար:
Ջուր մաղվեց վրաս:
Ջուր պղտորող մարդ ա:
Ջուր վերցնող խմոր ա:
Ջուր կտրել (քրտնել, մերած կաթը ջուր է կտրել):
Ջուրը տար, ծարավ բեր:
Ջրատած ջրաղաց ես:

Ռաղ է արել գլխից:
Ռաստ եկավ ժամանակին:
Ռեխը մի բանով փակեք (կաշառք տան):
Ռեխալի մարդ ա (հայհոյող մարդ):
Ռեխը ծռեց էլի (ծուռ խոսեց):
Ռեխ-ռեխի տալ (բամբասել, շատախոսել խմբովին):

Սանձը բաց են թողել:
Սապունը սեւին ինչ անի:
Սառը ջուր մաղեցին նրա գլխին:
Սատանայի փափուշ կարող ա:
Սատանայից մի քանի օր շուտ ա ծնվել:
Սատկած էշի նալի յա ման կյամ:
Սավա ճտերը ծռռան ռեխը ընկան:
Սարքալա Պողոսն ղզղանը:

Սերտը սահակավնա ընգալ:
Սեր-սեկրետը գիդալչս:
Սօրվա պենը էքսվան չըն թողնել:
Սոր կա, ղորբան, լավա երքում:
Սրտի փուշ հանող ա:
Սարը սարին ծեփել չի, մարդը մարդին կծեփեմ:
Սատանի նման ա:
Սատանան յրան նստելա:
Սատանան հակառակվել ա:
Սարին եշումա, ծունը տնում:
Սեպերը պեցա մնացել:
Սեւ կատու անցավ դրանց միջեւ:
Սիրտ տրի նրան (բարի խորհուրդ տվի):
Սիրտը ահի ընկավ:
Սիրտը կասկած ընկավ:
Սիրտը ճաքեց:
Սիրտը խառնեց:
Սիրտը կսկծաց:
Սիրտը վառվեց:
Սոխ ու հաց, սիրտը բաց:
Սուփրան ուտող, վրան քաքող ա:
Սրտի շուշան կոտրեցին:
Սրտիս սյունը դու ես, դու:
Սուրը պատյան չդրեց:
Սուր աչք ունի:
Սուր միտք ունի:
Սուր խոսք ունի:
Սուր լեզու ունի:

Վահանով գնաց, վահանի վրա վերադարձավ:
Վայ էն մարդուն, որ աշխարհում անտեր ա:
Վատ աստղի տակ ա ծնվել:



Վարող-ցանող մարդ:
Վախտը վախտին, բախտը բախտին:
Վեխճարը սարավը անց կացավ:
Վեղան իլածը վեղ կտեռնա:
Վեննը յորղանեդ իգորա մեկնե:
Վետանը յրան վենն ա փսալ:
Վետանը տակի տեղը թիյավ պիտի յոր ռնիս:
Վեչ մուհալ, հուվա տեսալ իստի պեն:
Վեր էդ խոսելդ չինար, քաշքերը աչքերդ տուս կտան:
Վեզը հստցրալա, կյումաշի վիզ շինալ:
Վեզը տակավն ա տվալ:
Վրան թքել են դեն արել:
Վրան պրծած աշխատեցին:

Տանը ասլան, դրսում կատու:
Տասը չափիր, մեկ կտրիր:
Տեղս փոխեցի, բախտս հունց փոխիմ:
Տեղտ ծանդր նստի:
Տերովին տերը տարավ, անտերին՝ ճուրը:
Տաշած քարը գետին չի մնա:
Տերտակ միակին շուն չի հաչի:
Տա Աստված, խոսքդ ղորթ տուս կյա:
Տախ ա տեռալ (չաղացել ա խոզի պես):
Տակից-գլխից դուրս է գալիս:
Տան ծուխը կտրվեց:
Տունը քանդվի նրա:
Տարած, եա բերած աղճիգ ա:
Տանա տերտերին տեր օրհնյա չինի:
Տաք անկյուն ես գտել:
Տեղ ու տուն թողած թափառում ա:
Տեփը ճղած ղավալ (ուրախ, ասող, խոսող մարդ):
Տուն քանդողներից ես:

Րոպե առաջ:
Րոպե հետո:
Րոպեն թանկ ա:

Ցավը տվին սարին, սարը չտարավ, ցավը տվին մարդուն, մարդը տարավ:
Ցախավելով բոլորին պիտի սրբել:
Ցամաք գետն էլ որ գնա, ջուր կբերի:
Ցամաք հացին ապա յա ասում:
Ցավտ տանիմ:
Ցավ ու կրակ դառավ մեզ համար:
Ցեխի մեջ տնկվել են:
Ցեցը քեզ ուտի:
Ցորեն հացին պոզեր կնի:
Ցորեն, ցորեն, քացի տամ քամոր փորին:

Ոտք գրելով է տուն գնում (հարբած մարդ):
Ուզողը կոզի, տվողը չպիտի տա:
Ուղեղը քամել են (խաբել են, համոզել):
Ուղտը փալանով ա կուլ տալիս (չատակեր):
Ուղտի ականջում քնածի մեկն ա:
Ուզողի մի երեսնա սեւ, չտվողինը՝ երկուսը:
Ուղտի կաշին մի էշի բեռ ա:
Ում ձին նստես, նրա տիրոջ խաղը ասա:
Ում ջունն ես դու:
Ուղտի պարը կամուրջին կբռնի:
Ուշքը կորցրել ա (մոռացկոտ):
Ուսերը կախ ա արել:
Ուտող-խմող մարդ ա:
Ուրիշի ոչխարն է արածեցնում:
Ուրիշի զուռնով պարող մարդ ա:
Ուրիշի ձեռքերով օձ ա բռնում:



Ուրիշի ձեռքով կրակից շագանակներ ա հանում:
Ուր բարակի, այնտեղ էլ կկտրի:

Փափուկ լուզու օնիս, վեչ քարի ա դեմ ընգում, ոչ քոլի:
Փող օնիս, աղա ես.փող չոնես, գաղա ես:
Փորացավդ գիտեմ:
Փործանքը որ գա, քնած տեղն էլ կգա:
Փոր չի, հորա:
Փալանը փորեն տակն ա քցալ:
Փախիր լղարից, վախի ճղարից:
Փասափուսադ հավաքիր, գնա:
Փափաղը ծոռ ա դրել (գոռոզացել է):
Փափաղը ցեխի մեջ գցել (պատվազուրկ անել):
Փլավ ուտել (հեշտ ապրել):
Փոխանը վեններն ա ընգալ (տնտեսապես վիճակը վատացել է):
Փուրացավդ հու չի գիդում հինչ ա:

Քամակը շոռ ա տամ ինձ տեսնելիս:
Քամակ-քամակի տալ (թիկունք լինել իրար):
Քամի նիետ տվող:
Քամոր կաթի պես հալալ լինի քեզ:
Քաշը իրան ճուտերեն շատ հավան ա:
Քաղծր լուզուն օխծը ծական տուս կոնե:
Քանի գլուխ օնիս դու:
Քանի կտոր տեռնամ ես:
Քար է գցում ուրիշի բոստանը:
Քարեր հավաքելու ժամանակը եկալ ա:
Քարվան կտրելու գիշեր ա:
Քարով մահակ կտրել:
Քարերը փեշից թափիր:
Քարից հաց են քամում:
Քար օտիմ, քացախ օտիմ:

Քեֆին քեֆ չի հասնի:
Քեֆ անողի քեֆը չի պակասի:
Քթի մազ ես:
Քթի հալը հալ չի:
Քիթը ցեց մարդ ա:
Քիթը սրբելու ժամանակ չկա:
Քթին տորող չկա:
Քիթը ջարդել են:
Քիթը վեր քաշել:
Քո մեղքը իմ վզին:
Քափ-քրտինքի մեջ ա:
Քիշերվա կերածը կորած ես:
Քոռը հինչ կուզի. երկու պլոզ աչքեր:
Քուրքը քամուն տվին:

Օգնության ձեռք մեկնել իրար:
Օդային համբույրներ քեզ:
Օդ ու ջրի պես հարկավոր:
Օձի լեզու ունի:
Օխտը բաջանաղ մի տեղ հղե ըն քնում. համել ասում՝ պա մի զրուցինգեր չինի, զրուց անինք:
Օխտը օր, օխտը քշեր հարսանիք արին:
Օձը լեղի ա, տանձ չի:
Օձիքը ազատեց:
Օջախը շեն մնա:
Օր ու արեւ չի տալիս:
Օրը մի կերպ մթնեցրեց:
Օրհնվածը մեզ փրկեց:
Օրվա հացին կարոտ:
Օր ու գիշեր միտք ա անում:
Օր-օրի վրա հալվում ա:
Օր չըն տամ նրան:





# ԲԱՌԱՐԱՆ

## Ա

*ԱԲԱՍԻ* - Քսան կոպեկանոց արծաթե իրանական դրամ:
*ԱԲՐԵՇՈՒՄ* - Մետաքս:
*ԱԴԱԹ* - Սովորույթ, օրենք, կարգ:
*ԱԴԻՄ* - Քայլ, մեծ քայլ:
*ԱԶԱՓ* - Ամուրի:
*ԱԶԳ* - Տոհմ:
*ԱԶՂՈՆ* - Կատաղած, քաջ, գործարար:
*ԱԶԻ* - Տատ, մեծ մայր:
*ԱԼԱԹ* - Արոր:
*ԱԼՎԱՆ* - Կարմրավուն:
*ԱԼԱՎ* - Բոց:
*ԱՂՈՒ* - Սկզբնապես այս բառն ունեցել է անուշ իմաստը, այժմ կոչվում է դառը:
*ԱԼՕՐ* - Վաղը չէ, մյուս օրը:
*ԱԺԴԱՀԱ* - Հսկա, մեծ, ահագին:
*ԱԼԱՄ-ԱՇԽԱՐՀ* - Ամբողջ աշխարհը:
*ԱՅԱ* - Մեծ մայր, տատիկ:
*ԱՅԻԲ* - Պակասություն, թերություն:
*ԱԾԵԼ* - Լցնել, նաեւ՝ նվագել, ձու ածել, աչք ածել, նայել:
*ԱՂՍԱՂԿԱԼ* - Սպիտակամորուս, նահապետ, մեծ մարդ:
*ԱՂԱ* - Հարուստ, պատվավոր մարդ:
*ԱՄԱԳ* - Վաստակ, երախտիք:
*ԱՄԱՆ* - Ափսե, նաեւ՝ ցավի ճիչ:
*ԱՆԲԱՐԻՇ* - Անհաշտ, կռվարար:
*ԱՅԱԶ* - Ցուրտ, խիստ ցուրտ, քամու ուղեկցությամբ:
*ԱՅԲԵՋԱՌ* - Այլանդակ, տգեղ:
*ԱՅԻԼ-ՄԱՅԻԼ* - Զարմանք, հիացում,ապշանք:
*ԱՅԻՆ-ՕՅԻՆ* - Վատ, անորակ:
*ԱՆԳՅՈՒՆ* - Կողմ, անկյուն, թիկունք:
*ԱՇԱՆ* - Կալի մեջ անկանոն փռած խրձեր: Հասկ կալսելու տեղ:
*ԱՉԱՌ* - Բանալի, ջահել ցուլ:
*ԱՋԱԼ* - Մահ, կյանքի վերջը:
*ԱՋԻ* - Աղու, կծու, թթու, դառը:
*ԱՎԱԶ* - Փոխարեն:



*ԱՆԱԲՈՒՌ* - Անամոթ:
*ԱՍԼԱՆ* - Առյուծ, քաջ:
*ԱՐԽԱՅԻՆ* - Հանգիստ:
*ԱՓԱԼ-ԹԱՓԱԼ* - Արագ, անկանոն:

## Բ

*ԲԱԴԱ ՏԱԼ* - Զոհել, զուր տեղը կորցնել:
*ԲԱԴԱՐԱՔ* - Հոգեհաց:
*ԲԱԲԱԹ* - Մի քիչ լավ:
*ԲԱՆԴ* - Տան մոտ փողոց, տան շուրջը:
*ԲԱՐԱ* - Ցանկապատի դուռ:
*ԲԱՐԱ ՊԱՀԵԼ* - Որսատեղում սպասել որսին:
*ԲԱՆԴ ԱՆԵԼ* - Ծվին նախել, նաեւ՝ մեկին տեղում մեխել:
*ԲԱՐՈՒԹ* - Վառոդ, նաեւ՝ կծու:
*ԲԱՔՄԱԶ* - Դոշաբ:
*ԲԵԴՄԱ ԿՅԱՄ* - Պիտի գաս:
*ԲԻՇՏԻ ՏԱԼ* - Հրել, ծակել:
*ԲԻԴԱՐԱԹ ԱՆԵԼ* - Փչացնել, վտանգել:
*ԲԱԹՄԻՇ ԱՆԵԼ* - Կորցնել, թաքցնել անհետ:
*ԲԱԼԱՍԱՆ* - Դեղ, նաեւ՝ դեղաբույս:
*ԲԱԼՔԱ* - Գուցե:
*ԲԱԽՉԱ* - Այգին:
*ԲԱԽՇԵԼ* - Նվիրել:
*ԲԱՂՎԱՆՉԻ* - Այգու պահակ, այգեպան:
*ԲԱՅՂՈՒՇ* - Բու, բվեճ, անվերջ լացող մարդ, կին:
*ԲԱՅԴԱՂ* - Դրոշակ:
*ԲԱՋԱՆԱՂ* - Քենակալ:
*ԲԱՍՏՐՄԱ* - Ապխտած միս, գլխավորապես խորոված ի համար:
*ԲԱՐԱՔԱԹ* - Առատություն:
*ԲԵԹԱՐ* - Վատ, շատ վատ:
*ԲԵՅԽԱԲԱՐ* - Անտեղյակ:
*ԲԵՅԲԱԽՏ* - Անբախտ:
*ԲԻԼՄԵՐ* - Բազուկ:
*ԲԼԲՈՒԼ* - Սոխակ, կակող, հաշտ, քաղցրախոս:
*ԲՄԲՈՒԼ* - Փետուր, մի տեսակ բույս, որի ծաղիկները թեթեւ հովից թռչում են:

*ԲՈԼ-ԲՈԼ* - Առատ, շատ առատ:
*ԲՈԼԹԱ ՏԱԼ* - Աննպատակ զբոսնել, թափառել:
*ԲՈԽՉԱ* - Կապոց:
*ԲՈՂԱԶ* - Բերան, կոկորդ:
*ԲՈՅ* - Հասակ, մարմին:
*ԲՈՇ* - Թույլ:
*ԲՈՐԱՆ-ԲՈՔ* - Ձյունախառն քամի, ցուրտ:
*ԲՈՒԴ* - Ազդր (քո բաժինը բութ է):
*ԲՈԹՈՒԼ* - Ճիշ, նաև՝ միս խորովելու երկաթյա ձող:
*ԲՈՒՄԸ ՊԱՀԵԼ* - Ծածուկ հետևել:

## Գ

*ԳՅԱԴԱ* - Ծառա, իր հարգը չիմացող մարդ:
*ԳԱՌԻ* - Թրքուհի:
*ԳՅԱՓ* - Կատակ:
*ԳՅՈՋՈՒՄԿ* - Ուղտի ձագ:
*ԳՅՈՐԲԱ ԳՅՈՌ* - Անիծված մեռել, մեռած վատ մարդ:
*ԳՈԴԱԿ* - Գոմեշի ձագ:
*ԳՅՈՒԼ* - Վարդ:
*ԳՅՈԼ* - Փոքրիկ լիճ:
*ԳՐՎԱՆՔԱ* - Փուք:
*ԳՅՈՒՆԱՔԱՐ* - Անմեղ մեղավոր:

## Դ

*ԴԱԼԴԱ* - Թաքուն:
*ԴԱԼՈՒ* - Թիկունք:
*ԴԱՀՆԱ* - Ակունք:
*ԴԱՍՏԻ* - Անմիջապես, արագ:
*ԴԱՐԱ* - Ձոր, հովիտ:
*ԴԱԼԼԱՔ* - Վարսավիր:
*ԴԱՍՏԱ* - Փունջ, խումբ:
*ԴԱՎԹԱՐ* - Մատյան:
*ԴԱՐԲԱԴԱՂ* - Քարուքանդ:



*ԴԱՄԻՐՉԻ* - Դարբին:
*ԴԻԼԱՆՉԻ* - Լեզվանի:
*ԴԻՆՋ* - Հանգիստ:
*ԴԻՎԱՆ* - Դատաստան, նաև՝ գրական դիվան:
*ԴՈՇ* - Կուրծք:
*ԴՈՇԱԿ* - Ներքնակ:
*ԴՈՒՌՆԱ* - Կռունկ, դանգլա, անխելք:
*ԴՈՒՇՄԱՆ* - Թշնամի, հակառակորդ:
*ԴՈՒՔԱՆ* - Խանութ:
*ԴԻՔՃԱ* - Անբան, անխելք, բռի:

## Ե

*ԵԹԻՄ* - Որբ:
*ԵԽԱ* - Օձիք:
*ԵԽՆԵԼ* - Հաղթել:
*ԵՍԻՐ* - Գերի:
*ԵՐԻՇ* - Ընթացք:
*ԵՄ* - Կեր (անասունի կերը պակաս է):
*ԵՇԻԼ* - Նայել:
*ԵՄԻՇ* - Սեխ:

## Զ

*ԶԱԴ* - Որևէ իր, որևէ բան:
*ԶԱԼՀԱՆ ՏԱՆԵԼ* - Ձանձրացնել:
*ԶԱՄԲՈՒՂ* - Փոքրիկ կողով:
*ԶԱՆԳԻ* - Ասպանդակ, զանգակ:
*ԶԱՆԳԼԱԿ* - Զանգակ (փոխ.՝ Երեխայի զանգլակները ծածկիր):
*ԶԱՌ* - Ոսկեթել նախշերով շոր:
*ԶՈԼ* - Շերտ (մի զոլ կաշի):
*ԶԱՌԳԱՐ* - Ոսկերիչ:
*ԶԱՓՐԱՆ* - Աղու-լեղի:
*ԶՈՌ* - Ուժ:
*ԶՈՐԲԱ* - Ուժեղ:
*ԶԼՈՒՄ* - Աղետ:
*ԶԻՐԱՎ ԻՆԻԼ* - Մի բանով զբաղվել:

*ՁԻԲԻԼ* - Աղբ, ոչնչություն:
*ՁԻԼՁԻԼԱՆ* - Հով տեղ, բարակ քամի:
*ՁԵՌ* - Մեծ:

## Է

*ԷՁԱՆ* - Միշտ, ամեն օր:
*ԷԼՕՐ* - Մյուս օրը:
*ԷԼՉԻ* - Ճանապարհորդ:
*ԷՆ ԲԱՇՈՒՆ* - Վաղ առավոտյան:
*ԷՆԴՈՒՐ ՀԱՄԱՐ* - Նրա համար:
*ԷՆՉԱՆՔ* - Այնքան:
*ԷՇԽ* - Եռանդ:
*ԷՐԵԼ* - Այրել:
*ԷՔՈՅ* - Վաղը:
*ԷՎԻԼ* - Ավել:
*ԷՄԱ* - Հիմա:

## Ը

*ԸԼԸԲԱՍՏՐԱԿ* - Նապաստակ:
*ԸԼԸԿՈՇԿՈՇ* - Չղջիկ:
*ԸԽՊՀԱՐ* - Աղբանոց:
*ԸՆԴԵՏԱՆՍ* - Սրանից հետո:
*ԸՆՁՈՏԱԾ* - Ժանգոտած:
*ԸՌԽԵՎԵՐ* - Բկլիկ, շատ ուտող:
*ԸՌՆԸՓԱԼԱԼ* - Արյունաքաքախ:
*ԸՐԱԽՄԵՆ ՃՈՒՐԸ* - Երախսի ջուրը (օգտագործում են առատությունը շեշտելու համար):
*ԸՐԲԱ* - Սայլ:
*ԸՐՁԱ* - Սողնակ, փական:
*ԸՐՎԱ* - Երեւա:
*ԸՐԿՈՔԱՆ* - Երկուսով:
*ԸՆԳՈՒՃՈՒՄԸ ԽՈՍԵԼ* - Ականջին խոսք ասել:
*ԸՆԳՆՁՈՒՄԸ ՔՆԱԾ* - Անհոգ, անբան, անտեղյակ:
*ԸՇՏԱՓԵԼ* - Ուշագնաց լինել:
*ԸՌՆՑՆԵԼ* - Աճեցնել:



*ԸՌՈՒԹԱՆԱ* - Առավոտ:
*ԸՍԿԻ* - Ոչ մի:
*ԸՍԿԵՍՈՒՐ* - Կեսուր:
*ԸՍՏՈՒԾԱՆԱ ՄԽԻԹԱՐԻՍ* - Աստծուց գոհանաս:
*ԸՐԱԶՈՎ ԸՆԿԵԼ* - Երազ տեսնել, տարվել մի սուր բանով:
*ԸՐՓՎԵՐԻ* - Այրի:

## Թ

*ԹԱԽՏ* - Գահ (նստելու, պարկելու տեղ):
*ԹԱՄԱՀ* - Ավել ցանկություն:
*ԹԱՄԱՄ* - Լրիվ:
*ԹԱՄԱՇԱ* - Տեսարան:
*ԹԱՄԲԱԼ* - Ծույլ:
*ԹԱԼԱԿ* - Որոգայթ, բակարդ, ծուղակ:
*ԹԱԼԱՆ* - Ավար:
*ԹԱԽՏ* - Գահ, հասարակ փայտյա մահճակալ:
*ԹԱՄՈՒԶ* - Մաքուր:
*ԹԱՅԴԻ* - Շտապ:
*ԹԱՅ-ԹՈՒՇ* - Համապատասխան ընկերներ, շրջապատ:
*ԹԱՆԹՈՒԼ* - Գազանի թաթ:
*ԹԱՌԱՆՉ* - Հառաչանք:
*ԹԱՐԻՓ* - Գովք:
*ԹԱՓՇՈՒՐ ԱՆԵԼ* - Պահ տալ, հաղորդել:
*ԹԵՇՏ* - Տաշտ, կոնք:
*ԹՈԶ* - Փոշի, նաեւ՝ բուք:
*ԹՈՓ* - Թնդանոթ, գնդակ, մի թոփ կտոր:
*ԹՈՔԻ* - Աներես:
*ԹՅՈՒՆԻ* - Խեղճ:
*ԹՈՒՇ* - Թուշ իջիլ, հանդիպել, դիմաց:
*ԹՈՒՓ ՏԵՌՆԱԼ* - Հավաքվել:
*ԹՅՈՒՔ* - Շան մազ, կատվի մազ, բուրդ:

## Ժ

*ԺԱՄ* - եկեղեցի, ժամանակ:
*ԺԵՇՏ* - Թիթեղ:
*ԺԵՆԳԱԼ* - Կանաչեղեն:
*ԺԻՆՋԻԼ* - Շղթա:
*ԺՈՒԼԻԿ* - Խաբեբա:
*ԺՈՒԿ* - ժամանակ, խաբեբա մարդ:

## Ի

*ԻԾԱՐԱԾ* - Այծ պահող, հովիվ:
*ԻԼԱԾ-ՉԻԼԱԾ* - եղած-չեղած:
*ԻՆԴԻ* - Այնպիսի:
*ԻՄԱՆ* - Մարդ:
*ԻՆՔ ՕՆԻԼ* - Գնել, առնել:
*ԻՐԵՔ ՄԱՆԵԹ* - Երեք ռուբլի:
*ԻՍՏԻ* - Այսպես:
*ԻՐԻԿՆԱԿ* - Արեգակ, արեւ:

## Լ

*ԼԱԳԱՆ* - Կոնք, պղնձե մեծ բերանով աման:
*ԼԱՋԱԹ* - Համ, հաճույք:
*ԼԱԼԱ* - կակաչ, մուգ կարմիր:
*ԼԱԼ* - Համր, պարզ արտասվել:
*ԼԱԽ-ԼԱԽ* - Խարխուլ, թույլ-թույլ:
*ԼԱԿ ՁՈՒ* - Փչացած ձու (փոխ.՝ Երես առած երեխա):
*ԼԵՇ* - Սատկած կենդանու մարմին:
*ԼՂԱՐ* - Նիհար:
*ԼԱԿՈՂ* - Խմող:
*ԼԵՉԱԿ* - կանացի գլխաշոր:
*ԼՈՒԿԱՑ* - Թույլ, տկար:
*ԼՈՒԹ ՏԿԼՈՐ* - Բոլորովին մերկ:



## Խ

*ԽԱԲԱՐ* - Լուր:
*ԽԱԶՆԱ* - Գանձ, հարստություն:
*ԽԱԹԱ* - Փորձանք:
*ԽԱԹԻՐ* - Պատիվ:
*ԽԱԼԻՉԱ* - Նախշուն գորգ, խալի:
*ԽԱԽԱԼ* - Խոշոր անցքերով մաղ, ցորեն մաքրելու համար:
*ԽԱՇ* - Թքխմոր:
*ԽԱՐՋ* - Ծախս, տուրք:
*ԽԻՅԱՐ* - Վարունգ:
*ԽԱԼԽ* - Ժողովուրդ:
*ԽԱԶԱԼ* - Չորացած տերեւներ:
*ԽԱԹԱ* - Վտանգ:
*ԽԱԼԱԹ* - Ճվեր:
*ԽԱԼԱՍՏՈՅ* - Ամուրի:
*ԽՈՒՄ* - Անփործ, անմշակ հող:
*ԽԱՆՉՈՂ* - Կիսով այրված փայտ:
*ԽԱՐԱԲ* - Հիվանդ, քանդված:
*ԽՇՏԻԿ* - Սվին:
*ԽՈՆՉԱ* - Հատուկ փայտյա սարի, որն օգտագործվում է թոնիրը խմորի գնդեր տանելու եւ հացը տուն բերելու համար:
*ԽՈՒՐՋԻՆ* - Ուսին գցելու հավասար երկու պարկ, որը գործում են նախշուն թելերից:

## Ծ

*ԾՄԱԿ* - Անտառ:
*ԾՄԵՐՈՒԿ* - Ձմերուկ:
*ԾԻ* - Ձի:
*ԾՂՐՈՒՂՈՒ* - Աքլորի կանչ:
*ԾԵԹ* - Ձեթ:
*ԾԵՆՏԱԼ* - Ձեն տալ:
*ԾԻՔ* - Ուժեղ, պինդ:
*ԾՊՈՒՏ* - Ճշուկ:
*ԾՈՒԾՈՒՆ* - Մոշի չորացրած ճող:

## Կ

*ԿԱԼ* - Հացահատիկ կալսելու տեղ:
*ԿԱԼ ԱՆԵԼ* - Ճատ ծեծել (թակալըն. կալ ըրալ):
*ԿԻՐ* - Գիր:
*ԿԼԵԿԵԼ* - անագել, մաքրել, դատարկել:
*ԿԾՊՈՂՈՒՆ* - Կրակոտ տղա կամ աղջիկ:
*ԿՈՊԱԼ* - Հաստ, ծանր գլխով միակ:
*ԿՈՊԱԼ* - Տղամարդու առնանդամը (Կոպալս տեսնես դու):
*ԿՅՈՒԼ* - Գայլ:
*ԿՌՈ* - Պինդ, ամուր:
*ԿՈՐԵ* - Կրիա:
*ԿՈՒՃԻ* - Փոքր:

## Հ

*ՀԱՐԹՆԸ* - Հարսը:
*ՀԱՓՈՒՌ* - Բուռ:
*ՀԱԼԱՍ ԱՆԵԼ* - Սիրտ առնել, ցանկանալ:
*ՀԱՋԱԹ* - Գործիք, հարկավոր:
*ՀԱՄԱՐ* - Ցանկապատ:
*ՀԱՎԱ* - Եղանակ, նաեւ՝ նվագ:
*ՀԱՔԻ* - Պոչ:
*ՀՂԵ* - Ճանապարհ:
*ՀՈՌ ԱՆԵԼ* - Ուժ գործադրել, հաղթել:
*ՀՈՌ* - Մեջքի հոռ, ողնաշար (մեջքիդ հոռը կոտրի):

## Ղ

*ՂԱԲ* - Բարձի աստառ:
*ՂԱԲԱՂ* - Ջոր դդում:
*ՂԱԲՈԼ* - Համաձայն:
*ՂԱԴԻՐ* - Պատիվ, հարգ:
*ՂԱԶ* - Սագ, նաեւ՝ անխելք:
*ՂԱԼ* - Անասուն պահելու ցանկապատ, փակ տեղ:
*ՂԱԼԱՄ* - Գրիչ:
*ՂԱԼԲ* - Կոշտ, կեղծ:



*ՂԱԼԻՆ* - Խիտ, թանձր:
*ՂԱԼՄԱՂԱԼ* - Աղմուկ:
*ՂԱՅԻՄ* - Պինդ:
*ՂԱԼԻԲ* - Կաղապար:
*ՂԱՄԻՇ* - Եղեգ:
*ՂԱՅԻՇ* - Կաշվե քոր:
*ՂԱՆՋՂ* - Էգ շուն (փոխ.՝ էջ աղջիկը շան դանջղ է):
*ՂԱՉԱՂ* - Ավազակ:
*ՂԱՍԱԲ* - Մսագործ:
*ՂԱՎ* - Արեք:
*ՂԻԱՍԱԹ* - Սաստիկ ցուրտ:
*ՂՈՆԱՂ* - Հյուր:
*ՂՈՇՈՒՄ* - Ամբոխ, բանակ:
*ՂՈՉԱՂ* - Քաջ, կտրիճ:
*ՂՐԱՂ ՏԵՂ* - Մի կողմ, ամբոխից, գյուղից զատ:
*ՂՈՒԼ* - Ծառա:
*ՂՈՒՄ* - Ավազ, փունջ (մի դում ճիպոտ քաղեցի):
*ՂՈՒՇ* - Թռչուն:
*ՂԱՐՓԱԹ* - Ուժ, ջանք, օգուտ:

## Ճ

*ՃԱԹ* - Կորեկ հաց:
*ՃԱՂ* - Սայլի կողերը պահող հենափայտեր, նաեւ՝ գուլպա գործելու երկաթյա ձողեր:
*ՃԱՐ* - Դեղ:
*ՃԱՐԵԼ* - Որոնել, գտնել:
*ՃԵԽ* - Ցախ:
*ՃՈՃՔ* - Օրորոց:
*ՃՈՆԴ* - Ծայր:
*ՃՈՒՃՈՒ* - Քնած ճուճու - գործից անտեղյակ, անբան մարդ:

## Մ

*ՄԱԴԱՐ* - Կենտ, մենակ:
*ՄԱՁԱԼՈՒ* - Հետաքրքիր, զարմանալի:
*ՄԱԽՄՈՒՐ* - Թովիչ:
*ՄԱԹԱԼ ՄՆԱԼ* - Խիստ զարմանալ:
*ՄԱՂԲՈՆ* - Փուչ, փչացնել:
*ՄԱՇԿԵԼ* - Քերթել (գործ է ածվում եւ ոչ փոխ. իմաստով՝ մաշկել են այս մարդուն, այսինքն՝ չափից ավել հարկ են վերցրել):
*ՄԵՇՈԿ* - Մեծ պարկ:
*ՄՀԱՍՈՒՐ* - Մասուր:
*ՄՂԱԿ* - Դուռ:
*ՄՋԱԼ* - Ժամանակ:
*ՄԱՐՋ* - Գրազ:
*ՄԵՅԴԱՆ* - Հրապարակ:
*ՄԵՅՄՈՒՆ* - Կապիկ:
*ՄԵՇԱ* - Անտառ:
*ՄԵՐԱՆ* - Մակարդ:
*ՄԱՀՆԱ* - Առիթ:
*ՄԻՆՆԱԹ ԱՆԵԼ* - Աղաչել, խնդրել:
*ՄՈՒՌՏԱՌ* - Պիղծ, հարամ, կեղտոտ:
*ՄՈՒՂԵՅԻԹ ԿԱՑ* - Զգույշ կաց:
*ՄՈՒՇՏԱՐԻ* - Գնորդ, հաճախորդ:

## Յ

*ՅԱԴ* - Օտար:
*ՅԱԼԱՆՉԻ* - Սուտասան:
*ՅԱԽՈՒ* - Չվով սարքած տաք մածուկ, որը դնում են կոտրած տեղերի վրա, կապում, կոծիկ:
*ՅԱԲԱ* - Փայտյա եղոն:
*ՅԱԽՈՒ* - Լղար եզ (էս աղջիկը յաբու է):
*ՅԱՇ* - Հասակ, տարիք:
*ՅԱՐԱ* - Վերք:
*ՅԱՎԱՇ* - Կամաց:



*ՅԱՐԱԼՈՒ* - Վիրավոր:
*ՅՈԼԱ ՔԻՆԻԼ* - Մի կերպ ապրել:
*ՅՈՒՄԲՐՈՒՂ* - Բռունցք:

## Ն

*ՆԱԼ* - Պայտ:
*ՆԱԼԲԱՆԴ* - Պայտառ:
*ՆԱՀԼԱԹ ՆՐԱՆ* - Նզովք նրան:
*ՆԱՂԴ* - Հաստատ:
*ՆԱՄ* - Խոնավ:
*ՆԱՄԱԶ* - Մահմեդական աղոթք:
*ՆԱՄԱՐԴ* - Նենգ, երախտամոռ, հարգ չիմացող, տմարդ, դավաճան:
*ՆԱՍԻԲ* - Բախտ:
*ՆՀԱԽ* - Անտեղի, իզուր:
*ՆԻՍԻԱ* - Ապառիկ:
*ՆՈԽՏԱ* - Սանձ:
*ՆՈՔԱՐ* - Ծառա:
*ՆԱԲԱԹ* - Թարմ շիվ (վազերը հարթ են տվել):
*ՆՈՒԲԱՐ* - Առաջին անգամ ուտել, համտեսել:

## Շ

*ՇԱԼ* - Բրդե գործվածք, գլխավորապես կանանց համար:
*ՇԱԼՎԱՐ* - Անդրավարտիք:
*ՇԱՀԻ* - Պարսկական հինգ կոպեկանոց դրամ:
*ՇԱՀՄԱՐ ՕՁ* - Օձի գեղեցիկ, թունավոր տեսակ:
*ՇԱՄ* - Մոմ:
*ՇԱՄՓՈՒՐ* - Միս խորովելու երկաթյա հատուկ ծող:
*ՇԱՌ* - Չպարտություն, սուտ:
*ՇԱՐԲԱԹ* - Օշարակ:
*ՇԱԲԱՇ* - Հարսանիքում պարողներին տրվող փողը, որը վերջում տրվում է նվագողներին: Նվագածուների վարկը:
*ՇԱՇ* - Հիմար, անխելք:
*ՇԱՓԱՂ* - Փայլ, շող:
*ՇԻՐԱ* - Քաղցր, խաղողի թարմ հյութ, քաղցու:
*ՇՈՐՎԱ* - Ջրիկ կերակուր, ապուր:

*ՇՈՒԼԻ-ՄՈՒԼԻ ԱՆԵԼ* - ժամանակ վատնել, բուն գործից խուսափել:
*ՇՈՒՂՈՒՄԽՈՐ* - Շողոքորթ, խեղճ, կեղծավոր:

## Ո

*ՈՐՑ* - Արու, ուժեղ, կորովի:

## Չ

*ՉԱԹՈՒ* - Կարճ թոկ:
*ՉԱԹԱՆ* - Մի տեսակ բովելու հատիկ, որը ստացվում է վայրի փշատերեւ
բույսից, տատասկից:
*ՉԱԼԱ* - Ցեխի համար արած փոս (մի չալա ցեխ):
*ՉԱԽՄԱԽ* - Կայծաքարի կայծահան (չախմախով հրացան):
*ՉԱՆՀԱՂ* - Կավե կամ փայտյա խոր ափսե, բերան:
*ՉԱՆԳԱԼ* - Պատառաքաղ, նաեւ՝ ձուկ որսալու կարթ:
*ՉԱՓԱՐ* - Ցանկապատ:
*ՉԱՔՄԱ* - Կարճաճիտք սապոգ:
*ՉՆՓԱԼԱՂ* - Ապտակ:
*ՉԵՇՄԱԿ* - Ակնոց:
*ՉԵՉՈՏ* - Կոշտ, ծաղկարար (չեչոտ քեթ):
*ՉԻՔԻԼԱ* - Կանացի գլխազարդ, թագ:
*ՉՈԼ* - Դաշտ (չոլ գնալ, հոգնած ճանապարհ գնալ):
*ՉՈՓՈՒՌ* - Ծաղկատար:

## Պ

*ՊԱՉ* - Համբույր:
*ՊԱՏԱՆ* - Մեռելը փաթաթելու անլվա շոր:
*ՊԱՏՐՈՆ* - Փամփուշտ, սկեսրայր:
*ՊԱՐԱՆ ԵԿԱԾ* - Ավերված:
*ՊԵՆ* - Բան:
*ՊԵՋՆԻԳ* - Կերոնիկայի կոտրած մաս:
*ՊԵՐԱԿ* - Բարակ:
*ՊԵՐԱՆ* - Բերան:



*ՊԵՆԱԼ* - Բացել:
*ՊՈՂ* - Այրվող ածուխ:
*ՊՈՉԻՆԿԱ* - Տակառ:
*ՊՐԻՇԱԿ* - Ավերակ:
*ՊՈՊՈՋ* - Սրածայր գլխարկ:
*ՊՈՐՑԻ* - Բաժին:
*ՊՈՒՐԹ* - Բուրդ:
*ՊՈՒՏ* - Բոված ցորենի ծավարից ու դոշաբից պատրաստած խմոր, որը
հուփ են տալիս բռան մեջ:

## Ջ

*ՋԱԴՈՒ* - Վհուկ:
*ՋԱՆՎԱՐ* - Հսկա, ուժեղ գայլ:
*ՋԱՄ* - Պղնձե թաս:
*ՋԱՆՋԱԼ* - Խառնաշփոթ:
*ՋԱՓԱ* - Նեղություն:
*ՋԻԲ* - Գրպան:
*ՋՀՈՒԴ* - Հրեա:
*ՋՈՂՈԲ* - Պատասխան:

## Վ

*ՎԱԽՏ* - Ժամանակ:
*ՎԱՐԱՂ* - Ոսկեզօծում, արծաթազօծում, արծաթե վարաղած գոտիներ, սրի
պատյաններ եւ այլն:
*ՎԱՍՅԱԹ* - Կտակ, վերջին խոսք:
*ՎԵՆՆԸ* - Ոտք:
*ՎԵԴՐԱ* - Դույլ:
*ՎԵՆՆԸ ԿԱԽ ԱՐԵՑ* - Գործի ընթացքը դանդաղեց:
*ՎԵՆՆԵՐԸ ԵՂԵՑ* - Որեւէ հաջողության, պաշտոնի հասնելու համար
ոգեւորվեց:
*ՎԵՄԿԵՌ* - Ոսկոր:
*ՎԵՐԹԻ* - Որդի:
*ՎՐԽԿԱԼԻ* - Հորդ, վարար, սելավի պես հորդ:

## Տ

*ՏԱՋ* - Կոնք:
*ՏԱՋ ԸՐԱ* - Սուս արա:
*ՏԱԼ* - Ամուսնու քույրը:
*ՏԱԼ* - Մի բան տալ, մատուցել:
*ՏԱԼ* - Ծառի ճյուղ:
*ՏԱԼԵՐՔ* - Ափսե:
*ՏԱԿՌԵ* - Արմատ:
*ՏԱՏՄԱՐ* - Մանկաբարձ:
*ՏԵՆԱԿ* - Դանակ:
*ՏԻԺԵՐ* - Դժվար:
*ՏՈՒՄԿՈՒՄ* - Դրսի կողմ:
*ՏՆԱՋ* - Ծաղր:
*ՏՈՇ* - Կուրծք:
*ՏՈՒՐՈՒՐ ՏԱԼ* - Տեղից շարժել:
*ՏԱԽ* - Մայր խոզ:

## Ց

*ՑԱԿԱՏ* - Ցախ կտրելու փայտյա կոթավոր, կեռ քթով գործիք:
*ՑԱԿԱՏ ՄԱՐԴ* - Ճեշտակի, կտրուկ խոսող մարդ:
*ՑԵՆՏՐ* - Կենտրոն:
*ՑԱՔ ՈՒ ՑՐԻՎ* - Անկանոն թափված:

## ՈՒ

*ՈՒԹՈՒ* - Յարթուկ:
*ՈՒՄԵԴ* - Յույս:
*ՈՒՇՈՒՆՑ* - Յայհոյանք:
*ՈՒՍՏԱ* - Վարպետ:
*ՈՒԼԱԽ* - Էշ, ջորի, ձի:



## Փ

*ՓԱԼՉԻ* - Գուշակ:
*ՓԱԽԼ* - Նախանձ:
*ՓԱՅ* - Բաժին:
*ՓԱՆԱՐ* - Լապտեր:
*ՓԱՆՋԱՐԱ* - Լուսամուտ:
*ՓԱՐՉ* - Գավ:
*ՓԱՐԴԱ* - Վարագույր:
*ՓԵԴԱՆԱԼ* - Սառչել, մրսել:
*ՓԵՇԱԿ* - Արհեստ:
*ՓԵՇՔԵՇ* - Նվեր:
*ՓԱԼԱՆ* - Ունի թամբ իմաստը, համիդ:
*ՓՈՒԽԱՆ* - Վարտիք:
*ՓՈՒԽԻՆՉ* - Բոված ցորենի ձավար:
*ՓՐԹԵԼ* - Կոտորել, կտրտել, մանրել, ջարդել:

## Ք

*ՔՅԱԲԱԲ* - Խորոված:
*ՔԱԼԼԱ* - Գլուխ:
*ՔԱՓ* - Կաթսայի մեջ գոյացած եռման փրփուր:
*ՔԵՐԾ* - Ժայռ:
*ՔԱԹ* - Յեքիաթ:
*ՔԱՄԱԿ* - Յետույք, մարդու թիկունքը:
*ՔԱՇ* - Կշիռ, նաեւ՝ սեւ քաշ, սեւ ագռավ:
*ՔԱՇՔ* - Քաջք:
*ՔԵՉԱ* - Բրդյա թաղիք:
*ՔԹՈՒԹ ԱՆԵԼ* - Ձուր որոնել, փորփրել, մի բան ջոկել:
*ՔԱՍԻԲ* - Աղքատ:
*ՔԹՈՑ* - Կողով (նաեւ՝ մեղվի քթոց (փեթակ):
*ՔԻՄԱ* - Քսակ:
*ՔՍԱԿ* - Փոքրիկ պարկ (մածնի քսակ):
*ՔՈԾ* - Աղախին, հարճ, տան ծառա:
*ՔՈՄԱԳ* - Օգնություն:

*ՔԵՄՈՒՐՉԻ* - Ածխագործ:
*ՔՈՓԱԳ* - Ծեր, կոշտ մարդ:
*ՔՈՔ* - Չաղ:
*ՔՈՓ ԱՆԵԼ* - Լարել:
*ՔՈՒԼՈՒԶ* - Շուրթը կոտրած կուժ, կուլա:
*ՔՈՒՆՋ* - Անկյուն:
*ՔՈՒՉԱ* - Փողոց:
*ՔՈՉ* - Հոտ (Քոչը սարը գնում):

## Օ

*ՕԲԱ* - Քոշ, վրան:
*ՕԲՐՈՒՋ* - Տակառի կլոր օղ:
*ՕԹԱԽ* - Սենյակ:
*ՕԽ* - Սայլի երկու անիվները պահող սռնի:
*ՕՅԱԴ* - Զգաստ, արթուն:
*ՕՅԻՆ* - Փորձանք:
*ՕՅԻՆԲԱԶ* - Խեղկատակ, բախտախնդիր:
*ՕՐԱԴ* - Մանգաղանման խոտ հարելու գործիք:
*ՕՍ* - Ուս:
*ՕՍ* - Տղամարդկանց եւ կանանց սեռական օրգանների շուրջ բուսած մազ:
*ՕՎՉԻ* - Որսորդ:
*ՕՐԻԳ* - Էշը կամ ձին կարճ կապի մեջ պահող կապ:
*ՕԽՃԸ* - Օձ:
*ՕՐԻՇ* - Ուրիշ:
*ՕՅԻՆ* - Փորձանք:
*ՕԽՏԸ* - Յոթ:
*ՕՄԲԱ* - Կոնքի ոսկորը:
*ՕՌՉԻԼ* - Ուռել:
*ՕՐԴԱԿ* - Բադ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՅԹՆԵՐ ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ ..... 4
ՂԱՐԱԲԱՂԻ ԶՎԱՐՃԱԽՈՍ ՊԸԼԸ ՊՈՒՂԻՆ ..... 10
ՊՈՒՂԻԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԵՐ ..... 25
ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԱՐՑԱԽՅԱՆ ԽՈՀԱՆՈՑԸ ..... 331
ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ..... 349
ԱՐՑԱԽՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ ..... 377
ԾԻՍԱԿԱՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ..... 427
ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԲՈՒԺԱՐԱՆԸ ..... 445
ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԽՐԱՏԱՆԻՆ ..... 493
ՊԸԼԸ ՊՈՒՂՈՒ ԶՐՈՒՅՑԸ ԱՍՏԾՈ ՀԵՏ ..... 512
ՀԱՎԱՏՔ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒՄՆԵՐ ..... 515
ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐ ..... 521
ՊՈՒՂԻԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ..... 523
ՊՈՒՂԻԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ ..... 546
ԱՆԵԾՔՆԵՐ ..... 548
ՄԵՂՎԱԽԱՅԹԵՐ ..... 553
ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ, ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ, ՕՐՀՆԱՆՔՆԵՐ ..... 593
ԲԱՌԱՐԱՆ ..... 621

Հրաչյա Մուխանի Բեգլարյան

# ՊԸԼԸ ՊՈՒՂԻ

## Գիրք հինգերորդ


| | |
|---|---|
| Խմբագիր՝ | Ռուզաննա ԲԵԳԼԱՐՅԱՆ |
| Գեղ. խմբագիր՝ | Մնացական ԱՁԻՋՅԱՆ |
| Տեխ. խմբագիր՝ | Ժաննա ԱՎԱՆԵՍՅԱՆ |
| Սրբագրիչ՝ | Գագիկ ԲԵԳԼԱՐՅԱՆ |
| Վերստուգող սրբագրիչ՝ | Լիլյա ԳՐԻԳՈՐՅԱՆ |
| Համակարգչային աշխատանքը՝ | Լիլյա ԳՐԻԳՈՐՅԱՆԻ |

Հանձնված է շարվածքի 07.05.2007 թ.: Ստորագրված է տպագրության 14.08.2007 թ.: Տառատեսակ՝ «ArTarumianHandes»: Թուղթ՝ օֆսեթ, 42x60 $^{1}/_{16}$: Տպագրական 40 մամուլ: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակ՝ 250: Գինը՝ պայմանագրային:

«ՍՈՆԱ» գրահրատարակչություն

ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16

Հեռ. 51555